

Հարգելի՛ ընթերցող,

**Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ)** նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

**The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA)** presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

### **Մեր տվյալները – Наши контакты - Our contacts**

Site: <http://artsakhib.am/>

E-mail: [info@artsakhib.am](mailto:info@artsakhib.am)

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



ՀՀ ՍՊՈՐՏԻ ԵՎ  
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ԵՐԵՎԱՆԻ  
ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



«ՉԱՆԳԵՉՈՒԻԻ  
ՊՂՆՁԱՄՈՒԲԳԵՆԱՅԻՆ  
ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ



ԱՐՑԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ  
ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ  
ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՄ)



# ԳԻՏԱԿԱՆ ԱՐՑԱԽ



SCIENTIFIC  
ARTSAKH

НАУЧНЫЙ  
АРЦАХ

№ 1, 2018

Հիմնադիր – Founder – Учредитель:  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՍՈՒՍԱՐԱՆ (ԵՊՀ)  
YEREVAN STATE UNIVERSITY (YSU)  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ (ЕГУ)  
[www.y-su.am](http://www.y-su.am)

Հրատարակիչ – Publisher - Издатель:  
ԱՐՅԱԽԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ (ԱԵԳՄՍ)  
UNION OF YOUNG SCIENTISTS AND SPECIALISTS OF ARTSAKH (UYSSA)  
ОБЪЕДИНЕНИЕ МОЛОДЫХ УЧЁНЫХ И СПЕЦИАЛИСТОВ АРЦАХА (ОМУСА)  
[www.aegmm.org](http://www.aegmm.org)

**ԳԻՏԱԿԱՆ ԱՐՅԱԽ**

**SCIENTIFIC ARTSAKH**

**НАУЧНЫЙ АРЦАХ**

**№1, 2018**

*Նվիրվում է Հայաստանի առաջին Հանրապետության 100-րդ, Արցախյան շարժման 30-րդ ու  
Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-րդ ամյակներին*

*Dedicated to the 100th anniversary of the First Republic of Armenia, the 30th anniversary  
of the Artsakh movement and the 2800th anniversary of the founding of Erebuni-Yerevan*

*Посвящается 100-летию Первой Республики Армения, 30-летию Арцахского движения и  
2800-летию основания Эребуни-Ереван*

ԱԵԳՄՍ – UYSSA – ОМУСА  
ԵՐԵՎԱՆ – YEREVAN – ЕРЕВАН  
2018

*Չրատարակության Է երաշխավորվել Երևանի պետական Չամալսարանի գիտական խորհրդի թիվ 2/8.8 առ 29.11.2018թ. որոշմամբ  
 Рекомендовано к публикации решением учёного совета №2/8.8  
 от 29.11.2018г. Ереванского государственного университета  
 Recommended for publication by the Yerevan State University  
 Academic Council Decision №2/8.8 of November 29, 2018*

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

**Նախագահ՝** ԵՊՉ ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
**Արամ ՄԻՍՈՆՅԱՆ**

### Անդամներ՝

ԱՎԱԳՅԱՆ Արծրուն, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ԱՎԱՆԵՍՅԱՆ Չրանտ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ԲԱԲԱՅԱՆ Դավիթ, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ  
 ԲԱԼԱՅԱՆ Վահրամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ԳԱԼՍՏՅԱՆ Խաչիկ, քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ  
 ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ Զուլիխան, մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ԳՐՈՒՉԴԵՎ Վլադիսլավ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Կոստրոմա, ՌԴ)  
 ԴԱՆԻԵԼՅԱՆ Գևորգ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ԵՂԻԱԶԱՐՅԱՆ Արման, պատմական գիտությունների դոկտոր, դոցենտ  
 ԺԵՅՄՈ Մարտիկ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Օլշտին, Լեհաստան)  
 ԼԱՊԵՎԱՎ Վալենտինա, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Մոսկվա, ՌԴ)  
 ԼՈՒԽՏԵՐՅԱՆԴՏ Օտտո, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Չամբուրգ, Գերմանիա)  
 ՉՈՎՍԵՓՅԱՆ Մուշեղ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ՂԱԶԻՆՅԱՆ Գագիկ, ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
 ՄԱՐԿՈՍՅԱՆ Աշոտ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
 ՄԻՆԱՅԱՆ Էդիկ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ՆԵՐՍԻՍՅԱՆ Կարեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
 ՍԱՐԳՅԱՆ Չայկ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
 ՎԱՍԿՈՎ Մաքսիմ, սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (Դոնի Ռոստով, ՌԴ)  
 ԶԵՌՅԱՆ Գարիկ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
 ԶՈՂԱՐՅԱՆ Տիգրան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**Գլխավոր խմբագիր՝** իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ավետից ԳԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Գիտական Արցախ, №1, 2018, Երևան, «ԱԵԳՄՍ» հրատ., 2018, 448 էջ:  
 Scientific Artsakh, №1, 2018, Yerevan, «UYSSA» publ., 2018, 448 pages.  
 Научный Арцах, №1, 2018, Ереван, Изд. «ОМУСА», 2018, 448 страниц.

«Գիտական Արցախ» պարբերականի 1-ին համարում տեղ են գտել հայկական արդի հիմնախնդիրներից մեկի՝ պետականության վերաբերյալ Չայաստանը, Արցախը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Գերմանիան, Լեհաստանը և Բելառուսը ներկայացնող հեղինակների գիտական աշխատանքները:

Գիտական պարբերականում գետեղված են նաև Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորման ու Երևանի պետական համալսարանի կողմից 2018թ. սեպտեմբերի 13-16-ը Ստեփանակերտում համատեղ կազմակերպված «Չայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի լավագույն գիտական հոդվածները:

The first issue of «Scientific Artsakh» journal comprises the scientific works of authors from Armenia, Artsakh, the United States of America, Germany, Poland and Belarus on one of the most urgent problems for Armenians – the statehood. The publication also contains the best scientific articles of the 3rd international youth scientific conference «The past, present and future of the Armenian statehood», jointly organized by the Union of Young Scientists and Specialists of Artsakh and Yerevan State University on September 13-16, 2018 in Stepanakert.

В первом номере журнала «Научный Арцах» нашли место научные работы авторов из Армении, Арцаха, Соединенных Штатов Америки, Германии, Польши и Беларуси по одной из актуальных для армян проблем – государственности.

В издании размещены также лучшие научные статьи 3-ей международной молодежной научной конференции «Прошлое, настоящее и будущее Армянской государственности», совместно организованной Объединением молодых учёных и специалистов Арцаха и Ереванским государственным университетом 13-16 сентября 2018 года в Степанакерте.



**EDITORIAL COUNCIL**

**Chairman:** Aram SIMONYAN, Rector of YSU, NAS RA Associate Member, Doctor of History, Professor

**Members:**

AVAGYAN Artsrun, Doctor of Philology, Professor  
 AVANESYAN Hrant, Doctor of Psychology, Professor  
 BABAYAN David, Doctor of History, Associate Professor  
 BALAYAN Vahram, Doctor of History, Professor  
 DANIELYAN Gevorg, Doctor of Law, Professor  
 GALSTYAN Khachik, Doctor of Political Sciences, Associate Professor  
 GHAZINYAN Gagik, Academician of NAS RA, Doctor of Law, Professor  
 GRUZDEV Vladislav, Doctor of Law, Professor (Kostroma, Russia)  
 GYULAMIRYAN Julieta, Doctor of Pedagogical Sciences, Professor  
 HOVSEPYAN Moushegh, Doctor of Philology, Professor  
 KERYAN Garik, Doctor of Political Sciences, Professor  
 KOCHARYAN Tigran, Doctor of Political Sciences, Professor  
 LAPAEVA Valentina, Doctor of Law, Professor (Moscow, Russia)  
 LUCHTERHANDT Otto, Doctor of Law, Professor (Hamburg, Germany)  
 MARKOSYAN Ashot, Doctor of Economic Sciences, Professor  
 MINASYAN Edik, Doctor of History, Professor  
 NERSISYAN Karen, Candidate of Economic Sciences, Associate Professor  
 SARGSYAN Hayk, Doctor of Economic Sciences, Professor  
 VASKOV Maksim, Doctor of Sociology, Professor (Rostov-on-Don, Russia)  
 YEGHIAZARYAN Arman, Doctor of History, Associate Professor  
 ZEJMO Marek, Doctor of Political Sciences, Professor (Olsztyn, Poland)

**Editor-in-Chief:** Avetik HARUTYUNYAN, Candidate of Law, Associate Professor

**РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ**

**Председатель:** ректор ЕГУ, член-корреспондент НАН Республики Армения, доктор исторических наук, профессор **Арам СИМОНЯН**

**Члены:**

АВАԿՅԱՆ Արժրուն, доктор филологических наук, профессор  
 АВАՆԵՏՅԱՆ Գրանտ, доктор психологических наук, профессор  
 БАԲԱԿՅԱՆ Դավիդ, доктор исторических наук, доцент  
 БАԼԱԿՅԱՆ Վահրամ, доктор исторических наук, профессор  
 ՎԱՏՅԿՈՎ Մաքսիմ, доктор социологических наук, профессор (Ростов-на-Дону, Россия)  
 ԳԱԼՏՅԱՆ Խաչիկ, доктор политических наук, доцент  
 ԳՐԱԶԴԵՎ Վլадислав, доктор юридических наук, профессор (Кострома, Россия)  
 ԳՅՍԼԱՄԻՐՅԱՆ Ժուլյետտա, доктор педагогических наук, профессор  
 ԴԱՆԻԵԼՅԱՆ Գեվորգ, доктор юридических наук, профессор  
 ԵԳԻԱԶԱՐՅԱՆ Արման, доктор исторических наук, доцент  
 ԶԵՅԻՄՈ Մարեկ, доктор политических наук, профессор (Ольштын, Польша)  
 ԿԱԶԻՆՅԱՆ Գագիկ, академик НАН РА, доктор юридических наук, профессор  
 ԿԵՐՅԱՆ Գարիկ, доктор политических наук, профессор  
 ԿՕՇԱՐՅԱՆ Կոչարյան Կարեն, доктор политических наук, профессор  
 ԼԱՔԱԵՎԱ Վալենտինա, доктор юридических наук, профессор (Москва, Россия)  
 ԼՅՈՒՒՏԵՐՔԱՆԴՏ Օտտո, доктор юридических наук, профессор (Гамбург, Германия)  
 ՄԱՐԿՕՍՅԱՆ Աշոտ, доктор экономических наук, профессор  
 ՄԻՆԱՏՅԱՆ Էդիկ, доктор исторических наук, профессор  
 ՆԵՐՏԻՏՅԱՆ Կարեն, кандидат экономических наук, доцент  
 ՕՎՏԵՔՅԱՆ Մուսիկ, доктор филологических наук, профессор  
 ՏԱՐԳՏՅԱՆ Գայկ, доктор экономических наук, профессор

**Главный редактор:** кандидат юридических наук, доцент **Аветик АРУТЮНЯН**

*Տպագրվում է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ  
 Is published with the support of the Ministry of Sport and Youth Affairs of the Republic of Armenia  
 Публикуется при поддержке Министерства спорта и по делам молодежи Республики Армения*

**ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,  
«Գիտական Արցախ» պարբերականի խմբագրական խորհրդի նախագահ,  
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր ԱՐԱՄ ՍԻՄՈՆՅԱՆԻ  
ՈՂԶՈՒՅՆԻ ԽՈՍԵԸ**

Հարգելի՛ ընթերցող,

«Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» (ԱԵԳՄՄ) հասարակական կազմակերպությունը, չնայած երիտասարդ տարիքին, Արցախի հասարակական դաշտում աչքի է ընկնում բավականին հասուն և ծանրակշիռ գիտակրթական գործունեությամբ: «Գիտական Արցախ» պարբերականը կազմակերպության միջազգային մակարդակի գիտակրթական հատկանշելի նախաձեռնություններից է: Այն Երևանի պետական համալսարանի հետ տարիների համագործակցության նշանակալի արգասիքն է: Գիտական պարբերականն ամփոփում է 2018թ. սեպտեմբերի 13-16-ը Ստեփանակերտում ԵՊՀ-ԱԵԳՄՄ համագործակցությամբ իրականացված «Հայոց պետականության անցյալը, ներկան ու ապագան» 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի արդյունքները:

Ուրախալի է, որ պարբերականի առաջին համարը լույս է տեսնում հոբելյանական 2018 թվականին և նվիրված է Հայաստանի առաջին Հանրապետության 100-րդ, Արցախյան շարժման 30-րդ ու Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-րդ ամյակներին:

Այն, որ «Գիտական Արցախ» պարբերականում տեղ են գտել աշխարհի տարբեր երկրների ավելի քան յոթ տասնյակ երիտասարդ և կայացած գիտնականների աշխատանքներ, խոսում է նրա կշռի, դերի ու պահանջարկի մասին: Լիահույս ենք, որ տարիների ընթացքում հողվածագիրները կդառնան Արցախի գիտության դեսպանները՝ միջազգային տարբեր հարթակներում ներկայացնելով Արցախի Հանրապետության իրավունքներն ու շահերը:

ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի պահանջներին համապատասխանող այս գիտական պարբերականը միջազգային հարթակներում գիտության միջոցով Արցախը ճանաչելի դարձնելու և արցախյան հիմնախնդիրն օբյեկտիվ տեսանկյունից ներկայացնելու առաքելություն ունի. ուստի բարի երթ և հետագա հաջողություններ եմ մաղթում նորընծա գիտական պարբերականին:

**WELCOME MESSAGE**

**of YSU Rector, Corresponding Member of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Chairman of the Editorial Council of the Journal «Scientific Artsakh», Doctor of History, Professor ARAM SIMONYAN**

Dear reader,

Despite the young age, «The Union of Young Scientists and Specialists of Artsakh» (UYSSA) NGO is distinguished in the public field of Artsakh by a fairly mature and solid scientific and educational activity. Among the notable scientific and educational initiatives of the international level is the journal Scientific Artsakh. It is the fruit of cooperation over the years with Yerevan State University. The scientific publication summarizes the 3rd International Youth Scientific Conference «The Past, Present and Future of the Armenian Statehood» jointly organized by YSU and UYSSA from September 13 to September 16, 2018 in Stepanakert.

It is gratifying that the first issue of the magazine is published in the jubilee year 2018 and is dedicated to the 100th anniversary of the First Republic of Armenia, the 30th anniversary of the Artsakh movement and the 2800th anniversary of the founding of Erebuni-Yerevan.

The fact that more than seventy scientific works of young and accomplished scientists have found a place in the journal «Scientific Artsakh» testifies to its weight, role and relevance. We are confident that over the years, the authors of the articles will become ambassadors of the Artsakh science, presenting the rights and interests of the Artsakh Republic at various international platforms.

This scientific publication, which complies with the requirements of the Higher Attestation Committee of the Republic of Armenia, is intended to make Artsakh recognizable at international platforms through science and present the Artsakh problem in an objective way. Therefore, I wish the newly created scientific journal a good journey and further success.

**ПРИВЕТСТВЕННОЕ ПОСЛАНИЕ**

**ректора ЕГУ, члена-корреспондента НАН Республики Армения,  
председателя редакционного совета журнала «Научный Арцах»,  
доктора исторических наук, профессора АРАМА СИМОНЯНА**

Уважаемый читатель!

Невзирая на юный возраст, общественная организация «Объединение молодых учёных и специалистов Арцаха» (ОМУСА) выделяется в общественном поле Арцаха достаточно зрелой и солидной научно-образовательной деятельностью. Среди заметных научно-образовательных инициатив международного уровня – журнал «Научный Арцах». Он является плодом сотрудничества на протяжении лет с Ереванским государственным университетом. Научное издание обобщает совместно организованную ЕГУ и ОМУСА с 13 по 16 сентября 2018 года в Степанакерте 3-ю международную молодежную научную конференцию «Прошлое, настоящее и будущее армянской государственности».

Отрадно, что первый номер журнала выходит в свет в юбилейном 2018-ом году и посвящен 100-летию Первой Республики Армения, 30-летию Арцахского движения и 2800-летию основания Эребуни-Ереван.

То, что в журнале «Научный Арцах» нашли место более семидесяти научных работ молодых и состоявшихся ученых, говорит о его весе, роли и востребованности. Уверены, что с годами авторы статей станут послами науки Арцаха, представляя на различных международных площадках права и интересы Республики Арцах.

Данное научное издание, соответствующее требованиям Высшего аттестационного комитета Республики Армения, призвано сделать узнаваемым Арцах на международных площадках посредством науки и представлять арцахскую проблему объективным образом. Поэтому желаю новосозданному научному журналу доброго пути и дальнейших успехов!

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ՓԻԼԻՍՈՓՈՒԹՅՈՒՆ**  
**HISTORY, PHILOSOPHY**  
**ИСТОРИЯ, ФИЛОСОФИЯ**



**ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ  
 ԱՐՑԱԽՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՐՁԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ**

**ՎԱՅՐԱՍ ԲԱԼԱՅԱՆ**

17-րդ դարի վերջերին, հայ իրականության մեջ համատարած կորուստների և հուսահատության պայմաններում, Արցախի մելիքական տների ներկայացուցիչները և Գանձասարի կաթողիկոսները, որպես հայկական կորուսյալ պետականության լավագույն ավանդույթների կրողներ, Նոր Էջ բացեցին հայ ազատագրական շարժումների պատմության մեջ: Արցախի մելիքները և Գանձասարի կաթողիկոսները, Նախանձախնդիր իրենց իրավունքների ու ազատությունների վերահաստատմանը, 17-րդ դարի վերջերին և 18-րդ դարի սկզբներին մշակեցին հայ ժողովրդի ազատագրության ռազմավարությունը, որը ենթադրում էր, սեփական ներուժին ապավինելով, Ռուսաստանի աջակցությամբ, վերականգնել հայկական թագավորությունը: Գանձասարի Պետրոս կաթողիկոսը հայ իրականության մեջ առաջինն ուրվագծեց ռուսական կողմնորոշման նախաշաղկիղ<sup>1</sup>, որին Նոր քաղաքական ընթացք հաղորդեցին Իսրայել Օրին և Արցախի մելիքները:

Չինված պայքարի միջոցով ոչ միայն հայության ինքնության փրկման, այլև ազատության նվաճման և պետականության վերակերտման գաղափարի հայտնաբերումը հայության համար Նոր արժեհամակարգի ստեղծման ելակետ դարձավ: Արցախի գործիչների համար անընդունելի էր միայն աղերսագրերի միջոցով, «բարեկամ» երկրների աջակցությամբ հայրենիքի ազատագրման՝ մինչ այդ բյուրեղացած կարծրատիպը:

Երկրի ներքին կյանքում Եսայի կաթողիկոսի եռանդուն կազմակերպական ձեռնարկները, արտաքին ճակատում ակտիվ դիվանագիտական փնտրտուքները, հոգևոր դասի, մելիքների և ժողովրդի համախումբ ներդաշնակ գործողությունները համայն հայության համար, Չայոց արևելից նահանգները տվյալ ժամանակահատվածում դարձրին հավատի և հույսի կերտներ: Ազատագրական պայքարի գործիչների համար Արցախը դարձավ յուրօրինակ հավաքատեղի:

Արցախի ռազմաքաղաքական անվտանգության պահպանումը, ինքնիշխանության վերականգնման անհրաժեշտությունը երկրամասի հոգևոր ու աշխարհիկ տերերի մեջ ձևավորեց այն գիտակցությունը, թե հնարավոր չէ ապահովել հայկական տարանջատ գոյությունն ու զարգացումը, եթե իրենք չմիավորվեն և չգործեն որպես մեկ ամբողջություն: Արցախահայ իրականության մեջ օրեցօր գերիշխող էր դառնում ողջ Չայաստանի քաղաքական ինքնորոշման՝ Չայոց թագավորության վերականգնման ձգտումը: Այդ առանցքի շուրջն էլ ծավալվեցին 18-րդ դարի և 19-րդ դարի սկզբների հայ իրականության կարևոր պատմական իրադարձությունները:

Չայ հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործին և Նոր զարգացումներին իր ուղղորդիչ դերակատարումով, 1720-ական թվականներից սկսած, առանձնապես կարևորվում է Արցախի մելիքների և, մասնավորապես

<sup>1</sup> Армяно-русские отношения в XVII в., Сборник документов, т. 1, ч. 1, Ереван, 1953, стр. 91-92.

Գանձասարի կաթողիկոսության ազդեցությունը: Եթե համաժողովրդական շարժում կազմակերպելու նպատակով նախորդ ժամանակահատվածում նրանք հիմնականում բավարարվում էին ազգային ազատագրական գաղափարների տարածումով և կազմակերպական բնույթի հարցերի լուծումով, ապա 1720-ական թվականների սկզբներից այդ նույն ուժերը գործնականորեն ձեռնամուխ եղան զինված պայքարի միջոցով Արցախում հայոց պետականության վերականգնմանը: Իրագործվեց Եսայի Յասան-Ջալալյանի «Նոր նորոգման» տեսլականը<sup>1</sup>: Արցախահայությունն, առանց դրսի օգնության ոչ միայն դիմակայեց լեզգիական և թուրքական արշավանքներին, այլև թոթափեց պարսկական լուծը: Այդ պայքարի ընթացքում Արցախի գործիչները հայոց պետականության վերականգնման հեռանկարն սկսեցին կապել տարածաշրջանով հետաքրքրված Ռուսաստանի հետ: Ցարական արքունիքը հմտորեն օգտագործեց մահմեդականների լծից հայ ժողովրդի ազատագրվելու ձգտումը: Բնականաբար, կայսերական ծավալապաշտ նկրտումներ ունեցող ցարական արքունիքի արտաքին քաղաքական հայեցակետում չէր մտնում Յայաստանի անկախության վերականգնման խնդիրը: Ռուսաստանը, հանդես գալով որպես քրիստոնյաների հովանավոր, ընդամենը փորձում էր Այսրկովկասի հաշվին ընդարձակել իր սահմանները՝ այդ հարցում ապավինելով Վրաստանի և Արցախի մելիքությունների օժանդակությամբ:

1730-ական թվականների սկզբներին ցարական արքունիքը, համաձայնության գալով շահի հետ, մի առ ժամանակ հետաձգելով տարածաշրջանային ծրագրերի իրագործումը, Այսրկովկասը թողեց Պարսկաստանի տիրապետության տակ: Արցախի մելիքները, հակաթուրքական ճակատ հարդարելու նպատակով, ստիպված սկսեցին համագործակցել Իրանի նոր տիրակալ Նադիրի հետ՝ ծնունդ տալով հայկական մի նոր ինքնավար միավորի՝ Խամսայի մելիքություններին: Արցախում սոլախների հիմքերի վրա ծնված վարչա-քաղաքական նոր միավորը, որպես հայոց պետականության արտահայտության ձև, գոտեպնդելով լեռնաշխարհի զինավառ հայությունը, մոտակա տասնամյակներում դարձան հայ ազգային ազատագրական շարժման նոր օջախներ՝ ամրացնելով հավատը միասնության և հաղթանակի համար:

18-րդ դարի երկրորդ կեսին Արցախում տեղի ունեցած քաղաքական նոր վերադասավորությունները՝ Ղարաբաղի խանության ասպարեզ գալը և դրա հետևանքով ստեղծված հայ հանրության ծանր, անտանելի վիճակն ու մելիքների իրավունքների սահմանափակումը պատճառ են դառնում ազգային ազատագրական պայքարի աննախադեպ վերելքին և հայկական թագավորության վերակերտման գաղափարի վերակենդանացմանը: Տարբեր երկրներում ապրող հայ հասարակական-քաղաքական գործիչները, ուշի ուշով հետևելով տարածաշրջանային զարգացումներին, Արցախը համարելով հայկական պետականության վերակերտման հնարավոր օջախ, փորձում էին ի մի բերել մելիքական ուժերը՝ նրանց մղելով գործնական քայլերի:

Պարսկական իշխանություններն ու Իբրահիմ խանը, հանձին Արցախի մելիքների և Գանձասարի կաթողիկոսի, տեսնում էին դեպի Այսրկովկաս ռուսների մուտքն ապահովող ուժի, ուստի ամենադաժան և հետևողական ձևով փորձում էին վերացնել հայկական պետականության վերջին բեկորները:

Ցարական արքունիքը, Արցախի մելիքությունների մեջ տեսնելով կազմակերպված իրական կառույցների և հավատարիմ դաշնակիցների, նրանց հետ մշտական կապեր էր պահպանում՝ վերջիններիս առաքելով նամակներ, հրովարտակներ, երկրամաս ուղարկելով բանագնացներ: Երկիրն ազատագրելու և

<sup>1</sup> Եսայի Յասան-Ջալալյան, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից՝ դիպելոյ յաշխարհին Աղուանից, Շուշի, 1839, էջ 58:

հայկական պետականությունը վերականգնելու խոստումներով՝ ռուսական կառավարությունն Արցախի մելիքներին մշտապես պահում էր իր ազդեցության ուղեծրում:

Տարական արթունիքը, հմտորեն օգտագործելով հայության ակնկալիքները, իր արտաքին քաղաքական ծրագրերի իրագործման համար, առավելագույնս նպատակաուղղելով մելիքների գինական ուժը, 19-րդ դարի սկզբներին տարածաշրջանում ապահովեց գերիշխող դիրք:

Հայ ժողովրդի ջանադիր մասնակցությամբ՝ ռուսական զենքի հաղթանակներն ամբողջականացվեցին 1813թ հոկտեմբերի 12-ին Գյուլիստանի հաշտության պայմանագրով<sup>1</sup>: Անկախ Նրանից, թե ցարական իշխանություններն Այսրկովկասում ինչ նպատակներ էին հետապնդում, դրանք, այնուամենայնիվ, համապատասխանում էին Ղարաբաղի հայության ազատագրական ձգտումներին:

Գյուլիստանի պայմանագիրը մեր ժողովրդի համար պատմական անանցանելի իրողություն է: Այն մի ավելորդ անգամ վկայում է, որ Ղարաբաղն առանձին ազգային-պետական միավորի կարգավիճակով է անցել Ռուսաստանի տիրապետության տակ: Հետևաբար, ինչպես ներկայիս Ադրբեջանը կազմող տարածքները, այնպես էլ ԼՂՀ մաս հանդիսացող շրջանները Ռուսաստանին են անցել հավասար իրավասուբյեկտային կարգավիճակով: Ուրեմն, եթե խորհրդային կայսրության փլուզումից հետո վերոհիշյալ երկիրը իրեն իրավունք է վերապահում ստեղծել ազգային պետականություն, այդ նույնից օգտվում է նաև Ղարաբաղը: Գյուլիստանի պայմանագիրը կարող է քաղաքական ուղենիշ հանդիսանալ ԼՂՀ արտաքին քաղաքականության և դիվանագիտության սկզբունքների մշակման համար: Այն, բացի քաղաքական պատճառաբանություններից, ունի նաև իրավական ամբողջացված դաշտ՝ մեր օրերի թելադրած տեսակետի առումով: ԼՂՀ ճանաչման իրավական կողմի առաջնային քայլն անպայման պետք է կապել Գյուլիստանի պայմանագրի հետ:

Այստեղ Ադրբեջանը հանդես է գալիս որպես երկրորդական դեմք: Հիմնական կնճիռը Արցախ-Ռուսաստան կապի վրա է, որովհետև, կամա թե ակամա, Ռուսաստանն ինքը եթե հիմա կանգնած է իր պետականության կայացման ճանապարհին և այն փորձում է իրականացնել քաղաքակիրթ չափանիշներով, չի կարող խուսափել իր պատմության իրավա-պայմանագրային հիմունքներից: Այսինքն՝ հաշվի նստելով այդպիսի հիմունքներից մեկի՝ Գյուլիստանի պայմանագրի հետ, Ռուսաստանը պիտի կողմնորոշվի ստացած ժառանգության նկատմամբ: Իսկ պետաիրավական ժառանգությունը ոչ թե հպանցիկ երևույթ է, այլ տվյալ տերության գոյության ընթացքում մշակված պետական շահերի ամբողջություն: Հետևաբար, եթե Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղն ինչ-որ չափով ինքնուրույնացված միավոր է Հայաստանի համար, ապա Ադրբեջանի մասին խոսք անգամ լինել չի կարող:

Գյուլիստանի պայմանագրի քաղաքական-իրավական ուժի արտահայտություններից մեկն էլ այն է, որ այդ պայմանագիրը պաշտպանության կարիք չունի: Խուսափումը Նրանից՝ Նրան առնչվող ցանկացած պետության կողմից ուղղված է հենց իր դեմ: Որովհետև կիսատ-պռատ ուժեղ-մշտական պետություն չի լինում, այլ լինում է հզոր երկիր, որի կառուցման հիմքում դրվում են քաղաքակրթության կողմից մշակված պետական-քաղաքական սկզբունքներն ամբողջությամբ:

Ճիշտ է, մելիքներին և Գանձասարի կաթողիկոսներին 19-րդ դարի սկզբներին չհաջողվեց վերակերտել պետականությունը, բայց, միևնույն ժամանակ,

<sup>1</sup> Договоры России с Востоком политические и торговые, С. Петербург, 1869, стр. 208-214, советско-иранские отношения в договорах, конвенциях и соглашениях, Москва, 1946, стр. 24-26.



երկրամասը, հայտնվելով ռուսական կայսրության կազմում, Արցախի զարգացման և ազգային միատարրության պահպանման հեռանկարներ ուրվագծեց:

Ցարական տիրապետության մեկ դարն առլեցուն էր հասարակական կյանքի վերելքներով և վայրէջքներով: Ինչպես հայ ժողովրդի մի հատվածն, այնպես էլ՝ արցախահայությունն ազատագրվեց պարսկական դաժան տիրապետությունից՝ դրանով իսկ խուսափելով իրեն սպառնացող ճուլման և ֆիզիկական բնաջնջման վտանգից: Երկրամասը տնտեսական ու մշակութային վերելք ապրեց: Դրան հակառակ, քաղաքական ասպարեզում կորուստները նույնպես շոշափելի էին: Ցարական կառավարության մելիքական տների և Գանձասարի կաթողիկոսական աթոռի վերացման քաղաքականությունը կործանարար հետևանքներ ունեցավ: Արցախահայությունը ոչ միայն կորցրեց պետականության վերակերտման հնարավորությունը, այլև զրկվեց ուղղորդող ուժերից: Ասպարեզից հեռացան երկրի և ժողովրդի հոգսերով ապրող ազնվականության ներկայացուցիչները: Անվերադարձ ոչնչացվեցին հարյուրամյակների ընթացքում քննություն բռնած պետական ինստիտուտները: Ազգային կառույցների բացակայության պայմաններում հայ մարդը քայլ առ քայլ դարձավ տնտեսական, սոցիալական առօրյա մանր կենցաղային իրավիճակների մեջ խճճված կայսրության քաղաքացի: Վտանգված էր ոչ միայն ապագայում պետականություն ունենալու հնարավորությունը, այլ նաև հայ մարդու ազգային դիմագիծը: Մելիքական տների վերացման և նրանց վերջնականապես հայրենիքից կտրելու քաղաքականությունը 1920-30-ական թվականներին վերջնական ավարտին հասցրեց խորհրդային իշխանությունը:

1813թ. Գյուլիստանի հաշտության պայմանագրի ստորագրումից մինչև 1917թ. հոկտեմբերյան պետական հեղաշրջումը, ավելի քան մեկդարյա փնտրտուքներից հետո, արցախահայությունը գիտակցեց, որ ցարական ինքնակալության համար խորթ է ազգային պետականության, նույնիսկ ինքնավարության ամեն մի ձգտում: Հայ ժողովուրդը, պատմական փորձի վերախմաստավորմամբ և քննարկվող ժամանակաշրջանի իրողությունների սթափ գնահատմամբ լիովին ընկալեց, որ անկախ ազգային պետությունը միայն կարող էր դառնալ իր լիիրավ, լիարյուն, ստեղծագործ կյանքի միակ երաշխավորը: Հայության, այդ թվում արցախահայության լավագույն զավակները՝ մտավորականները, հասարակական-քաղաքական գործիչները համոզվեցին, որ ազատությունը և անկախությունը հնարավոր է միայն նվաճել՝ ձեռք բերելով քրտինքի, արյան ու մաքառման միջոցով: Հեղափոխական պայքարի քուրայում իմաստնացած այդ գործիչները կարողացան արցախահայության բազում դարերի ընթացքում ազատագրական շարժումների և պետականաշինության ասպարեզում կուտակած հարուստ կենսափորձը համամարդկային արժեքներին համադրելով՝ գտնել այդ ամենի ռացիոնալ հատիկը, ըստ այդմ, չհեռանալով հայության քաղաքակրթական ավանդույթներից, դա տարածել արևմտահայ իրականության մեջ: Հայ ժողովուրդը հասկացավ, որ «հայկական հարցը» սոսկ միայն արևմտյան Հայաստանի հիմնախնդիրը չէ, այն ավելի ընդգրկուն աշխարհագրական սահմաններ ունի և վերաբերում է ողջ հայությանը: Ուստի այդ գերխնդիրը միայն ու միայն կարելի էր լուծել միասնականությամբ ու ողջ հայության գործուն մասնակցությամբ:

20-րդ դարի սկզբներին, հայ առաքելական եկեղեցու ունեցվածքի բռնագրավումից և ազգամիջյան ընդհարումներից հետո, Արցախի հասարակական, քաղաքական կազմակերպությունները, հատկապես՝ ՀԶԴ-ն, հասկացան, որ ապագայում սպասվելիք արհավիրքներին դիմակայելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ունենալ ազգային կառույցներ: Երկարատև աշխատանքի և պայքարի արդյունքում ոչ միայն ձևավորվեցին այդ կառույցները, այլև 1917թ. դեկտեմբերին դրվեցին նոր պետականության հիմքերը: Փաստորեն, դեռևս մինչև Ադրբեջանի և ադրբեջանցիների՝ որպես էթնոքաղաքական հանրության ասպարեզ

գալը, արցախահայությունը վերակերտել էր իր պետականությունը՝ դառնալով տարածաշրջանային գործոն: Մինչև 1920թ. մայիսը՝ խորհրդային կարգերի հաստատումը, Լեռնային Ղարաբաղի հայությունն ապրեց դժվարություններով առլեցուն, բայց՝ պետական կյանքով:

Քննարկելով 1917թ. նոյեմբերի 7-ից մինչև 1921թ. հուլիսի 5-ը ընկած ժամանակահատվածը՝ հայության և Հայաստանի նկատմամբ ՌԿ/ԲԿ Կենտկոմի վարած քաղաքականությունը՝ աներկբա կարելի է ասել, որ Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեջանին խորհրդային ծավալապաշտ կայսրության, տվյալ պարագայում՝ Լենինի և Նրա շրջապատի՝ Արևելքի նկատմամբ ունեցած մոտեցումների տրամաբանական շղթայի բարձրակետը դարձավ: Բոլշևիկներն այդ գործելաոճը որդեգրել էին Նախորդ՝ ցարական իշխանությունից: Նպատակը մեկն էր. իր կազմում ունենալ բզկտված ու մասնատված Հայաստան՝ բացառելով հայկական պետականության դրսևորման ամեն մի ձևը:

Արցախն Ադրբեջանին բռնակցելուց հետո Նարիմանովը և Նրա կողմնակիցները, հայկական երկրամասը վերջնական կլանելու և պանթուրքիստական ծրագրերն իրագործելու նպատակով, փորձում էին հայությանը զրկել ազգային իշխանության վերջին բեկորներից: Ազատագրական պայքարի արդյունքում, թեկուզև ջլատված, բայց և այնպես Արցախում հաջողվեց պահպանել ներքին ինքնավար կարգավիճակը, որն էլ բոլշևիկյան բռնատիրության և «ինտերնացիոնալիզմի» պայմաններում հայության ինքնությունը պահելու հիմնական երաշխիքը դարձավ:

ԽՍՀՄ-ն ունեցել է չորս ձևի վարչատարածքային միավորներ. անկախ տվյալ սուբյեկտի աստիճանակարգից՝ բոլորն էլ ունեցել են միևնույն տիտղոսը: Այդ բոլոր ինքնավար միավորների վրա ճանաչված է եղել միայն ԽՍՀՄ ինքնիշխանությունը: ԼՂԻՄ-ը ԽՍՀՄ ինքնավար մարզ է եղել, որը միջնորդավորված ենթակայություն է ունեցել միութենական իշխանություններից, այսինքն՝ վարչական կառավարման է ենթարկվել ԽՍՀՄ մեկ այլ վարչատարածքային միավորի միջոցով:

ԼՂԻՄ-ը սահմանադրությամբ, հետագայում՝ կանոնադրությամբ, օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմիններով, գործող օրենքներով, հաստատված սահմաններով խորհրդային համակեցության իրավաբաղաբանական համակարգում իր տեղն ու դերն ուներ:

Չնայած խորհրդային Ադրբեջանը սադրանքների և ուժի միջոցով 70 տարի շարունակ փորձում էր սահմանափակել հայկական ինքնավարության իրավասությունները, այնուամենայնիվ, երկրամասի հայությունը, համախմբվելով հայրենասեր ղեկավարության և մտավորականության շուրջ, կարողացավ դիմակայել Բաքվի իշխանությունների հայակործան քաղաքականությանը: Դեռ ավելին, խորհրդային ողջ ժամանակահատվածում հայկական ինքնավարության գոյության պայմաններում հիմնականում անաղարտ պահպանվեց հայ մարդու հոգեկերտվածքը: Երկրամասի հայությունը, չկորցնելով պատմական հիշողությունը, ուղղակի և անուղղակի ձևով նոր սերնդին փոխանցեց պետականության գաղափարը: Միաժամանակ, անդուլ աշխատանքի շնորհիվ նպաստավոր տնտեսական հիմք ստեղծվեց ազատագրական պատերազմում հաղթելու և Նորօրյա ազգային պետություն կառուցվելու համար:

Հյուսիսային Արցախը, ի տարբերություն ԼՂԻՄ-ի, որը չուներ ինքնավար կարգավիճակ, կարճ ժամանակամիջոցում դարձավ Ադրբեջանի հայակույլ քաղաքականության զոհը: Մի քանի տասնամյակների ընթացքում, հոգուտ ադրբեջանցիների, արագ փոխվեց այդ շրջանների ազգագրական դեմքը: ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հայկական բնակավայրերի և հայ քաղաքացիների համար դարձել էր հույսի յուրօրինակ կղզյակ և ոգևորության աղբյուր: Նրանց և, հատկապես, հյուսիսային Արցախի ազգաբնակչության համար Ստեփանակերտը ոչ պաշտոնական

մայրաքաղաքի դերակատարությունն ուներ: Ստեփանակերտի ուսումնական հաստատությունները և, հատկապես մանկավարժական ինստիտուտը տարածաշրջանի հայության համար կադրերի պատրաստման դարբնոց էին դարձել: ԼՂԻՄ-ի մշակութային գործիչների և գրողների հետևողական աշխատանքի շնորհիվ հյուսիսային Արցախի ազգաբնակչությունն անմասն չմնաց հայկական բառ ու բանից: Խորհրդային համակեցության դրվածքով և օրենքներով ապրող վարչական միավորը, արցախահայության կամքի ու համառության շնորհիվ, օրեցօր ազգային կերպարանք ստացավ՝ ձախողելով Ադրբեջանի և նրա հովանավորների հայասպան ծրագրերը:

Չնայած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակին՝ խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, օգտվելով միութենական կենտրոնական իշխանությունների հովանավորությունից, ԼՂԻՄ կազմավորման հենց սկզբից կոպտորեն ոտնահարել է հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Դա արտահայտվել է երկրամասի հայրենասեր ղեկավարներին ու մտավորականներին հալածելու, «հայկական Նացիոնալիստական, հակախորհրդային խմբեր»<sup>1</sup> հայտնաբերելու և դրանց հետ հաշվեհարդար տեսնելու, արտագնա աշխատանքի պատրվակով հայ երիտասարդությանը հայրենիքից դուրս մղելու, հայկական բնակավայրերը վերացնելու և ադրբեջանական գյուղեր հիմնելու, մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հումքային կցորդը դարձնելու, Լեռնային Ղարաբաղի և իր իսկ միութենական հանրապետության միջև արտադրանքի ոչ համարժեք փոխանակում իրականացնելու, հայազգի բնակչության նկատմամբ խտրական կադրային քաղաքականություն վարելու, Արցախին հարող հայկական շրջանների վարչատարածքային կառուցվածքը մասնակիորեն վերափոխելու, հայոց լեզուն և մշակույթը սահմանափակելու, հայկական հուշարձաններն ու մշակութային արժեքները ոչնչացնելու և դրանք յուրացնելու փորձերի մեջ: Նպատակաուղղված ժողովրդագրական քաղաքականության միջոցով՝ Ադրբեջանի իշխանությունները փորձում էին Նախիջևանի օրինակով մարզը լիովին հայաթափել և իրենց օգտին մեկընդմիջտ լուծել ղարաբաղյան հիմնահարցը:

Լեռնային Ղարաբաղը, խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց և ԼՂԻՄ-ի կազմավորումից հետո, արցախահայությունը 1923թ. մինչև 1988թ., խորհրդային ամբողջատիրության պայմաններում, հաղթահարելով տեսանելի և անտեսանելի բոլոր խուճերը, անընդհատ պայքարեց իր ազատության, մայր Հայաստանին վերամիավորման և ազգային պետականության վերակերտման համար: Խորհրդային տարիներին արցախահայության վերելքներով ու վայրէջքներով ընթացող պայքարը 1988թ. փետրվարին սկսված համաժողովրդական ու համազգային ազատագրական շարժման հենքը հանդիսացավ:

Խորհրդային կայսրության կործանումը նպաստավոր պայմաններ ստեղծեց արցախահայության ազգային իղձերի իրագործման համար: Ազատագրական պայքարի հորձանուտում արցախահայությունը ոչ միայն ձեռք բերեց անկախություն, այլ նաև վերակերտեց իր ազգային պետականությունը: Հետևելով ԽՍՀՄ օրենսդրությանը և միջազգային իրավունքի բոլոր նորմերին՝ ԼՂԻՄ ազգաբնակչությունն ինքնորոշման ուղղությամբ 1991թ. ընտրեց անկախություն և պետականություն ունենալու տարբերակը:

Նորօրյա ժամանակներում արցախահայությունն իր ազգային պետականությունը կերտել է երկու փուլերով:

Առաջին փուլը, ժամանակագրական առումով, ընդգրկում է 1991թ. սեպտեմբերի 2-ից՝ ԼՂՀ հռչակումից մինչև 1998թ. սեպտեմբերի 27-ը՝ ՏԻՄ առաջին

<sup>1</sup> ԱԶ պետարխիվ, ֆ. 268, ց. 1, գ. 4 թ. 1, 5, 8 11 և գ. 3, թ. 3, 14:

ընտրությունները: Այդ շրջանը կարելի է անվանել Նոր քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական հիմնարար սկզբունքների ձևավորման փուլ: Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում արցախահայությունը ոչ միայն հռչակեց իր անկախությունը, այլև ստեղծեց արևմտյան չափանիշներին համարժեք լիարյուն գործող պետական, քաղաքական, տնտեսական համակարգ: Այն իր կենսունակությունն ապացուցեց արցախյան պատերազմի և հետպատերազմյան շրջաններում:

Երկրորդ փուլն ընդգրկում է 1998թ. սեպտեմբերի 27-ից մինչև 2006թ. դեկտեմբերի 10-ը՝ ԼՂՀ սահմանադրության ընդունումը: Այդ շրջանը կարելի է անվանել երկրի ժողովրդավարացման և պետականության ամրապնդման փուլ: Քննարկվող ժամանակահատվածում դրված հիմնախնդիրներն ու դրանց լուծումները մեզ հիմք են տալիս ասելու, որ գործող քաղաքական իրավակարգն ու տնտեսական համակարգը ենթարկվել են արմատական բարեփոխման: Այդ ամենն իր սահմանադրական ամրագրումն ստացավ 2006թ. դեկտեմբերի 10-ի համաժողովրդական հանրաքվեի ժամանակ:

Դժվարություններով հանդերձ, Արցախում պետական կառավարման համակարգի տարեցտարի ժողովրդավարացումը, քաղաքացիական հասարակությանը բնորոշ ինստիտուտների ձևավորումը, տեղական ինքնակառավարման եվրոպական սկզբունքների ընդունումը, նորմատիվ-իրավական բազայի մշտական կատարելագործումը, քաղաքական բարեփոխումների անշրջելիությունն ու խորացումը, շուկայական տնտեսվարման սկզբունքների և մեխանիզմների անընդհատ նորացումը, զարգացումն ու ամրապնդումը միանշանակ վկայում են, որ հայկական երկրորդ ազգային պետությանը ԼՂՀ ազգաբնակչությունը վճռականորեն է տրամադրված:

ա) պաշտպանելու արյան և զրկանքների գնով ձեռք բերված ազատությունն ու անկախությունը,

բ) կառուցելու համամարդկային արժեքներին հարիր քաղաքացիական հասարակություն,

գ) ինտեգրվելու միջազգային հանրությանը՝ դառնալու համաշխարհային համակեցության լիիրավ անդամ:

### **Վահրամ Բալայան** **ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐՆ** **ԱՐՑԱԽՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՁԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ**

**Բանալի բառեր՝ Արցախ, մելիքներ, Հայաստան, պետություն, ազատություն, քաղաքականություն**

Ուշ միջնադարում բուն մայր երկրում հայկական պետականության բացակայության պայմաններում, հանձին Արցախի մելիքությունների, հայ ժողովուրդը շարունակում էր պահպանել ազգային իշխանության վերջին բեկորները:

Ցարական տիրապետության մեկ դարի ընթացքում Արցախի հասարակական քաղաքական ուժերը Հայաստանում ազգային իշխանությունը վերականգնելու հույսով ժողովրդի մեջ միշտ վառ են պահել պետականության գաղափարը: Երկարատև պայթարի արդյունքում 1917թ. դեկտեմբերին Արցախում Նորից վերակերտվեց հայոց պետականությունը:

Դժվարին պայմաններում, սահմանափակումներով հանդերձ, արցախահայությունը ինքնավար կարգավիճակը պահպանեց նաև խորհրդային շրջանում: Արցախահայության ազատագրական պայթարի բարձրակետը դարձավ Արցախի հանրապետության ծնունդը: Այն նոր հեռանկարներ է բացում արցախահայության համար:

**Vahram Balayan**  
**HISTORICAL AND IDEOLOGICAL MANIFESTATIONS OF STATEHOOD IN**  
**ARTSAKH FROM THE END OF THE 17TH CENTURY TO OUR DAYS**

**Key words:** *Artsakh, Meliks, Armenia, state, freedom, politics*

Late in the Middle Ages, in the absence of the Armenian state in the motherland, the Armenian people, especially Artsakh Meliks, continued to preserve the last fragments of the national power.

During the century of Tsarist domination Artsakh public-political forces have always kept alive the idea of statehood among the people, hoping to restore the national power in Armenia. As a result of a long-lasting struggle, in 1917, the Armenian statehood was again rebuilt in Artsakh in December.

In difficult conditions, with restrictions, the Armenians of Artsakh preserved autonomous status in the Soviet period. The highest peak of Artsakh liberation struggle became the birth of Artsakh Republic. It opens new perspectives for the Armenians of Artsakh.

**Ваграм Балаян**  
**ИСТОРИЧЕСКИЕ И ИДЕОЛОГИЧЕСКИЕ ПРОЯВЛЕНИЯ**  
**ГОСУДАРСТВЕННОСТИ В АРЦАХЕ С КОНЦА 17 ВЕКА ПО НАШИ ДНИ**

**Ключевые слова:** *Арцах, мелики, Армения, государство, свобода, политика*

В позднее средневековье в условиях отсутствия армянского государства, в особенности в арцахских меликствах, армянский народ продолжал сохранять последние осколки национального управления.

В течение целого века царского правления общественные, политические силы Арцаха в надежде восстановления национального управления в Армении всегда сохраняли в народе идеологию государственности. В результате длительной борьбы в декабре 1917 года в Арцахе вновь восстановилась армянская государственность.

В сложнейших условиях, несмотря на ограничения, автономное положение армян Арцаха сохранилось и в советский период. Высшим пиком освободительной борьбы арцахцев стало зарождение Арцахского государства. Оно открывает новые горизонты развития перед арцахцами.

## ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ ԷԶԵՐԻՑ. ԱՐՇԱԿ Բ-Ի ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

### ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Մուտք: Հայոց թագավոր Արշակ Բ-ն (350-368) ծավալել է պետականակերտ լայն գործունեություն՝ ուղղված դժվարին վիճակում հայտնված պետության համախմբմանը, կազմակերպմանը, զարգացմանը, հզորացմանը, միջազգային հարաբերություններում նրա ծանրակշիռ դերի ապահովմանը և բանակաշինությանը: Չնայած հայ պատմագիրների վերաբերմունքը Արշակ Բ-ի և նրա գործունեության նկատմամբ միանշանակ չէ, նրանց հաղորդած տեղեկություններից հնարավոր է հստակ կարծիք կազմել Հայոց թագավորի ընդգրկուն պետականակերտ գործունեության մասին: Արշակ Բ-ի թագավորության շրջանն այս առումով դարագլուխ է Հայոց պատմության մեջ: Իզուր չէ, որ նրա անվան հետ է կապված հայի և հայկական հողի անբակտելի միասնության, հայի՝ հայրենի հողի վրա հզոր լինելու գաղափարը<sup>1</sup>:

Արշակ Բ-ի պետականակերտ գործունեությունը: Հայտնի է, որ Հայոց Արշակ Բ թագավորի հայրը՝ Տիրանը (338-350), խաբեությամբ գերեվարվել էր Պարսկաստան, կուրացվել ու բանտ նետվել: Երկրում անիշխանություն էր տիրում<sup>2</sup>:

Տիրանի որդի Արշակ Արշակունին, ըստ ավանդության՝ Հայոց թագավոր է հռչակվել Պարսկաստանում, որտեղ նա պահվում էր որպես պատանդ: Վերադառնալով հայրենիք՝ նա «հավաքում է ցրվածներին և թագավորում նրանց վրա»<sup>3</sup>: Պատմիչը հաղորդում է, որ Արշակ Բ-ի օրոք խաղաղություն հաստատվեց, իսկ պարսիկների ասպատակությունների հետևանքով փախուստի դիմած ու թաքնված մարդիկ վերադարձան իրենց բնակավայրերն ու խաղաղ բնակվեցին թագավորի հովանու տակ: **«Աշխարհն էլ խաղաղվեց, բարեկարգվեց, կազմակերպվեց...և այնուհետև [Հայաստանի] բնակիչներից յուրաքանչյուրը խաղաղորեն վայելում էր իր ստեղծածը»**<sup>4</sup>: Փաստորեն, առաջին գործը, որ իրականացվեց Արշակ Բ-ի կողմից, պետական իշխանության ամրապնդումն էր և երկրի զարգացումը: Հայ ժողովուրդը սկսում է բարգավաճել:

Արշակ Բ-ն ի սկզբանե ձեռնամուխ եղավ Հայոց թագավորության հզորացման համար ամենակարևոր երաշխիքի ապահովմանը՝ երկրի իշխանների համախմբմանը: Դեռևս Տիրան թագավորի օրոք, չընդունելով նրա անօրենությունները, Տայքի իրենց տիրույթներն էին հեռացել Մամիկոնյանները, որոնց էր պատկանում Հայոց թագավորության սպարապետի մականը: Առաջինը նրանց է միաբանության կոչում Արշակ Բ-ն: Հայոց թագավորը մյուս «մեծամեծերին էլ հնազանդության է բերում, նրանց զորքերը բաժանում [թագավորության] բոլոր կողմերում և Հայաստանի սահմանների վրա սահմանապահ կարգում»<sup>5</sup>:

Այնուհետև Արշակ Բ-ն սկսում է պետության կազմակերպման և պաշտոնների նշանակման գործը: «Եվ Հայաստան երկրի թագավորությունը նորոգվեց ու զարգացավ ինչպես առաջ՝ մեծամեծերն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում»<sup>6</sup>:

<sup>1</sup> Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ե., 1987, էջ 259-261:

<sup>2</sup> Փավստոս Բուզանդ, էջ 79-91:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 105:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>6</sup> Նույն տեղում: Հայտնի է, որ Հայոց թագավորության համակարգում կարևոր տեղ էր զբաղեցնում նախարարների՝ ըստ գահերի (իմա՝ աստիճաններ) բաժանումը, այսինքն՝ պետական աստիճանակարգը

Արշակ Բ-ն պետական կարևորագույն պաշտոնները (գործակալություններ) բաժանում է նախարարական տներին՝ ըստ կառավարման ասպարեզում ունեցած ձեռքբերումների կամ պետությանը մատուցված ծառայությունների:

**Նա հազարապետությունը հանձնում է «շինականներին շենացնող Գևուկյաց ազգին, որպեսզի իբրև ամբողջ երկրի հազարապետներ՝ հոգատարությամբ խնամեն աշխարհաշեն, աշխարհը կերակրող շինականներին»:** Ժողովրդի բարգավաճման համար Յայոց թագավորը հազարապետ է նշանակում, փաստորեն, այն նախարարին, որը շինականներին շենացնելու փորձառություն և կամք ուներ, որպեսզի նա, որպես համապետական պաշտոնյա, իր նախարարական տիրույթում իրականացրածը տարածի ողջ երկրում:

Յայոց սպարապետ է նշանակվում Վասակ Մամիկոնյանը՝ Յայոց պատմական ավանդության մյուս նվիրական հերոսը: Ըստ որում՝ **Սպարապետի պաշտոնը Մամիկոնյաններին հանձնվում է Յայոց թագավորության պաշտպանության գործում ունեցած ներդրման համար**, քանզի հայտնի էր, որ Նրանք ճակատ առ ճակատ քաջորեն կռիվ էին մղել Յայաստանի համար, աներկյուղ ու քաջասիրտ էին, ճակատամարտերում առաջինն էին, քաջանուն էին, բարեհամբավ ու բարեգործ և պատերազմական գործերում համարվում էին հաջողակ<sup>1</sup>:

Նման գործունեության արդյունքում ժողովրդի ընկալման մեջ Յայոց թագավորի գործունեության հետ է սկսում կապվել նաև ողջ թագավորության ճակատագիրը<sup>2</sup>:

Այնուհետև, Արշակ Բ-ն հավաքում է բոլոր նախարարներին ու մնացյալ մեծամեծերին՝ քննարկելու Յայոց նոր կաթողիկոսի հարցը: Ընտրում են Ներսեսին, որը Գրիգոր Լուսավորչի ծոռն էր: Չնայած նա գինվորական էր, բոլորի ընտրությունը կանգ առավ հենց նրա վրա, քանի որ **նա մարդասեր էր, պարկեշտ, իմաստուն, անաչառ, իրավադատ, խոնարհ, աղքատախնամ:** Սկզբում նա հրաժարվեց՝ իրեն այդ պաշտոնին անարժան համարելով<sup>3</sup>: Վճռական խոսքն ասաց Յայոց թագավորը, որից հետո Ներսեսին ուղարկեցին Կեսարիա՝ կաթողիկոս ձեռնադրվելու<sup>4</sup>:

Ներսեսի կաթողիկոսությունը նշանավոր ժամանակաշրջան է Յայոց պատմության մեջ: Նա բարեգործություն էր անում և մղում մյուսներին՝ այդպես գործելու, նա աղքատներին օգնում էր և պահանջում, որ մյուսներն էլ այդպես անեն, կառուցում էր աղքատանոցներ, որպեսզի աղքատները կարիք չունենան մուրալու<sup>5</sup>: «Եվ բոլոր աշխարհին՝ թագավորի գլխավորությամբ, առհասարակ բոլոր մեծամեծերին և բոլոր նրանց, ովքեր իրենց մերձավորի վրա իշխանություն ունեին, նա կոչ էր անում գթասիրտ լինել իրենց ծառաների և կրտսերների (իմա՝ ավելի ցածր խավի ներկայացուցիչներ-Ա.Ե.) վրա, ապօրինաբար և տարաբնույթ հարկերով նրանց չափից դուրս չնեղել, քանի որ նրանց համար երկնքում Տեր կա»<sup>6</sup>: Այսպիսին էր Ներսեսը՝ կաթողիկոս դառնալու ժամանակ, այդպիսին էլ մնաց իր ողջ գահակալման շրջանում:

(հիերարխիա): Մյուս կողմից, կարևոր էր նաև գործակալությունների, այսինքն՝ պետական կարևոր պաշտոնների (հազարապետ, սպարապետ և այլն) համակարգը:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 175, 179, 201 և այլն:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 109-111:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 115: Յայտնի է, որ սկզբում Յայոց կաթողիկոսները ձեռնադրվում էին Կեսարիայում, սակայն Արշակ Բ-ն և նրա որդի Պապը, Յայոց եկեղեցին անկախ դարձնելու նպատակով, սկսեցին կաթողիկոսների ընտրությունը և ձեռնադրությունն իրականացնել Յայաստանում: Մասնավորապես, Արշակ Բ-ի կողմից Յայաստանում կաթողիկոս է ձեռնադրվել Զուևակը (նույն տեղում, էջ 195):

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 117-121:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 121-123:



**Յայ պատմագրության մեջ Արշակ Բ-ի թագավորության և Ներսեսի կաթողիկոսության շրջանի Յայաստանը բարեկարգության և բարգավաճության առումով նմանեցվել է Վերին կամ Երկնային Երուսաղեմին<sup>1</sup>:**

Կարող ենք արձանագրել, որ Արշակ Բ-ի կողմից արվեց ամեն բան՝ Յայաստանը և հայերին միավորելու, Յայոց պետականությունն ամրապնդելու և հզորացնելու ուղղությամբ: Նա բոլոր պետական պաշտոնները բաժանեց ըստ արժանիքների՝ հաշվի առնելով պետական շահը: Յայոց հոգևոր տերը նույնպես առաջադրվեց նման հայեցակետից:

Ներսես կաթողիկոսը Եական դերակատարությունն ձեռք բերեց պետության ներքին կյանքում: Դրա վառ օրինակը նրա՝ Յոռմում ձերբակալվելու և աքսորվելու միջադեպին Յայոց թագավորի արձագանքն էր: Արշակ Բ-ն Ներսես կաթողիկոսին մի պատվիրակության հետ ուղարկեց Յոռմի կայսեր մոտ: Այնտեղ Յայոց կաթողիկոսը դավանաբանական վեճի բռնվեց կայսեր հետ, որի պատճառով նրան ձերբակալեցին ու աքսորեցին<sup>2</sup>: Կայսրը սկզբում ցանկանում էր նրան մահապատժի ենթարկել, սակայն նրան զգուշացրեցին, որ «դրանք (իմա՝ Ներսես կաթողիկոսը և նրա հետ կայսեր մոտ ուղարկված հայ մի քանի մեծամեծերը-Ա.Ե.) օտար ու հեռավոր երկրից ուղարկվել են մի հզոր թագավորի կողմից, մեծ տիրոջ պատգամավորներ են, չի կարելի նրանց վնաս հասցնել, քանի որ մեծ պատերազմ կծագի մեր և Յայոց մեծ թագավորի միջև»<sup>3</sup>: Թեև կայսրը Ներսես կաթողիկոսին ազատ չարձակեց, սակայն, փոխարենը Ներսեսի հետ մեկնածներին, ինչպես նաև Արշակ Բ-ի՝ Յոռմում պատանդ պահվող եղբորորդիներին մեծամեծ նվերներով ուղարկեց Յայաստան: Նա հորդորում էր Յայոց թագավորին՝ իրեն չմեղադրել կատարվածի համար<sup>4</sup>:

Երբ Արշակ Բ-ն ստացավ նամակը, բարկացավ ինչպես կայսեր արածի, այնպես էլ իր նախարարների վրա, որ կայսեր նվիրած գանձերը բերել են իրեն: «Քարերը (իմա՝ թանկարժեք քարերը, որ ուղարկել էր կայսրը-Ա.Ե.) կայսեր վրա թափեք և ձեր վրա, որ բերել եք: Մենք էլ շատ քարեր ունենք՝ դրանք տվողի և ձեր՝ դրանք բերողների ատամները թափելու համար»: **Պետության հեղինակությանը հասցված այդ հարվածը, հասկանալի է՝ չէր կարող վճռական քայլերի չմղել Արշակ Բ-ի նման թագավորին:** Նա ասում էր, որ նման անպատվությանը չի դիմանա և վրեժխնդիր կլինի: Այնուհետև նա հրամայեց Վասակ Մամիկոնյանին՝ զորքերը հավաքել և արշավել հռոմեական տիրույթների վրա: Վասակը 260 հազարանոց զորքով արշավեց ու ասպատակեց հռոմեական տիրապետության ներքո գտնվող Փոքր Ասիայի կենտրոնական շրջանները և հասավ Անկուրա<sup>5</sup>: Շուտով Ներսես կաթողիկոսը վերադարձավ Յայաստան<sup>6</sup>:

**Աշտիշատի կանոնադրի ժողովը:** Ժողովը գումարվեց 354 թ.: Արշակի գահակալության առաջին տարիներն էին, երբ Տիրանի գահակալության ողբերգական ավարտից հետո երկրում փլուզվել էին բոլոր տեսակի կարգ ու կանոնները, գլուխ էին բարձրացրել հին՝ հեթանոսական երևույթները, և Աշտիշատի ժողովը պետք է նորովի կարգավորեր երկրի ներքին վիճակն ու հարաբերությունները:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ Ներսես կաթողիկոսը մոտ 354 թ.<sup>7</sup> Եպիսկոպոսների ժողով գումարեց Աշտիշատում, քանի որ հենց այնտեղ էին գումարվել բոլոր նման

<sup>1</sup> Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Ե., 2001, էջ 81:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 127, 139-141:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 139:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 143, 165:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 165-167: Անկուրան թերևս նույնական է ներկայիս Անկարա քաղաքին:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 173:

<sup>7</sup> Թվականը ճշտելուն նպաստում է Մովսես Խորենացու այն տեղեկությունը, որ Ներսեսը կաթողիկոս է ձեռնադրվել Արշակ Բ-ի թագավորության (350-368) 3-րդ տարում (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 334-335), այն է՝ 352/353 թ.: Նա ժողովը գումարել է Կեսարիայից վերադառնալուց անմիջապես հետո՝ 354 թ.:

ժողովները<sup>1</sup>: Ըստ Մովսես Խորենացու ժողովը եղել է ոչ միայն եպիսկոպոսների մասնակցությամբ, այլ նաև աշխարհականների<sup>2</sup>: Երկու պատմիչներն էլ հավաստում են, որ ժողովի նպատակն է եղել «կանոնական սահմանադրությամբ» երկրում աշխարհիկ ու եկեղեցական կարգերը բարենորոգելը և Յոմեական կայսրությունում տեսած բարեկարգությունները Յայաստանում տեղայնացնելը<sup>3</sup>:

Ըստ Փավստոս Բուզանդի՝ ժողովը կարգ ու կանոն է սահմանել երկրում թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր կյանքում՝ հիմնված առաքյալների սահմանած կանոնների վրա: «Յայոց աշխարհի ժողովրդին վերածեցին կարծես վանական միաբանության, միայն ամուսնության կարգն էր տարբեր»<sup>4</sup>: Ժողովի որոշումների հիմամբ ստեղծվում էին աղթատանոցներ, հիվանդանոցներ, տեղավորում էին միևս այդ բնակավայրերից պիղծ լինելու մեղադրանքով քշված բորոտներին ու այլ հիվանդների, նրանց դարման ու ռոճիկ տրամադրում: Ժողովը որոշել էր, որ հիվանդներն ու աղթատները մասն կացարաններում և ոչ թե դուրս գան մուրալու<sup>5</sup>: Ժողովը սահմանել էր նաև, որ մեռյալների վրա չպետք է անհույս լաց ու կոծ արվի, քանի որ դա հակասում էր քրիստոնեության հիմնական՝ հարության հույսին<sup>6</sup>:

Մարդիկ պետք է օրինավոր լինեն ամուսնության մեջ, չպետք է ստեն ու դավեն իրար, հեռու մասն ազգակցական մերձավոր ամուսնությունից<sup>7</sup>: Նրանք չպետք է ուտեին սատկած անասունի միս, ինչպես նաև արյուն ճաշակեին<sup>8</sup>:

Այս համատեքստում ըստ պատմիչի դատապարտվում էին նենգությունը, չարախոսությունը, բամբասանքը, ազահությունը, նախանձությունը, ցանկամոլությունը, արվագիտությունը, իգանալը, հարբեցողությունը, որկրամոլությունը, հափշտակությունը, պոռնկությունը, վրեժխնդրությունը, ստախոսությունը, թշնամությունը, սուտ երդումը, սպանությունը, անասնագիտության պղծությունը<sup>9</sup>:

Երկրի աշխարհիկ ու հոգևոր տերերը, նրանք, որ այլոց վրա իշխանություն ունեին, պետք է գթասիրտ լինեին իրենց ծառաների, կրտսերների ու աշակերտների նկատմամբ, նրանց անտեղի ու տարապայման հարկերով չնեղեին<sup>10</sup>:

Իրենց հերթին ծառաներն էլ պետք է հավատարիմ մնային իրենց տերերին<sup>11</sup>:

Յավանաբար ժողովրդի միջից հեթանոսությունը դուրս մղելու համար ժողովը որոշել էր նաև դպրոցներ բացել հունարեն և ասորերեն լեզուներով, քանի որ աստվածաշունչը Յայաստանում քարոզվում էր հենց այդ լեզուներով<sup>12</sup>:

Ըստ Մովսես Խորենացու՝ ժողովի նպատակն էր կանոնական սահմանադրությամբ ողորմածություն հաստատելը, քանի որ մեր աշխարհում բորոտներն ու վարակիչ հիվանդություններով տառապողները հալածվում էին որպես պիղծ արարածներ, ապաստանում էին անապատներում և ամայի վայրերում, և որևէ մեկը նրանց համար հոգ չէր տանում: Բացի այդ, հաշմանդամներին որևէ մեկը չէր ինսամում, անծանոթներին ոչ ոք իր տանն ապաստան չէր տալիս: Դրա համար ժողովը որոշեց ամեն մի գավառում աղթատանոցներ ու հիվանդանոցներ կառուցել, իսկ

<sup>1</sup> Տե՛ս Փավստոս Բուզանդ, էջ 118-119:

<sup>2</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 336-337:

<sup>3</sup> Տե՛ս Նույն տեղում: Տե՛ս նաև Փավստոս Բուզանդ, էջ 118-119:

<sup>4</sup> Փավստոս Բուզանդ, էջ 118-119:

<sup>5</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 119-121:

<sup>6</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 120-121:

<sup>7</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>8</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>9</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>10</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 120-123:

<sup>11</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 122-123:

<sup>12</sup> Տե՛ս Նույն տեղում: Տե՛ս Վարդանյան Վ., Ներսես Մեծը և Աշտիշատի ժողովի նշանակությունը Յայաստանի ներքաղաքական կյանքում, «Էջմիածին» Պաշտոնական ամսագիր Յայրապետական Վթոռոյ Ս. Էջմիածնի, 1997, թիվ 11-12, էջ 141:

դրանց պահելու պարտավորությունը դրվեց ավանների ու ագարակների վրա, որպեսզի իրենց արդյունքից նրանց բաժին հանեն, իսկ նրանք էլ փակված մնան այդ տեղերում<sup>1</sup>:

Որոշվեց նաև ամեն գյուղում վանք հիմնել, որին կից պետք է գործեր օտարանոց, որբերի և ծերերի սննդանոց<sup>2</sup>:

Ժողովի որոշմամբ մենաստաններ են կառուցվում երկրի ամայի վայրերում<sup>3</sup>:

Նախարարական տոհմերի մեջ արգելվում էր երկու բան.

ա. մերձավոր խնամփութություն հաստատելը, որն արվում էր ագահության պատճառով, թերևս, նախարարական տիրույթների ամբողջականությունը պահպանելու նպատակով, քանի որ «արտաքին» ամուսնության հետևանքով տիրույթների տարբեր հատվածներ կարող էին օտարվել<sup>4</sup>,

բ. մեռյալների վրա հեթանոսական սովորությամբ արարողություն անելը, երբ մարդիկ այլանդակում էին իրենց բարբարոսների պես<sup>5</sup>: Նման մի կոծի տեսարան Փավստոս Բուզանդը ներկայացնում է Գնելի թաղման հետ կապված, երբ նրա կին Փառանձեմը «հանդերձը պատռելով, հերարձակ, կուրծքը բաց բլրորի ներկայությամբ կոծ էր անում, բարձրաձայն ճչում, աղիողորմ արտասվելով ողբ էր անում...»<sup>6</sup>:

Բանական ու բանակաշինությունը: Արշակ Բ-ի օրոք Յայոց բանակն ամենահզորներից մեկն էր աշխարհում: Պատմիչն այսպես է ներկայացնում Յայոց բանակն Արշակ Բ-ի օրոք. «չորս հարյուր հազար զինվոր՝ կուռ և զինավառ, **որոնք ընտիր ռազմիկներ էին, լի արիությամբ և կռվում զոհվելու պատրաստ**: Նիզակավորներ, սուսերավորներ, աղեղնավորներ՝ անվրեպ, կորովի, վաղրավորներ, սակրավորներ, որոնք **սովոր էին թշնամու դեմ աներկյուղ կռվել**, ամբողջ հեծելազորը՝ զրահավոր, պատենագեն, սաղավարտավոր, դրոշներով, բազմաձայն փողհարների նշանակիր խմբով»<sup>7</sup>:

Այնուհետև, նկարագրելով Շապուհի գորբերին ընդառաջ գնացող Յայոց զորքը, պատմիչը հաղորդում է, որ այն կազմված էր «**ՄԻԱՍԻՐՏ, ՄԻԱԲԱՆ, ՄԻԱՍԻՏՔ**» զինվորներից<sup>8</sup>:

Մեկ այլ միջադեպի հետ կապված՝ պատմիչը հայտնում է, որ «Վասակ զորավարը ձեռքի տակ ուներ մոտ **վաթսուն հազար զինվոր՝ ընտիր և պատերազմող**, որոնք միամիտք, միասիրտ էին՝ միաբան պատերազմելու, մարտնչելու իրենց կանանց ու որդիների համար, իրենց կյանքը նվիրելու աշխարհին (իմա՝ Յայաստան-Ա.Ե.) մինչև ի մահ, կռվելու իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների համար»<sup>9</sup>:

Յայոց բանակի հզորության և մարտունակության վերաբերյալ կարելի է կարծիք կազմել Մծբինի մոտակայքում 359 թ. տեղի ունեցած ճակատամարտի նկարագրությունից: Պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ Շապուհը դիմեց Արշակ Բ-ի օգնությանը: Վերջինս հավաքեց իր զորքը՝ 400 հազար զինվոր և մեկնեց Շապուհին օգնության: Յայոց բանակը Մծբին քաղաքի մոտակա դաշտը հասավ այն ժամանակ, երբ հռոմեական զորքն արդեն դիրքավորվել էր, իսկ պարսկականը՝ դեռ ճակատամարտի դաշտ չէր եկել: Պարսից զորքին սպասելը ձանձրացրեց Յայոց զորքին: Յայ զինվորները պահանջում էին պարսիկներին չսպասել, այլ սեփական

<sup>1</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 336-337:

<sup>2</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>3</sup> Տե՛ս Նույն տեղում:

<sup>4</sup> Տե՛ս Վարդանյան Վ., նշվ. աշխ., էջ 139:

<sup>5</sup> Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 336-337:

<sup>6</sup> Փավստոս Բուզանդ, էջ 190-191:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 205:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 215:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 223:

ուժերով հաղթել հռոմեացիներին: Հատկապես անհամբեր էր Վասակ սպարապետը: Ի վերջո Արշակ Բ-ն տվեց հարձակման հրամանը: Հայոց բանակը հարձակվեց հռոմեական զորքի վրա, ջախջախեց և կոտորեց մինչև վերջին զինվորը<sup>1</sup>: Որոշ ժամանակ անց պատերազմի դաշտ եկած Շապուհը հայտարարեց, որ ինքը՝ ողջ պարսից զորքով, հազիվ թե կարողանար հաղթել հռոմեական զորքին<sup>2</sup>:

Պարսկա-հայկական երկարատև պատերազմներում հայոց սպարապետի և զորքի քաջագործություններից ազդված՝ Պարսից Շապուհ թագավորը հետագայում շատ անգամ կրկնում էր. «Երանի նրան, որ Հայոց զորքի տերն է, այդպիսի տիրասեր, միաբան և միամիտք զորքի»<sup>3</sup>:

Ամփոփելով ներկայացվածը՝ կարող ենք արձանագրել, որ Արշակ Բ-ի թագավորությունը հայոց պետականության պատմության ամենաուսանելի էջերից է: Հայոց արքան պետականակերտման դժվարին ճանապարհին անխոնջ կերպով հետևում էր միայն մեկ տեսլականի՝ պետության հզորացմանը, որին էլ միտված էր նրա յուրաքանչյուր քայլը:

### **Արման Եղիազարյան** **ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ ԷՋԵՐԻՑ.** **ԱՐՇԱԿ Բ-Ի ԴԱՐԱՇՐՋԱՆԸ**

*Բանալի բառեր՝ ուսանելի էջեր, դարաշրջան, պատմություն, Արշակ II, պետականություն, Հայոց թագավորություն, պետության բարեշինություն, բանակ, պետության հեղինակություն*

Արշակ Բ-ի դարաշրջանը կարևոր տեղ ունի հայոց պետականության պատմության մեջ: Այդ ժամանակ հայոց թագավորությունը բախվել էր լրջագույն հիմնախնդիրների, որոնց լուծումից էր կախված նրա հետագա գոյությունը: Արշակ Բ-ին հաջողվեց լուծել այդ խնդիրները. առաջին հերթին պետական բարձրագույն պաշտոններում նշանակվեցին հույժ փորձառու գործիչներ:

Արքան Ներսես կաթողիկոսի հետ զբաղվեց երկրի բարեկարգման աշխատանքով, որի արդյունքում ժամանակակիցները հայոց թագավորությունը համեմատում էին նույնիսկ Վերին Երուսաղեմի հետ:

Արշակ Բ-ն հզորացրեց հայոց բանակը՝ թվաքանակը հասցնելով 200 հզ զինվորի: Այդ ամենի շնորհիվ նրան հաջողվեց բարձրացնել պետության հեղինակությունը միջազգային հարաբերություններում: Արդյունքում Հռոմն ու Պարսկաստանը ստիպված հաշվի էին նստում հայոց թագավորության շահերի հետ:

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 205-207:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 207:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 309-311:

**Arman Yeghiazaryan**  
**AN INSTRUCTIVE PAGE OF ARMENIAN STATEHOOD HISTORY: THE EPOCH**  
**OF ARSHAK II**

**Key words:** *instructive pages, epoch, Arshak II, statehood, Armenian kingdom, accomplishment of the kingdom, army, authority of the state*

The epoch of Arshak II has a special place in the history of Armenian statehood. At that time, the Armenian kingdom faced serious problems and its further existence depended on the solution of these problems. Arshak II managed to solve these problems: at first figures were appointed in all key positions of the kingdom who have already shown themselves in practice.

King Arshak II together with the Catholicos Nerses were engaged in accomplishment of the kingdom, as a result of which contemporaries compared Arshak's Armenia with Heavenly Jerusalem.

King Arshak II strengthened the Armenian army, the number of which sometimes reached 200,000 soldiers. As a result of such efforts, Arshak II managed to raise the authority of the state on the external arena: in the issue, both Rome and Persia were forced to take into account the interests of the Armenian kingdom.

**Арман Егиазарян**  
**ОДНА ИЗ ПОУЧИТЕЛЬНЫХ СТРАНИЦ ИСТОРИИ АРМЯНСКОЙ**  
**ГОСУДАРСТВЕННОСТИ: ЭПОХА АРШАКА II**

**Ключевые слова:** *поучительные страницы, эпоха, Аршак II, государственность, Армянское царство, благоустройство государства, армия, авторитет государства*

Эпоха Аршака II занимает особое место в истории Армянской государственности. В этот период Армянское царство сталкивалось с серьёзными проблемами, и от их решения зависело его дальнейшее существование. Аршак II сумел решить эти проблемы, первым делом на всех ключевых позициях царства были назначены фигуры, которые уже проявили себя на деле.

Царь Аршак II вместе с католикосом Нерсесом занимались благоустройством государства, в результате чего современники сравнивали Армению Аршака II с Небесным Иерусалимом.

Царь Аршак II усилил армянскую армию, численность которой иногда доходила до 200 000 солдат. В результате таких усилий Аршак сумел поднять авторитет государства на внешней арене: в итоге и Рим, и Персия были вынуждены учитывать интересы Армянского царства.

**ԱՐՑԱԽԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ****ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱԼ**

1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Արցախում կայուն իրավիճակը կտրուկ փոխվեց և բոլոր առումներով սկսեց վատթարանալ: Երկրամասում անիշխանություն էր տիրում: Նոյեմբերից իշխանությունն իր ձեռքը կենտրոնացնելու փորձեր կատարեց Հայ հեղափոխական կուսակցությունների ու կազմակերպությունների Ղարաբաղի ժամանակավոր խորհուրդը (միջկուսակցական բյուրո)<sup>1</sup>: 1918 թ. հուլիսի վերջին տեղի ունեցած արցախահայության առաջին համագումարը Արցախը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և ձևավորեց երկրամասի նոր ղեկավար մարմին՝ Ղարաբաղի ժողովրդական կառավարություն<sup>2</sup>: Արցախի հայության համագումարները, որոնք ընդհանուր առմամբ գումարվեցին 10 անգամ՝ մինչև 1920 թ. մայիսի վերջը, ներկայացնում էին տեղի հայության կամքը, քանի որ նրան մասնակցում էին մեկական պատգամավորներ յուրաքանչյուր բնակավայրից:

Մի կողմից ժողովրդական կառավարության ստեղծումը Արցախում կյանքը հունավորելու լավ սկիզբ էր, մյուս կողմից տարածաշրջանում հայտնված թուրքերը և Արևելյան Անդրկովկասի թաթարները սկսեցին իրագործել Արցախը շրջափակելու և արցախահայությանը ծնկի բերելու իրենց վաղեմի ծրագիրը:

1918 թ. օգոստոսին Բաքվի վրա արշավող թուրքական բանակի հրամանատար Նուրի փաշան վերջնագիր ներկայացրեց արցախահայությանը՝ պահանջելով ճանաչել Ադրբեջանի իշխանությունը<sup>3</sup>: Թուրքերից նման վերջանգիր ստացվեց նաև սեպտեմբերին, երբ ընթանում էր արցախահայության երկրորդ համագումարը<sup>4</sup>: Այդ օրերին գումարված արցախահայության թե՛ երկրորդ և թե՛ երրորդ համագումարները մերժեցին այդ պահանջը: Այս ընթացքում թուրքերն արդեն գրավել էին Բաքուն, որով Արցախի կացությունն էլ ավելի ծանրացավ: Թուրք-թաթարական զորքերը սեպտեմբերի վերջին գրավեցին Շուշին<sup>5</sup>:

Սկսվեց արցախահայության հերոսական դիմադրությունը զավթիչների դեմ: 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուղրոսի զինադադարի համաձայն թուրքական զորքերը պետք է հեռանային Անդրկովկասից, իսկ այդ պայմանի կատարումը պետք է վերահսկեին անգլիական զորքերը: Սկզբնական շրջանում արցախահայությունը խանդավառությամբ ընդունեց այդ լուրը<sup>6</sup>:

Սակայն կարճ ժամանակ անց պարզվեց, որ բրիտանացիները նույնպես, իրենց շահերից ելնելով, կողմ էին Արցախի նկատմամբ Ադրբեջանի, թեկուզ ժամանակավոր գերիշխանությանը: Անգլիացիները դրականորեն են վերաբերվում նաև 1919 թ. հունվարին Ադրբեջանի կառավարության նախագահ Խան-խոյսկու կողմից Խոսրով բեկ Սուլթանովին Ղարաբաղի և Չանգեզուրի ժամանակավոր ընդհանուր նահանգապետ նշանակելու փաստին<sup>7</sup>: Հայկական կողմը դժգոհ մնաց Ադրբեջանի այս ագրեսիվ քայլից: Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը բողոքի նոտա հղեց Ադրբեջանի վերահսկողության ներքո Արցախ-Չանգեզուրի ընդհանուր նահանգապետություն հռչակելու փաստի կապակցությամբ, որով ոտնահարվում էին Հայաստանի տարածքային

<sup>1</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1992, էջ 18:

<sup>2</sup> Տե՛ս Нагорный Карабах в 1918-1923 гг. Сборник документов и материалов, Ереван, 1992, էջ 13-15:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 7, թ. 62:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 11:

<sup>5</sup> Տե՛ս Բայայան Վ., Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002, էջ 298:

<sup>6</sup> Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն: Հատոր I. Առաջին Տարին, 1918-1919, Երևան, 2005, էջ 169:

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 176:

իրավունքները<sup>1</sup>: Իսկ Արցախի հայկական իշխանությունները բրիտանացիներին տեղեկացրին, որ չեն ընդունում Ադրբեջանի գերիշխանությունը<sup>2</sup>: Փաստորեն, արցախահայությունը ստիպված էր դիմակայել ոչ միայն Ադրբեջանի ռազմական հարձակումներին, այլև՝ բրիտանացիների քաղաքական ճնշմանը:

Մի կողմից Ադրբեջանի վարած տնտեսական շրջափակման քաղաքականությունը, մյուս կողմից պարբերաբար տեղի ունեցող ջարդերը ավելի են բարդացնում արցախահայության վիճակը: 1919 թ. օգոստոսի 12-ին Շոշ գյուղում հրավիրված արցախահայության յոթերորդ համագումարը անգլիացիների պահանջով և Ադրբեջանի ռազմական սպառնալիքի ներքո որոշեց ժամանակավորապես՝ մինչև Փարիզի կոնֆերանսում հարցի վերջնական վճռումը, ընդունել Ադրբեջանի իշխանությունը: Համագումարի կողմից ընտրված պատվիրակությունը համապատասխան համաձայնագիր ստորագրեց Սուլթանովի հետ<sup>3</sup>: Սակայն դրանից հետո էլ չդադարեցին Ադրբեջանի ոտնձգությունները Արցախի նկատմամբ, չնայած այն հանգամանքին, որ 1919 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում Հայաստանը և Ադրբեջանը ստորագրել էին ռազմական գործողությունները դադարեցնելու մասին համաձայնագիր<sup>4</sup>: Ավելին, 1919 թ. նոյեմբերին Ադրբեջանի պարտությունը Չանգեզուրում նրան ստիպեց միառժամանակ ձեռնպահ մնալ Չանգեզուրի նվաճման պլանից, և նա իր ողջ ուժերն ուղղեց Արցախի վրա: Ադրբեջանցիները Չանգեզուրում կրած պարտության համար մեղադրում էին Արցախին:

Արցախի սահմանին կենտրոնացնելով իր բանակի մեծ մասը՝ 1919 թ. դեկտեմբերի 25-ին Ադրբեջանը անցավ հարձակման, իսկ 1920 թ. փետրվարի 19-ին Շուշիի Ազգային խորհրդից պահանջեց Արցախը հայտարարել Ադրբեջանի անբաժանելի մաս<sup>5</sup>: 1920 թ. փետրվարի 28-ից մարտի 5-ը Վարանդայի Շոշ գյուղում գումարված արցախահայության ութերորդ համագումարը մերժեց Ադրբեջանին ենթարկվելու պահանջը<sup>6</sup>: Սա ավելի զազազեցրեց զավթիչներին: Նրանք սկսեցին ավելի մեծաքանակ զինված ուժեր կենտրոնացնել ազատատենչ արցախահայության դիմաց:

1920 թ. մարտին Ադրբեջանը արցախցիներից պահանջեց զինաթափվել: Մարտի 22-ից ադրբեջանական զորքերը լայնածավալ հարձակման անցան Արցախի վրա՝ 300 կիլոմետրանոց ճակատով: Մարտի 23-ի գիշերը արցախահայությունը ընդհանուր ապստամբություն բարձրացրեց զավթիչների դեմ: Սակայն ուժերը խիստ անհավասար էին և ադրբեջանական զորքերն ու մահմեդական խաժամուժը գրավեցին Շուշիի հայկական մասը, հրդեհեցին այն՝ կոտորելով մոտ 10 հազար հայ: Թշնամին կոտորածներ իրականացրեց նաև Շուշիի և Ջիվանշիրի գավառների բազմաթիվ հայկական գյուղերում: Ծանր կացություն էր ստեղծվել հատկապես Ասկերանում, որտեղ 1920 թ. ապրիլի 3-ին ճեղքելով ճակատը հակառակորդը ուղղություն վերցրեց դեպի Շուշի<sup>7</sup>:

Արցախի համար այդ ծայրահեղորեն բարդ և ճակատագրական պահին ՀՀ կառավարությունը որոշում ընդունեց օգնության հասնել նրան: 1920 թ. ապրիլի 13-ին Գորիսից Վարանդա մտավ Դրոն՝ հայկական բանակի զորամասով, որն իր ձեռքը վերցրեց իշխանությունը, իսկ Ղափանից Դիզակ մտավ Նժդեհը՝ Չանգեզուրի

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 243, թ. 1:

<sup>2</sup> Տե՛ս Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 38, թ. 27:

<sup>3</sup> Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 341:

<sup>4</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 282, թ. 35-36:

<sup>5</sup> Տե՛ս Բալայան Վ., Արցախի պատմությունը, էջ 302:

<sup>6</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 21, թ. 34-35:

<sup>7</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Նշվ. աշխ., էջ 215:



ինքնապաշտպանական ուժերով<sup>1</sup>: Դրոն Շուշում կոչով դիմեց արցախահայությանը և ոգևորեց նրան<sup>2</sup>: Հայկական զինուժի մուտքն Արցախ շերմությանը ընդունվեց<sup>3</sup>:

1920թ. ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում գումարված Արցախահայության իններորդ համագումարը չեղյալ համարեց յոթերորդ համագումարի կողմից Ադրբեջանի կառավարության հետ կնքած ժամանակավոր համաձայնագիրը և հռչակեց Արցախի միացումը ՀՀ-ին, որպես նրա անբաժան մաս<sup>4</sup>:

Սակայն շուտով ՀՀ և Արցախի գլխին նոր ամպեր կուտակվեցին՝ կապված 1920թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացման հետ: Խորհրդային Ադրբեջանի տարածքային նկրտումները Հայաստանի հանդեպ ոչնչով չէին տարբերվում մուսավաթականների դիրքորոշումից: Այսպիսով Կարմիր բանակի աջակցությամբ՝ Ադրբեջանի կոմունիստ ղեկավարները նոր պահանջներ ներկայացրին Հայաստանի Հանրապետությանը: Պատերազմի սպառնալիքով նրանք պնդում էին անհապաղ հայկական զորքերից մաքրել Արցախի տարածքը<sup>5</sup>: Արդեն բոլշևիկացած նահանգապետ Սուլթանովը նախաձեռնեց հեղկոմների ստեղծումը Արցախի տարածքում<sup>6</sup>:

Այնքան էր ուժերի բացահայտ անհավասարության պայմաններում հաշված օրերի ընթացքում Արցախի խորհրդայնականացումը հեռանկարը: Նախ ակնհայտ էր, որ Խորհրդային Ռուսաստանի համար քննարկման ենթակա չէր Անդրկովկասին վերատիրելու հարցը: Բոլշևիկների համար նաև օրվա անհրաժեշտություն էր դարձել Արցախի, Չանգեզուրի և Նախիջևանի վրայով Քեմալական Թուրքիայի հետ ցամաքային կապ հաստատելու խնդրի լուծումը: Հանուն համաշխարհային բոլշևիկյան հեղափոխության և այդ հեղափոխությունը Թուրքիայում տարածելու ցնորամիտ երազանքների բոլշևիկները պատրաստ էին կատարելու Խորհրդային Ադրբեջանի բոլոր քմահաճությունները:

Չուգահեռաբար ադրբեջանական զորքերի կողմից Արցախի հայկական բնակավայրերը և հայ ազգաբնակչությանը ոչնչացնելու վերաբերյալ բողոքները ուշադրության չեն արժանանում: Ի դեպ թուրք-թաթարների սև գործին մասնակից էին դառնում նաև կամիրբանակային ռուս զինվորները<sup>7</sup>: Միաժամանակ հստակ էր, որ գերակշռե ուժերի դեմ զինված պայքար մղելը հղի էր առավել վտանգավոր հետևանքներով: Խորհրդային Ռուսաստանի ռազմական բացահայտ աջակցությունը վայելող ուժի դեմ պատերազմը կարող էր շատ թանկ արժենալ ոչ միայն Արցախի, այլև ամբողջ Հայաստանի Հանրապետության համար: Մայիսի 26-ին հրավիրված Ղարաբաղի հայության 10-րդ համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց խորհրդային: Հաջորդ օրը՝ մայիսի 27-ին հայկական զորքերը հեռացան Ղարաբաղից: Դրոն պաշտոնապես իշխանությունը հանձնեց Սաթո Համբարձումյանին, ով արցախահայության տասներորդ համագումարի կողմից ընտրվել էր Լեռնային Ղարաբաղի հեղկոմի նախագահ<sup>8</sup>:

Այսպիսով՝ Արցախի խորհրդայնացման արագացումը պայմանավորված էր ոչ միայն Ռուսաստանի՝ Անդրկովկասին վերատիրելու ձգտումով, այլև՝ Խորհրդային Ադրբեջանի կողմից երկրամասը բռնազավթելու մղումով:

Արցախի խորհրդայնացումով սկսվեց Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման գործընթացը: 1920 թ. ամռանը խորհրդային իշխանություն

<sup>1</sup> Տե՛ս Բալայան Վ., Լշվ. աշխ., էջ 303:

<sup>2</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 6, թ. 14:

<sup>3</sup> Տե՛ս Լույս տեղում, գ. 34, թ. 267-268:

<sup>4</sup> Տե՛ս Աբրահամյան Հ., Արցախյան գոյամարտ, Երևան, 1991, էջ 98:

<sup>5</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 38, թ. 84:

<sup>6</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Լշվ. աշխ., էջ 236:

<sup>7</sup> Տե՛ս ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 35, թ. 19:

<sup>8</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Լշվ. աշխ., էջ 245-246:

հաստատվեց նաև Նախիջևանում, իսկ աշխարհի վերջին ծմռան սկզբին Խորհրդային Ռուսաստանը բուլջակներին իշխանության բերեց նաև Երևանում:

### **Խաչատուր Ստեփանյան ԱՐՑԱԽԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ**

**Բանալի բառեր՝** *Արցախ, խորհրդայնացում, Շոշ գյուղ, համագումար, խորհրդային Ադրբեջան*

Արցախի խորհրդայնացումը Հայաստանի խորհրդայնացման գործընթացի կարևոր և բաղկացուցիչ մասն էր կազմում, չնայած ժամանակագրորեն Արցախն ավելի շուտ է խորհրդայնացվել (1920թ. մայիսին), քան Արարատյան Հայաստանը: Արցախի խորհրդայնացման գործընթացի արագացումը պայմանավորված էր ոչ միայն Ռուսաստանի նկրտումներով ևս մեկ անգամ տեր դառնալ Հարավային Կովկասին, բայց և այնպես Խորհրդային Ադրբեջանի մեծ ցանկությամբ զավթել տարածաշրջանը և վերջնականապես տիրել Խորհրդային Արցախին:

### **Khachatur Stepanyan THE SOVIETIZATION OF ARTSAKH**

**Keywords:** *Artsakh, Sovietization, the village of Shosh, the Congress of the Soviet Azerbaijan*

An important part of the process Armenia's Sovietization is the Sovietization of Artsakh. In terms of chronology, Artsakh earlier became soviet region (May 1920) than Araratian Armenia. The quick course of Artsakh's sovietization was conditioned not only by Russia's aspiration to return to Transcaucasia, but also with the intention of Soviet Azerbaijan to occupy the region.

### **Хачатур Степанян СОВЕТИЗАЦИЯ АРЦАХА**

**Ключевые слова:** *Арцах, советизация, село Шош, съезд, Советский Азербайджан*

Советизация Арцах является важной частью процесса советизации Армении. С точки зрения хронологии Арцах советизировался раньше (май 1920г.), чем Араратская Армения. Ускорение советизации Арцах обусловлено не только стремлением России снова завладеть Закавказьем, но и намерением Советского Азербайджана оккупировать регион.

## МОРАЛЬНАЯ И МАТЕРИАЛЬНАЯ ПОДДЕРЖКА КЭРОЛАЙН КОКС РЕСПУБЛИКЕ АРЦАХ В ПЕРИОД ВОЙНЫ И В ДАЛЬНЕЙШЕМ

### *ИСКУИ АВАНЕСЯН*

История арцахского армянства прошлого времени убеждает, что дискриминация, проводившаяся со стороны Азербайджана, осуществлялась во всех сферах общественной жизни, что заставило армянское население предпринять решительные шаги, и была поставлена задача восстановить историческую справедливость - воссоединить Арцах с матерью Родиной.

В ответ на требование армянского населения НКАО, со стороны Азербайджана были совершены насилия, что резко обострило ситуацию в регионе, резко повысилась напряженность, и карабахский конфликт превратил в военную конфронтацию – в войну.

На этом новом этапе выживания, люди заново вкусили плоды материнской и женственной обдуманности и разумного обхождения. Политико-общественные женщины-деятели, становясь очевидцами и участниками действий происходивших в Арцахе в 1990 годах, выступили с конкретными шагами, требуя дать справедливого решения проблеме. Их действия, проведенные в этом направлении, сделанные заявления, письменные обращения в разные инстанции тоже способствовали международизации проблемы.

Неоценима также деятельность женщин-деятелей и интеллигенции, поддерживающих армянскую сторону на международной арене. Благодаря их стараниям проблема была неоднократно представлена из разных международных трибун.

Среди политических деятелей поддерживающих армянскую сторону в первых рядах была вице-спикер Палаты Лордов Объединенного Королевства Великобритании и Северной Ирландии баронесса Каролин (Кэролайн) Энн Кокс<sup>1</sup>.

Она на мировом уровне занималась и занимается проблемами защиты прав человека. Выступая против насилия, Кокс защищает права христианского народа в тех странах, где они ущемляются. Будучи профессиональным социологом, Кэролайн Кокс написала сотни статей, десятки монографий про трагические судьбы христиан.

21 мая 1991 г. В Москве, на пресс-конференции посвященной 70-летию академика Андрея Сахарова, она, узнав о событиях, происходящих в Арцахе, как руководитель группы правозащитников разных стран, создает группу (состоящего из 13 человек) из ученых, политических деятелей с Англии, США, Норвегии, Италии и других стран и направляет в Армению.

Встретившись с беженцами-армянами в селе Тех Горисского района, группа запротоколирует факт насилия совершенный азербайджанцами по их отношению и представляет руководству ВС СССР и МО<sup>2</sup>.

<sup>1</sup> Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, Санкт-Петербург, “Петрополис”, 2007, стр.380.

Баронесса Кокс из Куинсберрийская (Baroness Cox of Queensbury) родилась в 1937г. В Лондоне. С 1958 года работала медсестрой в больнице Лондона. В 1967 году окончила университет Лондона, получив диплом отличия по специальности социолога. Позже она получила также степень специалиста по экономике. С 1974 года заведовала кафедрой социологии Политехнического института Северного Лондона, преподавала и занимала высокие должности в ряде учебных заведений Лондона. С 1982 года член Палаты Лордов, с 1986-2006 годы была вице-спикером этой же палаты. Имеет социалистические и христианские взгляды.

<sup>2</sup> Zori Balayan, The woman of the world, Yerevan, 2017, p. 49.

Баронесса одна из первых в арцахском освободительном движении увидела потребность защиты прав человека и на протяжении этих годов последовательно защищала их.

В первый раз в октябре 1991 г. в сопровождении одного из руководителей организации “Международная Христианская Солидарность” Джоном Айбери навещает Шаумянский район, а оттуда - Степанакерт<sup>1</sup>. В эти дни, она на военном вертолете облетела и сняла горящие и разрушенные села Нагорного Карабаха и показала по европейским телеканалам.

Арцах, более того, в тяжелые дни войны стали часты визиты в сопровождении разных групп. При каждом визите ее сопровождала новая команда, и чаще всего это были политические деятели, лорды и журналисты, врачи с разных стран.

После визита в Нагорный Карабах и ознакомления с проблемой, она организовала встречи с послами США, Канады, ГДР, Франции и Англии, в ходе которого представила факты о царящей тяжелой ситуации в Арцахе. Показав послам из разных стран, руководителям совета Европейских стран и государственным деятелям США осколки ракетной установки “Трад” обстрелявший Степанакерт в 1992 г., потребовала оказать давление на Азербайджан. Благодаря активной деятельности, она способствовала поднятию информированности про Арцах среди международного общества, распространению объективной информации про азербайджано-карабахский конфликт.

Важным событием было участие вице-спикер палаты Лордов на первом заседании ВС НКР.

С 6-8 января 1992г. выступая на первом пленарном заседании новоизбранного парламента, Леди Кокс осудила зверства, совершенные азербайджанскими властями по отношению армянства Арцаха<sup>2</sup>.

Очередной визит Кокса<sup>3</sup> в Арцах с представителями “Международной христианской солидарности” и журналистами состоялся в апреле 1992г., накануне трагических событий Марагы. Вице-спикер палаты Лордов, который прибыл в село спустя два дня, назвал Марагу<sup>5</sup> современной Голгофой, только более страшной. Целый день К. Кокс и тележурналист, прибывший из Лондона Ваня Кули, снимали происшедшее в Мараге. “Они не из рода человеческого”, - так она выразилась про азербайджанских солдат, которые устроили бойню в Мараге. Баронесса эти зверства описала в своих многочисленных интервью и в работе “Этнические чистки продолжаются”<sup>45</sup>.

Во время визитов в Арцах, Кокс также встречалась с командирами военных полков (с командиром Шаумянского оборонительного отряда Шагеном Мегрияном, командиром Мартунинского оборонительного района Монте Мелконян (Аво) и с многими другими), знакомилась с состоянием воюющего Арцаха. Для нее были

---

<sup>1</sup> Там же.

<sup>2</sup> В январе 1992г. неблагоприятные погодные условия заставили делегацию Кокса приземлиться в селе Оратаг Мартакертского района. Чтобы добраться до Степанакерта, они были вынуждены часть пути – холм, пройти пешком. В 1994г. на этом холме поставили базальтовый камень с надписью “Тропа Кокса” на трех языках.

<sup>3</sup> Награждена медалью “Благодарности” НКР. Она почетный гражданин Степанакерта.

<sup>4</sup> Керолайн К., Айбер Д., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998, стр. 42.

<sup>5</sup>, “Республика Армении”, 4 мая, 1992. 10 апреля 1992г. со стороны регулярных войск Азербайджана был совершен геноцид по отношению армянского населения села Марага Мартакертского района, во время которого село было полностью разрушено. По данным 1 мая 1992г., число людей, находившихся в заложниках доходило до 57-и, 9 из которых дети, 29 – женщины. Число убитых доходило до 59-и, а 19 жителей считались без вести пропавшими.

первичны также социально-экономические проблемы Республики и старались их решать материальной поддержкой, в чем нуждалась Республика Арцах.

С начала февраля до середины апреля 1992 года организовала 5 рейсов гуманитарной помощи на ИЛ-76 общим весом в 40 тонн. Это были службы воздушной “скорой помощи”, которые воздушным путем доставляли лекарства в большом количестве<sup>1</sup>.

Отметим, что перед тем как посетить Арцах, она готовилась, создавала план – уточняла, какие специалисты в первую очередь будут включены в команду. В годы войны чаще всего это были врачи, саперы, политические деятели, журналисты.

Ее усилиями и содействием германских специалистов в 1998 г. в Степанакерте была создана квалифицированная клиника протезирования, под названием “Международная христианская солидарность”<sup>2</sup>. Позднее он стал Реабилитационным центром, которое носит имя К. Кокса. Там лечатся сотни больных с тяжелыми диагнозами<sup>3</sup>.

Узнав, что на освобожденных территориях часто происходят взрывы мин, баронесса с разных частей всего мира пригласила в Арцах специалистов-саперов. Весной 1994 г., во время очередного визита, привезла с собой целую команду специалистов саперов<sup>4</sup>.

В дни войны и после, она не только с разных трибун мира представила проблему Арцаха, призывая дать мирное урегулирование проблеме, но и своими благотворительными инициативами смогла поспособствовать развитию социально-экономической жизни Арцаха. По сей день продолжают визиты Кокса в Арцах. Более того, в 2017г. она в 86 раз посетила Республику Арцах<sup>5</sup>.

Баронесса из тех политических деятелей, которая развила неоценимую деятельность для помощи и поддержки армянского народа, а также для донесения его голоса международному сообществу.

### Искун Аванесян

## МОРАЛЬНАЯ И МАТЕРИАЛЬНАЯ ПОДДЕРЖКА КЭРОЛАЙН КОКС РЕСПУБЛИКЕ АРЦАХ В ПЕРИОД ВОЙНЫ И В ДАЛЬНЕЙШЕМ

**Ключевые слова:** *женщины, права, насилие, жалобы, политика, битва*

Благодаря неоценимой работе иностранных женщин, поддерживающих арцахских армян на международной арене, о ситуации в Арцахе стало известно в разных странах мира. Среди них была баронесса Керолайн Кокс. Она стала активным и принципиальным защитником прав армян Арцаха, борющихся за свою свободу и независимость от пантюркистского Азербайджана. Всегда находясь рядом с армянским народом, она разделяла его боль и страдания, всячески содействуя справедливой борьбе карабахцев. Благодаря баронессе Кокс во многих странах узнали правду об Арцахе, получили истинную информацию об азербайджано-карабахском конфликте.

<sup>1</sup> Балаян З., Ад и рай, Ер., 1995, с. 223; См. также “Мартик”, 2011, 15 февраль, N 22.

<sup>2</sup> Там же.

<sup>3</sup> Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, Санкт-Петербург, 2007, стр.381.

<sup>4</sup> Центр работает по сей день.

<sup>5</sup> <https://www.panorama.am/tu/news/>.

**Իսկուհի Ավանեսյան  
ՔԵՐՈՒԼԱՅՆ ՔՈՔՍԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ ԵՎ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ**

**Բանալի բառեր՝** կանայք, իրավունքներ, բռնություններ, բողոքներ, քաղաքականություն, պայքար

Միջազգային հարթակում արցախահայությանը սատարող օտարազգի կին գործիչների անգնահատելի գործունեության շնորհիվ Արցախում առկա իրավիճակը հայտնի դարձավ աշխարհի տարբեր երկրներում: Նրանց թվում էր նաև բարոնուհի Քոքսը: Նա դարձավ ակտիվ և սկզբունքային պաշտպանը Արցախի հայերի իրավունքների, որոնք պայքարում էին հանուն իրենց ազատության և պանթուրքիստական Ադրբեջանից անկախանալու: Միշտ գտնվելով հայ ժողովրդի կողքին, կիսում էր նրա ցավն ու տառապանքները, ամեն կերպ աջակցում արցախցիների արդար պայքարին: Բարոնուհի Քոքսի շնորհիվ շատ երկրներ իմացան ճշմարտությունն Արցախի մասին, ստացան ստույգ տեղեկություն դարաբաղա-ադրբեջանական հակամարտության մասին:

**Iskuhi Avanesyan  
CAROLINE COX'S MORAL AND POLITICAL SUPPORT TO THE  
ARTSAKH REPUBLIC DURING AND AFTER THE WAR**

**Keywords:** *women, rights, violence, complaints, politics, struggle*

Due to the invaluable work of foreign female figures supporting Armenians of Artsakh on the international platform, the situation in Artsakh became known in different countries of the world. Baroness Caroline Cox was also among them. She became an active and principal defender of the rights of the Armenians of Artsakh, who struggled for their freedom and for the independence from Pan-Turkic Azerbaijan. Always being with the Armenian people, she shared their pain and suffering, in every way supported the fair struggle of the Artsakh people. Thanks to Baroness Cox many countries knew the truth about Artsakh, got accurate information on the Karabakh-Azerbaijan conflict.

## ՂԵԿՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԱՐՑԱԽ» ԵՐԿԸ

### ՉԻՆԱԻՂԱ ԲԱԼԱՅԱՆ

Չայ գրականության, գրականագիտական, հայագիտական, պատմա-աշխարհագրատական մտքի մեծանուն ներկայացուցիչներից է Ղևոնդ Ալիշանը (Քերովբե Ալիշանյան, գրական ծածկանունը՝ Նահապետ, 1820-1901թթ.): Եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ:

Չեղինակի հետաքրքրությունների շրջանակում հայտնվել է նաև արցախյան ազգային հզոր երակ ներկայացնող, վիպական ու պատմա-աշխարհագրական դրվագներով լի հարուստ նկարագիրը: Այս դիտանկյունից բարձրարժեք է հեղինակի Արցախի թեմայով գրված համանուն «Արցախ» երկը:

Գրքում Ալիշանը բժախնդրորեն, պատմական ու աշխարհագրական, բանագիտական ճշգրտությամբ է նկարագրում Մեծ Չայքի տասնհինգ նահանգներից տասերորդը՝ Արևելից կողմանքը-Արցախը, նրա տասներեք գավառները՝ Կողթը, Բերդաձորը, Վայկունիքը, Սիսական ոստանը, Մեծկունիքը, Մեծիրանքը, Փառնեքը, Մյուս Չաբանդը, Պարզկանքը, Մուխանքը, Չարժանքը, Պիանքը, Քոտակը: «Չայոց նախնիների իշխանության ժամանակ,- գրում է Ալիշանը,- Արցախը տասներկու կամ ավելի գավառների էր բաժանվել...»<sup>1</sup>: Չեղինակը գավառների ինդրահարույց հարցի՝ թվաքանակի մասին խոսելով նշում է, թե Խորենացին 12 գավառներ է նշում, իսկ ըստ այլ օրինակների՝ դրանք 13 կամ 14 են:

Ալիշանը թվարկվող գավառները ներկայացնում է ըստ իրենց գրաված աշխարհագրական դիրքի, գտնված վայրի և այլ հատկանիշների՝ բացահայտելով որոշակի կարևոր առանցքներ ևս: Մեկնաբանման գնալով գավառների անունների գրման լեզվական համանուն կազմվածքի շուրջ՝ Ալիշանը հարցը պարզաբանում է հետևյալ կերպ. «Այդ գավառներից շատերն ունեն տոհմական **անք** մասնիկը: Ինչպես երևում է անուններից, դրանք տրվել են գավառի բնությանը համապատասխան շատ վաղ ժամանակներից ի վեր, որպիսիք են **Խաղբյանք և Խաչանք**, որոնք հիշատակվում են Ներսես Մեծի գահնամակում, Դ դարում, իսկ այնուհետև ԺԲ և ԺԳ դարերում պատմության մեջ փայլում են Խաղբակյան իշխանները և Խաչենցիք»<sup>2</sup>:

Քննաբան գիտնականը վիպական գծերով անդրադառնում է հատկապես Արցախի հոգևոր և աշխարհիկ գործիչների նկարագրերին, հոգևոր կենտրոններին, եկեղեցիներին, մատուռներին, քաղաքներին, ավաններին, լեռներին, դաշտերին, գետերին, բերդերին, արցախցու ավանդույթներին, հոգեկերտվածքին, արարող ոգուն և այլն՝ ամենուրեք Արցախի աշխարհագրության, պատմության, բանահյուսության, ազգային որակների, ստեղծագործ ոգու նկարագրությանը, որոշակի սահմաններում դրանք սերտորեն միահյուսելով հայ ժողովրդի պատմության հետ:

Գրքի գրականագիտական, պատմաաշխարհագրական քննությունից հետո պարզ է դառնում հետևյալ կարևոր մտահանգումը, թե մինչև XIX դարավերջ Արցախում ինչ հիշատակարաններ, համալիրներ, բնակավայրեր, հոգևոր առաջնորդարաններ, եկեղեցիներ, պատմական ու մշակութային հուշարձաններ, աշխարհիկ կենտրոններ են պահպանվել՝ ինչպիսի նկարագրերով և որոնք են ավերվել, քանդվել-եղեռնվել՝ ինչպիսի պայմաններում:

Ալիշանը, նկատի ունենալով Արցախի թավ, անանցնելի անտառները, բարձրաբերձ սար ու ձորերը (բնական ամուր-անառիկ դիրքը, որը պատերազմի

<sup>1</sup> Ղևոնդ Ալիշան, Արցախ, Երեան, Երեանի համալսարանի հրատարակչություն, 1993 (այսուհետև՝ Ղևոնդ Ալիշան, Արցախ), էջ 9:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 11:



Ժամանակ հանդիսանում է երկրի ռազմավարական շարժի մի մասնիկը՝ կարևոր նշանակություն ձեռք բերելով՝ բնական պատնեշ հանդիսանալով բյուրավոր թշնամիների դեմ), գեղարվեստական առանձնահատկությունների (մակդիր-էպիտետներ, համեմատություններ, անձնավորում և այլն) խիտ որակներով է բնութագրում դրանք, Արցախ երկիրը անվանում՝ ամուր, ընգծելով նրա «ապահով» դիրքը, տալով նրա բավականին ճշգրիտ նկարագիրը. «**Արցախի ամուր և ապահով (ընդգծ.- Չ. Բ.)** երկիրը, որ ավելի փոքր է, քան Մեծ Հայքի շատ աշխարհներ, ունի մոտ 90-100 մղոն երկարություն և դրա կեսի չափ լայնություն: Այն արևմտյան կողմից սահմանակից է Սյունյաց աշխարհին, հյուսիս-արևելքից՝ Ուտիքին, հարավից՝ Երասխ գետին. հյուսիսային և արևելյան սահմանագիծը բացահայտ չի երևում, այլ թվում է, թե այն բաժանվում է լեռների ստորոտներով, մասնավորապես Խոջբար լեռներով և Շամբորի անջրպետով, իսկ արևմուտքից՝ Սյունյաց Հագարու գետով ու լեռներով, որոնք պարսպում են նրա ելքը և փոխում ջրերի ընթացքը, որովհետև Սյունիքում գետերը հյուսիսից և ելքի կողմից իջնում են Գեղամա լեռներով դեպի մեծ Երասխը, իսկ Արցախում արևմուտքից-արևելք դեպի Կուր գետն են հոսում, ոռոգելով Ուտիքի դաշտը, որտեղ ամենահզորը ամենահյուսիսայինն է՝ Թարթառը կամ Թերթերը (գրքի այս և հետագա ընդգծումները Ալիշանին են- Բալայան), ըստ մեր նախնիների՝ Տրոուն, որը, բխելով Վայոց ձոր և Չանգեզուր լեռների թիկունքից, անցնելով Խաչենի խոր ձորերով, դուրս է գալիս Ուտիքի Առանձնակ դաշտը՝ անցնելով Պարտավ քաղաքի մոտով»<sup>1</sup>:

Նկատելի է հեղինակի հետաքրքրությունն Արցախի տեղանքի, աշխարհագրական դիրքի, բնական ռեսուրսների, դաշտավայրերի, գետերի, նրանց բնույթի, գտնվելու վայրի նկատմամբ, ինչպիսիք են՝ Թարթառը՝ Թերթերը-Մայր գետը, Կուրանը, Ձղախը, որը Խաչենագետն է, վերջինիս համեմատությամբ ավելի հզոր՝ Գարգարը, Բոզլուն, Չերեքեն, Տիլին կամ Գուրոն և Զենտիլանը. որոնք խառնվում են կամ Կուր-Քուն կամ Երասխ-Արաքս գետերին: Հիշենք, քաղաքակրթությունը միշտ էլ սկսել ու զարգացել է գետերի ափերին. այդպես էր նաև Արցախում:

Երկրի համար կարևորագույն հարստությունը համարելով գետերն ու գետային ուղիները՝ որպես սնուցող տարր, Ալիշանը ներկայացնում է նրանց ուղին, աշխարհագրական տեղադրությունը. «Սրանից բացի, հյուսիսային կողմում կան և մանր այլ գետեր, ինչպես՝ Կուրանը, որ Կուրակին է խառնվում, և դանդաղընթաց այլ գետեր: Իսկ Թարթառից հարավ հոսում է հնում Ձղախ կոչված գետակը, որը Խաչենագետ է անվանվում, որից ավելի հզոր է զարգարացիների գետը՝ Գարգարը, որը բխում է Շուշիի սահմաններից և խառնվում է Կուր գետին, Երասխի սառնարանից մի փոքր ավելի վերև: Երասխն են խառնվում և այլ գետակներ, որոնք իջնում են Շուշիի հարավից, ինչպես Բոզլուն, Չերեքեն, Տիլին կամ Գուրոն և Զենտիլանը»<sup>2</sup>

Ալիշանը ավելի շատ կարևորություն է տալիս երկրի տարածքում սփռված բարձրագահ լեռներին: Պատմիչների (Բուզանդ, Եղիշե, Խորենացի, Կաղանկատվացի և այլն) վկայություններին հաստատապես հավատ ընծայելով ու նրանց հետևելով, Արցախը կոչում է **ամուր** մակդիրով: Մ. Կաղանկատվացուց ավելի վաղ Բուզանդն է Արցախը ամուր մակդիրով կոչել, բայց Ալիշանը այս հարցում առավելությամբ վկայակոչում է առաջինին՝ Կաղանկատվացուն, հաշվի չառնելով այն հանգամանքը, որ Կաղանկատվացին իր հերթին աղբյուր է ունեցել հին մատենագիր-պատմիչների:

«Բայց Արցախ աշխարհը,- վիպական երանգներ հաղորդելով իր գրչին գրում է հեղինակը,- ավելի շատ նշանավոր է իր լեռներով, քան թե գետերով,

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 6:

որի պատճառով էլ մեր նախնիները նրան տվել են Ամուր մակդիրը, որը ավելի հաճախ տրվել է Աղվանքի պատմիչի (Կաղանկատվացու- ընդդ. - 2. Բ.) կողմից. «Խոր ձորերով, անտառներով հարուստ Արցախ աշխարհը...», «...վիմահատակ լեռների ապառաժներ...արցախյան ամուր գավառների լեռների վիմահատակ ձորախիտ ապառաժներ»<sup>1</sup> և այլն: Խոր և մթին անտառները եղիշեն «թանձրախիտ» է անվանում<sup>2</sup>:

«Այդ լեռները,- շարունակում է Ալիշանը,- հատուկ անունով չեն հիշատակվում հների կողմից, բացի հյուսիսում գտնվող Աստղաբլուրից և հարավում գտնվող Դիզափայտից: Իսկ այժմ հարավային բարձունքներից նշվում են Սարիալը և Մռավը, որոնք Ուտիքի և Արցախի միջև լարաբաժան են, Ուլուխանը՝ տեղադրված Թարթառի ակունքների մոտ, որոնց ելքերից սկսվում են Չլբերդ և Գյուլիստան լեռները, դրանցից էլ հարավ՝ Գըրբ-Կյոզը, որի շարունակությունն են կազմում Գանձասար և Շահթախտ լեռները, որտեղ գտնվում են հաչենագետի աղբյուրները»<sup>3</sup>:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնելով Արցախ անվան ծագման պատմությանը, Ալիշանը ենթադրաբար գրում է. «Երկրամասի անվան ծագումը անհայտ և անհիշատակ է մնում. թերևս անհարմար չի լինի կարծել ծառերի ու թփերի ցախ անունից ծագած, ըստ երկրի անտառախիտ բնույթի. այն մեր նախորդները գրում են նաև ձ տառով: Արցախը գրվում է նաև հոգնակիով՝ Արցախք նաև Արցախույաց գավառ, որը գալիս է Կաղանկատվացուց. ըստ այդմ կառուցողից էլ առաջանում է անունը. այդ անունն ավելի հաճախ հանդիպում է ածանցմամբ՝ Արցախական գաւառք կամ կողմանք<sup>4</sup>: Երբեք և ոչ մի տեղ չենք հանդիպում «Աշխարհ» անվան, այլ այն Բուզանդի երկում<sup>5</sup> մեկ անգամ կոչվել է երկիր, իսկ մնացած բոլոր դեպքերում՝ գավառ»<sup>6</sup>:

Ալիշանը հավաքած առատ նյութերի բաղդատմամբ, քննում և մեկնաբանում է Արցախի գավառների պատմությունը, նրանց ծագման մանրամասները թվարկելով, ցույց է տալիս յուրաքանչյուրի դերակատարությունը ընդհանուր մարմնում՝ աշխարհագրական տարածքը, սահմանները, բուսական և կենդանական աշխարհը, ծառատեսակները, հանքավայրերն ու հանքատեսակները, երևույթների, հատուկ և հասարակ անունների բացահայտումները, իրար հետ ունեած ներքին ու արտաքին հարաբերությունները և այլն: «Այդ գավառների անուններն ու տրոհումը 12-ի կամ 13-ի թերևս աղավաղել են Աղվանից իշխանների և Բագրատունիների օրոք, տակավին մինչև Ժ և ԺԱ դարերը լսվում և պահպանվում էին, այնուհետև Հայոց և Աղվանից թագավորությունների՝ Պարսկաստանի կողմից գրավվելու ժամանակ գավառների և իշխանությունների նոր անուններ են լսվում, որոնցից հնագույններն են Ռոսաստակ և Չղախ գավառակները Ինճե գետի հովտում, ճառաբերդ աշխարհը կամ գավառը Չլբերդում. այն,- մեկնելով նյութը, շարունակում է քննաբանն իր բացահայտումները,- պատմիչների երկերում հիշվում է Է-ից մինչև ԺԲ դարը»<sup>7</sup>:

Վիպական շնչով ներկայացնելով հաչենի դերակատարության պատմական կարևորությունը և առանձնահատուկ դերը երկրամասի քաղաքական, հոգևոր, արարողական, տնտեսական կյանքում, Ալիշանը ներքին համակրությամբ նկատում է, «որ վերջինս «նախորդներին գերազանցեց ոչ միայն փայլուն ժամանակով, այլև

<sup>1</sup> Մովսես Կաղանկատվացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Ե., 1983 (այնուհետև՝ Մովսես Կաղանկատվացի), էջ 137:

<sup>2</sup> Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երեւան, 1957, էջ 125:

<sup>3</sup> Դեռնոյ Ալիշան, Արցախ, էջ 7:

<sup>4</sup> Մովսես Կաղանկատվացի, էջ 99, 203:

<sup>5</sup> Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 214:

<sup>6</sup> Մովսես Կաղանկատվացի, էջ 137:

<sup>7</sup> Դեռնոյ Ալիշան, Արցախ, էջ 11:

հնությանը ու պատվով: Խաչենը, որ ընկած է Տրտու և Գարգար գետերի միջև, իր անունն առնում է համանուն գետակից: Խաչենը,- ընդհանրացման է գնում մեկնաբանը,- մեծ փառքի է հասնում ԺԳ դարում, երբ գրեթե Արցախ անունն էլ փոխվում և Փոքր Սյունիք է կոչվում»<sup>1</sup>:

Ալիշանը փորձում է մեկնաբանել Ղարաբաղ անվան ծագումնաբանությունը. «Իսկ երբ թուլամում է հայկական իշխանությունը, և ուժեղանում օտարների ձեռներեցությունը, նախ հռչակվում է հին Առան անունը (հայտնի է, որ այն միշտ անտեսված էր) արևելյան թագավորների շրջանում, և մինչև վերջերս պարսից արքունիքում Արցախ աշխարհը այդ անունով է ճանաչվում, որը կազմում էր ամբողջ Նահանգի կամ Առան երկրի միջին մասը, Սյունիքից մինչև Կուր, որն այժմ Ղարաբաղ է կոչվում՝ անտառների, ագարակների, այգիների և նրանց ստվերների պատճառով (ընդգծ.- Չ. Բ.)»<sup>2</sup>:

Յեղիսակն այստեղ Ղարաբաղ հատուկ անունն ընկալում է սև՝ խիտ անտառների թավ ստվերների պատճառով, ապա՝ **Ղարա-մեծ, բաղ-այգի** իմաստով, ինչպես օրինակ՝ **Ղարա (Մեծ) Աբով** մելիքը, ղարաղամ-մեծ քարերով տուն Ավետարանոցում, որոնք Պավել Օգանեսյան պապս է Գանձակից բերել և կառուցել իր տունը՝ մելիքանիստի կենտրոնական, գեղատեսիլ վայրում (**ընդգծ.- Չ. Բ.**), **ղարա -կարա-կոյունլու (մեծ), ակ-կոյունլու (փոքր) ցեղախմբեր (ընդգծ.- Չ. Բ.)** և այլն:

Մեկնաբանելով պատմական Ականայի աշխարհագրական տեղանքը, փորձելով ցույց տալ նրա պատմական դիմագիծը, որ այդ և այլ բնակավայրերի մասին հիշատակները պահպանվում են ԺԳ և ԺԴ դարերից՝ Խաչենի տերերի ու իշխանների վանքերում պահվող արձանագրություններում, հեղինակը գտնում է, որ Ականան, որպես հին բնակավայր, պետք է գտնվի Յանդաբերդի ու Գեղամա ծովի մոտերքում, «որով ճանաչում են Սողբի լեռնային ու հարավային կողմերը, և Սողբի գյուղերի մեջ հիշվում է Ականքը ԺՁ դարի սկզբին: Կիրակոս պատմիչը՝ ԺԳ դարի կեսին ասում է Սարխաթ խանի մասին, որը դարձել էր Ջալալ իշխան, որից խլել էին Ականան և Կարկառը... Եվ այս ամենից ենթադրում ենք, որ այստեղ՝ Թարթառի հյուսիսային վտակների հովիտներում, պետք է գտնվի և Ականան»<sup>4</sup>:

Ծար բնակավայրը Ալիշանը հարուստ է համարում, ըստ տեղեկությունների (Վարդան վարդապետի աշխարհացույցը, Գր. Մագիստրոսի թղթերը և այլն)՝ այն զավառակ չի ընդունում, նշում է, որ ԺԳ-ԺԳ դարերում Ծարը գտնվում էր Աղվանքում՝ Խաչենի իշխանների տիրապետության տակ, կարևորում է նրա դիրքը, լայնանիստ տարածքը և դերը՝ որպես հոգևոր կենտրոնի, որտեղ գտնվում էր սուրբ Յակոբի եկեղեցին-տաճարը. «...Ընդարձակ Ծար ավանը-գրում է հեղինակը,- որ գրքերում և արձանագրություններում գյուղ և գյուղաքաղաք է կոչվում, գտնվում է զավառի հարավային կողմում, այն վտակների միջև, որոնք Թարթառի միջին մասում են հոսում, հարուստ և արգավանդ մի վայրում, որը դարձել է անշուք և սակավամարդ մի վայր, և որը պետք է եղած լինի այդ կողմերի հին և գլխավոր շենը»<sup>5</sup>:

Տարբեր փաստերի զուգորդմամբ, Ալիշանի գրքում հիմնավոր տեղեկություններ են բերված թե՛ պատմական ու վիպական, աշխարհիկ ու հոգևոր հերոսների ու նրանց հարաբերությունների մասին, Վաչագան արքայի կողմից՝ սրբերի մասունքների գտնվելու վայրի ու ըստ պատկանելիքի բացահայտման՝ դրանց

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 11-12:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 12-13:

<sup>3</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Յայոց, Երևան, 1961, էջ 358-359:

<sup>4</sup> Դեռևս Ալիշան, Արցախ, էջ 17-18:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 19:

հասցեատրման մասին, թե՛ շինական տարրի, թե՛ բնակավայրերի, բնական ռեսուրսների, դաշտավայրերի, լեռների, գետերի, Նրանց վտակների, և դրանք իրար լրացնող օղակների մասին: Հայթայթված և իրար միահյուսված վիպապատմական, աշխարհագրական և այլ կարգի նյութերը Ալիշանը հարստացնում է նաև եկեղեցական համալիրների, գյուղերի ու քաղաքների, Արցախում գտնված Տիգրանակերտների (Սեբեոսի Նշած երկու Տիգրանակերտների) մասին վարկածը բարձր գնահատելով, Ալիշանը նշում է հետևյալը. «...պատմիչը մանրամասնորեն կատարում է այդ տեղերի քննությունը և դա ոչ թե սոսկ ազգային, այլ համաշխարհային պատմության համար»<sup>1</sup> և այլ բնակավայրերի մասին հաղորդումներով:

Տարածաշրջանում՝ Շուշին որպես զարգացած հասարակական, քաղաքական, լուսավորչական կենտրոնի, առիթներ է նաև Ալիշանին: Նա նշում է. «Քաղաքում հայկական երկու եկեղեցի կա՝ Ագուլեցոց և Ղազանչեցոց կոչվածները, կան նաև երկու փոքր, անշուք եկեղեցի, հայկական մի շուկա՝ փոքր կրպակներով: Քաղաքն ունի նաև տպարան, որտեղ լույս են տեսել մատյաններ (գրքեր) արքեպիսկոպոս և մետրոպոլիտ, բանասեր Տեր Բաղդասարի ջանքերով: Նա իր աթոռը հաստատեց այստեղ՝ դառնալով Աղվանքի կաթողիկոսների հաջորդը: Նրա թեմերն են՝ Ղարաբաղն ու Շրվանը»<sup>2</sup>:

Ալիշանի «Արցախ»-ը վերջանում է քաղաքական, ռազմական մեծ նշանակություն ունեցող հուղափիրիսի կամրջի մասին հետաքրքիր տեղեկատվությամբ. «Խյուտաֆերիսի մոտ, Առանի և Ատրպատականի միջև կա անվանի մի կամուրջ՝ 12 հաստկառույց կամարներով, որոնցից երեքը քանդել է Ղարաբաղի Իբրահիմ խանը, որոնք հետո տրոգել են ռուսները: Կամուրջի մոտ են գտնվում Առաքելիս հայոց գյուղն ու մաքսատունը: Կամուրջի հզոր կառուցվածքը և Նրա վրայով պատվական քարավանների անցնելը կամուրջին շնորհել են պարսից այդ անունը, որ նշանակում է Աստվածաստեղծ»<sup>3</sup>:

## **Չինսիդա Բալայան ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ «ԱՐՑԱԽ» ԵՐԿԸ**

**Բանալի բառեր՝ Արցախ, Ալիշան, Գանձասար, Շուշի, Ականա, Ամարաս, Սիսական, Խաչենագետ, Մռավ, Ծար**

Ալիշանը, որդեգրած ազգային գաղափարակարգին հետամուտ՝ առաջադրած խնդիրների հրատապությամբ, նյութի բազմակողմանի քննությամբ և գնահատմամբ, հայթայթած արժեքները համեմատական, հակադրական, աղբյուրագիտական, վերլուծական մեթոդներով քննելու, արժևորելու, ստեղծագործական-գիտական պահանջներով ներկայացնելու նպատակաուղղվածությամբ է գրել մեծ ծրագրայնություն ու գաղափարներ հետապնդող «Արցախ» երկը:

Արդի ժամանակաշրջանում, Արցախի պատմությանը ուղղված «գիտական» մարտահրավերներին ամենայն լրջությամբ կարող է պատասխան տալ նաև Ալիշանի «Արցախ»-ը, որի առանցքներում քննական մեկնաբանումներով, վիպական անդրադարձներով տրված է XIX դարի Արցախի քաղաքական, աշխարհագրական, գեղարվեստական, հասարակական, մշակութային, պատմական, շինարարական, հոգևոր կյանքի նկարագիրը:

<sup>1</sup> Սեբեոս եպիսկոպոս, Պատմութիւն, Պետերբուրգ, 1879, էջ 92-93:

<sup>2</sup> Ղեւոնդ Ալիշան, Արցախ, էջ 109-110:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 113-114:

**Zinaida Balayan**  
**THE «ARTSAKH» COMPOSITION BY GHEVOND ALISHAN**

**Key words:** *Artsakh, Alishan, Gandzasar, Shushi, Akana, Amaras, Sisakan, Khachenaget, Mrav, Tsar*

Alishan, being an adherent of the national ideas, wrote the work «Artsakh» sated with program and ideological loading, strictly abiding by the urgency of solution of the appearing tasks, the comprehensive analysis and estimate of material, a research of the received material by comparative, comparative, psychological, analytical methods, estimation, aspiration to present material to compliance with creative and scientific requirements.

The «Artsakh» by Alishan can answer to all modern «scientific» calls on history of Artsakh as soon as the description of political, geographical, art, public, cultural, historical, construction, spiritual life of Artsakh of the 19th century is given in it by means of critical remarks, epic references.

**Зинаида Балаян**  
**ПРОИЗВЕДЕНИЕ «АРЦАХ» ГЕВОНДА АЛИШАНА**

**Ключевые слова:** *Арцах, Алишан, Гандзасар, Шуши, Акана, Амарас, Сисакан, Хаченагет, Мрав, Цар*

Алишан, следуя принятой национальной идеологии, с учетом злободневности выдвинутых задач и посредством всестороннего анализа и оценки материала, его исследования сравнительными, сопоставительными, источниковедческими и аналитическими методами, стремясь представить материал в соответствии с творческим и научным требованиями, написал произведение «Арцах», преследующее большую программность и идейность.

«Арцах» Алишана со всей ответственностью может дать ответы на современные «научные» вызовы в отношении истории Арцаха – посредством критических замечаний, эпических ссылок в произведении дано описание политической, геополитической, художественной, общественной, культурной, исторической, строительной, духовной жизни Арцаха XIX века.

## ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1999-2003 ԹԹ.

### ՍԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

1991 թ. սեպտեմբերին ՀՀ անկախության հռչակումից հետո, հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ամենակարևոր իրադարձություններից էր ՀՀ Սահմանադրության ընդունումը, որը տեղի ունեցավ 1995թ. հուլիսի 5-ին: Նոր Սահմանադրությունը պետության կայացման գործընթացում շատ կարևոր երևույթ էր: Այն դրեց ամբողջատիրական համակարգից դեպի ժողովրդավար պետության անցնելու իրավական հիմքերը<sup>1</sup>: Ըստ Սահմանադրության էին տեղի ունենում նաև ՀՀ նախագահական և խորհրդարանական ընտրությունները:

ՀՀ նախագահական 3-րդ (արտահերթ) ընտրությունների անցկացման անհրաժեշտությունն առաջացավ 1998թ. փետրվարի 3-ին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարական ներկայացնելուց հետո: Համաձայն ՀՀ Սահմանադրության 52-րդ հոդվածի, ընտրություններն անցկացվեցին հրաժարականի ընդունման օրվան հաջորդող 40-րդ օրը՝ 1998թ. մարտի 16-ին: ՀՀ Ազգային ժողովի նախագահը հայտարարեց, որ իր կողմից Հանրապետության նախագահի պարտականությունների կատարումը հնարավոր չէ, ուստի ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն 1998թ. փետրվարի 4-ից ապրիլի 9-ը ՀՀ նախագահի պաշտոնակատարն էր ՀՀ վարչապետ Ռոբերտ Զոչարյանը: 1998 թ. նախագահական արտահերթ ընտրությունների արդյունքում հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Զոչարյանը:

Դեռևս 1999թ. հունվարի 29-30-ին ավարտվեց երկրապահների և հանրապետականների միաձուլման գործընթացը՝ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի (1959-1999 թթ.) գլխավորությամբ: Սկսեց ուրվագծվել Հայաստանի Հանրապետական կուսակցության և Կարեն Դեմիրճյանի գլխավորած Հայաստանի ժողովրդական կուսակցության դաշինքի միավորման գործընթացը, որը վերջնականապես ձևավորվեց մարտի 30-ին և կոչվեց «Միասնություն»<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետության երկրորդ գումարման Ազգային ժողովի ընտրությունները տեղի են ունեցել 1999թ. մայիսի 30-ին:

Ըստ ընտրությունների արդյունքների՝ օրենքով սահմանված հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարել են 6 կուսակցություն և դաշինք, որոնց միջև տեղերը բաշխվել են հետևյալ կերպ. «Միասնություն» դաշինք՝ 41,69 տոկոս (29 պատգ.), ՀԿԿ՝ 12,09 տոկոս (8 պատգամավոր), «Իրավունք և միաբանություն» դաշինք՝ 7,96 տոկոս (6 պատգամավոր), ՀՀԴ՝ 7,86 տոկոս (5 պատգամավոր), «Օրինաց երկիր» կուսակցություն՝ 5,28 տոկոս (4 պատգամավոր), ԱԺՄ՝ 5,17 տոկոս (4 պատգամավոր):<sup>3</sup>

1999թ. հունիսի 10-ին, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն, բացվեց ՀՀ երկրորդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանը: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Կարեն Դեմիրճյանը:

Մայիսի 30-ից մինչև հոկտեմբերի 27-ն ընկած հինգ ամիսների ընթացքում Հայաստանն ապրում էր ներքաղաքական կյանքի բարդ մի շրջան: Նոր վարչապետ Վազգեն Սարգսյանի պահանջկոտությունը ժողովրդին հուսադրում էր, որ կարվեին բոլոր անհրաժեշտ քայլերը երկիրը բարդ ու դժվարին իրավիճակից դուրս բերելու համար: Դեպի ժողովրդավարություն տանող այս զարգացումները, սակայն,

<sup>1</sup> ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995:

<sup>2</sup> <http://www.hhk.am/hy/history/>.

<sup>3</sup> Տե՛ս Մինայան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, եր., 2013, էջ 287:

շարունակությունն չգտան 1999 թ. հոկտեմբերի 27-ի անսխադեպ ահաբեկչության պատճառով:

1999թ. հոկտեմբերի 27-ին՝ Ազգային ժողովի եռօրյայի վերջին օրվա նիստին, խորհրդարանի նիստերի դահլիճ ներխուժեցին հինգ զինված ահաբեկիչներ՝ Նաիրի Հունասյանի գլխավորությամբ, և կրակ բացեցին Ազգային ժողովի պատգամավորների ու կառավարության անդամների վրա: Չոհվեցին Ազգային ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանը, վարչապետ Վազգեն Սարգսյանը, Ազգային ժողովի նախագահի տեղակալներ Յուրի Բախշյանը և Ռուբեն Միրոյանը, պատգամավորներ Սիբայել Զոթանյանը, Հենրիկ Աբրահամյանը, Արմենակ Արմենակյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը<sup>1</sup>:

Հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը հանգեցրեց հանրապետության ներքաղաքական իրավիճակի կտրուկ վատթարացմանը: Ստեղծված իրավիճակից փորձեցին օգտվել ընդդիմադիրները, որոնք փորձում էին հետ բերել իշխանությունը:

Տեղի ունեցած ողբերգությունը երկար ժամանակ լարվածության մեջ պահեց ողջ հասարակությանը: «Երկրապահները» պահանջում էին նախագահ Ռոբերտ Զոչարյանի հրաժարականը՝ ի թիվս այլ հանցանքների՝ նրան մեղադրելով նաև հոկտեմբերի 27-ի ոճրագործության մեջ:

1999 թ. հոկտեմբերի 27-ի ոճրագործությունից հետո ՀՀ ԱԺ նախագահ ընտրվեց Արմեն Խաչատրյանը:

Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած ողբերգությունից կարճ ժամանակ անց Եվրոպական Միությունը ևս հնչեցրեց որոշ գնահատականներ: Մասնավորապես, ԵՄ-Հարավկովկասյան պետություններ հարաբերությունների հարցերով Եվրախորհրդարանի զեկուցող Պեռ Գարդոնը 2000 թ. մարտի 2-6-ը Հայաստան կատարած այցից հետո հայտնեց, որ ի թիվս այլ հետևանքների, միջազգային դիտողները համոզված են, որ «1999 թ. հոկտեմբերի 27-ին ՀՀ ԱԺ-ում տեղի ունեցած ահաբեկչությունը բացասական հետևանքներ կարող է ունենալ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման համար»<sup>2</sup>:

Ինչ խոսք, Եվրամիության ներկայացուցչի համոզմունքը, կարծում ենք, հենվում էր ռեալ իրողությունների գնահատման վրա և ռացիոնալ հատիկ էր պարունակում: Դրան ավելացնենք նաև, որ 1999 թ. ահաբեկչությունից հետո բարդացան հանրապետության ոչ միայն արտաքին խնդիրները, այլև շարունակվեց ներքին ճգնաժամը, ինչի արդյունքում կրկին ծայր առավ արտագաղթը: ՀՀ-Եվրամիություն խորհրդարանական համագործակցության հանձնաժողովի անդամների հետ հանդիպումների ժամանակ Եվրամիության ներկայացուցիչ Գարտոնը նույնիսկ հստակ թվեր էր մատնանշել՝ հիշեցնելով, որ «թեև Հայաստանը ռազմական առումով շահել է ԼՂ-ի պատերազմը, սակայն երկրի ներքին ճգնաժամի, սոցիալ-տնտեսական անսպաստ պայմանների արդյունքում մոտ մեկ միլիոն հայեր արտագաղթել են»<sup>3</sup>:

Կարծում ենք, Եվրամիության պաշտոնյաների կողմից հնչեցվող այս գնահատականները պետք է սթափեցնող նշանակություն ունենային ՀՀ այն ժամանակվա իշխանությունների համար, մինչդեռ նրանց գործողություններից կարելի է եզրակացնել, որ իշխանությունները նույնիսկ հստակ հակաճգնաժամային միջոցառումների ծրագիր չէին մշակել: Ի պատասխան ահազանցող

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում., էջ 289:

<sup>2</sup> ՀՀ ԱԳՆ, Պատմադիվանագիտական բաժին, Եվրոպայի վարչություն, Եվրամիության բաժին, ց. 6, գ. 42, էջ 3:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 11-13:

արտագաղթի մասին այդ դիտարկումներին՝ ՀՀ իշխանությունները համեմատականներ էին անցկացնում Վրաստանի և Ադրբեջանի նույնանման ցուցանիշների հետ՝ փորձելով այդ կարևոր խնդիրը կապել ոչ թե ՀՀ ներքին իրավիճակի, այլ «տարածաշրջանի անցումային շրջանին բնորոշ ընդհանուր վիճակի» հետ:

Անդրադառնալով հիշյալ շրջանի քաղաքական ուժերի դասավորություններին՝ նշենք, որ ընդդիմության հետ էր գործում նորանշանակ վարչապետ Արամ Սարգսյանը (Վազգեն Սարգսյանի եղբայրը), ով ՀՀ նախագահի հրամանով 2000 թ. մայիսին ազատվեց զբաղեցրած պաշտոնից, և վարչապետ նշանակվեց Հանրապետական կուսակցության նախագահ Անդրանիկ Մարգարյանը (1951-2007 թթ.): Այս միջոցով փոքր ինչ մեղմվեց ներքին լարվածությունը և հասարակությունը խուսափեց վտանգավոր դիմակայությունից: Այսպիսով, փաստորեն, հաջողվեց ներքաղաքական առճակատումը շեղել կոշտ բախում տանող ուղուց:

2000թ. սկզբներին հանրապետության ղեկավարությանը հաջողվեց խուսափել ներքաղաքական ցնցումներից և աստիճանաբար կայունացնել քաղաքական իրավիճակը: Կատարվեցին նաև ժողովրդավարությանը նպաստող բարեփոխումներ:

2001 թվականի դեկտեմբերին ընդունվեց «Հասարակական կազմակերպությունների մասին»,<sup>1</sup> իսկ 2002 օգոստոսին՝ «Կուսակցությունների մասին»<sup>2</sup> ՀՀ օրենքները: Օրենքի կիրարկումից հետո 2004 թ. տվյալներով՝ հանրապետությունում կուսակցությունների թիվը հասավ 52-ի<sup>3</sup>: Կուսակցությունների ակտիվությունը դրսևորվեց հատկապես նախագահական և խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Հայաստանի Հանրապետության նախագահական չորրորդ ընտրություններն անցկացվեցին 2003 թ. փետրվարի 19-ին:

Հայաստանի հանրապետական կուսակցությունը, Հայ հեղափոխական դաշնակցությունը, «Օրինաց երկիր» կուսակցությունը, Միավորված աշխատանքային կուսակցությունը, «Հզոր հայրենիք» կուսակցությունը, Հայաստանի Նորացված կոմունիստական կուսակցությունը, «Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն» կուսակցությունը հայտարարեցին Ռոբերտ Զոչարյանի թեկնածությունը պաշտպանելու մասին: Թեկնածուներից Րաֆֆի Ռիչարդի Հովհաննիսյանը չգրանցվեց վերջին 10 տարում ՀՀ քաղաքացի չհանդիսանալու պատճառաբանությամբ:

Ընտրություններից առաջ թեկնածուներ Պետրոս Մակեյանը, Արամ Չավենի Սարգսյանը և Արշակ Սադոյանը հայտնեցին ինքնաբացարկ և հայտարարեցին Ստեփան Դեմիրճյանին սատարելու մասին, իսկ Վլադիմիր Դարբինյանը և Պարույր Հայրիկյանը հայտնեցին ինքնաբացարկ և հայտարարեցին Արտաշես Գեղամյանին սատարելու մասին: Թեկնածուներ Արամ Գասպարի Սարգսյանը և Գառնիկ Մարգարյանը ընտրապայքարից դուրս չէկան, սակայն հայտարարեցին Ստեփան Դեմիրճյանին սատարելու մասին: Այսպիսով, գրանցվեց և քվեարկվեց 9 թեկնածու:

2003 թվականի ՀՀ նախագահական ընտրությունների երկրորդ փուլին մասնակցեցին առաջին փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները՝ Ռոբերտ Սեդրակի Զոչարյանը և Ստեփան Կարենի Դեմիրճյանը:

ՀՀ նախագահ վերընտրվեց Ռոբերտ Զոչարյանը, վարչապետի պաշտոնում շարունակեց պաշտոնավարել Անդրանիկ Մարգարյանը:

<sup>1</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու, 2001, գիրք Դ, եր., 2001, էջ 771:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ գործող օրենքների ժողովածու, 2002, գիրք Ե, եր., 2003, էջ 648:

<sup>3</sup> Տե՛ս Պողոսյան Գ., Հայ հասարակությունը 21-րդ դարակգրքին, եր., 2006, էջ 134:



Հանրապետության Նախագահի թեկնածու Ստեփան Դեմիրճյանը 2003 թ. մարտի 17-ին դիմել էր սահմանադրական դատարան և պատճառաբանելով, որ ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները՝ հավասարությունը, ազատությունը և քվեարկության գաղտնիությունը, խաթարվել է ընտրողների կամքի ազատ արտահայտումը, ինդրել է անվավեր ճանաչել Հանրապետության Նախագահի 2003 թ. մարտի 5-ի ընտրությունը:

Պատասխանող կողմը (ՀՀ Սահմանադրական դատարանը) դիմող կողմի ներկայացրած փաստարկների առնչությամբ հրապարակել էր եզրակացություն, որտեղ մասնավորապես նշվում էր, որ «ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընտրության արդյունքներն ամփոփել է ՀՀ ընտրական օրենսգրքին համապատասխան, և Հանրապետության Նախագահի ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու հիմքեր չկան»<sup>1</sup>:

2003 թվականի մայիսի 25-ին տեղի ունեցան ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովի հերթական ընտրությունները: Կուսակցություններից ոչ մեկին չհաջողվեց բացարձակ մեծամասնություն ստանալ խորհրդարանում և միայնակ ձևավորել կառավարություն: Ըստ ընտրությունների արդյունքի՝ օրենքով սահմանված հինգ տոկոսի սահմանագիծը հաղթահարեցին 6 կուսակցություն և դաշինք հետևյալ համամասնությամբ. Հայաստանի հանրապետական կուսակցություն՝ 23,66 տոկոս (23 պատգ.), «Արդարություն» դաշինք՝ 13,71 տոկոս (14 պատգ.), «Օրինաց երկիր» կուսակցություն՝ 12,60 տոկոս (12 պատգ.), Հայ հեղափոխական դաշնակցություն՝ 11,45 տոկոս (11 պատգ.), «Ազգային միաբանություն»՝ 8,91 տոկոս (9 պատգ.), Միավորված աշխատանքային կուսակցություն՝ 5,67 տոկոս (6 պատգ.):

2003թ. հունիսի 12-ին բացվեց ՀՀ երրորդ գումարման Ազգային ժողովի առաջին նստաշրջանը: Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Արթուր Բաղդասարյանը, իսկ նախագահի տեղակալներ ընտրվեցին Տիգրան Թորոսյանը և Վահան Հովհաննիսյանը: Ընտրվեցին նաև մշտական հանձնաժողովների նախագահներ: 2006թ. մայիսի 22-ին Արթուր Բաղդասարյանը ներկայացրեց հրաժարական: Հունիսի 1-ին Ազգային ժողովի նախագահ ընտրվեց Տիգրան Թորոսյանը:<sup>2</sup>

Հայաստանի անկախ Հանրապետության պատմության մեջ առաջին անգամ ընտրություններում առավել շատ ձայներ ստացած երեք կուսակցություններ՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ), Օրինաց երկիր կուսակցությունը (ՕԵԿ) և Հայ Հեղափոխական դաշնակցությունը (ՀՀԴ) քաղաքական կոալիցիա կազմեցին և ձևավորեցին կառավարություն<sup>3</sup>: Վարչապետ նշանակվեց դեռևս 2000 թվականից այդ պաշտոնում գտնվող Անդրանիկ Մարգարյանը: Ավելի ուշ՝ 2006 թ. ՕԵԿ-ը, դուրս գալով կոալիցիայից, կարճ ժամանակով վերածվեց ընդդիմության<sup>4</sup>:

Ամփոփելով՝ նշենք, որ 1991 թ. անկախության հռչակումից հետո, հիմք դրվեց Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարական քաղաքական վարչակարգի ձևավորմանը: Սակայն, ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում այդ

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի որոշումը Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի մարտի 5-ի ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով, 16 ապրիլ, 2003:

<sup>2</sup> <http://www.parliament.am/parliament.php?id=parliament>.

<sup>3</sup> Տե՛ս Թորոսյան Տ., Հասարակական համակարգի հետխորհրդային տրանսֆորմացիա, Եր., 2006, էջ 157:

<sup>4</sup> Արբահամյան Հ., Ժողովրդավարությունը և քաղաքական կուսակցությունները, Երևան, 2009, էջ 70:

գործընթացն ընթանում էր հակասական և արմատական վերակազմավորումների ուղեկցությամբ: Երկրում ձեռնարկված բարեփոխումները ուղեկցվեցին տնտեսական ճգնաժամերով, քաղաքական բուռն լարվածությամբ, հակասություններով, սոցիալական անկմամբ և անկայունությամբ: Պարզ դիտարկմամբ, քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում հասարակական և քաղաքական իրողությունները, զանգվածային ընտրախախտումներն ու ժողովրդի մի ստվար հատվածի աղքատ վիճակը հանգեցրին անվստահության մթնոլորտի ձևավորմանը, որն էլ իր հերթին դարձավ հասարակություն-իշխանություն փոխօտարման պատճառ:

### **Մարինե Գևորգյան** **ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ** **1999-2003 ԹԹ.**

**Բանալի բառեր՝** Հայաստանի Հանրապետություն, ներքաղաքական զարգացում, կուսակցություններ, ԱԺ ընտրություններ, Նախագահական ընտրություններ, ահաբեկչություն

1991 թ. Հայաստանի Հանրապետության անկախությունը նոր փուլ նշանավորեց հայոց նորագույն պատմության մեջ: 1995 թ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ ուրվագծվեց երկրի հետագա հասարակական-քաղաքական կյանքի զարգացումը: Զաղաքական համակարգը, որը վերջնականապես ձևավորվեց 1998 թ. Նախագահական, այնուհետև 1999 թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում, թվում էր երկիրը կտանի ժողովրդավարության ամրապնդման ուղիով, սակայն դա տեղի չունեցավ 1999 թ. հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում ահաբեկչական հարձակման պատճառով: Դա ոչ միայն հանգեցրեց լուրջ ներքաղաքական ցնցումների, այլև բացասաբար ազդեց Հայաստանի Հանրապետության արտաքին հեղինակության վրա: Հետագայում երկրում ներքաղաքական կյանքը որոշակի կայունացավ: 2003 թվականին ՀՀ-ում տեղի ունեցան հերթական Նախագահական և խորհրդարանական ընտրությունները: Քննարկվող ժամանակահատվածում ՀՀ-ում հասարակական և քաղաքական իրողությունները, զանգվածային ընտրախախտումներն ու ժողովրդի մի ստվար հատվածի աղքատ վիճակը հանգեցրին անվստահության մթնոլորտի ձևավորմանը, որն էլ իր հերթին դարձավ հասարակություն-իշխանություն փոխօտարման պատճառ:

### **Marine Gevorgyan**

### **INTRA-POLITICAL PROCESSES IN THE REPUBLIC OF ARMENIA IN 1999-2003**

**Key words:** *Republic of Armenia, domestic political life, parties, parliamentary elections, presidential elections, terrorism*

The independence of the Republic of Armenia in 1991 marked a new historical stage in modern Armenian history. The Constitution, adopted on July 5, 1995, already outlined the further development of the country's socio-political life. The political system formed as a result of the presidential elections of 1998, and then the parliamentary elections in 1999, was expected to lead the country along the path of strengthening democracy, but this did not happen because of the terroristic attacks in the National Assembly on October 27, 1999,

which did not only lead to significant internal political upheavals, but also affected the external authority of the Republic of Armenia greatly. Later, the domestic political life in the country demonstrated some stabilization. In 2003, presidential and parliamentary elections took place. During the period under review, the social and political realities in Armenia, the massive electoral frauds and the poverty of the majority of the population led to the formation of an atmosphere of distrust, which, in its turn, caused the alienation of society and power.

**Марине Геворкян**  
**ВНУТРИПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В РЕСПУБЛИКЕ**  
**АРМЕНИЯ В 1999-2003 гг.**

**Ключевые слова:** *Республика Армения, внутривнутриполитическая жизнь, партии, парламентские выборы, президентские выборы, терроризм*

Обретение независимости Республикой Армения в 1991 году ознаменовало собой новый исторический этап в новейшей армянской истории. Конституция, принятая 5 июля 1995 года, наметила дальнейшее развитие общественно-политической жизни страны. Политическая система, сформировавшаяся в результате президентских выборов 1998 года, а затем парламентских выборов 1999 года, казалось, поведет страну по пути укрепления демократии, однако этого не произошло из-за осуществленного в Национальном собрании 27 октября 1999 года террористического акта, который не только привел к существенным внутривнутриполитическим потрясениям, но и нанес большой удар по внешнему авторитету РА. Стабилизация во внутривнутриполитической жизни была отмечена позднее. В 2003 году произошли очередные президентские и парламентские выборы. В течение рассматриваемого периода социальные и политические реалии в Армении, массовые электоральные махинации и нищета большинства населения привели к формированию атмосферы недоверия, которая в свою очередь вызвала отчуждение общества и власти.

## ЛЕВЫЕ ПОЛИТИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ В АРМЕНИИ В XX – XXI ВВ.: РОЛЬ В СТАНОВЛЕНИИ И РАЗВИТИИ ГОСУДАРСТВА И ПЕРСПЕКТИВЫ

**АНТОН ЕВСТРАТОВ**

Армянская государственность в XX-XXI вв. – все три республики, в значительной степени формировалась под сильным влиянием протестных движений, институционально сформировавшихся в армянском обществе с конца XIX столетия. Помимо идей национального освобождения от турецкого ига (реже – господства царской России) основные армянские протестные, освободительные движения, несли идеи социальной справедливости, равенства и перераспределения материальных благ в пользу неимущих слоев населения, что дает основание называть их левыми. Эти идеи в той или иной мере повлияли на саму суть вооруженной борьбы армянского народа, а также на строительство его государств – Первой республики (1918-1920 гг.), советской Армении и современной республики Армения. Тем не менее, в настоящее время в РА потенциал левых движений, фактически, не реализован – последние практически не участвуют в политической жизни страны, и присутствуют на ее территории лишь в качестве маргиналов. При этом потенциал такого рода идеологий и возникающих на их базе движений нельзя недооценивать, т.к. в республике налицо множество экономических, социальных и, обусловленных ими политических проблем.

Первой по-настоящему левой силой в армянском политическом дискурсе является возникшая в 1887 году в Женеве стараниями армянских студентов-марксистов социал-демократическая партия Гнчак. Ее название означало «Колокол» и являлось прямой отсылкой к Герцену<sup>1</sup>, его газете и русским народническим идеям. Однако Гнчак являлась в большей степени марксистской партией<sup>2</sup> – среди пяти разделов ее программы было, например, «овладение рабочим классом Османской империи всеми средствами производства» (напомним, это – не народнический дискурс, народники ориентировались на крестьянство и его общинное устройство). Еще один раздел предполагал уничтожение османской монархии и ее порядков, и замену их демократическим и конституционным правлением. И лишь последние три раздела непосредственно касались армянского вопроса и социально-политического положения армян Османской империи<sup>3</sup>. Гнчак декларировала и типичные для того времени «левые» формы и методы борьбы – общее восстание армян, террор, образование вооруженных отрядов и отдельных групп. После победы революции в освобожденной Армении должен был быть установлен социалистический строй<sup>4</sup>. Активисты Гнчак внесли огромный вклад и в пропаганду идей марксизма – они перевели основную часть «Коммунистического манифеста» (причем, по согласию самого Фридриха Энгельса)<sup>5</sup> Гнчакисты учли ошибки первой армянской политической партии Османской империи – Арменакан, так и не получившей мощной социальной базы и не сумевшей выйти за

---

<sup>1</sup> Осерская Э.В. Роль армянских политических партий в эволюции национально-освободительного движения армян в Османской империи (1878 – начало XX в.) // Историческая и социально-образовательная мысль. Краснодар, 2011. №5. С. 30-32.

<sup>2</sup> История Армении // <https://www.armmuseum.ru/history-10/>

<sup>3</sup> Nalbandian L. The Hunchakian Revolutionary Party 1887 – 1896 // [http://www.hunchak.org.au/aboutus/historical\\_nalbandian.html#Note1](http://www.hunchak.org.au/aboutus/historical_nalbandian.html#Note1)

<sup>4</sup> Там же.

пределы ванского бассейна<sup>1</sup>, и активно привлекали к антиосманской борьбе другие угнетенные народы – ассирийцев, арабов и даже турок.

Именно гнчакисты организовали Зейтунское восстание 1995 года, в ходе которого было сформировано правительство во главе с Агаси, а над казармами разгромленного турецкого гарнизона был поднят красный флаг с надписью «Независимый Зейтун»<sup>2</sup>. Это – одно из немногих частично успешных армянских восстаний в Османской империи, завершившееся соглашением о частичной автономии армянского Зейтуна. На их счету также Сасунское восстание и ряд митингов.

Примечательно, что на начальных этапах своей деятельности гнчакисты действовали совместно с российскими коммунистами. К примеру, в 1904 году они организовали совместный с РСДРП митинг в Баку. Похожа была на РСДРП и структура Гнчак, выстроенная на принципе демократического централизма.

Геноцид 1915 года сполна был прочувствован членами Гнчак – 20 лидеров партии было повешено в Стамбуле. Гнчакисты приняли участие в строительстве и обороне Первой республики – члены партии участвовали в Сардарapatской битве и других военных операциях независимой Армении. После установления в последней советской власти Гнчак перестала существовать на ее территории, однако сохранилась в диаспоре, не избежав, впрочем, раскола. Марксистские основы дали возможность одному из осколков когда-то единой Гнчак сотрудничать с советской властью и советскими спецслужбами, что часто становилось основой для критики партии со стороны конкурентов – особенно дашнаков. Развал СССР и Карабахский конфликт не остались в стороне от внимания Гнчак, когда партией был создан отряд Мецн Мурад. Сейчас партия, будучи активной в диаспоре на уровне СМИ и местных отделений, в Армении не представлена в парламенте и ушла, фактически, в маргинальное поле.

Несколько иная ситуация у другой армянской партии – армянской революционной федерации Дашнакцутюн. Созданная в 1890 году в Тифлисе, она выражала интересы наиболее радикальных представителей армянской революционной молодежи. Интересен социальный состав Дашнакцутюн – наряду с интеллигенцией, туда входили рабочие, крестьяне, служащие, но также и представители буржуазии. Изначально оперируя на страницах газеты Гнчак, партия вскоре создала собственный печатный орган – Дрошак (Знамя)<sup>3</sup>. Основной целью Дашнакцутюн провозглашалось освобождение Западной Армении от турецкого владычества. Однако имели место и либеральные и классические «левые» требования – равенство национальностей, всеобщее избирательное право, свобода слова, наделение землей безземельных крестьян, всеобщего образования, отмены налога на доходы. Вне сомнения эти требования были куда менее радикальны в плане изменения социальной структуры общества, нежели у гнчакистов и находились условно на противоположном полюсе левого движения среди армян. К примеру, Дашнакцутюн не декларировала необходимость строительства в Армении социалистической республики, говоря лишь о республике демократической<sup>4</sup>. Что касается методов дашнаков, то они вполне напоминали гнчакистские и лево-революционные в целом – пропаганда, вооружение

<sup>1</sup> Гарабедян А. Совместные действия армянского и болгарского освободительного движения в конце XIX и начале XX вв. // <http://www.yerkramas.org/2011/01/24/agop-garabedian-sovmestnye-dejstviya-armyanskogo-i-bolgarskogoosvoboditelnogo-dvizheniya-v-konce-xix-i-nachale-xx-veka>.

<sup>2</sup> Осерская Э.В. Роль армянских политических партий в эволюции национально-освободительного движения армян в Османской империи (1878 – начало XX в.) // Историческая и социально-образовательная мысль. Краснодар, 2011. №5. С. 31.

<sup>3</sup> Мархулия Г. Армяне в поисках Армении // <https://kavkazplus.com/news.php?id=177#.W60kb3szbDc>.

<sup>4</sup> Осерская Э.В. Роль армянских политических партий в эволюции национально-освободительного движения армян в Османской империи (1878 – начало XX в.) // Историческая и социально-образовательная мысль. Краснодар, 2011. №5. С. 32.

народа, террор, разграбление государственных учреждений Османской империи и т.д. Кстати, на российском юге дашнаки собирали дань с армянских предпринимателей, подобно большевикам Сталина, или современным боевикам курдской РПК в Турции. Несмотря на то, что партия с 1907 года входила в Социалистический интернационал, требования социальной справедливости на базе русского народничества и марксизма у Дашнакцутюн почти всегда были в тени националистических и национально-освободительных лозунгов, целей и мероприятий. В большей степени дашнаков можно сравнить с российскими эсерами. Хотя некоторые дашнакские лидеры и идеологи противопоставляли себя социалистам, в частности – во взаимодействии личности и массы (Заварьян), и др.

Именно Дашнакцутюн стала правящей партией Первой республики, на выборах июня 1919 года они получили 90% голосов и сформировали однопартийное правительство. С одной стороны Дашнакцутюн ориентировалась на поддержку государств Антанты, а с другой, столкнулось с противодействием мусульманского населения провозглашенной в 1918 году республике. Последнее частично было связано с радикальным национализмом дашнаков и лишь частично – с пантюркистскими устремлениями кемалистов Турции и мусаватистов Азербайджана. Провал национальной политики констатировал дашнакский премьер-министр Ованнес Каджазнуни в своей книге<sup>1</sup>. При этом первая республика, вне сомнения, являясь демократической, не была социалистическим государством, что в целом отражало программу Дашнакцутюн. Неудивительно, что именно против дашнаков и их правительства была направлена большевистская пропаганда, а также последовавшие в мае и осенью 1920 году восстания, спровоцировавшие военную помощь красным повстанцам Красной Армии и положившие конец Первой республике. Интересно, что стоя на антикоммунистических позициях на Южном Кавказе, Дашнакцутюн в Туркестане активно сотрудничала с большевиками. С 1917 года отряды Дашнаков присоединялись к Красной гвардии, а затем – Красной армии, и лишь в мае 1919 года по требованию мусульманских депутатов Андиганского совета последние отряды партии были разоружены.

Деятельность в эмиграции дашнаков связана с их антисоветской позицией и окончательным выхолащиванием социалистического дискурса, а также верностью вильсоновским принципам, для реализации которых у партии не было ни ресурсов, ни реальных инструментов. Как и гнчакисты, дашнаки активизировались после обретения республикой Армения независимости от СССР. Сотрудничество с советскими властями, конфликт с АОД, запрет и неудачные политические решения после него снизили популярность Дашнакцутюн настолько, что партия, хотя и попадает пока в Национальное собрание, (в этом она обходит Гнчак), но не выступает в качестве реального политического субъекта в Армении, до недавнего времени блокируясь с РПА<sup>2</sup>. Несколько лучше положение партии – в Арцахе.

И Дашнакцутюн и Гнчак активны в Ливане, где под их контролем находились милиционные формирования, а лидеры партий входят в парламент страны.

Важной частью армянского левого движения являются, вне сомнения, марксисты. Впервые идеи марксизма проникли в армянскую печать в 1880-е гг. в значительной степени на это повлияли гнчакисты. В Восточной Армении новое учение распространялось, как через сосланных русских революционеров, так и через армянскую молодежь, учившуюся в России. Однако первый марксистский кружок в Армении появился относительно первых армянских партий поздно – только в 1899 году

<sup>1</sup> Качазнуни О.В. Дашнакцутюн больше нечего делать! Тифлис, «Красный воин», 1927. С. 21.

<sup>2</sup> «Дашнакцутюн» выходит из коалиции с РПА // <https://mediamax.am/ru/news/politics/28154>.

стараниями Степана Шаумяна. В 1902 году в Тифлисе появился Союз армянских социал-демократов, ставший частью Тифлисского комитета РСДРП. В 1905 г. комитет появился и в Эривани<sup>1</sup>.

Армянские большевики протестовали против отделения от России Закавказской федерации, затем подпольно работали против дашнакского правительства первой республики Армения. Под советской властью Армения лишилась Нахичевани и Арцаха, хотя и сохранила Зангезур и Лори, но самое главное, пусть и в урезанном виде, получила государственность – Вторую республику. Ее становление и основные векторы развития связаны с фигурой Александра Мясникяна.

Во-первых при нем в 20-е гг. XX в. началась ликвидация безграмотности. Если в 1897 г. 10% ее населения была грамотной, то в 1939 г. – 84%, а далее показатель дошел до 100. Однако это – лишь часть широкой культурно-образовательной политики советской Армении Мясникяна. «У граждан Армении есть ряд своих культурных факторов: периодические издания, книги, театр, музеи, библиотеки, консерватория, университет и так далее, и тому подобное. Никогда еще армянин не видел такой картины. Нужно не колеблясь сказать, что Армения живет в новой культурной эпохе», - отмечал сам председатель совета народных комиссаров Армянской ССР<sup>2</sup>. Активное покровительство оказывалось Егише Чаренцу, Мартirosу Сарьяну. Стараниями Мясникяна из Ирана был возвращен архитектор Александр Таманян. Ряду деятелей культуры было установлено постоянное денежное содержание.

Именно Мясникян заложил основу связи Армения-Диаспора, действующей и поныне. «Наша страна – место для сирот и беженцев, ад горя, стенаний, скорби и страданий. И Армения трудящихся во что бы то ни стало приведет этот ад в человеческое состояние», - писал сам политик<sup>3</sup>. В 1921 г. стараниями Мясникяна был создан Комитет помощи Армении, объединивший живущих за границей армян для помощи Родине с одной стороны и информирующий их о ее состоянии – с другой.

История отношений Армении и армянского народа с СССР и его идеологией – неоднозначна и полна драматизма. В сталинские годы АрмССР не избежала перегибов и репрессий, затем отправилась на фронты Великой отечественной войны 21% своего населения, 106 человек из которого стали героями Советского Союза, пережила несколько крупных волн репатриации. По выходе РА из состава СССР, местные марксисты оказались деморализованы и идеологически и институционально не готовы к новым реалиям. Фактически, весь их политический путь в условиях третьей республике – есть непрерывное отступление и скатывание в маргинальное поле.

Таким образом, сейчас мощной левой силы в Армении нет – частично это связано с ориентацией общества на либеральную и националистическую риторику, частично - с дискредитацией левой идеи советским прошлым, репрессиями и несправедливым решением вопросов о границах республики. Социальные проблемы, однако, затрагиваются в риторике некоторых политических сил в армянстве. Известная АСАЛА, армянская секретная армия освобождения Армении провозглашала утверждение «научного социализма»<sup>4</sup> как политической доктрины воссозданного армянского государства. Неудивительно, что, учитывая и методы Асала, организацию сравнивали с немецкой «Фракцией красной армии», а ее харизматичных представителей – с Че Геварой. Есть социалистический дискурс и у недавно оформившейся

<sup>1</sup> История Армении // <https://www.armmuseum.ru/history-10/>.

<sup>2</sup> Մարտունի Ա., Սոցիալիստական Հայաստանի անօրյա խնդիրները, Կլու-Յորք, 1924 (Мартунни Ал., Текущие задачи социалистической Армении. Нью-Йорк, 1924, на арм.яз.). С. 24.

<sup>3</sup> Մյասնիկյան Ա., Ընտիր երկեր, Երևան, 1957 (Мясникян Ал., Избранные сочинения, Ер., 1957, на арм.яз.). С. 368.

<sup>4</sup> Коларов Г. Пылающий континент // <http://zavtra.ru/blogs/kurdyi>.

праворадикальной партии Сасна Црер<sup>1</sup>. Представляется, что вменяемая левая альтернатива была бы исключительно полезной для политического развития современной Армении, смягчения и устранения ее социальных противоречий, и более эффективного развития экономической и социальной сфер, а также банального улучшения жизни трудового населения.

**Антон Евстратов**

## **ЛЕВЫЕ ПОЛИТИЧЕСКИЕ ДВИЖЕНИЯ В АРМЕНИИ В XX – XXI ВЕКАХ: РОЛЬ В СТАНОВЛЕНИИ И РАЗВИТИИ ГОСУДАРСТВА И ПЕРСПЕКТИВЫ**

**Ключевые слова:** *государственность, коммунизм, социализм, Армения, революция, марксизм, дашнаки, гнчакисты*

В статье раскрываются основные идеологические ориентиры и принципы практической деятельности левых политических сил Армении и диаспоры, а также их влияние на становление трех армянских республик XX-XXI веков. Также автор анализирует перспективы левых движений современной Республики Армения в свете нынешних социальных, политических и экономических проблем.

**Անտոն Եվստրատով**

## **ՁԱԽ ԸԱՂԱՔԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX- XXI ԴԴ. ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ԴԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ՉԱՐԳԱՉՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՀԵՈՒՆԿԱՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր՝** *պետականություն, կոմունիզմ, սոցիալիզմ, Հայաստան, հեղափոխություն, մարքսիզմ, դաշնակետ, հնչակյաններ*

Հոդվածում բացահայտվում է Հայաստանի և սփյուռքի ձախ քաղաքական ուժերի պրակտիկ գործունեության հիմնական գաղափարական ուղենիշներն ու սկզբունքները, ինչպես նաև դրանց ազդեցությունը XX-XXI դարերի երեք հայկական հանրապետությունների ձևավորման վրա: Հեղինակը նաև վերլուծում է ժամանակակից Հայաստանի ձախ շարժումների հեռանկարները ներկայումս առկա սոցիալական, քաղաքական և տնտեսական խնդիրների լույսի ներքո:

**Anton Evstratov**

## **LEFT POLITICAL MOVEMENTS IN ARMENIA IN THE XX - XXI CENTURY: THE ROLE IN THE FORMATION AND DEVELOPMENT OF THE STATE AND PROSPECTS**

**Keywords:** *statehood, communism, socialism, Armenia, revolution, Marxism, Dashnaks, Hnchakists*

The article reveals the main ideological guidelines and principles of practical activity of the left political forces of Armenia and the diaspora, as well as their influence on the formation of the three Armenian republics of the XX-XXI centuries. The author also analyzes the perspectives of the left movements of the modern RA in the light of the currently existing social, political and economic problems.

<sup>1</sup> Ժիրայր Սեֆիլյանի և Վարուժան Ավետիսյանի աուդիոը // <https://www.youtube.com/watch?v=HXtnvPv-YF4>



## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՈՒԾԻՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ

### ՎՐԵԺ ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախի տնտեսական կյանքի զարգացման վրա դրական ազդեցություն ունեցավ Ռուսաստանին միացումը: 1820-ական թվականներին գեներալ Մաղաթովը բավականին աշխատանք է կատարել մանավանդ տնտեսության զարգացման ուղղությամբ: Նա զբաղվել է ճանապարհների բարեկարգմամբ: Մաղաթովի հանձնարարությամբ 1823-1825թթ. վերանորոգվում է Ասկերան-Շուշի ճանապարհը: Նրա աջակցությամբ կառուցվել է նաև Ելիզավետպոլ-Ասկերան ճանապարհը<sup>1</sup>: Կենտրոնական բոլոր ճանապարհների վրա կառուցվել են պահակակետեր և փոստային կայաններ: Նա Շուշիի հայերին համոզել է կամուրջներ կառուցել Թարթառ և Խաչեն գետերի վրա:

Ցարական կառավարությունը իրականացրեց մի շարք միջոցառումներ, որոնք շատ թե քիչ աշխուժացրին տնտեսական կյանքը: Արցախում Ռուսաստանի տիրապետության մեկ դարը Շուշիի ծաղկման ու բարգավաճման շրջան էր: Այն պայմանավորված էր նաև արևելահայկական այլևայլ գավառների բնակչության՝ այնտեղ կատարված ներհոսքով<sup>2</sup>:

1822 թ. վերացվում է իր գոյության կարճատև շրջանում Ղարաբաղի առաջընթացը խոչընդոտած և բոլոր առումներով հետադիմական խանությունը, իսկ 1823 թ. Շուշին դառնում է գավառի կենտրոն<sup>3</sup>: 1830-ական թվականների սկզբից Արցախի թեմի պառնասիստ դարձած Շուշին ոչ միայն գավառի վարչական, այլև տնտեսական ու մշակութային կենտրոնն էր, որն աչքի էր ընկնում իր կառույցներով, եկեղեցիներով, տպարանով, ուսումնական հաստատություններով, արդյունաբերական ձեռնարկություններով, արհեստանոցներով<sup>4</sup>:

Շուշիի զարգացման կարևոր խնդիրներից մեկն էլ քաղաքի ինքնավարության հարցն էր, որը պահանջում էր ժողովուրդը: Դրանով կլուծվեին արմատական նշանակության կարևոր հիմնահարցեր կրթության, առողջապահության, քաղաքաշինության և բազմաթիվ այլ ոլորտներում: Ժողովրդի պահանջները հաշվի առնելով՝ ցարական իշխանություններն ի վերջո 1892 թ. հուլիսի 11-ին ընդունում են քաղաքի ինքնավարության վերաբերյալ կանոնադրություն: Սակայն Շուշիի ինքնավարության իրավունքի իրականացումն անընդհատ ձգձգվում էր, ինչը տեղի ունեցավ միայն 1896 թ.: Սա կարևոր հաղթանակ էր քաղաքի բնակչության համար, որովհետև շուտով քաղաքագլուխ նշանակված Կ. Դանիելյանը սկսում է զբաղվել փողոցները սալահատակելու, խմելու ջրի բաշխման և այլ հարցերով: Շուշեցիները նույնպես կանգնած էին քաղաքային իշխանությունների կողքին և ամեն կերպ փորձում էին օգտակար լինել իրենց հայրենի քաղաքի շենացմանը: Նրանք իրենց միջոցներից կտակում կամ հատկացնում էին Շուշիի քաղաքային վարչությանը: Օրինակ՝ 1884 թ. Սարգիս արքեպիսկոպոս Զասան-Ջալալյանը իր կտակած գումարի մի մասը հատկացրել է Շուշիի քաղաքային վարչությանը<sup>5</sup>: Իսկ Ղարաբաղի թեմի ժամանակավոր կառավարիչ Չավեն եպիսկոպոսի՝ 1913 թ. հունիսի 17-ին վեհափառին

<sup>1</sup> Աբրահամյան Զ., Արցախը 18-19-րդ դարերում, Եր., 2015, էջ 207:

<sup>2</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, Եր., 1994, էջ 184:

<sup>3</sup> Բաղդասարյան Ն., Վարչաբաղաբանական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ., Եր., 2015, էջ 94:

<sup>4</sup> Աբրահամյան Զ., նշվ. աշխ., էջ 283:

<sup>5</sup> ԶԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1553, թ. 43: Մանրամասն նաև տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1898, հմ. 2-3, էջ 382: 1901, հմ. 7, էջ 265: 1902, հմ. 4, էջ 243: 1903, հմ. 4, էջ 248: 1904, հմ. 3, էջ 209:

Ներկայացրած զեկուցագրի համաձայն՝ հանգուցյալ Թավադյանը, կտակատարներ Բոգոյան Գասպարյանցի և Չամբարձում Առաքելյանի վկայությամբ, Շուշի քաղաքին տարբեր բարեգործական նպատակների համար կտակել է 100.000 ռուբլի գումար<sup>1</sup>:

Քաղաքի առաջնահերթ խնդիրներից էր խմելու ջրով ապահովումը, ինչը կթեթևացներ բնակչության հոգսերը: Այդ գործին ձեռնամուխ եղան շուշեցի մեծահարուստները, որպեսզի քաղաքն ունենա կանոնավոր մատակարարվող խմելու ջուր: Մինչ այդ քաղաքին խմելու ջուր էին մատակարարում ջրկիրները, որոնք կոչվում էին նաև «սուչիներ»: Նրանք ջուր էին բերում քաղաքից դուրս գտնվող սառնորակ, քաղցրահամ աղբյուրներից<sup>2</sup>: Դեռ 1852 թ. շուշեցի Անդրեաս Խանդամիրյանցը իր կտակած գումարից 5000 ռուբլի հատկացրել էր քաղաք բերվող ջրի ծախսերի համար<sup>3</sup>: Իսկ 1870 թ. շուշեցի Մահուտի Անդրեաս Գյանջումյանցը իշխանությունից թույլտվություն է ստանում 50 000 ռուբլի ներդրումով աղբյուրների ջրերը խողովակաշարով հասցնել քաղաք: Բայց այդ ծրագիրն անկատար է մնում<sup>4</sup>: 1871 թ. օգոստոսի 18-ին շուշեցիներ Չայրապետ Փիրիյանցի և Աղաջան Դանիելյանցի ջանքերով ու միջոցներով Յաստի-Բուջա տեղամասով ջուր է հասցվում Շուշի<sup>5</sup>: Իսկ 1873թ. Խուրշիդ Բանու Նաթավանի, Լույն Չայրապետ Փիրիյանցի և Աղաջան Դանիելյանցի միջոցներով<sup>6</sup> քաղաքից 7 վերստ հեռավորությունից ջուրը խողովակաշարով հասցվում է Շուշի: Այս քայլերը որոշակիորեն թեթևացնում են բնակչության հոգսերը, սակայն չէին ապահովում Շուշիի բոլոր բնակիչներին: Դեռևս խմելու ջրի հարցը մնում էր օրախնդիր, մասնավանդ, որ օրեցօր աճում էր Շուշիի բնակչության թիվը:

Այնուհետև Շուշիի բնակիչ Թադևոս Թամիրյանցը, որը մեծ հարստության տեր էր, քաղաքից դուրս կառուցել է տալիս մի գործարան, որտեղ պատրաստում էին կավե խողովակներ («թունգա») ու այդ թունգաներով քաղաքից մոտ 15-17 կմ հեռավորության վրա գտնվող առողջարար ու սառնորակ ջուրը բերում քաղաք:

Նա նաև 100 հզ. ռուբլի ոսկի է ներդնում և 1893-1901 թթ. ջրատար կառուցում, որով Բերդաձորի հյուսիսային սահման Սարի Բաբա լեռան փեշերից խմելու ջուր է հասցնում քաղաք: Ջրատարը կառուցելուց հետո քաղաքում կառուցվում են բազմաթիվ աղբյուրներ: Մեծ բարերարի հիշատակին տեղադրվել էր հուշաքար հետևյալ մակագրությամբ. «1893-1901թթ.: Ի յիշատակ յաւերժական բարութեանց կառուցեալ այս ջրամբար և ջրուղին ի Թադեոս Բապայեան Թամիրեանց անմահ նուեր Շուշույ համայն քաղաքին»<sup>7</sup>: Հատկանշական է, որ այս ջրատարը ժամանակի չափանիշներով բարձրորակ կառույց էր:

Քաղաքն իր շրջակայքի հետ հաղորդակցվում էր երեք ճանապարհով. առաջին խճուղու միջոցով Շուշին կապվում էր Եվլախ կայարանի հետ, որը կոչվում էր Շուշի-Եվլախ խճուղի<sup>8</sup>: 1912 թ. որոշվում է դեպի Գանձակ լեռնային ապահով ճանապարհ կառուցել, որի համար հայությունը հանգանակում է 90 000 ռուբլի գումար<sup>9</sup>: 1900-ական թվականներից սկսած՝ քաղաքի բնակչությունը աշխատել է Շուշին Եվլախ կայարանի հետ կապել երկաթգծով: 1907-1908 թթ. շուշեցի հայտնի մեծահարուստ Միրզա Սարուխանյանը սկսում է կառուցել այդ երկաթգիծը, ինչի համար 1910 թ.

<sup>1</sup> Փ. 57, ց. 2, գ. 1003, թ. 44:

<sup>2</sup> Կիսիբեկյան Ա., Զուշեր, հտ. 1., Եր., 2011, էջ 287:

<sup>3</sup> Փ. 56, ց. 17, գ. 46, թ. 36:

<sup>4</sup> Բալայան Վ., Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., 2017, էջ 328-329:

<sup>5</sup> Բակուր, Շուշի բերդաքաղաքը, Եր., 2000, էջ 215:

<sup>6</sup> Բալայան Վ., Նշվ. աշխ., էջ 329:

<sup>7</sup> Հարությունյան Զր., Շուշի: Նորահայտ կյուրեր քաղաքի պատմության մասին, Եր., 2002, էջ 59:

<sup>8</sup> Մանրամասն տե՛ս Շուշի-Գանձակ ճանապարհի համառոտ հաշիւ: Յուլիսի 7-ից 1906 թ. մինչև մայիսի 20-ը 1910 թ. Շուշի, 25-ին մայիսի 1910, Շուշի, «Մելքում Բաբաջանյան», 1910, էջ 61:

<sup>9</sup> Բալայան Վ., Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, էջ 327:

տեղի ժողովուրդը շնորհակալություն և գոհունակություն է հայտնում բարերարին<sup>1</sup>: Սակայն վերջինիս հաջողվում է միայն հողային աշխատանքները վերջացնել և կառուցել կամուրջները: Քաղաքական անբարենպաստ պայմանները թույլ չեն տալիս ավարտել կառուցումը և քաղաքը երկաթուղագծով կապել կայարանի հետ: Երկրորդ ճանապարհը, քաղաքի ներքին դարպասից աստիճանաբար ցածրանալով, հասնում էր պատմական Վարանդայի շրջանը: Երրորդ ճանապարհն էլ սկիզբ էր առնում քաղաքի վերին դարպասից և հասնում մինչև Գորիս: Այն կոչվում էր Շուշի-Գորիս խճուղի, որի շինարարությանը 2.000 ռուբլի է նվիրաբերում շուշեցի բարեգործ Միքայել Արամյանը<sup>2</sup>:

1881 թ. Թիֆլիսում Բագրատ Նավասարդյանի ջանքերով գումարվում է Կովկասի հայոց բարեգործական ընկերության<sup>3</sup> ընդհանուր ժողովի առաջին նիստը, որի ընթացքում Բ. Նավասարդյանը հայտնում է, որ «Բարեգործական ընկերության կանոնադրությունը արժանացաւ Կովկասեան փոխարքայի պաշտոնակատար, Գէներալ Ադիւտանտ իշխան Մէլիքովի հաստատման, 6-ին Յուլիսի 1881ամի»<sup>4</sup>:

Այն նպատակ ուներ «նպաստել լուսավորության տարածելուն հայոց մեջ՝ ռուսաց պետության սահմաններում և նյութապես օգնել նրանց: Եվ ռուսաց պետության սահմաններից դուրս գտնվող հայերին բացի նյութապես օժանդակություն անելուց՝ լուսավորություն ևս տարածել նոցա մեջ»<sup>5</sup>:

Այս հայրենանվեր գործում Բ. Նավասարդյանին աջակցել և աշխատակցել է հայ ժողովրդի նվիրյալ մեկ այլ զավակ՝ դրամատուրգ և հասարակական գործիչ Գաբրիել Սունդուկյանը, ով խմբագրել է ընկերության առաջին կանոնադրությունը<sup>6</sup>, այն թարգմանել վրացերեն և հրատարակել<sup>7</sup>: Ի դեպ, մեծ դրամատուրգն ամեն կերպ փորձել է օգտակար լինել ընկերության Շուշիի մասնաճյուղին, որտեղից որպես նվեր ստացել է փառավոր մի ապակյա բաժակ. «Ստացա Շուշվա տեղական վարչության կողմից ինձ ուղարկած ընծան և կամենալով մի թեթև փոխարինություն անել, ես վստահանում եմ ուղարկել Ձեզ իմ երկերից հարյուր օրինակ՝ Նորանից գոյացած արդյունքը հատկացնել հօգուտ ԿՅԲ Ընկերության Շուշվա մասնաճյուղին»<sup>8</sup>:

Բարեգործական ընկերությունն իր հովանու ներքո է վերցնում սովորող չքավոր աշակերտների, գրադարաններ, ընթերցարաններ, ճաշարաններ, բժշկական օգնություն և ցուցաբերում համաճարակների ժամանակ (1892 թ. ամռանը 400 ռուբլի հատկացվում է Շուշիի տեղական վարչությանը՝ զավառում տարածված խոլերայի համաճարակի դեմ միջոցներ ձեռնարկելու նպատակով<sup>9</sup>):

Ընկերության բացած առաջին մասնաճյուղերից մեկը գտնվում էր Շուշիում, որը իրականացվել էր 1881 թ. դեկտեմբերի 22-ին Ղարաբաղի հոգևոր դպրոցի տեսուչ Համբարձում Առաքելյանի ջանքերով<sup>10</sup>: Բարեգործական ընկերության դրամական միջոցները գոյանում էին գործադիր անդամների անդամավճարներից, նվիրադրամներից, ընկերության օգտին կազմակերպված միջոցառումների ժամանակ հանգանակված գումարներից:

<sup>1</sup> Ֆ. 227, ց. 1, գ. 634, թ. 12:

<sup>2</sup> Անթանեսյան Վ., Միքայել Արամյանց, Եր., 2011, էջ 46:

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս Լեօ, Երեսնամեակ հայոց բարեգործական ընկերութեան Կովկասում (1881-1911), Թիֆլիս, 1911: Հակոբյան Ռ., Կովկասի հայոց բարեգործական ընկերության հիմնադրումը, «Ակունք», Եր., 2013, հմ. 3, էջ 31-41:

<sup>4</sup> Ֆ. 28, ց. 1, գ. 2, թ. 2:

<sup>5</sup> Բեհբուդյան Ս., Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, Բանբեր Հայաստանի արխիվների, 1967, հմ. 1, էջ 228:

<sup>6</sup> Ֆ. 28, ց. 1, գ. 100, թ. 5:

<sup>7</sup> Նույն տեղում, գ. 101, թ. 93:

<sup>8</sup> Սունդուկյան Գ., ԵԼԺ, հ.3, Եր., 1952, էջ 454:

<sup>9</sup> Ֆ. 319, ց. 1, գ. 176, թ. 8-9, թ. 10-14 շրջ.:

<sup>10</sup> ԳԱԹ, Հ. Առաքելյանի ֆոնդ, թ. 1272:

1882 թ. Պետրոս Ադամյանը և տեղացի դերասանները ներկայացում են տալիս ու ստացված գումարը՝ 221 ռուբլի 65 կոպեկ, տրվում է ՀԲԸ Շուշիի մասնաճյուղին<sup>1</sup>:

Շուշիի մասնաճյուղին հատկացված առաջին դրամագլուխը եղել է շուշեցի Մարկոս Դյուլխանյանցի և նրա մոր՝ Թագուհի Դյուլխանյանցի կողմից նվիրաբերված 500 ռուբլին<sup>2</sup>: 1882 թ. ընկերության դրամական միջոցները համալրեցին Դավիթ Խանդամիրյանի և պրոկուրորի (դատախազ) օգնական Լազինսկու նվիրաբերած գումարները (5-ական ռուբլի), 86 գործադիր անդամների անդամավճարները (5-ական ռուբլի՝ 430 ռուբլի) և ընկերության օգտին տրված ներկայացումից գոյացած գումարը (183 ռուբլի 65 կոպեկ):

1882 թ. օգոստոսին տեղական վարչությունը դիմեց Թիֆլիսի խորհրդին՝ Շուշիում ընկերության անունով գրատուն-ընթերցարան բացելու ինդրանքով<sup>3</sup>: Գրատուն-ընթերցարանը բացվեց 1888 թ. Ելիզավետպոլի Նահանգապետի վկայագրով<sup>4</sup>: Զաղաթի երիտասարդ ուժերի ջանքերով կազմակերպվում են ներկայացումներ և մանկական երեկոներ, իսկ գոյացած ողջ արդյունքը ծախսվում է գրադարանի համար անհրաժեշտ կահույք և գրքեր ձեռք բերելու վրա<sup>5</sup>:

1881-1896 թթ. ընթացքում Կովկասի հայոց բարեգործական ընկերության Շուշիի տեղական վարչության նվիրատուների շարքերը համալրել են հետևյալ անձինք. Բեգլարբեկ Դյուլխանյանց՝ 300 ռուբլի<sup>6</sup>, Խանում և Հովհաննես Ադամյաններ՝ 300 ռուբլի արժողությամբ 47 հատոր գիրք՝ հօգուտ ընկերության Շուշիի գրադարան-ընթերցարանի<sup>7</sup>, Աննա Ղուկասյան՝ 200 ռուբլի՝ հօգուտ ընկերության Շուշիի գրադարան-ընթերցարանի՝ գրքեր գնելու համար<sup>8</sup>, Սարգիս Ադամյան՝ 100 ռուբլի՝ հօգուտ ընկերության գրադարան-ընթերցարանի՝ գրքեր գնելու համար<sup>9</sup>, Հովհաննես Դավթյան-Ադամյանց՝ 600 ռուբլի՝ հօգուտ ընկերության գրադարան-ընթերցարանի՝ գրքեր գնելու համար<sup>10</sup>, Բաբա, Իսաջանբեկ և Անդրեասբեկ Թյունիբեկյանցներ՝ պետական բանկի 5% տոմս՝ 100 ռուբլի արժողությամբ<sup>11</sup>, Եկատերինա Մարտիրոսյան-Կազաչկովա՝ 300 ռուբլի<sup>12</sup>, Խանդամիրյանց՝ 1000 ռուբլի<sup>13</sup>: Շուշիի մի խումբ երիտասարդներ Ջորոհնեթի տոնին ժողովել են և ընկերության գրադարանին նվիրել 1891 թ.՝ 247 ռուբլի<sup>14</sup>, 1893 թ.՝ 154 ռուբլի<sup>15</sup>: Նվիրատվություններ են կատարել Նաև Ավետիս Կարաբեկյանը<sup>16</sup>, Հովհաննես Խունյանցը, Սարգիս Խանդամիրյանցը, Մովսես Շահնազարյանցը, Սարգիս Կրասիլնիկյանցը, Իսահակ Թաթոսյանցը<sup>17</sup> և այլք:

Փաստորեն XIX դարի երկրորդ կեսին Շուշիի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքն աշխուժանում ու վերելք էր ապրում հիմնականում բարերարների և բարեգործական ընկերությունների միջոցների, նվիրատվությունների հաշվին: Ռուսական կայսրության ծայրամաս համարվող

<sup>1</sup> «Մշակ», հմ. 156, Թիֆլիս, 1882, էջ 2:

<sup>2</sup> Ֆ. 28, ց. 1, գ. 1004, թ. 15 շրջ.:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 18 շրջ.:

<sup>4</sup> Նույն տեղում, գ. 269, թ. 10:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 115 շրջ.

<sup>6</sup> Նույն տեղում, թ. 1 շրջ., 2 շրջ., 30 շրջ.:

<sup>7</sup> Նույն տեղում, թ. 19 շրջ., թ. 20, թ. 22:

<sup>8</sup> Նույն տեղում, թ. 23 շրջ., 24 շրջ., 25 շրջ., 27 շրջ.:

<sup>9</sup> Նույն տեղում, թ. 32, 33, 36, 37 շրջ.:

<sup>10</sup> Նույն տեղում, թ. 34 շրջ., 38 շրջ.:

<sup>11</sup> Նույն տեղում, գ. 1005, թ. 26 շրջ., թ. 27:

<sup>12</sup> Նույն տեղում, թ. 68 շրջ., 70 շրջ., 71-72, 76 շրջ.:

<sup>13</sup> Նույն տեղում, թ. 83-84:

<sup>14</sup> Նույն տեղում, գ. 269, թ. 26 շրջ.:

<sup>15</sup> Նույն տեղում, գ. 1005, թ. 32 շրջ.:

<sup>16</sup> Նույն տեղում, թ. 13 շրջ.:

<sup>17</sup> Ֆ. 319, ց. 1, գ. 175, թ. 8 շրջ., 9, 10 շրջ.:

Արցախը և մասնավորապես Շուշին, անտեսված լինելով պետության կողմից, զարգանալու մեծ հնարավորություններ չունեց, բայց այդ խնդիրն իրենց վրա վերցրին շուշեցի մեծահարուստ առևտրականները, հասարակ քաղաքացիները՝ ամեն ջանք ու եռանդ ներդնելով հայրենի քաղաքի շենացման համար: Այս ամենի արդյունքը այն էր, որ արդեն XX դարի սկզբին Շուշին դարձել էր Անդրկովկասի նշանավոր քաղաքներից մեկը՝ ունենալով սալահատակված փողոցներ, երկհարկանի, եռահարկ շենքեր, գեղեցիկ եկեղեցիներ, կոյուղի և այլն:

### Վրեժ Հարությունյան

## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՈՒՇԻՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ

**Բանալի բառեր՝** բարեգործություն, Շուշի, գրադարան-ընթերցարան, Թադևոս Թամիրյանց

XIX դարի սկզբին Շուշին, միանալով Ռուսական կայսրությանը, ստանում է զարգանալու լայն հնարավորություններ, դառնում համանուն գավառի կենտրոնը, ձեռք բերում քաղաքային ինքնավարություն: Սակայն քաղաքը ուներ սոցիալ-տնտեսական խնդիրներ, որոնց լուծման համար նվիրատվություններ էին կատարում ոչ միայն մեծահարուստ շուշեցիները, այլ նաև հասարակ բնակիչները: Հատկանշական է, որ երիտասարդները նույնպես անմասն չէին մնում այս գործընթացներին՝ կազմակերպելով տարատեսակ միջոցառումներ: Սակայն առավելապես անգնահատելի է Թադևոս Թամիրյանցի գործունեությունը: Փաստորեն հիմնականում բարեգործության շնորհիվ XIX դարի վերջին Շուշին դարձավ Անդրկովկասի ծաղկուն քաղաքներից մեկը:

### Vrezh Harutyunyan

## FROM THE HISTORY OF THE SOCIO-ECONOMIC ACTIVITIES OF CHARITABLE ORGANIZATIONS AND PHILANTHROPISTS IN SHUSHI (19TH CENTURY)

**Key words:** charity, Shushi, library-reading-room, Tadevos Tamiryants

In the beginning of the 19th century, after uniting with Russian Empire, Shushi gets wide opportunities for further development and political self-governmental position. However, the city had socio-economic problems for the solution of which not only wealthy people of Shushi were engaged in charity, but also simple people. It should also be noted that the youth did not stand aside by organizing various events.

However, the activity of Tadevos Tamiryants was especially priceless. In fact, mainly through charity, in the late 19th century Shushi became one of the prosperous cities in the Caucasus.

**Вреж Арутюнян**  
**ИЗ ИСТОРИИ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ**  
**БЛАГОТВОРИТЕЛЬНЫХ ОРГАНИЗАЦИЙ И МЕЦЕНАТОВ**  
**В ШУШИ (XIX ВЕК)**

**Ключевые слова:** *благотворительность, Шуши, библиотека-читальня, Тадевос Тамирянц*

В начале XIX века Шуши, объединившись с Российской империей, получает широкие возможности для дальнейшего развития и становится областным центром, обретя политическое самоуправление.

С учетом социально-экономических проблем города благотворительностью занялись не только богатые шусинцы, но и простые жители. Стоит отметить, что не осталась в стороне и молодежь, организовывая разного рода мероприятия. Особенно хочется отметить неопределимую деятельность Тадевоса Тамирянца.

Благодаря благотворительности, в конце XIX века Шуши стал одним из процветающих городов в Закавказье.

**ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ  
ՇՈՒՐՋ (XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴ)**

**ԱՐՄԱՆ ՄԱՆՈՅԱՆ**

Հայոց պետականության ոսկե շրջան, պատմական հանգամանքների բերումով, թեև հաճախակի թուլացել է, բարակել, սակայն երբեք չի կտրվել: Հայ ժողովրդի կազմավորման օրից պետականության գաղափարը՝ ազգային անկախ, ինքնիշխան պետություն ստեղծելու և զարգացնելու մտայնությունն ու ձգտումը, մշտապես ուղեկցել է հայ ժողովրդին: Մեր պետականության պատմությունն ընթացել է մաքառումների ճանապարհով, ու թեև հաճախակի ունեցել ենք վերելքների դարաշրջաններ, սակայն չենք խուսափել նաև անկումներից ու վրիպումներից: Այո՛, երբեմն կորցրել ենք մեր պետական անկախությունը, ինքնիշխանությունը, ոգու արիությունն ու միասնականությունը, սակայն երբեք չենք կորցրել պետականությունը, որը, զանազան դրսևորումներով (սախարարական համակարգ, իշխանապետություն, մելիքություն և այլն), հարատևել է՝ միասնական համահայկական պետության բացակայության դժնդակ պայմաններում: Այսինքն՝ պետականությունը յուրաքանչյուր ազգի, ժողովրդի, եթևիկ հանրության ինքնակազմակերպման և քաղաքական անկախության անհրաժեշտության գաղափարի գիտակցումն է, իսկ պետությունը՝ այդ գաղափարի իրականացումը: Պետականության զանազան դրսևորումները՝ խյակների կամ մարմնացում-առիակատյաների ձևով հարածուն վառ են պահել պետականության գաղափարը, որպեսզի, նպաստավոր պայմանների առկայության դեպքում, անհապաղ կյանքի կոչենք, միս ու արյուն տանք մեր գիտակցության մեջ և արյան բջիջներում անթեղված ազգային երազանքին՝ անկախ և միացյալ Հայաստանի երկունքին:

1045 թ. Անիի Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայաստանի տարբեր տարածաշրջաններում իրենց գոյությունը շարունակեցին պահպանել մի շարք պետական կազմավորումներ:

Երկարատև ու արյունալի թուրք-պարսկական պատերազմներից հետո, 1639 թ. կնքված Կարսե Շիրիկի պայմանագրով, Օսմանյան կայսրության վարչական սահմանների մեջ ներառվեց Հայաստանի մեծագույն հատվածը, որը հետագայում ստացավ «Արևմտյան Հայաստան» անվանումը:

Սույն հոդվածում, որը նվիրված է հայոց պատմության՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված ժամանակահատվածներից մեկին՝ XVIII վերջին քառորդին, ներկայացրել և լուսաբանել ենք Արևմտյան Հայաստանում հայոց պետականության դրսևորումների առաջացման ու գոյատևման հանգամանքները:

XVII դարում իր հզորության գագաթնակետին հասած Օսմանյան կայսրությունը XVIII դարի երկրորդ կեսին, ըստ էության, շարունակում էր գոյություն ունենալ միայն ձևականորեն: XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին պետության մեջ տեղի էին ունենում նահանգային փաշաների անջատողական, կենտրոնախույս ձեռնարկումներ, անիշխանությունն ու կամայականությունները, ինչպես նաև ավազակությունը հասել էին աննախընթաց չափերի: Որոշ խոշոր ավատատերեր իրենց ձեռքում կենտրոնացրին տվյալ տարածքի ամբողջ իշխանությունը: Նրանք այնքան ինքնագլուխ էին դարձել, որ նույնիսկ սեփական բանակ ստեղծեցին: Բ.Դուռն անկարող էր ճնշել այդ ապստամբությունները և գոհանում էր նրանով, երբ

<sup>1</sup> Տե՛ս: Новичев А.Д., История Турции. Том I. Эпоха феодализма (XI-XVIII века). Ленинград, 1963, с. 241; Миллер А.Ф., Мустафа паша Байрактар. Оттоманская империя в начале XIX века. Москва-Ленинград, 1947, с. 59.

հանում էր այն բանին, որ ապստամբները ճանաչում էին սուլթանի գերիշխանությունը և հարկ էին վճարում: Եգիպտոսում փաստական իշխանությունը պատկանում էր մամլուք բեյերին: Սիրիայում սուլթանի կողմից նշանակված Ակրայի փաշա Ահմեդ Ջեզգարը նույնպես ինքնուրույն դարձավ և իր ձեռքում կենտրոնացրեց մեծ հարստություն և ռազմական ուժ: Բաղդադում իշխում էր ծագումով վրացի Սուլեյման փաշան: Շուտով նա իր իշխանությանը ենթարկեց Միջագետքը և Բաղդադի վալիի պաշտոնը դարձրեց ժառանգական: Շնորհիվ իր ռազմական հզորության, հարստությունների, արքունիքի ճոխության՝ նա մեծարվեց որպես «Սուլեյման Մեծ»<sup>1</sup>: Սուլթանի առջև լուրջ դժվարություններ ծագեցին Արաբիայում, որտեղ տարածվել էր վահաբիների կրոնական աղանդը: Արդեն XVIII դարի վերջին վահաբիների իշխանությունը տարածվում էր Նեջդից մինչև Հալեպ ու Դամասկոս, Հիջազից մինչև Պարսից ծոց: Վահաբիները սպառնում էին Իրաքին, Սիրիային և Հիջազի մահմեդական սուրբ քաղաքներին<sup>2</sup>: Նմանօրինակ իրադրություն էր տիրում նաև Բալկաններում<sup>3</sup>: Հեռավոր Մադրիդում (Ալժիր, Թունիս, Տրիպոլի) սուլթանը միայն անվանապես էր գերագույն տիրակալ ճանաչվում: Անջատողական ձգտումներ ունեին նաև Ռումելիի ավատատերերը: Նրանք երկար ժամանակ պայքարում էին կենտրոնական իշխանության դեմ: Նրանց մեջ իրենց ուժով և ազդեցությամբ առանձնանում էին Սկյուտարի սանջակբեյ Կարա Մահմուդ փաշան, այսինքն Իսմայիլ Թիրսինիկլին, Յըլըկոլլու Սուլեյմանը<sup>4</sup>, Իսմայիլ բեյը և այլք:

Նույնիսկ Փոքր Ասիայում, որտեղ ավատատերերը դեռևս բացեփբաց հանդես էին գալիս Բ.Դռան դեմ, ստեղծվել էին փաստացի անկախ ավատատիրական կազմավորումներ: Կարասոմանոլլուների ավատական տունն իշխում էր Իզմիրի և ամբողջ Փոքր Ասիայի Էգեյան-միջերկրածովյան շրջանում, Հափանոլլուները՝ Անկարայի, Յոզգատի, Չորումի, Ամասիայի շրջաններում<sup>5</sup>, Բատալները՝ Սամսունի և Տրապիզոնի շրջաններում<sup>6</sup>: Փոքր Ասիայի արևելյան և դրան սահմանակից շրջաններում իշխում էին քուրդ ավատատերերը, Արևմտյան Հայաստանի հյուսիսային շրջանները գտնվում էին Էրզրումի փաշայի տիրապետության տակ: Այս ավատատերերը սեփական զորք ունեին, իրենց կողմից թիմարներ և զեամեթներ էին բաժանում. սուլթանական կառավարության նշանակած փաշաները չէին կարող միջամտել նրանց գործողություններին:

Այսպիսով՝ XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա. դա միջնադարյան հետամնաց մի կայսրություն էր, որը հոգեվարք էր ապրում ներպետական հակասություններից, և ռազմաավատական կարգերի քայքայման փուլում գտնվող այդ պետության դժվարին դրությունից օգտվում էին կենտրոնախույս տարրերը, որոնք, կայսրության տարբեր շրջաններում, չընդունելով կենտրոնական իշխանության ներկայացուցչի գերիշխանությունը, ստեղծում էին նոր ինքնավար պետական կազմավորումներ կամ շարունակում էին կառավարել նախկին ինքնազուլիս, կիսանկախ կարգավիճակով: Այսպես, Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում XVIII դարի երկրորդ կեսին գոյություն ունեին քրդական անկախ կամ կիսանկախ իշխանություններ, ինչպես

<sup>1</sup> Адамов А., Ирак Арабский. СПб., 1912, с. 384-385, 387-388; Mantran R., Bagdad à l'époque Ottoman. – "Arabica", Leiden, 1962, p. 315-318, см. так же: Миллер А.Ф., Мустафа паша Байрактар, с. 60.

<sup>2</sup> См.: Адамов А., Ирак Арабский, с. 373, 392-393.

<sup>3</sup> См.: Погодин А.Л., История Болгарии. СПб., 1910, с. 167-169; История Болгарии. Том 1, Москва, 1954, с. 238-240; Миллер А.Ф., Краткая история Турции. Москва, 1948, с. 39. См. так же: Pouqueville F. C. H. L., Mémoire sur la vie et la puissance d'Ali Pacha, visir de Janina. Paris, 1820.

<sup>4</sup> См.: Новичев А.Д., История Турции, т. 1, с. 241; Грачев В.П., Балканские владения Османской империи на рубеже XVIII-XIX вв. Москва, 1990, с. 36-37; ալեյի մակրամասն տե՛ս Uzunçarsılı İ. H., Meşhur Rumeli âyanlarından Tirsinikli İsmail, Yılık oğlu Süleyman ağalar ve Alemdar Mustafa paşa. İstanbul, 1942.

<sup>5</sup> Տե՛ս Երեսեն Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 212:

<sup>6</sup> См.: Миллер А.Ф., Мустафа паша Байрактар, с. 61; Миллер А.Ф., Краткая история Турции, с. 40.



օրինակ Բիթլիսի, Խոշաբի, Ջուլամերիկի, Խիզանի, Սպարկերտի, Մոկսի, Շիրվանի, Չգուի (Խզու), Աթալի, Թերշիլի, Միհրանիի, Խուլվիի, Ճապաղջուրի, Ջերմուկի, Սաղմանի, Բերդակի, Բալուի, Էկիլի, Գենջի Էմիրություններն ու օջաքլըք-հյուբյուլմեթությունները, որոնց նկատմամբ սուլթանի իշխանությունը միայն անվանական էր. դրանք կառավարվում էին առանձին քրդական իշխանապետերի կողմից և նրանց կախվածությունը կենտրոնական կառավարությունից արտահայտվում էր նրանով, որ ամեն տարի սուլթանական զանձարան էին մուծում որոշակի հարկ և պատերազմի դեպքում սանջակբեյերի հրամանատարությամբ մասնակցում պատերազմներին<sup>1</sup>:

Հայկական կիսանկախ իշխանությունները պահպանվել էին հիմնականում լեռնային դժվարամատչելի շրջաններում, որտեղ թուրքական կառավարությունը և քրդական ցեղապետերը չէին կարողացել հաստատել իրենց տիրապետությունը: «Միայն մնացած էին մի քանի լեռներ, - գրում է Ա. Ալպոյաճյանը, - որոնց վրայ հայ մարդիկ զենքի ոյժով կը պահպանեին իրենց ազատութիւնը: Այսպէս, քանի մը լեռնային փոքրիկ գաւառներու մէջ պահուած էին հայկական կիսանկախութիւններ»<sup>2</sup>: XVIII դարի երկրորդ կեսին իրենց գոյությունը պահպանած հայկական այդ կիսանկախ իշխանությունները Սասունում, Սավուրում, Իսյանում, Մոկսում, Շատախում, Ճապաղջրում, Խնուսում, Բաղլուում, Դերսիմում և այլուր<sup>3</sup> ընդգրկում էին ոչ մեծ տարածք և շարունակում էին հարատևել Օսմանյան պետության թուլացման, ազատատենչ ոգու և քուրդ բեկերի ապստամբությունների շնորհիվ: Հի բացառվում նույնիսկ այն հանգամանքը, որ տեղ-տեղ քուրդ բեկերը ձգտում էին օգտագործել հայկական իշխանությունների ռազմական ուժը կառավարության դեմ<sup>4</sup>: Այդ հայկական իշխանություններից ամենագործելն արժվաբուն Սասունն էր, որը թեև վարչականորեն մտնում էր Վանի էյալեթի կազմի մեջ, բայց սասունցիներն «ի սկզբանէ անտի միշտ եղեն ինքնագլուխ, ոչ ումեք ծառայելով. և ոչ ոք ի փաշայից կամ պեյից կարօղ գտաւ զսոսա նուաճել. սակս զօրութեան ուժոյ սոցա, և սակս ամուր վայրացն, յորս ապաստանեալ ոչ ումեք թողուն մուսոս առնել: Ունին իւրեանց մասնաւոր պէյ ինքնագլուխ»<sup>5</sup>:

Հայկական կիսանկախ իշխանություններից էր Ամիդից հարավ, Մարդինի մոտ գտնվող Սավուրը, որի մասին Ղ. Ինճիճյանը գրում է հետևյալը. «Գաւառ ինքնագլուխ և անկախ. բնակիչք Նորա ըստ մեծի մասին յազգէս հայոց, որք են արք հզօրք և սաստիկ պատերազմօղք. իսկ ի քրդաց սակաւք»<sup>6</sup>:

Հայկական կիսանկախ իշխանություն էր Իսյանը կամ Իսբյանը, որի բնակչությունն արդեն ուժացման փուլում էր: Իսյանն էր «գաւառ ինչ ինքնագլուխ ապստամբ ի փաշայէն Տիարպէթիրոյ: ...են ի սմա պէսպէս գիւղօրէք, որոց բնակիչք գրեթէ առհասարակ հայք, այլ սակաւք են որք խօսին հայերէն... Իսկ հասարակ լեզու Նոցա է քրդերէն»<sup>7</sup>: 1782 թ. Դիարբեքիի փաշան ևս երկու այլ փաշաների հետ 4500-հոգանոց զորքով արշավում է Իսյանի վրա, սակայն 8-օրյա մարտերից հետո, 500

<sup>1</sup> Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին, Երևան, 1989, էջ 28, 60:

<sup>2</sup> Ալպոյաճյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950, էջ 85:

<sup>3</sup> Ավելի մանրամասն տե՛ս Բաղայան Գ. Մ., Հայկական կիսանկախ իշխանություններն ու մեղիքությունները Արևմտյան Հայաստանում և Լեռնային Կիլիկիայում (17-րդ դար – 19-րդ դարի 2-րդ կես) – ՎԷՄ համահայկական հանդես, Գ (Թ) տարի, թիվ 3 (35), հուլիս-սեպտեմբեր, 2011, էջ 137-153:

<sup>4</sup> Տե՛ս Չուլպյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., էջ 189:

<sup>5</sup> Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 200:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 230:

<sup>7</sup> Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 243:

գինվոր զոհ տալով, ձեռնունայն վերադառնում է: 1785 թ. ավելի պակաս թվով զորք է ուղարկում, որը չի համարձակվում գրոհել և ետ է դառնում<sup>1</sup>:

1777 թ. Ուզուն Աբդուլլա փաշան 30000-անոց զորքով մտել էր Իսլամի հարևան Միհրանի<sup>2</sup> գավառ՝ նպատակ ունենալով հնազանդեցնել տեղի քուրդ և հայ բնակիչներին. սակայն ապստամբները փակում են սանջակը դրսի աշխարհին կապող ելումուտի միակ ճանապարհը, պաշարում փաշայի զորքն ու գրեթե գլխովին ջախջախում<sup>3</sup>:

Իսլամի և Սավուրի հայ և քուրդ բնակիչները 1782, 1785, 1798 թթ. ջախջախել և հետ են շարտել Դիարբեքիրի փաշայի զորքերին: Թուրքական զորքերին միայն 1849 թ. է հաջողվել հպատակեցնել Իսլամը:

Հայկական կիսանկախ իշխանությունն էր Մոկսը: Նախկինում այն ենթարկվում էր Ջեզիրեի բեյին, իսկ հետո՝ Ջուլամերիկի բեյին. «սակայն միշտ ոմն ի հայոց մելիք և գլխաւոր հրամանատար եղեալ հրամանաւ Ճուլամերիկի պեյին, զամենայն իշխանութիւն ի գործ ածե, բաց ի յարեանհեղութենե»<sup>4</sup>:

Մոկսի նման Ջուլամերիկի գավառի Շատախի վիճակը ևս կիսանկախ էր, «ուր նստի մելիք յազգես հայոց. և ի գործ ածե զամենայն իշխանութիւն և զդատաւորական պաշտօն. զի ոչ թողուն քուրդ պեյից նստիլ աստէն, որպես և ի Մոկս: ...Ունի այս վիճակ բազմութիւն գիւղօրէից ըստ մեծի մասին բնակեալ ի հայոց և ի սակաւուց քրդաց. և են թեմ Աղթամարայ»<sup>5</sup>:

Հայկական կիսանկախ իշխանությունն էր Ճորոխի ավագանում գտնվող Խոտորջուրը, որի մասին Ինճիճյանը գրում է, որ «Բաց ի հայոց օտար ազգ ոչ գտանի ի Խոտորջուր. ո՛չ օսմանեանք, ո՛չ քուրդք, և ո՛չ լազք. միայն ի գարնան ժամանակի ընդ այս ճանապարհորդեն լազք ի գնալն յերգիռում. բայց բնակիչքն ամի ամի տան իբրև 200 կամ 300 ղուռուշ լազ տերեպէյիին՝ որ բռնացեալ է յայն կողմանս»<sup>6</sup>:

Վերոհիշյալ հայկական կիսանկախ իշխանությունների բնակչությունը թուրքական կառավարության՝ այդ կիսանկախ իշխանություններն իրենց ենթարկելու փորձերին դիմակայելու համար ստիպված էր դաշնակցել դրացի բրդական իշխանապետությունների ու աշիրթյանների հետ: Այդ «...մի բանի գաւառներու Հայերը, իբրև քաջ և պատերազմասեր լեռնականներ՝ ազատութիւնը կը պահէին Քիւրտերուն հետ միացած», - գրում է Ա. Ալպոյաճյանը<sup>7</sup>: Քաղաքագետ ու հեռատես որոշ հայ գործիչներ և քուրդ ցեղապետեր հասկանում էին, որ ատելի թուրքական լծից ազատագրվելու միակ ուղին միավորվելն ու համատեղ պայքարելն է:

Այսպիսով, թեև Արևմտյան Հայաստանում Օսմանյան պետությունը հետևողականորեն և մեծագույն նպատակասլացությամբ իրականացնում էր ազգային կազմի բռնի կերպով փոփոխության քաղաքականություն, սակայն նույնիսկ այդ պայմաններում Արևմտյան Հայաստանը XIX դարի սկզբին դեռևս շարունակում

<sup>1</sup> Տե՛ս Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, Ասիոյ. Եւրոպիոյ. Ափրիկոյ. և Ամերիկոյ, Մասն Առաջին, Ասիա, Հատոր Ա., Վենետիկ, 1806, էջ 245:

<sup>2</sup> Միհրանի Դիարբեքիրի սանջակներից էր, բարձրաբերձ լեռներով շրջապատված, որն ուներ ելումուտի միայն մի ճանապարհ: Բնակիչներն էին «քուրդք և հայք ինքնազուլուք և ապստամբ ի փաշայէն»: Տե՛ս Ղ. Ինճիճյան, Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 222-223: XV դ. երկրորդ կեսին Միհրանին կազմել է Չըռըխիկ-Թարջիլի մի մասը (կազա): Ավելի ուշ՝ XVI դ., այն առանձնանալով կազմել էր բրդական զորակազմի ցեղի ճյուղերից մեկի օջաթըրը: Տե՛ս Բաղայան Գ., Տարոնի Ս. Հովհաննեսի (Եղորդուտի) վանքի 1445 թվականի կոնդակը (պատմա-աշխարհագրական ակնարկ), - «Էջմիածին», N Ժ, 1997, էջ 93:

<sup>3</sup> Տե՛ս Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 223:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 161:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 163:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 133:

<sup>7</sup> Ալպոյաճեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, էջ 85:

Եր մնալ գերազանցապես հայաբնակ<sup>1</sup>: Իրենց պատմական հայրենիքի որոշ նպաստավոր շրջաններում հայերը պահպանել էին մի քանի իշխանապետություններ: XVIII դարի երկրորդ կեսին այդ իշխանապետություններից Սասունը, Իսթանուլը, Մոկսը, Շատախը և Խոտորջուրը կիսանկախ էին. վերջինս տարեկան որոշ գումար (200-300 դուրուշ) էր տալիս լազ դերեբեյին: Հայկական իշխանապետություններից Մոկսի և Շատախի իսկական տերերն էին հայ մելիքները, որոնց ձեռքում էր կենտրոնացած ռազմական և վարչական իշխանությունը, դատավարությունը: Կիսանկախ և ինքնավար շրջանների հայությունը գերծ էր մտում բռնաճնշումներից, նրա վրա չէր տարածվում սուլթանական հրովարտակների ազդեցությունը: Քրդահպատակ գավառներում, կիսանկախ ու ֆերմանլը մարզերում հայերը, ասորիները գեղք էին կրում, մասնակցում պարբերական արշավանքներին, հազնվում այնպես, ինչպես ցանկանային: Այստեղ հարգվում էր ուժը, որը և նվաճում էր իրավունք<sup>2</sup>: Բերենք Ղ. Ինճիճյանի վկայությունը Չեյթունի մասին, որը բնորոշ է նաև հայկական կիսանկախ մյուս իշխանություններին. «Բնակիչք նորա առհասարակ հայք... արք կորովիք քաջասիրտք պատերազմօղք ի մանկութենէ, յաջողակ ի զինաշարժութիւնս, և ընտիր այրուճիք: Գոլով այսպէս զօրաւորք զօրութեամբ և տեղեալ, ապստամբ են ի փաշայէն Մարաշոյ. ոչ տան նմա հարկս, ոչ սովորական տուրս, ազանին արգելեալ զգեստս, ինչեցուցանեն համարձակ զանգակս ի յեկեղեցիս, և ինքեանք դատին զամենայն դատաստան իւրեանց նաև զդատաստան արեան...»<sup>3</sup>:

Այսպիսով՝ հայկական կիսանկախ իշխանությունները և ինքնավար համայնքները պահպանվել էին հիմնականում լեռնային դժվարամատչելի շրջաններում, որտեղ թուրքական կառավարությունը և քրդական ցեղապետերը չէին կարողացել հաստատել իրենց տիրապետությունը: Այսօրինակ պետական կազմավորումների առաջացման և զոյատևման գլխավոր նախապայմանը Օսմանյան կայսրության ներքին անկայուն, վատթար իրավիճակն էր: Կենտրոնական իշխանության թուլության և անկարողության պայմաններում կենտրոնախույս ավատատերերի՝ միմյանց և կենտրոնական իշխանության դեմ բախումները կայսրությանը պատճառում էին նյութական մեծ կորուստներ, բացասաբար էին ազդում բանակի մարտունակության վրա, օժանդակում էին դասալքությանը, զցում էին առանց այդ էլ ընկած կենտրոնական իշխանության հեղինակությունը, նպաստում էին պալատական խմբավորումների միջև ծագած գահակալական պայքարի սրմանը, ավելի շիկացնում ներքաղաքական լարված մթնոլորտը: XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունը գտնվում էր զարգացման ցածր մակարդակի վրա. դա միջնադարյան հետամնաց մի կայսրություն էր, որը հոգեվարք էր ապրում ներպետական հակասություններից, և ռազմաավատական կարգերի քայքայման փուլում գտնվող այդ պետության դժվարին դրությունից օգտվում էին կենտրոնախույս տարրերը, որոնք, կայսրության տարբեր շրջաններում, չընդունելով կենտրոնական իշխանության ներկայացուցչի գերիշխանությունը, ստեղծում էին նոր ինքնավար պետական կազմավորումներ կամ շարունակում էին կառավարել նախկին ինքնագլուխ, կիսանկախ կարգավիճակով: Հայկական կիսանկախ իշխանությունների և ինքնավար համայնքների գոյությանը նպաստող պայմաններից էին միատարր բնակչության առկայությունը, ինքնաբավ բնատնտեսական կացութեանը, խոշոր հոգևոր կենտրոնի առակայությունը կամ մերձավորությունը,

<sup>1</sup> Տե՛ս Մելքոնյան Ա., Սուլթանական կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և արևմտահայ ժողովրդագրական տեղաշարժերի միտումները, - Հայկական հարց, Հայկական հարցի միջազգայնացման 120-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2000, էջ 50:

<sup>2</sup> Տե՛ս Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800-1870 թթ., ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967, էջ 136:

<sup>3</sup> Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, Մասն Ա., հ. Ա., էջ 375:

դաշնակից դրացի քրդական իշխանապետությունների ու աշիրեթների առկայությունը: Հայկական կիսանկախ իշխանություններում և ինքնավար համայնքներում գործել են սովորության իրավունքն ու նահապետական օրենքները:

Յետագայում, սակայն, Օսմանյան կայսրությունը վարում էր կենտրոնական իշխանության ուժեղացման քաղաքականություն, ձգտում էր իր ազդեցությունն ու տիրապետությունն իրական դարձնել կայսրության ողջ տարածքում: Ի վերջո՝ Օսմանյան պետական կենտրոնական իշխանության զորեղացման և ամբողջ կայսրության տարածքում լիակատար տիրապետության հաստատման հետևանքով, ինչպես նաև կիսանկախ իշխանությունների և ինքնավար համայնքների համար մի շարք անսպաստ գործոնների առկայության պայմաններում (հաղորդակցության վատ պայմաններ, հատվածականություն և ինքնամեկուսացում, սահմանափակ մարդկային ու նյութական ռեսուրսներ և պաշարներ, հարևան քրդական ցեղերի փոփոխություն կամ հարևան քրդական ցեղերի վերաբերմունքի փոփոխություն, թշնամական օղակ և այլն) հայկական պետականության դրսևորումները՝ կիսանկախ իշխանություններն ու ինքնավար համայնքները, աստիճանաբար թուլացան ու անկում ապրեցին:

### Արման Մալոյան

#### ԱՐԵՎՍՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՇՈՒՐՁ (XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ –XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԶԱՆՈՐԴ)

**Բանալի բառեր՝** Պետականություն, կիսանկախ իշխանություն, ինքնավար համայնք, իշխանապետություն, Սասուն, Իսյան, Սավուր, Մոկս, Շատախ, Խոտորջուր, Արևմտյան Հայաստան, քրդեր, Օսմանյան կայսրություն

Հոդվածը նվիրված է հայոց պատմության՝ համեմատաբար քիչ ուսումնասիրված ժամանակահատվածներից մեկում՝ XVIII վերջին քառորդին, Արևմտյան Հայաստանում հայոց պետականության դրսևորումների առաջացման և գոյատևման հանգամանքների լուսաբանմանը: Հայկական կիսանկախ իշխանությունները և ինքնավար համայնքները պահպանվել էին հիմնականում լեռնային դժվարամատչելի շրջաններում, որտեղ թուրքական կառավարությունը և քրդական ցեղապետերը չէին կարողացել հաստատել իրենց տիրապետությունը: Այդ պետական կազմավորումների գոյությանը նպաստող պայմաններից էին միատարր բնակչության առկայությունը, ինքնաբավ բնատնտեսական կացութաձևը, խոշոր հողեր կենտրոնի առակայությունը կամ մերձավորությունը, դաշնակից դրացի քրդական իշխանապետությունների ու աշիրեթների առկայությունը:

**Arman Maloyan**  
**ON THE CIRCUMSTANCES OF FORMATION AND PERSISTENCE OF  
MANIFESTATIONS OF ARMENIAN STATEHOOD IN WESTERN ARMENIA  
(SECOND HALF XVIII - FIRST QUARTER OF THE XIX CENTURY)**

**Key words:** *statehood; semi-independent government, autonomic community; principedom; Sassoun, Isyan, Savour; Moks, Shatakh; Khotorjur, Western Armenia, Kurds; Ottoman Empire.*

The article attempts to elucidate the circumstances of the formation and persistence of manifestations of Armenian statehood in Western Armenia towards the end of the second half XVIII - first quarter of the XIX century, a period relatively less studied. Armenian semi-independent and autonomic communities endured mainly in mountainous regions, where the Turkish government and Kurdish chieftains had been unable to establish dominance. Among the conditions that contributed to the survival of these state formations were the homogenous population, self-sufficient economy, existence of big spiritual centers as well as of allied Kurdish principedoms and Ashirets.

**Арман Малоян**  
**ОБ ОБСТОЯТЕЛЬСТВАХ ВОЗНИКНОВЕНИЯ И СУЩЕСТВОВАНИЯ  
АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (ВТОРАЯ  
ПОЛОВИНА XVIII – ПЕРВАЯ ЧЕТВЕРТЬ XIX ВЕКА)**

**Ключевые слова:** *государственность, полузависимое княжество, автономная община, княжество, Сасун, Исьян, Савур, Мокс, Шатах, Хоторджур, Западная Армения, курды, Османская империя.*

Статья посвящена истории Армении второй половины XVIII – первой четверти XIX века (сравнительно малоизученного периода). В ней освещены вопросы возникновения и существования армянской государственности в Западной Армении. Полузависимые армянские княжества и автономные общины сохранились в основном в труднодоступных горных районах, где турецкое правительство и вожди курдских племен не могли установить свое господство. Среди способствовавших выживанию этих государственных формаций условий – однородный состав населения, прочный уклад натурального хозяйства, наличие или близость крупного духовного центра, наличие дружески настроенных соседних курдских княжеств и племен.

**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐՈՒՄ****ԼԻԼԻԹ ՄԱԿԱՐՅԱՆ**

Հայ առաքելական եկեղեցին իր գործունեության ողջ ընթացքում հանդիսացել է ազգային արժեքների քարոզման, ազգապահպանության, պետականության ամրապնդման կարևոր հիմնասյուն: Հայոց եկեղեցին մշտապես կանգնած է եղել իր ժողովրդի և պետության կողքին՝ հաճախ պայքար մղելով հայի ինքնության պահպանման համար: Պետականության բացակայության պայմաններում եկեղեցին կատարել է նաև բաղաբանական կառույցի դեր և դարձել համայն հայության միավորիչ գործոն: Առաջին աշխարհամարտի ընթացքում և հատկապես 1918թ. Մայիսյան հերոսամարտերի ժամանակ հայոց եկեղեցին գործուն մասնակցություն ունեցավ ծավալվող գործընթացներում: Հայ հոգևորականությունը գեներ վերցրեց՝ հայրենիքը պաշտպանելու: Մայիսին կերտված պատմությունը մեր բոլորիս հավաքական կենսագրությունն է: Մեր պապերի սիրանքն ու հերոսական անցյալը մեզ դարձրել են ավելի ուժեղ ու միասնական: Հուշագրությունները և սերնդեսերունդ փոխանցված ընտանեկան հիշողություններն են, որ արժեքավոր տեղեկություններ են հաղորդում, լրացնում ու հարստացնում են մեր պատմությունը, բացահայտում հերոսամարտերում մեծ ավանդ ունեցած տեղական գործիչների, այդ թվում՝ հայրենիքի համար մարտնչած հայ հոգևորականության սիրանքը և հերոսական դրվագները:

Հայրենիքի պաշտպանության գործում եկեղեցու մասնակցության մասին են վկայում բազմաթիվ արխիվային փաստաթղթեր, որոնցից է 1917թ. դեկտեմբերի 29-ին Ամենայն հայոց Գևորգ Ե կաթողիկոսին Մայր Աթոռի միաբանական ժողովի կողմից ուղղված զեկուցագիրը, ուր տեղեկացվում է, որ միաբանները որոշել են մեկնել ռազմաճակատ՝ թե՛ հոգևոր և թե՛ զինվորական ծառայություն իրականացնելու և այդ առումով խնդրում էին Վեհափառի թույլտվությունը<sup>1</sup>:

Հայ հոգևորականները ռազմադաշտ էին մեկնում ոչ միայն մարտական ծառայություն կատարելու, այլև Արևմտյան Հայաստանի գավառներում ծվարած հայության սոցիալ-տնտեսական, հոգևոր-կրոնական դրության, հին ձեռագրերի, վանքերի, մշակութային վիճակի մասին տեղեկություններ հավաքելու: Մասնավորապես Գևորգյան ճեմարանի ուսանող Հայկ Աճեմյանը 1918թ. հունվարի 5-ին Գևորգ Ե կաթողիկոսին հասցեագրած դիմումում տեղեկացնում էր Վան-Վասպուրականի գավառներ մեկնելու իր առաքելության մասին և խնդրում Վեհափառի թույլտվությունը և օժանդակությունը<sup>2</sup>:

Հայ հոգևորականներն առանց երկմտելու՝ կամավորագրվում էին, ստանում Վեհափառի թույլտվությունը և մեկնում ռազմադաշտ: Մայր Աթոռի միաբան Արիստակես վարդապետ Չուլոյանը Եղիշե վարդապետ Շահումյանին 1918թ. փետրվարի 7-ին ուղղած նամակում գրում էր. «Մեր տանից յետ դարձայ, մեր կողմերը շատ վատ է, որ մի վստահուղթիս չկա, թե հայ և թե թուրք արագորեն զինուում են, Աստուած վերջը բարին անի, թե ինչ կլինի, չեմ իմանում: Ս. Էջմիածնում և Երևանումն էլ դրութիները մխիթարական չէ... հայկական խմբերի հետ գնում են և վարդապետներ: Կիւրակի օրը գնացել են Կորիւն և Խորէն վարդապետները: Վաղըն

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 491, թ. 79 և շրջ.:

<sup>2</sup> Վավերագրեր, հայ եկեղեցու պատմության, Մայր Աթոռ ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Կազմող՝ Ս. Ա. Բեհրության, Երևան 1999, էջ 13-14:

Էլ գնում են Գիւտ և Ներսէս վարդապետները: Ինձ էլ չեմ իմանում երբ կվիճակուի գնալ, արդէն գրուած եմ...»<sup>1</sup>:

Նույն ժամանակ Վեհափառից ռազմաճակատ մեկնելու թույլտվություն էին խնդրել Գանձակի փոխանորդ Լևոն վարդապետ Պետրյանը և Յովսէփ վարդապետը<sup>2</sup>:

Հայ հոգևորականությունը նույնիսկ ամենածանր օրերին չլքեց իր ժողովրդին: Ալեքսանդրապոլի համար մղվող մարտերի ընթացքում քաղաքից չհեռացավ Ալեքսանդրապոլի փոխանորդ Արտակ վարդապետ Սմբատյանը<sup>3</sup>:

Հայրենիքի ճակատագրով մտահոգ Ամենայն հայոց կաթողիկոսը ռազմաճակատի և թեմերի հայ հոգևորականության, Հայոց ազգային խորհրդի և զինվորականության միջոցով գործուն կերպով տեղեկանում էր իրավիճակին և իր զգոն կեցվածքով և գործողություններով՝ կայունություն ապահովում երկրում: Վեհափառին զեկուցում էին ինչպես ռազմաճակատի դրության, այնպես էլ հաշտության բանակցությունների, դրանց շուրջ հայկական քաղաքական հոսանքների տրամադրությունների մասին: Եպիսկոպոս Գևորգ Չորեքյանը՝ Գևորգ Ե կաթողիկոսին ուղղած զեկուցագրում (1918թ. ապրիլի 4) Վեհափառին տեղեկացնում է Ալեքսանդրապոլում զեներալ Թ. Նազարբեկյանի հետ հանդիպման մանրամասները, որի ընթացքում վերջինս տեղեկացրել էր այդ պահին իր տրամադրության տակ եղած զորքի և դասալբության հետ կապված խնդիրների մասին: Գ. Չորեքյանի կարծիքով նրանց ճակատ վերադարձնելու պարտքը ծանրանում էր հայ հոգևորականության, կանանց և մամուլի վրա<sup>4</sup>: Հայոց կաթողիկոսի հանձնարարականով հոգևորականները մեծ քարոզչական աշխատանք էին կատարում դասալբության դեմ մղվող պայքարում և շատերին վերադարձնում մարտադաշտ:

Գեներալ Մովսես Սիլիկյանը 1918թ. մայիսի 20-ին ներկայանալով կաթողիկոսին՝ առաջարկում է նրան մեկնել կաթողիկոսական ամառանոց<sup>5</sup>: Այս կապակցությամբ Երևանի պարետ Ա. Շահխաթունու հուշերից տեղեկանում ենք, որ Մ. Սիլիկյանը իրեն հեռախոսով հայտնել էր թուրքերի կողմից զինադադարի խզման և հարձակման մասին, հեռագրել էր նաև Արամ Մանուկյանին, որ համոզի կաթողիկոսին թողնի Էջմիածինը և մեկնի ամառանոց: Ա. Շահխաթունին և Արամ Մանուկյանն անմիջապես մեկնում են Ս. Էջմիածին: Վերջինս կաթողիկոսին խնդրում է մեկնել Բյուրական, բայց Գևորգ Ե-ն կտրականապես մերժում է՝ ասելով. «Ուրեմն վիճակը ծանր է: Ո՛չ տղերքս, հայոց կաթողիկոսը նահանջողը չէ»: Վեհափառը կարգադրում է Տիրայր արքեպիսկոպոսին զարկել բոլոր եկեղեցիների զանգերը, որից հետո հոգևորականների հետ մտնում է տաճար, ծնկի իջնում և աղոթում: Վեհափառը դիմում է Երևանից եկած պաշտոնյաներին. «Ասացե՛ք հայ բանակին, թե՛ ես տեղիցս չեմ շարժուում: Ես չեմ թողնում Ս. Էջմիածինը: Եթե մեր զինուորները նրան չեն կարողանում պաշտպանել, և թուրքերը մտնելու են Ս. Էջմիածին, իմ դիակը պիտի գտնեն Ս. Իջման սրբավայրում»:

Գարեգին և Չավեն եպիսկոպոսները խնդրում են Վեհափառի թույլտվությունը՝ հայոց բանակը առաջնորդելու: Վեհափառը դիմելով նրանց՝ Նշում է. «Գևացե՛ք, ասացե՛ք զինուորներին, որ նրանք պատասխանատու են բոլոր հայերի կեանքի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 60, ց. 1, գ. 255, թ. 12 և շրջ:

<sup>2</sup> Ստեփան կերտող, Հայ հոգևորականության մասնակությունը XX դարի պատերազմներին և հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումներին, Երևան 1999, էջ 20:

<sup>3</sup> Ստեփան կերտող, Նշվ. աշխ., էջ 19:

<sup>4</sup> Վավերագրեր, հայ եկեղեցու պատմության, Մայր Աթոռ ս. Էջմիածինը առաջին հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), էջ 21-24:

<sup>5</sup> Թրուշյան Հ., Սարդարապատի հերոսամարտը, Երևան 1965, էջ 139-140:

համար, մենք ոչ ոք չունենք մեր կողքին, բացի Քրիստոսից, որը մեր միակ ուժն է և մեզ օրհնում է»<sup>1</sup>:

Սարդարապատի ճակատամարտի նախօրյակին Գարեգին եպիսկոպոս Յովսեփյանը «Մահապարտներ» անունով մկրտում է 5-րդ հայկական գունդը: Եզնիկ վարդապետ Ներկարարյանը, Թադևոս վարդապետ Յարությունյանը և Յովհաննես վարդապետ Տեր-Միքայելյանը շրջակա գյուղերից հավաքագրած 500 կամավորներով, Գարեգին եպիսկոպոս Յովսեփյանի և Չավեն եպիսկոպոս Մահտեսի-Բաբայանի առաջնորդությամբ գնում էին առջևից<sup>2</sup>:

Չավեն եպիսկոպոսը՝ որպես Էրզրումի հոգևոր առաջնորդ, Երզնկայից մինչև Արարատյան դաշտ հաճախ էր եղել առաջնագծում: Նա հայտնի նշանածիզ էր, աչքի էր ընկել Վանի հերոսամարտում<sup>3</sup>:

Սարդարապատի ճակատամարտին մասնակցեցին նաև գյուղական ծխական հովիվներ՝ իրենց գլխավորած աշխարհագորային ջոկատներով, որոնց թվում էին Կոտայքի Թագա (Նոր Գյուղ) գյուղի քահանա Տեր Չաքար Տեր-Յարությունյանը, Էջմիածնի Գրամփա (Ծիածան) գյուղի ծխատեր Տեր Յովհաննես քահանան, Ջաֆարապատ (Արգավանդ) գյուղի ծխատեր Տեր Սահակ քահանան<sup>4</sup>:

Ինչպես Սարդարապատում, այնպես էլ Բաշ Ապարանում հայ հոգևորականությունն իր մասնակցությունը ունեցավ մղվող մարտերում:

Թուրքերն անարգել մտել էին Յամամլու (Սպիտակ), գրավել շրջակա գյուղերը և շրջվել էին դեպի Ապարան: Սկսվել էին տեղահանվել Ապարանի սահմանային գյուղերը: Ապարանի գավառապետ Սեդրակ Ջալալյանը, Ապարանի գավառի Արագյուղ գյուղի բնակիչ, Երևանի ոստիկանության աշխատակից Արսեն Տեր-Պողոսյանը (Խենթի որդին), հոգևոր թեմի առաջնորդ Տեր Յովհաննես քահանա Տեր-Մինասյանը ստանձնում են ինքնապաշտպանության հրամանատարությունը: Ստեղծվում է պաշտպանության խորհուրդ՝ Տեր Յովհաննես Տեր-Մինասյանի նախագահությամբ<sup>5</sup>: Վերջինս իր ջոկատը զինելուց հետո, ինքն էլ զինված «Մաուզեր» ատրճանակով, սպայական թրով և «Մոսին» հրացանով, ձեռքն է վերցնում խաչը և օրհնում աշխարհագորայիններին: Տեր Յովհաննեսն ավարտել էր զինվորական դպրոց և ուներ ենթասպայի աստիճան: Բաշ Ապարանի հերոսամարտում թուրքերի առաջապահ զորամասերի վրա առաջին զնդակները արձակել են Դանազիրմազի (Լիզավան) ծխատեր Տեր Տաճատ քահանայի և Տեր Յովհաննեսի խմբերը<sup>6</sup>:

1918թ. մայիսի 19-ին Գյուլլուշա (Վարդենիս) գյուղի եկեղեցու շրջակայքում Տեր Յովհաննեսը կազմակերպում է բացօթյա Պատարագ և հայրենասիրական կոչով դիմում հավաքվածներին: Ս. Պատարագից հետո նա կամավորներին առաջնորդել է Լիզավան-Ճահճուտ-Միրաք հատվածը, որտեղ ձևավորվում է ճակատի առաջին գիծը: Տեր Յովհաննեսն անձամբ է ղեկավարել մարտերը Մուլքի-Սարալանջ հատվածում<sup>7</sup>:

Բաշ Ապարանում դիմադրությունը շարունակում էին Տեր Տաճատի կողմից թշնամուց գրոհով վերցրած մեկ գնդացրով, մինչև Սարդարապատից հասնում են կանոնավոր ջոկատները<sup>8</sup>:

Տեր Տաճատը ծառայել էր ռուսական բանակում, ծանոթ էր զինատեսակների և մասամբ տիրապետում էր մարտավարության կանոններին: Նրա՝ ռուսերենով

<sup>1</sup> Արամը մահուան յիսնամեակի առթիւ, Երևան 1991, էջ 508, 515-517:

<sup>2</sup> Ստեփան Կերտող, ԼՂՎ. աշխ., էջ 21:

<sup>3</sup> Թրուշյան Բ., ԼՂՎ. աշխ., էջ 141-143:

<sup>4</sup> Ստեփան Կերտող, ԼՂՎ. աշխ., էջ 21:

<sup>5</sup> Տիգրան Յայազն, Ապարանի հերոսամարտը, Երևան 2005, էջ 6:

<sup>6</sup> Ստեփան Կերտող, ԼՂՎ. աշխ., էջ 24:

<sup>7</sup> Տիգրան Յայազն, ԼՂՎ. աշխ., էջ 17-18:

<sup>8</sup> Ստեփան Կերտող, ԼՂՎ. աշխ. էջ 24:



արձակած հրամանները խուճապ էին առաջացրել թշնամու ճամբարում, և թուրքերը կարծել էին, թե կրվում են ռուսական զորքի դեմ: Բաշ-Ապարանի 64-ամյա քահանա Տեր Ռաֆայելը Ս. Խաչ եկեղեցում կատարում է Սուրբ Պատարագի կարգը, որից հետո շրջանի մարտունակ ամբողջ բնակչությունը դուրս է գալիս թշնամու դեմ: Տեր Ռաֆայելը վիրավորվել էր թուրքերի կողմից: Զանի որ թշնամին Ապարանի վրա հարձակում էր գործել Սպիտակի կողմից, Տեր Տաճատին առաջինը օգնության էին հասել Գյուլյուջա գյուղի ջոկատը՝ քահանա Տեր Յովհաննեսի գլխավորությամբ, Դովրի գյուղի քահանա Տեր Գրիգորի, Փարպի գյուղի քահանա Տեր Գևորգի և եզդիների ջոկատները<sup>1</sup>:

Ղազնաֆար (Արագած) գյուղի ջոկատը ղեկավարում էր Տեր Դանիել քահանա Տեր Դանիելյանը, որի դրոշի ներքո էին համախմբվել Շիրադայա (Վարդենուտ), Բլխեր (Շենավան), Թաթառլու (Ծաղկաշեն) գյուղերի բնակիչները<sup>2</sup>: Դանագիրմազի ջոկատը գլխավորում էր Տեր Տաճատ քահանան, Զուչակի խումբը՝ Տեր Յարություն քահանան<sup>3</sup>:

Ղարաքիլիսայի ճակատում հայ հոգևորականությունը ևս անմասն չմնաց: 1918թ. մայիսի 23-ին Ղարապաս գյուղի ծխատեր Տեր Կոմիտաս քահանա Սարգսյանը, փամփշտակալներով գոտևորված և մինչև ատամները զինված, հնչեցնել է տալիս եկեղեցու զանգերը և, հավաքելով իր ծխականներին և Յաջիղարայի (Լեռնապատ) ու Ղշլարի (այժմ՝ Վանաձորի կազմում) գյուղացիներին, դիմադրություն կազմակերպում: Նույն օրը Ղարաքիլիսայում կայացած մի հավաքում Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, զեներալ Ղամազյանը, գնդապետ Սամարցյանը և Նժդեհը որոշում են դիմադրություն ցույց տալ:

Ղարաքիլիսայի ճակատամարտին հայոց ուժերի մասնակցությունը շատ խիստ քննադատել է ճակատամարտի ականատես, հայ փախստականներին օգնող Արտակարգ հանձնաժողովի նախագահ Մեսրոպ Եպիսկոպոս Տեր-Մովսիսյանը, որը Գևորգ Ե կաթողիկոսին ուղղված իր զեկուցման մեջ նշում է. «Ղարաքիլիսայում իմացանք, որ թուրքերը նույնիսկ մինչև Ղշլար գյուղը չէին հասել, հետևապես շտաբի և հայ զորքի փախուստը իր առեղի հետևանքներով որևիցե հիմք չունեի... Շտաբի մասին մեր ասելիքները, նրա կազմալուծ և անկերպարան վիճակի մասին մեր հանձնաժողովը երևի առիթ կունենա իր ժամանակին մանրամասն զեկուցում տալու լիազոր մարմիններին: Այստեղ հարկ եմ համարում ասելու, որ այդ մարմինը շատ է անհամապատասխան իր դերին, և եթե Տփիսիսի հետ ընդհատված չը լինեին փոստային և այլ հաղորդակցությունները, կարելի կը լիներ յուր ժամանակին հարկավոր փոփոխություն մտցնել և զուցե այսօրվա աղետի առաջ կանգնած չը լինեինք...»<sup>4</sup>:

Բացի հայրենիքի համար մղվող մարտական գործողություններում ունեցած մեծ ներդրումից՝ Յայոց կաթողիկոսի խնամակալության տակ էին նաև հազարավոր զաղթականներ, որք ու անապաստան երեխաներ: Յայոց եկեղեցին հոգևոր սպասավորների միջոցով տեղերում կազմակերպում էր պարենավորման աշխատանքները և բաշխում արտասահմանի հայերից ուղարկված օգնությունը:

Յայ առաքելական եկեղեցին հոգևոր, ազգային և մսայուն արժեք է, որին ծառայելն ու սատարելը պետք է լինի յուրաքանչյուր հայի սրբազան պարտականությունը:

<sup>1</sup> Խաչիկ Մաթևոսի Տեր-Ռաֆայելյան, Տոհմապատում, Երևան 2004թ., էջ 110-112:

<sup>2</sup> Միհրան Յովհաննեսի Մուրադյան, Յայ ժողովրդի ինքնապաշտպանության ճակատամարտերին մասնակցող հոգևորականներ, «Էջմիածին» հանդես, Ս. Էջմիածին 1978, էջ 111:

<sup>3</sup> Տիգրան Յայազն, Նշվ. աշխ., էջ 23, 34, 49:

<sup>4</sup> Ստեփան կերտող, Նշվ. աշխ., էջ 25:

**Լիլիթ Մակարյան**  
**ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐՈՒՄ**

*Բանալի բառեր՝ Հայոց եկեղեցի, հայ հոգևորականություն, թուրքերի ներխուժում, Մայիսյան հերոսամարտեր*

Հայ առաքելական եկեղեցին իր գործունեությամբ մեծ ներդրում է ունեցել հայ ժողովրդի պատմության ընթացքում, հանդիսանում է ազգային արժեքների քարոզման, ազգապահպանության, պետականության ամրապնդման կարևոր հիմնասյուն: Հայ հոգևորականությունը ինչպես միշտ թուրքական արշավանքների ժամանակ ևս անմասն չմնաց և զենքը ձեռքին մասնակցեց հայրենիքի պաշտպանության համար մղվող կռիվներին՝ հատկապես Մայիսյան հերոսամարտերին:

**Lilit Makaryan**  
**THE CONTRIBUTION OF THE ARMENIAN CHURCH IN THE MAY**  
**HEROIC BATTLES IN 1918**

**Keywords:** *Armenian Church, Armenian clergy, Turkish invasion, Heroic battles of May*

The Armenian Apostolic Church through its activities has made a great contribution throughout the history of Armenia, being the main pillar of national values' propaganda, nation's preservation and the reinforcement of statehood. The Armenian clergy, as always during the Turkish campaigns also didn't remain indifferent and took part in the battles for their homeland with arms, especially in the Heroic battles of May.

**Лилит Макарян**  
**ВКЛАД АРМЯНСКОЙ ЦЕРКВИ В ГЕРОИЧЕСКИХ**  
**МАЙСКИХ СРАЖЕНИЯХ 1918Г.**

**Ключевые слова:** *Армянская церковь, армянское духовенство, нашествие турков, героические майские сражения*

Будучи столпом пропаганды национальных ценностей, сохранения нации, укрепления государственности, Армянская апостольская церковь своей деятельностью вносила огромный вклад на протяжении всей истории армянского народа. Армянское духовенство, как и всегда во времена турецких походов, не осталось безучастным и с оружием в руках приняло участие в боях за родину, в особенности в героических майских сражениях.

## ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱՀԻՐԱՎԵՐՆԵՐԻ ԾՈՐԶ (ԵՐՐՈՐԴ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՐՁԱՆ)

### ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

Հայկական քաղաքակրթությանը բնորոշ բաղադրիչներից է հանդիսանում պետականությունը, որն ունի բնորոշիչ առանձնահատկություններ և զարգացման ուրույն ուղի է անցել: Հայկական լեռնաշխարհն իր աշխարհագրական դիրքով պատմության ընթացքում գտնվել է տարածաշրջանային խոշոր ուժերի ուշադրության կենտրոնում, ուստի մեկ անգամ չէ, որ հայկական պետականությունը ենթարկվել է արտաքին հարձակումներին ու մարտահրավերներին, սակայն հայ ժողովուրդը կարողացել է պահպանել պետականաշինության գաղափարները և ձգտումները, որոնց արդյունքն է հանդիսանում արդի հայկական պետականությունը<sup>1</sup>: Ներկայումս՝ երրորդ հանրապետության շրջանում, հայկական պետականության առջև կանգնած մարտահրավերներն առաջարկում ենք խմբավորել երեք ոլորտներով՝

1. սոցիալ-տնտեսական,
2. մշակութային-ինքնության,
3. արտաքին քաղաքական:

Այս մարտահրավերները պայմանավորված են միմյանցով և կարծես մեկ համակարգի տարբեր բաղադրիչներ են ներկայացնում: Փորձենք քննարկել երրորդ հանրապետության շրջանում հայկական պետականության արտաքին քաղաքական որոշ մարտահրավերներ:

Պետականության կերտումը երրորդ հանրապետության շրջանում սկսվում է ԽՍՀՄ-ի փլուզումով, երբ անկախանում են խորհրդային բոլոր հանրապետությունները<sup>2</sup>: 1991 թ. սեպտեմբերի 21-ի հանրաքվեով սկսվում է հայկական երրորդ հանրապետության պատմությունը: Այս նույն ժամանակաշրջանում հայկական նորանկախ պետականությունը ենթարկվում է արտաքին լուրջ մարտահրավերի, այն է՝ արցախյան պատերազմը: Այս պատերազմը, կարծում ենք, կարևոր նշանակություն ունեցավ հայկական պետականության կայացման տեսանկյունից: Արցախյան պատերազմում Ադրբեջանի նկատմամբ տարած հաղթանակն ունեցավ ոչ միայն բարոյահոգեբանական մեծ նշանակություն, այլև դարձավ հայկական պետականության ամրապնդման կարևոր հիմքերից: Ակնհայտ դարձավ, որ արդի զարգացումներում պետականությունն ազգի պահպանման ու զագացման միակ իրական հիմքն է հանդիսանում: Մյուս կողմից, պետականաշինության գործընթաց սկսվեց նաև ազատագրված Արցախում: Հարկավոր է ընդգծել, որ Արցախում հաստատված պետականությունը հանդիսանում է արդի հայկական պետականության մի մաս:

Արցախյան պատերազմը և դրան հետևող արցախյան հիմնախնդրի կարգավորման գործընթացը ցույց տվեցին, որ հայկական պետականության արտաքին մարտահրավերների շարքում կարևոր է ադրբեջանական-թուրքական

<sup>1</sup> Հայկական քաղաքակրթության հայեցակարգային մոտեցումներից է քաղաքակրթական նպատակ հասկացողությունը: Հայկական քաղաքակրթությանը բնորոշ երկու նպատակներն են՝ 1. պետականության ստեղծում և հզորացում, 2. ինքնության պահպանում և հարստացում: Սաֆրաստյան Ռ., Հայկական քաղաքակրթություն. տեսական հարցադրումներ, Հայկական քաղաքակրթության ուսումնասիրման արդի հիմնախնդիրները, գիտաժողովի հիմնադրույթներ, Եր., 2016, էջ 29:

<sup>2</sup> 1991 թ. դեկտեմբերին Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի և Բելառուսի նախագահները Բելովեժյան թավուտում (Բելառուս) հանդիպեցին և համատեղ հայտարարությամբ հռչակեցին ԽՍՀՄ փլուզման և իրենց պետությունների անկախության մասին: Соглашение о создании СНГ ("Беловежское соглашение"). Справка, <http://ria.ru/spravka/20111208/508143773.html> (12.07.2018).

գործոնը: Ընդհանրապես ԽՍՀՄ-ի փլուզումից հետո վերելք ապրեցին նոր համաթյուրքականության գաղափարները, որոնք լայնորեն տարածվեցին նաև Ադրբեջանում և ադրբեջանական կառավարությունը փորձեց դրանք օգտագործել Արցախյան հիմնախնդիրը հօգուտ իրեն լուծելու գործընթացում<sup>1</sup>: Պանթյուրքիստների նպատակն էր միավորել բոլոր թյուրքական ժողովուրդներին և ստեղծել «Մեծ Թուրան» պետությունը, իսկ Հայաստանը բոլոր ժամանակներում խոչընդոտ է հանդիսանում այդ ծրագրերի իրականացման համար: Ներկա փուլում դա արտահայտվում է «թյուրքական միասնության» կամ «թյուրքական աշխարհի» ստեղծման տեսլականով, որը ներկայացվում է քաղաքական, տնտեսական և մշակութային հարթակներում: Ադրբեջանն ունի կարևոր դեր նմանատիպ ծրագրերում, հետևաբար Ադրբեջանին սպառնացող վտանգը սպառնալիք է նաև միասնական «թյուրքական աշխարհի» համար: Ուստի պետք է կանխել Արցախի անջատումն Ադրբեջանից և խանգարել ՀՀ-ի ուժեղացմանը տարածաշրջանում<sup>2</sup>: Սա ցույց է տալիս, որ տարածաշրջանում հայկական պետականության գոյությունն անընդունելի է Ադրբեջանի համար, ինչի մասին վկայում է նաև ադրբեջանական ղեկավարության ռազմատենչ հռետորաբանությունը՝ սպառնալով ոչ միայն Արցախին այլև Հայաստանի Հանրապետությանը:

Երրորդ հանրապետության շրջանում հայկական պետականության համար արտաքին քաղաքական մարտահրավեր է հանդիսանում Թուրքիայի Հանրապետությունը, որն առավել ակնհայտ դարձավ Արցախյան հիմնախնդրի համատեքստում: Արցախյան պատերազմի ընթացքում Թուրքիան մեծապես ռազմական օգնություն, ինչպես նաև դիվանագիտական աջակցություն էր ցույց տալիս Ադրբեջանին<sup>3</sup>: Ինչպես ցույց տվեցին 2016 թ. ապրիլյան իրադարձությունները, մասնավորապես քառօրյա պատերազմը, այս երկիրը հանդիսանում է Ադրբեջանի դաշնակիցն ու աջակիցը ցանկացած հակահայկական գործողություններում: Բացի այդ՝ դեռևս 1992-1993 թթ. Թուրքիան, օգտագործելով հայկական ուժերի կողմից հաջալուի, Շուշիի, Լաչինի միջանցքի, ապա Զարաճառաձի ազատագրման փաստը, դադարեցրեց ՀՀ-ի հետ բոլոր տեսակի հարաբերությունները և փակեց սահմանները: Փաստորեն ՀՀ-ն հայտնվեց թուրք-ադրբեջանական շրջափակման մեջ: Հարկավոր է նշել նաև, որ Թուրքիան սկսած 1990-ական թթ. մինչև այսօր միջազգային ամենատարբեր հարթակներում դիվանագիտական օգնություն ու աջակցություն է ցուցաբերում Ադրբեջանին: Թուրքիան Հայաստանի հետ սահմանի բացումը կապում է առնվազն երեք նախապայմանների հետ<sup>4</sup>:

Հայկական պետականության արտաքին մարտահրավերների շարքում հարկավոր է առանձնացնել նաև տարածաշրջանային զարգացումները, որոնք մեր դիտարկմամբ տեղի են ունենում նոր աշխարհակարգի ձևավորման համատեքստում: Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունեն համաշխարհայնացման գործընթացները, որոնք իրենց հետ բերում են մի շարք ներքին ու արտաքին մարտահրավերներ, այդ թվում ազդելով հայկական

<sup>1</sup> St' u Babayan D., The Artsakh Problem and the Ideology of Pan-Turkism, 21 st Century, № 2 (12), 2012, pp. 103-109.

<sup>2</sup> Ավելի մանրամասն տե՛ս Muzaffer Özdag, Derleyen: Çetin Güney, Türkiye ve Türk Dünyası Jeopolitiği, Ankara, 2003, s. 295.

<sup>3</sup> St' u Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX – начала XXI веков, Ер., 2006, с. 107-135.

<sup>4</sup> Հայաստանը պետք է ճանաչեր 1921 թ. Կարսի պայմանագրով ձևավորված հայ-թուրքական սահմանը, Հայաստանը պետք է հրաժարվեր Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման միջազգային գործընթացից, Հայաստանը պետք է միակողմանի զիջումներ կատարեր Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման գործընթացում և զորքերը դուրս բերեր Ադրբեջանի «զրավյալ տարածքներից»: Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա., Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Եր., 2017, էջ 21:

պետականաշինության գործընթացների վրա: Ընդհանրապես համաշխարհայնացումը ընդգրկում է տնտեսական, քաղաքական, մշակութային և անվտանգության ոլորտները<sup>1</sup>: Այս պարագայում ազգ-պետությունները կորցնում են իրենց գերիշխող նշանակությունը<sup>2</sup>: Համաշխարհայնացումը դիտարկվում է որպես սոցիալ-տեխնոլոգիական և ժողովրդավարացման երրորդ ալիքի հեղափոխության ֆենոմենի բնական արդյունք, ակնհայտ է դառնում, որ այն արտահայտելով հետադիմական աշխարհակարգի տնտեսական, քաղաքական և սոցիալական կառուցվածքի փոփոխությունները պայմանավորում է որակական նոր փոփոխությունների համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Այդու՝ հայկական պետականությունը փորձում է հաղթահարել հենց այս մարտահրավերը՝ ինտեգրվելով և մասը կազմելով ժամանակակից աշխարհին:

Հայկական պետականությանն առնչվող մարտահրավերների շարքում անհրաժեշտ է առանձնացնել Ռուսաստան-Արևմուտք հակամարտությունը: Ռուսաստան-Արևմուտք հակամարտության նոր փուլ սկսվեց Խորհրդային Միության փլուզումից հետո, երբ մասնագետների բնորոշմամբ սկսվեց նոր «Մեծ խաղ»: Մյուս կողմից, հաստատվեց միաբևեռ աշխարհ՝ ԱՄՆ-ի գլխավորությամբ: Ռուսաստանն աստիճանաբար սկսեց կորցնել իր ազդեցությունը Նախկին Խորհրդային տարածաշրջանում, իսկ Ռուսաստանի տեղը փորձում էին զբաղեցնել եվրոպական երկրները, ԱՄՆ-ն, ինչպես նաև տարածաշրջանային որոշ պետություններ, մասնավորապես Թուրքիան: Փաստորեն Ռուսաստան-Արևմուտք հակամարտության ոլորտում ընդգրկվեց նաև Հարավային Կովկասի տարածաշրջանը և դրա մաս կազմող Հայաստանը, ուստի հայկական պետականությանը սպառնացող մարտահրավերներն առաջին հերթին պետք է դիտարկել տարածաշրջանային զարգացումների համապատկերում: Այսպես, Հարավային Կովկասի տարածաշրջանը կարևոր տեղ է գրավում արդի աշխարհաքաղաքական զարգացումներում: Ռուսաստանը 1990-ական թթ. սկզբին հայտարարեց, որ հարավկովկասյան (նաև կենտրոնասիական) տարածաշրջանն ընդգրկված է ռուսական կենսական շահերի ոլորտում, հետևաբար նա ամեն գնով փորձելու է այստեղ պահպանել Նախկին ազդեցությունը<sup>3</sup>: Մյուս կողմից, Արևմուտքն իր հերթին փորձում է այս տարածաշրջանում հասնել ազդեցության: Նման պայմաններում այս տարածաշրջանում Ռուսաստան-Արևմուտք մրցակցությունը կարելի է ներկայացնել երեք հիմնական հարթություններում՝ աշխարհաքաղաքական, նոր աշխարհակարգի կամ բևեռի ստեղծման և ինտեգրացիոն գործընթացների ներկայացմամբ: Ըստ էության այս հակամարտության համատեքստում հայկական պետականությանը ներկայացված մարտահրավերներն առնչվում են վերոնշյալ հարցադրումներին:

Նախ փորձենք քննարկել աշխարհաքաղաքական զարգացումները, երբ այս երկու կողմերը ձգտում են իրենց դերակատարումն ավելացնել ոչ միայն Հարավային Կովկասում, այլև Մերձավոր Արևելքում: Հարավային Կովկասի երկրներից Վրաստանը և Ադրբեջանը շարունակում են ՆԱՏՕ-ին անդամագրվելու քաղաքականությունը: Բացի այդ Վրաստանը շարունակում է եվրոինտեգրման քաղաքականությունը, իսկ Ադրբեջանը օգտագործելով նավթային պաշարները

<sup>1</sup> St' u Held D., McGrew A., The End of the Old Order?, Review of the International Studies, Vol. 24, Issue 5, 1998, pp. 219-245.

<sup>2</sup> St' u Lakić N., Is Globalization Challenge or a Threat to Nation-State as a Dominant Form of Policy?, Western Balkans Security Observer, № 21, 2011, pp. 7-16.

<sup>3</sup> Հարավկովկասյան և կենտրոնասիական տարածաշրջանները Ռուսաստանի համար կենսական նշանակություն ունեն աշխարհաքաղաքական, քաղաքական, տնտեսական, ռազմական և անվտանգության առումներով: Perovic J., From disengagement to active economic competition: Russia's return to the South Caucasus and Central Asia. Demokratizatsiya: The Journal of Post-Soviet Democratization, Vol. 13, Issue 1, 2005, pp. 61-85.

առաջմ կարողանում է Արևմուտքի հետ համաձայնության գալ: Այսպիսի իրավիճակում Ռուսաստանը փորձում է պահպանել իր ազդեցությունը սևծովյան տարածաշրջանի նկատմամբ, մյուս կողմից ԱՄՆ-ն և ՆԱՏՕ-ն ձգտում են մեծացնել իրենց ազդեցությունն այս ռազմավարական տարածաշրջանում<sup>1</sup>: Այս գործընթացները վերաբերվում են նաև Հայաստանին, քանզի սևծովյան տարածաշրջանը Հայաստանի համար ևս ունի կարևոր նշանակություն ինչպես քաղաքական այնպես էլ տնտեսական առումով:

Հարավային Կովկասում աշխարհաքաղաքական փոփոխություններ տեղի ունեցան 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո, երբ Ռուսաստանի հետ մերձեցման քայլեր ձեռնարկեց Թուրքիան<sup>2</sup>: Մասնավորապես Թուրքիայի վարչապետ Ռ. Թ. Էրդողանը 2008 թ. օգոստոսի 12-ին Մոսկվա կատարած այցի ժամանակ առաջարկեց ստեղծել «Կովկասի կայունության և համագործակցության պլատֆորմ»՝ հարավկովկասյան երեք ճանաչված պետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան), ինչպես նաև Ռ-ի և Թուրքիայի մասնակցությամբ<sup>3</sup>: Սակայն նման պլատֆորմի ստեղծումը անհնար է իրագործել Հայաստան-Ադրբեջան և Ռուսաստան-Վրաստան ներկա հարաբերությունների պայմաններում: Այդու աշխարհաքաղաքական փոփոխություններն իրենց ազդեցությունը կտողեն ոչ միայն Հայաստանի քաղաքական ու տնտեսական ոլորտների, այլև հակամարտությունների կարգավորման գործընթացների վրա: Ըստ Էուրոյան վերջինն ավելի կարևոր է հայկական պետականության համար, քանզի խոսքը վերաբերվում է արցախյան հիմնախնդրի կարգավորմանը: Նման իրավիճակում աշխարհաքաղաքական փոփոխությունները հազիվ թե նպաստավոր լինեն Հայաստանի համար, առավել ևս Թուրքիայի և Ադրբեջանի հակահայկական քաղաքականության պայմաններում:

Թերևս Ռուսաստան-Արևմուտք աշխարհաքաղաքական մրցակցության մաս կարող ենք համարել նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացները: Ըստ Էուրոյան նոր աշխարհակարգը ենթադրում է վերաձևափոխումներ կատարել աշխարհի քաղաքական քարտեզում, որը վերաբերվում է ինչպես դե յուրե այնպես էլ դե ֆակտո գոյություն ունեցող պետություններին: Այս խնդիրը հայկական պետականությանն առնչվում է մի քանի առումով՝ առաջին հերթին խոսքը վերաբերվում է Արցախի Հանրապետությանը և նրա միջազգային ճանաչմանը, երկրորդ տեղում է գտնվում հայ-թուրքական սահմանի և Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատման հարցը:

Ռուսաստան-Արևմուտք հակամարտության համատեքստում հայկական պետականությանը ներկայացվող մարտահրավերներից են ինտեգրացիոն գործընթացները: Ինտեգրացիան կարելի է համարել արդի միջազգային հարաբերությունների առանցքային հիմքերից, որն ընթանում է քաղաքական, ռազմական, տնտեսական և գաղափարական-մշակութային ոլորտներում: Ինտեգրացիոն գործընթացներից Հայաստանը չի կարող անմասն մնալ, որն այս առումով գտնվում է ոչ այնքան բարվոք վիճակում: Այսինքն՝ Հայաստանը ինտեգրացման ինչպիսի ուղիով է շարունակելու զարգանալ՝ արևմտյան (Նկատի ունենք եվրոպական համայնքին ինտեգրվելը և արևմտյան ժողովրդավարության արժեքների որդեգրումը), թե՞ ռուսական կողմնորոշմամբ: Այս համատեքստում Հայաստանի համար կարևոր է նաև ԱՄՆ-ի հետ հարաբերությունների հարցը, որը

<sup>1</sup> St'u Öniş Z. and Yılmaz Ş., Turkey and Russia in a shifting global order: cooperation, conflict and asymmetric interdependence in a turbulent region, Third World Quarterly, Vol. 37, Issue 1, 1998, p. 13.

<sup>2</sup> St'ն Թորոյան Տ., Արշակյան Գ., Աշխարհաքաղաքական մրցակցությունը Հարավային Կովկասում. Ռուս-թուրքական մրցակցություն, թե՞ համագործակցություն, Հայկական քաղաքագիտական հանդես, 1 (15), 2016, էջ 10-14:

<sup>3</sup> St'u Çelikpala M., Türkiye ve Kafkasya: Reaksiyoner Dış Politikadan Proaktif Ritmik Diplomasiye Geçiş, Uluslararası İlişkiler, Cilt 7, Sayı 25, 2010, s. 93-126.

հանդիսանում է Արևմտյան աշխարհի հիմնական բևեռը: Ռուսաստանի և ԱՄՆ-ի միջև Հայաստանը վարում է «մանևրելու» քաղաքականություն՝ «ձգտելով հավասարակշռել հզոր ռուսական ներկայությունն այլ գործընկերների հետ հարաբերությունները զարգացնելով»<sup>1</sup>: Այսպես՝ թեև Հայաստանը սկսել էր արևմտյան համակարգին ինտեգրվելու գործընթացը, սակայն 2013 թ. Հայաստանի նախագահ Ս. Սարգսյանը հայտարարեց Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու մասին և 2014 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրեց ԵԱՏՄ պայմանագրին միանալու պայմանագիրը<sup>2</sup>: Հայկական պետականության համար կարևոր մարտահրավեր է ռազմական ինտեգրացիայի ինդիքը: Ռուսաստանը և ԱՄՆ-ն հանդիսանում են երկու տարբեր ռազմական ինտեգրացիոն համակարգերի ներկայացուցիչներ: Դեռևս խորհրդային շրջանից Հայաստանում տեղակայված են ռուսական ռազմաբազաներ<sup>3</sup>, որոնք հանդիսանում են Հայաստանի անվտանգության համակարգի մասը: Մյուս կողմից, թեև ՆԱՏՕ-ի գործունեությանը հետխորհրդային տարածաշրջանում և որոշ ծրագրերին Հայաստանի մասնակցությանը, մեր երկիրը շարունակում է ռազմական համագործակցությունը ռուսական կողմի հետ և հանդիսանում է տարածաշրջանում Ռուսաստանի հիմնական ռազմավարական դաշնակիցը: Հայաստանը հանդիսանում է Հավաքական անվտանգության մասին պայմանագրի անդամ, որը ստորագրվել է 1992 թ. մայիսի 15-ին Հայաստանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի, Տաջիկստանի և Ուզբեկստանի ղեկավարների կողմից<sup>4</sup>: Փաստորեն Հայաստանը ՌԴ-ից կախվածություն ունի ռազմավարական անվտանգության բնագավառում, իսկ ԱՄՆ-ից՝ տնտեսական, հետևաբար այս երկու երկրների հակամարտության համապատկերում Հայաստանի առջև կանգնած են լուրջ մարտահրավերներ:

Այսպիսով, երրորդ հանրապետության շրջանում հայկական պետականության առջև ծառայել են մի շարք արտաքին քաղաքական մարտահրավերներ: Այդ մարտահրավերների շարքում առաջնային ենք համարում թուրք-ադրբեջանական վտանգը: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև Նոր համաթյուրքականության ծրագրերը, հանձինս «թյուրքական աշխարհի» ստեղծման տեսլականի, որոնց ցանկացած դրսևորում ուղղակիորեն վերաբերվում է հայկական պետականության գոյությանը: Մյուս կողմից, պակաս կարևոր չեն նաև տարածաշրջանային զարգացումները: Այդ զարգացումները վերաբերվում են ինչպես հարավկովկասյան, այնպես էլ մերձավորարևելյան տարածաշրջաններին, մասնավորապես ուշադրության են արժանի տարբեր պետությունների ու ռազմաքաղաքական կառույցների ազդեցության հասնելու ձգտումները:

Աշխարհաքաղաքական զարգացումների համապատկերում հայկական պետականության համար լուրջ մարտահրավեր է հանդիսանում Ռուսաստան-Արևմուտք հակամարտությունը: Հայաստանը փորձում է համագործակցության ընդհանուր սկզբունքներ մշակել երկու կողմերի հետ, սակայն մեր պետության նման փոքր և սահմանափակ ռեսուրսներ ունեցող երկիրը հազիվ թե կարողանա դիմակայել կողմերի ճնշումներին: Մեր պետականությունն այս հակամարտության համապատկերում կարծես թե գտնվում է սահմանային իրավիճակում, քանզի անվտանգության ոլորտում հարկավոր է Ռուսաստանի աջակցությունը, բացի այդ միայն վերջինս է կարողանում տարածաշրջանում զսպել Թուրքիայի ձգտումները:

<sup>1</sup> Տե՛ս Craig R. Nation, Russian, the United States and the Caucasus, 2007, p. 21.

<sup>2</sup> Եվրասիական տնտեսական միություն, <https://www.mfa.am/hy/international-organisations/6> Տե՛ս Գրիգորյան Կ., ԵԱՏՄ-ին ՀՀ ինտեգրման մի շարք հիմնահարցեր, «21-րդ դար», թիվ 4 (68), 2016, էջ 83-89:

<sup>3</sup> Տե՛ս Kardas J., South Caucasus in the foreign policy of the Russian Federation: do doctrinal assumptions translate into reality? Przegląd Strategiczny, No. 9, 2016, p. 111.

<sup>4</sup> Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպություն, <https://www.mfa.am/hy/international-organisations/1>

Մյուս կողմից, արևմտյան ժողովրդավարության արժեքները և տնտեսական համագործակցության հեռանկարները որքան էլ խոստումնալից լինեն, Արևմուտքը շարունակում է համագործակցությունը թյուրքական աշխարհի, մասնավորապես Թուրքիայի հետ: Ուստի նման պայմաններում Հայաստանը հազիվ թե կարողանա դիմակայել մարտահրավերներին և պահպանել իր պետականությունը: Մեր կարծիքով Հայաստանի համար ավելի նպաստավոր պայմաններ կստեղծվեն, եթե ԱՄՆ-ի ու Ռուսաստանի իշխանությունները տարածաշրջանային խնդիրների վերաբերյալ հասնեն փոխհամաձայնության և համագործակցության: Բացի այդ Ռուսաստան-Արևմուտք հակամարտությանը դիմակայելու համար կարևոր կլինի երրորդ ուժի հետ համագործակցությունը, ինչպիսին կարող է հանդիսանալ Չինաստանը: Վերոնշյալ բոլոր գործընթացները տեղի են ունենում արդի համաշխարհայնացման համատեքստում, ինչն իր հերթին մեծապես վտանգում է ազգային պետականությունների գոյությանը: Ամփոփելով, կարծում ենք, հայ ժողովրդի գոյությունը և հայրենիքում ապրելու ձգտումը պետք է ուղղակիորեն կապել հայկական պետականության կայացման ու հզորացման հետ:

### Նելլի Մինասյան

#### ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՄԱՐՏԱԳՐԱՎԵՐՆԵՐԻ ՇՈՒՐՁ (ԵՐՐՈՐԴ ԳԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ)

*Բանալի բառեր՝ պետականություն, հայկական քաղաքակրթություն, քաղաքական մարտահրավեր, թուրք-ադրբեջանական շրջափակում, համաշխարհայնացում*

Հոդվածում քննարկվում են հայկական պետականության ամրապնդման հետ կապված արտաքին քաղաքական որոշ մարտահրավերներ: Հայկական պետականության համար առաջնային մարտահրավերներից են թուրք-ադրբեջանական համագործակցությունը և հակահայկական ծրագրերը: Այս համատեքստում ուշադրության են արժանի նեոպանթուրքիստական գաղափարները և թյուրքական աշխարհի ձևավորման տեսլականը: Տարածաշրջանային զարգացումները ևս մարտահրավեր են հայկական պետականության համար, որոնք տեղի են ունենում նոր աշխարհակարգի ձևավորման և համաշխարհայնացման գործընթացների համատեքստում: Արտաքին քաղաքական մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է ամրապնդել ու հզորացնել հայկական պետականությունը, որի հիմքում պետք է դրվի հայկական քաղաքակրթությունն ու ինքնությունը:

### Nelli Minasyan

#### ABOUT FOREIGN POLITICAL CHALLENGES OF ARMENIAN STATEHOOD (PERIOD OF THE THIRD REPUBLIC)

**Keywords:** *statehood, Armenian civilization, political challenge, Turkish-Azerbaijani blockade, globalization*

The article discusses some problems of strengthening the Armenian statehood related to foreign policy challenges. Turkish-Azerbaijani cooperation and anti-Armenian programs are one of the primary challenges for the Armenian statehood. The neo pan-Turkism ideas and



the vision of the creation of the Turkic World are more important issues in this context. The regional developments happening in the context of processes of the formation of a new world order and globalization also are challenges for Armenian statehood. It is necessary to strengthen the Armenian statehood for the confrontation of foreign political challenges which should be based on the Armenian civilization and identity.

**Нелли Минасян**  
**О ВНЕШНЕПОЛИТИЧЕСКИХ ПРОБЛЕМАХ АРМЯНСКОЙ**  
**ГОСУДАРСТВЕННОСТИ (ПЕРИОД ТРЕТЬЕЙ РЕСПУБЛИКИ)**

**Ключевые слова:** *государственность, армянская цивилизация, политические вызовы, турецко-азербайджанская блокада, глобализация*

В статье обсуждаются некоторые проблемы укрепления армянской государственности, связанные с внешнеполитическими вызовами. Для армянской государственности первичными вызовами являются турецко-азербайджанское сотрудничество и антиармянские программы. В данном контексте достойны внимания пантюркистские идеи и видение образования тюркского мира. Региональные развития событий, которые происходят в рамках образования нового мирового порядка и глобализации, также являются проблемой для армянской государственности. Для возможности сопротивления внешнеполитическим проблемам необходимо укреплять и усиливать армянскую государственность, в основу которой нужно ставить армянскую цивилизацию и идентификацию.

**ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՐԱՓԱՌԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ (1988-1991ԹԹ.)****ԼԻԼԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ**

Երանաշնորհի Վազգեն Ա հայրապետը հայոց պատմության այն նվիրական դեմքերից է, ով սրբի համբավ ձեռք բերեց տակավին երկրային կյանքում, դարձավ կենդանի լեգենդ և խորհրդանիշ, Աստու անձանձիր պատգամախոս ու մշտավառ փարոս: Հայ ժողովրդի մեծագույն հովվապետների՝ Գրիգոր Լուսավորչի և Ներսես Մեծի, Սահակ Պարթևի, Հովհան Օձնեցու, Ներսես Աշտարակեցու ու Խրիմյան Հայրիկի և այլոց գահը ժառանգած արժանավոր հայորդին՝ 130-րդ հոգելույսներից, շուրջ 40-ամյա գահակալության ընթացքում (1955-1994) խիզախորեն ընդունեց «անհավատ ու աստվածամերժ ժամանակների» նետած նենգ մարտահրավերները, իր ժողովրդին գորովագուրթ հոր պես վերստին առաջնորդեց դեպի ճշմարիտ հավատ, դեպի լույս եզերքներ ու միասնություն և խորապես նպաստեց հայության առջև ծառայած բախտորոշ ծրագրերի իրականացմանը: Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի շուրջ 40-ամյա գահակալության ժամանակաշրջանն աննախադեպ հարուստ եղավ ներազգային և միջազգային հարաշարժ իրադարձություններով, որոնք իրենց անմիջական անդրադարձն ունեցան Մայր աթոռի ու նրա գահակալի գործունեության վրա:

Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսն իր անգնահատելի ներդրումն է ունեցել թե՛ Արցախյան շարժման, թե՛ ազատամարտի և թե՛ Հայաստանի անկախության վերականգնման գործում: Դեռևս 1988 թ. փետրվարի 25-ին ևս Արցախը Սովետական Հայաստանին վերամիավորելու հարցով դիմել էր ԽՍՀՄ Նախագահ Միխայիլ Գորբոչովին<sup>1</sup>: Նամակում խնդիր էր դրված Արցախը Ադրբեջանի կազմից դուրս գալու վերաբերյալ: Բացի վերոնշյալ նամակից ևս նույն խնդրով դիմել էր նաև Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Պիմենին՝ ակնկալելով խնդրի լուծում<sup>2</sup>: Իր ժողովրդի արդարացի պահանջները խորհրդային ղեկավարներին հասցնելու նպատակով Մոսկվայում նույն թվականի սեպտեմբերին ևս դիմեց հացադուլի՝ ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, հրապարակագիր Չորի Բալայանի և այլոց հետ:

1988 թ. նոյեմբերի 26-ին Ամենայն հայոց հայրապետը նորից է դիմում ԽՍՀՄ Նախագահ Միխայիլ Գորբոչովին Կիրովաբադի՝ շուրջ քառասուն հազար հայերին ադրբեջանական իշխանությունների սպառնալիքից փրկելու հարցով<sup>3</sup>: Այս անգամ ևս նա օգնություն էր ակնկալում Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Պիմենից, որպեսզի չկրկնվեր Սումգաիթում ամիսներ առաջ իրականացված հայերի եղեռնը<sup>4</sup>:

1989 թ., երբ Լեռնային Ղարաբադի շուրջ ծավալված հակամարտությունը հասել էր գագաթնակետին, իսկ Մ. Գորբոչովի վարչակարգն օժանդակում էր թշնամիներին, Վազգեն կաթողիկոսը հայրապետական կոնդակով վավերացրեց և վերահաստատեց Արցախի թեմը, որը ադրբեջանական իշխանությունների ճնշումներով լուծարվել էր 1933 թվականին: Կաթողիկոսը թեմի առաջնորդ նշանակեց Պարզև Եպս. Մարտիրոսյանին, որի եռանդուն գործունեությամբ թեմը վերագարթնեց<sup>5</sup>: Պետք է արժևորել այդ իրադարձության իրական նշանակությունն

<sup>1</sup> Տե՛ս Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Մայր Աթոռ սբ. Էջմիածնի տպարան, Էջմիածին, 2008, էջ 7:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, Գործ N 444, փետրվարի 26, 1988::

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղում, Գործ N 444, նոյեմբերի 26 1988 (ԽՍՀՄ Նախագահ Միխայիլ Գորբոչովին):

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում, Գործ N 444, նոյեմբերի 26 1988 թ. (Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Պիմենին):

<sup>5</sup> Առաջնորդակիսող Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցին է: Թեմն ընդգրկում է ԼՂՀ տարածքը և ազատագրվածարակից հայկական պատմական շրջանները:

արցախյան գոյամարտում: Վազգեն Ա-ն իր բողոքի ձայնը բարձրացրեց նաև, երբ Արդրեշանի հայատյաց իշխանությունները փորձեցին վերստին փակել Արցախում վերաբացված Գանձասարի և Ամարասի պատմական վանքերը:

Արցախի սատարելու նպատակով հայոց եկեղեցին Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ եռանդուն գործունեություն է ծավալում արտերկրում, դիմում է միջազգային հեղինակավոր կրոնական կազմակերպություններին՝ եկեղեցիների համաշխարհային խորհրդին, Եվրոպայի եկեղեցիների կոնֆերանսին, տարբեր պետությունների ղեկավարներին՝ խնդրելով տնտեսական աջակցություն ցույցաբերել շրջափակման մեջ գտնվող Լեռնային Ղարաբաղին ու Հայաստանին<sup>1</sup>: Չնայած բարդ ու լարված իրավիճակին՝ հանրապետության նորընտիր իշխանությունների հետ միասին հայոց եկեղեցին, ի դեմս Ամենայն հայոց Վեհափառի, իր մասնակցությունը բերեց պետական-հասարակական կարգը բարեփոխելու քաղաքականությանը:

Վազգեն Ա-ն մի առանձին ջերմությամբ օրհնեց Հայաստանի անկախության վերականգնումը 1991թ. սեպտեմբերի 21-ին, ինչպես նաև Արցախյան ազատամարտի հայ զորականներին:

Իր գահակալության վերջին տարիներին ազգի հոգևոր կարիքները բավարարելու համար՝ Վազգեն Ա-ն անցավ հոգևորականների պատրաստման անհետաձգելի գործին: Կարծես, երկրորդ ծնունդ ապրեց Հոգևոր ճեմարանը, Վազգեն Ա-ի օրհնությամբ և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արք. Ներսիսյանի (հետագայում՝ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոս) նախաձեռնությամբ Սևակի թերակղզում 1990 թ. բացվեց հոգևոր դպրանոց, որը Վազգեն Ա-ի վախճանից հետո՝ 1994 թ., ի պատիվ նրա՝ անվանվեց Վազգենյան Հոգևոր Դպրանոց<sup>2</sup>: Վազգենյան դպրանոցը մինչ օրս իր հիմնադրի օրհնությամբ իրականացնում է նորանոր արժանավոր հոգևորականների պատրաստության իր ծրագիրը: Հանրապետությունում հայ եկեղեցու ծառայությունն ավելի լավ կազմակերպելու համար նրա տնօրինությամբ Արարատյան հայրապետական և Շիրակի թեմերի կողքին հանրապետության տարածքում ստեղծվեցին Սյունիքի և Գուգարքի թեմերը:

Իր 40-ամյա գահակալության տարիներին Վազգեն Ա-ն կատարել է մյուռնօրհներթի վեց արարողություն<sup>3</sup>, որոնք ազգային-եկեղեցական տոնախմբությունների, մայր հայրենիքի շուրջ աշխարհասփյուռ հայության համախմբման կարևոր իրադարձությունների էին վերածվել: Վազգեն Ա կաթողիկոսն իր կյանքի մայրամուտին կատարեց վերջին՝ վեցերորդ մյուռնօրհներթը, Հայաստանի անկախության հռչակումից հաշված օրեր անց՝ 1991 թվականի սեպտեմբերի 29-ին, և դա անվանվեց Անկախության մյուռնոն՝ հաստատ հավատալով, որ մյուռնոնի նման հայոց անկախ պետականությունը նույնպես կլինի հարատև: «Անկախության մյուռնոնով» նա օծել է Մայր տաճարի ավագ խորանի

<sup>1</sup> Տե՛ս Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի արխիվ, Գործ N 346, 13 դեկտեմբերի 1988, Գործ N 346, 9 դեկտեմբեր 1988:

<sup>2</sup> Վազգենյան դպրանոցը գիշերօթիկ հնգամյա ուսումնական հոգևոր հաստատություն է, որի շրջանավարտները, ևս մեկ տարի ուսանելով Մայր Աթոռ ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանում, անցնում են եկեղեցական լիարժեք սպասավորության: Դպրանոց կարող են ընդունվել միջնակարգ կրթությամբ երիտասարդները՝ հանձնելով ընդունելության քննությունները: Ստուգվում են նաև դիմորդների երաժշտական ընդունակությունները:

<sup>3</sup> 1926 թ. Մյուռնօրհնություն էր կատարել Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսը: Զսանութ տարի անց՝ 1954 թ. ապրիլի 21-ին, իր կոնդակով Գևորգ Զ Որբեջյան կաթողիկոսը պատրաստվում էր վերստին կատարելու մյուռնօրհներթ, սակայն վերահաս մահվան պատճառով չհասցրեց: Զսանկը տարվա ընդմիջումից հետո այն վիճակված էր իրագործելու Վազգեն Ա-ին՝ 1955-ի հոկտեմբերի 8-ին:

«Տիրամայրը մանկան հետ» պատկերը՝ այն անվանելով Անկախության Տիրամայր<sup>1</sup>: Սրբազան արարողության ժամանակ Վեհափառ Հայրապետը պատգամել է. «Հայրեր, հոգևոր զավակներ՝ Մեր. այս սրբազան մյուռնով միացե՛ք, երբայրացե՛ք, եղե՛ք մե՛կ կամք, եղե՛ք մե՛կ ուրախություն, եղե՛ք մե՛կ ցավ: Եղե՛ք մե՛կ ազգ, մե՛կ ընտանիք, մե՛կ ժառանգած երդում և հավատացե՛ք մեր այս մի բուռ հայրենի հողին ու նրա գալիքին՝ սուրբգրային Արարատի հայացքի տակ, սուրբ Էջմիածնի օրհնության ներքո»<sup>2</sup>:

Իր ազգային-եկեղեցական և հասարակական նվիրյալ գործունեության համար Վազգեն Ա-ն ընտրվել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ (1991թ. ապրիլի 30): Այդ փաստը հավաստող վկայագիրը կաթողիկոսին հանձնվել է նույն թվականի հուլիսի 21-ին<sup>3</sup>:

Հայաստանի անկախության հանրաքվեի վավերագիրը կնքվել է նրա կողմից, որով իրենց առաքելությունն ստանձնեցին ՀՀ առաջին նախագահը և խորհրդարանը: Այսպես, հայրենիքին ու ազգին իր անզին և ամբողջական նվիրումի համար Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսը պատմության մեջ եղավ առաջին անհատը, որն արժանացավ «Հայաստանի ազգային հերոս» բարձրագույն կոչման և «Հայրենիք» պետական բարձրագույն շքանշանին (1994թ. հուլիսի 29), որոնք 1994 թ. ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանն անձամբ հանձնեց ծերունագարդ հայրապետին՝ նրա աչքը համբուրելով<sup>4</sup>:

Վազգեն Ա Ամենայն հայոց կաթողիկոսը վախճանվեց 1994 թ. օգոստոսի 18-ին՝ Էջմիածնում:

Վազգեն Ա Պալճյան Ամենայն հայոց կաթողիկոսի գահակալությամբ մի նոր, մնայուն էջ բացվեց մեր եկեղեցու դարավոր պատմության մեջ: Վեհափառն իր հայրենաշեն գործունեությամբ և հայրենասիրական զգացումներով դարձավ համազգային հեղինակություն՝ վայելելով բոլորի անխառն սերն ու համակրանքը:

## **Լիլիթ Պողոսյան ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՅԱՓՈԱԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՅՈՒՄԸ**

### **Բանալի բառեր՝ կաթողիկոս, պետականություն, անկախություն, խաղաղություն**

Հոդվածը նվիրված է Վազգեն Ա Պալճյան Ամենայն հայոց կաթողիկոսի գործունեությանը և Հայաստանի անկախացմանը: Հայ ժողովրդի մեծագույն հովվապետների՝ Գրիգոր Լուսավորչի, Ներսես Մեծի, Սահակ Պարթևի, Հովհան Օձնեցու, Ներսես Աշտարակեցու, Խրիմյան Հայրիկի և այլոց գահը ժառանգած արժանավոր 130-րդ հայրորդին՝ խիզախորեն ընդունեց «անհավատ ու աստվածամերժ ժամանակների» նետած նենգ մարտահրավերները, իր ժողովրդին

<sup>1</sup> Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, էջ 8-9:

<sup>2</sup> Վազգեն Ա, Երկերի ժողովածու, Զարոգներ և խոսքեր, հատոր Բ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2017, էջ 323:

<sup>3</sup> Էջմիածին, 1994, սեպտեմբեր-հոկտեմբեր, էջ 111:

<sup>4</sup> 28 հուլիսի 1994 թ. ՀՀ Կառավարության որոշումը Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին «Հայաստանի ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում շնորհելու միջնորդություն հարուցելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է: Հաշվի առնելով ազգային և հոգևոր արժեքների պահպանության ու զարգացման գործում Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինի դրսևորած անձնուրաց նվիրումը և մատուցած բացառիկ ծառայությունները, միջնորդել Հայաստանի Հանրապետության նախագահին Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Առաջինին «Հայաստանի Ազգային հերոս» Հայաստանի Հանրապետության բարձրագույն կոչում շնորհելու համար: ՀՀ վարչապետ Հ. Բազրադյան, ՀՀ կառավարության գործերի կառավարիչ Ա. Խաչատրյան: ՀՄԱ, Ֆ. 113, ց. 171, գ. 334, թ. 1: Մեքենագիր:

վերստին առաջնորդեց դեպի ճշմարիտ լույս՝ խորապես նպաստելով հայության առջև ծառայած բախտորոշ խնդիրների լուծմանը: Քանի որ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա գահակալության ժամանակաշրջանն անսխադեպ հարուստ եղավ ներազգային և միջազգային հարաշարժ իրադարձություններով, որոնք իրենց անմիջական անդրադարձն ունեցան Մայր աթոռի ու նրա գահակալի գործունեության վրա, ապա զանց չեն առնվել նաև համապատասխան անցուդարձերի վերլուծություններն ու գնահատումները:

**Lilit Poghosyan**

## **HIS HOLINESS VAZGEN I AND ARMENIAN'S INDEPENDENCE**

**Key words:** *Catholicos, statehood, independence, peace*

The topic of the article is dedicated to the life and activity of Vazgen I Palchyan, the 130th Catholicos of All Armenians and the independence of Armenia. The deserved Armenian Vazgen Palchyan inherited the throne of the Pontiffs such as St. Gregory the Illuminator and Nerses the Great, Sahak Partev, Hovhan Odzetsi, Nerses Ashtaraketsi, Mkrtich Khrimyan (Khrimyan Hayrik) and others. He bravely accepted the insidious challenges of "unbelieving and irreligious times" existing during that period. He led his nation to the true belief like a merciful father and also contributed to the realization of the fatal program arisen. As the period of the enthronement of Catholicos of All Armenians Vazgen I was rich in national and international events effecting the activity of the Cathedral and also the Catholicos, the events mentioned were also analysed.

**Лилит Погосян**

## **ЕГО СВЯТЕЙШЕСТВО ВАЗГЕН I И НЕЗАВИСИМОСТЬ АРМЕНИИ**

**Ключевые слова:** *Католикос, государственность, независимость, мир*

Статья посвящается деятельности Католикоса Всех Армян Вазгена I Палчяна и независимости Армении. Блаженной памяти достойнейший армянин, 130-ый из тех, кто унаследовал престол величайших пастырей армянского народа: Григора Лусаворича (Просветителя) и Нерсеса Великого, Саака Партева, Ована Одзнеци, Нерсеса Аштаракеци, Хримяна Айрика и других, отважно принял коварный вызов, брошенный временем безверия и безбожия, и, подобно сердобольному отцу, вновь повел свой народ к истинной вере, к обители света и единению, в значительной мере способствуя осуществлению судьбоносных программ армянского народа. Поскольку период пребывания на престоле Верховного Патриарха и Католикоса Всех Армян Вазгена I-го был отмечен беспрецедентным количеством внутринациональных и международных событий, оставивших непосредственное воздействие на деятельность Первопрестола и главы церкви, были проанализированы также указанные события.

**ԵՐԿԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՄՈՆԻԶՄԸ  
XX ԴԱՐԱՍԿԻ ԳՆԱԿԱՅԻՆ ԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԳՐԱԿԵՐՆԵՐԻ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ՍՈՖՅԱ ՕՂԱՆՅԱՆ**

Հայոց պատմության մեջ XX դարասկիզբը բարդ ժամանակաշրջան էր և՛ քաղաքական, և՛ մշակութային առումով: Այդ շրջանում հայ ժողովուրդն ապրել է համաշխարհային պատերազմի ու սոցիալիստական հեղափոխության, ցեղասպանության ու տեղահանության սարսափները, պետականության վերակերտման ուրախությունը, ենթարկվել է խորհրդային «ապագային» վարչակարգին, որն էլ վերջնականապես որոշել է մշակույթի զարգացման ուղղվածության միակողմանիությունը: Սակայն XX դարասկզբի հայ փիլիսոփայական միտքը հարուստ է ժամանակաշրջանի գաղափարական ընդհանուր մթնոլորտի, փիլիսոփայական հիմնախնդիրների առաջադրման և քննարկման գործում նշանակալից դեր են կատարել Ավետիս Ահարոնյանը, Միքայել Վարանդյանը, Սարգիս Կասյանը, Ստեփան Շահումյանը, Երվանդ Ֆրանգյանը, Դավիթ Անանունը, Բախշի Իշխանյանը (1879-1921), Գարեգին Նժդեհը և ուրիշներ, ովքեր, համաշխարհային փիլիսոփայության բազմազան ուղղությունների գաղափարական զինանոցը ծառայեցնելով ազգային շահերի և նպատակների տեսական հիմնավորմանը, փորձել են իմաստավորել հայ ժողովրդի ազգային կեցությունը, տալ հայ մարդու ազգային նկարագիրը, նախանշել հայ ազգի զարգացման հեռանկարները:

XIX դարի վերջը և XX դարի սկիզբը հայոց պետականության ձևավորման քաղաքական նախադրյալների կուտակման ժամանակահատվածն է: Տվյալ դարաշրջանին բնորոշ՝ սեփական հայրենիքում ինքնորոշվելու քաղաքական նպատակի հիմնական կրողները հայ ազգային կուսակցություններն էին<sup>1</sup>:

Այս առումով ուշագրավ է ականավոր մտավորական, ՀՅԴ լավագույն տեսաբաններից մեկի՝ Երվանդ Ֆրանգյանի դիտարկումն այն մասին, որ հարցերի տեսական լուսաբանումն ու հիմնավորումը նույնքան արժեքավոր և կարևոր են, որքան գործնական կողմը<sup>2</sup>: Ֆրանգյանը ցանկացած քաղաքական կուսակցության համար ընդհանուր փիլիսոփայական աշխարհայեցողության հիմնավորումն այնքան է կարևորում, որքան հստակ գաղափարախոսության մշակումը. «Հասարակական կեանքում *հաստատուն, անշեղ ու որոշակի* են ընդհանրապես այն հոսանքի քայլերը, որի փիլիսոփայական աշխարհայեացքը, *հասարակա-քաղաքական կոնցեպցիան որոշ, պարզ և բիւրեղացած է: Անորոշ, տարտամ և երերուն են, ընդհակառակը*, այն հոսանքի քայլերը, որի *հասարակական-քաղաքական ըմբռնողութիւնը երերուն, անորոշ և բիւրեղացած չէ*»<sup>3</sup>: Թեև փիլիսոփայությունը միշտ ունեցել է իր առաջնակարգ տեղը երևույթների ու իրերի լուսաբանության մեջ, սակայն հատկապես XX դարում, որը «գերազանցապես փիլիսոփայութեան դար է»<sup>4</sup>, տեղի ունեցող համաշխարհային գործընթացները ցույց են տալիս, որ թե՞ անհատները, թե՞

<sup>1</sup> Տե՛ս Օհանյան Ս., Փիլիսոփայական-մարդաբանական հարցերը XX դարասկզբի հայ փիլիսոփայության մեջ // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2007, թիվ 2, էջ 175-187:

<sup>2</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Խուրդիյան Գ., ՀՅԴաշակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006, էջ 6-7:

<sup>3</sup> Տե՛ս Օհանյան Ս., Երվանդ Ֆրանգյանը փիլիսոփայության եության և նշանակության մասին // Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2008, N 2, էջ 12-20:

<sup>4</sup> Ֆրանգյան Ե., Փիլիսոփայական նամակներ // «Գործ» օրաթերթ, Բաբու, 1908, N 19, էջ 3:

<sup>5</sup> Ֆրանգյան Ե., Մեր փիլիսոփայական աշխարհայեացքը. Իրապաշտ փիլիսոփայութիւն. Գ.Յ.Դաշակցութեան փիլիսոփայական աշխարհայեացքի հիմնաւորման փորձ, Փարիզ, 1929, էջ 11:

հասարակական կազմակերպությունները, թե՞ քաղաքական կուսակցություններն աշխատում են հիմնավորել իրենց փիլիսոփայական աշխարհայացքը:

Իսկ բանի որ հայ ժողովրդի՝ իր ազատության և անկախ պետականության վերականգնման համար մղած պայքարը պետական կեցության փոխակերպելու գործում առանցքային դեր խաղացած կազմակերպություններից մեկը ՀՀ-ն էր, Ֆրանսիային իր նպատակն է համարում ՀՀ արժեհամակարգի և գաղափարախոսության տեսական-փիլիսոփայության հիմնավորումն ու վերլուծությունը, գաղափարական ակունքների բացահայտումը, հասարակական-քաղաքական դավանանքի և հայ ազգային կեցության մեջ այս կուսակցության ունեցած դերակատարության ուսումնասիրությունը:

Ֆրանսիայի փիլիսոփայական հայացքների ձևավորման վրա էական ազդեցություն են գործել Սոկրատեսը, Պլատոնը, Ֆիխտեն, Տոլստոյը, Միխայլովսկին, Շոպենհաուերը, Լիցշեն, Կոնտը և այլոք: Սակայն նրա՝ որպես մտածողի գաղափարական կայացման գործում էական ներդրում ունեն հատկապես երկրորդ պոզիտիվիզմի հիմնադիրներ Է. Մախը և Ռ. Ավենարիուսը, որոնց հետևելով՝ նա իր փիլիսոփայությունն անվանում է համադրական մոնիզմ կամ քննադատական-իրապաշտ փիլիսոփայություն<sup>1</sup>: Ընդհանրացնելով փիլիսոփայական բոլոր ուղղությունները՝ նա առանձնացնում է մտածողության երկու՝ իրար լրիվ հակադիր տեսակներ՝ մոնիստական և դուալիստական, որոնք գոյություն են ունեցել մեկտեղ ու միաժամանակ: Բայց որքան մարդկային միտքը նորանոր նվաճումներ է ունենում, որքան նորանոր գիտական մեթոդներ են երևան գալիս, այնքան ավելի ու ավելի տիրապետող է դառնում մոնիստական մտածելակերպը: Ֆրանսիային առանձնացնում է մոնիզմի պատմական երեք դրսևորում՝ միմյանց լրիվ հակադիր մատերիալիզմն ու իդեալիզմը և դրանց միակողմանիություններից զերծ համադրական մոնիզմը: Համադրական մոնիզմի փիլիսոփայության հիմքում ընկած է գաղափարների փոխադարձ լրացման սկզբունքը: Սոցիալական փիլիսոփայության և պատմության փիլիսոփայության մեջ համադրական մոնիզմը դրսևորվում է որպես պատմական ռեալիզմի տեսություն, ըստ որի՝ պատմական գործընթացը պետք է դիտարկել իր ամբողջության մեջ՝ իրատեսորեն գնահատելով այդ գործընթացին մասնակցող յուրաքանչյուր տարրի և ուժի տեղն ու դերը:

Պատմափիլիսոփայական գրականության մեջ սոցիալ-պատմական զարգացման առաջնիչ գործոններ ու գլխավոր ազդակներ են համարվել կրոնական զգացումը, տնտեսական շահը, ռասաները, ազգամիջյան բախումները, աշխարհագրական դիրքն ու պայմանները, հոգեբանությունն ու հոգեկերտվածքը, միտքն ու բանականությունը և այլն: Սակայն պատմական ռեալիզմի տեսանկյունից նման մոտեցումները գնահատվում են որպես միակողմանիություններ, որոնց օգնությամբ անհնար է բացատրել հասարակական-պատմական ընթացքի և զարգացման բարդ օրինաչափությունները. «Պատմական պրոցեսի տարրերից մեկը չի ներկայանում իբր պատճառ, միւսը՝ հետևանք, մեկը՝ առաջնական, միւսը՝ երկրորդական, մեկը՝ ակտիվ, միւսը՝ պասիվ: Նրանք համարժեք են և գտնուում են մշտական փոխազդեցութան մեջ»<sup>2</sup>:

Պատմական ռեալիզմի դիրքերից է Ֆրանսիայնը քննարկում նաև պատմական գործընթացների շարժիչ ուժերի հարցը<sup>3</sup>: Ըստ գաղափարների

<sup>1</sup> Տե՛ս Օհանյան Ս., XX դարի սկզբի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն (Երվանդ Ֆրանսիայն, Դավիթ Անանուն), թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Եր., 2008:

<sup>2</sup> Ֆրանսեան Ե., Հասարակագիտական Ետիդներ. Հ.Յ.Դաշնակցութեան սոցիալ-փիլիսոփայական աշխարհայեցողութեան հիմնաւորման շուրջը, Բագու, 1917, էջ 104:

<sup>3</sup> Տե՛ս Օհանյան Ս., Երվանդ Ֆրանսիայնը և պատմության ընթացքի վրա անհատի ունեցած ազդեցության գնահատման հարցը // Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Եր., 2014, N 1, էջ 156-167; Оганян С., Философ дела и идеи: Ерванд Франгян о Николае Михайловском, "Русская

փոխլրացման սկզբունքի՝ նա ընդունում է թե՛ զանգվածների, թե՛ անհատների դերը պատմության մեջ՝: Իրականում չի կարող լինել պատմական գործչի ու զանգվածի բացարձակ հակադրություն, կարծում է Ֆրանգյանը, քանի որ վերջին հաշվով, մի կողմից, միշտ ծագում է մարդկանց որոշակի աստիճանակարգություն, որոնք ավելի մոտ են կանգնած գործչին և գործում են նրա գաղափարների (կամքի, ծրագրերի և այլն) իրականացման ուղղությամբ, իսկ մյուս կողմից, նրա վրա ազդեցություն են գործում: Բայց, այնուամենայնիվ, հաճախակի են այն դեպքերը, երբ անհատն ու զանգվածը բաժանված են բավական որոշակի որակական պատնեշով, մասնավորապես երբեմն անհատը սկսում է գործել միայնակ, և միայն հետո ծագում է նրա հետնորդների ու համախոհների աստիճանակարգություն: Պարզապես նշանավոր անհատները, թեկուզ ինտուիտիվ կերպով, զգում, ըմբռնում են պատմական անհրաժեշտությունը: Նրանք սոսկ անհատներ չեն, այլ մտավոր ու բարոյական գիտակցության կրողներ, որոնք առանձնանում են հետևյալ հատկություններով.

ա) նրանց կատարած գործերը ոչ թե տեղական, այլ ընդհանուր նշանակություն են ունենում,

բ) նրանց ազդեցության շրջանակը և գործունեության ոլորտը սահմանափակված չէ,

գ) նրանք տեղ են գրավում քաղաքակրթության պատմության մեջ,

դ) նրանք քննադատաբար են վերաբերվում հասարակական շարժումներին, պատմական կյանքի երևույթներին:

Ինչպես նշվեց, Ֆրանգյանը չի անտեսում նաև զանգվածների նշանակությունը պատմական գործընթացներում: Հասարակական շարժումների, պատմական զարգացման մեջ զանգվածների դերն անտարակուսելի է: Միայն թե ժողովրդական զանգվածները, ամբոխներն ազդում են պատմության ընթացքի վրա, բայց ոչ այնքան գիտակցաբար, որքան մեխանիկորեն, ինքնաբերաբար: Չանգվածային շարժումների մեջ չկա գիտակցական խորը, պլանաչափ գործունեություն: Ամբոխի վարքը սովորաբար որոշվում է գրավիչ տրամադրությունների ներգործությամբ և ենթակա է առաջնորդի ուժեղ ազդեցությանը. որպես առաջնորդ հանդես է գալիս այն մարդը, ով մյուսներից ավելի արագ ու լավ է որսում ամբոխի տրամադրությունը, կարգին չարտասանված նրա ձգտումները, մղումներն ու շարժառիթները կամ ընդունակ է ամբոխին հասցնել իրեն ցանկալի վիճակի: Ամբոխն առանց առաջնորդի ոչինչ չի կարող անել: Ժողովուրդները չափազանց մեծ դեր են խաղում խոշոր, հեղաշրջող գաղափարների տարածման գործում, բայց այդ գաղափարների ստեղծմանը նրանց մասնակցությունն անհամեմատ փոքր ու աննշան է՝ անհատի ստեղծագործական ուժի հանդեպ. այստեղ զանգվածներն ավելի շատ օգնողներ են. «Մասսան կարող է միայն երեք դեպքում ուշադրութան արժանանալ. առաջին՝ անորոշ կօպիա մեծ մարդկանց՝ վատ թղթի վրա. երկրորդ, նրանց համար որպես խոչընդոտ և երրորդ, մեծերի ձեռքին որպես զենք»<sup>2</sup>:

Ֆրանգյանի կարծիքով՝ պատմական զարգացումն ունի և՛ ժողովրդական զանգվածների, և՛ անհատների կարիքը: Գաղափարներն առաջանում են

философия истории: материалы Международной научной школы для молодых ученых", Белгород, 2014, с. 179-185; Оганян С., Николай Михайловский. Великий философ-социолог, Материалы международной философской конференции "Русский логос: горизонты осмысления", Санкт-Петербург, 25-28 сентября 2017 г.. В 2-х т. Т. 1, с. 164-171:

<sup>1</sup> Այդ մասին տե՛ս Ֆրանգեան Ե., Պատմափիլիսոփայություն // «Միտք» զուտ գիտական և փիլիսոփայական ժողովածու, խմբ. են իրատ. Ֆրանգեան Ե., Երեւան, 1910, էջ 77-78:

<sup>2</sup> Ֆրանգեան Ե., Ֆ. Նիցշե և նրա փիլիսոփայությունը (նրա մահուան 10-եակի առիթով. 1900-1910), Թիֆլիս, 1910, էջ 73:



անհատական, տարածվում՝ կոլեկտիվ կերպով: Անհատները կատարելապես ազատ չեն ամենից առաջ այն պատճառով, որ նրանք միջավայրից և զանգվածներից են ստանում նյութ իրենց գործողությունների համար: Անհատների և զանգվածների միջև գոյություն ունի հաստատուն փոխազդեցություն՝ փոխապայմանավորող և փոխլրացնող: Անհատներն են ձևակերպում, ի մի բերում ժողովրդական զանգվածների ցրված մտքերը, անորոշ ու չձևավորված տրամադրությունները և այդ առումով ավելի հեշտությամբ են կարողանում զանգվածներին որոշ ուղղությամբ առաջ մղել: Պատմության որչ ընթացքը վկայում է, որ ոչ մի սոցիալական ուժ, ոչ մի խումբ պատմության մեջ չի հասել գերիշխանության, եթե նա առաջ չի քաշել իր քաղաքական առաջնորդներին, իր առաջավոր ներկայացուցիչներին, որոնք ընդունակ են կազմակերպել շարժումը և ղեկավարել այն:

Միաժամանակ Ֆրանգյանը չի անտեսում նաև այն բնական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների նշանակությունը, որոնցում ապրում է այդ անհատը: Պատմական կազմավորիչ գործընթացում վճռորոշ դեր են կատարում և՛ նյութական-տնտեսական, և՛ մշակութային-մտավոր, բարոյահոգեբանական գործոնները:

Ֆրանգյանի փիլիսոփայության մյուս կարևոր բաղադրիչը ազգային-փիլիսոփայական է, որը հանդիսանալով հայ ազգային հոգեկերտվածքի, հայ ազգային նկարագրի վերլուծություն՝ ազգային ինքնաճանաչման հարցը կապում է հայ ժողովրդի կրավորական կեցվածքի ու ազգային ձախողումների հետևանքով ձևավորված պարտվողական հոգեբանության հաղթահարման, միասնական ազգային ամբողջության ստեղծման խնդիրներին<sup>1</sup>: Ֆրանգյանը, ինչպես և XX դարասկզբի մյուս փիլիսոփաները հայ ազգային հոգեկերտվածքի, հայ ազգային նկարագրի ձևավորման վրա ազդող գործոնները բաժանում է երկու խմբի՝ օբյեկտիվ-պատմական և սուբյեկտիվ-հոգեբանական (ներազգային): *Օբյեկտիվ-պատմական* գործոններից են սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմանները, իսկ *սուբյեկտիվ-հոգեբանական* գործոնները պայմանավորված են հայ ժողովրդի ազգային առանձնահատկություններով:

Օբյեկտիվ-պատմական գործոնների շարքում Ֆրանգյանը մեծ նշանակություն է վերագրում նվաճողների բարբարոսական-բռնապետական վարչակարգերին, որոնց հայ ժողովուրդը դարեր շարունակ ստիպված է եղել հպատակվել ու ենթարկվել, և դա «սերնդ-սերունդ ... իր աներից, թունավորող ազդեցութիւնն է դրել հայ ժողովրդի օրգանիզմի վրայ, այլանդակել նրա պատկերը, առաջ բերել այս կամ այն չափի բարոյական այլասեռում»<sup>2</sup>, որը Ֆրանգյանի անվանում է «պատմական չարիք»: Նրա կարծիքով<sup>a</sup> քանի որ հայի ազգային բնավորության և վարքագծի թերությունները (անմիաբանությունը, պառակտվածությունը, սեփական մշակութային արժեքների նկատմամբ անտարբերությունը, օտարամոլությունը, անհանդուրժողականությունը և այլն) ձևավորվել են դարերի ընթացքում, ապա ժամանակի ընթացքում տիրող պայմանների փոփոխության հետ մեկտեղ երբևէ վերանալու են:

<sup>1</sup> Տե՛ս Օհանյան Ս., Հայ ազգային հոգեկերտվածքի վերլուծությունը Երվանդ Ֆրանգյանի «Անդրպատական» երկում // Հայոց ինքնության հարցեր: Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2015, պրակ 3, էջ 99-112; Օհանյան Ս., Ազգային նկարագրի հիմնախնդիրները XX դարասկզբի հայ փիլիսոփայության մեջ // ժամանակակից քաղաքակրթության մարտահրավերները և փիլիսոփայությունը: Հոդվածների ծողովածու, Եր., 2016, էջ 136-147:

<sup>2</sup> Ֆրանգեան Ե., Զրիստափոր Միքայելեան. Նրա կենսը և աշխարհայեցողութիւնը, Բագու, 1917, էջ 87-88:

**Սոֆյա Օհանյան**  
**ԵՐՎԱՆԴ ՖՐԱՆԳՅԱՆԻ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ՍՈՆԻՉՄԸ**  
**XX ԴԱՐՎԱԿԱՆ ԳԵՅ ԱՉԱԳՅՈՒՆ ԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԳՐԱՎԵՐՆԵՐԻ**  
**ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Բանալի բառեր՝** Հայ փիլիսոփայության պատմություն, պոզիտիվիզմ, համադրական մոնիզմ, գաղափարների փոխադարձ լրացման սկզբունք, պատմական ռեալիզմ

XX դարասկզբի հայ ականավոր մտավորական, փիլիսոփայության դոկտոր Երվանդ Ֆրանգյանը (1878-1928), հետապնդելով ՀՀԴ աշխարհայեցողության վերլուծության, գաղափարական ակունքների բացահայտման, հասարակական-քաղաքական դավանանքի և հայ ազգային կեցության մեջ այս կուսակցության ունեցած դերակատարության ուսումնասիրության նպատակները, դիմում է համաշխարհային փիլիսոփայության կարևորագույն ուղղություններից մեկին՝ երկրորդ պոզիտիվիզմին: Ֆրանգյանի փիլիսոփայական համակարգի մեջ առանձնակի կարևոր տեղ է զբաղեցնում հատկապես պատմական ռեալիզմը՝ որպես ՀՀԴ աշխարհայացքի տեսական առանցք:

**Sofya Ohanyan**  
**YERVAND FRANGYAN'S SYNTHETIC MONISM IN THE CONTEXT OF**  
**CHALLENGES OF ARMENIAN NATIONAL EXISTENCE OF THE BEGINNING OF**  
**THE 20TH CENTURY**

**Key words:** *the history of Armenian philosophy, Positivism, Synthetic Monism, the principle of mutual addition of ideas, Historical Realism*

Doctor of philisophy, eminent Armenian thinker of the beginning of the 20th century Ervand Frangyan (1878-1928) pursuing the goals of ARF worldview analysis, disclosing the ideological sources of that world view, studying the role of the party in social-political dogmas and in the Armenian national existance, turns to the second positivism, one of the most important schools of philisophy. In his view the ideas of the founders of the school Mach and Avenarius best express the synthetic character of ARF worldview. Nevertheless, historical realism as a theoretical basis of ARF worldview is of particular importance in Frangyan's philosophical system.

**Софья Оганян**  
**СИНТЕТИЧЕСКИЙ МОНИЗМ ЕРВАНДА ФРАНГЯНА В КОНТЕКСТЕ**  
**ВЫЗОВОВ АРМЯНСКОГО НАЦИОНАЛЬНОГО БЫТИЯ НАЧАЛА XX ВЕКА**

**Ключевые слова:** *история армянской философии, позитивизм, синтетический монизм, принцип взаимного дополнения идей, исторический реализм*

Выдающийся армянский мыслитель начала XX века, доктор философии Ерванд Франгян (1878-1928), преследуя цели анализа мировоззрения, выявления идейных истоков, социально-политической идеологии партии «Дашнакцутюн» и ее роли в армянском национальном бытии, обращается к одному из важнейших направлений всемирной философии – второму позитивизму. В философской системе Франгяна особо важное место занимает именно исторический реализм как теоретический стержень мировоззрения «Дашнакцутюн».

**ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇՈՒԾՈՒՄ 1813-1917ԹԹ.****ՆԱՐԻՆԵ ԱՎԱԳԻՄՅԱՆ**

19-րդ դարի սկզբին անդրկովկասյան և, մասնավորապես, հայ ժողովրդի կյանքում տեղ գտած իրադարձությունները իրենց հերթին զգալի փոփոխություններ գրանցեցին նաև ժողովրդագրական գործընթացներում: Այս ամենից անմասն չմնաց նաև Արցախը, որը 1813թ. հոկտեմբերի 12-ի Գյուլիստանի պայմանագրով միացվեց Ռուսական կայսրությանը: Իրեն միացված տարածքներում ցարիզմը սկսեց իր վարչաքաղաքական ու տնտեսական կյանքին համապատասխան փոփոխություններ իրականացնել: Այդ նպատակով նա սկսեց տեղեկություններ հավաքագրել իրեն ենթակա տարածքների վերաբերյալ՝ համապատասխան կամերալ ցուցակագրումներ, հաշվառումներ կատարելու միջոցով:

1822թ. Ղարաբաղի խանությունը վերակազմավորվեց Ղարաբաղի պրովինցիայի: 1823թ. ցարական կառավարությունը Մոզիլսկու և Երմոլովի ղեկավարությամբ Ղարաբաղում բնակչության հաշվառում անցկացրեց, որի արդյունքներն ամփոփվեցին «Ղարաբաղի պրովինցիայի նկարագրության» մեջ: Այն ներկայացնում էր վիճակագրական տվյալներ բնակչության էթնոկրոնական կազմի մասին, համաձայն որոնց Շուշիում ապրում էր 8290 մարդ, ընդ որում հայերը կազմում էին 41% (3350 մարդ), թաթարները՝ 56% (4670), քրդերը՝ 3% (270): Թաթարների մեծ թվական տվյալներն առիթ են հանդիսացել աղբյուրների հեղինակների համար հերթական անգամ կասկածի տակ դնելու անցյալ ժամանակներում և հետագայում, մասնավորապես, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Շուշիի հայկական քաղաք լինելու հանգամանքը: Յարկ և Էշել, որ 19-րդ դարի սկզբի պատկերը հետևանք էր դեռևս Նախորդ դարի իրադարձությունների: Փանահի ժամանակներից սկսվել էր այլացել և այլակրոն էթնիկ տարրի ներթափանցումն Արցախ, մասնավորապես Շուշի: Այդ կերպ թուրք խաներն իրենց համար հենարան էին ստեղծում: Թուրք ազգաբնակչության ներգաղթը Շուշի շարունակվեց նաև Իբրահիմ խանի օրոք: Միաժամանակ սկիզբ էր առել հայության մեծ արտագաղթ Արցախից, որը մեծ չափերի էր հասել, հատկապես Խամսայի մելիքությունների կործանումից հետո: Ինչպես Լեոն Է Նշում. «Մելիքների անհաջողություններն ու պարտությունները, միացած սովի և ժանտախտի հետ, քանդել և ավերել էին Ղարաբաղի մեծագույն մասը, փախցնելով հայ ժողովրդի խոշոր հատվածները գանազան ուղղություններով»<sup>2</sup>: Յոգուտ թուրքերի 1820-ական թթ. Շուշիի էթնիկ պատկերն ամբողջացավ 1823թ. Մեհտի Ղուլի խանի քաղաքում հաստատվելով: Վերջինս իր հետ տեղափոխեց նաև 3000 մահմեդական՝ հիմնականում թուրքական ընտանիքներ, որոք գլխավորապես հաստատվեցին Շուշիում:

Ըստ 1832-1833թթ. իրականացված բնակչության հաշվառման, որը փաստորեն, դարձավ Ղարաբաղում անցկացված բնակչության առաջին մարդահամարը, Շուշիում ավելացել էր հայերի տեսակարար կշիռը, կազմելով 52,8%, թուրքերինը նվազել՝ հասնելով 47,1%-ի: Ընդհանուր հաշվով քաղաքում ապրում էր 7304 մարդ<sup>3</sup>: Այն համարվում էր Անդրկովկասի խոշորագույն քաղաքներից մեկը, իսկ բնակչության թվով 5-րդը՝ Թիֆլիսից, Նուխիից, Երևանից ու

<sup>1</sup> Описание Карабахской провинции, составленное в 1823г. Действительном статским советником Могилевским и полковником Ермоловым II, Тифлис, 1866.

<sup>2</sup> Լեոն, Երկերի ժողովածու, 10հատորով, հ. 4, Ժամանակակից պատմություն (XIXդ. առաջին կես), Երևան 1984, էջ 28:

<sup>3</sup> ՅԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 51-52:

Շամախուց հետո<sup>1</sup>: Շուշիի հայ բնակչության աճը պայմանավորված էր համեմատաբար խաղաղ զարգացման պայմանների ստեղծմամբ, որի հետևանքով էլ այն վերածվեց առաջավոր տնտեսական, մշակութային կենտրոնի: Արիեստների ու առևտրի զարգացումը մեծ թափ ստացավ, Շուշին դարձավ ապրանքաշրջանառության տարանցիկ կենտրոն: Պատահական չէ ժամանակաշրջանի գերմանական թերթը այն բնութագրել որպես «Կովկասյան Ջիբրալթար»: Աստիճանաբար ձևավորվեց առևտրական կապիտալը: Այս զարգացումների կրողը հայությունն էր:

Հաջորդ տասնամյակի թվական տեղեկությունները Շուշիի բնակչության վերաբերյալ հայտնի են դառնում եկեղեցական ծխական մատյաններից: 1841թ. Շուշիում ապրում էր 5453 հայ: 1854թ. դրությամբ քաղաքն ուներ 15194 բնակիչ, որի 51,1%-ը հայեր էին, 48,6%՝ թուրքեր, 0,3%՝ ռուսներ<sup>2</sup>: Գերազանցելով Երևանին՝ բնակչության թվով տարածաշրջանում այն 4-րդն էր: 1860թ. քաղաքի բնակչությունը հասավ 17484 մարդու, որի 54,53%-ը հայեր էին, 45,47%-ը՝ թուրքեր, որոնք բնակվում էին համապատասխանաբար հայկական և թուրքական թաղամասերում: Պատմաբան Վ.Բալայանն իրավացիորեն անհավանական է համարում այլ ազգությունների բացակայությունը, պայմանավորելով այդ փաստը նրանց վերաբերյալ տվյալները հայերի և թուրքերի ընտանեկան կազմերում ընդգրկելու հնարավոր հանգամանքով<sup>3</sup>: 1873թ. Շուշիում անցկացված մարդահամարի տվյալների համաձայն՝ բնակչությունը հասնում էր 24552 մարդու, որից 13504 հայ (55%), 10804 թուրք (44%), 244՝ ռուս (1%): Ընդհանուր Շուշիի գավառում բնակչությունը հասել էր 80913-ի, որից 43502-ը հայեր էին, 37351-ը՝ թաթարներ<sup>4</sup>:

1886թ. քաղաքի ընտանեկան ցուցակների տվյալների հաշվառման արդյունքներով՝ այստեղ ապրում էր 26806 մարդ, որի 56,7%-ը՝ հայեր էին, 43,2%-ը՝ թուրք-թաթարներ, 0,07%-ը՝ ռուս, 2 հրեա: Բնակչության թվաքանակով Շուշին արդեն երրորդն էր՝ Բաքվից ու Թիֆլիսից հետո<sup>5</sup>: Ընդհանուր Արցախի բնակչության 84,8%-ը հայեր էին<sup>6</sup>: 1891թ. ժամանակի մամուլի տեղեկություններով Շուշի քաղաքում հայերի տեսակարար կշիռը կազմում էր 60%<sup>7</sup>:

1897թ. Համառուսական առաջին մարդահամարի արդյունքներով, Շուշիում՝ ինչպես քաղաքում, այնպես էլ գավառում, հայերը մեծամասնություն էին կազմում: Այսպես, քաղաքի 25881 բնակիչից հայ ազգաբնակչությունը կազմում էր 55,7%-ը, թուրքերը՝ 41,6%, 1,5%-ը ռուսներ էին<sup>8</sup>: Ապրում էին նաև լեհեր, մոլդովացիներ, վրացիներ և այլ ազգերի ներկայացուցիչներ, որոնք փոքր տոկոս էին կազմում ընդհանուր բնակչության մեջ: Գրեթե նույն տեսակարար կշիռն ունեին հայերը նաև Շուշիի գավառում՝ 53,2%<sup>9</sup>: Բնակչության նվազումը պայմանավորված էր որոշակի գործոններով. 19-րդ դարի վերջին Շուշին աստիճանաբար կորցնում էր զարգացած տնտեսական և առևտրական կենտրոնի դերը, նավթարդյունաբերության զարգացման շնորհիվ Բաքուն դառնում է զարգացող արդյունաբերական կենտրոն,

<sup>1</sup> Саркисян Г., Население Нагорного Карабаха за 100 лет (этнодемографическое исследование), стр. 65, [http://www.armeniaculture.am/images/menus/1324/Hamlet\\_Sargsyan.pdf](http://www.armeniaculture.am/images/menus/1324/Hamlet_Sargsyan.pdf).

<sup>2</sup> Բալայան Վ., Շուշի. Տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում, Երևան 2017, էջ 340:

<sup>3</sup> Բալայան Վ., Նշվ. աշխ., էջ 341:

<sup>4</sup> Статистические таблицы о народонаселении Кавказского края, сборник сведений о Кавказе, Т. VII, Тифлис, 1880, стр. XIII-XXV.

<sup>5</sup> Ժողովուրդների տրիտորիական բաժանումները Անդրկովկասում, «Գործ», հմ. 11-12, նոյեմբեր-դեկտեմբեր, Բաքու, 1917, էջ 244:

<sup>6</sup> Саркисян Г., Նշվ. աշխ., էջ 69:

<sup>7</sup> Անդրկովկասի քաղաքների հայ ազգաբնակչությունը, «Արծազան», N2, մարտ, Թիֆլիս, 1891, էջ 18:

<sup>8</sup> Բալայան Վ., Նշվ. աշխ., էջ 342:

<sup>9</sup> Ասոյան Լ., Հայերի տեղաբաշխումը և աճը Անդրկովկասում ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, էջ 101, [http://lraber.asj-oa.am/37/1/10\\_Asojan\\_L.\\_A\\_.pdf](http://lraber.asj-oa.am/37/1/10_Asojan_L._A_.pdf).

դեպի իրեն ձգելով բնակչության հոծ զանգվածների: Շուշից տեղի էր ունենում ոչ միայն բնակչության, այլ նաև կապիտալի մեծ արտահոսք:

1904թ. դրությամբ էթնիկ պատկերը հետևյալն էր՝ 54,2% հայեր, 43,8% թուրքեր, 1,8% ռուսներ, 0,2% այլազգիներ հարաբերակցությամբ: 1906թ. հայերի թիվը պակասեց 5184-ով հասնելով 12798-ի<sup>1</sup>: Այս հանգամանքը գլխավորապես հետևանք էր հայ-թաթարական ընդհարումների, որի զոհ դարձան հարյուրավոր հայեր:

1914թ. տվյալներով Շուշին ունեցել է ընդամենը 42568 շուշի, որից հայեր՝ 22416 (52,3%), թուրքեր՝ 18865, ռուսներ՝ 1188, այլազգիներ՝ 99<sup>2</sup>: 1916թ. դրությամբ Շուշիի բնակչության 53,33%-ը կազմում էին հայերը<sup>3</sup>: Յետագա տարիներին հայ բնակչությունը մեծ կորուստներ ունեցավ՝ թուրքական բռնությունների հետևանքով:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Նշված ժամանակաշրջանում տեղի ունեցող բնակչության տեղաշարժերը, մասնավորապես էթնիկ բնույթի, պայմանավորված էին ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններով և զարգացումներով: Քննարկվող ժամանակաշրջանում արցախահայությունը ուժերի գերլարումով պահպանում էր Շուշի քաղաքի հայկական դիմագիծը:

### **Նարինե Ավագիմյան** **ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՇՈՒՇԻՈՒՄ 1813-1917ԹԹ.**

*Բանալի բառեր՝ Ղարաբաղ, Շուշի, ժողովրդագրություն, բնակչություն, էթնիկ կազմ*

Հոդվածը վերաբերում է Ռուսական կայսրության կազմում գտնվելու ժամանակաշրջանում Շուշիում ընթացող էթնիկ գործընթացներին: Նշված շրջանում Շուշին մեծ զարգացում ապրեց՝ վերածվելով տարածաշրջանի վարչա-տնտեսական, մշակութային առաջավոր կենտրոններից մեկի, իսկ 19-րդ դարավերջին նաև՝ բնակչությամբ Անդրկովկասի երրորդ խոշոր քաղաքի՝ զիջելով Բաքվին ու Թիֆլիսին: Թեման կարևորվում է ժամանակաշրջանի գործընթացների համատեքստում բնակչության էթնիկ պատկերը ներկայացնելու տեսանկյունից, քանի որ ընդհանուր բնակչության կազմում թուրք-թաթարների որոշակի տեսակարար կշիռ ներկայացնելը շահարկվում է մեր հարևանների կողմից, իրենց վերագրելով տվյալ տարածքները, հայերին անվանելով եկվորներ: Մինչդեռ սկզբնաղբյուրներն ու պատմական փաստերը հակառակն են ապացուցում:

<sup>1</sup> Բալայան Վ., Նշվ. աշխ., էջ 345:

<sup>2</sup> Կիսիբեկյան Ա., Հուլետ, Հ.1, Երևան 2011, էջ 291:

<sup>3</sup> Ալեքսանյան Հ., Շուշիի և Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը 1916- 1926թթ., Երևան 2007, էջ 116:

**Narine Avagimyan**  
**THE DEMOGRAPHIC SITUATION IN SHOUSHI IN 1813-1917**

**Keywords:** *Karabakh, Shoushi, demography, population, ethnic composition*

The article is about demographic processes in Shoushi during the Russian domination period. At that period Shoushi turned into one of the administrative, economic, cultural advanced centers of the region by its population, and at the end of the 19th century into the third largest city of Transcaucasus after Baku and Tiflis. It is important to introduce the ethnic picture of the population in the context of the processes of this period, as our neighbors treat the existence of a certain percentage of Turkish tatars as a fact of attributing the territories to themselves and calling the Armenians aliens, while sources and historical facts prove the opposite.

**Нарине Авагимян**  
**ДЕМОГРАФИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В ШУШИ В 1813-1917 ГОДАХ**

**Ключевые слова:** *Карабах, Шуши, демография, население, этнический состав*

Статья посвящена демографическим процессам в Шуши в период нахождения его в составе Российской империи. В указанный период город пережил значительное развитие, превратившись в один из административно-экономических, духовных центров региона, а в конце 19-ого века – в третий по численности населения крупный город Закавказья, уступая лишь городам Баку и Тифлис. Тема важна с точки зрения представления этнической картины населения в контексте процессов данного периода, так как наши соседи продолжают спекуляции в связи с определенным процентом кавказских татар в общем числе населения, приписывая себе данные территории, а армян называя пришельцами. Однако источники и исторические факты свидетельствуют о противоположном.

## ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ (1920Թ.)

### ԳԱՅԱԼԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱԼ

1918 թ. մայիսի 28-ին՝ ավելի քան կեսդարյա ընդմիջումից հետո, վերածնվեց հայկական անկախ պետականությունը՝ Հայաստանի Առաջին Հանրապետությունը: Խիստ ծանր էր Նորանկախ հանրապետության թե՛ ներքին, թե՛ արտաքին դրությունը. քայքայված տնտեսություն, ցեղասպանությունից փրկված հարյուր-հազարավոր գաղթականներ, սով, համաճարակ: Այդ ամենին զուգարվում էր թշնամական շրջապատը, հակասությունները ու անհավասար կռիվը հարևան երկրների նվաճողական ձգտումների դեմ: Արցախը կամ պատմական Հայաստանի տասներորդ աշխարհը, հայոց Նորագույն պատմության հենց սկզբից դարձավ հայության պայքարող ոգու կրողն ու արտահայտիչը: 1918 թ. աշնանից արցախահայությունը հարկադրված էր գեներ ձեռքին համառ ու անհավասար պայքարի ելնել՝ թուրք-ադրբեջանական կողմի դեմ՝ ազատ ու անկախ ապրելու իր իրավունքը պաշտպանելու համար:

1919 թ. օգոստոսյան համաձայնագրից<sup>1</sup> հետո Արցախում արտաքուստ, ասես, վերականգնվել էր խաղաղությունը, որը, սակայն, երկար չտևեց: Ադրբեջանի կողմից Շուշիի, Չանգեզուրի, Ջիվանշիրի և Ջիբրայիլի գավառների գեներալ-նահանգապետ Նշանակված Խոսրով բեկ Սուլթանովը շարունակում էր Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդից պահանջել գործնականորեն ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը: Արցախցիները վճռականորեն մերժում էին այդ պահանջը: Ի պատասխան Ադրբեջանի կառավարությունը տենդագին նախապատրաստվում էր ուժով տիրելու Արցախին: Շուտով Սուլթանովը հրամայեց մուսավաթական բանակը տեղաշարժել և կենտրոնացնել ռազմավարական Նշանակություն ունեցող կետերում<sup>2</sup>:

1920 թ. փետրվարի 28-ից մարտի 5-ը Շոշ գյուղում կայանում է Արցախի հայության ութերորդ համագումարը (մասնակցում էին 196 պատգամավորներ), որը բնության է առնում Ադրբեջանի կառավարության հետ կնքված ժամանակավոր համաձայնագիրը, և արձանագրում, որ Սուլթանովի՝ հայությանն անհապաղ Ադրբեջանին ենթարկեցնելու պահանջը հակասում է 1919 թ. օգոստոսյան համաձայնագրին: Զաղաքական իրավիճակի վերաբերյալ ընդունված բանաձևում համագումարը կոչ է անում Ադրբեջանին չխախտել օգոստոսյան համաձայնագիրը, այլապես խոստանալով, որ Արցախի հայությունը կդիմի պաշտպանության համապատասխան միջոցների<sup>3</sup>:

Ադրբեջանական կողմը, գայրացած ութերորդ համագումարի որոշումներից, սկսում է իրագործել Արցախի վերջնական հնազանդեցման իր վաղեմի երազանքը: 1920 թ. մարտի 20-ին Սուլթանովը վերջնագիր է ներկայացնում Արցախի բնակչությանը՝ երեք օրվա ընթացքում զինաթափվելու պահանջով՝ հակառակ դեպքում սպառնալով բռնի ուժի գործադրում<sup>4</sup>: Մերժում ստանալով՝ ադրբեջանական կողմը վճռում է բռնությամբ զինաթափել հայ բնակչությանը:

<sup>1</sup> Այդ ժամանակավոր համաձայնագրով Արցախի Շուշի, Ջիվանշիր և Ջեբրայիլ գավառների հայերով բնակեցված լեռնային մասը ժամանակավորապես՝ մինչև հարցի լուծումը Փարիզի խաղաղարար կոնֆերանսում, համարվում էր Ադրբեջանի Հանրապետության սահմաններում, մանրամասն տե՛ս Микаелян В., Нагорный Карабах в 1918-1923 гг., Ереван, 1992, ст. 323-327 □

<sup>2</sup> Տե՛ս Ուլլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, հատոր Ա, Երևան, 1993, էջ 28-29:

<sup>3</sup> Տե՛ս Микаелян В., указ. соч., ст. 379-380:

<sup>4</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, էջ 212:

1920 թ. մարտի 22-ին Արցախում սկսվեցին կռիվներ: Մուսավաթական բանակի հարվածային ուժերը, թուրք սպաների հրամանատարությամբ, կենտրոնացել էին Աղդամ-Ասկերան-Խանքենդի-Շուշի խճուղու, իսկ արևմտյան կողմից՝ Զիրս-Տումի-Խծաբերդ ուղղություններում<sup>1</sup>: Հայկական զինված ջոկատները հարձակման անցան ռազմավարական նշանակություն ունեցող Ասկերանի, Շուշիի և Խանքենդիի ուղղություններով: Մարտի 22-ին Խանքենդիի ուղղությամբ գործող հայկական ուժերը, թշնամուն մեծ կորուստներ պատճառելով, գրավում են Խոջալուն և Խանքենդին: Մարտի 23-ին Արցախի մարտիկները գրավեցին Ասկերանի բերդը և հակառակորդին ստիպեցին նահանջել:

Արցախում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների կիզակետը Շուշիի հայ բնակչության ջարդն էր: Մահմեդականների Ամանորի (Նոյրուզ Բայրամ) տոնակատարությանը մասնակցելու անվան տակ ադրբեջանական զորքը Խանքենդիից բերվեց Շուշի՝ գորահանդեսի: Ղարաբաղի տարբեր շրջաններից Շուշի եկան նաև տասնյակ հարյուրավոր մահմեդականներ (ընդհանուր առմամբ ադրբեջանական կողմի թիվը հասնում էր շուրջ 10.000-ի)<sup>2</sup>:

Հիմնահատակ կործանվում է Շուշիի հայկական թաղամասը, որը հրի է մատնվում: Կոտորվում է քաղաքի հայ բնակչության մեծամասնությունը (տարբեր տվյալներով 6000-8000 հայ)<sup>3</sup>: Շուշիի հայության բեկորները, թվով 6000 մարդ, հեռանալով Վարանդայի ու Դիզակի գյուղերը, կարողանում են ազատվել կոտորածից<sup>4</sup>:

Կատաղի մարտեր ծավալվեցին հատկապես Ասկերանի ուղղությամբ: Այն կարևոր ռազմավարական նշանակություն ուներ երկու կողմերի համար էլ: Ասկերանին տիրելով՝ ադրբեջանական կողմը կարող էր իր ձեռքում պահել Արցախը: Իսկ հայերի համար այն Արցախի բոլոր շրջանների միջև կապ հաստատելու հանգուցակետն էր: Հայկական փոքրաթիվ ուժերը Դալի Ղազարի գլխավորությամբ մարտի 27-ից 29-ը ետ մղեցին ադրբեջանական մեծաքանակ զորքերի հարձակումը: Ապրիլի 3-ին՝ հակառակորդը ամբողջ ուժով նետվեց գրոհի և կարողացավ ճեղքել պաշտպանական գծի ճակատը<sup>5</sup>: Դալի Ղազարը անիմաստ համարելով քաղաքի հետագա պաշտպանությունը, որը կարող էր նաև անտեղի բազմաթիվ զոհերի պատճառ դառնալ, հրամայում է Ասկերանը պաշտպանող ուժերին նահանջել, իսկ ինքը մնում է կռվի դաշտում մինչև վերջին գնդակը<sup>6</sup>: Այդպիսով Արցախը բաժանվեց երկու մասի՝ Աղդամ-Շուշի ճանապարհը ընկավ հակառակորդի ձեռքը, իրարից կտրված էին Դիզակ-Վարանդան և Խաչեն-Ջրաբերդ-Գյուլիստանը:

Ապրիլի 5-ից 13-ն էլ լարված մարտեր տեղի ունեցան Վարանդայի ուղղությամբ: Սղնախ գյուղի տակ թշնամին մեծաքանակ կորուստներ է տալիս, որի հետևանքով, ինչպես նաև Հայաստանից սպասվելիք օգնության լուրն առնելուց հետո, լքում է ռազմաճակատի գիծը:

Ստեղծված ծանր իրադրության պայմաններում՝ Հայաստանի կառավարությունն ու Չանգեզուրի ինքնապաշտպանական ուժերն որոշեցին օգնության ձեռք մեկնել Արցախին: 1920 թ. ապրիլի 17-ին Չանգեզուրի կողմից Վարանդա մտան Դրոյի, իսկ Կապանից Դիզակ՝ Գ. Նժդեհի հրամանատարության

<sup>1</sup> Տե՛ս Կիսիբեկյան Ա., Հուշեր, հատոր 1, Երևան, 2011, էջ 463:

<sup>2</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ), «Բանբեր հայագիտության», 2015, N 1, թ. 58:

<sup>3</sup> Տե՛ս Հայաստանի Ազգային Արխիվ, ֆ. 57, ց. 5, գ. 216, թ. 16-17, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս 1, թ. 175, երկրորդ մաս, թ. 245:

<sup>4</sup> Տե՛ս Նույն տեղում, ֆ. 57, ց. 5, գ. 216, թ. 16-17, «Հառաջ», 1920 թ. ապրիլի 20:

<sup>5</sup> Տե՛ս Բալայան Վ., Արցախի պատմություն, Երևան, 2002, էջ 303:

<sup>6</sup> Տե՛ս Հարությունյան Հ., Նշվ. աշխ., էջ 215:



տակ գտնվող զորքերը: Արցախահայությունը հայ ազատարարներին ամենուր դիմավորում էր ցնծությամբ և հնարավոր բոլոր միջոցներով աջակցում նրանց: Տեղի հայկական ուժերի հետ միասին նրանց հաջողվեց պարտության մատնել թշնամուն և ստիպել նահանջել:

1920 թ. ապրիլի 25-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ արցախահայության ինտերրոդ համագումարն, որին մասնակցում էին հիմնականում Վարանդայի և Դիզակի ներկայացուցիչները (Խաչենի, Ջրաբերդի և Գյուլիստանի պատգամավորների համագումարը տեղի ունեցավ Մարտակերտում ապրիլի 29-ին):

Թաղավարդում կայացած համագումարը (Նախագահ Ա. Վերոյան, քարտուղար Յ. Երիցյան) որոշեց չեղյալ հայտարարել արցախահայության յոթերորդ համագումարի անունից Ադրբեջանի հետ կնքված ժամանակավոր համաձայնությունը և հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի Հանրապետությանը՝ որպես նրա անբաժան մաս<sup>1</sup>:

Թվում էր՝ արցախահայությունը մոտ է իր երազանքի իրականացմանը՝ վերամիավորմանը մայր հայրենիքին, սակայն տարածաշրջանում տեղի ունեցան քաղաքական աննպաստ փոփոխություններ, մասնավորապես տարածաշրջան վերադարձավ ռուսական գործուղը:

1920 թ. ապրիլին բուլշևիկյան զորքերը մտան Անդրկովկաս, և Ադրբեջանը ապրիլի 28-ին առաջինը հռչակվեց խորհրդային հանրապետություն՝ այժմ էլ փորձելով բուլշևիկյան Ռուսաստանի միջոցով բավարարել իր զավթողական ծրագրերը: Արդեն ապրիլի 29-ին և 30-ին հեղկոմներ են ստեղծվում Շուշիում, Կարյազինոյում և Աղդամում: Շուշիի հեղկոմի նախագահ Է դառնում Սուլթանովը, որը խոր գայրույթ է առաջացնում արցախահայության շրջանում, որոնք բազմիցս բողոքի հեռագրեր են ուղարկում Խորհրդային Ռուսաստանի Ժողովխորհի նախագահ Վ. Ի. Լենինին և Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովին<sup>2</sup>: Մայիսի 14-ին Սուլթանովի ստեղծած հեղկոմը լուծարվում է, իսկ վերջինս ձերբակալվում և տարվում է Բաքու: Նարիմանովի հովանավորությամբ Սուլթանովն այնտեղ ազատվում է պատասխանատվությունից, տեղափոխվում նախ Պարսկաստան, իսկ այնուհետև Թուրքիա:

1920 թ. ապրիլի 30-ին արդեն Խորհրդային Ադրբեջանի արտգործոժողկոմ Մ. Զուսեյնովը Հայաստանի Հանրապետության կառավարությունից պահանջեց զորքերը ետ քաշել Ղարաբաղի և Չանգեզուրի տարածքից, դադարեցնել ազգամիջյան կռիվները՝ հակառակ դեպքում սպառնալով պատերազմական դրություն հայտարարել երկու երկրների միջև<sup>3</sup>:

Մայիսի 1-ին նման պահանջով Հայաստանի կառավարությանը վերջնագիր ներկայացրեց Ադրբեջանը խորհրդայնացրած 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը<sup>4</sup>: 1920 թ. մայիսի 12-ին Շուշի են մտնում 11-րդ կարմիր բանակի 32-րդ դիվիզիայի զորամասերը: Մայիսի 19-ին կարմիր բանակի պատվիրակությունը՝ Ս. Տեր-Գաբրիելյանի գլխավորությամբ, հանդիպում է Դրոյին՝ պահանջելով հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղից:

Մայիսի 24-ին Ավետարանոց գյուղում տեղի ունեցած խորհրդակցությունից հետո, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բախումը կարմիր բանակի հետ կարող է հանգեցնել ծանր հետևանքների, Դրոն որոշում է մայիսի 25-ին հայկական զորամասերը դուրս բերել Ղարաբաղից<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Микаелян В., указ. соч., ст. 146-147:

<sup>2</sup> Տե՛ս Աբրահամյան Յ., Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա, 1917-1923, Երևան, 2003, էջ 199-200:

<sup>3</sup> Տե՛ս Микаелян В., указ. соч., ст. 445:

<sup>4</sup> Տե՛ս Նույն տեղում, էջ 446-447:

<sup>5</sup> Տե՛ս Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը: Սկզբից մինչև մեր օրերը, Երևան 1994, էջ 234:

Մեկ օր անց՝ 1920 թ. մայիսի 26-ին Թաղավարդ գյուղում գումարված արցախահայության տասներորդ համագումարը երկրամասը հայտարարեց խորհրդային, ստեղծվեց Յեղևուճ՝ Ս. Համբարձումյանի նախագահությամբ: Մինչև հունիսի վերջը հեղկումներ ստեղծվում են բոլոր գավառներում և գյուղերում<sup>1</sup>:

Միաժամանակ ստեղծվում է Ղաշտային Ղարաբաղի հեղկում՝ Բ. Վելիբեկովի նախագահությամբ՝ Շուշի կենտրոնով: Հունիսի 16-ին երկու հեղկումները միավորվեցին, կենտրոնը դարձավ Շուշի քաղաքը: Միացյալ հեղկումի նախագահ նշանակվեց Վելիբեկովը, ապա Ա. Կարաևը<sup>2</sup>:

Անհրաժեշտ է նկատել, որ թեև Արցախում խորհրդային կարգեր հաստատվեցին, այնուամենայնիվ, պատմական այս շրջափուլում այն չմիացվեց Ադրբեջանին: Այդ մասին է վկայում նաև 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը, որով Ղարաբաղը, Չանգեզուրը և Նախիջևանը հայտարարվում էին «վիճելի տարածքներ» և ամրագրվում էր, որ խորհրդային զորքերի կողմից դրանց գրավումը «չի կանխալուծում այդ տարածքների հանդեպ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իրավունքների հարցը»<sup>3</sup>:

Իհարկե, թիֆլիսյան այս համաձայնագիրը մեկ այլ կարևոր ենթատեքստ ևս ուներ. Ռուսաստանը չէր ցանկանում «վիճելի տարածքները» զիջել ոչ խորհրդային Հայաստանին և հարցի լուծումը հետաձգում էր մինչև նրա մոտալուստ խորհրդայնացումը: Ուստի ամենևին էլ պատահական չէր Հայաստանի խորհրդայնացման հաջորդ օրն իսկ խորհրդային Ադրբեջանի հայտարարությունը «վիճելի տարածքների» (այդ թվում և Լեռնային Ղարաբաղի) նկատմամբ ունեցած հավակնություններից հրաժարվելու մասին<sup>4</sup>:

Սակայն, բոլշևիկյան ծավալապաշտությանը զուգահեռ մահմեդական Արևելքում ավելի ու ավելի կարևոր տեղ էր հատկացվում «հեղափոխության ջահակիր» Թուրքիային և խորհրդային Ադրբեջանին: Մինչդեռ հայ ժողովրդի ազգային և պետական շահերը չէին համընկնում բոլշևիկյան աշխարհաքաղաքական ծրագրերին և պետք է զոհաբերվեին «համաշխարհային հեղափոխության» շահերին: Այս համատեքստում պետք է դիտարկել նաև 1921 թ. հուլիսի 5-ի հայտնի որոշումը, որի համաձայն Արցախը բռնակցվեց Ադրբեջանին՝ «տնտեսական սերտ կապի» հիմնավորմամբ:

### **Գայանե Հովհաննիսյան** **ԱՐՑԱԽՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՑ (1920 Թ.)**

*Բանալի բառեր՝ Արցախյան հերոսամարտ, ռուսական գործոն, հայ-ադրբեջանական հակամարտություն, Արցախի խորհրդայնացում*

Հոդվածում ներկայացված է Արցախյան հերոսամարտի պատմության 1920 թ. իրադարձությունները: Լուսաբանված է ադրբեջանական կողմի նկրտումները Արցախի նկատմամբ, արցախահայության մղած հերոսական պայքարը ազատության համար, ռազմական բախումները, քաղաքական անցուղարձերը:

<sup>1</sup> Տե՛ս Աբրահամյան Հր., նշվ. աշխ., էջ 207-208:

<sup>2</sup> Տե՛ս Վիրաբյան Ա., Լեռնային Ղարաբաղի սահմանների հիմնահարցը 1917-1923 թթ., Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, Երևան, 2007, էջ 220:

<sup>3</sup> Տե՛ս "Нагорный Карабах в 1918-1923 гг.", Сборник документов и материалов, Ереван, 1992, ст. 574-575.

<sup>4</sup> Տե՛ս «Կոմունիստ», 1920 թ. դեկտեմբերի 7:

Անդրադարձ է կատարվել նաև Արցախի խորհրդայնացմանը և քաղաքական իրադրության փոփոխությանը՝ կապված ռուսական գործոնի տարածաշրջան վերադառնալու հանգամանքի հետ: Ուսումնասիրելով Արցախյան հերոսամարտի այս շրջափուլը կարելի է գալ այն եզրահանգման, որ բոլշևիկների ծավալապաշտությունն և ադրբեջանցիների գավթողական ձգտումները զուգահեյտեցին, ինչն էլ կանխորոշեց իրադարձությունների հետագա ընթացքը հոգուտ խորհրդային Ադրբեջանի:

**Gayane Hovhannisyan**  
**FROM THE HISTORY OF ARTSAKH BATTLE (1920)**

**Keywords:** *Artsakh conflict, Russian factor, Armenian-Azerbaijani conflict, the sovietization of Artsakh*

The article presents the history of the heroic battle in Artsakh in 1920. The territorial claims of Azerbaijan, the heroic struggle of Armenians for freedom, the military clashes and political events are discussed. The article also considers the sovietization of Artsakh and the changing of political situation associated with the return of the Russian factor to the region. Studying this stage of the heroic battle in Artsakh, we can conclude that the expansionism of the Bolsheviks and the aggressive aspirations of the Azerbaijanis coincided, which predetermined the further development of events in favor of Soviet Azerbaijan.

**Гаяне Оганнисян**  
**ИЗ ИСТОРИИ АРЦАХСКОЙ БИТВЫ (1920 ГОД)**

**Ключевые слова:** *Арцахская битва, российский фактор, армяно-азербайджанский конфликт, советизация Арцаха*

В статье представлена история героического сражения в Арцахе в 1920 году. Рассматриваются территориальные претензии Азербайджана к Арцаху, героическая борьба армян за свободу, военные столкновения, политические события. В статье также анализируются процесс советизации Арцаха и изменение политической ситуации, связанной с возвращением российского фактора в регион. Изучая этот этап героического сражения в Арцахе, можно сделать вывод, что экспансионизм большевиков и агрессивные устремления азербайджанцев совпали, что и предопределило дальнейшее развитие событий в пользу Советского Азербайджана.

## ԱՐՄԻՆ Թ. ՎԵՂՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

### ՄԱՆՈՒՇԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Արմին Վեղները լավ էր հասկանում, որ հայ ժողովրդի ցեղասպանությանից վերապրածներին փրկելու համար բացառիկ կարևորություն է ներկայացնում պետականությունը, ուստի որոշակի անդրադարձ է ունեցել այդ խնդրին:

Այսօր, Հայոց ցեղասպանությանից ավելի քան մեկ դար անց, մեր առաջին հանրապետության հիմնադրուման 100 ամյակին և Արցախյան ազատամարտի 30-ամյա անդադրում պայթարի տարեդարձին՝ Արմին Վեղների խոսքը մնում է նույնքան արդիական, որքան այն պահին, երբ՝ Նա դարձավ հայ ժողովրդի որբերգության ականատեսն ու տարեգիրը:

*«...Որևէ ժողովրդի ճակատագիր չի բացահայտում աշխարհի բոլոր դեկավարող երկրների մարդկային ու բարոյական արժեքների խապառ անկումն այնպես, ինչպես այս փոքր ժողովրդի ճակատագիրը...»*,<sup>1</sup> այսպիսին էր Արմին Վեղների գնահատականը: Ականատեսը լինելով մի ամբողջ ժողովրդի տեղահանությանը, հայրենագրկմանն ու սպանդին, Արմին Վեղների համար հայ ժողովրդի կրած տառապանքները դառնում են ցուցիչ աշխարհի տերեր հռչակած երկրների բարոյական անկման, մարդկայնության ու արդարության աստիճանի գնահատման հարցում:

Լինելով գերմանացի զինվորական սպա և գործելով կայսերական Գերմանաիայի գրաքննության պայամաններում, վտանգելով կյանքը, իր ամբողջ ջանքը ներդրեց ազդեցություն ունենալ կանխելու այն հրեշավոր ծրագիրը, որը Նա կոչեց *«ճանապարհ առանց տունդարձի»*:

Հայ ժողովրդի իրավունների պաշտպանության մեջ իր անխնջ պայթարում, Վեղները ցուցաբերեց քաղաքացիական արիություն, իրատեսական գնահատական տվեց տեղի ունեցած իրադարձություններին: Նա պահանջում էր հայ ժողովրդի անվտանգության երաշխիքները՝ ապահովել **հայերին սեփական պետություն ունենալու հաստուտուն պայմաններն ու իրական քայլերը**, Վեղները միայն այդպես էր հնարավոր համարում հայ ժողովրդին խապառ ոչնչացումից փրկելու միակ երաշխիքը:

Նա սոսկ ականատեսը չէր եղել հայոց սպանդին, իրավաբանի մտքի ուժով տվել էր իր քաղաքական գնահատականը տեղի ունեցած որբերգությանը, և Առաջին աշխարհամարտի ավարտից անմիջապես հետո իր ծանրակշիռ վկայություններով, մահվան սպառնաալիքի տակ արված լուսանկարներով գործնականորեն ձեռնամուխ եղավ Գերմանիայում լուսաբանել Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի քնաջնջման քաղաքականությանը: Դա կարևորում էր հենց Գերմանաիայում, քանի որ վերջինս Թուրքիայի կարևորագույն դաշնակիցն էր և մեղսակիցը հայոց ցեղասպանության մեջ: Գերմանացի սպաները Էական, երբեմն նույնիսկ վճռորոշ դեր են խաղացել Մերձավոր և Միջին Արևելքում Օսմանյան կայսրության ծրագրերի իրականացման գործում:

*«Եվրոպայի պարտականությունն է,- գրում է Վեղները, ամենալուրջ ու շահագրգիռ կերպով նպաստել նրան, որ Հայաստանի ճակատագիրը մեծ տերությունների եսասիրական նպատակների ստվերում չմնա, [...] Ամբողջ Եվրոպան, և նաև Գերմանիան դեռևս 1878թ. բեռլինյան վեհաժողովում երաշխավորեցին Հայաստանի ապահովությունն ու անվտանգությունը: Այս խոստումը իրենց*

<sup>1</sup> Rooney, Martin: "Weg ohne Heimkehr". Armin T. Wegner zum 100. Geburtstag. Ein Gedenkschrift. Bremen 1986, էջ 72

շահադիտական քաղաքականության պատճառով մինչև օրս չի իրականացվել: Այս ամենի մեջ Գերմանիայի մեղսակցությունը չնչին չէր, քանի որ պատերազմի ժամանակ Թուրքիայի դաշնակիցն էր»:<sup>1</sup>

Արմին Վեգների փաստագրության մեջ առանձնակի կարևորություն ունի նրա «Բաց նամակը», որը վերնագրված է «Կտակ անապատում, բաց նամակ հյուսիսային Ամերիկայի նախագահ Վուդրո Վիլսոնին՝ հայ ժողովրդին Միջագետքի անապատներ տեղահանելու մասին»: Հիշյալ փաստաթուղթը անգնահատելի է, այն հեղինակի կենդանի վկայություններն են արևմտահայության բռնի տեղահանման ու քնաջնջման, նրանց կրած անլուր տառապանքների մասին. «...ես համարձակվում եմ Ձեզ ներկայացնել թշվառության ու սարսափների այն պատկերները, որոնք տեսել եմ իմ սեփական աչքերով շուրջ երկու տարվա ընթացքում, ինչը երբեք չէի ջնջվի իմ հիշողությունից [...]»: <sup>2</sup>

Այս նամակը հայրենագուրկ ու ցեղասպանությունից մազապուրծ փրկվածների հայրենիք վերադարձի ու իր բնօրրանում հարատև ապահովություն ունենալու Վեգների սրտառուչ կոչն է ու պահանջը: Նա հորդորում է նախագահ Վիլսոնին սատար կանգնել ցեղասպանված ժողովրդի բեկորներին և տալ նրանց սեփական պետություն ունենալու երաշխիքները: Դիմելով նախագահ Վիլսոնին Արմին Վեգները գրում է.

«...Պարոն նախագահ, փրկեք Եվրոպայի պատիվը:

[...] Բոլոր ժամանակների համար անուղղելի սխալ կլիներ, եթե Ռուսաստանի հայկական մարզերը չանջատվեն ընդմիջտ այդ կայսրությունից, որպեսզի այնուհետև միավորվեն Անատոլիայի հայկական նահանգների և Կիլիկիայի հետ որպես մեկ միասնական երկիր՝ ազատ թուրքական տիրապետությունից՝ ելք ունենալով դեպի ծով: [...] Միայն այսպես կարող է հնարավոր դառնալ հատուցումը, իսկ այդ երկու միլիոն գոհերի կորուստը մենք ոչնչով չենք կարող փոխհատուցել»:<sup>3</sup>

Երբ 1919թ. հունվարին Առաջին աշխարհամարտում հաղթած պետությունները պատրաստվում էին Փարիզի խաղաղության վեհաժողովին, որտեղ քննվելու էր նաև Հայաստանի ճակատագիրը, Արմին Վեգները լծված լինելով հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության գործին, անձամբ է փորձել հանձնել իր նամակը Վուդրո Վիլսոնին, որի մասին վկայում է 1970թ. օգոստոսի 17-ին գրված իր մի նամակում, այնտեղ մասնավորապես ասված է. « Հայ ժողովրդի տեղահանության վերաբերյալ 1919 թ. ԱՄՆ-ի նախագահին ուղարկած իմ բաց նամակը գրել եմ որպես կենդանի վկա անապատներ տեղահանված հայ ժողովրդի տառապանքների մասին, այն բոլորի, ինչը անձամբ տեսել եմ Սիրիական անապատներում: «Բեռլինյան օրաթերթ»-ում հրատարակված այդ նամակը փարիզյան բանկացությունների ժամանակ պետք է անձամբ հանձնելի Ամերիկայի նախագահին»:<sup>4</sup>

Արմին Վեգները հրաշալի գիտակցում էր, որ Վիլսոնը ճիշտ հասցեատերն էր, քանի որ նա 1918թ. հունվարին իր հանրահայտ «14 կետից բաղկացած ծրագրում» առաջ էր քաշել ժողովուրդների ինքնորոշման իրավունքը որպես հիմնական սկզբունք՝ Առաջին աշխարհամարտից հետո Եվրոպայի տարածքային և

<sup>1</sup> Meier, Andreas(Hrsg.):Die Austreibung des armenischen Volkes in die Wüste. Ein Lichtbildvortrag (mit einem Essay von Wolfgang Gust), Göttingen 2011; S. 88

<sup>2</sup> Wegner, T. Armin: "Fällst du, umarme auch in die Erde oder der Mann, der das Wort glaubt" Prosa- Lyrik Dokumente Peter Hammer Verlag GmbH,Wuppertal 1974, էջ 164

<sup>3</sup> Wegner, T. Armin: "Fällst du, umarme auch in die Erde oder der Mann, der das Wort glaubt" Prosa- Lyrik Dokumente Peter Hammer Verlag GmbH,Wuppertal 1974, էջ 170-171.

<sup>4</sup> Ստեփան Ստեփանյան : «Արմին Վեգները և Էրնստ Վերները Հայոց ցեղասպանության մասին», Երևան, 1996, էջ 10; Տե՛ս նաև DLA, (Գերմանիայի գրականության արխիվ) Wegner Briefe

քաղաքական վերակազմավորման համար: Փարիզի խաղաղության կոնֆերանսը 1919թ. հունվարի 19-ին ընդունել էր բանաձև, որում նախատեսվում էր Անտանտի երկրներից մեկին հանձնել Հայաստանի ժամանակավոր կառավարման մանդատը: Բոլորի հայացքներն ուղղված էին դեպի ԱՄՆ-ը, որը հետագա ամիսների ընթացքում ստուգում էր նման մանդատ ստանալու հնարավորությունը:

Հատկանշական է, որ Վեգները հենց այն փուլում, երբ Փարիզում քննարկվում էր Արևելյան և Արևմտյան Հայաստանին ներառող ազգային պետություն ստեղծելու հարցը, ակտիվ հանրային քննարկումների մեջ մտավ: Այդ հանգամանքն, անշուշտ վկայություն է Վեգների բարձր քաղաքական գիտակցության և հայկական շահերի պաշտպանության գործում նրա հանձնառության մասին:

Պատահական չէ, որ Վեգները խիստ կարևորում է եղեռնից փրկված հայության համար 1918թ. Առաջին Հանրապետության ստեղծումը և ամբաստանում մեծ տերություններին Նորաստեղծ Հայոց պետականությանը չստարելու համար.

*«... բավական չէ, որ հազարավոր վերքերից արյունաքամ եղած հայ ժողովրդին դեռ պատերազմի միջոցին ստիպում էիք ռազամական կամավորներ տրամադրել, երիտասարդ Հայակական Հանրապետությանն էլ խոչնդոտում էիք եղեռնից մազապուրծ եղած գաղթականներին տեղափոխելու իրենց հայրենի վայրերը»:<sup>1</sup>*

Հայկական հարցի լուծումն այլ ընթացք ունեցավ, քան Վեգները կարող էր հուսալ, հետևապես նրա գործադրած բոլոր ջանքերն անցան ապարդյուն:

Այս պատմական անցքերին հաջորդած ամենամեծ իրադարձությունը 1921թ. Բեռլինում տեղի ունեցած Սողոմոն Թեյլեբյանի վրեժխնդրական գործողությունն էր, որին անմիջապես և սուր արձագանքեց Արմին Վեգները: Գնահատելով և կարևորելով դատավճռի արդարացման որոշումը, նա արձանագրեց. «... այս դատավարությունը հակառակ քաղաքականությունից հեռու պահելու (Գերմանիայի Մ.Մ.) բոլոր ջանքներին, վերածվում է համամարդկային տրիբունալի, իսկ նրա վճիռը՝ համաշխարհային պատմական նշանակություն ունեցող դատավճռի...»:<sup>2</sup>

Մեկ տարի անց, ԱՄՆ նախագահի չիրականացրած խոստումներից հուսախաբ, լքված Նոր ցատումով ու պահանջով 1922թ. տպագրեց իր «Ճիշ Արարատից» իրապարակախոսությունը, այն պատկերավոր խոսքի ուժով գրված կոչ է և պատգամ, որտեղ դատապարտում է Արևմտյան տերությունների հանցավոր անտարբերությունն ու դիմակազերծում նրանց քաղաքական և դիվանագիտական խարդավանքները. «Դա Եվրոպան է, որը մշտապես ձգտում է մի անիրավությունը փոխել մյուսով, և չի թաքցնում իր ուրախությունն այնպիսի հաջողության առթիվ, որը ձեռք է բերվել տասնյակ հազարավոր անմեղ կանանց և երեխաների արյան գնով, Եվրոպան, որն ավելի շուտ մի շահեկան գործարք կկնքի նրանց խոշտանգողների հետ, քան տեղահանված մարդկային ցեղի խլյակներին կփրկի կործանումից»:<sup>3</sup>

Ամփոփենք: Արմին Վեգները Հայկական Հարցի լուծումով էր պայմանավորում հայ ժողովրդի անվտանգության երաշխիքների ապահովումը: Դեռ ավելին, 1919թ. Բեռլինի «Ուրանիայի» իր պատմական ելուբում գտնում էր, որ «... Հայկական Հարցը մարդկության հարցն է, վերջին տասնամյակների բոլոր պատերազմների իրական դրդաապատճառները չեն վերանա, մինչև որ Հայկական Հարցը չլուծվի, և այդ տառապանքների անիրավությունը չհատուցվի»:<sup>4</sup>

<sup>1</sup> Ալբերտ Մուշեղյան և Ռիմա Մուշեղյան «Ճանապարհ առանց տունդարձի, նահատակություն նամականերում» ԶԶ ԳԱԱ «Գիտություն» իրատարակություն Երևան 2000թ. էջ 91:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 78:

<sup>3</sup> Ալբերտ Մուշեղյան և Ռիմա Մուշեղյան «Ճանապարհ առանց տունդարձի, նահատակություն նամականերում» ԶԶ ԳԱԱ «Գիտություն» իրատարակություն Երևան 2000թ. 91:

<sup>4</sup> Meier, Andreas, (Hrsg.), Armin T. Wegner " Die Austreibung des armenischen Volkes in die Wüste" Ein Lichtbildvortrag (mit einem Essay von Wolfgang Gust), Göttingen 2011, էջ 88.

Իսկ 1925 թ., երբ «Լոզանի կոնֆերանս» իրողություն էր արդեն և Հայկական Հարցը մտել էր փակուղի, Արմին Վեգները չէր դադարեցնում իր պայքարը, և նրա խոսքն այսօր, ոչ միայն ունի արդիականություն, այլև գրեթե մարգարեություն է, ինչին մենք մոտ մեկ դար անց ոչ միայն ականատեսն ենք, այլև մեր կյանքով համոզվում ենք նրա խոսքի ճշմարտացիության մեջ. «... ամբողջ աշխարհի խաղաղությունը չի կարող ապահովված լինել, եթե այս «ցեղը» իր ազատությունը չգտնի, և իր գոյության հավատագիրը չունենա, որն իր հողեղեն ու երկրային իրավունքն է: Իսկ այդ իրավունքը այս ժողովուրդը ձեռք է բերել իր անլուր տառապանքների գնով: Հայկական հարցը Լոզանի կոնֆերանսում էլ իր լուծումը չգտնելով՝ հայ ժողովրդի համար նշանակում է շարունակական տառապանք, որը վտանգ է, ոչ միայն այս պահի, այլև հետագա տասնամյակերի համար, ոչ միայն Մերձավոր Արևելքի, այլև հարատև վտանգ է ամբողջ աշխարհի խաղաղության համար»:<sup>1</sup>

Հետևապես՝ այսօր էլ Հայկական (չլուծված) հարցի անբաժանելի մասն է «Արցախյան հիմնախնդիրը», որը մեր նորօրյա 30-ամյա ազատամարտով դառնում է «խորհրդանիշ և իրականություն»:

Մեր գոյապայքարում հաղթանակի հաստատականության խորհրդանիշն է Արցախը, խորհրդանիշ՝ հույսի ու արժանապատվության, հայ ոգու հավաքական ուժի և հավատի, ազգային վեհ նպատակների: Հայոց պետականության վերականգման մեր երազանքի մեջ իրական նվաճում է Արցախը, և վերջապես՝ հայ ժողովրդի անվտանգության ու վեգներյան խոսքով՝ մեր «գոյության հավաստագիրն է»:

Ապագային միտված մեր պետականաշինության գործընթացում մենք Արցախյան ազատամարտով արդեն շրջել ենք մեր պատմության նահանջի էջը, հասել մի գիտակցության, որ «Աշխարհ չի փոխվել, բայց փոխվել ենք մենք»: 2016-ի ապրիլին մեր ժողովրդի ու մեր պետականության դեմ սանձազերծած պատերազմում մնացինք մենք և այդ «չփոփոխված աշխարհը»:

Նման գնահատականը մեզանում մի նոր գիտակցական մակարդակի վկայությունն է, որն ենթադրում է այսուհետ սեփական ուժերով սեփական ճակատագրի տնօրինում: Այդ իմաստով, Արցախը իր սրբազան պայքարով, վերստին դառնում խորհրդանիշ և իրականություն:

Ինչպես Առաջին աշխարհամարտից հետո Արմին Վեգները ցեղասպանված հայ ժողովրդի գոյատևման երաշխիքը համարում էր հայոց պետականության վերականգնումը, այսօր էլ արցախահայության ապագան պայամանավորված է Արցախի Հանրապետության գոյությամբ և ամրությամբ, անընդհատ զարգացումով և հզորացումով:

## **Մանուշակ Մարկոսյան** **ԱՐՄԻՆ Թ. ՎԵԳՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

**Բանալի բառեր՝ Արմին Վեգներ, հայոց ցեղասպանություն, հայ ժողովրդի իրավունքներ, ականատեսի վկայություններ, սեփական պետություն, անվտանգության երաշխիքներ**

Հայոց ցեղասպանության ականատես Արմին Վեգները լինելով գերմանացի գիմպորական սպա և գործելով կայսերական Գերմանիայի զրաբնության պայմաններում, հայ ժողովրդի իրավունքների պաշտպանության մեջ իր անխնջ

<sup>1</sup> Rooney, Martin: "Weg ohne Heimkehr". Armin T. Wegner zum 100. Geburtstag. Ein Gedenkschrift. Bremen 1986, էջ 73

պայթարում ցուցաբերեց քաղաքացիական արիություն, իրատեսական գնահատական տվեց տեղի ունեցած ողբերգությանը, նա շարունակ պահանջում էր հայ ժողովրդի անվտանգության երաշխիքները՝ ապահովել հայերին սեփական պետություն ունենալու իրական քայլերն ու հաստատուն պայմանները: Արմին Վեգները լավ էր հասկանում, որ հայ ժողովրդի ցեղասպանությունից վերապրածներին փրկելու միակ երաշխիքը սեփական ու անվտանգ պետություն ունենալն է:

Արմին Վեգները հայկական հարցի լուծումով էր պայմանավորում հայ ժողովրդի անվտանգության երաշխիքներն ու կայուն ապագան:

**Manushak Markosyan**  
**ARMIN T. WEGNER AND ARMENIAN STATEHOOD**

**Key words:** *Armin Wegner, Armenian Genocide, the rights of Armenian people, testimonies of witness, own state, security guarantees*

A witness of the Armenian Genocide Armin Wegner, being a German military officer and acting under the censorship of Kaiser Germany in the matter of protecting the rights of the Armenian people, demonstrated civil courage in his relentless struggle and gave a realistic assessment of this tragedy. He constantly demanded guarantees for the security of the Armenian people that is ensuring real conditions and a stable environment for them to have their own state. Armin Wegner was well aware that the only guarantee to save the survivors of the Armenian Genocide is to have our own and secure state.

By the decision of the Armenian question, Armin Wegner conditioned the security guarantees and the stable future of the Armenian people.

**Манушак Маркосян**  
**АРМИН Т. ВЕГНЕР И АРМЯНСКАЯ ГОСУДАРСТВЕННОСТЬ**

**Ключевые слова:** *Армин Вегнер, Геноцид армян, права армянского народа, показания очевидца, собственное государство, гарантии безопасности*

Свидетель Армянского геноцида Армин Вегнер, будучи немецким военным офицером и действуя под эгидой кайзеровской Германии в вопросе защиты прав армянского народа, в своей неустанной борьбе проявил гражданское мужество, дал реалистичную оценку этой трагедии. Он постоянно требовал гарантий безопасности для армянского народа, т. е. обеспечения реальных мер и стабильных условий для того, чтобы армяне имели собственное государство. Армин Вегнер прекрасно понимал, что единственной гарантией спасения выживших во время геноцида армян – это иметь собственное и безопасное государство.

Решением Армянского вопроса Армин Вегнер обуславливал гарантии безопасности и стабильного будущего армянского народа.



**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**JURISPRUDENCE**  
**ЮРИСПРУДЕНЦИЯ**

**ИСТОРИЧЕСКИЙ ОПЫТ И УРОКИ АРМЯНСКОЙ  
ГОСУДАРСТВЕННОСТИ – ВЗГЛЯД СО СТОРОНЫ**

**ОТТО ЛЮХТЕРХАНДТ**

**I. Некоторые общие предварительные примечания**

1. С тех пор, когда национальное государство как общий и всемирный тип современной государственности сформировалось и победоносно развивалось в Европе на основе свершившейся Великой французской революции, т. е. с конца 18-ого века, является фактом, что существование народа как общности людей, соединившихся языком, религией, культурой, историей, ментальностью и сожительством на общей территории, как правило, устойчиво обеспечено только тогда, когда народ распоряжается собственным суверенным и независимым государством, то есть если народ превратился в политическую общность людей, в нацию. Данный процесс, как известно, является реализацией принципа самоопределения народа и в истории, как правило, сопровождается применением силы, нередко – кровопролитной освободительной борьбой. Историю армянского народа с 19-ого века можно воспринимать как подтверждение и доказательство данного тезиса.

2. Я считаю парадоксальным и в тоже время глубоко трагичным, что армянский народ, являясь одной из древнейших культурных наций на свете, если вообще не самой древней вместе с китайским народом культурной нацией сегодняшнего мира, был оторван от общего развития национальной государственности в Европе до начала 20-ого века. Более и хуже того: ровно сто лет тому назад армянский народ после геноцида в Западной Армении был на грани уничтожения и в восточной Армении, когда турецкие войска вторгались в Эриванскую губернию и чуть ли не осуществили там очередной геноцид. Существование армянской нации тогда висело на волоске!

Можно назвать почти чудом то, что сегодня армянский народ распоряжается собственным, суверенным и независимым государством и является признанным членом международного ООНовского сообщества государств. Каким образом такое стало возможным?

Данное развитие стало возможным, потому что армянская нация, вопреки всем серьезным препятствиям и благодаря огромным собственным усилиям, сумела подключить себя к общему, всемирному развитию национальной государственности в 20-ом веке.

3. На мой взгляд, было три главных фактора, которые способствовали армянскому народу добиться данного удивительного исторического успеха:

*Во-первых*, сохранение национально-культурного своеобразия и идентичности, а также национального объединения народа вокруг Армянской Апостольской церкви. Армянская церковь объединила под своей крышей фактически всех армян на протяжении тысячелетнего отсутствия центральной армянской государственности и сопротивлялась в двух направлениях – против политического и религиозного чужого, иноземного господства – Османского ига в Западной Армении и Персидского ига в Восточной Армении.

*Во-вторых*, оккупация и аннексия Южного Кавказа Российской Империей и вытеснение персидского господства из Восточной Армении на основе Туркманчайского договора (1828), а также Османского господства из части Западной Армении в лице Карской области на основе Берлинского договора (1878).

Огромное принципиальное значение имело создание "Армянской области" (1828 г.) на основе Эриванского ханства и Ордубадского уезда. Правда, область просуществовала только до 1840 года, но политико-психологическое влияние его учреждения было большим. В контексте тогдашнего первого общего движения за национальную государственность на Балканах и в особенности с учетом успешной борьбы греков за свою независимость, "Армянская область" стала символом возможной национальной армянской автономии и даже национального армянского государства у подножия Арарата.

*В-третьих*, Эриванская губерния и Карская область до начала 20-ого века являлись основой национальной сплоченности и консолидации армянского народа в масштабе Восточной Армении, но с определенным влиянием на Восточную Анатолию Османской империи, а значит, на известные шесть Армянских вилайетов. Так называемый "Армянский вопрос" в последней четверти 19-ого века едва вошел в повестку дня дипломатии европейских держав (Россия, Великобритания, Франция, Австро-Венгрия, Германия), в начале как вопрос защиты армян как национального меньшинства (см. ст. 16 договора Сан-Стефано, ст. 61 Берлинского договора), однако накануне Первой мировой войны явно укрепилась тенденция к дискуссии о предоставлении армянам в Османской империи определенной степени территориальной автономии.

Но все инициативы и устремления по созданию армянской автономии в Османской империи кончились безрезультатно, а геноцид 1915-16 гг. вовсе поставил крест на надежды реализовать их в дальнейшем.

## **II. Опыт государственности армянского народа в контексте Первой Республики Армения**

4. Армянская Демократическая Республика, провозглашенная 28-ого мая 1918 года в Тифлисе, смогла зародиться по нескольким причинам: во-первых, потому, что Российская Империя после Февральской революции и Октябрьского переворота распалась; во-вторых, потому, что попытка учредить Закавказскую федерацию оказалась неудачной; в-третьих, потому, что Грузия и Азербайджан также провозгласили свою государственную самостоятельность и независимость. Но важнейшим фактором было то, что армянское население в масштабе Эриванской губернии на протяжении полувека выросло до такой степени, что армянские политические руководители сочли оправданным риск провозгласить независимое

государство в данном территориальном масштабе. Тем не менее в то хаотичное время такой шаг был немногим больше, чем торжественное политическое обещание свободного, самостоятельного национального будущего.

5. Да, армянский народ в тот период был в высокой степени единой нации, однако этот фактор был только необходимым, но не достаточным условием существования национального государства! Непременной предпосылкой крепкого национального государства и его обеспеченного существования является его экономическая, финансовая и социальная консолидация. Ясно, что для этого необходимо спокойное, сбалансированное, устойчивое развитие. И в этом заключается очередной момент трагичности в новейшей истории армянского народа: полное отсутствие всех необходимых предпосылок для спокойного внутреннего развития!

Молодая армянская Республика была в слишком слабом, хрупком состоянии, чтобы успешно и продолжительно сопротивляться имперским устремлениям своих мощных соседей, несмотря на их тогдашнюю (но только временную!) слабость. Тем не менее национальным армянским частям бывшей царской армии удался великий подвиг – нанести решительный и сокрушительный удар турецким интервентам в мае 1918 года у Сардарапата, то есть непосредственно в период до провозглашения независимости, и таким образом спасти Восточную Армению от гибели и нового геноцида.

Но национальных сил сопротивления не хватило, чтобы защищать национальный суверенитет и независимость против Красной Армии молодой большевистской Советской России.

### **III. Опыт государственности армянского народа в рамках Советского Союза**

6. Жизнь в Советском Союзе и по принципам, и реалиям Советской власти имела для армянского народа амбивалентные последствия: с одной стороны, армянский народ потерял свою государственную независимость и возможность политического самоопределения, с другой стороны, сохранил в лице "Армянской Советской Социалистической Республики" (АрмССР) определенную форму и уровень национальной государственности, хотя только как формальный член-субъект Союза, являвшегося на самом деле жестким централизованно-диктаторским, тоталитарным государством. С одной стороны, армянский народ вынужден был по воле Сталина примириться с тем, что его национальная государственность не была реализована в территориальном составе Еревана, Карабаха и Нахичевани, а только в части бывшей Эриванской губернии, с другой стороны, в рамках АрмССР армянскому народу были обеспечены возрастающая стабильность, консолидация и широкое развитие по многим измерениям.

*Во-первых*, значительно вырос национально-этнический гомогенитет населения республики; происходил последовательный процесс консолидации национальной армянской государственности в масштабе ССР;

*во-вторых*, началось целеустремленное, устойчивое развитие экономики республики, с акцентом на создание высоких технологических предприятий и промышленности;

*в-третьих*, несмотря на жестко одностороннюю фиксацию и ориентировку в идеологическом плане на Марксизм-Ленинизм, имелась возможность для широкого развертывания и углубленного исследования в течение десятилетий корней национальной истории и культуры армянского народа;

*в-четвёртых*, постепенное развитие инфраструктуры республики, сфер транспорта, энергоснабжения, водного хозяйства, мелиорации и т.д.;

*в-пятых*, сохранение и даже развитие связей с общинами армянской диаспоры по всему миру, включая Ближний Восток, Европу и Америку.

7. В отношении к советскому периоду можно вкратце резюмировать: под эгидой семидесятилетней Советской власти армянский народ достиг значимого укрепления и развития своей национальной государственности и добился таким образом условий жизни, крайне необходимых для того, чтобы претендовать на устойчивый и крепкий фундамент суверенного, независимого государства.

Сегодняшнее суверенное, независимое армянское национальное государство является детищем и следствием Советской эпохи, советской модернизации.

#### **IV. Опыт Республики Армения с момента воссоздания государственной независимости**

8. Национальная государственность Советской Армении к концу Советского Союза (декабрь 1991) была укреплена настолько и в столь высокой степени, что кризисное положение АрмССР из-за краха политической и экономической системы советской власти не смогло уничтожить национальную государственность. Ситуация к периоду распада Союза 1990/1991 гг. и ситуация к концу существования Российской империи 1917/1918 гг. в контексте положения на Южном Кавказе существенно разнились.

*Во-первых*, Советский Союз погиб не из-за поражения в войне, а по причине внутренней слабости, из-за его нерешенных структуральных социально-экономических проблем. Вследствие этого бывшие союзные республики стояли перед такими же фундаментальными проблемами и необходимостью их скорейшего решения. Все они были заняты адаптацией к данной, практически неожиданной новой ситуации, то есть пытались стать настоящим, реально суверенным и независимым национальным государством. Поэтому все они появлялись тогда слабыми и сосредоточенными на самих себя, включая и Россию.

*Во-вторых*, единственная традиционно враждебная в отношении Республики Армения региональная держава – Турция – была политически связана членством в некоторых тогда доминирующих международных организациях: ОБСЕ, Совет Европы, НАТО, Европейское сообщество (назовем только самые важные) и обладала в данной ситуации ограниченными политическими возможностями для вмешательства в южнокавказские дела.

*В-третьих*, данная политическая ситуация и расклад геополитических сил на Южном Кавказе в конце 80-ых годов существенно отличались от ситуации в конце Первой мировой войны, и именно это пошло на пользу Республике Армения, несмотря на ее явную слабость почти по всем главным параметрам экономики и политики. В отличие от той ситуации, когда Российская империя обрушилась, Турция в начале 90-ых гг. не смогла использовать слабость Республики Армения и политически шантажировать ее в союзе с Республикой Азербайджан, к примеру, попытаться заставить Армению передать Сюник Азербайджану. Также не смогли установить контроль над Нагорным Карабахом и изгнать армян с этих исконно армянских территорий. Руки и Турции, и Азербайджана, как членов СБСЕ (ОБСЕ), были связаны политически и юридически, то есть международным правом.

*В-четвертых*, немаловажным фактором тогда в пользу Республики Армения стало все еще продолжающееся присутствие на Южном Кавказе стратегических и обычных войск Советской Армии именно на территориях и Армении, и Азербайджана, а также договоренность Республики Армения с Российской Федерацией о совместном контроле внешних границ бывшего СССР в отношении Турции.

Вследствие всех этих взаимосвязанных и взаимозависимых обстоятельств и факторов Республика Армения выиграла тогда самое главное и драгоценное – время, чтобы преодолеть свой экзистенциальный кризис после краха Союза, учредить свою независимую государственность, стабилизировать свое внутреннее положение и консолидировать общество.

#### **V. Опыт внутреннего развития Республики Армения и в особенности развития конституционного строя при независимости, то есть после принятия первой Конституции 5-го июля 1995 года**

9. Реальный политический строй Республики Армения по окончании переходного периода был таким: Президент Республики Армения как глава государства по Конституции 1995-го года распоряжался существенными, сильными полномочиями в сфере *внешних* отношений и *внешней* политики, но он не был главой исполнительной власти. В сфере внутренних дел и внутренней политики главным субъектом по Конституции должен был быть Кабинет министров под руководством Премьер-министра. Но вопреки этому, Президент контролировал полностью и внутреннюю политику, и правительство. Этому способствовал целый комплект *функциональных* полномочий и рычагов в отношении к Правительству.

*Во-первых*, Премьер-министр и его кабинет зависели от политического доверия Президента. Президент был вправе по своему свободному политическому усмотрению уволить Правительство почти в любое время. А при образовании Правительства Президент вместе с Парламентом был главным актором.

*Во-вторых*, чтобы решения Правительства смогли вступить в действие, Президент должен был их утверждать, иными словами, без согласия Президента Премьер-министр и Правительство не были в состоянии действовать самостоятельно.

*В-третьих*, Президент был вправе председательствовать на заседаниях Правительства и таким образом существенно влиял на его политический курс.

*В-четвёртых*, не существовало положения в Конституции о том, что Президент как глава республики должен был беспартийным и политически нейтральным. Таким образом, Президент был вправе быть даже главой политической партии и влиять на Парламент, а через него – косвенно и на Кабинет министров.

Вследствие всего этого получилась парадоксальная картина реальной политической системы Республики Армения и ее конституционного порядка: на первый, поверхностный взгляд можно было думать, что в Республике Армения существовала смешанная система правления, то есть президентско-парламентская республика. Но на самом деле (и это даже по положениям Конституции, как показано выше!) система правления была сугубо президентской, более того, из-за фактически неограниченной власти Президента она была даже сверх-президентской республикой!

10. Данный разрыв между внешним, формальным профилем Конституции и реальной системой власти был очень проблематичным. Да, плохим, потому что из него вытекали некоторые отрицательные последствия, отрицательные как для общего понимания и правильного восприятия Конституции гражданами и общественностью, так и для развития парламентаризма и его институтов, а именно – для политических партий и гражданского общества, и, наконец, для развития политической культуры в республике на основе принципов правового демократического государства.

11. Что касается конституционного развития Республики Армения после принятия Конституции 1995-го года, то можно сказать, что и ревизия Конституции в 2005-ом году, и ревизия в 2015-ом году одинаково преследовали цель преодолеть этот разрыв между авторитарной президентской системой, реально действующей в республике с одной стороны, и формально признанными Конституцией принципами правового демократического государства – с другой. Преодоление произошло упразднением президентской системы правления и ее замещением парламентской формой правления в ее чистом виде.

Парламентская республика отличается, как известно, тем, что политическая власть полностью принадлежит Парламенту и Кабинету министров под руководством Премьер-министра, избираемого Парламентом, то есть большинством депутатов. Президент республики в данной системе больше не избирается народом, а Парламентом, и должность Президента превращается в политически нейтральный конституционный орган, не располагающий почти никакими властными полномочиями. Как глава государства Президент выполняет только представительные и интегрирующие функции.

12. И наконец, составными ключевыми частями данной системы правления являются сильный, сугубо независимый Конституционный суд, а также независимые авторитетные суды общей и специальной юрисдикции. А вместе суды находятся на страже свободы граждан, их организаций и прав человека.

Одно из главных преимуществ парламентской системы правления, на мой взгляд, очевидно: в отличие от президентской формы правления, она укрепляет через Парламент политические партии и иные институты гражданского общества. Это случается, конечно, не сразу, а только через определенное время. А здесь ключевую роль играют регулярные, очередные свободные, честные и справедливые выборы.

Я очень надеюсь, что Республика Армения спокойно и достойно преодолееет свой сегодняшний политический кризис и в дальнейшем накопит положительный опыт с новой Конституцией от 6-ого декабря 2015-го года.

**Отто Люхтерхандт**  
**ИСТОРИЧЕСКИЙ ОПЫТ И УРОКИ АРМЯНСКОЙ**  
**ГОСУДАРСТВЕННОСТИ – ВЗГЛЯД СО СТОРОНЫ**

**Ключевые слова:** *государственность, Республика Армения, Армянская Апостольская Церковь, нация, Президент, Парламент, Конституция*

Данная статья представляет краткий очерк становления и развития армянской государственности в новейший период мировой истории, с начала 20-ого века до наших дней. Автором проанализированы социо-культурные факторы и социальные институты армянского народа, способствовавшие преодолению исторических трудностей и после длительного периода потери государственности обретению ее в лице трех Армянских Республик.

Статья не обошла стороной и внешнеполитические аспекты государственного строительства в Армении, а именно: создание отдельной армянской административной единицы в составе Российской империи, ставшей катализатором сплочения и дальнейшего формирования армянской нации, которая в дальнейшем восстановила независимую государственность, а также геополитические реалии, повлиявшие на расстановку сил в Закавказье и позитивно сказавшиеся на закреплении правового статуса армянства в регионе.

Автор проводит также краткий анализ системы правления Третьей Армянской Республики и ее эволюции вплоть до последних конституционных изменений и характеристики парламентской демократии в Армении.

**Օտտո Լուխտերհանդտ**

**ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈՐՁՆ ՈՒ ԴԱՍԵՐԸ. ՀԱՅԱՅԶ ԿՈՂԵԻՑ**

**Բանալի բառեր՝** *պետականություն, Հայաստանի Հանրապետություն, Հայ Առաքելական Եկեղեցի, ազգ, նախագահ, խորհրդարան, Սահմանադրություն*

Սույն հոդվածը ներկայացնում է համաշխարհային պատմության նորագույն շրջանում հայոց պետականության կազմավորման և զարգացման համառոտ ակնարկ՝ սկսած 20-րդ դարասկզբից մինչև մեր օրերը: Հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել սոցիալ-մշակութային այն գործոններն ու սոցիալական ինստիտուտները, որոնք նպաստեցին հայերի՝ պատմական դժվարությունների հաղթահարմանն ու երկարատև դադարից հետո հայկական պետականության վերականգնմանը՝ ի դեմս Հայաստանի Երեք հանրապետությունների:

Հոդվածում չեն շրջանցվել նաև Հայաստանում պետականաշինության արտաքին քաղաքական գործոններին՝ մասնավորապես Ռուսական Կայսրությունում հայկական վարչատարածքային միավորի ստեղծմանը, որը կատալիզատոր հանդիսացավ հայ ժողովրդի համախմբման և հետագա ազգակերտման համար՝ վերջնական հանգրվանում հանգեցնելով հայոց անկախ պետականության վերականգնմանը, ինչպես նաև աշխարհաքաղաքական իրողությունները, որոնք ազդեցին Անդրակովկասում ուժերի հարաբերակցության վրա և դրական նպաստ բերեցին տարածաշրջանում հայ ժողովրդի իրավական կարգավիճակի ամրագրմանը:

Հոդվածի հեղինակը նաև հակիրճ կերպով անդրադարձ է կատարել Հայաստանի Երրորդ Հանրապետության պետական կառավարման համակարգին և դրա էվոլյուցիային՝ ընդհուպ մինչև սահմանադրական վերջին փոփոխությունների և Հայաստանում խորհրդարանական ժողովրդավարության վերլուծությունը:

**Otto Luchterhandt**

**HISTORICAL EXPERIENCE AND LESSONS OF THE ARMENIAN STATEHOOD:  
A VIEW FROM OUTSIDE**

**Key words:** *statehood, Republic of Armenia, Armenian Apostolic Church, nation, President, parliament, Constitution*

This article is dedicated to the brief overview of formation and development of the Armenian statehood in modern world history, starting from the 20<sup>th</sup> century until nowadays. The author has analysed social and cultural factors, as well as social institutions which contributed to overcoming historical difficulties by Armenians and restoration of the Armenian statehood after a long stand in the person of Three Armenian Republics.

The article also touches upon external political factors of state-building in Armenia such as formation of the Armenian administrative-territorial unit within Russian Empire which catalysed unification and nation-building of Armenians resulting in bringing about restoration of Armenian statehood, as well as geopolitical realities influencing the configuration of political forces in Transcaucasia which appeared to be positive for endorsement of the legal status of the Armenian people in the region.

The author of the article sheds a light on the system of government and its evolution in the Third Armenian Republic as well touching upon the issues of recent constitutional changes and parliamentary democracy in Armenia



## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾՈՆ<sup>1</sup>

### ՎԿԵՏԻՔ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Չնայած Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության Սահմանադրության ընդունման անհրաժեշտության մասին խոսվել է դեռևս Հանրապետության իռադիկալ առաջին իսկ օրերին, սակայն այն ընդունվել է մոտ 15 տարի անց՝ 2006թ. դեկտեմբերի 10-ին: Արցախի Հանրապետության գործող, այսինքն՝ երկրորդ Սահմանադրությունն էլ ընդունվել է 2017թ. փետրվարի 20-ին:

Ի տարբերություն մի շարք այլ երկրների<sup>2</sup>, Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չէ երկրի Սահմանադրությունը պաշտոնապես մեկնաբանելու լիազորություն, որը սովորաբար վերապահվում է սահմանադրական դատարանին:

Արցախի Հանրապետության ոչ առաջին, ոչ երկրորդ Սահմանադրությունները չեն ունեցել և ներկայումս էլ դեռ չունեն մեկնաբանություններ, որի անհրաժեշտությունն առավել քան պահանջված է հասարակության տարբեր շերտերում: Սկստի առնելով այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետությունում Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ինստիտուտ գոյություն չունի, նշված ինդիքին ինչ-որ չափով լուծում տալու նպատակով արցախյան իրավական իրականության մեջ առաջին անգամ նախաձեռնել և իրականացնում ենք «Արցախի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ» նախագիծը, որի շրջանակներում էլ կպատրաստվի երկրի Հիմնական օրենքի դոկտրինալ մեկնաբանությունները:

Տ.Խաբրիևայի կարծիքով՝ դոկտրինալ մեկնաբանություն ասելով հասկանում ենք իրավական ակտերի, իրավական նորմերի իմաստի և նպատակների գիտական պարզաբանում, որը տրվում է իրավունքի տեսական որոնումների, գիտական վերլուծության արդյունքում: Ձևական տեսանկյունից իրավունքի դոկտրինալ մեկնաբանությունը կարելի է կապել գիտական աստիճան ունեցող կամ բարձրագույն իրավաբանական ուսումնական հաստատություններում դասախոսական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից իրավական նորմերի պարզաբանման հետ<sup>3</sup>:

Դ.Բասանզովն առանձնացնում է դոկտրինալ սահմանադրական մեկնաբանության մի շարք ակնհայտ արտահայտված հատկանիշներ. 1. ոչ պաշտոնական և ոչ պարտադիր բնույթը; 2. մեկնաբանվող ակտերի անհամաստորադասությունը; 3. մեկնաբանվող ակտի ձևին ներկայացվող խիստ պահանջների բացակայությունը; 4. մեկնաբանվող ակտերի և նորմի միջև ձևական կապի բացակայությունը; 5. մեկնաբանման արդյունքների ազդեցության հնարավորությունը նորմաստեղծության և իրավակիրառ պրակտիկայի վրա; 6. մեկնաբանման եղանակների և կիրառվող մեթոդների բազմազանությունը; 7.

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ №ARCK 17-002 գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> Մասնավորապես, հետխորհրդային տարածաշրջանի երկրները՝ Ռուսաստանի Դաշնությունը, Բելառուսը, Ղազախստանը, Մոլդովան, Ուկրաինան և այլն:

<sup>3</sup> Хабриева Т.Я. Толкование конституции Российской Федерации (теория и практика), Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Москва, 1997, с. 151.

Նորմաստեղծության Նկատմամբ առաջադեմ (մոդելային) բնույթը; 8. իրավագիտակցության և իրավական մշակույթի հետ սերտ փոխկապվածությունը<sup>1</sup>:

Նման աշխատանքի իրականացմամբ նպատակ ենք դրել, որպեսզի հասարակության մեջ Սահմանադրությունն ընկալվի ոչ թե որպես սովորական փաստաթուղթ, այլ, առաջին հերթին, արժեհամակարգ, որի հիման վրա կառուցված է պետությունը և նրա առանձին բաղադրիչների միջև փոխհարաբերությունները: Իսկ Սահմանադրության արժեքը ճիշտ գնահատելու համար պետք է նախ և առաջ այն ճիշտ ընկալել, հասկանալ և դարձնել սեփական վարքագծի անբաժանելի մասը: Այս գաղափարի իրականացմամբ հնարավոր կդառնա ամրապնդել **«Սահմանադրություն - սահմանադրության մեկնաբանություն - իրավագիտակից քաղաքացի - սահմանադրականություն»** շղթան, այսինքն, ունենալով Սահմանադրություն, պետք է պատրաստել Սահմանադրության մեկնաբանությունները, որը կիրառելի կլինի հասարակության բոլոր շերտերում՝ սկսած դպրոցից մինչև պետական մարմիններ, այդ աշխատության շնորհիվ քաղաքացիների մոտ որոշ չափով կբարձրանա իրավագիտակցության մակարդակը, ինչն էլ ենթադրում է Սահմանադրության դրույթների կենսագործման արդյունքում երկրում սահմանադրականության ձևավորում և հաստատում:

Հատկանշական է, որ դեռևս ԼՂՀ 2006թ. Սահմանադրության ընդունման նախօրեին մեր կողմից նախաձեռնվել է սահմանադրական քարոզչություն՝ նպատակ ունենալով քաղաքացիներին ներկայացնել երկրի Հիմնական օրենքի բովանդակությունը, ընդունման նպատակը, և անհաժեշտության դեպքում պատասխանել առաջադրված հարցերին<sup>2</sup>: Սա, թերևս, Սահմանադրության գաղափարական (դաստիարակչական) գործառույթի դրսևորումներից էր, ինչը կարևոր նշանակություն ունեցավ քաղաքացիների մոտ Հիմնական օրենքի ընկալունակության բարձրացման գործում:

Որպեսզի վեր հանենք Սահմանադրության մեկնաբանությունների և պետականության ամրապնդման միջև կապը, անհրաժեշտ ենք համարում, նախ, բացահայտել վերջիններիս բովանդակությունը, ինչից հետո կանդրադառնանք դրանց փոխկապվածությանն ու զարգացման հիմնահարցերին:

Մարդու իրավունքների իրացման և պաշտպանության կառուցակարգի արդյունավետության բարձրացման համար ակտիվ դերակատարություն կարող է ունենալ իրավական գիտելիքներով օժտված անձը, ով ճանաչում և գիտակցում է Սահմանադրության նորմերի գործողության անհրաժեշտությունն ու կարևորությունը: Ուստի իրավունքի իրացումը մի գործընթաց է, որի փուլերից մեկը դրա մեկնաբանությունն է, տվյալ պարագայում՝ Սահմանադրության մեկնաբանությունը:

Ակադեմիկոս Վլ.Ներսեսյանցի կարծիքով՝ «Իրավունքի նորմի մեկնաբանումը դրա գործողության կոնկրետ տվյալ պայմաններում իրագործման ենթակա իրական բովանդակության պարզաբանումը և բացատրումն է»<sup>3</sup>:

Իրավունքի կամ օրենքի մեկնաբանում ասելով կարելի է հասկանալ մտածողական աշխատանք, որն ուղղված է տերմինների և արտահայտությունների նշանակությունն ու իմաստը բացահայտելու եղանակով իրավունքի նորմի բովանդակության հաստատմանը:

Մեկնաբանման նպատակն է ճիշտ և միատեսակ հասկանալ իրավունքի նորմը՝ դրանով իսկ վերացնելով անհստակություններն ու դրանց կիրառման

<sup>1</sup> Басангов Д. А. Доктринальное конституционное толкование в деятельности Конституционного Суда РФ, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Москва, 2004, с. 38.

<sup>2</sup> Հարությունյան Ավ., Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները, Երևան, Անտարես, 2016, 38-39 էջեր:

<sup>3</sup> Нерсисянц В. Общая теория права и государства: учебник, М., Норма, ИНФРА-М, 2012, с. 495.

ընթացքում հնարավոր սխալները: Իրավական նորմերը մեկնաբանման արդյունքում դառնում են գործնականում կիրառման համար պատրաստ և հանդիսանում են օրինականության ամրապնդման միջոցներից մեկը: Ընդ որում, իրավական նորմը մեկնաբանելիս անհրաժեշտ է լավ տիրապետել հասարակական կյանքի բոլոր կողմերին, հասկանալ հասարակական հարաբերությունների առանձնահատկություններն ու յուրահատկությունները:

Հիշատակման է արժանի պրոֆեսոր Գ.Յարությունյանի այն տեսակետը, ըստ որի՝ «աշխարհում գործող բոլոր սահմանադրական դատարաններից առավել արդյունավետ սահմանադրական վերահսկողություն են իրականացնում այն ինստիտուտները, որոնք լայն իրավասություններ ունեն Սահմանադրության պաշտոնական մեկնաբանման ճանապարհով երաշխավորելու սահմանադրականության կայունությունը»<sup>1</sup>: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի Հանրապետությունում դատական սահմանադրական վերահսկողությունն իր մեջ պարունակում է ամերիկյան և առավել շատ եվրոպական մոդելի տարրեր, իսկ վերջինիս առանձնահատկություններից մեկը Սահմանադրության մեկնաբանումն է, սահմանադրական օրենսդիրը ԱՀ գերագույն դատարանին պետք է օժտեր նման լիազորությամբ ևս և առավել քան համոզված ենք, որ նման հարցերով դիմումների քանակը համեմատաբար ավելի շատ կլիներ<sup>2</sup>:

«Իրավական ակտերի մասին» ԼՀՀ օրենքի 87 հոդվածը կոչվում է «Իրավական ակտի մեկնաբանումը», որի վերլուծությունից անհասկանալի է, թե ի՞նչ է իրենից ներկայացնում մեկնաբանումը և ո՞վ է լիազորված տալու մեկնաբանություն: Իսկ ահա 88 հոդվածում, որը կոչվում է «Իրավական ակտի պարզաբանումը», ներկայացված է պարզաբանման էությունը, պաշտոնական պարզաբանում տալու լիազորություն ունեցող սուբյեկտների ցանկը և ընթացակարգը, որտեղ, ի դեպ, օգտագործվում է «պաշտոնական պարզաբանում» ձևակերպումը, որը սակայն բացակայում է մեկնաբանման պարագայում:

Նշենք, որ գործնականում եղել են դեպքեր, երբ պաշտոնական պարզաբանման լիազորությամբ օժտված որոշ սուբյեկտներ (օրինակ, ԱՀ արդարադատության, ԱՀ ֆինանսների և Էկոնոմիկայի, ԱՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարությունները, ԱՀ ԿԱ հարկային պետական ծառայությունը, ԱՀ քաղաքացիական ծառայությունը և այլն) ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա պարզաբանումներ են տալիս իրավական ակտի դրույթների վերաբերյալ, ինչը դիմողների իրավագիտակցության բարձրացման ևս մեկ լրացուցիչ խթան է<sup>3</sup>:

Самым ярким и наиболее известным из всех иных источников и плодов верного армянского правосознания источником средневекового армянского духовного правосознания стал «Армянский Судебник» Мхитара Гоша 1184 года («Մխիթարյայ Գոշի Դատաստանագիրք Յայնց»). По сути, он являлся первым проектом Конституции Духовного Дома Армян. Учёный монах и богослов М. Гош (1130-2015)<sup>1</sup> родился в равнинном (нижнем или дольном) Карабахе в г. Гандзаке (арм. «գանձ» или перс. – «гянджа» - сокровищница), обучался в Киликии и при правлении братьев Закарэ и Иванэ Закаряннов (Захаридов)<sup>2</sup> работал в Хачене<sup>3</sup> (Нагорном Карабахе или Арцахе в монастырской крепости князя Асан-Джалялна Оромашен близ нынешнего села Атерк («Յաթերք») Мардакертского района НКР). Он написал «Судебник», как главный труд всей своей жизни, по просьбе Католикоса Степаноса. Мхитар Гош («арм. – «խիռու», т.е. молодой человек без щетины на лице»)<sup>4</sup> был приверженцем конституционно-монархической формы государственного правления, при котором государь должен был помнить о временном характере всякой земной власти и социального порядка, а также следовать требованиям надлежащей и непреходящей идеи права для поддержания такого правопорядка, исправления и спасения грешных душ человеческих в вечной жизни в Царстве Небесном.

Поэтому святой монах, богослов и учитель (вардапет) М.Гош был основательно против всякого вмешательства публичных светских властей в дела армянской церкви, но считал необходимым инициативное участие духовных лиц во всех (законодательных, политических и иных) делах общества и государства согласно принципу подчинения всего временного земного вечному Небесному. По верному мнению Св. М.Гоша, именно несправедливость, беззаконие и произвол светских властей против вверенного им Богом народа приводят к беспорядку и разорению армянского народа, который рассеивается по всему миру и становится лёгкой добычей иноземных мироправителей (шахов, халифов, султанов) и иных своевольных и склонных к неправомерному насилию вооружённых иноземных захватчиков исторических земель Армении как самостоятельного государства<sup>5</sup>.

«Армянский Судебник» 1184 года было своеобразным систематизированным «богочинением (истинной теорией и философией права<sup>6</sup>) о суде царей, князей и всех судей» и состояло из пространного введения, одиннадцати глав, двухсот пятидесяти

<sup>1</sup> См.: Осипян Б.А. Первый проект «Конституции Духовного Дома Армян» 1184 года, или «Армянский Судебник» совечного и святого учёного богослова Мхитара Гоша //Право и жизнь. 2016. № 7. № 8. № 9. С. 227-258. Армянский Судебник («Մխիթարյայ Գոշի Դատաստանագիրք Յայնց»). Ереван., 1954. Гош М. Притчи. Басни («Առակք»). Ереван, 1951. Гош М. Гош М. Албанская хроника (История Агванка XI-XII века). Баку, 1960.

<sup>2</sup> См.: Закарэ был амирспасаларом (главнокомандующим вооружёнными силами Грузии), а Иванэ был атабеком (воспитателем наследника грузинского престола и регентом) при дворе грузинской царицы Тамары (1184-1213) //Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 234.

<sup>3</sup> См.: Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 233.

<sup>4</sup> См.: Мелик-Тангян Н. Армянское церковное (каноническое) право: сборник документов и комментариев. Шуши, 1903. Книга 1. С. 776-778.

<sup>5</sup> См.: Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 253. На армянском языке См.: Բորիս Օսիպյան «Յափրոտեանակից Գոշի Դատանագիրքը» //«Գիտություն» ՀՀ ԳԱԱ, 1995. № 5-9.

<sup>6</sup> См.: Осипян Б.А. Смысл истинной теории и философии права //Вопросы правоведения. 2010. № 2. С. 59-77.

четырёх статей, расположенных в двух частях: «Церковные каноны» из ста двадцати четырёх статей и «Светские законы» из ста тридцати статей. Этот важный духовно-правовой документ, к сожалению, не был принят ни армянской церковью, ни светскими публичными властями. Сам автор «Судебника» 1184 года М. Гош также не был надлежащим образом воспринят армянской церковью и «неотзывчивым народом» и потому при своей земной жизни нуждался в самом необходимом, о чём он говорил в Введении «Судебника». Даже его мощи (кости) после его смерти были по сугубо мирским и политическим причинам шесть-семь раз перезахоронены в разных местах по причине его неприятия тогдашними доморощенными армянскими архиереями, всякого уровня провинциальными и местными священнослужителями, а также удельными князьями, считавшими его самовольным «выскочкой» и недостаточно сведущим в церковных и государственных делах<sup>1</sup>.

Примечательно и то, что при жизни святой М.Гош не желал и не имел каких-либо официальных церковных или национально-государственных наград и медалей, и только спустя много столетий после его смерти были официально осознаны, признаны и учреждены армянской церковью и государством высшие награды в области правоправедения, названные его святым именем «Орден Святого Мхитара Гоша». В Священном Писании в этой связи написано: «Иисус же сказал им: «не бывает пророк без чести, разве только в отечестве своём и в доме своём, И не совершил там многих чудес по неверию их»<sup>2</sup>. в «Армянском Судебнике» 1184 года немалых выдающихся научно-творческих составляющих элементов будущего основательного и сравнительного правоправедения, которые и донныне не использованы даже самыми развитыми современными «правовыми государствами» мира. Ясно и совершенно бесспорно только одно, что на надлежащее и верное развитие армянского национального правосознания и социальный правопорядок существенное влияние оказывало передовое средневековое европейское правосознание и правомерные светские законы иных христианских народов и государств<sup>3</sup>.

Весьма важно заметить то, что в чётко продуманной, трёхчастной и последовательной структуре «Армянского Судебника» 1184 года («Введение», «Церковные каноны» и «Светские законы»), как нам представляется, кроется основной и коренной смысл всей весьма долгой истории армянского правосознания, так как его автор рассматривал надлежащую и непреходящую идею права не только и даже не столько в установлении долговременного и устойчивого общественного правопорядка в Армении («Светские законы»)<sup>4</sup>, но также смог охватить далёкую перспективу и конечное предназначение этого временного земного правопорядка в возможном освобождении от греха и спасении души каждого верующего армянина-христианина в вечной жизни в Царстве Небесном («Церковные каноны»)<sup>5</sup>. Иными словами, Мхитар Гош в своём богоучении о праве и правопорядке сначала главной и конечной целью всякого временного и земного социального правопорядка, как некой промежуточной цели, поставил конечную цель спасения грешной души всякого верующего и разумного

<sup>1</sup> См.: Осипян Б.А. Семья, церковь и государство как сотрудники Господа Бога //Право и жизнь. 2006. № (102) 12. С. 47-56.

<sup>2</sup> Библия. Новый Завет. Матфей, 13:57-58.

<sup>3</sup> См.: Самуэлян Х. История древнеармянского права. Ереван, 1939. С. 330.

<sup>4</sup> См.: Осипян Б.А. Надлежащий социальный правопорядок как первооснова и конечная цель действия человеческого правосознания и правомерного закона //«Чёрные дыры» в российском законодательстве. 2016. № 1. С. 24-32.

<sup>5</sup> См.: Осипян Б.А. Право как верный путь к порядку и душеспасению, или направления действия надлежащей и непреходящей идеи права //Религия и право. 2015. № 3. С. 28-38. Два главных вектора действия идеи права и правомерного закона //Вестник развития науки и образования. 2015. № 4. С. 4-20.

человека в вечной жизни. В этом, пожалуй, и состоит глубокий исторический смысл истинного правосознания всего армянского народа<sup>1</sup>.

Ещё одним известным источником средневекового армянского правосознания и светского законодательства является Армянский Судебник Смбата Спарапета («Гундстабля»<sup>2</sup> - от старофранцузского «connetable») (1208-1276) был написан в 1265 году в Армянском Киликийском государстве (1080-1375) представителем княжеского рода Константина («пайла» – лат. - («bajulus»), т.е. советника царя) Гетумяна – гундстабля (начальника конницы) Киликийского царя Левона II Рубеняна, был братом Киликийского царя Гетума I, зятя царя Левона II. Предки Смбата-Спарапета вместе с сотнями тысяч армян-беженцев за свои нетрадиционные верования (движение павликиан и мессалианцев) переехали из Гандзака (Великой Армении) в Киликию ещё в XI веке. На армянское национальное правосознание существенное влияние оказывало средневековое европейское правосознание и светские законы иных христианских народов и государств<sup>3</sup>.

В основном «Судебник», который состоял из предисловия, восьми глав (глава I «О царях и их детях, «ишханах» (князьях), рыцарях, священнослужителях и других, подвластных царю» (статьи 1-117); глава II «Наследственное право»; глава III «Семейное право», глава IV «О залоговом и ином имущественном праве», глава V «Торговое право»; глава VI «Право завещания»; глава VII «Право рабовладения» и глава VIII «Право на возмещение за ущерб и убытки») и 198 статей, был написан «для упрочения армянской святой церкви и благоденствия страны», представлял собой взаимствование с старофранцузского и латинского языков на древнеармянский язык («грабар») известных «Антиохийских Ассизов» «Антиохийского княжества» (1098-1268). Согласно «Введению» «Судебника» 1265 года царь считался временным наместником Бога на земле. При этом согласно статье 28 «Судебника» светская власть преобладала над властью церковной, поскольку князь мог совершить замену имеющего церковную должность духовного лица (епископа).

Более поздним источником армянского правосознания и закона являлся «Судебник Астраханских армян» («Մշակույթի և Գործարարական Հայրենիք») 1747 года. Он был составлен по личному почину Елиазара Григоряна, Григора Кампаняна и Саргиса, сына Оганеса, непосредственно после издания Указа императрицы Екатерины II от 17 сентября 1746 года о предоставлении армянам Российской Империи и является своеобразным памятником истории армянского правосознания<sup>4</sup>. «Судебник» состоит из трёх частей и 1135 статей: первая часть состоит из 23 глав с 940 статьями гражданского и уголовного права; вторая часть состоит из 15 глав с 107 статьями о полномочиях судей и прокуроров; третья часть состоит из 14 глав с 88 статьями о принципах судопроизводства на территории Астрахани, Кизляра, Моздока, Нор-Нахичевана на Дону и т.д., куда из Персии и Турции недавно массово переселились армяне и образовали везде «самоуправляемую армянскую слободу». Согласно этому «Судебнику» «Астраханский особый Армянский суд» действовал в соответствии с нормами армянского законодательства, обычаев и традиций<sup>5</sup>.

«Астраханский Судебник» 1773 года так же, как и «Армянский Судебник» учёного богослова (вардапета) М.Гоша 1184 года, предьявлял к армянским судьям

<sup>1</sup> См.: Осипян Б.А. Правосознание человека и общественный правопорядок //Научная мысль. 2016. № 2. С. 108-124. Истинное правосознание человека как верное отражение смысла надлежащей и непреходящей идеи права и основа правомерного закона //Вестник развития науки и образования. 2016. № 6. С. 94-116.

<sup>2</sup> См.: Смбат Спарапет (Гундстабль). Судебник. Ереван, 1958.

<sup>3</sup> См.: Самуэлян Х. История древнеармянского права. Ереван, 1939. С. 330.

<sup>4</sup> См.: Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 641-645.

<sup>5</sup> См.: Астраханский Судебник армян. Астрахань, 1896.

такие высокие духовно-нравственные требования, как обладание надлежащим правосознанием, чувством милосердия и справедливости, богоданного высокого человеческого достоинства, добросовестности и честности, правдолюбия и беспристрастности (нелицеприятности), личной смелости и неподкупности, искусности в понимании и толковании законов и обычаев, духовного призвания, профессионального предназначения и компетентности, практической подготовленности, опытности и особого долготерпения судей и прокуроров при судебном расследовании того или иного гражданско-правового спора или уголовного дела<sup>1</sup>.

Последующими известными памятниками истории верного армянского правосознания и закона были такие, как «Западня честолубия» («Յրրոզիւթ Փշոնսց») и проект Конституции Армении 1773 года («Армянское уложение законов для управления страной армянской», состоящее из 415 статей) Шаамира Шаамиряна (вышла в свет в индийском г. Мадрасе), были составлены также при содействии и соавторстве таких соратников автора, как Иосиф Эмин и Мовсес Баграмян (в России больше известен как Моисей Варламов) из Карабаха<sup>2</sup>. В Предисловии данного проекта Конституции Армении называли себя «малыми и смиренными служителями страны армянской, прежде всего перед Богом и людьми, ...ничего для себя лично не желая, ни власти, ни богатства, ни славы, но всецело руководствуясь любовью к своему народу и к стране своей»<sup>3</sup>.

По этому проекту Конституции Армении предполагаемое Армянское государство должно было возглавляться и управляться богобязненным и добросовестным руководителем (королём, президентом или первым министром-варчапетом) королевства или республики, который имел бы христиано-армянское происхождение («Քրիստոնէտիւի») с конституционно-монархическими полномочиями: «Помни, государь мой, ...что ты, как помазанник Божий, поставлен десницей Его для блага твоего государства. ...Помни, что не народ создан для тебя, а ты избран Провидением для твоего народа, благо и свобода которого – твоя свобода. Бог создал всех одинаково свободными с тем, чтобы они управлялись хорошими законами, одинаково справедливыми для богатого и для бедного...Основная причина гибели армянской государственности произвол царей и феодалов Армении»<sup>4</sup>.

17 марта 1863 года благодаря нарастающему национально-освободительному движению нового поколения армян, получивших европейское образование (особенно во Франции после просветительской революции 1848 года) в Османской Турции была составлена и принята «Национальная Конституция армян». Эта Конституция состояла из Преамбулы («Основные принципы»), пяти глав («Центральное национальное управление» (содержит в себе 84 статьи о выборах и отставке Константинопольского Патриарха, его должностных полномочиях, канцелярии, Национальном Духовном Собрании, Судебном совете, Национальном общем собрании, выборах духовных и мирских депутатов путём тайного голосования), «Общие правила собраний и советов», «Национальный налог», «Национальное провинциальное (местное) управление», «Пересмотр Конституции»), которые были изложены в различных разделах и параграфах, состоящих, в общем, из 99 статей. Этот документ оставил существенный

<sup>1</sup> См.: Бастамян В. Судебник Мхитара Гоша: юридическое изыскание //Журнал «Порц». 1879. № 6. С. 25, 28, 31.

<sup>2</sup> См.: Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 552-553.

<sup>3</sup> См.: Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 570, 584-640.

<sup>4</sup> См.: Шаамирян Ш. Западня честолубия. Мадрас, 1775; Тифлис, 1913. С. 362, 373. Также: Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 562-563.. Баграмян М. Новая книга, называемая увещанием. Мадрас, 1772. С. 51.

след в истории развития армянского правосознания, так как в первых трёх параграфах «Основных принципов» Национальной Конституции Армян Османской Империи 1863 года содержались такие важные правомерные идеи, как взаимосвязанность прав и обязанностей личности и народа, сохранение чистоты христианского вероисповедания, добросовестная забота о развитии духовного, нравственного, умственного и культурного уровня и материального благосостояния армянского народа<sup>1</sup>.

Все последующие исторические памятники армянского правосознания XX века в основном, к сожалению, приходятся на период после революционного и насильственного установления в Армении безбожной и неправомерной публичной власти большевиков и их «советов», которые вместо богоданной надлежщей и непреходящей идеи права и правомерного закона руководствовались лишь своим богопротивным и противоправным марксистско-ленинским «революционным правосознанием»<sup>2</sup>, а также бездуховными, бессовестными, неправомерными идеологическими суевериями, страхами, недоразумениями и предрассудками, безбожными, безжизненными, выдуманнными и противоправными социалистическими и коммунистическими принципами, атеистическим «революционным правосознанием» и бессовестными «внутренними убеждениями»<sup>3</sup>.

В конце затянувшегося и долгого застоя и на седьмом и восьмом году начавшейся идеологической перестройки и гласности были приняты «Декларация о независимости Республики Армения от 21 сентября 1990 года и «Декларация о провозглашении независимости Нагорного-Карабахской Республики» от 2 сентября 1991 года, в составлении которого приложил своё правосознание и руку автор этих строк<sup>4</sup>. Спустя три с половиной после окончательного распада бывшего Советского Союза была принята первая национально-государственная Конституция РА 1995 года, в которой были заложены политико-правовые идеи и начала нового Армянского государства, но без должного почтения имени Высшего Суверена, Законодателя, Правителя и Судьи – Господа Бога. Даже после существенного изменения 6 декабря 2015 года Конституция РА, к сожалению, так и не приобрела должных духовно-правовых качеств, ценностей, целей, принципов, имеющих под собой теоретическую и идейно-концептуальную основу, поскольку оказалась сугубо «светской», «рыночно-демократической», и потому не совсем правомерной, целесообразной. Поэтому, на наш взгляд, эта обновлённая, но не имеющая глубокого и широкого духовно-правового основания, Конституция РА 2015 года, в ближайшее время должна быть полностью преобразована и заменена основательно новым конституционным проектом в одиночку составленной мной в декабре 1991 года, «Конституцией Духовного Дома Армян» («Սահմանադրություն Հոգեվոր Հայաստանի») <sup>5</sup>.

<sup>1</sup> См.: Авакян Р.О. Памятники армянского права. Ереван, 2000. С. 741.

<sup>2</sup> См.: Осипян Б.А. Политико-правовые и идеологические концепции как основание формирования государственно-конституционной системы общества // Государство и право. 2009. № 7. С. 61-71. Правомерный закон и законодательный произвол // Адвокат. 2009. № 7. С. 83-88.

<sup>3</sup> См.: Осипян Б.А. Правовое значение действия доброй совести человека // «Чёрные дыры» в российском законодательстве. 2016. № 2. С. 10-18. Роль правосознания и совести российских судей при выявлении истины и полной картины рассматриваемых дел и принятии правомерных и целесообразных решений и приговоров // Закон-Аналитика, 2017. № 7. <http://www.zakon.kz/4866332-rol-pravosoznaniya-i-sovesti.html>

<sup>4</sup> В то время по личному поручению премьер-министра Республики Армения Вазгена Манукяна и несмотря на грозившую нам серьёзную опасность вместе с директором научного центра при Минюсте РА Мартином Зильфугаряном и зам. Министра оборона РА Вааном Ширханяном прилетели на военном вертолёте в село Колатак, а затем в сопровождении всех первых лиц руководства Нагорного Карабаха приехали в г. Степанакерт, где в течение нескольких дней сначала составили и затем официально приняли данную Декларацию о провозглашении независимости Нагорного Карабаха.

<sup>5</sup> См.: Осипян Б.А. Необходимость конституционных преобразований в Республике Армения // Представительная власть XXI век. 2008. № 7. С. 6-12.

Эта будущая одухотворённая новая Конституция армянского народа должна содержать в себе всю мудрость и все добрые духовно-правовые и исторические корни и плоды верного и надлежащего армянского народного правосознания, неизменные и полезные христианско-правовые идеи, ценности, цели и принципы, институты и функции, а также многовековые правомерные и целесообразные обычаи и традиции самостоятельного, миролюбивого<sup>1</sup>, созидательного и трудолюбивого армянского народа, который через временный земной правопорядок всегда стремился к освобождению от всякого зла и спасения своей бессмертной грешной души в вечной жизни в Царстве Небесном. Аминь.

**Борис Осипян**

## **СМЫСЛ ИСТОРИИ АРМЯНСКОГО ПРАВОСОЗНАНИЯ**

**Ключевые слова:** *духовно-правовой смысл истории армянского правосознания, каноническое право и светский закон, национальная государственность армянского народа, исторические памятники армянского правосознания*

В своей статье автор посредством рассмотрения некоторых наиболее важных и известных исторических памятников армянского правосознания, образцов канонического права и светского закона Армянской Апостольской Церкви (начиная с IV века по XIX век) раскрывает духовно-правовой смысл и социальное значение этих документов для перспективного и успешного развития национальной государственности армянского народа.

**Բորիս Օսիպյան**

## **ՀԱՅՈՑ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԸ**

**Բանալի բառեր՝** *հայոց իրավագիտակցության պատմության հոգևոր և իրավական իմաստը, կանոնական իրավունք և աշխարհիկ օրենք, հայ ժողովրդի ազգային պետականություն, հայոց իրավագիտակցության պատմական հուշարձաններ*

Իր հոդվածում հեղինակը հայոց իրավագիտակցության առավել կարևոր և հայտնի պատմական հուշարձանների, Հայ Առաքելական Եկեղեցու (4-րդ դարից մինչև 19-րդ դար) կանոնական իրավունքի նմուշների և աշխարհիկ օրենքի ուսումնասիրման միջոցով բացահայտում է այժ փաստաթղթերի ներկայիս հոգևոր-իրավական իմաստը և սոցիալական նշանակությունը հայ ժողովրդի ազգային պետականության հեռանկարային և հաջող զարգացման համար:

<sup>1</sup> См.: Осипян Б.А. Конституционные гарантии международной безопасности //Конституционное и муниципальное право. МГУ. 2005. № 5. С. 10-13. Правовые основы международной безопасности //Международное право и международные организации / International Law and International Organizations. — 2014. - № 2. - С. 245-254.

**Boris Osipyan****THE ESSENCE OF THE ARMENIANS LEGAL CONSCIOUSNESS**

**Keywords:** *the essence of the history of the Armenians legal consciousness, Canonical law and worldly rules, national statehood of the Armenian people, historical monuments of the Armenians legal consciousness*

In his article the author through survey of the most important historical monuments of the Armenians legal consciousness and secular laws of the Armenian Apostolic Church (since IV century through XIX century A.D.) reveals the always acting spiritual and legal essence of the basic documents for perspective and successful development of the national statehood of the Armenian people.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԹԱՎՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԻԾԸ

### ԱՐՏԱՇԵՍ ԽԱՆԱԹՅԱՆ

Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունը» արմատապես փոխել է Հայաստանի ներքաղաքական իրավիճակը՝ զարկ տալով ինստիտուցիոնալ փոփոխությունների բարդ և տևական գործընթացին:

Ընդհանրապես, ցանկացած արմատական քաղաքական վերափոխում իրենից ներկայացնում է բարդ և բազմաշերտ գործընթաց, որն առնչվում է հասարակության և պետության հիմնասյունը հանդիսացող ինստիտուտներին (քաղաքական համակարգ, տնտեսական հարաբերություններ, արժեքային համակարգ և այլն): Բացառություն չէ նաև «թավշյա հեղափոխությունը», որը ոչ թե ավարտվել է մայիսյան իշխանափոխումից, այլ շարունակվում է՝ պլեբիսցիտար-հեղափոխական կառավարումից աստիճանաբար անցնելով իշխանավարման ինստիտուցիոնալ մակարդակի: Մինևս ժամանակ առայժմ հստակ չէ, թե կառուցակարգային մակարդակում ինչ գործնական ուղեկիշեր է որդեգրել նոր կամ «ժամանակավոր» կառավարությունը, ինչ մասշտաբի փոփոխությունների հետ գործ ունի հայ հասարակությունը, ինչպիսի հանգուցալուծում կունենա այս պրոցեսը. կգրանցվի «հեղափոխության» վերջնական հաղթանակ, թե մենք ականատես կլինենք հայկական թերմիդորի կամ յակոբինյան տեռորի, որն աղերս չի ունենա ի սկզբանե հռչակված ժողովրդավարական կարգախոսների հետ: Այս ամենի պատասխանը կտան ժամանակը և այն մասնագիտորեն ուսումնասիրող պատմագիտությունը: Մինչդեռ, քաղաքական գործընթացներն իրավական և քաղաքական մոդելավորման ենթարկող սահմանադրագետներն ու քաղաքագետները «հեղափոխության» այս հանգրվանում կարող են միայն սահմանել իրավիճակի ինստիտուցիոնալ ուրվագիծը և վերանալով անձերից՝ գնահատել պետական ինստիտուտների և քաղաքական համակարգի ներկայիս վիճակն ու զարգացման միտումները, ինչից զգալիորեն կախված է նաև «թավշյա» պրոցեսի նույնպիսի թավշյա և բարեհաջող ավարտը:

### Ապստամբություն, թե՞ հեղափոխություն

Նախ՝ պատասխանենք հետևյալ շատ կարևոր հարցին. արդյո՞ք տեղի ունեցածը հեղափոխություն էր, թե՞ ապստամբություն: Հաշվի առնելով, որ երկու դեպքում էլ ժողովրդական լայն զանգվածներն ունեն կարևորագույն դերակատարում՝ հաճախ կարող է հստակ չլինել ծավալվող գործընթացի բնույթը և դրա դասակարգման նշանակությունը: Մինչդեռ, քաղաքական պրոցեսների որակական գնահատումն ու դասակարգումն ունի շատ կոնկրետ քաղաքական և իրավական հետևանքներ:

Եվ այսպես. և՛ հեղափոխության, և՛ ապստամբության ժամանակ ժողովրդի սահմանադրական և քաղաքական դերակատարման հիմքը և գործընթացի լեգիտիմացման հիմնական աղբյուրը ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածն է, որը հռչակում է իշխանության պատկանելը ժողովրդին և քրեականացնում է իշխանության յուրացումը որևէ անհատի կամ կազմակերպության կողմից: Սրանով ապստամբության և հեղափոխության նմանություններն ավարտվում են: Ապստամբության հիմնական թիրախն իշխող անձն է կամ վարչախումբը, ում կառավարման իրավաչափությունը ժողովուրդը վիճարկում է: Պատճառները կարող են լինել տարբեր՝ ընտրությունների կեղծումից մինչև իշխանությունների վարած ոչ



ժողովրդավարական կամ հասարակության լայն շերտերի շահերից չբխող պետական քաղաքականությունը: Մինևուն ժամանակ ապստամբության առաջնորդները, ովքեր գործում են ժողովրդի աջակցությամբ, իրենց առջև չեն դնում հասարակական հարաբերությունների գործող մոդելի փոփոխության հրամայական. լինի դա տնտեսական հարաբերությունների կացութաձևի փոփոխություն, օրինակ՝ կապիտալիզմից անցում սոցիալիզմի կամ պետության կողմից կարգավորվող ազատ շուկայի կամ ազգային հարցի նկատմամբ պետության վերաբերմունքի վերանայում, ասենք, ազգայնական գաղափարախոսության և արժեհամակարգի որդեգրում և այլն: Այսինքն՝ ապստամբության ժամանակ կամա թե ակամա ընդունվում է, որ հասարակության և պետության սահմանադրաիրավական ընդհանուր մոդելը ճիշտ է, սակայն փոփոխության է ենթակա դրա իմպլեմենտացումը և իմպլեմենտացնող վարչախումբը:

Ի հակառակ ապստամբության՝ հեղափոխությունը գալիս է «սրբելու» և՛ հասարակության ու պետության գործող կառուցակարգը, և՛ դրա տնտեսական, քաղաքական և իրավական հիմքերը: Այդու, մենք գործ ունենք ամեն ինչ մաքուր էջից (clean slate) սկսող նոր վերնախավի հետ, որը վերանայում է հասարակության կենսագոյի ամբողջ *modus vivendi*-ն:<sup>1</sup> Որպես ամենաթարմ ազգային օրինակ բերենք 1988-1991թ. հայոց համազգային շարժումը, որը, թեև պաշտոնապես չի կոչվում «հեղափոխություն», սակայն, իրավամբ, հեղափոխություն էր, քանի որ դրա թիրախը միանգամից մի քանի հեղափոխական փոփոխություններ էին՝ Հայաստանի անկախության ձեռքբերում, միակուսակցական ամբողջատիրության վերացում և ժողովրդավարական հանրապետության ստեղծում ու սոցիալիզմից անցում կապիտալիզմի՝ որպես նախորդիվ նշված քաղաքական փոփոխությունների տնտեսական հենք:

Հեղափոխության և ապստամբության տարբերակումն ունի հստակ քաղաքական և իրավական հետևանքներ: Նախ՝ հանրային սպասելիքների զենեքացումը պետք է հենվի նրա վրա, թե ինչ են «խոստացել» «փողոցը» ղեկավարող առաջնորդները, որն է նրանց քաղաքական օրակարգը և, ըստ այդմ, հասարակության տարբեր շերտեր կարող են որոշել իրենց քաղաքական նախապատվությունները և արտահայտել դրանք ընտրությունների ժամանակ՝ ձայնը տալով ապստամբության առաջնորդներին կամ այլ քաղաքական ուժերի:

«Ապստամբություն, թե՞ հեղափոխություն» տարբերակումը կարևոր է նաև տարվող ժողովրդական պրոցեսի խաղաղ և անցնցում բնույթն ու եզրափակումն ապահովելու համար, քանի որ իշխող առաջնորդն ու նրան սատարող քաղաքական վերնախավը ժողովրդական առաջնորդներից ստանում են համապատասխան քաղաքական ազդակներ իրենց հետագա քաղաքական և անձնական ճակատագրի վերաբերյալ, ինչն ուղղակի ազդեցություն ունի երկու ուղիների՝ ժողովրդական զանգվածներին ընդառաջ գնալու և հրաժարական տալու կամ ցույցերն ուժով ճնշելու միջև կողմնորոշվելու համար:

«Թավշյա հեղափոխության» պարագայում ակնհայտ է նորընտիր վարչապետին և իշխող կուսակցությանը հեռացնելու «հեղափոխականների» քաղաքական օրակարգը, որը դրսևորվեց բողոքի ցույցերի շարունակմամբ մինչև վարչապետի հրաժարականը և ժողովրդի թեկնածուին խորհրդարանի կողմից վարչապետ նշանակելը: Ինչ վերաբերում է նորաստեղծ կառավարության հետագա ծրագրերին, ապա դրանք բավարար չափով հստակ չեն. հարցեր են առաջանում նախատեսվող փոփոխությունների թիրախայնության, մասշտաբայնության, հասարակության և պետության գործառնման կառուցակարգի սկզբունքների

<sup>1</sup> Հեղափոխության և ապստամբության մասին ավելի մանրամասն տե՛ս Խալաթյան Ա. Ժողովրդի ապստամբության իրավունքը, 2017, <http://aiisa.am/ourexperts/publication/226>

պահպանման և այլ օրախնդիր պրոբլեմների վերաբերյալ: Ուստի՝ առայժմ կարող ենք եզրահանգել, որ տեղի է ունեցել ժողովրդական ապստամբություն, որի հստակ պահանջն է եղել իշխող վարչախմբի հեռացումը: Իհարկե, չի բացառվում, որ հետագա զարգացումները և արտահերթ ընտրությունների արդյունքում ձևավորված իշխանության գործողությունները հանգեցնեն հասարակության կառուցվածքի, տնտեսաբաղաբական հարաբերությունների և հանրային արժեքանության, իրավամբ, հեղափոխական փոփոխությունների, ինչը կստիպի վերլուծական հանրության վերասահմանել ընթացիկ քաղաքական պրոցեսները: Ներկայում, սակայն, ֆիքսենք, որ բավարարվել է ժողովրդի միայն իշխանափոխության պահանջը, սակայն նույնիսկ այս դեպքում ևս մեծ անելիք կա, քանի որ դեռևս չեն ձևավորվել նոր քաղաքական իրականության սահմանադրական-կառուցակարգային հիմքերը, ինչը ներկայիս status quo-ն դարձնում է բավական խախուտ, իսկ հետագա զարգացումները՝ մշուշոտ:

### **Չայաստանը՝ քաղաքական տեսլականի փնտրողը**

«Թավշյա հեղափոխությունը» սկիզբ է դրել իրավաքաղաքական նոր իրողությունների ձևավորման գործընթացին, որը զարգանում է մակընթացության և տեղատվության փուլերի հաջորդայնությամբ: Բազմաշերտ փոփոխությունների հիմնական հայեցակարգային հենքը կարելի է բանաձևել որպես քաղաքական ռեժիմի փոփոխություն: Քաղաքական ռեժիմը հասարակության մեջ քաղաքական իշխանության իրականացման կարգն է՝ որոշակի նորմերի և կանոնների ամբողջություն, որոնք կանոնակարգում են հասարակության նկատմամբ պետության և մյուս քաղաքական ինստիտուտների ներազդեցության և քաղաքական որոշումների կայացման գործընթացը:<sup>1</sup>

Միջազգային փորձը հուշում է, որ աշխարհում գործող քաղաքական ռեժիմները, մեծ հաշվով, լինում են երկու տեսակ՝ ժողովրդավարական և բռնապետական (ավտորիտար):

Ժողովրդավարական քաղաքական ռեժիմի պարագայում պետական իշխանության բարձրագույն ինստիտուտները ձևավորվում են ժողովրդի անմիջական կամարտահայտմամբ՝ ընտրությունների միջոցով, և քաղաքական համակարգի գործառնման կարգը հիմնված է ժողովրդավարության սկզբունքների վրա՝ ժողովրդաիշխանության, իրավունքի և օրենքի գերակայության, օրենքի առջև բոլորի հավասարության, պետական ինստիտուտների գործունեության թափանցիկության և հանրային հաշվետվողականության, խոսքի, հավաքների, համոզմունքների ազատության, գաղափարախոսական բազմակարծության և այլն: Ժողովրդավարական ռեժիմի պարագայում պետության կառուցակարգի գործողության բովանդակությունը կրում է քաղաքացիական հասարակության ուղղակի ազդեցությունը, և քաղաքական որոշումների կայացման գործընթացն ազդված է հասարակական վերահսկողության արդյունավետ կառուցակարգերով՝ քաղաքական ընդդիմություն, մասնագիտական միավորումներ, քաղաքացիական նախաձեռնություններ և այլն: Արդյունքում պետության ներսում գործում է իշխանությունների տարանաջատումը, հստակորեն պահպանվում են Սահմանադրության նյութական նորմերն ու ընթացակարգերը:<sup>2</sup>

Ի հակառակ ժողովրդավարական ռեժիմի՝ բռնապետական քաղաքական ռեժիմի պայմաններում պետության կառուցակարգը գործում է ոչ թե ժողովրդի

<sup>1</sup> Տե՛ս Борисенков А.А. Политический режим- способ политического влияния, Социум и власть N 2 (34), 2012, <https://cyberleninka.ru/article/v/politicheskiy-rezhim-sposob-politicheskogo-vliyaniya>, с. 40-42

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղում:

իշխանության, այլ իշխանության ղեկին գտնվող անձի կամ անձանց խմբի անձնական իշխանության հիման վրա: Ուստի՝ այս ռեժիմի բովանդակությունը ժողովրդավարության հակոտնյան է և ընդգրկում է հետևյալ հիմնական իրավաբանական բաղադրիչները՝ իշխանության կենտրոնացում ժողովրդին ոչ հաշվետու քաղաքական և բյուրոկրատական էլիտայի մոտ, քաղաքական ընդդիմության գործունեության սահմանափակում կամ իշխող վարչակազմի կողմից վերահսկվող ընդդիմության ստեղծում, պետական կառավարման կենտրոնացվածություն և բյուրոկրատացում, հասարակության վրա ներազդման գերազանցապես վարչական մեթոդների կիրառում, հասարակության հետ պետության հետադարձ կապի սահմանափակվածություն, պետության կառավարման գործընթացում հասարակության լայն շերտերի ներգրավման բացառում, քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության ենթահամակարգերի, այդ թվում զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ պետական վերահսկողության և տարաբնույթ սահմանափակումների առկայություն, ժողովրդավարական ինստիտուտների և ընթացակարգերի ֆորմալ սահմանում այդ թվում սահմանադրական մակարդակում, սակայն դրանց փաստացի չգոյություն կամ գործառնման էական սահմանափակումներ:<sup>1</sup>

Ժամանակակից աշխարհում, որը հիմնված է լիբերալ ժողովրդավարության ինստիտուտների գերակա միտման վրա, հաճախ են հանդիպում ձևով ժողովրդավարական, սակայն բովանդակային իմաստով բռնապետական ռեժիմներ՝ իրենց տարատեսակներով: Վերջիններս ստացել են «ֆաստադային ժողովրդավարություններ» անվանումը<sup>2</sup>:

Հայաստանի Հանրապետության ավելի քան 25-ամյա պատմությունը թույլ է տալիս փաստել, որ նախքան «թավշյա հեղափոխությունը» երկիրը շարժվում էր դեպի ավտորիտարիզմ: Սույն պնդման հիմնավորումները բազմաթիվ են: Առաջահերթ կարելի է մատնանշել ընտրական ինստիտուտի որպես պետական իշխանության ձևավորման լեգալ ընթացակարգի և լեգիտիմության հիմքի աստիճանական ձևախեղումը՝ կլիենտական կուսակցական համակարգի ձևավորման, նեպոտիզմի և ընտրակաշառքի զանազան մեխանիզմների կիրառման հետևանքով: Քաղաքացիների մոտ իշխանության ձևավորման հարցում սեփական դերակատարման բացակայության ընկալումը ժամանակի ընթացքում դարձավ համատարած՝ ապալեգիտիմացման տանելով ինչպես պետաիշխանական ինստիտուտները, այնպես էլ քաղաքական համակարգը՝ առհասարակ: Բացի այդ, պետական բյուրոկրատիան, այն է՝ օրենսդիր, գործադիր և դատական ծառայությունը, թեև կառուցակարգային առումով տարանջատված է քաղաքական իշխանությունից, սակայն գործնականում տեղի է ունեցել բյուրոկրատիայի կուսակցականացման գործընթաց, որի արդյունքում ըստ սահմանման մասնագիտական, անկախ և անաչառ քաղաքացիական ծառայությունը ձեռք է բերել քաղաքական կախվածության և կուսակցական սուբյեկտիվիզմի անթույլատրելի դրսևորումներ:

Եթե ընդունում ենք, որ Հայաստանում, տարիների ընթացքում օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, տեղի է ունեցել հասարակության և քաղաքական ընդդիմության օտարում պետաիշխանական լծակներից, և ձևավորվել է միաբևեռ քաղաքական համակարգ՝ անփոփոխ իշխող ուժի գլխավորությամբ, կարող ենք փաստել, որ պետական ծառայության և իշխող քաղաքական ուժի

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս Croissant A. Strong Presidents, Weak Democracy? Presidents, Parliaments and Political Parties in South Korea, Korea Observer, Vol. 33, No. 1, 2002, <http://apcss.org/Publications/Edited%20Volumes/RegionalFinal%20chapters/Chapter11Baker.pdf>, pp 1-45 pp. 6-7

խնդիրներն ու նպատակներն անթույլատրելիորեն փոխներթափանցել են՝ հանրային ծառայությունը դարձնելով կլիենտական քաղաքական համակարգի օղակներից մեկը և նեղացնելով պետական գործառույթների առարկայական ընդգրկումը՝ այն առաջնահերթ կապելով քաղաքական կողմնակիցների հավակնությունների և շահերի բավարարման հետ՝ իշխող վարչակազմի վերարտադրությանը նպաստելու դիմաց:

Պետական բյուրոկրատիայի սերտաճումն իշխող քաղաքական խմբերի հետ նոր երևույթ է, և անգամ ժողովրդավարության դրոշակակիր ԱՄՆ-ում այն շարունակում է գործել, սակայն այս համակարգի օբյեկտիվ թերությունները մեղմվում են ԱՄՆ-ի կուսակցական և ընտրական համակարգերի մրցակցային բնույթով և իշխանության ղեկին տարբեր քաղաքական ուժերի ընտրական փոխատեղմամբ: Դա թույլ է տալիս ապահովագրել առանց այդ էլ կուսակցականացված-քաղաքականացված պետական պաշտոնեությանը ճահճացումից՝ պարբերաբար «թարմ արյուն» ներարկելով պետական ինստիտուտներում:

Փոխարենը՝ Հայաստանում քաղաքական մրցակցության անբավարար մակարդակը և իշխող քաղաքական խմբերի անփոփոխելիությունը հանգեցրել են պետական պաշտոնեության շրջանում նոր և որակյալ կադրերի սուր դեֆիցիտի, պետական ծառայողների շրջանում դեմոտիվացվածության վտանգավոր երևույթի, երբ սեփական «աթոռի» համար պայքարելու և արհեստավարժության որակները կատարելագործելու ձգտումը փոխարինվել էր իշխող կուսակցության աստիճանակարգությունում առաջխաղացմամբ և այդպիսով մասնագիտական կարիերան ապահովելով:

Քաղաքականական մրցակցության սահմանափակ բնույթը և իշխանության ղեկին հայտնվելու փաստացի հնարավորության պատրանքայնությունը թուլացրել էին քաղաքական ընդդմության դիրքերը: Ընդդիմությանը վերապահվել էր հիմնականում կառավարության գործունեության նկատմամբ վերահսկողության գործառույթը, որը խորհրդարանում փոքրաթիվ ներկայության և ֆինանսական ու մեդիա ռեսուրսների սղության պատճառով դժվար էր պատշաճորեն իրականացնել:

Նույնը վերաբերում է նաև հասարակության ակտիվ խմբերին, որոնք, որոշակի ինքնակազմակերպվածությամբ հանդերձ, ունեին քաղաքական հայտ ներկայացնելու կամ առնվազն պետության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության դաշտում նկատելի դերակատարում ստանձնելու խնդիր, որի կառուցակարգային և փաստացի հնարավորությունները մինչև վերջերս սահմանափակ էին:

Փաստացի մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների իրացման հարցում բազմաթիվ լրջագույն խնդիրների, իսկ որոշ իրավունքների գործնականում չգոյության պայմաններում Սահմանադրությամբ և ընթացիկ օրենսդրությամբ դրանք ձևականորեն առկա էին, սակայն գրված Սահմանադրության և իրականության միջև առկա էր խորն անջրպետ<sup>1</sup>:

Այս ամենը թույլ է տալիս եզրահանգել, որ Հայաստանում նախքան «թավշյա հեղափոխությունը» գործում էր ֆասադային ժողովրդավարական ռեժիմ, որն ուներ ժողովրդավարության ձևական բոլոր ատրիբուտները, սակայն բովանդակությամբ զուտ էր դեպի ավտորիտարիզմ:

<sup>1</sup> Տե՛ս նաև ԱՄՆ-ի պետդեպարտամենտի զեկույց. Հայաստանում մարդու իրավունքների վիճակը, 2017թ., [https://forrights.am/?ln=1&id=4&page\\_id=49](https://forrights.am/?ln=1&id=4&page_id=49), Freedom House, Nations in Transit 2018, Armenia, Country Profile, <https://freedomhouse.org/report/nations-transit/2018/armenia>, Human Rights Watch, World Report 2017, Armenia, Events of 2016, <https://www.hrw.org/world-report/2017/country-chapters/armenia> և այլն:

Դատելով իշխանության եկած քաղաքական ուժի և, մասնավորապես, գործող վարչապետի հրապարակային խոսքից, Հայաստանում տեղի են ունենալու արմատական փոփոխություններ: Մասնավորապես, օլիգարխիկ-մենաշնորհային տնտեսությունից անցում է կատարվելու ներառական-մրցակցային տնտեսական համակարգի, երաշխավորվելու է դատական իշխանության անկախությունը, ընտրությունները դառնալու են ազատ և մրցակցային և այլն<sup>1</sup>:

Փաստորեն բարձրագույն քաղաքական մակարդակում հռչակվել է քաղաքական ռեժիմի, այն է՝ պետական կառավարման և հասարակության կենսագոյի հիմնադրույթների փոփոխման քաղաքականության մասին: Այստեղ ծառանում է կատարվող և կատարվելիք փոփոխությունների իրավական-քաղաքական գործիքակազմի ընտրության հարցը: «Թավշյա հեղափոխությունը» փոխել է իրավաքաղաքական փոփոխությունների ժամանակացույցը, և համակարգից պահանջվում է «փոխվել» գերարագ ռեժիմում: Մի կողմից, քաղաքական և իշխանական համակարգը չի կարող այդպես արագ և այն էլ սահուն կերպով ադապտացվել նոր իրողություններին, իսկ արհեստական բայլերը կարող են միայն վնասել, իսկ, մյուս կողմից, ակնհայտ է, որ ապրիլ-մայիսից առաջացած քաղաքական ճգնաժամը գնալով խորանում է՝ աստիճանաբար վերաճելով սահմանադրական ճգնաժամի՝ պահանջելով վերջնական հանգուցալուծում նախևառաջ սահմանադրաիրավական և ինստիտուցիոնալ դաշտերում: Իհարկե, այս օրերին կոչեր են հնչում գործող իրավակարգը մերժելու, ընդհուպ մինչև անկախության ավելի քան քառորդդարյա պատմաքաղաքական ժառանգությունը մերժելով՝ Չորրորդ Հանրապետություն հիմնադրելու մասին: Սակայն պետք է հաշվի առնել, որ հասարակության և պետության համար առավել շահեկան ճանապարհը ցանկացած, անգամ ամենարմատական քաղաքական-իշխանական փոփոխությունը սահմանադրաիրավական միջոցներով կատարելն է: Դա նշանակում է հասարակական հարաբերությունների իրավական և քաղաքական մոդելի փոփոխություն, որը, սակայն, հիմնված է քաղաքական իշխանության հաջորդայնության, նախորդ ժամանակաշրջանի իրավակարգի ոչ թե միանվագ մերժման, այլ սահուն վերափոխման գաղափարի վրա: Նման մոտեցումը թույլ կտա հասնել հասարակական համերաշխության վերականգնմանը՝ բացառելով հասարակության մեջ կոնֆլիկտագեն նոր բաժանարար գծերի քաշումը:

Անշուշտ, ժողովրդի աջակցության պայմաններում նոր քաղաքական առաջնորդները կարող են գնալ նաև արմատական ճանապարհով՝ ամբողջովին սահմանազատվելով հայկական պետականության նախորդ շրջափուլի իրավական և քաղաքական կարգից՝ դրանից բխող քաղաքական, իրավական, տնտեսական և այլ հետևանքներով: Սակայն, ինչպես ցույց է տալիս հեղափոխական վերափոխումների միջազգային փորձը, դա խիստ ռեսուրսատար և բավական անկանխատեսելի գործընթաց է, որի համար անհրաժեշտ են տնտեսական, սոցիալական, ինչու ոչ, նաև աշխարհաքաղաքական լուրջ նպաստող նախադրյալներ և ռեսուրսներ: Չէ՞ որ նման քաղաքականության արդյունքում հասարակության մի որոշակի շերտ, որը, այսօր արդեն չլինելով քաղաքականապես դոմինանտ, սակայն ունենալով քաղաքական և ֆինանսական էական ռեսուրսներ, բազմամյա կլիենտական կապերի շնորհիվ՝ առնչվելով հասարակության ամենատարբեր սոցիալական խմբերի հետ, դուրս է դրվելու քաղաքական իշխանության ձևավորման գործընթացից՝ փաստացի բացառելով ռեստավրացիայի որևէ հնարավորություն: Երկարաժամկետ հեռանակարում նման քաղաքական գործիքակազմի կիրառումը կարող է հանգեցնել նոր ցնցումների: Այդպիսի սցենարով անցել են անգլիական, ֆրանսիական

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը պաշտոնավարման 100 օրվան նվիրված հանրահավաքին, <https://www.Iraqir.am/2018/08/17/372272/>

հեղափոխությունները, երբ միապետական ազնվականություն-բուրժուազիա տասնամյակներ տևող հակամարտությունը այդ երկրներն ընկղմեց հեղափոխական տեղապտույտի մեջ, որն ուղեկցվում էր ինչպես մարդկային զոհերով, այնպես էլ տնտեսաբաղաբական բացասական հետևանքներով:

Չեռևաբար, մեր կարծիքով, ներկայիս քաղաքական իրողությունները հարկավոր է դիտարկել ոչ թե որպես անցյալը ջնջող «Նոյյան ջրհեղեղ», այլ երկրի սահմանադրական ինստիտուտների ամրության ստուգատես, որից պետությունը, իշխանական կառուցակարգերը կարող են դուրս գալ ուժեղացած՝ ղնելով, իշխանության փոխանցման, կառավարող Էլիտայի փոփոխության, իրավամբ, ժողովրդավարական քաղաքական ավանդույթի հիմքերը:

Միով բանիվ, ներկայիս քաղաքական համապատկերն իրենից ներկայացնում է ինստիտուցիոնալ առումով հակասական և քաղաքական իմաստով անորոշ իրողություն, որի շարժընթացը կատարվում է սահմանադրականության և քաղաքական նպատակահարմարության բաժանարար գծով, և հավասարակշռության խախտումն այս կամ այն կողմ պետականության ժողովրդավարական զարգացման համար ունենալու է հիմնովին տարբեր հետևանքներ: Սա վկայում է ապագայի քաղաքական զարգացումների վեկտորի և պետական քաղաքականության նոր և հստակ ձևակերպված հիմունքների բացակայության կամ առնվազն դեռ խմորման պրոցեսի մասին՝ հասարակությանը ղնելով հակասական սպասումների և ակնակալիքների ռեժիմում:

### **Ընթացիկ քաղաքական ճգնաժամի հանգրվանային լուծման բանալին՝ Սահմանադրություն**

Իսկ ո՞րն է «թավշյա հեղափոխության» հետևանքով առաջացած սահմանադրական ճգնաժամի էությունը: Թերևս, դա անմիջական և ներկայացուցչական ժողովրդավարության փոխհարաբերակցության և հաջորդայնության խախտումն է, որի արդյունքը պետական ինստիտուտների աստիճանական ապալեգիտիմացումն է, որն առաջացել է ներկայացուցչական ժողովրդավարության ընդհանուր ճգնաժամի հետևանքով: Ընդ որում, խնդրին լրացուցիչ բարդություն է հաղորդում այն հանգամանքը, որ պետաիշխանական նախորդ համակարգի ապամոնտաժմանը զուգահեռ նոր համակարգի ձևավորման գործընթացը դանդաղում է, ինչը նաև սահմանադրական լուծումների սղության հետևանք է:

Իհարկե, քաղաքական ճգնաժամերի գեներացումը բնորոշ է հաղթանակած զանգվածային ժողովրդական շարժումներին, քանի որ վերջիններս իրենց էությամբ անմիջական ժողովրդաիշխանության «հաղթանակն են» ճահճացած պետական ինստիտուտների, բյուրոկրատական ապարատի նկատմամբ: Միևնույն ժամանակ ժողովրդի պերմանենտ ներգրավմամբ քաղաքական որոշումների ընդունման գործընթացը չի կարող երկար տևել, քանի որ պետության կայունությունը և իրական սահմանադրական ժողովրդավարությունը կարող են ապահովվել, երբ գործում են ժողովրդի իշխանության քաղաքական պատվիրակման ակտի՝ ընտրությունների արդյունքում ձևավորված պետական ինստիտուտները: Ինստիտուտների «վերադարձի» ձգձգումն անխուսափելիորեն օրակարգ է բերելու «ազատություն թե կայունություն» երկընտրանքը, որը կարող է պարարտ հող ստեղծել տարբեր քաղաքական խմբերի ավտորիտար նկրտումների համար: Չեռևաբար «ամեն ինչ չափի մեջ է գեղեցիկ» արիստոտելյան ասացվածքն ավելի քան արդիական է մերօրյա Չայաստանում:

Մյուս կողմից, ակնհայտ է, որ ազգային աննախադեպ զարթոնքի էներգետիկան երկրի քաղաքական զարգացման, ինստիտուցիոնալ վերափոխման

համար ստեղծել է գերնպաստավոր պայմաններ: Յետևաբար հիմնական խնդիրը դառնում է ժողովրդի հեղափոխական էյֆորիայի սահմանադրական-քաղաքական հունավորումը:

«Թավշյա հեղափոխությունը» ժամանակագրորեն համընկել է կառավարման նոր՝ խորհրդարանական համակարգի գործառնման հետ: Սույն հանգամանքը բնականորեն առաջ է բերել մի շարք մարտահրավերներ, որոնց դիմակայելն ինստիտուցիոնալ «վերբեռնման» փուլում գտնվող քաղաքական համակարգի համար, իրավամբ, կարող է դառնալ լրջագույն փորձություն: «Թավշյա հեղափոխության» իրավաքաղաքական օրակարգն օբյեկտիվորեն պետք է լինի վերին աստիճանի ընդգրկուն, սակայն այդ օրակարգը կյանքի կոչելու համար միայն գործադիր իշխանությունը բավարար չէ: Պետության կառուցակարգը, որքան էլ որ գործառնությանն առումով տարանջատված է, բովանդակային իմաստով պետք է լինի միասնական: Պետության ինքնիշխանությունը նույնիսկ ժողովրդավարության պայմաններում ենթադրում է միասնական կառավարող վերնախավ, որն ապահովում է իշխանության բոլոր օղակների ներդաշնակ և փոխլրացնող գործունեությունը պետության առջև դրված խնդիրների և նպատակների իրականացման ուղղությամբ: Պետաիշխանական համակարգի ներսում քաղաքականաստեղծմամբ զբաղվող հակադիր բևեռների գոյությունը թուլացնում է պետության կառուցակարգային հիմքերը և ունի սահմանադրաքաղաքական անկայունություն գնեռացնելու ներուժ:

Ակրիվ-մայիսյան իրադարձությունների արդյունքում ժողովրդի կամարտահայտմամբ պետաիշխանական կառուցակարգերի համակարգային միասնությունը խախտվել է, և առաջացել է ներհամակարգային հակամարտություն: Վերջինիս հետևանքով այսօր առկա է, թերևս, նախագահական և կիսանախագահական կառավարման համակարգերին բնորոշ՝ օրենսդիր և գործադիր իշխանությունների «համակեցության» ռեժիմը, որը հատուկ չէ խորհրդարանական կառավարման ձևին: Վերջինիս առավելությունը հանրապետական կառավարման ձևի մյուս տարատեսակների համեմատությամբ օրենսդիր և գործադիր իշխանության փոխներթափանցվածությունն է՝ խորհրդարանի կողմից գործադիր իշխանության ձևավորմամբ և կառավարության գործառնությանն ինքնուրույնությամբ: Իսկ այսօր մենք ունենք «հեղափոխական» գործադիր իշխանություն և նախորդ ռեժիմի ներկայացուցիչների մեծամասնությամբ համալրված խորհրդարան:

Իշխանության այսպես կոչված «քաղաքական» թևերի քաղաքական միատարրությամբ պայմանավորված կառուցակարգային հավասարակշռության խախտումը հակասում է խորհրդարանական կառավարման փիլիսոփայությանը և ինստիտուցիոնալ կազմակերպման սկզբունքներին, որոնք բխում են հենց ՀՀ Սահմանադրության տեքստից: Յետևաբար, «թավշյա հեղափոխության» հաջողությունը նախևառաջ կախված է դրա արագ ինստիտուցիոնալացումից և իշխանության թևերի հակամարտության բարեհաջող չեզոքացումից:

Ցանկացած հասարակական-քաղաքական վերափոխում հղի է ինստիտուցիոնալ և գործնական քաղաքական ռիսկերով, և Սահմանադրության խնդիրն է երաշխավորել քաղաքական գործընթացների իրավական հունավորումը, ժողովրդավարության սկզբունքների անշեղ պահպանումը, եթե գործընթացները չեն գնում հեղափոխական նիհիլիզմի ճանապարհով: Այս համատեքստում ներկայիս իրավիճակի հանգուցալուծման ուղիները որոնելիս պետք է արձանագրել, որ գործ ունենք ինչ-որ իմաստով արտասահմանադրական կացության հետ: Այսօրվա status quo-ն հիմնված է գերազանցապես քաղաքական համաձայնությունների, այլ ոչ թե գործող Սահմանադրության իրավակարգավորումների վրա: Փաստացի ձևավորվել է քաղաքական ուժային կշռույթ, որը չի համապատասխանում 2017թ.

խորհրդարանական ընտրությունների արդյունքներին, և Սահմանադրությունը, կարելի է ասել, չի պարունակում արդյունավետ մեխանիզմ այս ճգնաժամային իրավիճակն իրավական գործիքներով հանգուցալուծելու համար:

Փորձենք մանրամասնել: 33 Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորվում է այնպիսի ընտրական համակարգ, որը նախատեսում է կայուն խորհրդարանական մեծամասնություն: Ընդ որում, նույն հոդվածի մասում հստակորեն ամրագրված է, որ Հայաստանում համաժողովրդական քվեարկությամբ ձևավորվող միակ մարմինը՝ Ազգային ժողովը, ընտրվելու է համամասնական ընտրակարգով: Ըստ այդմ, սահմանադրի նպատակն է խորհրդարանում ձևավորել որոշակի կուսակցության, դաշինքի կամ հետընտրական կոալիցիայի որակյալ մեծամասնության վրա հիմնված քաղաքական որոշումների կայացման համակարգ, որը պետք է ապահովի երկրի սահմանադրական և քաղաքական կայունությունը և իշխանության ինստիտուցիոնալ հաջորդայնությունը՝ նախնառաջ ձևավորելով քաղաքական մեծամասնությանը հաշվետու Կառավարություն: Ի կատարումն սահմանադրական այս դրույթի՝ սահմանադրական օրենքի կարգավիճակ ունեցող Ընտրական օրենսգիրքը 96-րդ հոդվածի 1-ին մասով սահմանում է, թե որն է կայուն խորհրդարանական մեծամասնությունը. դա այն քաղաքական ուժն է, որը միանձնյա, դաշինքով կամ կոալիցիոն ձևաչափով տիրապետում է Ազգային ժողովի մանդատների առնվազն 54 տոկոսին: Նման սահմանադրական-իրավական կարգավորմամբ սահմանադիրը փորձ է արել նախականիսել խորհրդարանական պետություններին ներհատուկ պառլամենտական անկայունությունն ու կառավարությունների հաճախակի փոփոխությունը՝ ժողովրդավարական, ներառական խորհրդարանական համակարգի գոյությունը համադրելով կառավարման կայունության սահմանադրական երաշխիքների հետ:

Ներկայիս քաղաքական խճանկարը, ըստ էության, դուրս է սահմանադրորեն նախատեսված համակարգային տրամաբանությունից: Խորհրդարանը գործում է՝ փաստացի առանց կայուն խորհրդարանական մեծամասնության, ավելին՝ ընդհուպ, ընդհանրապես, առանց քաղաքական մեծամասնության: Ժողովրդի անմիջական քաղաքական ներգրավմամբ վարչապետ է ընտրվել և Կառավարություն է ձևավորել խորհրդարանական փոքրամասնության ղեկավարը, որի ղեկավարած քաղաքական ուժն Ազգային ժողովում ունի ընդամենը 9 մանդատ: Իր հերթին, Ազգային ժողովում 58 պատգամավորով ներկայացված կուսակցությունը ձեռնպահ է մնացել կառավարություն ձևավորելուց և իրեն հռչակել է ընդդիմություն: Նման իրավիճակում վտանգված է քաղաքական որոշումների կայացման ամբողջ ինստիտուցիոնալ մեխանիզմը:

Վերոնշյալի լույսի ներքո չենք կարող չհամաձայնել պրոֆեսոր Վ. Ստեփանյանի այն տեսակետին, որ խորհրդարանի կայունությունը ոչ միայն քանակական, այլև որակական երևույթ է, այն է՝ համակարգի ունակությունն է գործել՝ առանց կառուցվածքի փոփոխության և հավասարակշռության խախտման<sup>1</sup>:

Այս իրողության սահմանադրական «սրբագրման» ամենաարդյունավետ միջոցն արտահերթ խորհրդարանական ընտրություններն են և այդպիսով փոփոխված քաղաքական իրադրության պայմաններում ժողովրդի կամքին համապատասխանող խորհրդարանական նոր մեծամասնության ձևավորումը: Սակայն Սահմանադրությունն այս իմաստով որևէ լուծում չի նախատեսում՝ բացի Սահմանադրությամբ նախատեսված կարգով վարչապետին ընտրելու՝ Ազգային ժողովի անընդունակության դեպքում դրա արձակման իրավադրույթից:

<sup>1</sup> Տե՛ս Ստեփանյան Վ. Խորհրդարանի կայունության երաշխավորման հիմնախնդիրը 33 խորհրդարանական կառավարման կառավարման համակարգում, [http://ysu.am/files/01\\_V\\_Stepanyan.pdf](http://ysu.am/files/01_V_Stepanyan.pdf), էջ 7:



Իհարկե, քաղաքական բարձր մշակույթ ունեցող երկրներում նման իրավիճակի լուծման բանալին կարող էր լինել խորհրդարանական բոլոր ուժերի կողմից հուշագրի ստորագրումն առ այն, որ գործող վարչապետը հրաժարական է տալիս, և իրենք վարչապետի թեկնածու չեն առաջադրում՝ այդպիսով լուծարելով խորհրդարանը:

Սակայն հայաստանյան իրականությունում, երբ քաղաքական ուժերի խմբային շահերին սովորաբար տրվել է առաջնայություն, նման հանգուցալուծումը թվում է քիչ հավանական: Ավելին՝ հնարավոր է, որ վարչապետի հրաժարականից հետո խորհրդարանում վերականգնվեն նախկին իշխող ուժի դիրքերը, և այն կընտրի նոր վարչապետ՝ ժողովրդական շարժումը թողնելով խորհրդարանի պատերից դուրս: Նման զարգացումը կարելի է համարել վատթարագույն տարբերակ, որն ընդհուպ կարող է հանգեցնել ժողովրդավարական համակարգի փլուզման և դիկտատուրայի:

Միջազգային փորձը նման դեպքերի համար նախատեսել է որոշակի լուծումներ: Այդպիսին կարող էր լինել, մասնավորապես, խորհրդարանական հանրապետության նախագահի կողմից օրենսդիր մարմնի արձակումը, ինչպես, օրինակ՝ Իտալիայում, Լատվիայում, Յունաստանում և այլուր: Նախագահը, ունենալով վերքաղաքական արբիտրի գործառույթ, ով հետևում է պետաիշխանական ինստիտուտների կողմից Սահմանադրության պահպանմանը, փաստորեն հանգուցալուծում է սահմանադրական ճգնաժամը՝ թույլ չտալով դրա արտասահմանադրական կարգավորում և այդպիսով ժողովրդավարության սահմանադրական սկզբունքների խախտում:

Քանի որ ներկայում քննարկումներ են սկսվել հնարավոր սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ, կարելի է քննարկել Նախագահին Ազգային ժողովն արձակելու լիազորության վերապահումը, երբ խորհրդարանում առկա չէ կայուն մեծամասնություն, և հնարավոր չէ ձևավորել Կառավարություն: Այդպիսով, մի կողմից, կամրապնդվի Նախագահի կարգավիճակը որպես պետության գլուխ և Սահմանադրության երաշխավոր, ինչը երկարաժամկետ կտրվածքով ևս օգտակար կլինի Հայաստանի սահմանադրական կայունության համար, իսկ մյուս կողմից, կգտնվի ներկայիս պատային իրավիճակի լուծման սահմանադրական բանալին:

Անշուշտ սահմանադրական փոփոխությունները ևս մեծապես կախված են լինելու խորհրդարանում ներկայացված ուժերի քաղաքական խոհեմությունից և պետականակենտրոն որոշումներ կայացնելու ունակությունից, առանց որոնց՝ հնարավոր է նաև Ազգային ժողովի կողմից սահմանադրական փոփոխությունների նախագծի տապալումն ու սահմանադրական ճգնաժամի երկարաձգումը: Դա ամենաանցանկալի տարբերակն է, որը Հայաստանը կարող է նետել ցնցումների նոր հորձանուտ:

Բոլոր դեպքերում, ցանկացած ապստամբություն կամ հեղափոխություն առերեսվում է հնի և նորի պայքարի երկընտրանքին: Իրավիճակի հանգուցալուծումը, արդ, ունի երկու տարբերակ՝ կամ հավատարմություն սահմանադրականությանը և դրանով թելադրված քաղաքական կոմպրոմիս, կամ՝ նախկին համակարգի ուժային ապամոնտաժում: Քաղաքական առաջնորդների պետական մտածողությունն այդպիսի բախտորոշ պահերին ոչ պակաս կարևոր նշանակություն է ստանում, քան Սահմանադրությունը:

Ուժն է ծնում իրավունք, սակայն հասարակական խաղաղությունը, համերաշխությունը և պետության ապագան կախված են ուժի գաղափարի մեկնությունից՝ որպես սահմանադրականություն, թե՞ դիկտատուրա: Յուսով եմք, որ հայրենի պետական այրերը կընտրեն առաջին տարբերակը:

**Արտաշես Խալատյան**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՎԵՅԱ ԳԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ**  
**ՈՐԿԱԳԻԾԸ**

**Բանալի բառեր՝** *թավշյա հեղափոխություն, Սահմանադրություն, խորհրդարան, նախագահ, բռնապետություն*

Սույն հոդվածը նվիրված է «թավշյա հեղափոխությունից» հետո Հայաստանում ստեղծված իրավիճակի սահմանադրական-քաղաքական ասպեկտներին: Մասնավորապես, համառոտ անդրադարձ է կատարվել տեղի ունեցած քաղաքական գործընթացի սահմանման խնդրին և այդ համատեքստում «հեղափոխություն» եզրույթի օգտագործման հիմնավորվածությանը, «թավշյա հեղափոխություն» հետևանքով սկիզբ առած փոփոխությունների հայեցակարգային հիմունքներին, ստեղծված սահմանադրական ճգնաժամի հաղթահարման սահմանադրական եղանակներին: Ներկայացվել է նաև ներկայում ձևավորված սահմանադրական ճգնաժամի ելությունը՝ պետական իշխանության միասնականության խախտումը՝ խորհրդարանի և կառավարության քաղաքական և կառուցակարգային հակադրության ձևով, որի հանգուցալուծման նախընտրելի եղանակն արտահերթ խորհրդարանական ընտրություններն են:

**Artashes Khalatyan**

**CONSTITUTIONAL AND POLITICAL CIRCUIT OF THE VELVET REVOLUTION  
IN ARMENIA**

**Keywords:** *velvet revolution, Constitution, parliament, president, dictatorship*

This article is devoted to constitutional and political aspects of the velvet revolution in Armenia. Particularly a brief overview is made with regard to the issue of definition of the political process in Armenia as a revolution as well as conceptual bases of ongoing political changes and constitutional means of resolution of the current constitutional crisis. The gist of the current constitutional crisis is considered to be the violation of integrity of state power in the form of political and constitutional conflict between the parliament and government. The author suggests that the best resolution of the crisis is snap parliamentary elections.

**Арташес Халатян**

**КОНСТИТУЦИОННЫЙ И ПОЛИТИЧЕСКИЙ КОНТУР БАРХАТНОЙ  
РЕВОЛЮЦИИ В АРМЕНИИ**

**Ключевые слова:** *бархатная революция, Конституция, парламент, президент, диктатура*

Данная статья посвящена конституционно-политическим аспектам постреволюционной ситуации в Армении. Произведен краткий обзор проблемы классификации политического процесса в Армении и в данном контексте – обоснованности употребления термина «революция», концептуальных основ изменений, озаменованных «бархатной революцией», а также конституционных способов разрешения создавшегося конституционного кризиса, суть которого является нарушение единства государственной власти, вследствие чего наблюдается политическое и институциональное противостояние между парламентом и правительством. Наилучшим способом разрешения продолжающегося конституционно-политического конфликта, согласно статье, являются внеочередные парламентские выборы.

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՐՄԻՑ  
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՍՏԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

**ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ**

Երիտասարդ ժողովրդավարական երկրներում բավականին արդիական են սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների որոշումների իրավաբանական ուժի, առանձնահատկությունների և պետական այլ մարմինների կողմից դրանց կատարման հիմնախնդիրները: Ընդ որում, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների որոշումների իրավաբանական բնույթի և իրավակարգավորիչ ազդեցության սահմանումը պարտադիր, սակայն ոչ բավարար պայման է Սահմանադրության գերակայությունն ապահովելու գործում:

Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրության (այսուհետ՝ ԱՀ Սահմանադրություն) 140-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Արցախի Հանրապետության Գերագույն դատարանն (այսուհետ՝ ԱՀ Գերագույն դատարան) իրականացնում է սահմանադրական արդարադատություն՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: ԱՀ Գերագույն դատարանի լիազորությունները սահմանված են ԱՀ Սահմանադրության 141-րդ հոդվածի 1-ին մասով: Պետք է նշենք, որ հետազոտության շրջանակներում մեզ համար առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում ԱՀ Գերագույն դատարանի՝ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու գործերի քննության արդյունքում կայացրած որոշումները<sup>1</sup>:

Ընդ որում, ԱՀ Գերագույն դատարանի<sup>2</sup> ակտերի՝ որոշումների ու եզրակացությունների իրավաբանական ուժը որոշված է ԱՀ Սահմանադրության 143-րդ հոդվածում, որի 2-րդ մասի համաձայն՝ ԱՀ Գերագույն դատարանի որոշումները և եզրակացությունները վերջնական են և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից<sup>3</sup>: Վերոգրյալից հետևում է, որ սահմանադրական վեճն ըստ էության լուծվել է դատաքննության արդյունքում, որոշումն անշրջելի է և վերջնական, ընդունված որոշումը ենթակա է անհապաղ կատարման:

Սահմանադրական արդարադատություն իրականացնելիս ի հայտ են գալիս մի շարք հիմնախնդիրներ, որոնք, մասնավորապես, կապված են.

1) դատարանի որոշումների եզրափակիչ մասից անմիջականորեն բխող իրավակարգավորումներ նախաձեռնելու և իրացնելու հետ.

Հետազոտողների մի մասը գտնում է, որ սահմանադրական արդարադատություն իրականացնող դատարաններն իրենց որոշումները «հարկադիր» կատարելու իրավազորությամբ օժտված չեն<sup>4</sup>, և բավականին դժվար է

<sup>1</sup> Ընդ որում, մոտ տասնամյա գործունեության ընթացքում, ԱՀ Գերագույն դատարանի կողմից կայացրած որոշումներից միայն երկուսի դեպքում են իրավական ակտերը ճանաչվել Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր:

<sup>2</sup> Պետք է նշենք, որ ԱՀ-ում սահմանադրական արդարադատությունը, որպես ինքնուրույն համակարգ, գործում է 2009 թվականից:

<sup>3</sup> Արցախի Հանրապետության Սահմանադրություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, ԼՂՀՊՏ 2017.02.28/04(318):

<sup>4</sup> Конституционное совещание. Стенограммы. Материалы. Документы. М.: Юрид. лит., 1996. Т. 13, էջ 387 (выступление проф. Р.Ф. Васильева): *Сербан М.* Решения румынского Конституционного Суда как источник права// Конституционное правосудие в посткоммунистических странах: Сборник докладов. М., 1999, էջ 170: *Бростл А., Ключка Я., Мазак Я.* Конституционный суд Словацкой Республики. (Организация, процесс, доктрина). Кошице, 2001, էջ 101: *Казаклиу А.* Актуальные проблемы конституционной юрисдикции

մշակել նմանատիպ մեխանիզմներ<sup>1</sup>: Մեզանում նույնպես առկա է այս հիմնախդիրը, մասնավորապես, ԱԶ օրենսդրության մեջ առկա չեն ԱԶ Գերագույն դատարանի կողմից ընդունված որոշմամբ պայմանավորված պարտադիր բնույթի սահմանադրական ընթացակարգեր:

Այսպես, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ իրավական ակտն անվավեր է ճանաչվում ԼՂՀ Գերագույն դատարանի սահմանադրական պալատի կողմից իրավական ակտը ԼՂՀ Սահմանադրությանը հակասող ճանաչվելու դեպքում: Միաժամանակ, պետք է նշենք, որ ԱԶ Սահմանադրության ընդունումից հետո ԱԶ-ում մեկնարկած սահմանադրական բարեփոխումների շրջանակներում մշակվել և օրենքով սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ԱԶ օրենքի նախագիծը<sup>2</sup>: Վերջինիս 42-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ նորմատիվ իրավական ակտն անվավեր է ճանաչվում իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված մարմնի ակտով, եթե նորմատիվ իրավական ակտը ընդունվել կամ գործել է՝ հակասելով ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի<sup>3</sup>:

«Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքում ամրագրված են ԱԶ Գերագույն դատարանի կողմից իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու գործերի քննության իրավաբանական հետևանքները: Այսպես, վիճարկվող ակտն ամբողջությամբ կամ մասամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքում այն իրավաբանական ուժը կորցնում է Գերագույն դատարանի որոշումն ուժի մեջ մտնելու պահից, բացառությամբ օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության որոշումների, ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելու գործերով վիճարկվող ակտը, ինչպես նաև քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունվելու դեպքերի<sup>4</sup>:

Վերլուծելով վերոգրյալը՝ կարող ենք փաստել, որ թեև ԱԶ օրենսդրությամբ ամրագրված են ԱԶ Գերագույն դատարանի կողմից իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու գործերի քննության

Республики Молдова// Конституционное право: Восточноевропейское обозрение. Москва, Нью Йорк, 2001. № 4 (37), էջ 14:

<sup>1</sup> Митюков М. А. Конституционные суды постсоветских государств: проблемы исполнения решений// Конституционное право: Восточноевропейское обозрение. Москва; Нью-Йорк, 2002. №3 (40), էջ 73:

<sup>2</sup> <http://minjustnkr.am/nkr/documents/%D5%B6%D5%B8%D6%80%D5%B4%D5%A1%D5%BF%D5%AB%D5%BE%D5%AB%D6%80%D5%A1%D5%BE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%BF%D5%A5%D6%80%D5%AB%D5%B4%D5%A1%D5%BD%D5%AB%D5%B6%D4%B1%D5%80%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D6%84%D5%AB%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AB%D5%AE.pdf>:

<sup>3</sup> Սրանից հետևում է, որ թեև օրենքի նախագծով առանձին անդրադարձ չի կատարվում ԱԶ Գերագույն դատարանի կողմից իրավական ակտն ԱԶ Սահմանադրությանը հակասող ճանաչվելու դեպքում նորմատիվ իրավական ակտն անվավեր ճանաչելու դեպքին, բայց նայնպես, նախագծում ամրագրված դրույթը հնարավորություն է ընձեռնում, ի թիվս այլնի, անվավեր ճանաչել նաև այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք ԱԶ Գերագույն դատարանի կողմից ճանաչվել են ԱԶ Սահմանադրությանը հակասող:

<sup>4</sup> Առաջին դեպքում Գերագույն դատարանն իրավասու է որոշումը տարածելու նաև այդ որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող իրավահարաբերությունների վրա, եթե այդպիսի որոշում չընդունելը կարող է հանրության կամ պետության համար առաջացնել ծանր հետևանքներ: Երկրորդ դեպքում, քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանող օրենքի վիճարկվող դրույթի կիրառման վերաբերյալ Գերագույն դատարանի որոշման ուժի մեջ մտնելուն նախորդող ժամանակահատվածում ընդունված դատական և վարչական ակտերը օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման:

իրավաբանական հետևանքները, բայցևայնպես, դրանք կյանքի չեն կոչվում: Վերջինս ուղղակիորեն կապված է ԱՅ Գերագույն դատարանի որոշումների կատարումն ապահովող համապատասխան մեխանիզմների ու լծակների բացակայությամբ: Այսպես, օրինակ, ԼՂՀ Գերագույն դատարանի 2009 թվականի հունիսի 30-ի ԳԴՈ-1 որոշմամբ՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները ճանաչել են ԼՂՀ Սահմանադրության 2-րդ, 5-րդ, 7-րդ (1-ին, 2-րդ մասեր), 20-րդ, 52-րդ և 60-րդ (կետ 1, 2 , 16) հոդվածների պահանջներին հակասող և անվավեր: Եվ թեև այդ պահին գործող իրավակարգավորումներով, մասնավորապես, «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 75-րդ հոդվածի իմաստով, ԼՂՀ Գերագույն դատարանի որոշումը հիմք էր «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասն անվավեր ճանաչելու համար, այդուհանդերձ, «Սոցիալական ապահովության քարտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԼՂՀ 2009 թվականի նոյեմբերի 25-ի ՅՕ-60-Ն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասն ուժը կորցրած է ճանաչվել:

Ինչ վերաբերում է ԼՂՀ Գերագույն դատարանի 2010 թվականի մարտի 3-ի ԳԴՈ-2 որոշմանը<sup>2</sup>, ապա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԼՂՀ Ազգային ժողովը 2005 թվականի ապրիլի 27-ին ընդունել է օրենք «Հայաստանի Հանրապետության 2004 թվականի աշխատանքային օրենսգիրքը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում գործողության մեջ դնելու մասին» և մինչ այսօր մեր երկրում աշխատանքային օրենսգիրք չի ընդունվել, ուստի՝ ԼՂՀ Գերագույն դատարանի որոշումը կյանքի չի կոչվել օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված<sup>3</sup>:

Այս համատեքստում առաջարկում ենք Նախաձեռնել համապատասխան օրենսդրական բարեփոխումներ, ինչի շնորհիվ հնարավոր կլինի ապահովել ԱՅ Գերագույն դատարանի որոշումների կատարումը՝ միաժամանակ ԱՅ-ում ապահովելով սահմանադրականության հետևողական զարգացումը: Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքում կատարել լրացում՝ սահմանելով ողջամիտ ժամկետ, որի ընթացքում ԱՅ Սահմանադրության համաձայն օրենսդրական նախաձեռնությամբ օժտված սուբյեկտները, այն է՝ ԱՅ Նախագահը և պատգամավորները կնախաձեռնեն համապատասխան իրավական ակտերի մշակումը, սահմանված կարգով շրջանառության մեջ կղնեն դրանք՝ դրանով իսկ ապահովելով ԱՅ Գերագույն դատարանի որոշումների կատարումը,

2) դատարանի որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները լիարժեք կյանքի կոչելու հետ.

<sup>1</sup> ԼՂՀ Գերագույն դատարանի 2009 թվականի հունիսի 30-ի «ԼՂՀ մարդու իրավունքների պաշտպան Յու. Հայրապետյանի դիմումի հիման վրա «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ԼՂՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների՝ ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ԳԴՈ-1 որոշում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, ԼՂՀՊՏ 2009.07.16/16(126):

<sup>2</sup> ԼՂՀ Գերագույն դատարանի 2010 թվականի մարտի 3-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /դատավոր Ա. Թադևոսյան/ դիմումի հիման վրա ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի եվ 114-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ԳԴՈ-2 որոշում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, ԼՂՀՊՏ 2010.03.19/06(140):

<sup>3</sup> Հարությունյան Ա.Յ. Լեռնային Ղարաբաղի (վրցախի) Հանրապետության Սահմանադրության արժեքանական առանձնահատկությունները և սահմանադրականության հետագա զարգացման հիմնախնդիրները, Ավետիքի Համետի Հարությունյան, Եր., Անտարես, 2016, 240 էջ, էջ 159-160:

ԱՅ Գերագույն դատարանի դատական ակտերում պետք է նախատեսվի այդ դատական ակտերի կատարման որոշակի ընթացակարգ, ինչպես նաև ապահովվի դատական ակտերում ամրագրված իրավական դիրքորոշումների լրիվ և ժամանակին կատարումը,

3) դատարանի որոշումներից բխող իրավակարգավորումներում իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման հետ.

Սահմանադրության գերակայության և անմիջական գործողության ապահովման նպատակով դատարանի որոշումների հիման վրա իրավական համակարգում կատարվող փոփոխությունները պետք է ընդգրկեն վերաբերելի իրավական հարաբերությունները կարգավորող և փոխկապակցված իրավակարգավորումների ողջ շղթան:

Այսպիսով՝ ժողովրդավարական պետությունում և քաղաքացիական հասարակությունում դատական իշխանության հիմնական առաքելությունն այն է, որ սոցիալական ու իրավական վեճերի ժամանակ երաշխավորի իրավունքի գերակայությունը<sup>1</sup>: Ընդ որում, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների որոշումների կատարումն առաջնահերթ կախված է նրանից, թե ինչ մակարդակում է տվյալ երկրում իրավական ու սահմանադրական մշակույթը:

Սահմանադրական արդարադատություն իրականացնող դատարանների դատական ակտերը, իրենց համապարտադիրության ուժով, պետք է անվերապահ կատարվեն<sup>2</sup>: Ընդ որում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինները չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց որոշումների կատարումը<sup>3</sup>, այդ որոշումների կատարումը պայմանավորված է սահմանադրական արդարադատություն իրականացնող ու գործադիր և օրենսդիր իշխանության մարմինների փոխկապակցվածությունից:

Միաժամանակ, պետք է նշենք, որ սահմանադրական արդարադատության իրականացման ժամանակ ի հայտ եկած հիմնախնդիրներն արդյունավետ կլուծվեն, եթե ԱՅ Սահմանադրությամբ երաշխավորվի Գերագույն դատարանի որոշումների լիարժեք կատարումը՝ վերջինս ամրագրելով որպես սահմանադրական պարտականություն<sup>4</sup>: Ուստի, առաջարկում ենք՝ սահմանադրական բարեփոխումների շրջանակներում լրացում կատարել նաև ԱՅ Սահմանադրությունում ամրագրելով, որ ԱՅ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև Սահմանադրությանը կամ օրենքին հակասող ճանաչված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն:

<sup>1</sup> Конституционное (государственное) право зарубежных стран. Общая часть. Учебник для вузов. Рук. и отв. ред. профессор Б. Страшун, 4-е издание, обновленное и доработанное, М., 2005, էջ 745:

<sup>2</sup> Морщакова Т. Г. Российское правосудие в контексте конституционной реформы. М., 2004, էջ 197:

<sup>3</sup> Изензее Й. Конституционное право как право «политическое»// Государственное право Германии. М., 1994. Т. 2, էջ 311:

<sup>4</sup> Ի տարբերություն գործող իրավակարգավորումների՝ ԼՂՀ 2006 թվականի Սահմանադրության 7-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում էր, որ Սահմանադրությանը հակասող ճանաչված օրենքները, ինչպես նաև Սահմանադրությանը կամ օրենքին հակասող ճանաչված այլ ներպետական իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն:

**Լուսինե Բարխուդարյան**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ**  
**ԱԿՏԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ**  
**ԳՈՐԾԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀՏԵՎԱՆՔՆԵՐԸ**

*Բաճախի բառեր՝ Արցախի Հանրապետության Սահմանադրություն, Արցախի Հանրապետության Գերագույն դատարան, սահմանադրական արդարադատություն, իրավաբանական հետևանքներ, իրավունքի գերակայություն*

Յոգվածում ներկայացված են ԱՀ Գերագույն դատարանի կողմից իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու գործերի քննության արդյունքում կայացված որոշումների կատարման հետ կապված հիմնախնդիրները: Հեղինակի կողմից առաջարկվում է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ, ինչի արդյունքում իրավական ակտերի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ Գերագույն դատարանի որոշումներին անմիջականորեն կհաջորդի հանրային իշխանության իրավասու մարմնի իրավաստեղծ գործունեությունը հասարակական տվյալ հարաբերության իրավակարգավորման ուղղությամբ:

**Lusine Barkhudaryan**

**LEGAL CONSEQUENCES OF THE CASES DETERMINED BY THE SUPREME COURT OF THE REPUBLIC OF ARTSAKH WITH THE COMPLIANCE OF LEGAL ACTS WITH THE CONSTITUTION**

**Keywords:** *Constitution of the Republic of Artsakh, Supreme Court of the Republic of Artsakh, constitutional justice, legal consequences, the rule of law*

The issues of the implementation of decisions taken as a result of the determination by the Supreme Court of the Republic of Artsakh with the compliance of legal acts with the Constitution are presented in the article. The author proposes to introduce appropriate legislative changes, as a result of which the decisions of the Supreme Court to determine the conformity of legal acts of the Constitution will be directly followed by the legislative activity of the competent state authority in the direction of legal regulation of these relations.

**Лусинэ Бархударян**

**ЮРИДИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ДЕЛ ПО ОПРЕДЕЛЕНИЮ ВЕРХОВНЫМ СУДОМ РЕСПУБЛИКИ АРЦАХ СООТВЕТСТВИЯ ПРАВОВЫХ АКТОВ КОНСТИТУЦИИ**

**Ключевые слова:** *Конституция Республики Арцах, Верховный суд Республики Арцах, конституционное правосудие, правовые последствия, верховенство права*

В статье представлены проблемы, связанные с исполнением решений, принятых в результате определения Верховным судом Республики Арцах соответствия правовых актов Конституции. Автор предлагает внести соответствующие законодательные изменения, в результате чего за решениями Верховного суда по определению соответствия правовых актов Конституции непосредственно последует законодательная деятельность компетентного органа государственной власти в направлении правового регулирования этих отношений.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԲԱՂԱԲԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE**  
**МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ**



**ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՆՈՐՈՐՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
 ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ԽԱԶԻԿ ԳԱԼՍՏՅԱՆ**

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից ի վեր, հայ ժողովրդի ամենաարդիական, կենսական նշանակություն ունեցող, և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականության անկյունաքարը հանդիսացող հիմնահարցը եղել և շարունակում է մնալ արցախյան հիմնախնդիրը: Այո, պետք է հատուկ ընդգծել, որ Հայաստանի ներկայիս հանրապետության անկախության ձեռքբերումը, քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումներն ուղղակիորեն իրենց վրա կրում են «ղարաբաղյան կնիքը»: Դեռ ավելին, Հայաստանի ներկայիս Հանրապետության քաղաքական կյանքում արցախյան հիմնախնդիրն ու նրա շուրջ ընթացող զարգացումները որոշակի պարբերականությամբ (1988, 1998, 2008, 2018) «տեկտոնական տեղաշարժեր են» առաջացրել՝ վերաձևելով ողջ քաղաքական դաշտը:

Առաջին նման «տեկտոնական տեղաշարժը» գրանցվում է Խորհրդային Միության գոյության վերջին տարիներին: Այսպես, 88-ի աննախադեպ ազգային-ազատագրական զարթոնքը, խորհրդային և արդրբեջանական իշխանությունների դեմ մղվող անհավասար գոյակռիվը, ազգային համերաշխությունն ու համախմբվածությունը Հայաստանում հանգեցրեցին կոմունիստական վարչակարգի տապալմանը, Արցախի ազատագրմանն ու հայրենիքի այդ հատվածում անկախ պետականության հռչակմանը: Այս առումով, անժխտելի է շարժման նշանակությունը հայկական երկու հանրապետությունների հռչակման և կայացման գործում: Մասնավորապես, հենց ղարաբաղյան շարժման շնորհիվ Հայաստանում իրականացվեց «թավշյա հեղափոխության», որի արդյունքում երկրում տեղի ունեցավ խաղաղ իշխանափոխություն: Հայ ժողովուրդն իր միահամուռ աջակցությունը հայտնեց Նոր-Նոր ձևավորվող ազգային-քաղաքական ընտրանուն, որոնց իշխանության գալու եթե ոչ միակ, ապա ամենահիմնավոր փաստարկը արցախյան ազատամարտն իր վերջնական, հայանպաստ հանգուցալուծմանը հասցնելն էր: Սակայն, Հայաստանի անկախության հռչակումից շատ չանցած շարժումը պառակտվեց: Երբեմնի հավատարիմ զինակիցները հայտնվեցին բարիկադների տարբեր կողմերում, առաջին հայացքից միական քաղաքական ընտրանին լուրջ ճեղքվածքներ տվեց, իսկ ՀՀ քաղաքական կյանքում Արցախյան հիմնահարցը բազմիցս դարձավ ներքաղաքական շահարկումների ու լուրջ տարաձայնությունների առարկա<sup>1</sup>:

Արցախյան հիմնահարցի հետ կապված «տեկտոնական» երկրորդ հզոր ալիքը համընկնում է 1996-1998թթ. քաղաքական զարգացումների հետ, որը հանգեցրեց ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հրաժարականին (1998թ. փետրվարի 3): 1996թ. նախագահական ընտրություններից հետո, օգտվելով

<sup>1</sup> Տե՛ս Գալստյան Խ. Ղարաբաղյան հարցի շահարկումները նախընտրական և հետընտրական փուլերում / Հայաստանը նախագահական ընտրությունների շեմին. գործընթացներ, իրողություններ: Գիտաժողովի կյութերի ժողովածու, Եր., 2007, էջ 46-54:



Հայաստանի ներքաղաքական կյանքի լարված իրավիճակից ու ՀՀ նախագահի լեգիտիմության անկման հանգամանքից՝ Բաբվի դիրքորոշումը բանակցություններում ավելի կարծրացավ: Մասնավորապես, ՀՀ փոխարտգործնախարար Վ. Օսկանյանը 1996թ. վերջերին Մոսկվայում տեղի ունեցած բանակցությունների մթնոլորտը շատ ծանր էր բնութագրել: Նրա կարծիքով, ադրբեջանական կողմի անզիջում դիրքորոշման պատճառներից մեկն էլ Հայաստանի ներքաղաքական իրավիճակի որոշակի ապակայունացումն էր: «Ես այնտեղ առաջին անգամ զգացի, թե որքան կարևոր է երկրի կայունությունը բանակցությունների մասնակիցների համար», - նշել էր Վ. Օսկանյանը: ԱՄՆ հատուկ բանագնաց Գ. Փրետսելը նույնպես կարծիք էր հայտնել, որ «Այո, իսկապես ազերիները շահարկում են Հայաստանի երևութական թուլությունը նախագահական ընտրություններից հետո, և ես նրանց չեմ մեղադրում: Եթե դա չլիներ, ազերիների կողմից շահարկելու բան չէր լինի»: Ասվածի վառ վկայություն է Լիսաբոնի գազաթաժողովը, որտեղ Հայաստանը ստիպված էր դիմակայել միջազգային հանրության ճնշումներին՝ արցախյան կարգավորման սկզբունքների հետ կապված<sup>2</sup>: Դրանից հետո փոխվեց բանակցությունների ձևաչափը: Միջնորդները նախընտրում էին անուղղակի բանակցությունների պրակտիկան, օգտագործելով մաքոբային դիվանագիտության գործիքակազմը՝ հերթականությամբ այցելում էին Ադրբեջան, Հայաստան և Արցախ: Հակամարտության կարգավորման տրամաբանությունը կառուցվում էր Լիսաբոնյան սկզբունքների վրա, որոնք էլ, ի վերջո, բանակցային գործընթացը փակուղի մտցրեցին՝ ուղղակի կամ անուղղակի կերպով նպաստելով Հայաստանի ներքաղաքական իրավիճակի ապակայունացմանը, որն ավարտվեց ՀՀ առաջին նախագահի հրաժարականով: Ու անկախ հրաժարականի իրական հիմքերից ու պատճառներից, պետք է փաստել, որ հենց արցախյան կարգավորման ուղիների շուրջ առաջացած հակադրության վարկածը հանդիսացավ այն հիմնավոր փաստարկը, որով լեգիտիմացվեց ՀՀ-ում տեղի ունեցած իշխանափոխությունը:

Արցախյան հիմնահարցի հետ կապված երրորդ «տեկտոնական ալիքը» նկատելի է 2008թ.: Հատկապես նախագահական ընտրությունների ժամանակաշրջանում նկատելիորեն ակտիվացան արցախյան թեմատիկայով քննարկումներն ու ներքաղաքական շահարկումները: Մասամբ, այդ ակտիվացումը պայմանավորված էր ՀՀ առաջին նախագահի՝ մեծ քաղաքականություն վերադարձով ու Արցախյան կարգավորման շուրջ նրա հրապարակային հնչեցրած տեսակետներով: Ընդհանրապես, 2008թ. հայաստանյան ներքաղաքական դիսկուրսում շրջանառվում էին արցախյան կարգավորման ու քաղաքական ուժերի առաջ քաշած դիրքորոշումների մի քանի սցենարներ: Օրինակ՝ «Ժառանգություն» կուսակցությունն ու նրա առաջնորդ Ր. Հովհաննիսյանը առաջ էին քաշում ՀՀ կողմից անմիջապես Արցախի անկախության ճանաչման գաղափարը: Հետագայում ևս այդ կուսակցության ներկայացուցիչները մի անի անգամ արդեն խորհրդարանում փորձեր արեցին այդ հարցը քաղաքական օրակարգ բերելու, որոնք հանրապետական կուսակցության կամ կոալիցիոն քաղաքական մեծամասնության կողմից ձախողվեցին<sup>3</sup>: Այս տարբերակը ևս մեկ անգամ քաղաքական օրակարգ իջավ 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին, երբ ՀՀ երրորդ նախագահ Ս. Սարգսյանը ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպմանը բարձրախոսեց այդ տարբերակի հավանականությունը Ադրբեջանի կողմից Արցախի

<sup>1</sup> Տե՛ս «Ազգ» օրաթերթ, Լոյենբերի 28, 1996թ, էջ 3:

<sup>2</sup> Տե՛ս «Лиссабонский документ 1996 года: Заявление действующего председателя ОБСЕ» [<https://www.osce.org/ru/mc/39543?download=true>]

<sup>3</sup> Տե՛ս «Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման վերաբերյալ հայտարարության նախագծի քննարկումներ Ազգային ժողովում», 28.04.2008 [[http://www.parliament.am/news.php?cat\\_id=2&NewsID=2740&year=2008&month=04&day=28](http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=2740&year=2008&month=04&day=28)]

Նկատմամբ ագրեսիայի շարունակման դեպքում: Չինված գործողությունների դադարից հետո այդ տարբերակի շուրջ քննարկումները նույնպես մարտցին:

Մեկ այլ քաղաքական ուժ՝ ՀՀԴ-ն հանդես էր գալիս Արցախը Հայաստանի Հանրապետության անբաժան մաս դիտարկելու օգտին: Ի դեպ, հիմնահարցի լուծման այս տարբերակին էր ժամանակին հակված նաև ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանը: 2001թ. Քի Ուեսթյան բանակցություններում ամրագրված էր նախկին ԼՂԻՄ-ի անցումը Հայաստանին:

Երկարատև բացակայությունից հետո ակտիվ քաղաքական թատերաբեմ վերադարձած ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի քարոզարշավի առանցքային դրույթներից մեկը հենց Արցախյան հիմնահարցն էր: Մի կողմից նա նշում էր, որ Լեռնային Ղարաբաղի կարգավորման հիմնահարցը հայոց պետականության առջև ծառայած գերագույն խնդիրն է, որից է գերանկախ պետ կախված հայ ժողովրդի բարօրությունն ու տնտեսական բարգավաճումը, իսկ մյուս կողմից՝ մատնանշում, որ այդ հարցի վերաբերյալ ինքը որևէ նոր լուծում չունի<sup>1</sup>: Իսկ իր առաջարկած լուծման տարբերակներից մեկը՝ «փուլային կարգավորման տեսքով» Արցախի և ՀՀ քաղաքական վերնախավն ու ժողովուրդը դեռ 1997թ. մերժել էին:

Հանրապետական կուսակցության թեկնածու Ս. Սարգսյանն իր նախընտրական ծրագրում առաջ էր քաշում երեք՝ Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի միջազգայնորեն ճանաչման, Լեռնային Ղարաբաղի բնակչության և սահմանների անվտանգության, Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև ընդհանուր սահմանի առկայության սկզբունքները<sup>2</sup>: Ի դեպ, Հանրապետական կուսակցության թեկնածուի նախընտրական ծրագրում հստակեցված չէր Արցախի վերջնական կարգավիճակի տեսլականն, ու ՀՀ երրորդ նախագահի պաշտոնավարման հետագա ընթացքն էլ ցույց տվեց, որ այդ դիլեման՝ Արցախը ՀՀ մաս, թե անկախ հանրապետություն, շարունակում է մնալ հայ քաղաքական իսթեբլիշմենթի աքիլեսյան գարշապարը:

Եվ, վերջապես, Արցախյան հիմնահարցի հետ կապված չորրորդ «տեկտոնական» տեղաշարժը նկատելի է մեր օրերում: Մասնավորապես, 2018թ. մայիսին Հայաստանում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունից» հետո նկատելիորեն ակտիվացան նաև արտաքին քաղաքական օրակարգի գերխնդիր Արցախյան կարգավորման քննարկումներն ու դրա հետ կապված շահարկումները: ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանն իր ընտրվելուց մեկ օր անց՝ մայիսի 9-ին Արցախում հանդիպելով հանրապետության բարձրագույն ղեկավարության հետ՝ կարևորելով արցախյան հիմնախնդրի բանակցային գործընթացի շարունակությունը, միաժամանակ նշել էր, որ պատրաստ է բանակցել Ադրբեյջանի նախագահի հետ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության շրջանակներում, սակայն բանակցային այդ ֆորմատը լիարժեք չի համարում, քանի որ դրան չի մասնակցում հակամարտության լիարժեք կողմերից մեկը՝ Արցախը<sup>3</sup>: «Մենք նաև կարծում ենք, որ պետք է ջանքեր գործադրենք, այդ թվում՝ սփյուռքի ներուժն օգտագործելու ուղղությամբ, որպեսզի Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումն ոչ միայն շարունակվի, այլ նաև նոր թափ ստանա: Մենք հավատարիմ ենք հարցի բացառապես խաղաղ կարգավորմանը և դատապարտում ենք ուժի կիրառման որևէ գործողություն կամ սպառնալիք: Որևէ կասկած չկա, որ Հայաստանի կառավարությունը կգործադրի բոլոր հնարավոր ջանքերն Արցախի Հանրապետության և նրա ժողովրդի շահերը պաշտպանելու համար, այդ թվում՝

<sup>1</sup> Տե՛ս **Գալստյան Խ.**, նշվ. աշխ., էջ 51:

<sup>2</sup> Տե՛ս <http://hkk.am/hy/election-program/>

<sup>3</sup> Տե՛ս Վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատանքային այցը Արցախի Հանրապետություն [http://www.primeminister.am/hy/Artsakh-visits/item/2018/05/09/Prime-Minister-Nikol-Pashinyan-visited-Artsakh/]

միջազգային ասպարեզում, բայց կարծում եմ, որ Արցախի Հանրապետության և ժողովրդի շահերը միջազգային ասպարեզում լավագույնս կպաշտպանեն հենց Արցախի իշխանությունները: Ուստի մեր ջանքերը պետք է ուղղված լինեն նրան, որ Արցախի Հանրապետությունը և իշխանությունն օր առաջ միջազգայնորեն ճանաչվի»,- նշել էր Ն. Փաշինյանը<sup>1</sup>: Եթե Արցախին բանակցությունների սեղանին վերադարձնելու քաղաքական գիծը ՀՀ վարչապետը հետևողականորեն պաշտպանում է, ապա նույնը չի կարելի ասել Արցախի միջազգային ճանաչման մասին: Արդեն 2018թ. սեպտեմբերի 8-ին, Մոսկվայում Ն. Փաշինյանը հայտարարել էր, որ պատկերացնում է Արցախը որպես Հայաստանի մաս, որին կարելի է հասնել մի քանի քայլով<sup>2</sup>: Իսկ այն քաղաքական դիսկուրսը, որ ծավալվեց տարածքների հանձնման շուրջ, երբ ՀՀ ներկա և նախկին իշխանության առաջին դեմքերը միմյանց մեղադրեցին հող հանձնել-չհանձնելու մեջ, ուղղակի անթույլատրելի ու կործանարար կարող է լինել հայոց պետականության համար ու կարող է վտանգել հայկական երկու հանրապետությունների գոյությունն ընդհանրապես:

Հետևաբար, տրամաբանական հարց է առաջանում. Ի՞նչ անել, ինչպե՞ս նման կարգի վտանգավոր շահարկումներից հեռու պահել հայաստանյան ներքաղաքական դաշտը: Այս հարցերին պատասխանելու համար, մենք՝ համայն հայությամբ, առնվազն երեք խնդիր-հարցադրումների պետք է պատասխանենք.

Խնդիր 1. Ի՞նչ արժեքային նշանակություն ունի Արցախյան հիմնահարցը հայության համար: Ինչի՞ ենք մենք պատրաստ հանուն Արցախի: Ինձ համար հարցը միանշանակ է. Արցախը հայ ժողովրդի էթնոգենեզի կարևոր օջախներից է, հայկական պատմամշակութային ժառանգության, արժեքային համակարգի անքակտելի մասը: Ըստ էության, հայ ժողովրդի նորոյա պատմության շավիղներում մենք ազատ ու անկախ Արցախից ավելի լուսավոր կետ չունենք, ժամանակից հայի համար ոգեշնչման, ինքնավիրաբերման ու ինքնագոհաբերման ուրիշ աղբյուր չունենք: Հետևաբար, Արցախյան կարգավորման համատեքստում մեր ուղեղներում ու կոնկրետ գործողություններում մենք միշտ պետք է նկատի ունենանք «ազգ - մահապարտ» հայեցակարգը: Աստված մի արասցե, սակայն անհրաժեշտության դեպքում մեր հակառակորդները կարող են բախվել բազմամիլիոնանոց մահապարտների բանակի հետ: Սա արդեն անպարտելի ուժ է:

Խնդիր 2. Երկրորդ հիմնախնդիրը ինստիտուցիոնալ բնույթի է: Հարցը հետևյալն է, թե ինչպի՞սի պետություն ենք մենք ցանկանում ունենալ և ո՞րն է լինելու արդիականության պայմաններում հայության գոյաբանության նոր բանաձևը: Ըստ էության, քաղաքական համակարգի ու պետության այն մոդելը, որը մենք կառուցում էինք անկախացումից ի վեր, պարզվեց, ոչ այլ ինչ էր, եթե ոչ հանուն իշխանության մղվող ներտեսակային կոշտ պայքար, որն աչքի ընկավ տասնյակ քաղաքական սպանություններով, սոցիալական ապատիայի, զանգվածային անոմիայի երևույթներով ու անկախ հայրենիքից հեռանալու, օտար ափերում բախտ որոնելու անդառնալի ու չդադարող հոսքով: Հայաստանում իրականացված թավշյա հեղափոխությունը պետք է դիտարկել նաև այս բացասական երևույթների լույսի ներքո, որպես ազգի ինքնապաշտպանական (կամ մի գուցե ինքնառջնացման) ռեակցիա:

Մեր հայրենակից Տարոն Աճեմօղլուն և Ջեյմս Ռոբինսոնը իրենց հայտնի աշխատություններից մեկում<sup>3</sup> առաջ են քաշում այն թեզը, որ պետությունների հարստության կամ աղքատության, այլ կերպ ասած՝ արդյունավետության կամ

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս «Ես պատկերացնում եմ Արցախը որպես Հայաստանի մաս. Նիկոլ Փաշինյանը՝ Արցախի խնդրի մասին» [<https://news.am/arm/news/470065.html>]

<sup>3</sup> Տե՛ս Ա. Аджемоглу Д., Робинсон Дж. Почему одни страны богатые, а другие бедные. Происхождение власти, процветания и нищеты. М., АСТ, 2016.

անարդյունավետության հիմնական պատճառները տվյալ հասարակական-քաղաքական համակարգում գործառնող արդյունահանող (էքստրակտիվ) և ներառող (ինկլյուզիվ) ինստիտուտներն են: Առաջինների դեպքում քաղաքական ընտրախավերը կառավարում են երկիրը նեղ անձնական շահերից ելնելով, հասարակության առկա ռեսուրսները բաշխում են իշխանության մեջ գտնվող սակավաթիվ թվով մարդկաց միջև: Այս հայեցակարգին մոտ է նաև մեկ այլ ամերիկյան գիտնական Մանսուր Օլսենի նստակյաց բանդիտի տեսությունը, ըստ որի պետությունը կարող է գործառնել այնպես, որ երկարաժամկետ կտրվածքով ապահովի կոնկրետ տարածքի վերահսկումն ու բնակչությունից կայուն եկամուտների ստացումը (թալանը) հարկերի և հավաքագրման այլ եղանակների տեսքով<sup>1</sup>: Երկրորդ դեպքում պետության արդյունավետ գործառնության կարևոր գրավական է համարվում ներառող ինստիտուտների գործունեությունը, որը թույլ է տալիս հնարավորինս շատ մարդկաց մասնակցել նյութական բարիքների ստեղծման և դրանց արդյունքների արդարացի բաշխման գործընթացներին ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ինստիտուտների միջոցով:

Խնդիր 3. Երրորդ խնդիրը հասարական ու անհատական վարքագծի դաշտում է: Մեր խորին համոզմամբ, հայոց պետականության առջև ծառայած ներկա մարտահրավերների հաղթահարումն ու Արցախյան կարգավորման հարցի վերջնական լուծումը հնարավոր է արժեքային ու վարքագծային լուրջ փոխակերպումների արդյունքում՝ հիմնված պատերազմական իրողություններին համահունչ պետության ու հասարակության գործառնության սկզբունքների վրա: Ըստ այդմ,

- անթույլատրելի ենք համարում Արցախյան հարցում որևէ ձևով դրսևորվող ներքաղաքական շահարկումները,
- գտնում ենք, որ հարցի վերջնական և հայանպաստ լուծմանը հնարավոր է հասնել միայն հայության բոլոր հատվածների միասնականության, համախմբվածության և համերաշխության շնորհիվ,
- կոչ ենք անում ՀՀ նոր իշխանություններին ձևավորել արցախյան հիմնահարցի կարգավորման նոր հայեցակարգ, հրաժարվել նախկինում ձեռք բերված պայմանավորվածություններից և սկսել բանակցությունները զրոյական կետից,
- Հետևողականորեն առաջ տանել հակամարտության կարգավորման բանակցությունների իրական ձևաչափի վերականգնման ու Արցախի օրինական ընտրված իշխանությունների՝ բանակցություններին ուղղակի ներգրավման հարցը:
- Ընդգրկել Արցախի ներկայացուցիչներին միջազգային տարբեր մակարդակի հանդիպումներում:
- Ընդունել արցախականետրոն աշխարհաքաղաքականության հայեցակարգը:
- Նախադեպային իրավունքի հիման վրա հռչակել Արցախի և Հայաստանի հանրապետությունը և ՄԱԿ ում նախաձեռնել նոր պետության ճանաչման գործընթացը:

Մեր խորին համոզմամբ, Արցախյան հիմնախնդրի լուծման բանալին արժեքային, իրավական ու քաղաքական ոչ ստանդարտ, ստեղծարար, այլընտրանքային ու նախադեպային որոշումների դաշտում է, որն արտացոլելու է իր հայրենիքում ազատ ու անկախ ապրելու, արարելու ու հարատևելու հայի աստվածատուր կարողությունը:

<sup>1</sup>S է 'u Օլսոն Մ. Диктатура, демократия и развитие // Экономическая политика. 2010. № 1., с 170.

**Խաչիկ Գալստյան**  
**ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅՈՑ ՆՈՐՈՐՅԱ**  
**ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՍՈՒՄ**

**Բանալի բառեր՝** Արցախյան հիմնախնդիր, հայկական պետականություն, տեկտոնական տեղաշարժեր, արցախակենտրոն աշխարհաքաղաքականություն, նախադեպային իրավունք

Հոդվածում առաջ է քաշվում այն գաղափարը, որ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից ի վեր, հայ ժողովրդի ամենաարդիական, կենսական նշանակություն ունեցող, և՛ արտաքին, և՛ ներքին քաղաքականության անկյունաքարը հանդիսացող հիմնահարցը եղել և շարունակում է մնալ արցախյան հիմնախնդիրը, որն ուղղակի ազդեցություն է թողնում նաև արդի հայաստանյան քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների վրա: Մասնավորապես, հիմնավորվում է այն թեզը, որ Հայաստանի ներկայիս Հանրապետության քաղաքական կյանքում արցախյան հիմնախնդիրն ու կրա շուրջ ընթացող զարգացումները որոշակի պարբերականությամբ (1988, 1998, 2008, 2018) «տեկտոնական տեղաշարժեր են» առաջացրել՝ վերածնելով ողջ քաղաքական դաշտը:

**Khachik Galstyan**

**THE ARTSAKH ISSUE IN THE CONTEXT OF THE ESTABLISHMENT  
OF THE MODERN ARMENIAN STATEHOOD**

**Key words:** *Artsakh problem, Armenian statehood, tectonic shifts, artsakhocentric geopolitics, case law*

Since the proclamation of the independence of the Republic of Armenia, the Artsakh problem has been and remains the most actual problem of the Armenian people, the cornerstone of both the foreign policy and internal political agenda. Yes, it should be emphasized that the independence of the Republic of Armenia, the political, social and economic processes taking place in the country bear the "Karabakh seal". Moreover, in the political life of the present Republic of Armenia, the Artsakh problem and the events around it periodically caused "tectonic shifts" (1988, 1998, 2008, 2018), reconstructing the domestic political landscape of Armenia.

**Хачик Галстян**

**АРЦАХСКАЯ ПРОБЛЕМА В КОНТЕКСТЕ СТАНОВЛЕНИЯ  
СОВРЕМЕННОЙ АРМЯНСКОЙ ГОСУДАРСТВЕННОСТИ**

**Ключевые слова:** *Арцахская проблема, армянская государственность, тектонические сдвиги, арцахоцентричная геополитика, прецедентное право*

С момента провозглашения независимости Республики Армения самой актуальной проблемой армянского народа, краеугольным камнем как внешнеполитической, так и внутривнутриполитической повестки была и остается арцахская проблема. Да, следует подчеркнуть, что независимость Республики Армения, протекающие в стране политические и социально-экономические процессы несут на себе «карабахскую печать». Более того, в политической жизни нынешней Республики Армения арцахская проблема и события вокруг нее периодически вызывали «тектонические сдвиги» (1988, 1998, 2008, 2018), перестраивая весь политический ландшафт Армении.

## СОВРЕМЕННЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ В АРМЕНИИ

### *МАРЕК ЖЭЙМО*

Армения получила независимость в результате распада Советского Союза, и почти четверть века существует как полноправный международный субъект. За это время политические элиты не сумели создать в государстве стабильную институционально-правовую модель, которая позволяла бы добиваться прогресса в развитии демократии. Армянское сообщество многократно демонстрировало свою неудовлетворенность безуспешными попытками экономической и политической трансформации реальности нынешними политическими элитами Армении. Ведь они привели к экономическому упадку страны и усугубляемому обнищанию общества. Наблюдатели за общественно-политической жизнью кавказских государств сигнализируют о признаках удовлетворения разного рода потребностей, связанных с повышением уровня жизни граждан Армении, независимо или даже вопреки намерениям представителей государственного аппарата. Это видно хотя бы по значительному объему эмиграции, потому что в период с 1992 по 2010 годы из страны, численность которой составляла 3,2 миллиона человек, эмигрировало значительно больше одного миллиона, из которых почти 65% попало в Россию<sup>1</sup>.

Последняя всеобщая перепись населения была проведена в 2011 году и констатировала, что в Армении проживало тогда около 2,9 миллиона граждан<sup>2</sup>.

В повседневной жизни Армении наблюдается все еще продолжение постсоветского прошлого, а также в значительной степени имеет место экономическая зависимость от современной России. Современная политическая система Армении, которая начала формироваться более двадцати пяти лет назад, похожа на гибридный режим, так как несколько раз вносились изменения в конституцию, с целью приблизить ее к модели, соответствующей ожиданиям общества<sup>3</sup>.

В настоящее время Армения является типичным примером постсоветского государства, в котором, хотя и существуют черты демократии, такие как, всеобщие выборы, однако доминирует в них защита интересов правящих групп и одновременно наблюдается неодобрение и общественная неприязнь к политике и политикам. Появляются также авторитарные тенденции, способствующие сужению политического пространства и доминированию одной политической партии с ее лидером, что ведет к неустойчивости демократической системы<sup>4</sup>.

Структуры нового свободного армянского государства возникли в чрезвычайно сложной геополитической ситуации, сложившейся тогда на всем Южном Кавказе.

В этом случае существенной преградой на пути формирования государства была война с Азербайджаном за Нагорный Карабах. На территории, где шли военные действия, не соблюдались права человека. Для Армении период войны был связан с политической и экономической изоляцией на международной арене. В 1992-1994 годы из-за банкротства большинства государственных предприятий, экономическая система Армении практически перестала существовать. Блокада границ с Турцией и

<sup>1</sup>RaportmisjibadawczejdoRepublikiArmenii, Wydział InformacjiokrajachPochodzenia, UrządodSprawCudzoziemców, Warszawa 2011.

<sup>2</sup>K.Fedorowicz, Kształtowanie się systemu politycznego i proces transformacji ustrojowej, [w:] red. P. Nieczuja-Ostrowski, Armenia. Dziedzictwo a współczesne kierunki przemian kulturowo-cywilizacyjnych, Poznań 2016, s. 27-28.

<sup>3</sup>K. Fedorowicz, Transformacja ustrojowa w Armenii w latach 1991-2016, Poznań 2017, s. 408.

<sup>4</sup>W. Baluk, A. Czajowski, Ustroje polityczne krajów Wspólnoty niepodległych Państw, Wrocław 2007, s. 8.

Азербайджаном повлекла за собой недостатки в снабжении продовольствием, электроэнергией, газом и жидким топливом. В связи с этим правительство вынуждено было ввести рационирование продуктов питания и регламентирование электроснабжения<sup>1</sup>.

Вооруженный конфликт за Нагорный Карабах (Арцах) в 1992-1994 годы, приведший к изоляции на международной арене, оказал явно отрицательное влияние на формирование политической системы новосоздаваемого государства и отрицательно повлиял на процесс политических преобразований<sup>2</sup>.

Неблагоприятные последствия конфликта с Азербайджаном были дополнительно усугублены трагическим землетрясением в 1988 году, когда в один миг потеряли жизнь 25 тысяч человек, более 30 тысяч были ранены и около 500 тысяч потеряли крышу над головой. Материальный ущерб был огромным, оценен почти в 17 миллиардов долларов США, что отрицательно сказалось на результатах экономики Армении также и в 90-е годы. Вышеупомянутые факторы означали, что использование силовых методов для достижения политических целей стало существенным элементом дестабилизации политической системы государства<sup>3</sup>.

В начале трансформации важнейшей задачей новых властей Армении было создание статуса суверенного государства с его юридическими кодексами, которые должны были отличаться от действующих правовых норм СССР. Это также относилось к необходимости создания заново правовых и экономических положений, позволяющих функционировать предприятиям в новой системе со свободной экономикой, действующей в условиях частных форм собственности.

Создание правовых основ, обеспечивающих функционирование всех площадок новой государственности, проходило в спешке и в правовом хаосе, поскольку не хватало соответствующего персонала, располагающего надлежащими знаниями и опытом.

Элита новых властей пришлось столкнуться с проблемой создания не только конституционной системы, но и формирования правовой основы для функционирования экономики, всех сфер законодательства, налоговой системы, принципов приватизации, системы образования, здравоохранения и так далее, что часто проходило в очень неблагоприятных политических условиях<sup>4</sup>.

Возможность создания собственного конституционного права появилась в Армении в начале 1990-х годов, когда в Конституцию Армянской Социалистической Советской Республики (АССР) была внесена запись о том, что законодательство Советского Союза действует на территории АССР только после его ратификации Верховным Советом Армении. Существенным событием стало преодоление монополии Коммунистической партии при выдвижении кандидатов во время парламентских выборов и возможность участия в выборах кандидатов из других политических партий и общественных организаций.

Применение нового закона о выборах в июне 1990 года позволило добиться решающей победы на выборах в Верховный Совет Армении оппозиционного Армянского общенационального движения (АОД), которое получило в новоизбранном

<sup>1</sup>P. Nieczuja-Ostrowski, *Demokratyzacja w Armenii w kontekście wyborów parlamentarnych i prezydenckich*, [w:] *Studia Gdańskie. Wzjeirzeczywistość* 2011, t. 8, s. 97-98.

<sup>2</sup>М. Карапетян, Карабахский конфликт и стабильность на Южном Кавказе, „Центральная Азия и Кавказ”, 2003, № 5 (29), с. 94-95.

<sup>3</sup>А. Э. Хачикян, *История Армении*, Ереван 2009, с. 214-215; G. Szagojan, *Pamięć otrzęsieniuziemiwGiumri*[w:] *Armenia: kulturawspółczesnanawjęciuantropologicznym*, red. L. Obrahamian, K. Siekierski, Warszawa 2014, s. 119-140.

<sup>4</sup>А. Курдов, *Независимая Армения: взгляд российских аналитиков*, „Центральная Азия и Кавказ”, 1999, № 2 (3), с. 98.

парламенте 90% мест<sup>1</sup>. В августе 1990 года под руководством Левона Тер-Петросяна был принят чрезвычайно важный документ – Декларация о независимости Армении, которым было установлено перераспределение власти, многопартийность, равенство политических партий, свобода слова, а также принцип деполитизации судебной власти, армии и государственной администрации. Также на основании этого документа было изменено название государства с Армянской Советской Социалистической Республики на Республику Армения<sup>2</sup>.

Как и в большинстве бывших советских республик было решено создать президентскую систему правления, а президент избирался во время всеобщих и непосредственных выборов. Первые президентские выборы состоялись в октябре 1991 года, а Леон Тер-Петросян добился решающей победы с более чем 83% голосов. Затем Верховный Совет принял резолюцию о том, что Армения не будет принимать участия в референдуме по вопросу о сохранении СССР, одновременно объявляя независимость Республики Армения<sup>3</sup>. Однако, несмотря на решительные свободолобивые декларации, большинство правовых норм было унаследовано от советских времен, а отсутствие Конституции было временно заменено парламентариями переходными положениями, которые должны были регулировать фундаментальные вопросы политической системы.

В сложившейся политической обстановке основными шагами к стабилизации и возможности развития армянского государства стали разработка и принятие новой Конституции.

В результате бурных дискуссий о форме, способе принятия Конституции и ее основных принципов, появились два разных проекта. Президент Левон Тер-Петросян при поддержке большинства парламентариев выступил за принятие Конституции путем общенародного референдума. Оппозиция же предпочитала принятие Конституции Конституционным собранием Армении, поскольку парламент представлял позиции действующего президента, который выступал за создание сильной президентской власти с не очень сильной позицией законодательной палаты<sup>4</sup>.

Сторонники парламентской системы подчеркивали ее положительное влияние на демократизацию страны и решительно выступали против сосредоточения власти в руках президента. Зато сторонники президентской системы, которые были сплочены вокруг Левона Тер-Петросяна, утверждали, что нынешний парламент относится к временам Советского Союза, его политическая позиция слаба, что приведет к постепенной дезинтеграции политической системы Армении. Они также указывали на нерешенный территориальный спор с Азербайджаном, продолжающуюся войну в Нагорном Карабахе и связанные с этим экономическую и пограничную блокаду со стороны Турции и Азербайджана. Вполне аргументированно, что в таких сложных политических и экономических условиях для развития страны было бы более полезным создание сильной власти президента, у которого в чрезвычайных ситуациях будет возможность оперативно принимать решения<sup>5</sup>.

Процесс формирования Конституции, принятой только в 1995 году, длился слишком долго и характеризовался глубокими политическими разногласиями,

<sup>1</sup>A. Czajowski, *Republika Armenii* [w:] *Ustrojepolitycznekrajów Wspólnoty Niepodległych Państw*, red. W. Baluk, A. Czajowski, Wrocław 2007, s. 174–175.

<sup>2</sup>L. Ter-Petrosian, A. Sahakian, *Declaration of Independence of the Republic Armenia*, <http://www.armenica.org/armenia/doi.html> [dostęp: 16.07.2018].

<sup>3</sup>А. Э. Хачикян, *История Армении...*, *op. cit.*, s. 219.

<sup>4</sup>А.Маркаров, *Реформа политических институтов в процессе демократического транзита в Армении*, „Центральная Азия и Кавказ”, 2001, *нр. 4*, с. 114–115.

<sup>5</sup>A. Markarov, *Regime Formation and Development in Armenia*, [w:] *Empire, Islam, and Politics in Central Eurasia*, (red.) Uyama T., Sapporo 2007, s. 304–305.



относящимися к основам политической системы. Наконец, из-за существующего вооруженного конфликта, был принят вариант, поддерживающий сильную президентскую власть. С целью ускорить стабилизацию, было решено сформировать президентско-парламентскую республику. Президент получил право назначать премьер-министра и членов кабинета, генерального прокурора и главнокомандующего вооруженными силами, а также роспуска парламента и объявления о досрочных выборах. За ним остался решающий голос по вопросам, связанным с внешней политикой, государственной безопасностью или проведением экономических реформ. Кроме того, президент был гарантом независимости судебных органов и выполнял функцию председателя Судебного совета Армении. Принятая Конституция, несмотря на установление принципа разделения власти, создала условия для доминирования президента в политической системе Армении<sup>1</sup>. Следует подчеркнуть факт, что слишком глубокие связи президента с правосудием и правительством нарушали принцип трехстороннего разделения власти. Президент, который не относился к исполнительной власти, в политической системе выступал в качестве «суперарбитра», поднимаясь над остальными органами власти. Для политических наблюдателей совершенно непонятно было то, что в течение десяти лет (до внесения поправок в Конституцию в 2005 году), президент путем декретов и распоряжений, имеющих законную силу, регулировал практически все сферы общественно-политической жизни, которые не всегда были точно юридически определены. Конституционные положения, которые тогда были приняты, оказали неотвратимое влияние на форму и функционирование политической системы Армении в последующие годы. Доминирование главы государства, как формальное, так и неформальное, стало отличительной чертой политической системы Армении<sup>2</sup>.

Принятие новой Конституции стало последним этапом в формировании независимой государственности Армении. Основным законом были определены системные основы Армении, особенно структура высших государственных органов, и место парламента в политической системе. Новая Конституция внесла в политическую систему элементы классического парламентаризма и президентской системы, формирующие модель смешанной формы правления. В случае Армении сочетание парламентской формы правления с президентской моделью было введено по образцу и опыту полупрезидентской системы Пятой Республики Франции. Конституция Армении 1995 года установила сильную позицию президента, который был гарантом гармоничного функционирования законодательной, исполнительной и судебной властей. Хотя в Конституции был учтен принцип разделения власти, на самом деле президент обладал значительными возможностями влияния на деятельность законодательной, исполнительной и судебной властей. Несмотря на выделение функции премьер-министра, президент был реальной главой правительства. Президент председательствовал на заседаниях правительства, а все решения правительства должны были быть им одобрены. Он получил право назначать премьер-министра и членов его кабинета, генерального прокурора и главнокомандующего вооруженными силами, а также право распускать парламент и объявлять досрочные выборы. Кроме того, ему принадлежал решающий голос по вопросам, связанным с внешней политикой, государственной безопасностью или проведением экономических реформ. Президент стал гарантом независимости судебных органов и занимал пост председателя Совета

<sup>1</sup>A.Markarov, *Macroinstitutional Political Structures and Their Development in Armenia*, "Demokratizatsiya. The Journal of Post-Soviet Democratization", 2006, vol. 2, s. 161-162.

<sup>2</sup>K.Fedorowicz, *Transformacja ustrojowa w Armenii w latach 1991-2016*, Poznań 2017, s. 154-155.

судебной системы<sup>1</sup>.

Сильная позиция президента в политической системе Армении привела к значительному ослаблению политической позиции парламента, который с тех пор вынужден был быть законодательным органом с ограниченными возможностями осуществления контроля. В случае, когда президент имеет большинство в парламенте, он практически владеет неограниченными полномочиями во всех сферах государственной власти. В Армении такая ситуация сложилась в 1995-1997 годах, когда президент доминировал в политической жизни, и это означало функционирование суперпрезидентской системы<sup>2</sup>. Армения выбрала вариант однопалатного парламента, название которого было изменено с Верховного Совета на Национальное Собрание Армении. В 1995 году число депутатов сократилось с 260 до 190, из которых 150 были избраны по пропорциональной системе, а остальные 41 – по мажоритарной системе. В 1999 году до парламентских выборов было принято решение о сокращении числа депутатов с 190 до 131<sup>3</sup>. Однако все действия правительства и парламента не привели к убеждению граждан Армении в том, что осуществились демократизация власти и беспрепятственный доступ к ней. Часто менялись премьер-министры, а перед каждыми выборами вносились изменения в избирательный закон, с целью ограничения возможности активных и эффективных действий представителей оппозиции<sup>4</sup>. Результаты всех последующих выборов, по утверждению оппозиции, подвергались сомнению, поэтому принимались попытки изменить результаты выборов, а недовольные армяне демонстрировали свое несогласие на улицах города. В случае Армении постсоветская реальность оказалась сложной для принятых моделей трансформации, а ее последствия показали, что построение новой системы не становится одноуровневым явлением, которое привело бы к осуществлению унифицированной модели демократии. Сложные политические и общественные условия, сложное историческое прошлое, вооруженные конфликты, а также необходимость формирования в таких условиях государственных учреждений практически с нуля, без возможности сослаться на собственное прошлое и опыт, привели к тому, что результатом системной трансформации до сих пор в основном являются различные модели национальной демократии, предпочитающие в большинстве своем сильное авторитарное президентство.

В большинстве постсоветских стран процесс системной трансформации часто бывает постоянным, что создает значительные трудности в формировании новых системных решений или подтверждает отсутствие возможности или желания достичь прорыва и консолидации системы<sup>5</sup>.

Политическая система Армении находится в состоянии так называемой постоянной трансформации и имеет много характерных черт гибридного режима. Продолжающийся более четверти века процесс трансформации в этой стране не привел к сформированию консолидированной политической системы. Системная трансформация в Армении является примером модели открытой трансформации, предполагающей, что данное государство может отказаться от существующей до сих пор авторитарной системы, но оно не обязано безоговорочно стремиться к либеральной демократии. Политическая система все еще находится в состоянии застоя и не может

<sup>1</sup>А. Маркаров, Реформа политических институтов в процессе демократического транзита в Армении, „Центральная Азия и Кавказ” 2001, нр. 4, с. 115–116.

<sup>2</sup>А. Маркаров, Реформа политических институтов..., *op. cit.*, s. 117

<sup>3</sup>А. Куртов, Конституционное устройство Республики Армения [b:] Армения: проблемы независимого развития, ред. Е. Кожокин, Москва 1998, с. 48.

<sup>4</sup>S. Bożyk, System konstytucyjny Armenii, Warszawa 2012, s. 16–17.

<sup>5</sup>T. Carothers, The End of the Transition Paradigm, „Journal of Democracy”, vol. 13, s. 8-14.

быть признана консолидированной (Norkus 2012). Проблема системных изменений в Армении требует научного анализа и объяснения, предпринимаются ли властями модифицирующие политическую систему действия, направленные на формирование современного демократического политического режима, или только выполняют функцию маскировки, чтобы под видом так называемой демократизации, проводимой главным образом для использования внешних субъектов, фактически сохранить существующую специфическую кавказскую систему, не нарушая ее основ.

Процесс демократизации и формирования собственной государственности в Армении был тесно связан с появлением новой националистической элиты, деятельность которой в основном концентрировалась на проблеме Нагорного Карабаха. Проблема эта стала основным источником легитимности новых элит, а формирование нового государства и строительство его институтов совершалось одновременно с мобилизацией вооруженных сил для борьбы с Азербайджаном за спорные территории. В то же время военный фактор и силовые структуры стали одним из важнейших фундаментов армянской государственности. В условиях начинающегося вооруженного конфликта естественным образом появилась потребность эффективной исполнительной власти в виде президента с большими полномочиями. Нужно было стабильное и единоличное управление главы государства, который был бы не только представителем, арбитром и медиатором в политической системе, но, прежде всего, сильным лидером, гарантирующим суверенитет и безопасность государства и народа. Армения, как и большинство постсоветских государств, на первом этапе процесса трансформации клонилась к полупрезидентской системе. Популярность полупрезидентской системы на постсоветском пространстве, особенно на Южном Кавказе, имеет глубокое обоснование. Распад постсоветского пространства, а также политические и общественные условия в значительной степени способствовали сформированию единоличного государственного органа (чаще всего по формуле президента), представляющего свое государство и народ. Это четкое олицетворение власти сложилось, во-первых, из-за преемственности политических элит СССР и, во-вторых, из-за опыта советского государства, в котором каждую республику возглавлял секретарь Коммунистической партии. Кроме того, взрывы этнических конфликтов побудили элиты искать такие системные решения, которые приводили бы к быстрой политической стабилизации. Это стало причиной выбора «безопасного» и гарантирующего умеренную стабильность сильного президентства, часто с характерными чертами так называемого мягкого авторитаризма. Были установлены политические режимы, основанные на доминировании президента, избираемого на всеобщих выборах, которые стали характерным символом постсоветского пространства.

Во внесенных в Армении поправках в Конституцию, как в 2005 году, так и в 2015 году, негативным элементом стал факт того, что каждое изменение в Основной закон имело свой источник в президентском центре. Кроме того, процесс внесения поправок в Конституцию осуществлялся главным образом в тиши кабинетов, при участии небольшой группы экспертов и политиков. Не было общей информации о причинах, масштабах и целях поправок. Не были учтены (или не планировалось учесть) предложения и мнения общественности, которая практически была исключена из этого процесса и в определенное время была только проинформирована об изменениях, не имея возможности выразить свое мнение. Фактически, участие общественности в референдуме ограничивалось актом общей легитимации решений, принятых небольшой группой в отношении внесения поправок в самый важный правовой акт<sup>1</sup>. Через двадцать пять лет после трансформации политической системы в Армении наблюдается

---

<sup>1</sup>K. Fedorowicz, Transformacja ustrojowa w Armenii ..., op. cit., s. 154.

реальная слабость государственных институтов и четкое предпочтение права политического прагматизма, доминирующего в деятельности политической элиты, правительства. Демократия воспринимается как фасад и символически. Мы все еще имеем дело со слишком большим разногласием между формальными решениями и реалиями политической жизни. Элементом, вызывающим значительное ограничение возможности модифицирования политической системы по-прежнему остается сильное и доминирующее положение главы государства. Одним из основных факторов такой деформации системы является влияние неразрешенного конфликта в Нагорном Карабахе, который объединяет весь политический класс вокруг лозунгов сохранения нынешних территориальных завоеваний и нежелания компромиссных решений этого конфликта под эгидой международных организаций. Это влечет за собой явное ограничение возможностей реальных изменений в конституционной системе. Произведенные изменения и поправки в Конституцию, с одной стороны, являются попыткой поиска соответствующей политической модели и выхода из так называемой постоянной трансформации. С другой стороны, по мнению автора, они используются только для публичной демонстрации внешним объектам политической воли элит к постепенной демократизации системы путем углубления парламентской системы. Принимая во внимание содержание и характер решений относительно формы будущей политической системы, можно предположить, что эти изменения направлены на формирование в ближайшем будущем (после 2018 года) системы, приближенной к системе канцлера, в которой канцлер (премьер-министр) будет одним из самых главных лиц в государстве. Таким образом, политическая система будет сформирована путем формального «углубления» парламентской системы, без существенного нарушения функционирующей до сих пор элитной системы.

**Марек Жэймо**

## **СОВРЕМЕННЫЕ НАПРАВЛЕНИЯ ПОЛИТИЧЕСКИХ ИЗМЕНЕНИЙ В АРМЕНИИ**

**Ключевые слова:** *Армения, Конституция, политическая система, трансформация*

Статья представляет собой беспристрастный анализ процесса политических трансформаций в современной Армении.

Работа автора охватывает период с конца 1990-ых годов по 2018-ый год. Автор представляет свое видение направлений, целей и результатов происходящих в Республике Армения системных политических изменений, отмечает факторы, препятствующие развитию демократических институтов и гражданского общества в стране. Отдельное внимание он уделяет влиянию политического наследия распавшегося СССР на процессы в постсоветских государствах, в том числе в Республике Армения.

Данная статья позволяет посмотреть со стороны на происходящие в Армении внутривнутриполитические процессы, трезво оценить ситуацию и извлечь уроки из ошибок прошлого.

**Մարեկ ժեյմո**  
**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**  
**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

**Բանալի բառեր՝** *Հայաստան, Սահմանադրություն, քաղաքական համակարգ, փոխակերպում*

Հոդվածն իրենից ներկայացնում է ժամանակակից Հայաստանում քաղաքական փոխակերպումների գործընթացի անաչառ վերլուծություն:

Հեղինակի աշխատանքն ընդգրկում է 1990-ական թթ. վերջից մինչև 2018թ. ընկած ժամանակահատվածը: Հեղինակը ներկայացնում է Հայաստանի հանրապետությունում տեղի ունեցող համակարգային քաղաքական փոփոխությունների ուղղությունների, նպատակների ու արդյունքների վերաբերյալ իր մոտեցումները, ընդգծում այն գործոնները, որոնք խանգարում են երկրում դեմոկրատական ինստիտուտների ու քաղաքացիական հասարակության զարգացմանը: Հեղինակն առանձին ուշադրություն է դարձնում փլուզված ԽՍՀՄ-ի քաղաքական ժառանգության ազդեցությունը հետխորհրդային պետություններում, այդ թվում՝ Հայաստանի հանրապետությունում տեղի ունեցող գործընթացների վրա:

Սույն հոդվածը թույլ է տալիս կողքից դիտել Հայաստանում տեղի ունեցող ներքաղաքական գործընթացները, սթափ գնահատել իրավիճակը և դասեր քաղել անցյալի սխալներից:

**Marek Zejmo**

**MODERN DIRECTIONS OF POLITICAL CHANGES IN ARMENIA**

**Keywords:** *Armenia, Constitution, political system, transformation*

The report is an impartial analysis of the process of political transformation in modern Armenia.

The work of the author covers the period from the late 1990s to the 2018th year. The author presents his vision of the directions, goals and results of the systemic political changes taking place in the Republic of Armenia, noting the factors hindering the development of democratic institutions and civil society in the country. He pays special attention to the influence of the political heritage of the collapsed USSR on the processes in the post-Soviet states, including in the Republic of Armenia.

This article allows one to look at the internal political processes taking place in Armenia, to soberly assess the situation and draw lessons from past mistakes.

## ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՂԴԵՑՈՒԹՅՈՒՆ ԶԱՅ-ԹՈՒՐԵԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ 1990-1992 ԹԹ.

### ԱՐԲԱՀԱՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ, ԱՆԱՀԻՏ ՉԱԼԻԿՅԱՆ

Մինչև 1990թ.<sup>1</sup> Արցախյան շարժման պատերազմի վերաճելը, Թուրքիան ձեռնապահ էր հետխորհրդային տարածաշրջանում ընթացող գործընթացներից: Անկախության նման վերաբերմունքը որոշ վերլուծաբաններ բացատրում են հանգամանքով, որ Թուրքիայի համար դարաբաղյան հարցը ԽՍՀՄ ներքին խնդիր էր<sup>2</sup>: Հարկ է ընդգծել, որ հարցն առավելապես պայմանավորված էր Թուրքիայի հնարավորությունների սահմանափակմամբ և ոչ ԽՍՀՄ ինքնիշխանությունը չտրորելու ձգտմամբ: Հնարավորությունների առումով, սակայն, ԱՄՆ-ն ավելի անկաշկանդ էր: Վաշինգտոնը դարաբաղյան հարցը ԽՍՀՄ-ի դեմ փորձել է օգտագործել 1989 թ., սակայն արժանացնել է լուրջ հակազդեցության<sup>3</sup>, ինչն էլ ավելի կոպիտ կլիներ անհամեմատ ավելի փոքր դերակատար Թուրքիայի միջամտության դեպքում:

Իրավիճակը փոխվեց ԽՍՀՄ-ի դիրքերի էլ ավելի թուլանալուց հետո՝ 1990 թ. սկսված առաջին լուրջ բախումների ժամանակ: Այս շրջանում էլ Թուրքիան ազդարարեց հարավկովկասյան նոր քաղաքականությունը, որն սկզբնական շրջանում զերծ էր հստակությունից: Խնդիրն այն էր, որ ԽՍՀՄ-ի հնարավոր փլուզումը երկակի իրավիճակ էր ստեղծել Թուրքիայում: Այդ երկրի համար մի կողմից ստեղծվել էին հնարավորություններ՝ Հարավային Կովկասում առավել ակտիվ քաղաքականություն վարելու համար, մյուս կողմից լուրջ խնդիր էր առաջացել 1990 թ. սկզբին, ինչպես գրում էր թուրք հայտնի հրապարակախոս Իլիան Սելջուկը, Հայաստանի անկախության պարագայում Թուրքիան հայտնվում էր Հայաստան-Հունաստան աքցանի մեջ. իսկ այդ երկու երկրներն էլ պահանջատիրական հավակնություններ ունեին Անատոլիայից<sup>3</sup>: Կարծում ենք, այս ձևակերպումն ընդամենը հարմար սքող էր՝ ծածկելու հիմնական մտահոգությունը, որը կապված է հենց Արցախյան խնդրի հետ, որովհետև 1921 թ. հուլիսի 5-ի վերոնշյալ որոշումը բուլղարական փոխահամաձայնության մի օղակն էր՝ միտված այդ շրջանում երկու կողմերի համար կենսական նշակության համագործակցության խորացմանը, իսկ դրա քանդումը կարող էր նաև կասկածի

<sup>1</sup> Демоян Г. (2013). Внешняя политика Турции и карабахский конфликт. Ереван, է ք 239:

<sup>2</sup> Չնայած «երկաթե վարագույրի» անկայությանը. 1989թ. նոյեմբերի 20-ին «Պրավդա» թերթում» տպագրվում է «ԽՍՀՄ ԱԳՆ-ում» վերնագրով հաղորդագրություն, որտեղ սպվում էր, որ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարի առաջին տեղակալ Ա. Բեսամերտսիխը նախարարություն է հրավիրել ԽՍՀՄ-ում ԱՄՆ դեսպան Ջ. Մեյթլին և բողոք հայտնել Լեռնային Ղարաբաղի հարցի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի հանձնաժողովի բանաձևի առթիվ: Այս հաղորդագրությունից հետո է միայն հայտնի դառնում, որ նոյեմբերի 17-ին ԱՄՆ սենատի արտաքին գործերի հանձնաժողովը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ որոշում է ընդունել: Բանաձևում գրված էր, որ հայերի նկատմամբ խտրականությունը և Սումգայիթի դեպքերը հանգեցրեցին զանգվածային ցույցերի և հուզումների: Կար նաև մասնակի անդրադարձ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի շրջափակմանը, երկրաշարժի հետևանքները վերացնելու նպատակով Հայաստան առաքվող բեռների թալանին և այլն: Ըստ այդմ՝ հանձնաժողովն առաջարկում էր այդ հարցը քննարկել ԱՄՆ Սենատում և Կոնգրեսում, որպեսզի խորհրդային իշխանությունները համապատասխան քայլեր ձեռնարկեն բռնություններն ու արյունահեղությունը դադարեցնելու և շրջափակումը վերացնելու ուղղությամբ: («Երեկյան Երևան» 22 նոյեմբերի, 1989թ.): Նոյեմբերի 19-ին ԱՄՆ սենատն ընդունում է այս բանաձևը («Խորհրդային Հայաստան», 23 նոյեմբերի, 1989թ.): Սանրամասները՝ Յալալուգյան, Մ. (2014). ԱՄՆ սենատի որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ. 1989թ. նոյեմբեր. ankakhutyun.am. <https://goo.gl/7n5nYm> (հղվել է 23.03.2016թ):

<sup>3</sup> Չաբոյան, Հ. (1998). Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, էջ 11:

տակ դնել հայ-թուրքական սահմանի իրավական հիմքերն ու ըստ այդմ՝ նաև Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:

Ակատեք, որ անկախության շեմին ու արդեն պատերազմի մեջ հայտնված Հայաստանում իրավիճակը շատ ավելի լավ էին գնահատում ու երկրորդ ճակատ չբացելու համար փորձում էին փարատել Թուրքիայի կասկածները: Այդ ուղղությամբ արված ամենահատկանշական քայլերից էր ՀՀ Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի այն հայտարարությանը, թե Հայաստանը քաղաքակիրթ երկրներին արժանավայել հարաբերություններ պետք է հաստատի անխտիր բոլոր հարևանների, այդ թվում՝ Թուրքիայի հետ<sup>1</sup>: Հայտարարությունն արվել էր երկրի առաջին դեմքի կողմից, ու այդ հանգամանքը կարող էր վստահություն ներշնչել Թուրքիային, սակայն վերջինիս խոսքերի հավաստիությունը ստուգելու նպատակով 1991 թ. ապրիլի 12-ին Երևան ժամանեց նաև ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլբան Վուրալը և մի շարք հանդիպումներ ունեցավ Հայաստանի բարձրաստիճան ներկայացուցիչների<sup>2</sup>, այդ թվում՝ Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ, ով թուրքական Hurriyet պարբերականում տպագրված դեսպանի այցի վերաբերյալ հարցազրույցում ասաց. «Մենք պատրաստ ենք փոխշահավետ ցանկացած համագործակցության: Հայաստանը Թուրքիայի նկատմամբ որևէ տարածքային պահանջներ չունի»<sup>3</sup>:

Թվում է՝ ձևավորվում էին բարիդրացիական հարաբերություններ, ու ինչ-որ պահից պատմական անցյալը մի կողմ դնելով՝ երկու պետությունները մշակելու էին համակեցության ու հնարավոր համագործակցության մեխանիզմներ: Սակայն այս արտաքին կառուցողական մոտեցումն իրականում քող էր, որի ներքո թուրքական կողմն սկսել էր հակահայկական քաղաքականություն՝ Ադրբեջանին մատակարարելով զենք ու զինամթերք: Նման քայլի մասին առաջին բացահայտումը եղել է դեռևս 1990 թ. հուլիսի 24-ին<sup>4</sup>: Իսկ թուրքական ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության տասնյակ անդամներ թուրք-ադրբեջանական սահամանը Նախիջևանի հատվածից հատել ու մարտերի մեջ էին մտել հայերի հետ դեռ 1989-1990 թթ.<sup>5</sup>: Հայտնի է նաև, որ 1991 թ. նույն կազմակերպության հիմնադիր-ղեկավար Թուրքիայում ռազմական և քաղաքական գործիչ Ալիարսլան Թյուրքեշի նախաձեռնությամբ 1991-ին Հայաստան-Վրաստան-Ադրբեջան սահմանային հանգույցում ճամբար է հիմնվել զինյալների ու դիվերսանտների մարզումները կազմակերպելու համար<sup>6</sup>: Հավելենք, որ ճամբարի հիմնադիր Աթալի Զայյան բավականին երկար է եղել Ադրբեջանում, հասցրել է մի քանի դիվերսիոն հարձակում կազմակերպել և իրագործել: Թուրքական աղբյուրների համաձայն այս շրջանում Ադրբեջան է գործուղվել շուրջ 200 զինյալ<sup>7</sup>:

Հայ-թուրքական հարաբերություններում առաջին լուրջ, բացահայտ տարածայնությունները ևս շատ չուշացան. 1991 թ. մայիսի 11-ին Аргументы и факты օրաթերթում հրապարակվեց Լևոն Տեր-Պետրոսյանի հարցազրույցը, որում նշված էր՝ Եվրոպայում 1920-1921 թթ. հարատև հեղափոխության գաղափարի ձախողումից հետո խորհրդային Ռուսաստանն իր հայացքն ուղղեց դեպի Արևելք՝ ձգտելով ստանալ Թուրքիայի և մուսուլմանական ժողովուրդների աջակցությունը:

<sup>1</sup> Նույն տեղում:

<sup>2</sup> Milliyet, 1991.04.12 թ.:

<sup>3</sup> European Stability Initiative. (2009). Պատկերավոր պատմություն, Հայաստան-Թուրքիա: Մեծ Բանավեճը. էջ 6, <https://goo.gl/6M6J66> (հղվել է 24.03.2016 թ.):

<sup>4</sup> Демоян, Г. (2013). Внешняя политика Турции и карабахский конфликт, Ереван, էջ 239:

<sup>5</sup> Pope, H. (2014). Azerbaijan looks to 'blood brother' Turkey. From the archive. <https://goo.gl/Lhyzrg> (հղվել է 24.03.2016 թ.):

<sup>6</sup> Демоян, Г. (2013). Внешняя политика Турции и карабахский конфликт, Ереван, էջ 240:

<sup>7</sup> Necdet pekmezci Nurşen Büyükyıldız Ülkücüler: Öteki Devletin Şehitleri, İstanbul Kaynak Yayınları, 1999, էջ 182-187:

Այս նպատակին հասնելու համար Հայաստանը անդամահատվեց: Ռուսաստանը Կարսի մարզը զիջեց Թուրքիային, իսկ Լեռնային Ղարաբաղը՝ Ադրբեջանին<sup>1</sup>:

Սա արդեն իսկ նախաազդակ էր, որ հարաբերությունները զարգանալու են ոչ այն ուղիով, որը նախանշվել էր, սակայն Թուրքիան դեռ շարունակում էր պահել արտաքին հանգստությունը:

1991 թ. դեկտեմբերի 16-ի որոշումով Թուրքիան ճանաչեց Հայաստանի անկախությունը, սակայն չտապեց դիվանագիտական հարաբերություններ հաստատել: Ավելին, Թուրքիայի վարչապետ Սուլեյման Ղեմիրլեյը 1991 թ. դեկտեմբերի 24-ի՝ արդեն ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանին ուղղված ուղերձում նշեց, որ Թուրքիան «*փոխադարձ բարեկամական հարաբերություններ կզարգացնի հայկական իշխանության հետ ԵԱՀԿ սկզբունքների համաձայն*», իսկ այդ սկզբունքները «*հորդորում են ճանաչել պետությունների տարածքային ամբողջականությունը և սահմանների անխախտելիությունը*»<sup>2</sup>: Փաստորեն, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Թուրքիան առաջ է քաշել նախապայման, այն է՝ Հայաստանը պետք է հրաժարվի Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից և ընդունի Մոսկվայի ու Կարսի պայմանագրերով հաստատված սահմանները:

Ավելի ուշ՝ 1992 թ. հունվարի վերջին, Պրահայում ԵԱՀԽ նիստի ժամանակ Թուրքիայի արտգործնախարար Հիքմեթ Չեթինը դիվանագետական հարաբերությունների հաստատման համար առաջ քաշեց արդեն 3 նախապայման<sup>3</sup>՝

✓ Հայաստանը պետք է դե յուրե ճանաչի ներկայիս սահմանները՝ հիմնված Մոսկվայի և Կարսի պայմանագրերի վրա,

✓ Հայաստանը պետք է Ցեղասպանությունը դուրս մղի իր արտաքին քաղաքական օրակարգից՝ բառապաշարի իմաստով և հրաժարվի աշխարհում այն վերահաստատելու փնտրտուքից,

✓ ահաբեկչությունը պետք է Հայաստանի կողմից դատապարտվի՝ առանց զուգահեռաբար դատապարտելու պետական ահաբեկչության այն ամենաբարձր տեսակը, որն այլ կերպ կոչվում է Ցեղասպանություն:

Երեք նախապայմանները կարճ ժամանակ անց համալրվեցին ևս մեկով՝ ճնշում գործադրել Լեռնային Ղարաբաղի վրա՝ դադարեցնելու պայքարը և ընդունելու Ադրբեջանի գերակայությունն ու տարածքային ամբողջականությունը<sup>4</sup>:

ԼՂ հիմնախնդիրը 1992 թ. փետրվարից սկսեց կարևոր դեր խաղալ հայ-թուրքական հարաբերություններում: Հենց այս ամսին հայկական կողմը կարողացավ ազատագրել Արցախում ադրբեջանցիների կարևոր հենակետերից Խոջալուն, որն ունի 2 ռազմավարական նշանակություն. նախ՝ ընկած է Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհին, երկրորդ՝ այնտեղ առաջին նշանակության օբյեկտ համարվող օդանավակայան է գտնվում: Հայկական կողմի այս հաղթանակին հաջորդեց մարտի 4-ին Իզմիրում Թուրքիայի նախագահ Թուրդութ Օզալի ելույթը, որով վերջինս սպառնում էր ռազմական ուժերով կանգնեցնել հայերի առաջխաղացումը<sup>5</sup>: Այս

<sup>1</sup> Демоян, Г. (2006). Турция и Карабахский конфликт в конце XX – начале XXI веков. Ереван. էջ 68. <https://goo.gl/g7Ry98> pdf (հղվել է 24.03.2016 թ.):

<sup>2</sup> European Stability Initiative. (2009). ՊԱՏՎԵՐԱՎՈՐ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ Հայաստան-Թուրքիա: Մեծ Բանավեճը, էջ 9 <https://goo.gl/wEYccH> (հղվել է 24.03.2016 թ.):

<sup>3</sup> ԵԱՀԽ/ԵԱՀԿ նիստում Թուրքիայի արտաքին գործերի նախարար Հիքմեթ Չեթինի ելույթից ՀՀ արտաքին գործերի նախարար Րաֆֆի Հովհաննիսյանի հիշողությունները Ջորջթաունի համալսարանում ունեցած նրա ելույթում, Հովհաննիսյան, Բ. (2010). Հայաստան-Սփյուռք հարաբերություններ. Րաֆֆի Հովհաննիսյանը ելույթ է ունենում Ջորջթաունի լսարանի համար - Տեսանկյուն | Armenianow.com. <https://goo.gl/4dMPAo> (հղվել է 24.03.2016 թ.):

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>5</sup> European Stability Initiative. (2009). Պատկերավոր պատմություն Հայաստան-Թուրքիա: Մեծ Բանավեճը. էջ 11, <https://goo.gl/68n8B2> (հղվել է 24.03.2016 թ.):



հայտարարությունից առաջ Հայաստանի հետ սահմանի՝ Կարս-Սարիղամիշ-Իզդիզ գծի երկայնքով մեկնարկել էին թուրքական Ո կորպուսի «Ձմեր-92» զորավարությունները, որոնք իրենց մասշտաբներով ու բնույթով այնքան մեծ էին, որ անհանգստություն էին առաջացել նույնիսկ Ռուսաստանի համար, ինչի պատճառով էլ դրանք 1992 թ. փետրվարի 20-ին Ռուսաստանի խորհրդարանական լուսնների ժամանակ դարձան առանձին քննարկման հարց<sup>1</sup>:

Խոջալուից հետո Շուշին անցավ հայկական զինված ուժերի հսկողության տակ, իսկ 10 օր անց՝ մայիսի 18-ին՝ Լաչինի միջանցքը (խոսքը Զաշաթաղի վարչական կենտրոն Բերձորի մասին է): Այս հանգամանքը չէր կարող իր անդրադարձը չունենալ հայ-թուրքական հարաբերությունների վրա: Հայ-թուրքական հարաբերությունները էլ ավելի լարվեցին, երբ մայիսին լուրեր տարածվեցին, թե իբր հայկական ուժերը գրոհել են Նախիջևանի Սադարակ քաղաքի շրջակայքում գտնվող բարձունքները, ինչին ի պատասխան՝ Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար Մուհիթթին Ֆիտուհուլլուն հայտարարեց, որ «բոլոր անհրաժեշտ պատրաստություններն իրականացվել են, և բանակն Անկարայի հրամանին է սպասում, որ հարձակվի»<sup>2</sup>, իսկ հարձակման իրավական հիմքը, ըստ թուրքական կողմի, 1921 թ. Կարսի պայմանագիրն էր: Թուրքական կողմի նման ագրեսիվ պահվածքին ի պատասխան ԱՊՀ միացյալ զինված ուժերի գլխավոր հրամանատար մարշալ Եվգենի Շապոշնիկովը հայտարարեց. «Թուրքիայի ներխուժումը Հայաստան կարող է հանգեցնել III Համաշխարհային պատերազմի»<sup>3</sup>: Այս հայտարարությունը առաջացրեց Անկարայի ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական շրջանակների լուրջ մտահոգությունը: Ինչպես նկատել է թուրքագետ Հայկ Դեմիրյանը, թուրքական կողմն այս քայլով բացի Ադրբեջանի նկատմամբ իր ստանձնած «մեծ եղբոր» դերը կատարելուց<sup>4</sup>, նաև փորձարկում էր 1992 թ. մայիսին ԱՊՀ շրջանակներում ստորագրված Հավաքական անվտանգության պայմանագրի կենսունակությունն ու լրջությունը: Ռուսաստանի պես հզոր երկրի հետ պատերազմի մեջ մտնելուն Թուրքիան բնավ պատրաստ չէր: Այս մասին է վկայում այն, որ դրանից հետո Անկարան սկսեց ավելի մեղմ արտահայտվել արցախյան իմնախնդրի կապակցությամբ, իսկ հայ-թուրքական հարաբերություններում նկատվեց դրական տեղաշարժ: 1992 թ. հունիսի 23-26-ը կայացավ Լ. Տեր-Պետրոսյանի գլխավորությամբ հայկական պատվիրակության այցելությունը Թուրքիա: ՍԾՏՀ կազմակերպության հռչակագրի ստորագրման արարողակարգի շրջանակներում տեղի ունեցավ նրա՝ Թուրքիայի վարչապետ Ս. Դեմիրելի հետ հանդիպումը, որի ընթացքում, անդրադառնալով Հայաստան-Թուրքիա երկկողմ հարաբերություններին՝ Լ. Տեր-Պետրոսյանը նշեց, որ դրանք չպետք է բխեն հայ-ադրբեջանական հարաբերություններից, ինչին ի պատասխան՝ Ս. Դեմիրելն ընդգծեց, որ իրենք համաձայն են, բայց այնտեղ արյուն է հեղվում, և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը խոչընդոտող միակ հանգամանքը շարունակվող զինված ընդհարումներն են<sup>5</sup>: Այս հանդիպմանը

<sup>1</sup> Демоян Г. (2013). Внешняя политика Турции и карабахский конфликт, Ереван, էջ 242:

<sup>2</sup> Արշակյան, Գ. Թուրքիայի քաղաքականության հիմնական սկզբունքները Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1991-1994 թթ., էջ 26, <https://goo.gl/bjGp4R>, (հղվել է 25.03. 2016 թ.):

<sup>3</sup> Демоян, Г. (2013). Внешняя политика Турции и карабахский конфликт, Ереван, էջ 245:

<sup>4</sup> 1992թ. հուլիսի 5-ին թուրքական «Ձուսմուրիյեթ» օրաթերթը նշել էր, որ թուրքական 10 զենքավոր գտնվում են Ադրբեջանում և վարժեցնում նրա ռազմական ուժերը: Բացի այդ, ըստ ռուսական ռազմական հետախուզության տվյալների՝ 1992թ. սեպտեմբերի դրությամբ ադրբեջանական բանակում կար 670 թուրք զինծառայող, այդ թվում՝ 550 զինվոր, 112 սպա և 8 զենքավոր: Տե՛ս Արշակյան, Գ. և Եղիազարյան, Ա. (2012). Թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական համագործակցությունը 1991-2001թթ., 21-րդ ԴԱԸ, թիվ 5 (45), էջ 36, <https://goo.gl/a8WuAd> (հղվել է 24.03.2016թ.):

<sup>5</sup> Արշակյան, Գ. Թուրքիայի քաղաքականության հիմնական սկզբունքները Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1991-1994 թթ., էջ 27, <https://goo.gl/bjGp4R>, (հղվել է 25.03. 2016 թ.):

հաջորդեց 1992 թ. հունիսի 5-7-ը Իզմիրում կայանալիք թուրքական տնտեսության զարգացմանը նվիրված երրորդ վեհաժողովին մասնակցելու համար Թուրքիա մեկնած հայկական պատվիրակության ղեկավար, փոխվարչապետ Յրանտ Բագրատյանի հանդիպումը Դեմիրելի հետ: Քննարկվեցին դիվանագիտական և սոցիալ-տնտեսական երկկողմ հարաբերություններ հաստատելու, Ղարաբաղի և Նախիջևանի շուրջ նկատվող լարվածությանն առնչվող հարցեր: Բագրատյանը Դեմիրելին փոխանցեց Հայաստանի Նախագահի Նամակը, որում առաջարկվում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել կողմերի միջև, ինչպես նաև նշվում էր, որ Հայաստանը պահանջներ չունի Նախիջևանի նկատմամբ, որի հետ պատրաստ է համաձայնագիր կնքել:

Ելնելով փաստերի նման համադրությունից՝ կարող ենք պնդել՝

✓ Ղարաբաղյան հակամարտությունն անկախության առաջին իսկ օրից և մասնավորապես անկախության առաջին տարիներին իր ազդեցությունն է ունեցել թուրք-հայկական հարաբերությունների վրա,

✓ Թուրքիայի «հոգատարությունն» Ադրբեջանի նկատմամբ մեծապես պայմանավորված է ոչ թե «մեծ եղբոր» կարգավիճակով, այլ՝ սեփական պետական շահերով,

✓ ինչպես տարածաշրջանային մյուս գործընթացներն, այնպես էլ Հայաստան-Թուրքիա հարաբերությունների զարգացման դինամիկան հնարավոր է գնահատել միայն արտատարածաշրջանային մյուս դերակատարների, հատկապես՝ ՌԴ հարավկովկասյան քաղաքականության համատեքստում:

### **Աբրահամ Գասպարյան, Անահիտ Չալիկյան** **ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՊԱՏԵՐԱՉՄԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-ԹՈՒՐԿԱԿԱՆ** **ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ 1990-1992 ԹԹ.**

*Բանալի բառեր՝ Հայաստանի Հանրապետություն, Թուրքիա, Ադրբեջան, Ղարաբաղյան հակամարտություն, Ռուսաստան*

Հոդվածը նվիրված 1991-1992 թթ. հայ-թուրքական հարաբերություններում Ղարաբաղյան պատերազմի գործոնին: Հեղինակը մասնավորապես ներկայացրել է նշված ժամանակահատվածում երկու պետությունների ղեկավարությունների շփումները և այն Նախապայմանները, որ Թուրքիայի ղեկավարությունն առաջադրել է Հայաստանին՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատման և հարաբերությունների հետագա զարգացման համար: Թուրքիայի քաղաքականությունը և հայ-թուրքական հարաբերություններում Ղարաբաղյան պատերազմի գործոնը ներկայացված են տարածաշրջանային ու միջազգային զարգացումների համատեքստում, ինչը թույլ է տալիս առավել հստակ գնահատել դրանց հիմքերը:

**Abraham Gasparyan, Anahit Chalikyan**  
**THE IMPACT OF THE NAGORNO-KARABAKH CONFLICT ON THE ARMENIAN-**  
**TURKISH RELATIONS IN 1991-1992**

**Key words:** *Republic of Armenia, Turkey, Azerbaijan, the Nagorno-Karabakh conflict, Russia*

The article is devoted to the impact of the Nagorno-Karabakh conflict on the Armenian-Turkish relations in 1991-1992. The policy of Turkey on the conflict is assessed in the light of regional and international relations of the taken period. The article focuses on identifying reasons of political preconditions, raised by Turkey for establishing diplomatic relations. The first cases of political dialogue between Armenia and Turkey, bilateral diplomatic consultations are explored. The author also examines the political and international factors, which shaped the policy of Turkey vis-a-vis newly independent Armenia.

**Абраам Гаспарян, Анаит Чаликян**  
**ВЛИЯНИЕ КАРАБАХСКОЙ ВОЙНЫ НА АРМЯНО-ТУРЕЦКИЕ**  
**ОТНОШЕНИЯ В 1990-1992 ГГ.**

**Ключевые слова:** *Республика Армения, Турция, Азербайджан, Нагорно-карабахский конфликт, Россия*

Статья посвящена изучению фактора Нагорно-карабахского конфликта в армяно-турецких отношениях в 1991-1992 гг. В частности, автор освещает первые политические сношения между руководствами двух государств в начале 1990-ых годов и определяет основные политические предусловия, которые Турция ставила перед Арменией взамен на установление дипломатических отношений. Политика Турции данного периода освещается также в региональном и международном контекстах, что позволяет более полно выявить ее основы.

**«ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ» ՈՒ «ՆԱԽԱՅԱՐՁԱԿ  
ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ՊԱՐԱԴԻԳՄՆԵՐԸ ԶՅ ՌԱԶՄԱԿԱՆ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՒՄԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ**

**ԱԼԵՆ ԴԵՎՈՆԴՅԱՆ**

Արդի աշխարհում միջազգային անվտանգությունը, իր մեջ ամբողջացնելով գլոբալացման ու ավանդական անվտանգության բաղադրիչները, վերածվել է բարդ ու բազմաբաղադրիչ համակարգի, ուր պետություններն իրենց անվտանգությունն ապահովում են ինչպես անհատական, այնպես էլ դաշինքային-կոալիցիոն ձևաչափերում: Անհատական ձևաչափերում դա դրսևորվում է սեփական ռազմական ծախսերի ավելացման, ռազմատեխնիկական ոլորտի զարգացման, ինքնաբավ անվտանգության ապահովման ու նախահարձակ ինքնապաշտպանության պարադիգմի գործարկմամբ: Դաշինքային-կոալիցիոն ձևաչափում պետությունների անվտանգության ապահովման ելակետը հավաքական անվտանգության դրույթն է:

Հարավային Կովկասը ժամանակակից աշխարհի ամենից բարդ տարածաշրջաններից է, որը սահմանակցում է էլ ավելի բարդ ու խնդրահարույց Մեծ Մերձավոր Արևելքի հետ: Գտնվելով ռիսկային նման միջակայքում՝ մեր տարածաշրջանը կրում է մակրոռեգիոնալ ռիսկերի ուղղակի ու միջնորդավորված անդրադարձերը, որոնք գումարվելով ներտարածաշրջանային իրողություններին տարածաշրջանը դարձնում են ռիսկային ու անկայուն: Հենց նման իրողությունների համատեքստում են տարածաշրջանային երկրները մշակում իրենց անվտանգության հայեցակարգերը, ձևակերպում ռազմական դոկտրինները, հստակեցնում ազգային շահերի տեսլականները:

Վերոնշյալը արդեն մոտ երեք տասնամյակ արդիական ու օրակարգային է հատկապես ՀՀ-ի համար, որը, թերևս, ամենից շատն է իր վրա կրում ռեգիոնալ իրողությունների բացասական անդրադարձերը: Տարիներ շարունակ ռազմական անվտանգության ու արտաքին քաղաքականության իր մոտեցումները ածանցելով ԼՂ հակամարտության լուծման, փակ սահմանների և տնտեսական շրջափակման, արտաքին անհամաչափ բազմավեկտոր քաղաքականության իրողություններից՝ այսօր ՀՀ-ն միջազգային ուժային հարաբերակցության փոխակերպվող գործընթացներում շարունակում է որպես առաջնահերթություն դիտարկել ռազմական անվտանգության խնդիրները և նրանց ամենից արդյունավետ լուծումներ գտնելու օրակարգը: Հայեցակարգային առումով դիտարկելով ՀՀ ռազմական ու արտաքին քաղաքական իրողությունները՝ կարող ենք նշել, որ մասնագիտական ու հանրային դիսկուրսի մակարդակում դրանք այսօր ածանցվում են մի քանի հիմնական պարադիգմներից, որոնք մի կողմից՝ հիմնավորում են այս պետական քաղաքականության մեջ գործող թեզերի ընտրության օբյեկտիվ հիմքերը, մյուս կողմից՝ առաջադրում դրանց փոխակերպման անհրաժեշտությունը: Ներկայացվող հողվածի շրջանակներում մենք կփորձենք անդրադառնալ ՀՀ ռազմական ու արտաքին քաղաքական հիմնական երկու պարադիգմի վրա՝ փորձելով ներկայացնել նրանց հայեցակարգային նկարագիրը, գործարկումից բխող արդյունքներն ու հնարավոր ռիսկերը:

Ներկա իրողությունների ու ՀՀ ռազմավարական հայեցակարգային փաստաթղթերի հիմքով ՀՀ ռազմական անվտանգության պարադիգմ կարող է համարվել **«հավաքական անվտանգության» թեզը**: Նշյալ մոտեցումը ՀՀ ռազմական քաղաքականության մեջ արտահայտվում է Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը ՀՀ-ի անդամակցության և

ԱՍՏՕ-ի հետ Անհատական Գործակցության Գործողությունների Ծրագրի սահմանափակ շրջանակներում համագործակցության տեսքով:

Հայեցակարգային առումով ՀԱՊԿ-ի գործունեությունն ածանցվում է «հավաքական անվտանգության» սկզբունքից, համաձայն որի դաշինքի անդամ-երկրներից յուրաքանչյուրի նկատմամբ ագրեսիայի ցանկացած դրսևորում (այդ թվում՝ ռազմական հարձակումը) դիտարկվում է որպես հարձակում որը դաշինքի վրա, հետևաբար դաշնակիցները պարտավորվում են հնարավոր բոլոր՝ այդ թվում ռազմական միջոցների ներգրավմամբ համատեղ քայլեր ձեռնարկել հակադարձելու ընդհանուր սպառնալիքին: Նշյալ մոտեցումը արտացոլվում է ՀԱՊԿ հիմնարար փաստաթղթում հայեցակարգային հետևյալ դրույթների<sup>1</sup>.

1. «...խորհրդակցել միմյանց հետ միջազգային անվտանգության կարևոր այն հարցերի շուրջ, որոնք կապված են իրենց շահերի հետ՝ համաձայնեցնելով դրանց վերաբերյալ առկա մոտեցումները: Կազմակերպության անդամ-երկրների անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը, ինքնիշխանությանն ուղղված սպառնալիքների ի հայտ գալուն պես անհապաղ գործարկել համատեղ խորհրդակցությունների մեխանիզմները առկա դիրքորոշումները համաձայնեցնելու, առաջացած սպառնալիքի վերացմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու նպատակով»<sup>2</sup>:

2. «Եթե անդամ-երկրներից որևէ մեկն այլ պետության կամ պետությունների խմբի կողմից ենթարկվում է ագրեսիայի, ապա դա կազմակերպության անդամ մյուս բոլոր երկրների կողմից դիտվում է որպես ագրեսիա բոլորի դեմ: Կազմակերպության որևէ անդամի՝ ագրեսիայի ենթարկվելու պարագայում դրան ենթարկվողն ի կատարումն Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության «հավաքական ինքնապաշտպանության մասին» 51-րդ հոդվածի կարող է, այդ թվում, նաև ռազմական օգնություն ստանալ գործընկերներից, եթե նման ինդրանքով դիմի վերջիններին»<sup>3</sup>:

ՀԱՊԿ-ն ֆորմալ ու հայեցակարգային առումով դասական հավաքական անվտանգության համակարգ է, որն իր գործունեության մեջ առաջնորդվում է «հավաքական անվտանգության» սկզբունքով: Զաղաքական առումով այն կոմունիստական ընդհանուր ժառանգության կրող, ներկայումս աշխարհաքաղաքական իրողություններում ներգրավվածության տարբեր աստիճան ու ձև ունեցող երկրների ամբողջություն է, որն անվտանգության ապահովման օրակարգի ձևավորման առումով ունի բավական լայն ու դեռևս ոչ լիարժեքորեն ինտեգրված կառուցակազմ: Այս տեսանկյունից ՀԱՊԿ-ի կայացման կարևոր ցուցիչը նրա անդամ-երկրների մոտ անվտանգության ընդհանուր ընկալումների ձևավորումն է, հավաքական շահերի մշակումն ու իրացումը, որը պետք է սոսնձվի տնտեսական գործակցության խորացմամբ: Սա կարևոր է հատկապես ՀՀ-ի պարագայում, քանի որ ՀԱՊԿ-ն և նրա հայ-ռուսական գործակցության բաղադրիչը ՀՀ-ի դեպքում առաջնահերթ դիտվում է որպես հակակշիռ Թուրքիայից բխող հնարավոր սպառնալիքներին հակադարձելու մասով:

Սակայն փաստենք նաև, որ ՀԱՊԿ երկրների անվտանգության մոտեցումների ու ազգային շահերի՝ երբեմն միմյանցից տարբերվող բնույթը «հավաքական անվտանգության» պարադիգմի որոշ բաղադրիչներ, դարձնում են ռիսկային ու ոչ բավարար արդյունավետ: Դրանք օրինակ՝ ՀՀ-ի անվտանգության տեսանկյունից կարող են դրսևորվել ՀԱՊԿ-ի որոշ անդամների կողմից դաշինքի անդամ

<sup>1</sup> «Договор о коллективной безопасности», 15.05.1992, [http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT\\_ID=126](http://www.odkb-csto.org/documents/detail.php?ELEMENT_ID=126)

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը

հանդիսացող ու չհանդիսացող գործընկերների միջև հավասարության նշան դնելու կամ ՀԱՊԿ իր դաշնակից երկրի ազգային շահերին հակասող ոլորտներում ակտիվ գործակցության տեսքով: Վերոնշյալը տեղայնացնելի է ՀՀ-ի ու Ադրբեջանի պարագայում, երբ ՀԱՊԿ անդամ երկրներ ՌԴ-ն, Բելառուսը, Ղազախստանը ինչպես տնտեսական, այնպես էլ ռազմական գործակցության առումով Ադրբեջանը դիտարկում են ռազմավարական գործընկեր, իսկ Ադրբեջանի հետ նրանց ապրանքաշրջանառությունը<sup>1</sup> և ռազմական գործակցությունը<sup>2</sup> մի քանի անգամ գերազանցում է ՀՀ-ի հետ առկա ծավալները:

Մյուս կողմից հավաքական «անվտանգության» պարադիգմի գործարկումը ՀՀ-ի ռազմական անվտանգության քաղաքականությունն մեջ պաշտոնական երևանին հնարավորություն է ընձեռում օգտվել ՀԱՊԿ համակարգի՝ իր համար շահեկան մի շարք հնարավորություններից. մասնավորապես՝ ՀԱՊԿ ձևաչափում առկա միացյալ ՀՕՊ համակարգին ՀՀ-ի անդամակցում, ՀԱՊԿ անդամ երկրներից և հատկապես ՌԴ-ից ռազմական տեխնիկայի ձեռքբերում արտոնյալ գներով<sup>3</sup>, միացյալ զորավարժություններ և անվճար ռազմական կրթություն ՀԱՊԿ դաշնակից երկրներում, միջպետական սահմանների համատեղ պաշտպանություն և ամենակարևորը՝ արտաքին հարձակման պարագայում իրավականորեն պարտադիր գործարկման ենթական միացյալ այդ թվում ռազմապաշտպանական գործողություններ:

ՀՀ ռազմական անվտանգության ապահովման դիսկուրսի շրջանակներում հաջորդ կարևոր ու քննարկելի մոտեցումը **«Նախահարձակ ինքնապաշտպանության»** պարադիգմն է, որը միջազգային իրավունքի մասնագետները մեկնաբանում են ամենատարբեր դիրքերից: Մենք ընտրել ենք առավել համապարփակ մոտեցումը, որի ներքո նախահարձակ ինքնապաշտպանությունը սահմանվում է հետևյալ կերպ. «այն պետության իրավունքն ու մեխանիզմն է ռազմական անվտանգության իր կարիքներից ելնելով նախահարձակ ռազմական ուժ կիրառել վերացնելու իրեն անմիջականորեն սպառնացող վտանգի աղբյուրը»<sup>4</sup>: «Նախահարձակ ինքնապաշտպանությունը» պարադիգմը կիրառելի է ռազմական կոնֆլիկտի պարագայում, երբ հնարավոր է հստակ ֆիքսել իրական ու անհետադարձ վտանգի աղբյուրը, հետևաբար նաև համարժեք արձագանքել դրան: Միջազգային իրավունքի տեսանկյունից

<sup>1</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս «ՀՀ. Ապրանքների արտահանում և ներմուծում» [http://www.armstat.am/file/article/sv\\_12\\_16a\\_411.pdf](http://www.armstat.am/file/article/sv_12_16a_411.pdf). «Внешняя Торговля России на основе данных Федеральной таможенной службы России, 28 февраля 2017г. <http://russian-trade.com/reports-and-reviews/2017-02/torgovlya-mezhdu-rossiy-i-azerbayd-zhanom-v-2016-g/>. Взаимная торговля Казахстана с Азербайджаном, [http://export.gov.kz/public/files/analytcs/country\\_Review/references/2016/Азербайджан%202016.pdf](http://export.gov.kz/public/files/analytcs/country_Review/references/2016/Азербайджан%202016.pdf), Посольство Республики Беларусь в Азербайджанской Республике, Торгово-экономические отношения, [http://azerbaijan.mfa.gov.by/ru/bilateral\\_relations/trade\\_economic/](http://azerbaijan.mfa.gov.by/ru/bilateral_relations/trade_economic/)

<sup>2</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս ЦАМТО / Центр анализа мировой торговли оружием, <http://www.armstrade.org>:

<sup>3</sup> 2015թ. ՀՀ-ն ՌԴ-ի հետ ստորագրվել է (200մլն դոլոր) միջպետական վարկի համաձայնագիր, որով ՀՀ-ն ներդուսաստանյալ գներով անկասկիկ եղանակով ՌԴ-ից ձեռք է բերել զինտեխնիկայի խմբաքանակ, որի մեջ մտնում են «ՏՈՍ-1Ա» ծանր հրանետային համակարգեր, «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր, «Իզվա-Ս» 9Կ338 դյուրակիր զենիթահրթիռային համակիրներ, «Ավտորազա-Մ» ռադիոտեխնիկական հետախուզության վերգետնյա կայաններ, «9Մ113Մ» հակատանկային կառավարվող հրթիռներ, «Տիգր ՍՍՍ» գրահամբեկաներ և այլն: Հավելենք, որ 2015-16թթ-ի ընթացքում ՀՀ-ն ՌԴ-ից ձեռք է բերել «Իսկանդեր-Է» օպերատիվ մարտավարական շրջ-եր, որի կողմից թիրախի խոցելիության շեմը կազմում է 280կմ (առավել մանրամասն տե՛ս ««Искандер» навели на Баку», <https://www.gazeta.ru/army/2017/02/22/10539515.shtml>): 2017թ. ՀՀ կառավարությունը և Աժ հաստատեցին ՌԴ-ից 100 մլն. դոլարի ռազմական տեխնիկա գնելու նպատակով նոր վարկ վերցնելու օրինագիծը:

<sup>4</sup> Տե՛ս **Синицына Ю.**, Превентивная И Упреждающая Самооборона: Различия. Правомерность Применения, «Журнал международного права и международных отношений», н.1, М. 2009, էջ 9:

«Նախահարձակ ինքնապաշտպանության» պարադիգմին պետությունները հանգում են ՄԱԿ-ի 51 հոդվածի պահանջների բավարարման պարագայում, երբ առկա է պետության ռազմական անվտանգության հստակ սպառնալիք կոնֆլիկտի տեսքով<sup>1</sup>: Միջազգային իրավունքի մեկնաբանությունից զատ «Նախահարձակ ինքնապաշտպանության» հայեցակարգը ունի նաև սոցիալ-քաղաքական, հոգեբանական և ռազմատեխնիկական չափումներ, որոնց պատշաճ ապահովման պարագայում է այն արդյունավետ կիրառելի:

Արցախի ազգաբնակչության անվտանգության ապահովման առաջնահերթության իրողությամբ Ադրբեջանի հետ գտնվելով ռազմական հակամարտության մեջ՝ ՀՀ ռազմական անվտանգության ապահովման դիսկուրսում «Նախահարձակ ինքնապաշտպանության» պարադիգմի մուտքը կարող է բավարար չափով հիմնավորված լինել մի քանի հիմքով, որոնք են.

- 2000-ականներից ի վեր 1994թ. կնքված հրադադարի համաձայնագրի խախտումների պրակտիկայի ինտենսիվ աճը, «պասիվ պատերազմի» («դիպլոկահարների», «դիվերսիաների» պատերազմ), ապա նաև ապրիլյան ռազմական հարձակման նոր գործելաճի կիրառումը Արցախ-Ադրբեջան շփման գծում,
- Ադրբեջանի՝ սեփական զինված ուժերի կատարելագործման ու զինտեխնիկայի աննախադեպ ծավալների ձեռքբերման քաղաքականությունը,
- ԵԱՀԿ Մինսկի խմբի նախաձեռնած բանակցային գործընթացում Ադրբեջանի ոչ վստահելի վարքը, բանակցային ֆորմատում առկա պայմանավորվածությունների մերժումը, դրանցից խուսափումը և միջնորդ կողմի՝ դրանց ոչ համարժեք հրապարակային գնահատականները,
- Ադրբեջանում պետական մակարդակով հայատյացության քաղաքականությունը և ԼՂ խնդրի լուծման ռազմական հռետորաբանությունը:

Վերոնշյալ հիմքերի ներքո «Նախահարձակ ինքնապաշտպանության» պարադիգմի ներդրումը պետության ռազմական անվտանգության քաղաքականություն ենթադրում է մի շարք այլ՝ ոչ պակաս կարևոր իրողությունների ապահովում, որոնք առավել արդյունավետ կդարձնեն պարադիգմի կիրարկումը իրական քաղաքականության մեջ: Դրանից մենք կդիտարկենք մի քանիսը.

- Ադրբեջանի՝ ֆինանսապես առավել մրցունակ կարգավիճակի համատեքստում, ՀՀ-ն, չպետք է մտնի սպառազինությունների մրցավազքի մեջ, այլ պետք է առաջնորդվի զինտեխնիկայի ձեռքբերման խելամիտ հակաբայլերի մշակմամբ՝ շեշտը դնելով նաև սեփական ռազմարդյունաբերական համալիրի թիրախային լուծումներ գտնելու հնարավորության վրա
- Արցախ-Ադրբեջան առաջնագծի տեխնիկական համալրման ու հակառակորդի զինված ստորաբաժանումների, զինտեխնիկայի տեղաշարժերի վաղ հավաստանշման հիմքով անհրաժեշտ կանխարգելիչ հակաբայլերի մշակում,
- Հակառակորդի ռազմավարական օբյեկտներին կանխարգելիչ հարված հասցնելու ռազմատեխնիկական բավարար միջոցների առկայություն:
- Հայկական երկու պետությունները միացյալ հայրենիք, բնատարածք դիտարկելու գաղափարի հիմքով քարոզչական և տեղեկատվական անհրաժեշտ գործողությունների իրականացում արցախաբնակ ու հայաստանաբնակ քաղաքացիների շրջանում:

<sup>1</sup> St'u **Reisman M., Armstrong A.** The past and future of claim of preemptiveself-defense // Amer. j. of law. – Wash., 2006. – Vol. 100, N 3. – P. 525–550.

«Նախահարձակ ինքնապաշտպանության» պարադիգմի գործարկումը մի կողմից՝ ենթադրում է զրկել հակառակորդին ուժային գործիքակազմով առաջին հարված հասցնելու հնարավորությունից և նախահարձակ մոտեցմամբ ճնշել նրա գործողությունների հետագա տարածումը, մյուս կողմից արդյունավետ գործարկման համար պահանջում է անհրաժեշտ նյութատեխնիկական ու կազմակերպչական շոշափելի ռեսուրսներ, խելացի լուծումներ, հետևողական ու թիրախային գործողություններ:

Ամփոփելով՝ նշենք, որ ինչպես «հավաքական անվտանգության/ինքնապաշտպանության», այնպես էլ «նախահարձակ ինքնապաշտպանության» պարադիգմերը ունեն ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ և որպես պետության ռազմական անվտանգության հայեցակարգային հիմք նրանցից որևէ մեկի ընտրությունը միանշանակ չէ: Այլ է իրավիճակը եթե պետությունն ունակ է իր տիրապետման տակ առկա քաղաքական ու ռազմական ներուժի ներքո մեկտեղել իր անվտանգության կարիքներից բխող այդ պարադիգմերի իր համար անհրաժեշտ քաղաքականությունը: Դա կարող է «միաձուլել» անհատական ու հավաքական անվտանգության սկզբունքները՝ հնարավորություն տալով պետությանը ռազմական քաղաքականության գերակայություններից ելնելով իրավիճակային ընտրություն կատարել նրանց միջև:

### Ալեն Դևոնդյան

#### «ՀԱՎԱՔԱՎԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ» ՈՒ «ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ» ՊԱՐԱԴԻԳՄՆԵՐԸ ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՄԱՆ ԴԻՍԿՈՒՐՍՈՒՄ

**Բանալի բառեր՝** *պարադիգմ, հավաքական անվտանգություն, նախահարձակ ինքնիշխանություն, ռազմական անվտանգություն*

Հոդվածը նվիրված է «հավաքական անվտանգության» ու «նախահարձակ ինքնապաշտպանության» պարադիգմերի վերլուծությունը, նրանց հասկացության ընդհանրացման սահմանմանը, և ՀՀ ռազմական քաղաքականությունը ներդրմանը: Հոդվածում տեսական-հայեցակարգային և գործնական դիրքերից վերլուծվում և համեմատվում են երկու պարադիգմերը նպատակ ունենալով վերհանել նրանց առավելությունները և թերությունները: Հոդվածում հանգամանալից ներկայացված է հավաքական անվտանգության պարադիգմը, որն այսօր կազմում է ՀՀ ռազմական անվտանգության հիմքերից մեկը և արտացոլված է ՀԱԿ-ին ՀՀ-ի անդամակցության մեջ: Հոդվածի հիմնական եզրակացությունն է, որ պետության ռազմական քաղաքականության՝ ամենից օպտիմալ տարբերակը վերոնշյալ երկու պարադիգմերի մեկտեղումն է:

### Alen Ghevondyan

#### COLLECTIVE SECURITY AND PREVENTIVE SELF- DEFENCE PARADIGMS IN MILITARY SECURITY DISCOURSE OF THE REPUBLIC OF ARMENIA

**Key words:** *paradigm, collective security, preventive self-defence, military security*

The article analyzes the paradigms of the collective security and preventive self-defence, examines their categorical description and the possibilities of introduction to the Military Policy of the Republic of Armenia. The article evaluates and compares two abovementioned paradigms from theoretical-conceptual and practical perspectives in order to



highlight their advantages and disadvantages. We thoroughly observe the existing paradigm of collective security in Military Security Policy of the Republic of Armenia, which is evidenced by the membership of the RA in the Collective Security Treaty Organization. The main conclusion of the article is that the most optimal variant of the State Military Policy is the combination of the above two paradigms.

**Ален Гевондян**  
**ПАРАДИГМЫ КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ И ПРЕВЕНТИВНОЙ**  
**ОБОРОНЫ В ДИСКУРСЕ ВОЕННОЙ ПОЛИТИКИ И**  
**ПОЛИТИКИ В ОБЛАСТИ БЕЗОПАСНОСТИ РА**

**Ключевые слова:** *парадигма, коллективная безопасность, превентивная самооборона, военная безопасность*

Այնուամենայնիվ պետք է նշել, որ ամեն ինչ այնքան էլ հարթ չէ: Հայաստանում իշխանափոխությունից հետո Ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ բանակցությունները դադարել են: Սա շատ վտանգավոր է, քանի որ բանակցությունների բացակայության պայմաններում Ադրբեջանը անընդհատ կարող է բարձրացնել լարվածության աստիճանը՝ փորձելով դրա միջոցով ստիպել Հայաստանի նորընտիր իշխանություններին գնալ զիջումների:

Նիկոլ Փաշինյանը, ի տարբերություն իր նախորդ Սերժ Սարգսյանի, նոր մարդ է բանակցություններում և նրան ժամանակ է հարկավոր ադրբեջանական կողմի վարքագծին ծանոթանալու և նաև որոշակի առումով հարմարվելու համար: Բացի այդ հայկական կողմը պետք է պատրաստ լինի նաև ռազմաճակատում իրավիճակի կտրուկ վատթարացման, քանի որ, հայտարարելով բանակցային ֆորմատի ոչ լիարժեք լինելու և բանակցային սեղանի շուրջ Արցախի ղեկավարության վերադառնալու անհրաժեշտության մասին, Հայաստանը ծանր պայմաններ է ստեղծում ադրբեջանական ղեկավարության համար, որը ամեն ինչ կանի ձևաչափի փոփոխությունը մի որոշ կամ տևական ժամանակ հետաձգելու համար: Այս պարագայում ևս հակամարտության թեժացում բացառել հնարավոր չէ:

Պակաս անհանգստացնող չէ նաև ՀՀ վարչապետի տիկին Աննա Հակոբյանի կողմից կազմակերպված «Կանայք հանուն խաղաղության» արշավը: 2018թ. հուլիսի 25-ին, ելույթ ունենալով Մոսկվայի Տրետյակովյան թանգարանում, տիկին Հակոբյանը ներկաներին առաջարկեց միանալ իր կողմից կազմակերպված արշավին<sup>1</sup>: Բնավ դեմ չլինելով խաղաղությանը՝ կարծում ենք, որ նմանօրինակ արշավներ կազմակերպելը ժամանակավրեպ է: Համոզված ենք, որ ադրբեջանական կողմը երբեք չի միանա այս նախաձեռնությանը, քանի որ նրանց համար խաղաղասիրությունը պարտվողականությանը հավասար կատեգորիա է: Խաղաղության մասին կարելի կլինի խոսել միմիայն ապշերոնյան հանրապետության կողմից Արցախի պաշտոնական ճանաչումից հետո և այդ դեպքում նմանօրինակ արշավը հնարավոր կլինի դիտարկել որպես երկու ժողովուրդների միջև ամկա թշնամության վերացման կամ գոնե մեղմացման միջոց: Մենք մտում ենք այն համոզմանը, որ այս պահին նման հայտարարությունները ավելի շատ կարող են խանգարել, քան՝ նպաստել բանակցություններին:

Թավշյա հեղափոխության անարյուն և անցնցում ընթացքը բավականին բարձրացրեց Հայաստանի վարկն ու հեղինակությունը ողջ աշխարհում: Ժողովրդավար Հայաստանի կերպարը շատ լավ կապիտալ է մեր արտաքին քաղաքականության ձեռքին՝ ապագայում կայանալիք բանակցություններում վստահ դիրքերից հանդես գալու համար:

<sup>1</sup> «Կանայք հանուն խաղաղության» արշավը մեկնարկեց. Աննա Հակոբյանի ելույթը Մոսկվայում, <http://www.armtimes.com/hy/article/142279>

**Գրիգոր Բալասանյան  
ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՇԴՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ԿՐԱ**

*Բանալի բառեր՝ հեղափոխություն, քայլ, ընտրություն, վարչապետ, բանակցային, գործընթաց*

2018թ. գարունը անկյունաքարային նշանակություն ունեցավ Հայաստանի երրորդ հանրապետության համար: Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ խաղաղ ցույցերի արդյունքում տեղի ունեցավ իշխանության անարյուն փոխանցում, ինչը չափազանց կարևոր է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում ավելի վստահ հանդես գալու համար: Բացի այդ երկարատև ընդմիջումից հետո պետական մակարդակով հայտարարվեց, որ Արցախը, որպես հակամարտության կողմը, պետք է վերադառնա բանակցային սեղանի շուրջ:

**Grigor Balasanyan**

**THE ROVOLUTION IN ARMENIA AND ITS POSSIBLE INFLUENCE ON THE  
NEGOTIATION PROCESS OF NAGORNO-KHARABAKH CONFLICT**

**Key words:** *revolution, step, choice, Prime Minister, negotiation, process*

Spring 2018 was of key importance for the Republic of Armenia. For the first time in the history of the Republic, as a result of peaceful demonstrations, there was a bloodless transfer of power, which is very important for confident participation in the negotiation process for the settlement of The Nagorno-Karabakh conflict. In addition, after a long break, it was stated at the state level that Artsakh should be returned to the negotiating table as a side of the conflict.

**Григор Баласанян**

**РЕВОЛЮЦИЯ В АРМЕНИИ И ЕЕ ВЕРОЯТНОЕ ВЛИЯНИЕ НА  
ПЕРЕГОВОРНЫЙ ПРОЦЕСС ПО УРЕГУЛИРОВАНИЮ НАГОРНО-  
КАРАБАХСКОГО КОНФЛИКТА**

**Ключевые слова:** *революция, шаг, выбор, премьер-министр, переговорный процесс*

Весна 2018 года имела ключевое значение для Республики Армения. Впервые за всю историю республики, в результате мирных демонстраций, произошла бескровная передача власти, что в свою очередь очень важно для уверенного участия в переговорном процессе по урегулированию Нагорно-карабахского конфликта. Кроме того, после длительного перерыва на государственном уровне было чётко заявлено, что Арцах, как сторона конфликта, должна быть возвращена за стол переговоров.

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԶԱՐԳՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՐԿՊԱԼԱՏ ՕՐԵՆՍԴԻՐ ԻԾԵԱՆՈՒԹՅԱՄԲ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

### ԳՈՐԳԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Նորագույն քաղաքագիտական միտքը՝ պայմանավորված տեղեկատվական դարի հրամայականներով, վերաբժևորում է պետության տեղին և դերին վերաբերող հայեցակարգերը:

Տեխնոլոգիաները, հասանելի տեղեկատվության անսահմանափակ ծավալները, հաղորդակցման միջոցների բազմազանությունն ու արագությունը շահադրդում են ժամանակակից մարդուն անընդհատ արդիականանալ՝ դառնալով մրցունակ միջազգային աշխատանքի շուկայում: Սա այն դարաշրջանն է, երբ յուրաքանչյուրը՝ արդյունավետ օգտագործելով սեփական մտավոր հնարավորությունները, միջնոցներն ու կապերը, իզորու է ստեղծել հանրային բարիք: XXI դարում մարդը տիրապետում է մեծ **արագություններին**, որը տրամադրում է անհամեմատ շատ ժամանակ ինքնակրթվելու և հմտությունները կատարելագործելու համար: Դրա շնորհիվ քաղաքացին հնարավորություն ունի սոցիալականացվել և լինել հանրային շարժունակ՝ իրականացնելով կարգավիճակի արագ փոխակերպում ոչ միայն ուղղահայաց, այլև հորիզոնական շարժընթացով: Նկատի ունենալով վերոգրյալ, կարող ենք փաստել, որ XXI դարի աշխարհաքաղաքական գործընթացները, տնտեսությունը, գաղափարախոսությունները, պետությունը նույնանում են ևս մեկ հատկանիշով՝ մարդակենտրոնությամբ: Սա է պատճառը, որ քաղաքատնտեսության և պետության սոցիալ-հումանիտար նշանակությունը բարոյապես մաշվել են: Ուստի տեսաբանների մի հոծ զանգված կարծում է, որ պետությունը ենթարկվում է Էրոզիայի: Ոմանք էլ հիմնավորում են, որ պետությունը ենթարկվում է կերպափոխումների և վերածնունդների. այսինքն, բոլոր նախկին հարցերը մնացել են, պարզապես փոխվում են պատասխանները:

Քաղաքական ազգը՝ ինքնորոշվելով սեփական քաղաքակրթամշակութային սահմաններում, ինստիտուցիոնալացվում է: Այդ ինստիտուցիոնալացումը կոչված է, ոչ միայն կանոնակարգելու հանրային գործընթացները, հաստատելու յուրօրինակ բարոյաիրավական ընդհանուր մթնոլորտ և արտաքին ու ներքին մարտահրավերներին միասնաբար պատասխանելու ռազմավարություն, այլև պետք է կարողանա լինել «ժամանակի մեքենա», որը պետականաշեն հանրույթին իր էթնոգենետիկ կոդով և քաղաքակրթական արժեհամակարգով հանդերձ կթեղափոխի ապագա: Միով բանիվ պետականաշինությունը մարդու կենսասոցիալական տիպին բնորոշ վարքատիպ է, քանի որ այն զարգացած բանականության կողմից ինքնապաշտպանության բնագոյը բավարարելուն միտված ռացիոնալ և համակարգված գործողությունների շարք է:

Աշխարհում ոչ մի պետություն չի ապրում ներկայով: Անգամ այժմյան բարեկեցիկ երկրների ցոփ ու շվայտ ներկան, այդ երկրների մի ինչ-որ հեռավոր կամ ոչ այնքան հեռու անցյալի ռազմավարական ծրագիրն է, որին հասել են ժամանակի թելադրած իրավիճակներում տակտիկական լուծումների միջոցով: Սակայն զարգացած պետությունների ներկան հարցականի տակ չի դնում այդ պետության գոյության նպատակահարմարությունը, քանի որ բացի նյութական բարեկեցությունը պետութենները շարունակում են կատարել իրենց կարևորագույն ֆունկցիան՝ ապագայի պլանավորումն ու ազգի հարատևությունը ժամանակի մեջ: Այդ ընթացքը միտված է ոչ միայն նյութական բարեկեցության էլ ավելի բարձր մակարդակի նվաճմանը, այլև այնպիսի ոչ նյութական իդեալներին հասնելուն, ինչպիսիք են

ժողովրդավարությունը, գիտությունը, մշակույթը, արդարությունն ու վստահությունը:

Պետության դեպի ապագա ընթացքը ակնառու է պետական բյուջեների հաստատման գործընթացում, որի ընթացքում հաշվարկվում են առկա միջոցները, կանխատեսվում են ապագա տնտեսական, քաղաքական, հումանիտար, ազգագրական, կլիմայական և այլ բազմաթիվ ռիսկեր պարունակող ու մեծամասամբ անկանխատեսելի չափորոշիչներ: Այսինքն արդեն գոյություն ունեցող միջոցները հաշվարկվում և բաշխվում են ապագայի համար: ոչ թե ներկայի:

Պետության գենեզիսի տեսությունները պատասխանում էին «Ի՞նչ», «Ինչու՞» և «Ինչպե՞ս» հարցերին: Այսօր ժամանակակից քաղաքագիտությունը այդ հարցերին ավելացրել է նաև «Յանուն ինչի՞» հարցը: Եթե նախկինում բավարար էր կանոնակարգել պետության տիպը՝ պատասխանելով «Ի՞նչ» հարցին, սահմանել այս կամ այն գոյաբանական հիմնախնդիրների լուծման առաքելությունը՝ պատասխանելով «Ինչու՞» հարցին, որոշել նախորդ հարցադրումների պատասխաններից ածանցյալ գործիքակազմն ու քաղաքականությունը՝ պատասխանելով «Ինչպե՞ս» հարցին, ապա այսօր շատ կարևոր է նաև պատասխանել թե ո՞րն է այն արժեքը որին պետք է ծառայի այդ պետությունը (Յանուն ինչի՞): Այդ հիմնահարցը իր մեջ պարունակում է, ոչ միայն պետականակերտ քաղաքակրթության արժեքաբանական հիմքը, այլև ապագայում գտնվող այն հեռավոր ափը, դեպի ուր ընթանում է պետության նավը: Այս համատեքստում կարևոր նաև այն թե ի՞նչ համամարդկային արժեհամակարգի և ներհանրային ու միջհանրային համակեցության ինչպիսի կանոնների կրողն է ազգ-պետությունը, ինչպես նաև ինչպիսի արժեքային ընկալում է ձևավորում հարևանների և միջազգային հանրության պատկերացումներում:

Պատմությունից գիտենք, որ ժողովրդավարական արժեհամակարգը ընկած է հայկական պետականության հիմքում, քանի որ այն հայ ազգի արժեքաբանական հիմքերից մեկն է: Յազարամյակներ ի վեր հայ ազգը իր պետականաշեն քաղաքականության մեջ հատուկ տեղ է հատկացրել պետական կառավարմանը համազգային լայն մասնակցային հնարավորության ինձեռմանը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների զարգացման շնորհիվ երկրի վարչատարածքային միավորների իրավասությունների ընդլայնմանը:

Յայոց արքա Արտաշես Բարեպաշտը (մ.թ.ա. 189-160 թթ.), Յայքում իրականացրել է լայնածավալ բարեփոխումներ, որի արդյունքում արդիականացվեց թագավորության վարչատարածքային կառուցվածքը և երկիրը ստորաբաժանվեց 120 շրջանների՝ դրան զուգահեռ սահմանելով պետության պաշտպանությունը արդյունավետ կազմակերպող չորս բղեշխություններ. «Ընդ իրավաքաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնաքարհոգմատիկ երաշխավորությամբ Արտաշես արքայի Մեծ Յայքում հավասարակշռություն հաստատվեց ընկերային համակեցության ամենատարասեռ միավորների միջև՝ տոհմիկ ավագանի, ծառայողական ավագանի, քրմություն, քաղաքային համայնք, գյուղական համայնք: Նման բարդ ու համալիր հասարակաշինական ծրագիր իրագործելիս Արտաշես արքան, անտարակույ միայնակ չէր: Յելենիստական իշխանական փորձը հուշում է, որ կողքին տարաստիճան բարեկամները, մերձավորները և ընկերներն էին: Եվ ընդհանրապես՝ արքունիքը»:

Ակրնհայտ է, որ հնուց Յայաստանում շեշտադրվում էր արդյունավետ և կազմակերպված տեղական ինքնակառավարման մարմինների դերը, որը 21-րդ

<sup>1</sup> **Ստեփանյան Ա.:** Պատմության կերպափոխումները Մեծ Յայքում. Գիրք Ա, Արտաշիսյան դարաշրջան: Երևան. Արագիս տաշենց - Փրինթինֆո: 2012, 61 էջ:

դարում հանդիսանում է ժողովրդավարական կարգի կարևորագույն բաղկացուցիչներից մեկը:

Նկատի ունենալով վերոգրյալը օգտակար կլինի համակողմանի ուսումնասիրության ենթարկել վարչատարածքային բաժանման դաշնային ձևը, քանի որ խորհրդարանական կարգերի հաստատման պայմաններում, ՀՀ վարչատարածքային կառուցվածքի արդիականացումը Հայաստանը դուրս կբերի նոր ուղեծիր, որի շրջանակում հնարավոր կլինի կառուցել ավելի ուժեղ պետություն:

Հաշվի առնելով այն, որ գործող Սահմանադրությամբ ՀՀ Նախագահը՝ այլևս չունի սահմանադրաիրավական որևէ լծակ պետական իշխանության հավասարակշռությունը վերահսկելու համար, Անհրաժեշտ է ձևավորել ներկայացուցչական վերահսկողություն: Խնդիրն այն է, որ միապալատ խորհրդարանի պայմաններում այդ վերահսկողությունը չի կարող լինել օբյեկտիվ:

Ուստի Դաշնության երկմակարդակ կառավարման համակարգը, հնարավորություն կնձեռի Հայաստանին ոչ միայն զարգացնել արդյունավետ տեղական ինքնակառավարման համակարգ՝ հիմնվելով պատմական արժեհամակարգի վրա և հաստատելով մարդակենտրոն, ժողովրդավարական և ռեգիոնալ առանձնահատկությունների շեշտադրմամբ պետական կառավարում, այլև ձևավորել երկպալատ պառլամենտարիզմ, որի երկրորդ պալատը կվերահսկի ու կհավասարակշռի պետության իշխանությունը՝ պահպանելով Սահմանադրական կարգի կենսունակությունը:

Այն իր մեջ ներառում է ինտեգրացիոն հսկայածավալ ներուժ, որի դրոշի ներքո կրկին կվերամիավորվի Արցախը՝ պահպանելով 27 ամյա պետականության այն բաղադրիչները, որոնք դեֆակտո ունի այսօր:

Արտաքին և ներքին մարտահրավերները ժամանակի ընթացքում կրում են քանակական և որակական փոփոխություններ, ուստի Ազգային շահերի արդիականացման գործընթացը չպետք է կանգ առնի:

Հայաստանի ազգային շահերը ծառայում են ազգային անվտանգության և պատմական հայրենիքում հայ ազգի բնականոն կեցության նպատակներին: Բազմադարյա կենսափորձ ունեցող հայ ազգը բազմիցս համոզվել է, որ ազգային անվտանգության ապահովման համար չկա ավելի հուսալի և կայուն միջոց, քան ինքնիշխան պետությունն է:

Դա է պատճառը, որ հայ ազգը իր գոյության ակունքներից ի վեր միշտ ունեցել է պետականություն, իսկ դրա բացակայության պարագայում, երբեք բաց չի թողել պատմական շանսը ազատությունը կրկին վերանվաճելու համար, անգամ, եթե դա զուգորդվել է թանկ կորուստներով:

Հայ ազգը եղել և մնում է քաղաքական ազգ, անգամ պետականության կորստի պայմաններում հայերը ծանրակշռի պետական, գիտական, ռազմական և մշակութային դեր են կատարել Հայաստանը նվաճած կայսրությունների ծիրում:

Վերոգրյալը հիմք է տալիս պնդելու, որ պետականաշեն հատկանիշը հայ ազգին բնութագրող բազմաթիվ չափորոշիչներից մեկն է, մենք միշտ եղել ենք, կանք ու կմանք սեփական ճակատագիրը ինքնակամ տնօրինելու կամք ունեցող ազգ:

Այս ամենը նկատի ունենալով՝ մենք պետք է կարողանանք, դուրս գալ հին կարծրատիպերից, և առայժմ, գոնե տեսականորեն հասկանանք թե որքանով է արդիական հայկական պետության միատարր տիպը, այսինքն, Մերձավոր Արևելքում ստեղծված նոր իրավիճակում, որքանով է արդյունավետ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման առկա ձևը:

Արցախի Հանրապետությունը ենթակա չէ մասնատման, տրոհման, կամ ինքնիշխանության վերանայման. Այն չի կարելի վերածել մարզ Հայաստանի


<sup>1</sup> <http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

Հանրապետության կազմում: Դրա արդյունքում կթուլանա հայկական հավաքական պետականությունը: Ուստի ելնելով այն հայեցակարգից, որ վաղ թե ուշ Արցախը պետք է դառնա մայր Հայաստանի մասը՝ ընդունելի կլինի, եթե այն դառնա Հայաստանի Հանրապետության մաս՝ պահպանելով պետականությանը բնորոշ բոլորատրիբունտները, որոնք առկա են այսօր: Քանի որ միատարր պետությունների կազմում չեն կարող լինել պետությանը մոտ իրավասություններով և ինքնիշխանությամբ սուբյեկտներ, ապա պետության ձևը պետք է վերափոխվի դաշնային համակարգի:


Ժամանակակից հայկական պետությունը գրեթե ամբողջական տարածքներով կարող է վերականգնել Սյունիքի և Արցախի նահանգները (Տե՛ս քարտեզ 1), ընդ որում Արցախը որպես Հանրապետություն<sup>1</sup>: Մասամբ հնարավոր կլինի վերականգնել Այրարատ, Գուգարք և Գարդման նահանգները: Այսպիսով Հայաստանի Դաշնային Հանրապետության վարչատարածքային սուբյեկտները կդառնան նահանգները, Հանրապետությունը, ինչպես նաև նահանգի կարգավիճակ ունեցող քաղաքները իրենց վարչատարածքային միավորներով՝ գավառներով:

Հետևաբար Արցախի Հանրապետությունը կարող է պատերազմի միջոցով ամրագրված սահմաններով հանդերձ, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան, ինքնորոշվել և դառնալ Հայաստանի մաս, այսինքն հայկական պետության կազմում Արցախի Հանրապետության կարգավիճակով: Դրա համար անհրաժեշտ կլինի Հայաստանում հաստատել նոր Սահմանադրություն, որը Հայաստանի Հանրապետությունը կհռչակի որպես դաշնային Հանրապետություն:

Քարտեզ 1



<sup>1</sup> <http://www.nankr.am/hy/1838>



192 ճանաչված պետությունների<sup>1</sup> թվաքանակի աճ երկրորդ հայկական պետության միջոցով դժվար թե արձանագրվի. 150 000 հայության ձայնը որևէ մեկը հաշվի չի առնի այն պարագայում, երբ արդեն իսկ գոյություն ունի միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող մեկ հայկական պետություն:

Բացի դա բազմաթիվ ռազմաքաղաքական խնդիրներ ունեցող Հայաստանին ՄԱԿ-ում երկրորդ օժանդակող, լրացուցիչ ձայնով օժտելը արգելափակվելու է տարբեր հարթություններում և սա նաև այն ատճառով, որ Հայաստանը դեռևս շարունակում է միջազգային հանրության աչքում մնալ Ռուսաստանի, այն է թե Արևմուտքի արդեն իսկ բացահայտ հակառակորդի, կամակատար:

Արդեն 27 տարի է, ինչ դեֆակտո Հայաստանը Դաշնություն է, ունենալով իր կազմում Արցախի Հանրապետություն. Արցախում բնակվող մեր հայրենակիցները ունեն Հայաստանի Հանրապետության անձնագրեր, շրջանառվող փողը դրամն է, պաշտպանությունը իրականացվում է ամբողջական տրամաբանությամբ և ողջ հայկական ներուժով, տեղի է ունենում վերնախավի ազատ շրջանառություն և այլն:

Փաստացի ունենք Դաշնություն, սակայն ներկայանում ենք իբրև միատարր պետություն և միջազգային հանրությունից պահանջում ենք այն, ինչը դժվար թե երբևէ իրականանա: Մինչդեռ, միջազգային հանրությունը ավելի իրակտեսական կհամարի Արցախի Հանրապետության ինտեգրումը Հայաստանին, խուսափելով տարածաշրջանի հավելյալ մանրացման տնտեսապես ոչ շահավետ և դժվարին բաղաբանականությունից:

Հարցի մյուս կողմը վերաբերում է ռազմավարական ապագային:

Ես պատկանում եմ այն վերլուծաբանների շարքին, որոնք չեն թաքցնում այն թեզը, որ քանի գոյություն ունի Ադրբեջանը Հայաստանի ներկան և ապագան վտանգված է լինելու: Ուստի Ադրբեջանը ենթակա է կազմաքանդման մասնատման միջոցով:

Եթե դա հաջողվի, ապա Ադրբեջանը կփշրվի Ավարստանի (դա հին Աղվանքն է), Թալիշ-Մուղանյան Հանրապետության (իր Լեւքորան մայրաքաղաքով), Լեզգիստանի, ինչպես նաև Բաքվի, կամ Ափշերոնի թաթարական ինքնավար մարզի: Կլինեն նորաստեղծ միավորներ, որ հնարավորություն կստանան ներառվելու Հայաստանի Դաշնային Հանրապետության կազմում:

Ցանկացած Սահմանադրություն, իր մեջ պետք է ունենա ոչ միայն ռացիոնալ մեր առօրյա կյանքը և գործող կարգը բնութագրող դրույթներ, այլև պրակտոպիստական, որոշ դեպքերում էլ ուտոպիստական նորմ ցանկություններ: Ուստի վարչատարածքային բաժանման դաշնային ձևը հնարավորություն է

<sup>1</sup> <http://www.un.org/ru/member-states/>



ընձեռում տեսական ապագայում երկրի քաղաքական, մշակութային և քաղաքակրթական սահմանների ընդարձակում կողմնացույցի բոլոր ուղղություններով, Ընդհուպ մինչև Մեծ Հայքի սահմանների վերականգնում: Այս պարագայում մեզ կմնա լուծել երեք խնդիր, դեմոգրաֆիական, տնտեսական և դիվանակիտական, քանի որ իրավաքաղաքական համակարգը լիովին պատրաստ կլինի Մեծ Նպատակների իրագործմանը:

### Գուրգեն Սիմոնյան

#### ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԵՐԿՊԱԼԱՏ ՕՐԵՆՍԴԻՐ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՍԲ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԱՇՆԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

*Բանալի բառեր՝ արդարություն, ազգ, պետություն, դաշնություն, պառլամենտական ժողովրդավարություն, համախմբում*

Հազարամյակներ ի վեր հայերը, իբրև քաղաքական ազգ, առանձնացել են կենտրոնաստեղծ քաղաքականությամբ՝ դիմակայելով և չհամակերպվելով օտար բւեռների կողմից Հայաստանը բռնի պրոպինգիալացնելու նկրտումներին:

Կարևոր է հայկական պետության զարգացման շուրջ հեռանկարային ռազմավարության կառուցակարգումը, որը հնարավորություն կընձեռի պետական ապարատին իրականացնել խելացի կառավարում և տակտիկական ճիշտ որոշումների ընդունում:

Այս համատեքստում առաջարկվում է Հայաստանում վարչատարածքային և կառավարչական դաշնային համակարգի ներդրումը, որը հայկական քաղաքակրթությանը հնարավորություն կնձեռի՝ հնարավոր բազմազանության մեջ զարգացնելով պետական ինստիտուտները, ոչ միայն պատասխանել Նոր սերնդի մարտահրավերներին, այլև հարկ եղած դեպքում հանդես գալ սեփական ազգային շահերը սպասարկող մարտահրավերներով:

### Gurgen Simonyan

#### THE PERSPECTIVES OF THE DEVELOPMENT OF THE STATE APPARATUS OF THE REPUBLIC OF ARCAKH IN THE ARMENIAN FEDERAL STATE WITH BICAMERAL LEGISLATIVE STRUCTURE.

**Key words:** *justice, nation, state, federation, parliamentary democracy, consolidation*

For millennia, Armenians as a political nation have focused on a centrally-oriented policy, resisting and unwilling to tolerate the invasion of Armenia by foreign poles.

In this regard, it is important to build a perspective strategy for the development of the Armenian State, which will enable the state apparatus to carry out intelligent management and make tactically correct decisions.

Given that the federal administrative and managerial model of Armenia is offered to be introduced, which enabling Armenian civilization to develop state institutions in a variety of ways, will not only answer the challenges of the new generation, but also respond the challenges that serve their own national interests.

**Гурген Симонян**  
**ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ГОСУДАРСТВЕННОГО АППАРАТА**  
**РЕСПУБЛИКИ АРЦАХ В СОСТАВЕ ФЕДЕРАТИВНОГО АРМЯНСКОГО**  
**ГОСУДАРСТВА С ДВУХПАЛАТНЫМ ОРГАНОМ**  
**ЗАКОНОДАТЕЛЬНОЙ ВЛАСТИ**

**Ключевые слова:** *справедливость, нация, государство, федерация, парламентская демократия, консолидация*

На протяжении тысячелетий армяне, как политическая нация, выделялись политикой создания собственного центра, не адаптируясь и противостоя намерениям насильственной провинциализации Армении со стороны чужих полюсов влияния.

В этом плане важно построить в рамках развития армянской государственности стратегию перспективного будущего, что позволит государственному аппарату осуществлять умную политику и принимать правильные тактические решения.

Учитывая это, предлагается внедрить в Армении федеральную форму государственного устройства, модернизируя и административно-территориальное устройство, и модель управления страной. Это предоставит новые возможности армянской цивилизации, совершенствуя плюралистические государственные системы, не только равнозначно отвечать на вызовы нового поколения, но и в случае необходимости самим инициировать вызовы в собственных национальных интересах.

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ԱՉԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹՅՈՒՆ

### ՄԱՍԻԿՈՆ ՄԱՐԳԱՐՅԱԼ

Կերպարափոխվող հասարակություններում ազգային անվտանգության ապահովման գործընթացում որոշիչ է համագործակցության (collaboration) մշակույթի դերը: Լինելով քաղաքական հարաբերությունների ձև՝ համագործակցությունը հենվում է փոխգործունեության և բանակցությունների օգնությամբ խաղաղություն հաստատելու վրա: Փաստորեն համագործակցության մշակույթը հարաբերությունների այնպիսի համակարգ է, որը ներառում է քաղաքացիական համերաշխության ու համաձայնության, պետականաշինության մշակույթի զարգացման և ազգային անվտանգության ապահովման գործընթացներ:

Այս դիտանկյունից Կոպենհագենյան դպրոցի ներկայացուցիչները (Բարի Բուզան, Յոհան Գալտունգ) ընդլայնեցին անվտանգության մասին պատկերացումները՝ այդ հասկացությունն ուսումնասիրելով «Ես»-ի ձևավորման աշխարհագրական, քաղաքակրթական, գենդերային, մշակութային, հոգեբանական, էթնիկ, լեզվաբանական, ծագումնաբանական, արժեքաբանական տիրույթներում: Այս առումով համագործակցության մշակույթը հարստացավ «մարդկային անվտանգություն» (human security) եզրույթով, որը հիմնվում է մարդու անվտանգության հիմնական ռեֆերենտային խմբի, այլ ոչ թե ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտների անդամակցելու վրա: Նման մոտեցումը զուգամիտեց անվտանգության ապահովման սոցիալ-քաղաքական, քաղաքակրթական, բարոյահոգեբանական տիրույթները՝ նպաստելով քաղաքացիական անվտանգության (civic կամ civilian security) և համընդգրկուն անվտանգության (comprehensive կամ overall security) ստեղծմանը, ձևավորմանն ու կայացմանը: Լինելով ազգային անվտանգության ապահովման քաղաքականության առանցքը՝ գիտական գրականության մեջ «մարդկային անվտանգություն» հասկացությունն ունի տարաբնույթ մեկնաբանություններ: Համաձայն **առաջին մոտեցման**՝ «մարդկային անվտանգությունը» հոմանիշ է մարդկանց գոյատևումն ապահովող հիմնական պահանջմունքների բավարարմանը, ինչպես նաև «քաղաքական անվտանգությանը» (այն իմաստով, որ ժողովրդական ինստիտուտների ամրապնդումը դիտարկվում է որպես անվտանգության ապահովման կարևոր նախապայման): Նմանօրինակ մոտեցում է դրված ՄԱԿ-ի զարգացման ծրագրի փաստաթղթերում:

**Երկրորդ մոտեցումը**, ճիշտ է, ուշադրության կենտրոնում է պահում անվտանգության սոցիալական չափումները, սակայն միաժամանակ անվտանգության ապահովումը հիմնավորվում է «համընդհանուր բարեկեցության» (social welfare) և «հանրային անվտանգության» գաղափարներով, որոնք էլ դրվում են «Ես»-ի երկարաժամկետ զարգացման ռազմավարության հիմքում:

**Երրորդ մոտեցումը** կենտրոնանում է այսպես կոչված «նոր» (ոչ ավանդական) վտանգի աղբյուրների վրա՝ զանգվածային համաճարակներ, թմրամոլություն, թրաֆիկինգ, հանցագործություններ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում, զենքի մասսայական օգտագործումը ահաբեկչություն<sup>1</sup>: Այս մոտեցման շրջանակներում կարևոր են նաև ազգային անվտանգության ապահովման (ԱԱԱ) միջմշակութային ենթատեքստը՝ պայմանավորված զանգվածների գիտակցության մանիպուլյացիայով, մարզինալացմամբ, ինչպես նաև մեզապոլիսներում էթնիկական փոքրամաս-

<sup>1</sup> *Hough Peter*. Understanding global security, second edition. Routledge Taylor&Francis Group, London and New York, 2008, p. 165-190

Նությունների լեզվական, սոցիալ-հոգեբանական, քաղաքակրթական ինտեգրացիայի դժվարություններով:

**Չորրորդ մոտեցումը «մարդկային անվտանգության»** կոնկրետ իրագործումը տեսնում է այսպես կոչված «**հումանիտար ինտերվենցիաների**» տեսքով, որը կարող է քաղաքացիական բնակչության մեծ զանգվածներին ազատել էթնիկական և միջդավանաբանական բախումներից: Փաստորեն համագործակցության մշակույթի միջոցով «ազգային անվտանգություն» և «մարդկային անվտանգություն» հասկացությունները զուգամիտվում են: Այս տրամաբանությամբ նվազում է անվտանգության այս ձևերի միջև առկա տարածայնությունները, իսկ «**մարդկային անվտանգության**» ապահովումն այլևս կախված չէ միայն կառավարության գործունեությունից: Տեղեկատվական տեխնոլոգիաների և սպառողական մշակույթի զարգացման արդյունքում սոցիալ-քաղաքական փոխակերպումների ենթարկվող դերակատարները, իրենց կորպորատիվ շահերից ելնելով, նախապատվությունը տալիս են ազգային անվտանգության ապահովման փափուկ և կոշտ ձևերի զուգամիտմանը:

Քաղաքական զարգացման տրամաբանությունը դիտարկող այս մոտեցումների շրջանակներում էլ կարևորում ենք համագործակցության մշակույթը: Վերջինս, իր հիմքում ունենալով և՛ ընդհանուր, և՛ քաղաքական մշակույթը, հնարավորություն է տալիս քաղաքական սոցիալականացումը դիտարկելու որպես ազգային անվտանգության գործոն: Ակնհայտ է, որ և՛ ընդհանուր, և՛ քաղաքական մշակույթի արդիականացման միջոցով համագործակցության մշակույթը հնարավորություն կտա կերպափոխվող հասարակություններին ռացիոնալ պատասխանելու արտաձին և ներաձին մարտահրավերներին:

Ենթադրվում է, որ հասարակությունը արդիականացման իր եռաչափ (անցյալ-ներկա-ապագա) ժամանակի մեջ հումանիզացնում է անվտանգության ապահովման քաղաքականությունը: Այս համատեքստում «Ազգ-բանակ» հայեցակարգը նպաստավոր պայմաններ կստեղծի ՀՀ կայուն զարգացման և համագործակցության մշակույթի ապահովման սոցիալական տարածությունն ընդարձակելու համար: Կարծում ենք՝ այդ նպատակի իրագործման համար ՀՀ-ում անհրաժեշտ է, որ երիտասարդության քաղաքական սոցիալականացումը ներառի **հանրային, քաղաքական, պետական և գլոբալ կառավարման բարոյական, նպատակամետ ռազմավարություն: Այն թույլ կտա ՀՀ երիտասարդությանը ակտիվ մասնակցություն ունենալու հարաբերական անկախության մեջ գտնվող տարաբնույթ քաղաքական գործընթացում՝ տեղ ու դեր ապահովելով սեփական տեսակի համար:** Վերջինիս բնականոն արդիականացումը ենթադրում է ոչ միայն կարեկցության և գթասրտության դրսևորումներ, այլև երկարաժամկետ պլանավորված ջանքերի ապահովում՝ մարդու բարոյական սոցիալականացման համար: Լրջագույն հիմնախնդիր է այն, որ գործունեության բոլոր մակարդակներում բարոյականությունը իսկապես կիրառելու համար անհրաժեշտ է գոյատևման-արդիականության-սոցիալականացման Նոր գիտակրթական համակարգի ռազմավարություն մշակել<sup>1</sup>:

XXI դարում հենց դրանում է սոցիալականացված մարդու Նորարարական բնույթը, քանի որ մինչ այդ գաղափարախոսական ըմբռումները, այժմ էլ սպառողական և ագրեսիվ վարքը ուղղակիորեն գլոբալ հանրության ինքնապահպանման նպատակ չունեն:

Գլոբալացման գործընթացը մարտահրավեր է նետել մարդկության ռազմավարական կայունությանը, քանի որ քաղաքական զարգացման ճգնաժամերը, անտեսելով Նոր հումանիզմի իրատեսական գիտակցումն ու գնահատումը, հնարավորություն չեն տալիս համագործակցության մշակույթն ընկալելու որպես ազգային անվ-

<sup>1</sup> Дарио Салас Соммэр *Мораль XXI века, М.: Кодекс, 2013, с. 151.*

տանգության ապահովման գործոն: Արդյունքում Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, Հարավարևելյան Ասիայի, ինչպես նաև հետխորհրդային երկրներում, քաղաքական կայունության հաստատման բազմաչափությամբ, բազմավեկտորությամբ ու ժողովրդավարության որակի աճի անհրաժեշտությամբ պայմանավորված, մեծացել է համագործակցային մշակույթի պահանջարկը: Մի կողմից ժողովրդավարացման գործընթացների հետևանքով «ներքևից» պարտադրված բարեփոխումների բազմաչափությունը, մյուս կողմից կերպափոխվող հասարակություններում քաղաքական տարածության տրոհվածությունը և քաղաքական ժամանակի վերաբերյալ աններդաշնակ պատկերացումների առկայությունը որակական նոր մակարդակի են բարձրացրել ԱՊՀ համակարգում համագործակցային բաղադրիչի պահանջարկը: Այդ առումով ուշագրավ է Հ. Քոթանջյանի մոտեցումը, համաձայն որի՝ «Հարավային Կովկասի կայուն զարգացման համար բնական կլիմեր անվտանգության և դրան առնչվող խնդիրների նկատմամբ բազմավեկտոր մոտեցում ցուցաբերել, ինչը կապ կստեղծի տարածաշրջանում բոլոր հիմնական դերակատարների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, ԱՄՆ, Թուրքիայի և Իրանի, ինչպես նաև ԵԱՀԿ, ԵԽ, ԵՄ, ՀԱՊԿ, ՆԱՏՕ-ի, ԵԱԳԽ և ՄԾՏՀ կազմակերպությունների միջև<sup>1</sup>: Նմանօրինակ բազմավեկտոր համագործակցությունն ազգային անվտանգության ապահովման առումով արդյունավետ է, քանի որ ժամանակակից քաղաքական գիտության մեջ քննադատվում է անվտանգության ապահովման միավեկտորությունը:

Ցանցերը սոցիալական ոչ ավանդական միկրոհամակարգեր են, որոնք ապակենտրոնացման միջոցով բազմակարծության հաստատման, քաղաքացիների շահերի արտահայտման և անվտանգության ապահովման անմիջական կրողներն են: Ցանցի անդամներն աշխատում են պահպանել ուժերի հավասարակշռությունը և ներխմբային խնդիրների լուծման ժամանակ խմբային լիդեր են ընտրում՝ միմյանց անվտանգությունը պահպանելու ակնկալիքով: Պատմության հոլովույթում այս մեխանիզմի գործունեության արդյունավետությունը նկատի ունենալով՝ Մ. Դուգլասը վերանայեց **Հիրամի (HIRAMA – High Intensity Research and Management Association, Բարձր արդյունավետության հետազոտությունների և կառավարման միություն՝ ԲԱՀԿՄ)** անվտանգության ապահովման ցանցային բուրգը<sup>2</sup>: Փյունիկացի ճարտարապետ Հիրամը Երուսաղեմում Սողոմոն իմաստունի տաճարը կառուցելու համար հավաքագրում է տարբեր էթնիկական պատկանելություն ունեցող վարպետների աշխատանքային խմբեր և նրանց միջև հարաբերությունների անկայունությունը (անվստահությունը) կանխելու մտադրությամբ աշխատանքի բաժանում է կատարում՝ պահպանելով նրանց սովորույթները, ծիսային առանձնահատկությունները: Ցանցային առանձնահատկություններով օժտված այդ կառույցի աշխատանքային խմբերի կազմակերպիչները, անկախ իրենց էթնիկական պատկանելությունից, հանդիպում էին Հիրամի հետ «կլոր սեղանի» շուրջ՝ վերջինիս հետ քննարկելով Սողոմոն Իմաստունից ստացած հրահանգների արդյունավետությունը, որոնց անթերի կատարումը պահանջում էր վարպետների համագործակցություն՝ անկախ էթնիկ պատկանելությունից: Այդպիսով Հիրամին հաջողվել է հիմնադրել այնպիսի ցանցային համակարգ, որը հնարավորություն էր տալիս Սողոմոնին ամբողջ տարածքի անվտանգությունն ապահովելու ուղղահայաց և հորիզոնական սկզբունքների համաժամանակյա կիրառումով՝ ապակենտրոնացնելով իր իշխանությունը նրա նկատմամբ հավակնություն ունեցող փոքր լիդերների գլխավորությամբ: Հիրամի ցանցային համագործակցության մոդելը ենթադրում է

<sup>1</sup> Քոթանջյան Հ. Ս., Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության մշակման ուղեցույցները տարածաշրջանային անվտանգության ճարտարապետության համատեքստում, Եր., ԱՌՀԻ, 2008, էջ 63:

<sup>2</sup> *Олескин А.В.* Сетевые структуры современного социума с точки зрения биополитики / Полис, 1998, N 1, с. 78- 80

առանձին ենթախմբերի անվտանգության ապահովում՝ աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար կատարված գործառույթների բաժանման միջոցով: Հաշվի առնելով աշխատանքային բազմաէթնիկ խմբերի ավագանու «կառույց»-ի կայունության և անվտանգության ապահովման հիմնախնդիրը՝ սոցիալական ցանցերի առկայությունը ստիպում է ընդունել հետևյալ կենսասոցիալական սկզբունքները.

- **ապակենտրոնացված աստիճանակարգություն**, որը թույլ է տալիս մրցակցային մասնակցության հիմունքների վրա զարգացող սոցիալական ցանցերի անվտանգ գործունեության ընդլայնում,

- **բազմադերային կառավարման դաշտ**, որտեղ քննարկումների և ընդհանուր շահերի ռացիոնալացման արդյունքում կընդունվեն համընդհանուր անվտանգությունն ապահովող բանաձևեր,

- **հետևողական ուշադրություն**, որի արդյունքում ձևավորվում է հոգեբանական հանդուրժողականություն՝ ուրվագծելով փոխօգնության և փոխլրացման կարևոր երևույթների մուտքը անվտանգության դաշտ:

20-րդ դարի 50-60-ական թվականներին աֆրիկյան Նոր անկախացած երկրներում քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարման, ինչպես նաև քաղաքական կայունությունը որպես ազգային անվտանգության գործոն ուսումնասիրելու նպատակով սոցիալական ցանցերի արդյունավետ կիրառման հիմնախնդիրը կարևորվեց հիրամյան ցանցի գործունեության սկզբունքների հիման վրա: Ցանցային համակարգի հիրամյան ճարտարապետության համաձայն՝ քաղաքական կայունությունը և ազգային անվտանգությունը դիտարկվում են բազմակարծության և համակեցության հիման վրա: Սոցիալական ցանցի մասնակիցը, անկախ իր էթնիկական պատկանելությունից, զբաղվում է կոնկրետ երևույթի առանձին հատվածի ուսումնասիրությամբ և, այդ ուղղությամբ կենտրոնացնելով իր ուժերը, ընդունակություններն ու կարողությունները, ապահովում է կայուն անվտանգություն:

Արդյունքում սոցիալական ցանցի անդամների **կենսաէներգիան** նպաստում է ինչպես բարոյահոգեբանական անվտանգ մթնոլորտի ստեղծմանը, այնպես էլ էթնիկական տարբեր պատկանելություն ունեցող անհատների կայուն զարգացմանը: Կառավարման ապակենտրոնացումը, սոցիալական ցանցի անդամների միջև հորիզոնական հարաբերությունների հաստատումը, խմբային լիդերների առկայությունը ռացիոնալացնում են առկա իրողություններին տրվող գնահատականները՝ կայունացնելով սոցիալական գործունեությունը: Հիրամի ցանցային կառավարման մոդելն այսօր արդյունավետ իրականացվում է և՛ քաղաքական կայունության ապահովման, և՛ տարաբնույթ խմբերի **առաջնորդների** միջոցով անվտանգություն ապահովելու համար: Այս համատեքստում սոցիալական և քաղաքական ցանցերն սկսեցին համագործակցել որպես բազմավեկտոր կայունության միավորներ: Սակայն քաղաքական զարգացման մեկնություններում, պայմանավորված գլոբալացման գործընթացների վերաբերյալ գոյություն ունեցող դիրքորոշումների (գլոբալիստներ, հակագլոբալիստներ) տարաբնույթ լինելով, ցանցային սկզբունքի հիման վրա քաղաքական կայունության և ազգային անվտանգության գաղափարները մինչ այժմ արժանանում են տարաբնույթ մեկնաբանությունների: Իր դրական և բացասական դրսևորումներով հանդերձ՝ **ցանցային հայեցակարգը** անվտանգության նկատմամբ իր ռազմավարությունը կառուցում է՝ էլնելով պետության ու հասարակության, հասարակական կյանքի հանրային ու մասնավոր բնագավառների միջև Նոր աշխարհակարգի ձևավորման արժեշահային բնույթով պայմանավորված քաղաքական մշակույթից: Վերջինս, ներառելով քաղաքական զարգացմանը մասնակցող դերակատարների (կառավարող ընտրանի, ճնշման խմբեր, լիդերներ, ընտրազանգված, կուսակցություններ) գիտակցված փոխհամագործակցությունը, հանդես է գալիս որպես ժամանակատարածական հատուկ տիրույթների մեջ ինքնադրսևորվող, պատմաքաղաքական զարգացման ժառանգականություն և հաջորդականություն ապահովող երևույթ:

Համագործակցության մշակույթի ապահովման կարևորագույն ռեսուրսը սցիալականացված անձն է՝ քաղաքացին: Հետևաբար հասարակության քաղաքական համակարգի ինստիտուտները պարտավոր են այնպիսի գործունեություն ծավալել, որը թույլ կտա ՀՀ քաղաքացուն ազատորեն օգտվել իր իրավունքներից՝ կատարելով ոչ միայն իր պարտականությունները, այլև ընդլայնելով իր մասնակցությունը: ՀՀ երիտասարդության քաղաքական սցիալականացման առումով, որպես այս ամենի վրա անմիջականորեն ազդող գործոն, առաջին պլանի վրա է մտնում **մասնակցության և մրցակցության** ապահովումը: ՀՀ երիտասարդության քաղաքական սցիալականացումը դիտարկենք մասնակցության տեսանկյունից: **Մասնակցության խթանների** տեսանկյունից առավել ընդհանուր են համարվում **գաղափարախոսականը, նորմատիվայինը և դերայինը**: Համագործակցության մշակույթի ինդիքն է նպաստել խթանների զարգացմանը ՀՀ քաղաքացիների քաղաքական գիտակցության մեջ: **Եթե գաղափարախոսական խթանի** առկայությամբ անհատը հարում կամ մերժում է պաշտոնական գաղափարախոսությունը, ապա **նորմատիվայինի** դեպքում ՀՀ քաղաքացու վարքագիծը կլինի կանոնակարգված և քաղաքական համակարգին ենթարկվելը կընկալվի որպես միակ իմաստավորված կողմնորոշում, որը նպաստում է սեփական անվտանգությանը, ինքնաիրացմանը և ինքնադրսևորմանը: **Դերային խթանների** ապահովումը մեծապես պայմանավորված է ՀՀ պետական քաղաքականության՝ անձի սցիալականացման ունակությամբ: Անհատի վարքագիծն ուղղակիորեն կապված է նրա սցիալական դիրքի և սեփական ինքնագնահատականի հետ: Որքան ցածր է սցիալական դիրքը, այնքան հավանական են դառնում անհատի արմատական տրամադրությունները իշխանությունների նկատմամբ: Ուստի պետության և քաղաքացիական հասարակության բնականոն գործունեության համար որոշիչ դեր ունեն միջին խավն ու բաց հավաքագրված ընտրանին՝ որպես սցիալականացող և անվտանգությունն ապահովող գործոններ: Այս համատեքստում համագործակցության մշակույթն անցում է ապահովում մարզինալ-պոպուլյարիստական ձևաչափից ազատականի:

Մարզինալ պոպուլյարիստական մոդելի առկայությունը ՀՀ-ում հանգեցրել է ոչ ինստիտուցիոնալացման մասնակցության և հետամուտ է նյութական բարիքների ու սեփականության վերաբաշխման: Սա խոչընդոտում է տնտեսական զարգացման սցիալական պայմանները և պարբերաբար հանգեցնում է անկայունության: Չլուծված հիմնախնդիրները կուտակվելով՝ ավելացնում են քաղաքական, տնտեսական, սցիալական և այլ համակարգերին ներկայացվող պահանջների (և պահանջողների) թիվը, միաժամանակ ակտիվանում է մարզինալ քաղաքական մասնակցությունը: Նմանօրինակ մասնակցությունը չի հանգեցնում տարաբնույթ սցիալական խմբերի շահերի բավարարման և լոկ ապակայունացնելով հասարակական բոլոր համակարգերը՝ չի նպաստում մարդու կայուն զարգացմանը:

Հետևաբար համագործակցության մշակույթի ինդիքը պետք է լինի ՀՀ-ում մասնակցության ազատական մոդելի հաստատումը, որի դեպքում դինամիկ սցիալ-տնտեսական զարգացումը կնպաստի սցիալական, քաղաքական, տնտեսական և այլ կարգի անհավասարությունների համահարթեցմանը: Միայն այս դեպքում ՀՀ-ում կհաղթահարվեն **մարդու իրավունքների տնօրինման և պարտականությունների մշակույթի** համակարգի ճգնաժամը, և ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու համար կձևավորվի կայուն անվտանգության ապահովման բարենպաստ ռեժիմ:

Համագործակցության մշակույթի գործառնման մյուս առանցքը ՀՀ պետական կառավարման համակարգի թափանցիկության ապահովումն ու արդյունավետության բարձրացումն է: Այդ առումով պետական կառավարման աստիճանակարգության կառուցվածքում անհրաժեշտ է զուգամիտել «լավ կառավարման» սկզբունքները (մասնակցություն, թափանցիկություն, իրավունքի գերակայություն, արդարություն, սցիալական երկխոսություն, սերունդների համերաշխություն, ռազմավարական հե-

ռատեսություն, արդյունքի կառավարում) և Government Relations (GR) տեխնոլոգիաները՝ միտված ժողովրդավարական համախմբման: Այս դեպքում ՀՀ քաղաքացի – կառավարման մարմին ուղղակի փոխազդեցությունը կմեծացնի ՀՀ քաղաքացիների աջակցությունը «Ազգ-բանակի» գաղափարի իրականացման գործընթացին:

Այս նկատառումներից ելնելով՝ նշենք, որ ՀՀ-ում քաղաքական սոցիալականացման գործընթացը ենթադրում է ազգային անվտանգության ապահովման բազմավեկտոր գործողությունների բարդ խճանկար: Որպես սահմանադրահրավական, մշակութային, քաղաքակրթական, ավանդութային նորմերի համակցություն՝ քաղաքական սոցիալականացումը կանոնակարգում է անկայունության, քաղաքական մարզինալության, իրականության պատրանքային ընկալման սպառնալիքները: Վերոշարադրյալը հիմք է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումները:

1. Համագործակցության մշակույթը կառավարման ցանցային և աստիճանակարգային փորձի համադրումն է, որը վերարտադրում, ազգակերտում և կառավարում է ԱԱԱ համակարգը՝ ապահովելով ժողովրդավարության որակ: Ներառելով անվտանգության փափուկ և կոշտ մոդելների շրջանակներում մշակված ազգային շահի արդիականացման քաղաքականություն՝ այն հիմնվում է **ապակենտրոնացված կառավարման, բազմադերային սոցիալականացման, մրցակցային մասնակցության և համագործակցային անվտանգության համակարգի վրա:**

2. Պետությունը քաղաքացիների աջակցությունն ստանալու և իշխանության լեգիտիմությունը բարձրացնելու նպատակով իր քաղաքական սոցիալականացման գործառույթը պարտավոր է իրականացնել շարունակական ժողովրդավարության միջոցով: Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների անմիջական ազդեցությամբ ԱԱԱ գործընթացում գերակա է սոցիալական համակարգի և շրջակա միջավայրի միջև ցանցային կապերի ստեղծման միջոցով քաղաքացու «Ես»-ի կերտումը: Պետությունը, որպես անվտանգության մոնոպոլ «ադմինիստրատոր», իր գործառույթներն իրականացնելիս համագործակցում է՝ ա) ըստ անվտանգության մակարդակի՝ սուբստանցիոնալ և անդրազգային ինստիտուտների, բ) ըստ անվտանգության ձևերի՝ ոչ պետական դերակատարների հետ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, էթնիկական փոքրամասնություններ, Սփյուռք, ՀԼՄ-ներ:

3. Արդի տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների զարգացման և պատերազմի պայմաններում համագործակցության մշակույթն ունի խաղային բնույթ, ինչն էլ հնարավորություն է տալիս շեշտելու, որ սոցիալականացման արժեքաբանությունը կախված է ինչպես **տեղեկատվության հավաքումից, համակարգումից և ոչ պատվիրակված վերլուծությունից**, այնպես էլ քաղաքական գործընթացներին մասնակցող **դերակատարների աշխարհայացքից, դիրքորոշումից և գործունեության նպատակաբանությունից:**

4. ԱԱԱ-ը ներդաշնակ և աններդաշնակ սպառնալիքների բացահայտման, կանխարգելման, չեզոքացման, հակադարձման, վերացման և կանխատեսման գործընթաց է: Որպես ապագայի կառավարման բաց համակարգ՝ այն կանխատեսում է անվտանգության քաղաքականության արդիականացման բոլոր հնարավոր փոփոխականները և **սպասումների ցանցի** սանդղակավորման օգնությամբ ընդարձակում է համագործակցության մշակույթի գործունեության չափումները:

5. Անվտանգության քաղաքականությունը՝ որպես պոտենցիալ վտանգների, փոփոխական ռիսկերի ունիվերսումի ռացիոնալ կանխատեսման գործընթաց, բացահայտելով ցանցային կառավարման ժամանակ սոցիալական տարածության ընդարձակման անհրաժեշտությունը, արդիականացնում է լեգիտիմության քաղաքակրթական փոխակերպումները: Վերջինս, որպես կայուն անվտանգության ռազմավարությո-



յուն, ժողովրդավարացնում է **համագործակցության մշակույթի** վերաբերյալ կուտակված գիտելիքները՝ պայմանավորելով լեզվափոփոխության կապը **ազգային ոգին** արտահայտող լեզվամտածողության, իմացաբանական, ճանաչողական, արխիվային, բանակցային, տեղեկատվահաղորդակցական մեխանիզմների արդիականացման հետ:

6. ԱԱԱ-ը սերտորեն կապված է այն բոլոր հայեցակարգերի հետ, որոնց օգնությամբ քաղաքական համակարգն անվտանգության քաղաքականություն է մշակում, իրականացնում և ապահովում **«գիտավերլուծական»** հարացույցի օգնությամբ: Վերջինիս հիման վրա էլ անվտանգությունը դասակարգվեց ըստ ձևի՝ «կոշտ» (պետականակենտրոն) և «փափուկ» (քաղաքացիական), ըստ մակարդակի՝ **ազգայինից գլոբալ**:

7. Արդի դարաշրջանում տարբեր քաղաքակրթությունների միջև ծավալված արժեքային զուգամիտումները, բախումները և երկխոսությունները թե՛ իրական, թե՛ վիրտուալ տարածություններում ակնհայտ են դարձնում, որ գլոբալ կառավարման համակարգի և գլոբալ քաղաքացիական հասարակության ձևավորմանը մրցակցային մասնակցություն ունենալու համար ազգային ինքնության արդիականացմամբ հնարավոր է ընդարձակել ազգային անվտանգության կիբերտարածականությունը: Այս իմաստով էլ ՀՀ-ում ուշադրության է արժանի երիտասարդության քաղաքական սոցիալականացման միջոցով ինչպես ինքնության ադապտացվող արդիականացման ապահովման, այնպես էլ ունիվերսալ արժեքների հաստատման անհրաժեշտությունը:

8. Ցանցային կառավարման պայմաններում ձևավորվել են ազգային անվտանգության ապահովման նոր իրողություններ, որտեղ հայոց Սփյուռքը հնարավորություն է ստացել ռացիոնալացնելու իր մասնակցությունը հայրենիքի կառավարման գործընթացին և պատասխանելու ներքին-արտաքին համաչափ և անհամաչափ սպառնալիքներին: Նման պայմաններում քաղաքական ժամանակն անընդհատ վերակառուցվում է՝ միտված դեպի անվտանգ ապագա, իսկ իր ազգային ինքնության արդիականացմամբ հայ մարդը հանդես է գալիս որպես գլոբալ անվտանգության և կայուն զարգացման քաղաքական դերակատար<sup>1</sup>: Գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում տեղեկատվահաղորդակցական տարաբնույթ, հաճախ մանիպուլյացիոն հոսքերի գործառնման ներկայիս պայմաններում իրատեսական է անվտանգության ապահովման այլընտրանքային այնպիսի ձևերի մշակումը, որոնք տարբեր տարածաշրջաններում հայի տեսակին ինքնակազմակերպվելու հնարավորություն կտան: Այդ գործընթացում Հայոց առաքելական եկեղեցին, սոցիալական ցանցերում արդիականացնելով իր գործունեությունը, կարող է ստանձնել մի կողմից ավանդական արժեքների մոդերատոր «հայրենիքի», մյուս կողմից՝ պոստմոդեռն արժեքներ շրջանառող «սփյուռք»-ի ինքնակազմակերպումը: Այս երկու եզրերի միջև փոխհարաբերությունների ժամանակային պարույրի զարգացումը պահանջում է տիրապետել կիբերտարածություններում այլոց հետ համագործակցելու միջոցով սեփական կարողության մրցունակությունը ստուգելու **կիրառական ձևերին**՝ օգտագործելով **կիբերտարածությունները՝ որպես ազգային անվտանգության ապահովման յուրատեսակ տարածք**:

9. ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեքներն ապահովող գործընթաց է քաղաքացիավարական կրթությունը, որտեղ անձի սոցիալականացման արժեքայնությունը պայմանավորված է կառավարող ընտրանու իրականացում իշ-

<sup>1</sup> *Մարգարյան Մ. Մ.*, Համընդհանուր անվտանգության համակարգի արդիականացման հիմնախնդիրները և «Հայկական աշխարհը», «Հայկական բանակ», ՀՀ ՊՆ, ԱՌՀԻ, ռազմագիտական հանդես, N 1-2, 2011, էջ 116-128

խանութի մշակույթով: ՀՀ-ում քաղաքացիավարությունը, ներառելով **քաղաքացիական գիտելիքներ, հմտություններ և արժանիքներ**, հիմնվում է ինքնակարգապահության, հանդուրժողականության և այլակարծության վրա: ՀՀ-ում քաղաքացիավարական ուսուցումը մարդկային և տեխնիկական ռեսուրսների ռացիոնալ կառավարման ցանց է, որը ներառում է **հիմնախնդրային, շարունակական, ազատ քննարկումների, տարաբնույթ գաղափարների ծրագրավորում:**

**Մամիկոն Մարգարյան**  
**ՀԱՍՏԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ**  
**ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

**Հիմնաբաներ.** *քաղաքական զարգացում, համագործակցության մշակույթ, սոցիալականացման քաղաքականություն, ազգային անվտանգություն*

Հիմնավորված է համագործակցության մշակույթի բազմամակարդակ ուսումնասիրումը, որը ցանցային կառավարման պայմաններում հնարավորություն է տալիս մասնակցելու ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային և գլոբալ անվտանգության համակարգերին: Այս համատեքստում ՀՀ քաղաքական համակարգի ցանկացած էվոլյուցիոն բարդացում հիմնավորված է իշխանության և սեփականության լեգիտիմության, քաղաքացիների և պետության երկխոսության, սեփականության հումանիզացման, բախումների իրավական կարգավորման տիրույթներում:

**Mamikon Margaryan**  
**COOPERATION CULTURE AS PROCESS OF PROVIDING**  
**OF THE NATIONAL SECURITY**

**Keywords:** *Political development, collaboration culture, socialization policy, national security*

The article presents the multilevel research of cooperation culture, which in the process of network governance allows to participate not only in national, but also in regional and global security systems. From this perspective, any evolutionary complication is justified in the fields of power and property legitimization, dialogue of citizens and state, humanization of property and legal regulation of conflicts.

**Мамикон Маргарян**  
**КУЛЬТУРА СОТРУДНИЧЕСТВА КАК ПРОЦЕСС ОБЕСПЕЧЕНИЯ**  
**НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ**

**Ключевые слова:** *политическое развитие, культура сотрудничества, политика социализации, национальная безопасность*

В статье представлено многоуровневое исследование культуры сотрудничества, которая в процессе сетевого управления позволяет участвовать не только в национальной, но и региональной и глобальной системах безопасности. С этой точки зрения любое эволюционное осложнение обосновано в рамках легитимизации власти и собственности, диалога граждан и государства, гуманизации собственности и правового регулирования конфликтов.

## ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉԱԻԹՈՒՔԸ՝ ԹԱԿՇՅԱ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ՈՐՈՒՄՆԵՐԻ ՂԵՎՈՆԴՅԱՆ

Թեև ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարությունում քաղաքացիական հասարակության զարգացումը համարվում է ներքին անվտանգության ամրապնդման բաղադրիչ, սակայն իրական զարգացման նախադրյալները ՀՀ անկախության 26 տարիներին չլինեցին ե՛ն եղել: Նախ՝ քաղաքացիական հասարակության կառույցները լայնորեն օգտագործվել են համակարգի տարբեր տարրերի կողմից: Դա մասնավորապես ակնհայտ է եղել համակարգի շահերի քարոզման, ընտրությունների ժամանակ ձայներ ապահովելու, ընդունված որոշումները կյանքի կոչելու, արտադրվող բարիքների վերաբաշխմանը մասնակցությունն ընդլայնելու և այլ գործընթացներում: Բացի այդ՝ ճնշվել են համախմբման, ֆինանսական անկախության, այլընտրանքային տեղեկատվության տարածման, գործունեության ոլորտի ինքնակազմակերպման միտումները: Կարելի է նշել, որ Հայաստանում գործել է քաղաքացիական հասարակության Ետատիստական մոդելը՝ պետության մասնակցության հիբրիդային-չնորմավորված ձևատեսակով: Իսկ քաղաքացիական հասարակության մասնակցությունը պետական կառավարման գործընթացին հաճախ կրել է ձևական բնույթ: Օրինակ մասնագիտական ասոցիացիաները ապահովել են առաջին հերթին պետական դիրքորոշման հեռարձակումը, իսկ հաղորդակցություններն աչքի են ընկել միակողմանիությամբ: Կարող ենք նշել «Հայաստանի մաքսային բրոքերների ասոցիացիան»: Այն ձևավորվել է 2010 թվականին: Թեև ասոցիացիայի նպատակներից մեկը, ըստ կանոնադրության, եղել է բրոքերների իրավունքների պաշտպանությունը, սակայն հիմնականում այն զբաղվել է մաքսային մարմինների մոտեցումների ներկայացմամբ ու տարածմամբ: Ընդ որում, այս գործունեությունը բացահայտ խրախուսվել է նույն պետական մարմնի կողմից: ՊԵԿ հսկողության վարչության պետ Գ. Սաղոյանը, ողջունելով ասոցիացիայի ստեղծումը, նշում է. «Երբ սկսեցինք լուրջ ուշադրություն դարձնել բրոքերների ինստիտուտին, մենք նկատեցինք, որ մաքսայինը, որպես այդպիսին, ազդեցության լծակներ չունի բրոքերների «դաշտի» վրա...»<sup>1</sup>: Փաստորեն տվյալ մասնագիտական միության ստեղծումն ինքնին ընկալվում էր որպես ոչ թե անկախ հասարակական համագործակցային կամ ընդդիմադիր կառույց, այլ պետական մարմնի կողմից ազդեցության հնարավորություն: Արդյունքը տրամաբանական է. ասոցիացիայի 2010-2017 թվականների գործունեության արդյունքում չի նկատվել պետական մարմնի որևէ գործողության քննադատություն կամ հեղափոխական փոփոխության որևէ առաջարկ:

Նշված օրինակը համատարած ընդգրկում ունի: Մասնավոր հատվածը ևս այն կրկնօրինակում էր: Աշխատանքային ձեռնարկությունների արհեստակցական միությունները գործնականում պաշտպանում էին ղեկավար մարմնի շահերը, հասարակական կազմակերպությունները փորձում էին պետական ֆինանսավորման հասանելիությունը մեծացնել համապատասխան կառույցների մոտեցումները պաշտպանելով, կուսակցությունների ներքին օղակները տեղեկություններ էին փոխանցում բացառապես միակողմանի՝ ղեկավարությունից դեպի հասարակություն և այլն: Այսպիսով, խաթարված էր քաղաքացիական հասարակության առանցքային գործառույթը՝ տեղեկատվության երկկողմանի փոխանցումը: Համապատասխանաբար՝ մասնավոր հատվածի մասնակցությունը հանրային ու պետական որոշումների կայացման գործընթացին խիստ սահմանափակ էր:

<sup>1</sup> Մաքսային բրոքերները ստեղծել են <https://news.am/arm/news/24311.html>

Այնուամենայնիվ, հաղորդակցման միջոցների զարգացումն ու լայն տարածումը, այլ երկրների օրինակով, Հայաստանում ևս բերեց քաղաքացիական ակտիվության աշխուժացման: Ժամանակի հետ և փորձառության մեծացմանը զուգընթաց, այս երևույթը սկսեց կարևոր ազդեցություն ունենալ հանրային քաղաքականությունում:

### **Քաղաքացիական ակցիաների կանխորոշիչ քաղադրիչների ձևավորումն ու զարգացումը**

**Քաղաքացիական ակտիվության աճի 1-ին նշանները** ի հայտ եկան 2010 թվականից սկսած: Մինչ վիճակագրական տվյալները վկայում էին, որ հասարակության մոտ ոչ առևտրային կազմակերպությունները առավելապես ընկալվում են որպես ինքնատիպ «բիզնես» հնարավորություն<sup>1</sup>, քաղաքացիական ոչ ֆորմալ նախաձեռնությունները փորձեցին ինքնակազմակերպվել: Նրանց առաջին հաջողությունները գրանցվեցին 2011 թվականին՝ **Թռչկանի ջրվեժի վրա հիդրոէլեկտրոկայանի կառուցման դեմ և 2012 թվականին՝ Մաշտոցի պուրակի պահպանման ակցիաներում**: Երիտասարդության ինքնակազմակերպումը թեև դեռևս ցածր մակարդակի վրա էր, սակայն բերեց լուրջ արդյունքների: **Թռչկանի ջրվեժի վրա հիդրոէլեկտրոկայանի կառուցումը հանվեց օրակարգից**<sup>2</sup>: Մաշտոցի պուրակում առևտրային տաղավարներ չտեղադրվեցին<sup>3</sup>:

**Հետագա տարիների իրադարձությունները բացահայտեցին քաղաքացիական մասնակցության ծավալների և հավաքագրման արդյունավետության անընդհատ աճ**: Հատկապես սոցիալական խնդիրների շուրջ համախմբումը թույլ տվեց կանխատեսել և իրականացնել արդյունավետ գործողություններ:

1-ին լայնածավալ ընդվզումը տեղի ունեցավ հասարակական տրանսպարտի սակագնի բարձրացման, այնուհետև՝ կենսաթոշակային ռեֆորմի դեմ ակցիաներում: Սակայն Հայաստանում քաղաքացիական ակտիվության բնութագրիչ առանձնահատկությունները հասարակական համախմբման գործընթացում առավելապես ընդգծվեցին էլեկտրաէներգիայի սակագնի ավելացման դեմ պայքարի շրջանակներում:

«**Էլեկտրիկ Երևան**» անվանումը ստացած գործընթացը մեկնարկեց երիտասարդության մի հատվածի կողմից Ֆրանսիայի հրապարակում և Մարշալ Բադրամյան պողոտայում 24-ժամյա բողոքի ակցիաներով: Սակայն կրիտիկական զանգվածի մասին խոսել դեռևս չէր կարելի: Ամեն ինչ փոխվեց, երբ հունիսի 23-ի առավոտյան ոստիկանությունը որոշեց ուժի միջոցով վերականգնել երևթանկությունը նշված հատվածներում: Բերման ենթարկվեցին 240-ից ավելի ակտիվիստներ, տուժեցին լրագրողներ, հարուցվեց քրեական գործ<sup>4</sup>: Այս գործողությունը բերեց շղթայական ինքնակատալիզի հզոր ալիքի, որի արդյունքում Նույն օրը երեկոյան մարդկանց բանակը բազմակի ավելացավ նշված վայրերում, իսկ բողոքի ակցիաները տարածվեցին Նաև Գյումրիում, Վանաձորում և այլն<sup>5</sup>: Եվս մեկ առանձնահատկություն էր ցանցային կառավարման բազմաթիվ կենտրոնների գոյացումը, ինչը հնարավորություն չէր տալիս հակառակ կողմին վարել ակտիվ

<sup>1</sup> Ishkanian A. Superstitious symbiosis: engagement between activists and NGO's [https://www.academia.edu/9573889/Surreptitious\\_symbiosis\\_engagement\\_between\\_activists\\_and\\_NGOs](https://www.academia.edu/9573889/Surreptitious_symbiosis_engagement_between_activists_and_NGOs)

<sup>2</sup> Թռչկանի ջրվեժը, կարծես, փրկվեց <https://www.yerkir.am/news/view/14957.html>

<sup>3</sup> Մաշտոցի այգում մշտական տաղավարներ չեն տեղադրվելու <https://armenpress.am/arm/print/681895/>

<sup>4</sup> Armenia: Evaluating Electric Yerevan's Impact <http://www.eurasianet.org/node/74146>

<sup>5</sup> Шахназарян Н., Протестное движение "Электрик Ереван" и его последствия, <http://echo.msk.ru/blog/ponarseurasia/1711514-echo/>

բանակցություններ կամ գործադրել ճշում: Ընդ որում, տեղեկատվության փոխանցման հորիզոնական սոցիալական հենքը և բռնությանը բռնությամբ չպատասխանելու մշակույթը հնարավորություն տվեցին խուսափել պրովոկացիոն դրսևորումներից, որոնց արդյունքում կլեգիտիմացվեր ուժի կիրառումը: Անկախ շարժման վերջնական արդյունքից, այն վեր հանեց և փորձարկեց քաղաքացիական ակտիվության մի շարք կանխորոշիչ բաղադրիչներ, որոնք հետագայում վճռորոշ դեր էր խաղալու թավշյա հեղափոխության ընթացքում:

### **Քաղաքացիական հասարակության դերակատարման առանձնահատկությունները թավշյա հեղափոխության ընթացքում**

Թավշյա հեղափոխության հաղթանակում քաղաքացիական ակտիվության վերոնշյալ առանձնահատկությունները ընդգծված նշանակություն ունեցան: Քաղաքացիական հասարակության թե ֆորմալ և թե հատկապես ոչ ֆորմալ հատվածներում ձևավորվել էր գործունեության ու փորձառության ռեսուրս: Թեև Նախքան ապրիլի 22-ին հեղափոխության առաջնորդների ձերբակալումը և ս գործողություններն աչքի էին ընկնում զանգվածայնությամբ, սակայն այդ օրը ուժի կիրառմանն ի պատասխան հասարակությունն ինքնակազմակերպման ու ինքնակատալիզի միջոցով բազմապատկվեց՝ պարալիզացնելով քաղաքամայր Երևանն ու մյուս խոշոր քաղաքները: Ինչպես Նախորդ՝ «Էլեկտրիկ Երևանի» դեպքում, այս անգամ էլ ցանցային կառավարման բազմակենտրոնությունը պետական մարմիններին թույլ չտվեց կետային միջամտություն իրականացնել: Ընդ որում, կենտրոններն այս անգամ այնքան բազմաթիվ էին, որ ուժային մարմինների մարդկային ռեսուրսները ուղղակի չբավարարեցին:

Յեղափոխության հաջողությունն առաջին փուլում՝ վարչապետ Սերժ Սարգսյանի հրաժարականը շրթայական ինքնակատալիզի և ս մեկ, հզոր ալիքի հիմք հանդիսացավ: Իսկ խորհրդարանի կողմից վարչապետ ընտրելու ընթացքում հեղափոխության առաջնորդ Նիկոլ Փաշինյանին չպաշտպանելու Հանրապետական կուսակցության որոշումը մոբիլիզացրեց այնպիսի զանգված, որն ունակ էր ցանկացած իշխանության պարտադրելու ցանկացած որոշում: Մասնակիցների մասշտաբը, այնուամենայնիվ, չխոչընդոտեց տեղեկատվության հորիզոնական տարածմանը: Ցանցային մեխանիզմների միջոցով ապահովվում էր գործողությունների համաձայնեցվածությունը: Որպես օրինակ կարող ենք նշել ցույցերի դադարեցումը, երբ հեղափոխության առաջնորդի կողմից նշված ժամից հետո առանց բացառության բոլոր փակված փողոցները բացվում էին: Ուժի կիրառման դեմ խաղաղ անհնազանդության սկզբունքների պահպանումն ու բռնության բացառումը ևս բնութագրական են քաղաքացիական հասարակության ինքնագիտակցման ու զարգացման առումով: Թավշյա հեղափոխության հաղթանակում քաղաքացիական հասարակության ներդրումը տարիների ընթացքում կուտակված փորձի և գիտելիքների կիրառումն էր:

Այսպիսով կարող ենք նշել, որ քաղաքացիական հասարակության կառույցների դերակատարման վակուումը ժամանակի ընթացքում բերեց քաղաքացիական ակտիվության զարգացմանը: Տարբեր գործընթացների ընթացքում բյուրեղացան գործողությունների բնորոշիչ առանձնահատկություններ, որոնք հետագայում առանցքային նշանակություն ունեցան թավշյա հեղափոխության հաղթանակում: Այդ առանձնահատկությունները կարելի է ամփոփել հետևյալ կետերում.

1. Բռնությանը հակազդելու խաղաղ անհնազանդության գերակայություն:
2. Ինքնակազմակերպման բարձր մակարդակ:
3. Ինքնակատալիզվող համախմբման շղթայական զարգացում:

4. Տեղեկատվության ցանցային-հորիզոնական փոխանցում:

5. Ցանցային գործողությունների տրամաբանությունում բազմազան կենտրոնների ձևավորում և գործարկում:

Այս առանձնահատկությունները վճռական նշանակություն ունեցան բաղաբաղական գործընթացի հանգուցալուծման առումով:

**Ռոբերտ Դևոնդյան**  
**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՐԹՈՆՔԸ՝**  
**ԹԱՎՈՅԱ ԳԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

*Բանալի բառեր՝ բաղաբաղական հասարակություն, թավշյա հեղափոխություն, կուտակում, առաջընթաց, ինքնակազմակերպում ինքնակատալիզ*

Քաղաքացիական հասարակության էվոլյուցիոն զարգացումը Հայաստանի անկախացումից ի վեր բախվում էր կոռումպացված-ավտոկրատ պետական համակարգի շահային դրսևորումների պատճենին: Այնուամենայնիվ, ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում բաղաբաղական ակտիվության նշանակալի դրսևորումներ: Այս կետային իրադարձությունների վերլուծության արդյունքում նշմարվում էին Հայաստանում բաղաբաղական հասարակության գործունեության առանձնահատկություններ, որոնք ամբողջ ներուժով բացահայտվեցին 2018 թվականի ապրիլ-մայիսին՝ Թավշյա հեղափոխության ընթացքում:

**Robert Ghevondyan**  
**CIVIL SOCIETY AWAKENING**  
**IN THE CONTEXT OF VELVET REVOLUTION**

**Keywords:** *civil society, velvet revolution, accumulation, progress, self-organization, self-catalysis*

Civil society evolution after gaining independence of Armenia was facing the barrier of the state-based corrupt – autocratic system. Nevertheless, from time to time significant acts of civil activity were taking place. As a result of analysis of these point events features of Armenian civil society activity were seen, which declared themselves with all potential within the process of velvet revolution. The bases of participation, key role, predominance and modernization values of civil society in the Republic of Armenia are presented in the article.

**Роберт Гевондян**  
**РАСЦВЕТ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА В КОНТЕКСТЕ**  
**БАРХАТНОЙ РЕВОЛЮЦИИ**

**Ключевые слова:** *гражданское общество, бархатная революция, накопление, прогресс, самоорганизация, самокатализ*

Эволюция гражданского общества после обретения независимости Арменией сталкивалась с барьером государственной корумпированной-автократической системы. Тем не менее время от времени происходили значимые проявления гражданского активизма. В результате анализа этих точечных событий были выявлены особенности деятельности гражданского общества в Армении, которые проявились всем своим потенциалом во время бархатной революции. В статье представлены основы участия, ключевой роли, преобладания и модернизации ценностных ориентиров гражданского общества в событиях в Республике Армения.

## ОСОБЕННОСТИ И ПЕРСПЕКТИВЫ УРЕГУЛИРОВАНИЯ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА<sup>1</sup>

**СЕРГЕЙ ВАРДАЗАРЯН**

*«Не существует ни моральных, ни исторических оснований для признания Карабаха частью территории Азербайджана. Во всякой войне нарушения прав человека совершаются с обеих сторон. Однако в данном случае существует постоянная асимметрия, которая позволяет утверждать, что истинным агрессором в этой войне является Азербайджан»*

**Керолайн Кокс, вице-спикер Палаты лордов Великобритании,  
из доклада на дебатах 1 июля 1997 года**

*«Люди, не знающие реалий этого мира, делают много ошибок»*

**Гейдар Алиев, президент Азербайджанской Республики,  
«Бакинский рабочий», 12 ноября 1999 года<sup>2</sup>**

Южный Кавказ всегда был в центре противостояния между Севером и Югом, Востоком и Западом, находясь на перекрестке между ними. На сегодняшний день Южный Кавказ превратился в регион, где развернулись этнополитические конфликты, итогом чего стали образования де-факто трех независимых республик – Абхазия, Арцах, Южная. Сегодня Карабахский конфликт является одним из наиболее продолжительных региональных конфликтов, от урегулирования которого зависит стабильность всего региона Южного Кавказа. Нагорный Карабах, у многих современников ассоциируется с этническими чистками, войной, перестрелками и, к сожалению, жертвами. Рассмотрим основные истоки конфликта и попытаемся понять, каким же образом можно если и не решить, то, во всяком случае, добиться мира на границе.

Проблематика в отношении Арцаха и армян, живущих в Арцахе началась, когда эта область была передана новосозданному азербайджанскому государству в нарушении имеющегося законодательства 5 июля 1921 года, не взирая на то, что 4 июля того же года решением Кавбюро Нагорный Карабах был присоединен к Армении<sup>3</sup>. Следует отметить, что 16 марта 1921 года после подписания между РСФСР и Турцией без участия представителей Армении был подписан советско-турецкий «Договор о дружбе и братстве». Согласно договору к Турции отошли бывшая Карсская область и бывший Сурмалинский уезд с горой Арарат, а под протекторат Азербайджана, без права передачи третьей стороне, перешел Нахичеванский уезд. Тем самым исторические армянские земли стали «разменной монетой» в руках правящих кругов РСФСР, а в дальнейшем СССР для задабривания мусульманского населения, заселенного на данной территории и поддерживаемая Турцией.<sup>4</sup> Что касается Зангезурской области, то только

<sup>1</sup> Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 16YR-5F040

<sup>2</sup> **Мелик-Шахназаров А.** Нагорный Карабах: Факты против лжи. URL: <file:///C:/Users/Admin/Downloads/%D0%9A%D0%BD%D0%B8%D0%BA%D0%B0%20%D0%9A%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85.pdf> Стр. 339

<sup>3</sup> **Манасян А.** Карабахский конфликт. Ключевые понятия и хроника. Издательство Нораванк – Ер. 2005. Стр. 13.

<sup>4</sup> **Захаров В.** Московскому договору 1921 года необходимо дать объективную оценку. Ноев ковчег, № 5 (188) Март (16–31) 2012 года. URL: <http://noev-kovcheg.ru/mag/2012-05/3125.html>

благодаря народному сопротивлению, которую возглавил национальный герой Армении Гарегин Нжде в 1920-х гг., остался в составе Армении, что является и поныне клином между братскими тюркскими народами - Турцией и Азербайджаном.

30 августа Верховный Совет Азербайджанской Республики провозгласил восстановление независимости Азербайджанской Демократической республики 1918-1920 гг. Последняя, как известно, была марионеточным образованием, чье непризнание Лигой Наций было обусловлено именно неурегулированными территориальными спорами, в том числе и с Армянской республикой из-за Нагорного Карабаха, Зангезура и Нахичевана. Напротив, Нагорный Карабах объявил свою независимость от бывшей Азербайджанской ССР в полном соответствии с законодательством Союза ССР. 2 сентября совместная сессия депутатов Облсовета НКАО и районного Совета Шаумянского района провозгласила Нагорно-Карабахскую Республику (НКР). 10 декабря 1991 года состоялся всенародный референдум, на котором подавляющее большинство населения НКР высказалось за независимость. Это произошло до формального распада СССР, на основании статьи 3 Закона СССР «О порядке решения вопросов, связанных с выходом союзной республики из СССР» от 3 апреля 1990 года. Азербайджанские власти 26 ноября 1991 года приняли еще одно решение - об упразднении НКАО - и перешли к открытой агрессии против Нагорно-Карабахской Республики. Приватизировав огромные запасы техники, вооружений и боеприпасов бывшей Советской армии, Баку начал непосредственные боевые действия против армянского Нагорного Карабаха. Война, начавшись осенью 1991 года, с переменным успехом продолжалась до начала мая 1994 года, когда при посредничестве Российской Федерации было заключено бессрочное прекращение огня. В ходе войны, потеряв часть своих территорий, Нагорно-Карабахская Республика в то же время установила контроль над значительными территориями Нагорного и равнинного Карабаха за пределами границ НКР.<sup>1</sup>

До недавнего времени очень часто экспертное сообщество, да и официальные лица попеременно употребляли два термина: «карабахская проблема» и «карабахский конфликт». Но в последнее время больше всего употребляют термин «карабахский конфликт». И здесь речь не идет о каком-то лексикологическом различии этих двух понятий. Проблема более глубинна и заключается в методологии решения конфликта. При этом убеждении следует исходить из следующих принципов:

- Понятия проблема и конфликт взаимосвязаны, но одновременно являются понятиями разного уровня.
- Проблема не всегда содержит конфликт, а конфликт не всегда имеет начало с проблемы, это всего лишь одна из манифестаций проблемы.
- В скрытом, латентном состоянии проблема имеет различные пути и схемы, как урегулирования, так и конфликта.
- Относительная независимость конфликта и проблемы предполагает также относительную независимость урегулирования конфликта и различных методов для решения проблемы.
- Основным положением является то, что конфликт продолжается не столько базисными факторами проблемы, сколько соотношением между проблемой и конфликтом.

---

<sup>1</sup> *Мелик-Шахназаров А.* Нагорный Карабах: Факты против лжи. URL: <file:///C:/Users/Admin/Downloads/%D0%9A%D0%BD%D0%B8%D0%BA%D0%B0%20%D0%9A%D0%B0%D1%80%D0%B0%D0%B1%D0%B0%D1%85.pdf> Стр. 339



Что касается исторических этапов карабахского конфликта, то условно можно разделить на следующие:

- Карабахский конфликт в составе СССР
- Карабахский конфликт после распада СССР
- Карабахский конфликт в контексте региона
- Карабахский конфликт в современной системе МО
- Карабахский конфликт в контексте истории армянского народа.

В данной связи следует отметить, что конфликт зарождается в условиях дискриминации одной нации по религиозному, национальному и другим признакам со стороны другой нации. В след за дискриминацией начинается вытеснение, депортация, уничтожение данной народности».<sup>1</sup>

Какие же решения конфликта существует на данный момент и насколько они исходят из интересов Республики Арцах? Единственным документом, который более или менее обсуждается и в которой предлагается мирное решение карабахского конфликта являются, так называемые, «Мадридские принципы». Рассмотрим эти пункты поподробнее рассмотрим потенциальные угрозы, таящиеся в данном документе:

- Окончательный статус НК будет определен путем плебисцита, который подразумевает свободное и справедливое волеизъявление населения НК. Сроки и детали плебисцита стороны согласуют в ходе дальнейших переговоров. Под населением НК понимаются жители всех национальностей, проживавших в НКАО в национальных пропорциях 1988г.<sup>2</sup> В ходе плебисцита ограничения в формулировке вопроса не будет.
- В течение промежуточного периода, до определения окончательного юридического статуса НК, его жители будут иметь определенные права и преимущества, которые будут определены, согласно излагаемым принципам в Мирном соглашении:
  - а) У жителей НК должно быть право социальной и экономической жизнедеятельности в демократическом обществе, защиты и контролирования безопасности, согласно международному праву.
  - б) У населения НК будет право избирать должностных лиц для управления в течение промежуточного периода. Эти должностные лица будут осуществлять законодательную и исполнительную власть, а также создадут суды. Эти должностные лица будут иметь право организовывать выборы в районах, предусмотренных по Мирному соглашению.
  - в) Промежуточные власти НК будут иметь статус наблюдателя на тех сессиях ОБСЕ, где будут обсуждаться вопросы, касающиеся НК. Они могут вступать в те организации, в которых международно признанный статус не обязателен.
  - д) НК может получать финансовую помощь от зарубежных стран и международных организаций.
    - Армянские силы выводятся из всех территорий, сопредельных с бывшей НКАО.
- а) Армянские силы выводятся из Кельбаджарского района. Ограниченное военное соединение будет дислоцироваться на той территории, которая будет

<sup>1</sup> Золян С. «Нагорный Карабах: проблема и конфликт», Издательство "Лингва", Ер.-2001г., С. 10-38

<sup>2</sup> **Итоги переписи населения СССР 1989 года.** URL: [http://istmat.info/files/uploads/17594/naselenie\\_ssr\\_po\\_dannym\\_vsesoyuznoy\\_perepisi\\_naseleniya\\_1989g.pdf](http://istmat.info/files/uploads/17594/naselenie_ssr_po_dannym_vsesoyuznoy_perepisi_naseleniya_1989g.pdf); Динамика численности и этнического состава населения НКАО по данным Всесоюзных переписей 1926-1989 годов. URL: <http://sumgait.info/caucasus-conflicts/historical-falsifications/historical-falsifications-2.htm>

определена Международной Переходной Комиссией, до подписания Мирного соглашения.

б) Контроль над Кельбаджарским районом будет осуществлять Международная Переходная Комиссия, куда будут входить представители Армении и Азербайджана. Комиссия будет осуществлять постоянный международный мониторинг Кельбаджарского района. Отъезд населения из Кельбаджарского района будет поощряться.

с) Выселенные азербайджанцы вернутся в Кельбаджарский район после подписания Мирного соглашения.

- Армению и Карабах должен соединять коридор согласованной ширины. До решения окончательного статуса НК этот коридор сохранит тот статус, который существовал на момент подписания документа. После определения окончательного юридического статуса НК статус коридора будет урегулирован, учитывая окончательный статус НК.
- На основе положений Мирного соглашения все внутренне перемещенные лица и беженцы имеют право на возвращение на добровольных началах с того момента, когда Комиссар ООН по делам беженцев объявит, что безопасность прежних мест жительства обеспечена. Все лица, вернувшиеся в свои населенные пункты, будут без дискриминации пользоваться правами человека и основными свободами. Их сосуществованию должны способствовать все стороны, преследуя цель ослабить напряженность, а также урегулировать экономическое, политическое и социальное положение армян и азербайджанцев.
- До вступления в силу Мирного соглашения будет осуществляться Международная миротворческая операция для мониторинга демилитаризации и безопасности районов. Миротворческие единицы будут сформированы из войск. Предоставление войск для миротворческой деятельности будет осуществляться на добровольных началах. Каждая сторона имеет право ВЕТО на выбор другой стороны».

Документ предполагал также создание четырех комиссий. Первая брала на себя обязанность разработки деталей плебисцита. Вторая должна была установить будущий статус коридора и все, что с ним связано. Третья комиссия должна была организовать передачу Кельбаджарского района Азербайджану. Четвертая брала на себя обязанность обсуждения дополнительных вопросов, связанных с реализацией базовых принципов.<sup>1</sup>

Рассмотрим риски для армянской и азербайджанской сторон. В случае, если референдум о статусе НКР пройдет до передачи контролируемых территорий, тогда по формуле, предложенной мадридскими принципами, а именно, голосует ровно столько количество людей, сколько жило до 1989 года в рамках НКАО (189.085 – общее кол.-во людей, 145.450 чел. – армяне (76.92%), 40.688 чел. – азербайджанцы (21.52%) и 2.947 – другие национальностям (1,56%)), тогда это может от части удовлетворять Степанакерт.<sup>2</sup> Как мы видим из количества населения, проживающего до 1989 года в НКАО, результаты были бы предрешены. Но, последующие пункты предполагают освобождение буферной зоны вокруг НКР и вывод войск, а значит карабахская сторона отдает противнику стратегические позиции, что в дальнейшем, при военных авантюрах Азербайджана, вопреки договоренностям, даст стратегическое преимущество при

<sup>1</sup> *Карабахский конфликт: перспективы урегулирования.* URL: <http://www.armtoday.info/default.asp?Lang=Ru&NewsID=46232>

<sup>2</sup> *Динамика численности и этнического состава населения НКАО по данным Всесоюзных переписей 1926-1989 годов.* URL: <http://sumgait.info/caucasus-conflicts/historical-falsifications/historical-falsifications-2.htm>

ведении боевых действий. Да и Азербайджан не согласится с первым пунктом о референдуме только потому, что в Азербайджане вообще не рассматривается вопрос независимости НКР. Так, бывший оппозиционер в Азербайджане Вафа Гулузаде высказал свое мнение по вопросу референдума, которое в дальнейшем разделили и политические правящие круги Азербайджана. Он утверждал следующее:

«Ни о каком референдуме не может идти речи, потому что данный шаг приведет к потере Карабаха... В Конституции отмечено, что Азербайджан - унитарное государство, а изменение основного закона возможно лишь путем проведения референдума в стране. Мирные переговоры – это обман азербайджанской общественности, а статус Нагорного Карабаха может быть только один - неотъемлемая часть Азербайджана».<sup>1</sup> Соответственно, снова складывается патовая ситуация.

Какие на наш взгляд возможны первоначальные шаги по решению конфликта? Первое – отвод на безопасное расстояние снайперов и крупнокалиберное оружие (пулеметы, минометы и т.д.). Второе – отказ от диверсий. Третье – демилитаризация региона, т.е. не продажа наступательного вооружения конфликтующим сторонам. Только после выполнения этих пунктов можно говорить о начале мирного решения карабахского конфликта.

Какие есть перспективы возобновления войны?

После потери НКР и прилегающих территорий Азербайджан начал лихорадочно вооружаться. За счет продаж углеводородного сырья Азербайджан в основном покупал вооружение у Турции, Израиля, России, Украины и Беларуси. Последним крупным приобретением Азербайджана у Беларуси стали РСЗО В-200 «Полонез», дальность стрельбы которой от 50-200 км. Естественно, апрельская авантюра 2016 года показала, что Азербайджан не намерен мирным путем решать карабахскую проблему и всячески будет стремиться к военным провокациям. Азербайджанская Республика надеется мелкими краткосрочными конфликтами на границе с Республикой Арцах вернуть для начала контролируемые армией обороны НКР районы. Это позволит еще больше усилить влияние правящего режима в стране и повысить репутацию страны. Наша задача заключается в том, чтобы всеми доступными средствами не допустить крупномасштабных боевых действий и превентивными ударами «остудить пыл противника». Рассмотрим возможности армянской стороны к уничтожению жизненно важных объектов на территории Азербайджана. Во-первых, близость к границам позволяет уничтожить стратегические объекты из реактивных систем залпового огня, например «Смерч». Во-вторых, в расположении у Республики Армения имеются оперативно-тактический ракетный комплекс 9К720 «Искандер». С вероятностью можно утверждать, что при широкомасштабных боевых действиях и угрозе национальной безопасности НКР и Армении данные ракеты будут использованы. Ракеты практически недосыгаемы для систем ПРО и ПВО противника, а дальность составляет от 300 до 500 км. Уничтожение стратегических объектов парализует продвижение армии противника вперед. На данный момент, учитывая перемещение войск и на Нахиджеванском направлении на более близкие к армянским позициям позиции можно утверждать, что Азербайджан готовится к эскалации.

---

<sup>1</sup> *Представители гражданского общества Армении и Азербайджана обсудили в столице Грузии пути мирного урегулирования нагорно-карабахского конфликта.* URL: <https://sputnik-georgia.ru/politics/20171031/237990773/Nagorno-karabakhskij-konflikt-v-Tbilisi-obsudili-puti-ego-reshenija.html>

Притом, если удары будут нанесены с территории Нахиджевана по Армении, то это означает война с Арменией, которая является членом ОДКБ. В данном случае ОДКБ не удастся отмолчаться и государства-члены ОДКБ вынуждены будут отреагировать на азербайджанскую агрессию. Естественно, Армения нанесет ответный удар по Нахиджевану, что означает, что Турция, может открыто вступить в войну с Арменией, на границе которой стоят российские пограничники. Да и Иран не останется в стороне учитывая, что война будет проходить в непосредственной близости от его границ. Т.е. локальная арцахо-азербайджанская война может перерасти в региональную войну. В этом случае двум армянским государствам необходимо кроме уничтожения стратегических объектов и живой силы противника продвинуться вперед по всей линии фронта вплоть до отрезка компактного проживания лезгин и отрезать Азербайджан от границы с Грузией. При таком стечении обстоятельств Арцах будет контролировать все трубы по доставке углеводородного сырья из Азербайджана, а также транспортировку грузов как по направлению Север-Юг (Азербайджан-Иран), так и по направлению Восток-Запад (Азербайджан-Европа).

На сегодняшний день можно утверждать, что ни Арцах, ни Армения, ни Азербайджан не согласны с выдвигаемыми условиями друг другу. Однако, карабахский конфликт должен решаться в Степанакерте и в Баку, а не в других центрах. Игнорируя усилия Минской группы ОБСЕ со стороны Азербайджана можно констатировать, что на сегодняшний день переговорный процесс зашел в тупик. Максималистская позиция Баку и нежелание вести переговоры по статусу НКР, которая является основной проблемой и целью урегулирования, создает предпосылки для возобновления военных действий и дестабилизации всего региона.

### **Сергей Вардазарян** **ОСОБЕННОСТИ И ПЕРСПЕКТИВЫ УРЕГУЛИРОВАНИЯ** **КАРАБАХСКОГО КОНФЛИКТА**

**Ключевые слова:** *Республика Арцах, Республика Армения, Азербайджанская республика, обеспечение безопасности, потенциальная война, разрешение конфликта*

Нагорно-карабахский конфликт является одной из неразрешенных проблем периода после распада СССР. В статье рассматривается природа конфликта, дается классификация понятий «карабахская проблема» и «карабахский конфликт», приводятся исторические этапы карабахского конфликта. В статье также подробно рассматриваются «Мадридские принципы» и риски, таящиеся в данных пунктах как для армяно-арцахской, так и для азербайджанской сторон. Моделируются ситуации превентивных ударов, крупномасштабных боевых действий и анализируется ситуация при таком стечении обстоятельств.

### **Սերգեյ Վարդազարյան** **ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱՎԱՍՏԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ** **ԱՌԱՆՁՆԱԳՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր՝** *Արցախի Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, անվտանգություն, հնարավոր պատերազմ, հակամարտությունների լուծում*

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո անլուծելի խնդիրներից մեկն է: Հողվածում անդրադարձել են հակամարտության ակունքները, «ղարաբաղյան խնդիրն» և «ղարաբաղյան հակամարտություն» հասկացությունների դասակարգումը, դասակարգվում են ղարաբաղյան հակամարտության պատմական փուլերը: Բացի այդ, հողվածում ներկայացվում է «մադրիդյան սկզբունքները» և այդ կետերում թաքցված ռիսկերը ինչպես հայ-արցախյան, այնպես էլ ադրբեջանական կողմերի համար: Վերլուծվում է նաև կանխարգելիչ գործողությունները լայնամասշտաբ և կետային ռազմական պատերազմական իրավիճակներում:

**Sergey Vardazaryan**

## **PECULIARITIES AND PROSPECTS OF THE KARABAKH CONFLICT ARRANGEMENT**

**Key words:** *Republic of Artsakh, Republic of Armenia, Azerbaijan Republic, security, potential war, solution of the conflict*

Nagorno-Karabakh conflict is one of the intractable problems after the Soviet Union collapse. The given article considers the nature of the conflict, classification of concepts "the Karabakh problem," and "the Karabakh conflict", describes the historical stages of the Nagorno-Karabakh conflict. The article also examines in detail the "Madrid principles" and the risks hidden in its paragraphs both for Armenia-Karabakh and Azerbaijan sides. The cases of preventive strikes, large-scale hostilities are modeled and the situation under such circumstances is analyzed.

## ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԵՐԱՇԵԻՔ

### ԱՆԺԵԼԱ ՄԱՅՅԱԿԱՆՅԱԼ

Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականությունն ազգային անվտանգության ապահովմանը, պատերազմների և զինված բախումների կանխմանը, ռազմավարական կայունության ապահովմանն ուղղված երկրի ընդհանուր քաղաքական և արտաքին գործունեության անհրաժեշտ տարրն է: Հայաստանն իր ռազմական քաղաքականության մեջ պետականության ամրապնդումը դիտարկում է, որպես ժողովրդավարական, իրավական պետության կառուցման, սոցիալ տնտեսական բարեփոխումների իրականացման, միջազգային հարաբերություններում իրավահավասար գործունեության, փոխադարձ համագործակցության և բարիդրացիական սկզբունքների հաստատման, միջազգային անվտանգության ընդհանուր և համապարփակ համակարգի հետևողական կազմակերպման անհրաժեշտ նախադրյալ<sup>1</sup>:

Պաշտոնական Երևանն իր ռազմական քաղաքականությունը կառուցում է գործընկերության հիմքի վրա՝ արդյունավետ հարաբերություններ զարգացնելով տարածաշրջանում գործող շահագրգիռ բոլոր ուժերի հետ: Այն ուղղված է տարածաշրջանում հավասարակշռության պահպանմանը: Ահաբեկչության դեմ պայքարում, զանգվածային ոչնչացման զենքի տարածման խնդիրներում միջազգային հանրության համախմբումը և միջազգային կայունության արդի մարտահրավերների շուրջ մեծ տեղությունների միջև ծավալված երկխոսության դրական ընթացքը ներկայումս նպաստում են Հայաստանի ռազմական քաղաքականությունում փոխլրացման սկզբունքի իրականացմանը<sup>2</sup>:

Ռազմական քաղաքականության և ռազմական անվտանգության ապահովման համակարգում կարևոր դեր է հատկացվում դիվանագիտությանը, որի առաջնահերթ խնդիրն է ստեղծել արտաքին բարենպաստ պայմաններ՝ նվազագույն ուժերով երկրի պետականության ամրապնդման համար՝ ունենալով հնարավորինս շատ դաշնակիցներ և քիչ հավանական հակառակորդներ: Հնարավոր ռազմական սպառնալիքները կանխելու գործում կարևոր նշանակություն է ստանում երկրորդ և բազմակողմ դաշնակցային փոխգործակցությունը: Ուստի Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարևոր խնդիրներից մեկը՝ երկրի շահերից բխող ռազմական անվտանգությունը, ինչպես նաև միջազգային կայունությունն ապահովող տարածաշրջանային ուժերի հաշվեկշռի ձևավորմանը նպաստելն է: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից իրականացվող միջազգային ռազմական քաղաքականությունը նպատակաուղղված է երկրի պաշտպանական կարողությունների զարգացմանը, միջազգային ռազմաքաղաքական դիրքերի ամրապնդմանը և զինված ուժերի միջազգային ինտեգրմանը, ինչպես նաև ձեռքբերված դաշնակցային հարաբերությունների ներկա մակարդակի պահպանմանն ու դինամիկ զարգացմանը:

Ներկայումս Հարավկովկասյան պետությունները որդեգրել են միանգամայն տարբեր ռազմական քաղաքականություններ և հարում են տարբեր ռազմական կառույցների, ինչը պայմանավորված է տարածաշրջանում գերտերությունների

1 Զ.Զոթանյան, «Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները» ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ Երևան 2010 էջ 503

2 ՀՀ Նախագահի հրամանագիրը ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007 www.artis.am

վարած քաղաքականությամբ: Տարածաշրջանային մակարդակում, իր արտաքին ռազմական քաղաքականությունն իրականացնելիս պաշտոնական Երևանը ձգտում է զարգացնել ռազմական հարաբերություններն իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի Հանրապետության հետ: Հայաստանի ռազմական քաղաքականության համար, առաջնային է կանխել Ադրբեջանի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգությանը և սահմաններին սպառնացող ցանկացած ագրեսիա: Հայաստանի արտաքին ռազմական քաղաքականության համար Թուրքիա-Ադրբեջան ռազմավարական դաշինքը շարունակում է մնալ որպես մեծագույն սպառնալիք<sup>1</sup>:

Հայաստանի Հանրապետությունն իր ռազմական քաղաքականությունը կառուցում է հիմնվելով «և՛»-«և՛»-ի սկզբունքի վրա, բացառելով «կա՛մ»-«կա՛մ»-ի կիրառումը, եթե դա չի սպառնում ազգային շահերին: Անդամակցելով ՅԱՊԿ-ին, մինևույն ժամանակ ակտիվ գործընկերային հարաբերություններ է զարգացնում ՆԱՏՕ-ի հետ, ինչպես նաև ներգրավված է եվրոպական անվտանգային գործընթացներում<sup>2</sup>: Հայաստանն ակտիվ և կառուցողական ռազմական հարաբերություններ է զարգացնում ԱՄՆ-ի և Ռուսաստանի Դաշնության հետ: Ներկա պայմաններում բարդացել է Հայաստանի համար հավասարակշռված արտաքին ռազմական քաղաքականություն վարելը՝ ուժային այս երկու կենտրոնների միջև: Հայաստանի որդեգրած արտաքին ռազմական քաղաքականությունն այդ մարտահրավերն օգտագործում է ուժային այդ երկու կենտրոնների կողմից՝ Հայաստանի նշանակության բարձրացման, և նրանց օգնությամբ Հայաստանի անվտանգության շահերն առաջ մղելու բարենպաստ հնարավորության օգտագործման հարցերում:

Գտնվելով մի տարածաշրջանում, որտեղ բախվում են գերտերությունների շահերը սեփական երկրի անվտանգության ապահովումը Հայաստանի համար ավելի քան կենսական կարևորություն ունի: Այդ նպատակով անհրաժեշտություն առաջացավ ստեղծել այնպիսի ռազմաքաղաքական փաստաթղթեր, որոնք կկարգավորեին Հայաստանի ռազմական քաղաքականությունը<sup>3</sup>: Հայաստանի ազգային անվտանգության համակարգի կառուցմանը, պաշտպանական ռազմավարության զարգացումը որակապես նոր մակարդակ տեղափոխվեց Հայաստանի Հանրապետության Նախագահի՝ 2007թ փետրվարի 7-ի հրամանագրով հաստատված ազգային անվտանգության ռազմավարությամբ: Այն հնարավորություն տվեց առավել հստակ, կանոնակարգված ու ճշգրիտ կերպով իմաստավորելու սեփական և միջազգային անվտանգության խնդիրները և ուրվագծելու Հայաստանի կայուն և անվտանգ զարգացման ուղիներ: Այդ փաստաթուղթը նաև ռազմական հիմքեր ստեղծեց ռազմական դոկտրինի մշակման համար<sup>4</sup>:

Պետականության ամրապնդումը, որպես ռազմական քաղաքականության գերնպատակ կախորոշում է վերջինիս նպատակները և դրանց հասնելու միջոցները<sup>5</sup>:

<sup>1</sup> Լ.Էվոյան «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը.թուրք-ադրբեջանական Երկկողմ հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբ» 19.05.2013 [www.akunq.net/am/?p=31181](http://www.akunq.net/am/?p=31181)

<sup>2</sup> Ա.Չաբարյան «ՀՀ արտաքին քաղաքականության ձեռքբերումներն ու մարտահրավերները» Հայկական բանակի ՀՀ ՊՆ ԱՌՀԻ ռազմագիտական հանդես 3 (89), Երևան 2016 էջ 34

<sup>3</sup> Ա. Մնացականյան «ՀՀ ռազմական քաղաքականության հենքային փաստաթղթերի համեմատական վերլուծությունը» Արդարադատություն N 32, Երևան, մարտ 2016 էջ 56

<sup>4</sup> Հ.Ջոթանջյան /Բացման խոսք/ՀՀ Դրաստամատ Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ «Ռազմավարական Անվտանգային հետազոտություններ» Հատոր 1 Երևան 2014 էջ 409

<sup>5</sup> Ա.Մնացականյան «ՀՀ ռազմական քաղաքականության որոշ հիմնահարցերի համառոտ վերլուծություն» ԿԱՃԱՌ, Երևան 2016 էջ 91

Պաշտոնական Երևանը իր ռազմական քաղաքականության իրականացնելիս առաջնորդվում է հետևյալ նպատակներով՝

- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ռազմական անվտանգության սպառնալիքների կանխարգելում և չեզոքացում,
- ճգնաժամերի հաղթահարումը, բնական և տեխնաժին աղետների հետևանքների վերացումը,
- պայթարը միջազգային ահաբեկչության, զանգվածային ոչնչացման զենքի ու դրա բաղադրամասերի, թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի անօրինական շրջանառության և Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնացող այլ հանցագործությունների դեմ,
- Հայաստանի Հանրապետության ռազմական կարողությունների շարունակական և համակողմանի ամրապնդումն ու զարգացումը,
- բազմակողմ և երկկողմ հավասարակշռված ռազմական համագործակցության զարգացումը,
- տեղեկատվական անվտանգության ապահովման արդիական համակարգերի մշակումն ու ներդրումը:

Այդ նպատակներին հասնելու համար ռազմական քաղաքականության ինդիքներն են՝ հուսալի պաշտպանական կարողության ապահովումը, վերակառուցումը, արդիականացումը և ռազմական ներգրավումը<sup>1</sup>:

Արցախյան հակամարտության դերը ՀՀ ազգային անվտանգության համակարգում հստակորեն սահմանված է Հայաստանի Հանրապետության արտաքին ռազմական քաղաքականությունը կարգավորող երկու հիմնարար փաստաթղթերում՝ Ազգային անվտանգության ռազմավարությունում և ռազմական դոկտրինում: ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանում է՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության առաջնային ինդիքն է Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը<sup>2</sup>»: Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն աջակցելու առաքելությունը կողմերի համաձայնությամբ վստահվել է ԵԱՀԿ Մինսկի խմբին՝ Ռուսաստանի, ԱՄՆ և Ֆրանսիայի համանախագահությամբ: Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ինդրի կարգավորման շուրջ ծավալվող քննարկումների մասնակիցների փորձագիտական բարձր մակարդակը: Հայաստանի Հանրապետությունը նպատակահարմար չի համարում ինդրի կարգավորման վերաբերյալ այլ կառույցների կողմից հայտարարությունների քննարկումն ու ընդունումը, ինչպես նաև միջազգային տարբեր կազմակերպությունների ներգրավումը կարգավորման գործընթացներին: Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հակամարտության կարգավորմանը միայն խաղաղ և փոխզիջումային ճանապարհով: Արցախի Հանրապետության հռչակման իրավական հիմքերն անխոցելի են: Մշտապես ելնելով այն սկզբունքից, որ ցանկացած վերջնական համաձայնություն կամ վերջնական փաստաթուղթ պետք է ստանա նաև արցախյան կողմի հավանությունը, Հայաստանն ընդունելի է համարում կարգավորման միայն այն տարբերակները, որոնք ուղղված կլինեն Արցախի Հանրապետության փաստացի գոյության անշրջելի իրողությունն ամրագրելուն: Արցախը պետք է աշխարհագրական կապ ունենա Հայաստանի հետ: Անվտանգությունը պետք է

1 Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանգիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը» հաստատելու մասին ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007

2 ՀՀ նախագահի հրամանագիրը «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» ՀՀ ՊՆ 2007.02.15/1107.02.2007 [www.arlis.am](http://www.arlis.am)



երաշխավորված լինի: Հայաստանի Հանրապետության դեմ ուղղված անմիջական ռազմական սպառնալիք է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի նկատմամբ Ադրբեջանի վարած ռազմատենչ քաղաքականությունը, այն է՝ այդ հիմնախնդիրը լուծելի Հայաստանի նկատմամբ ռազմական գերազանցության հասնելու միջոցով: Ուստի, Հայաստանի ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերից պահանջում է մշտական բարձր մարտական պատրաստականություն: Այս գործում Հայաստանի զինված ուժերի գլխավոր խնդիրն է Հայաստանի Հանրապետության սահմանների անձեռնմխելիության, ինչպես նաև Հայաստանի և Արցախի Հանրապետության բնակչության ֆիզիկական անվտանգության ապահովումը:

Ռազմական դրկտրինում նշվում է՝ «Հայաստանի Հանրապետությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի անվտանգության և նրա ընտրած զարգացման ուղու երաշխավորն ու աջակիցն է: Դա բխում է՝

- ցեղասպանություն վերապրած հայ ժողովրդի՝ ժամանակակից Ադրբեջանի տարածքում (1980-90թթ. Սումգայիթում, Բաքվում և այլ վայրերում) ազգային գտումների նոր դրսևորումների ենթարկվելու իրողությունից,
- 1988-94 թթ. Արցախի ժողովրդի՝ օրինական և խաղաղ ճանապարհով ինքնորոշվելու ձգտմանը ռազմական ուժ հակադրելու և նրան պարտադրված պատերազմի մեջ ներքաշելու Ադրբեջանի Հանրապետության քաղաքականությունից,
- Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեջանի Հանրապետության ձգտումներով պայմանավորված՝ մշտապես ֆիզիկական բնաջնջման վտանգի ենթակա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնակչության անվտանգության ապահովման անհրաժեշտությունից,
- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության, ինչպես նաև նրանց բնակչության պատմատարածքային, հոգևոր-կրոնական, էթնիկ-մշակութային նույնությունից,
- Արցախի ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում ինքնորոշվելու փաստի քաղաքական-իրավական անխոցելի հիմքերից,
- Արցախի Հանրապետության՝ որպես ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետության կայացման անշոջելի իրողությունից,
- Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության անվտանգության ապահովման խնդիրների փոխկապակցվածությամբ ու ընդհանրական ընկալումից՝»:

<sup>1</sup>ՀՀ նախագահի հրամանգիրը «Հայաստանի Հանրապետության ռազմական դրկտրինը» հաստատելու մասին ՀՀ ՊՏ 2008/1, 25.12.2007 [www.arlis.am](http://www.arlis.am)

**Անժելա Մնացականյան**  
**ՀՀ ՈԱԶՄԱԿԱՆ ԲԱՐԱԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ**  
**ԱՄՐԱՊԵՆՄԱՆ ԵՐԱՇԽԻՔ**

**Բանալի բառեր՝** *անվտանգության համակարգ, պաշտպանական բարեփոխումներ, անվտանգություն, ռազմական քաղաքականություն, միջազգային պայմանագիր, համագործակցություն*

Հայաստանի Հանրապետության անվտանգությունը և գոյությունը կախված է ճիշտ մշակված և գործող ռազմական քաղաքականությունից: Ուստի անհրաժեշտ է ռազմական քաղաքականությունը, այն դիտարկելով գիտության տեսակետից ավելի ընդարձակ ուսումնասիրման և ուսումնական հաստատություններում դասավանդման համար, և՛ որպես քաղաքականություն՝ ազգային անվտանգության ապահովման անհրաժեշտ տարր, որի մշակման համար պետք է տրամադրել ավելի լուրջ միջոցներ: Պետականության ամրապնդման համատեքստում ռազմական քաղաքականության նպատակներն են՝ պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, քաղաքական համակարգի լիարժեք կայացումը, կայունության ապահովումը, ժողովրդավարական արժեքների և մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, քաղաքացիական հասարակության զարգացումը:

**Anzhela Mnatsakanyan**  
**MILITARY POLICY OF THE REPUBLIC OF ARMENIA AS GUARANTEE OF**  
**STRENGTHENING STATE**

**Key words:** *Security system, defense reforms, security, military policy, international treaty, cooperation*

The security and existence of the Republic of Armenia depends on the correct and functioning military policy. Military policy should be viewed in terms of science and as a necessary element of ensuring national security. In the context of strengthening the statehood, the aims of military civilization are: increasing the efficiency of public administration, the full development of the political system, ensuring stability, protection of democratic values and human and civil rights and freedoms, civil society development.

**Анжела Мнацакян**  
**ВОЕННАЯ ПОЛИТИКА РЕСПУБЛИКИ АРМЕНИИ КАК ГАРАНТИЯ**  
**УКРЕПЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННОСТИ**

**Ключевые слова:** *структура обороны, реформы в сфере обороны, военная политика, международные договоры и сотрудничество*

Безопасность и существование Республики Армения зависят от правильной и эффективной военной политики. Поэтому военную политику следует рассматривать как науку с точки зрения обширных исследований и преподавания в учебных заведениях и как необходимый элемент обеспечения национальной безопасности, требующий разработки более серьезных мер. В контексте укрепления государственности целями военной цивилизации являются: повышение эффективности государственного управления, полное развитие политической системы, обеспечение стабильности, защита демократических ценностей, прав и свобод человека и гражданина, развитие гражданского общества.

## ԿԱՌԱՎԱՐՈՂ ԸՆԾՐԱՆՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԵԹԱՑՈՒՄ

### ԼԻԼԻԹ ՉԻՉՈՅԱՆ

Ժողովրդավարական անցումից համախմբում գործընթացում գտնվող հասարակությունները առկա մարտահրավերներին պատասխանելու համար պետք է ձևավորեն Նոր որակի ընտրանի: Այն պատասխանատու է անցումից համախմբում գործընթացում ժողովրդավարության որակի բարձրացման քաղաքականություն իրականացնելու համար: Այդ համատեքստում երիտասարդության քաղաքական սոցիալականացման հիմնխնդիրը ՀՀ-ում արդիական է, քանի որ հնարավորություն է տալիս դաստիարակելու քաղաքականապես կրթված և պետականամետ մտածողությամբ երիտասարդություն: Անհրաժեշտ է զուգամիտել ազատական և ազգային արժեքները, որն էլ հնարավորություն կտա բարձրացնելու պետական կառավարման արդյունավետությունը:

Քաղաքական սոցիալականացման գործընթացը մեկնաբանվում է տարբեր կերպ: Այդ մեկնաբանությունները համախմբելով՝ կարելի է եզրակացնել, որ քաղաքական սոցիալականացումը մարդկանց կողմից քաղաքական մշակույթի Նորմերի և ավանդույթների յուրացումն է, մարդկանց ներգրավվածությունը քաղաքական գործընթացներում<sup>1</sup>:

Քաղաքական սոցիալականացման գործընթացում ապահովվում է քաղաքական արժեքների շարունակականությունը, ինչն էլ անհրաժեշտ է, որպեսզի անհատը դառնա քաղաքացի: Այս համատեքստում կարևոր է քաղաքական մշակույթի արժեքաբանության պահպանումը և փոխանցումը սերունդներին: Եթե չի կտրվում կապը անցյալի հետ, ապա հասարակությունը գործում է որպես մեկ ամբողջություն: Միայն այս դեպքում է ապահովվում հասարակության, քաղաքական համակարգի, քաղաքացիական հասարակության բնականոն արդիականացումը:

Քաղաքական սոցիալականացման գործընթացում կարևոր են անհատի քաղաքական հայացքների և քաղաքական վարքագծի վրա ազդող իրադարձությունները, ինստիտուտներն ու գործակալները: Դրանք հիմնականում բաժանվում են երկու խմբի՝ քաղաքական (քաղաքական ինստիտուտներ, քաղաքական իրադարձություններ, քաղաքական կազմակերպություններ և այլն) և ոչ քաղաքական (ընտանիք, դպրոց, աշխատանք, եկեղեցի, մշակույթ և այլն): Ըստ Ֆ. Վոսբյորնի՝ քաղաքական սոցիալականացման այս երկու մոդելները պետք է դիտարկել որպես միմյանց փոխլրացող<sup>2</sup>: Այս համատեքստում Ֆ. Վոսբյորնն առաջարկում է քաղաքական սոցիալականացման ինտերակտիվ մոդելը, որտեղ անհատի կյանքի փուլերը (մանկություն, պատանեկություն, հասուն տարիք) և սոցիալականացման գործակալները (ընտանիք, դպրոց, աշխատանք, եկեղեցի, մշակույթ, ՉԼՍ և այլն) փոխլրացում են միմյանց և փոխգործակցում միմյանց հետ:

Ամերիկացի հետազոտող Վ.Սապիրոն քաղաքական սոցիալականացման գործընթացում կարևորում և առանձնացնում է հասարակության մեջ քաղաքական կողմնորոշումների և հմտությունների ձևավորման հիմնախնդիրը<sup>3</sup>:

Ըստ արևմտյան հետազոտող Մ.Հուզի՝ քաղաքական սոցիալականացման արդյունավետությունը պայմանավորված է սերնդափոխության գործընթացով:

<sup>1</sup> Щеглов, И.А. Проблемы отечественных разработок политической социализации /И.А. Щеглов //Социально-гуманитарные знания. -2011. -№ 1.с. 85-93

<sup>2</sup> Washburn Ph. A life Course Model of Political Socialization. Politics and Individual. 1994, Vol. 4, M 2 p. 1-26

<sup>3</sup> Sapiro V. Not Your Parents Political Socialization: Introduction for a New Generation. Annual Review of Political Science, vol. 7, 2004, p. 5

Վերջինս այս գործընթացում կարևորում է երիտասարդների դերը՝ որպես քաղաքական դիրքորոշումների և վարքագծի նորմերը կրողների և հիմնական դերակատարի: Մ. Յուզի համոզմամբ՝ սերնդափոխությունը սոցիալ-քաղաքական փոփոխությունների հիմնաքարն է, որը պետք է հաշվի առնի քաղաքական ինստիտուտների դիրքորոշումները: Եթե ժողովրդավարության պայմաններում հասարակության համար որևէ սպառնալիք է ստեղծում, ապա երիտասարդներն առաջիններից են, որ նկատում են այդ վտանգը<sup>1</sup>:

Երիտասարդների քաղաքական սոցիալականացումը կարող է ընթանալ երկու ճանապարհով՝ քաղաքական գործունեության և քաղաքացիական մասնակցության: Քաղաքական գործունեությունը ենթադրում է մասնակցություն քաղաքական ինստիտուտների գործունեությանը, ինչպես օրինակ՝ քվեարկություն, թեկնածության առաջադրում, ընտրարշավ, հանրահավաք, անդամակցություն կուսակցությանը, քաղաքական բանավեճեր և այլն: Երիտասարդի՝ որպես քաղաքացի-սուբյեկտի քաղաքական գործունեությունը կապված է պարտավորությունների կատարման, որոշակի նորմերի պահպանման, իրավունքների իրագործման ձևական պարտականությունների հետ: Այն ենթադրում է նաև քաղաքական փոխադարձ հանդուրժողականություն: Քաղաքական սոցիալականացման այս ձևը ենթադրում է սահմանափակ քաղաքական մասնակցություն՝ հիմնված միայն սահմանված համապատասխան չափորոշիչների վրա, որոնք համահունչ են գործող քաղաքական կարգին<sup>2</sup>:

Քաղաքական սոցիալականացման գործում, որպես քաղաքացիական գիտակցության ձևավորման աղբյուր, մեծ է սոցիալականացման գործակալների դերը, որոնք ժամանակի ընթացքում փոփոխվում և զինվում են նոր՝ առավել արդյունավետ միջոցներով: Քաղաքական սոցիալականացման գործակալությունների թիվն արագ աճում է, հատկապես համացանցի օգնությամբ, սակայն երիտասարդների քաղաքական սոցիալականացման կարևորագույն դերակատարը և հիմնական պատասխանատուն կառավարող ընտրանին է:

Արդի կերպափոխումների պայմաններում կարևոր է կառավարող ընտրանու աջակցությունը երիտասարդներին՝ կրթության, դաստիարակության և զարգացման ապահովման գործում, հատկապես նրանց սոցիալական կայացման փուլում, հասարակական-մասնագիտական գործունեության, հասարակական, քաղաքացիական նախաձեռնությունների, իրենց իրավունքներն ու պարտականությունները իրականացնելու գործընթացներում ներգրավվելու ընթացքում: Երիտասարդության ու պետության միջև հարաբերությունները առավելագույնս կարգավորելու նպատակով, որպես պետության ներքին քաղաքականության բաղադրիչ, կառավարող ընտրանու կողմից մշակվում և իրականացվում է երիտասարդական պետական քաղաքականություն:

Հասարակության և քաղաքական համակարգի արդիականացման ներկա գործընթացներում տեղի ունեցող սոցիալ- տնտեսական, քաղաքական կերպափոխումները նոր մարտահրավերների առջև են կանգնեցնում երիտասարդությանը, որոնց հավասարաբեռն պատասխան կարող է տալ միայն իր երկրի ապագայով մտահոգված, կրթված, մրցունակ, ֆիզիկապես և հոգեպես առողջ և սոցիալ-քաղաքականապես պատասխանատու երիտասարդությունը: Կառավարող ընտրանու կարևորագույն խնդիրն է երիտասարդական պետական

<sup>1</sup>Hooghe M. Political Socialization and the Future of Politics. Acta Politica, Leuven, 2004, p. 331-334

<sup>2</sup>Owen D. Political Socialization in the Twenty-first Century. Paper presented for presentation at “The Future of Civic Education in the 21st Century” conference cosponsored by the Center for Civic Education and the Bundeszentrale für politische Bildung, James Madison’s Montpelier, September 21-26, 2008, Dalton, Russell J. The Good Citizen. How a Younger Generation Is Reshaping American Politics, CQ Press, Washington D.C., 2008

քաղաքականությունը համապատասխանեցնել ժամանակի պահանջներին՝ նկատի ունենալով, որ երիտասարդությունը հզոր պետության կայացման գլխավոր շարժիչ ուժն է:

Կառավարող ընտրանին երիտասարդական պետական քաղաքականության միջոցով ապահովում է երիտասարդների քաղաքական սոցիալականացումը՝ առաջնորդվելով հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին երիտասարդների մասնակցությունը խթանելու սկզբունքներով<sup>1</sup>:

Երիտասարդության քաղաքական սոցիալականացման կարևորագույն բաղադրիչը քաղաքացիական մասնակցությունն է: Քաղաքացիների մասնակցության մակարդակը չափվում է տարբեր կառույցներում նրանց ներգրավվածության ու մասնակցության չափով:

2016 թվականին «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացված հետազոտության արդյունքների համաձայն՝ 33-ում հարցմանը մասնակցած երիտասարդների 77,1%-ը հետաքրքրված է Հայաստանում տեղի ունեցող քաղաքական իրադարձություններով, սակայն նրանց զգալի մասը (26,4%) չի պատրաստվում մասնակցել ընտրություններին: Բավական ցածր է երիտասարդների մասնակցությունը ընտրովի քաղաքական մարմինների կողմից քաղաքականության մշակման գործընթացներում, իսկ 51,7%-ն ընդհանրապես չի վստահում իշխող քաղաքական ուժերին<sup>2</sup>: Քաղաքացիական ծառայության համակարգում ընդգրկված երիտասարդների թիվը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է՝ կրտսեր պաշտոններ՝ 354 երիտասարդ, առաջատար պաշտոններ՝ 331, գլխավոր պաշտոններ՝ 183, բարձրագույն պաշտոններ՝ 23:

Այս համատեքստում քաղաքական սոցիալականացման գործընթացում երիտասարդության քաղաքական մասնակցության մակարդը խիստ մտահոգիչ է: Կերպավորվող հասարակություններում հատկապես խնդրահարույց է երիտասարդների վստահությունը իշխանության հանդեպ:

Հետաքրքրական է մեկ այլ հետազոտություն ևս, որը կատարվել է 2012 թ. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակի հետ համատեղ: Այս հետազոտությունը բացահայտում է Հայաստանի երիտասարդների ձգտումներն ու ակնկալիքները: Մասնավորապես, պետության հետ ինքնանույնականացման առումով որոշակի տվյալներ են ստացվել նաև քանակական հետազոտության շրջանակում: Գնահատվել են երիտասարդների՝ ՀՀ քաղաքացի և հայ լինելու վերաբերյալ դիրքորոշումները: Ըստ հետազոտության՝ ՀՀ երիտասարդները մեծ մասամբ հպարտության զգացում ունեն հայ և ՀՀ քաղաքացի լինելու համար<sup>4</sup> (Աղյուսակ 1):

<sup>1</sup> ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգ, ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 25-ի N 54 արձանագրային որոշում, <http://www.msy.am/files/post/1426864819-hayecakarg.pdf>

<sup>2</sup> Անկախության սերունդ, հետազոտություն երիտասարդության շրջանում, «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ, Երևան, 2016թ., էջ 52-55

<sup>3</sup> <http://www.csc.am/documents/statistics/11.pdf>

<sup>4</sup> Ղազարյան Դ., Հայաստանի երիտասարդների ձգտումները և ակնկալիքները: Չեկույց / Դ. Ղազարյան, Եր.: ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն, ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի Հայաստանի գրասենյակ, 2012, էջ 84-90

**Աղյուսակ 1. ՀՀ քաղաքացի և հայ լինելու վերաբերյալ դիրքորոշումները**

	«Ես հպարտ եմ իմ ազգությամբ»	«Ես հպարտ եմ, որ ՀՀ քաղաքացի եմ»
Քոլոր հարցվածների միջին գնահատականը, որից՝	3,76	3,62
Արական	3,77	3,63
Իգական	3,76	3,62
-----		
16-18	3,77	3,64
19-23	3,73	3,62
24-30	3,78	3,63
-----		
Երևան	3,67	3,57
Մարզային քաղաք	3,75	3,59
Գյուղ	3,84	3,70

Ինչպես երևում է աղյուսակում ներկայացված գնահատականներից, երիտասարդներն առավել հպարտ են իրենց ազգային պատկանելիությամբ (3,76), քան քաղաքացիությամբ (3,62), թեև նշված 2 գնահատականներն էլ բավականին բարձր են:

Ամփոփելով փաստելք, որ երիտասարդների քաղաքական ընկալումները մեծապես պայմանավորում են ամբողջ հասարակության համախմբման գործընթացի արդյունավետությունը: Արդիականացման գործընթացը կախված է երիտասարդների քաղաքական սոցիալականացման գործընթացի բնույթից, քանի որ այսօրվա երիտասարդները վաղվա կառավարող ընտրանու մաս են կազմելու և մասնակցելու են քաղաքական որոշումների ընդունմանն ու իրականացման գործընթացներին: Այս ամենը կանխորոշում է երկրի կերպափոխման վեկտորի ուղղությունը, իսկ կառավարող ընտրանին պատասխանատու է երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործընթացի բնականոնությունն ապահովելու համար:

**Լիլիթ Զիչոյան**  
**ԿԱՌԱՎԱՐՈՂ ԸՆՏՐԱՆՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ**  
**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**Բանալի բառեր՝** ընտրանի, քաղաքական սոցիալականացում, երիտասարդություն, քաղաքական մասնակցություն

Քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրները սերտ առնչություններ ունեն նոր ընտրանիների ձևավորման, զարգացման և պատասխանատվության ընդարձակման հետ: Քաղաքական ժամանակի փոփոխությունը ենթադրում է նոր սերնդի ընտրանիներ, որոնք իրենց գործունեությամբ հակված են համադրելու խմբային, անհատական, հանրային, ազգային շահերը՝ նոր որակի բարձրացնելով պետության իմիջը: Հոդվածում ներկայացված է երիտասարդության քաղաքական սոցիալականացումը, ինչը նպաստում է նոր սերնդի ընտրանու հավաքագրման ժամանակ կառավարող ընտրանու պատասխանատվության բարձրացմանը:

**Lilit Chichoyan**

**THE RESPONSIBILITY OF RULING ELITE IN THE PROCESS OF YOUTH  
POLITICAL SOCIALIZATION**

**Key words:** *elites, political socialization, youth, political participation, responsibility*

The problems of political socialization are closely connected with the formation and development of new elites and extension of their responsibility. Transformation of political time raise the necessity of development of a new generation elites, who harmonize group, individual, public, national interests for raising the quality of the state image.

In this regard this article researches the issues of political socialization of youth. The article leads to the development of a new generation elites.

**Лилит Чичоян**

**ОТВЕТСТВЕННОСТЬ ПРАВЯЩЕЙ ЭЛИТЫ В ПРОЦЕССЕ  
ПОЛИТИЧЕСКОЙ СОЦИАЛИЗАЦИИ МОЛОДЕЖИ**

**Ключевые слова:** *элиты, политическая социализация, молодежь, политическое участие, ответственность*

Проблемы политической социализации тесно связаны с формированием нового поколения элит и расширением их ответственности. Изменения политического времени выдвигают необходимость развития элит нового поколения, которые гармонизируют групповые, индивидуальные, общественные, национальные интересы для повышения имиджа государства.

В этой связи в статье обосновывается необходимость политической социализации молодежи как фактора формирования нового поколения полиархической элиты.

## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

### ՄԱՆԵ ԱԹԻԿՅԱՆ

Քաղաքական սոցիալականացման հիմնախնդիրը մշտապես եղել է արդիական, քանի որ, ինչպես նշում էր հույն փիլիսոփա Արիստոտելը, «Մարդը քաղաքական կենդանի է», ուստի քաղաքականությունը և մարդը փոխկապակցված երևույթներ են: Որպես հասարակական երևույթ՝ քաղաքականությունը գործառնում է որոշակի **համաձայնության** և **տարաձայնության** հիմքի վրա, որոնցից յուրաքանչյուրը, ունենալով իր արժեշահային համակարգը, մասնակցում է քաղաքական իշխանության իրականացմանը: Այս ամենով պայմանավորված՝ քաղաքականությունը ժամանակակից մարդու համար պահանջմունքային է, և, անկախ նրանից, թե մարդն ինչ չափով է մասնակցում քաղաքականությանը, քաղաքականությունն ինքը մշտապես ընդգրկում է մարդուն իր տիրույթի մեջ<sup>1</sup>: Նոր սերնդի մուտքը քաղաքականությունը ենթադրում է քաղաքական նպատակների և արժեքների նկատմամբ որոշակի վերաբերմունքի ձևավորում, ինչին հնարավոր է հասնել միջավայրում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նոր սերնդի մուտքը քաղաքականություն արմատապես պայմանավորված էր արժեքների վերարժևորմամբ, ինչպես նաև անվտանգության ապահովմամբ: Այդ համատեքստում գլոբալացման պայմաններում ինդիվիդների ապահովման նպատակով պետա-կանության մշակույթի արդիականացումը դարձել է հրամայական:

Այս համատեքստում քաղաքական սոցիալականացումը եղել և մնում է կարևոր գործոն ցանկացած հասարակության արդիականացման համար: Որպես այդպիսին՝ այն ապահովում է քաղաքական փորձի պահպանումը և փոխանցումը նոր սերունդներին, քաղաքական ինստիտուտների բնականոն գործունեությունը, նորմերի և արժեքների վերարտադրությունը: Մարդը, որպես սոցիալական լիարժեք սուբյեկտ, ձևավորվում է սոցիալականացման հարաբերությունների գործընթացում: Սոցիալական նորմերի և հասարակության մեջ ընդունված սոցիալական դերերի զարգացման գործընթացը սոցիալական փոխհարա-բերությունների կարևորագույն տեսակն է, որի ընթացքում անձը ձևավորվում է որպես հասարակության լիարժեք և լիիրավ անդամ<sup>2</sup>: Երիտասարդության քաղաքական սոցիալականացման և քաղաքացիության հիմնախնդիրը անհրաժեշտ է նորովի ուսումնասիրել, քանի որ անվտանգ ապագայի ապահովման և հասարակության զարգացման գործընթացը պայմանավորված է այս տարիքային խմբի արժեքաբանությամբ: Այս առումով ցանկանում ենք շեշտադրել, որ կերպափոխվող հասարակություններում երիտասարդության քաղաքական սոցիալականացման առանձնահատկությունը որոշվում է հասարակության սոցիալ-տնտեսական մոդելի զարգացման և հասարակությանը նետված մարտահրավերներին պատասխանելու քաղաքական առաջնահերթությունները խթանող գործոնների հիման վրա:

Չարգացման ողջ ընթացքում հասարակության քաղաքական մշակույթը կատարում է իր կարևոր գործառնություններից մեկը՝ անձի քաղաքական սոցիալականացումը՝ նրան ներգրավելով քաղաքական հարաբերություններում:

<sup>1</sup> Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն. տեսություն և պրակտիկա, Եր., Տիգրան Մեծ, 2017, էջ 20

<sup>2</sup> Ковалева, А. И. Концепция социализации молодежи: нормы, отклонения, социализационная траектория / А.И. Ковалева // Социологические исследования, 2003, с. 109



Քաղաքական սոցիալա-կանացումը, ընդգրկելով նոր սերունդների քաղաքական կյանքը, ապահովում է քաղաքական մշակույթի վերարտադրությունը:

«Քաղաքական սոցիալականացում» եզրույթի համար քաղաքագիտական գրականությունում առկա մեկնաբան-նությունները խտացնելով՝ Օքսֆորդի բացատրական բառարանը **սոցիալականացումը** (անգլ. socialization) սահմանում է մի կողմից որպես սոցիալական նորմերի, արժեքների յուրացում և այդ հիմքի վրա արժեքային կողմնորոշումների, սոցիալական պահանջ-մոլեքների մշակում, մյուս կողմից՝ անձի իրական մուտքը հասարակական-քաղաքական կյանք<sup>1</sup>]: Քաղաքական սոցիալականացման դասական տեսությունը մշակել են Չիկագոյի գիտնականները՝ Դ. Իստոնի գլխավորությամբ: Նրանք քաղաքա-կան սոցիալականացումը դիտարկում են որպես մարդու կողմից հատուկ դերերի յուրացման գործընթաց, որոնք անհրաժեշտ են քաղաքականության ոլորտում գործունեություն ծավալելու համար: Այս տեսության համակիրները (Լ. Կոեն, Ռ. Լիպտոն, Տ. Պարսոնս) հիմնականում ուշադրությունը սևեռում են մարդու և քաղաքական համակարգի ու նրա ինստիտուտների հետ ունեցած փոխգործողությունների վրա:

Հանդես գալով որպես անձի սոցիալականացման գործընթացն ապահովող երևույթ՝ քաղաքացիական մշակույթը դառնում է հասարակական փոփոխությունները չափող կարևորագույն գործիք: Քաղաքական համակարգի ժողովրդավա-րացման, հասարակության գաղափարական կողմնորոշիչների փնտրտությունների, քաղաքական գործընթացների հասարակության մասնակցության, դրանց ձևերի և արդյունավետության խնդիրների համատեքստում կամա թե ակամա կարևորվում են քաղաքացիական մշակույթի շուրջ ուսումնասիրութ-յունների արդիականությունը և անհրաժեշտությունը: Քաղաքական սոցիալականացման գործընթացն ուսումնասիրելիս համակարգերի տեսության ներկայացուցիչ Գ. Ալմոնդը նշում է. «Քաղաքական մշակույթի ազդեցությամբ տեղի է ունենում մարդկանց քաղաքական սոցիալականացման գործընթաց, որը ենթադրում է կյանքի ընթացքում յուրաքանչյուր մարդու կողմից արժեքների, գաղափարների ու մոտեցումների ընկալում և դրա հիման վրա վարքականոնների ձևավորում ու գործունեության իրականացում քաղաքական ոլորտում»<sup>2</sup>:

Ելակետ ընդունելով ասվածը՝ անհրաժեշտ ենք համարում հիմնավորել այն մոտեցումը, որ երիտասարդության քաղաքական սոցիալականացումը կարևոր բաղադրիչ է խմբային լիդերության կայացման գործում: Ըստ իտալացի հոգեբան, փիլիսոփա Ա. Մենեգետտիի՝ սոցիալականացված լիդերն օժտված է հետևյալ յոթ հատկանիշով.

**1. Բնական ներուժի առանձնահատկություն և ուժ** - ... Իրական առաջնորդն այն անձնավորությունն է, որը կուրորեն չի հետևում ընդհանուր ընդունված կանոններին, այլ ինքն է կերտում իր հաջողությունները:

**2. Տեխնիկական և ռազմա-կարգացում** - Անհրաժեշտ է զարգացնել տրամաբանական-պատմական «Ես»: Ռազմա-կարգացումը պետք է անապաման համապատասխանի մարդու ներուժին: Լիդերի հաջողությունների հիմքում ընկած են տեխնիկական ուսուցումը և ինտենսիվ ուսումնասիրությունները:

**3. Հավակնություններ** - Հավակնությունը կամային հատկանիշների դրսևորումն է նպատակին հասնելու համար: Զանի որ լիդերը կատարում է

<sup>1</sup> John Scott and Gordon Marshall, *Oxford Dictionary of Sociology*, Oxford University Press, 2009, p. 605

<sup>2</sup> Алмонд Г., Пауэлли Дж., Стром К., Далтон Р., Сравнительная политология сегодня. Мировой обзор. - пер. с англ. А. С. Богдановского, Л. А. Галкиной; Под ред. М. В. Ильина, А. Ю. Мельвиля. М: Аспект Пресс, 2002, p. 93-96

սոցիալական գործառույթ, նրան, բացի բնական պոտենցիալից և ռացիոնալ տեխնոլոգիայից, պետք է նաև քաջություն և նպատակին հասնելու կամք:

**4. Աշխատասիրություն** - Լիդերը պետք է սիրի իր աշխատանքը: Յուրաքանչյուր լիդեր ունի իր յուրահատկությունը, սեփական ոճը: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ լիդերի նվիրվածությունը աշխատանքին հաջողության գլխավոր նախապայմանն է:

**5. Մասնագիտական գիտելիքների բարձր մակարդակ** - Մասնագիտական գիտելիքներով օժտված լիդերը ամենաբարձր դասի պրոֆեսիոնալն է: Նա պետք է գերազանց տիրապետի իր մասնագիտական գործունեությանն առնչվող հարցերին: Նա պետք է դառնա առաջատար մասնագետ իր գործունեության ոլորտում: Օրինակ, եթե նա կոշիկ է արտադրում, ապա աշխարհում ոչ ոք չպետք է այդ մասին ավելին և ավելի խորությամբ իմանա:

**6. Տրանսցենդենտի գործառույթային օգտագործում** - Գտնվելով որոշակի իրավիճակում՝ լիդերն ամբողջովին չի ներգրավվում տվյալ գործընթացում: Նա պետք է ազատ լինի այն ամենից, ինչ շրջապատում է իրեն, որպեսզի գնահատված լինի նման տրանսցենդենցիայի ունակության համար: Լիդերի մտքերը պետք է ազատ լինեն ցանկացած ժամանակ, ցանկացած իրավիճակում:

**7. Ռացիոնալություն՝ հիմնված ինտուիցիայի վրա** - Ինտուիցիան ցույց է տալիս լիդերի գործողության ճիշտ ուղղությունը: Ռացիոնալությունը նշանակում է անհրաժեշտ գործողություններ կատարելու գործնական ունակություն, բանակցություններ վարելու արվեստ՝ հուսալի տեղեկություններ ստանալու, ինչպես նաև որոշակի հարաբերություններ կառուցելու համար: Պատմական ռացիոնալության մեջ ծագած ինտուիցիան անխուսափելիորեն հանգեցնում է հաջողության: Լիդերը որոշակի համատեքստում անմիջապես զգում է, թե ինչպես պետք է լուծվի խնդիրը<sup>1</sup>:

Սոցիալականացված երիտասարդը առավել պատասխանատու է իր գործողություններում և մրցունակ մասնակցություն է ունենում երկրի ժողովրդավարացման գործընթացում: Խ. Լինցը և Ա. Ստեֆանը, դիտարկելով ներածին գործոնների ազդեցությունը, ժողովրդավարացման ավարտը հանգեցրին ժողովրդավարության համախմբման, որի դեպքում ձեռք է բերվում որոշակի փոխհամաձայնություն սոցիալական երկխոսության և սերունդների համերաշխության առումով<sup>2</sup>: Սոցիալականացված երիտասարդությունը գիտակցաբար է վերաբերվում երկրի անվտանգության ապահովման գործին իր մասնակցության խնդրին: Այս պարագայում քաղաքական լիդերները մեծ հնարավորություն ունեն երիտասարդության լայն շերտերին փոխանցելու անվտանգության ապահովման և անվտանգային քաղաքականության իրենց փորձը: Ուստի այստեղ մեծ նշանակություն է ձեռք բերում քաղաքական մասնակցության անհատական փորձը և արդեն ձևավորված խմբային գիտակցությունը: Երիտասարդների քաղաքական սոցիալականացման հիմնական պայմաններից է գործողությունների ազատության ապահովումը, անհատի մասնակցությունը անվտանգային քաղաքականության մշակմանը: Այդ մասնակցությունը հիմնականում կախված է ինստիտուցիոնալ համակարգի տիպից, տնտեսական հարաբերությունների բնույթից, ինչպես նաև անձի հասունության աստիճանից: Քաղաքական գործընթացի կառավարում կարելի է իրականացնել բնականոն

<sup>1</sup> Менегетти Антонио, Психология лидера / Пер. с итальянского ННБФ «Онтопсихология». Изд. 4-е, М: ННБФ «Онтопсихология», 2004, с. 40-42

<sup>2</sup> Juan J. Linz and Alfred Stepan, Problems of Democratic Transition and Consolidation: Southern Europe, South America, and Post-Communist Europe. Baltimore, MD: Johns Hopkins University Press, 1996, p. 24-27

արդիականացման ճանապարհով, ինչի շրջանակում անհրաժեշտ է կարևորել քաղաքական լիդերի հետևյալ գործառույթները, որոնք ուղղված են քաղաքական սոցիալականացմանը.

**1. Վերլուծական կամ քաղաքական դաշտի ախտորոշում.** լիդերը համակողմանի վերլուծում է քաղաքական իրավիճակը և կարևորում իշխանական ռեսուրսների օգտագործման օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները:

**2. Քաղաքական դաշտի ձևավորում քաղաքական որոշում ընդունելու և կատարելու համար.** այս կառուցակարգում վճռորոշ նշանակություն ունեն լիդերի հատկանիշները, գանգվածների կարողությունը: Պատմությանը հայտնի են բազմաթիվ օրինակներ, երբ լիդերի առաջադրած ծրագրերն իրականացվել են հատկապես նրա անձնային հատկանիշների շնորհիվ:

**3. Հաղորդակցական.** այն ենթադրում է լիդերի կողմից հասարակության պահանջմունքների և շահերի հաշվառում, քանի որ լիդերը մտահղացումների, գաղափարների և տրամադրությունների յուրօրինակ աղբյուր է: Այս գործառույթը հատկապես արժևորվում է իշխանական հարաբերությունների աստիճանակարգային և ցանցային էության բյուրոկրատացման պայմաններում:

**4. Ինտեգրման.** երկխոսություն վարելու կարողությամբ այն բացառում է հասարակության շահերի բևեռացումը և ստեղծում համակեցության նորմերի (modus vivendi) հաստատման պայմաններ: Լիդերն ազգային միասնության մարմնավորումն է, և ազգին, պետությանը ծառայելու իր նվիրվածությամբ նա առաջնորդում է գանգվածներին:

**5. Կազմակերպչական.** ենթադրում է հավաքագրման այնպիսի կառուցակարգեր, որոնք հնարավորություն են տալիս լիդերին ուղղորդելու գանգվածների գործողությունները: Այն ներառում է կադրերի հավաքագրում: Այդ գործընթացում միավորելով համախոհներին՝ լիդերը հսկում և վերահսկում է բարեփոխումների գործընթացը:

**6. Համակարգող.** ներառում է իշխանական հարաբերությունների արժեքային չափումները և համաձայնեցումն է իշխանության ինստիտուտների, գերատեսչությունների գործունեությունը: Լիդերը փոխհամաձայնեցումն է իշխանության սուբյեկտների գործունեությունը քաղաքական դաշտում:

**7. Նորարարական.** քաղաքական դաշտի հարաբերական կայունության պայմաններում լիդերը հնարավորություն է ստանում դառնալու նորարար և մշտապես առաջադրելու նոր գաղափարներ ու նպատակներ հասարակության զարգացման համար<sup>1</sup>:

Ժողովրդավարությունը մարդկանցից պահանջում է միավորել կոլեկտիվ ներուժը՝ հանուն արդար հասարակության կերտման: Տեղի ունեցող քաղաքական զարգացումներում սոցիալականացման հիմնախնդիրներից է հասարակության բոլոր անդամների ինտեգրումը քաղաքակրթության գործընթացներին, որի ընթացքում մարդիկ յուրացնում են հանրույթի կողմից ընդունված վարքի կանոնները: Երիտասարդների ներգրավվածությունը ժողովրդավարության կայացման գործընթացներում խիստ կարևոր է, քանի որ նրանց խանդավառությունը, իդեալիզմը և նորարարության ունակությունը նպաստում են ամբողջ աշխարհում ժողովրդավարական համակարգի կայացմանը: Այսպիսով՝ ազգային անվտանգության ապահովման գործընթացում երիտասարդների ներգրավվածությունը չափազանց կարևոր է, ուստի **երիտասարդություն-պետություն** կապն առավելագույնս ամրապնդելու նպատակով, որպես պետության ներքին քաղաքականության բաղադրիչ, մշակվում և իրականացվում է

<sup>1</sup> Մարգարյան Մ., Քաղաքական լիդերություն. տեսություն և պրակտիկա, Եր., Տիգրան Մեծ, 2017, էջ 152-154

երիտասարդական պետական քաղաքականություն: Մեր օրերում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող սոցիալ- տնտեսական, քաղաքական գործընթացները լայնածավալ խնդիրներ են առաջադրում երիտասարդությանը, որոնք կարող է հաղթահարել իր երկրի ապագայով մտահոգված, կրթված, մրցունակ, ֆիզիկապես և հոգեպես առողջ ու սոցիալապես պատասխանատու երիտասարդությունը: Պետության կարևորագույն խնդիրն է՝ երիտասարդական պետական քաղաքականությունը համապատասխանեցնել ժամանակի պահանջներին՝ նկատի ունենալով, որ երիտասարդությունը ՀՀ անվտանգության գլխավոր երաշխավորն է: Այս համատեքստում, հայ ազգային ինքնության արդիականացման գերխնդիրը մրցունակ սերնդի ձևավորումն է՝ ազգապահպանման և քաղաքացիավարական արժեքների համաժամանակյա կիրառման մտահոգություններով:

### Մանե Աթիկյան ԵՐԻՏԱՍԱՐԴՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԼԻԴԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

*Բանալի բառեր՝ քաղաքական սոցիալականացում, լիդերություն, ժողովրդավարություն, պետության ինստիտուտի արդիականացում, քաղաքական մշակույթ*

Հոդվածում ուսումնասիրվում է երիտասարդության քաղաքական սոցիալականացումը որպես լիդերության գործա-ռույթ: Այս համատեքստում հեղինակը համոզված է, որ լիդերության ինստիտուտը սերնդափոխության է ենթարկվում միայն քաղաքականապես սոցիալականացված և մրցունակ, գործունակ, փոփոխություններից չվախեցող երիտասարդության միջոցով: Մոտեցման տեսանկյունից ելակետային է համարվել Ա. Մենեգետտիի հայեցակարգային դրույթները, որոնց համաձայն՝ միայն սոցիալականացված լիդերն է օժտված հետևյալ հատկանիշներով. բնական ներուժ, տեխնիկական և ռացիոնալ զարգացում, ամբիցիաներ, աշխատասիրություն, մասնագիտական գիտելիքների բարձր մակարդակ, տրանսցենդենտի գործառու-թային օգտագործում, ռացիոնալություն՝ հիմնված ինտուիցիայի վրա: Հիմնավորված է երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործընթացը՝ որպես պետականության մշակույթի արդիականացման հրամայական:

### Mane Atikyan POLITICAL SOCIALIZATION OF YOUTH AS A FUNCTION OF LEADERSHIP

**Keywords:** *political socialization, leadership, democracy, modernization of the state institute, political culture*

The article views the political socialization of youth as a function of leadership. In this context, the author is convinced that the leadership institute can be transformed only by politically socialized, competitive, and capable youth, who are not afraid of changes. In the framework of this approach, Menegetti's conceptual provisions have been considered as the baseline, according to which only a socialized leader has the following characteristics: **natural potential, technical and rational development, ambitions, diligence, a high level of professional knowledge, transcendent functional use, and rationality based on intuition.** The process of the political socialization of youth is grounded as an imperative of modernization of the statehood culture.

**Мане Атикян**  
**ПОЛИТИЧЕСКАЯ СОЦИАЛИЗАЦИЯ МОЛОДЕЖИ**  
**КАК ФУНКЦИЯ ЛИДЕРСТВА**

**Ключевые слова:** *политическая социализация, лидерство, демократия, модернизация государственного института, политическая культура*

В статье изучена политическая социализация молодежи как функция лидерства. В этом контексте автор убеждена, что институт лидерства трансформируется только политически социализированной и конкурентоспособной молодежью, которая не боится изменений. В рамках данного подхода были рассмотрены базовые концептуальные положения А. Менегетти, согласно которым только социализированный лидер имеет следующие характеристики: естественный потенциал, техническое и рациональное развитие, амбиции, трудолюбие, высокий уровень профессиональных знаний, трансцендентное функциональное использование, рациональность, основанная на интуиции. Обоснован процесс политической социализации молодежи как императив модернизации культуры государственности.

## ՄԻՋՆՈՐՂՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆԼՈՒԾԵԼԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ: ԱՐՑԱԽԻ ԴԵՊԸ

### ՍԱՐԳԱՐԻՏ ՊԵՏՐՈՍՅԱԼ

Պետությունների միջև առաջացած հակասությունների կարգավորման գործընթացում երրորդ կողմի ներգրավման հաճախականության ավելացման միտում նկատվում է Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և բավականին արդյունավետ կերպով կիրառվում է հատկապես միջազգային հակամարտությունների կարգավորման բնագավառում: Միջնորդությունը քաղաքական գործընթաց է՝ առանց հակամարտության մասնակիցների կողմից միջնորդի գաղափարները ընդունելու նախապես ստանձնած պարտավորության: Բերկովիչն առանձնացնում է միջնորդների ներգրավման երեք հիմնական պատճառներ: Առաջին, միջնորդության հավանական թեկնածուն ունի համապատասխան մանդատ (օրինակ, ՄԱԿ-ը): Երկրորդ, հավանական երրորդ կողմը շահագրգռված է խնդրի կարգավորման հարցում, քանզի այն կարող է բացասաբար ազդել իր քաղաքական հետաքրքրությունների վրա: Եվ երրորդ, միջնորդը ցանկանում է մեծացնել իր ազդեցությունը հակամարտող կողմերի վրա: Երրորդ կողմը ներգրավվում է իրավիճակից որոշակի շահեր ակնկալելով, որոնք, մասնավորապես, վերաբերում են քաղաքական շահերին ու դաշինքների առկայությանը, գերտերության կարգավիճակի խնդրին, ինչպես նաև տնտեսական շահերին ու առևտրային կապերին<sup>2</sup>: Միջնորդության արդյունավետության և կիրառվող մեխանիզմների հստակությանը վերաբերող խնդիրներից ոչ պակաս կարևոր է նաև միջնորդների շահերին վերաբերող խնդիրը, քանզի գործընթացն ավելի արդյունավետ է, երբ կողմերն անաչառ են կամ նախընտրություններ չունեն վիճելի խնդրի առնչությամբ<sup>3</sup>: Խնդիրն ավելի է բարդանում, երբ խոսքը վերաբերում է անլուծելի հակամարտություններին, որոնց թիվն աճել է ամբողջ աշխարհում, քանզի անլուծելի հակամարտությունները երկարատև են, շարունակաբար խուսափում են կարգավորումից<sup>4</sup>, կայուն են և ունեն շրջափուլային բնույթ<sup>5</sup>, ավելին, ներառում են կարիքներին և արժեքներին առնչվող խնդիրներ<sup>6</sup>, որոնք ավելի բազմաբաղադրիչ են ու խորքային: Անլուծելիությունը ենթադրում է շարունակական, միևնույն ժամանակ զարգացող գործընթաց: Շատ քիչ հակամարտություններ կան, որ անլուծելի են ի սկզբանե, փոխարենը նրանք դառնում են անլուծելի ժամանակի հետ՝ ապակառուցողական խնդիրների ի հայտ գալուն զուգընթաց: Անլուծելիության առաջնային պատճառը հակամարտության ապակառուցողական ընթացքն է, հաղորդակցման դժվարությունները, որոնք առաջանում են լեզվական և մշակութային խոչընդոտների պատճառով, խեղաթյուրումը, որը պայմանավորված է եսկալացիայի և թշնամանքի մեծացման հետ և այլն: Անլուծելի հակամարտությունների հետևանքներն ահռելի են. բռնություն կամ տեղահանում,

<sup>1</sup> Bercovitch J., Mediation., in: I.W. Zartman, ed. Peacemaking in international conflict. Washington, DC, United States Institute of Peace Press, 2007, pp. 163–194.

<sup>2</sup> Frazier D., Third Party Characteristics, Territory and the Mediation of Militarized Interstate Disputes, *Conflict Management and Peace Science*, Vol. 23, 4, 2006, pp. 267-284 .

<sup>3</sup> Eisenkopf G., Bächtiger A., Mediation and Conflict Prevention, *Journal of Conflict Resolution*, Vol 57(4), 2012, pp. 570-597.

<sup>4</sup> Putnam L., Wondelbeck J., Intractability: Definitions, Dimensions, and Distinctions, In Lewicki R., Gray B., Elliott M. (eds.), Making Sense of Intractable Environmental Disputes, Washington, D.C., Island Press, 2003.

<sup>5</sup> Kriesberg, L. Constructive Conflicts: From Escalation to Resolution. Lanham, Md., Rowman and Littlefield, 2007.

<sup>6</sup> Azar E., The Analysis and Management of Protracted Conflicts, Lexington Press, 1991; Kriesberg L. Constructive Conflicts: From Escalation to Resolution, Lanham, Md.: Rowman and Littlefield, 2007.

տնտեսական, սոցիալական և հոգեբանական հետևանքներ (վախ, ատելություն, զայրույթ), որոնք դժվար հաղթահերելի են անգամ հակամարտության կարգավորումից հետո<sup>1</sup>: Աշխարհում գոյություն ունեցող անլուծելի հակամարտությունները (Մերձավոր Արևելք, Զաշմիր, Շրի Լանկա, Զյուսիսային Իռլանդիա, Կիպրոս) սպառնում են ներգրավված ժողովուրդների և միջազգային հանրության բարօրությանը և առնչվում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են տարածքային ամբողջականությունը, ազգերի ինքնորոշումը, ռեսուրսների համար պայքարը, հիմնարար արժեքները և այլն: Թեև հակամարտություններն ի սկզբանե չեն համարվում անլուծելի, սակայն դառնում են այդպիսիք եսկալացիայի, բացասական տրամադրվածության և թշնամական ընկալումների պատճառով, որոնք ազդում են հակամարտության ընթացքի և փոխհարաբերությունների վրա: Այնուամենայնիվ, ի՞նչն է հակամարտությունը վերածում անլուծելի խնդրի: Բազմաթիվ հետազոտողներ անլուծելիության հիմնական պատճառ են համարում կարգավորման գործընթացի վրա ազդեցություն ունեցող լրացուցիչ գործոնները, մասնավորապես, միջնորդների շահերն ու դրանց բախումը՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով: Անլուծելի հակամարտություններից շատերն ունեն կառուցողական ճանապարհով լուծում գտնելու ներուժ, սակայն լուծումն ավելի է ձգձգվում, երբ կողմերի միջև թշնամական վերաբերմունքին գումարվում են միջնորդների շահերն ու երկակի նպատակները: Չարթմանը, անդրադառնալով անլուծելի հակամարտությունների վրա ազդող գործոններին, առանձնացնում է<sup>2</sup> հինգ ներքին և երեք արտաքին գործոններ՝ արմատավորումը, կողմնակալությունը և բուֆերային դառնալը: Արմատավորման գործոնն ամենազդեցիկն է որպես երրորդ երկրների միջամտության արդյունք՝ սեփական շահերի առաջխաղացման հանգամանքով պայմանավորված: Այդ ազդեցությունը կարող է խթանել լուծման գործընթացը, բայց նաև տանել դեպի անլուծելիություն: Երկրորդ գործոնը համապատասխանում է այն իրավիճակին, երբ միջնորդները շեշտը դնում են տարածաշրջանում իրենց հետապնդած շահերի վրա: Անլուծելի հակամարտությունները հատկապես վտանգավոր են այն դեպքում, երբ ունեցել են զինված բախումների փուլ և անլուծելիությունը բախումների վերականգնման շարունակական վտանգ է ներկայացնում<sup>3</sup>:

Կարգավորման գործընթացում ներգրավված երրորդ կողմն ավելի շահագրգռված է կարգավորման գործընթացի արդյունավետությունն ապահովելու գործում, երբ տվյալ իրավիճակից կարող է քաղել իր օգուտները: Նախ և առաջ, միջնորդ երկրներն ուղղակիորեն շահեկան իրավիճակում են հայտնվում, երբ կարգավորման գործընթացը հնարավորություն է տալիս նվազեցնել բացասական արտաքին ազդեցությունները, (փախստականների խնդիր, ընդհատված առևտրաշրջանառություն և այլն) երբ հակամարտությունը նույն տարածաշրջանում է կամ սահմանակից է միջնորդ երկրին կամ երկրներին: Երկրորդ, որոշ դերակատարներ բարձր են գնահատում խաղաղաշինության մարդասիրական օգուտները: Միջազգային կազմակերպությունները կամ ոչ կառավարական կազմակերպությունները որոշ դեպքերում շահագրգռված են խաղաղության հաստատման գործում, քանզի խաղաղության ամրապնդումն ու կայունության պահպանումն ամրագրված են այդ կազմակերպությունների կանոնադրության մեջ որպես գերակա նպատակներ: Եվ երրորդ, այդ դերակատարները շահագրգռված են

<sup>1</sup> Burgess H., Burgess G., Intractability and the Frontier of the Field, *Conflict Resolution Quarterly*, Vol. 24, 2, 2006, pp.177-186.

<sup>2</sup> Zartman W., Analyzing Intractability, (eds.) Crocker Ch., Hampson F., Aall P., *Grasping the Nettle: Analyzing Cases of Intractable Conflict*, Washington, 2005, pp. 47-64.

<sup>3</sup> Torosyan T., *To the Resolution of Intractable Conflicts: Nagorno-Karabakh and Kosovo, Iran and the Caucasus*, 17, 2013, pp. 427-441.

հակամարտության կարգավորման գործընթացով, քանզի այդ տարածաշրջանում շատ բարձր են խաղաղությունները և կարգավորման հաջող ելքից հետո կարող են ուղղորդել միջազգային և տարածաշրջանային գործընթացներն իրենց օգտին<sup>1</sup>:

Արցախյան հակամարտությունը հետխորհրդային տարածքի ամենարյունալի բախումներից մեկն է, որի կարգավորման գործընթացում կարելի է առանձնացնել մի քանի կարևոր փուլեր՝ Բ.Ելցինի և Ն.Նազարբաևի միջնորդությունը 1991թ. սեպտեմբերին, Իրանական կողմի ակտիվությունը 1992թ. փետրվարից մայիս ընկած ժամանակահատվածում, Նազարբաևի միջամտությունը 1992թ. սեպտեմբերին, ԵԱՀԽ ներգրավումը 1992-1994թթ., Ռուսաստանի ակտիվությունը 1993թ. նոյեմբերից մինչև 1994թ. դեկտեմբեր՝ ի դեմս Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Կազիմիրովի և, ի վերջո, ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևավորումը խնդրի կարգավորման նպատակով սկսած 1995թ. հունվարից մինչև մեր օրեր<sup>2</sup>: Այնուամենայնիվ, խնդրի կարգավորման ուղղությամբ չկան հստակ քայլեր, որի հիմնական պատճառներից մեկն էլ աշխարհաքաղաքական շահերի բախումն է, շատ բարձր են խաղաղությունները, իսկ Մինսկի խմբի մաս են կազմում գերտերության կարգավիճակ ունեցող ԱՄՆ-ն և Ռուսաստանը, որը լրացուցիչ խնդիրներ է առաջացնում կարգավորման գործընթացում աշխարհաքաղաքական շահերը հավասարակշռելու տեսանկյունից:

Ինչպե՞ս է հնարավոր ավելի արդյունավետ կերպով կարգավորել արցախյան հակամարտությունը: Ապակառուցողական մոտեցումները սահմանափակելու համար կարևոր է, որ կարգավորման գործընթացում ներգրավված միջնորդները հեռու մնան կարգավորման անիրատեսական նպատակներից և ուշադրությունը կենտրոնացնեն խնդիրը կառուցողական դաշտ տեղափոխելու վրա՝ առաջնային պլան մղելով հակամարտության կարգավորման իրավական գործոնը: Կարգավորման գործընթացի ապակառուցողական լինելը հոյի է Եսկալացիայի վտանգով, որի ականատեսը եղանք 2016թ. ապրիլին: Ադրբեջանական կողմի սադրանքների շրջափուլն ի վերջո բերեց առարկայական երկխոսության դադարեցմանը՝ մեծացնելով ատելության մակարդակը (հայաստացույթյան քաղաքականության ավելի վառ դրսևորումներ) ու նորանոր բախումների հավանականությունը, որի նպատակն արդեն ոչ թե սեփական շահերի առաջխաղացումն է, այլ հակառակորդի ոչնչացումը: Ադրբեջանական կողմի սանձազերծած քառօրյա պատերազմը հանգեցրեց բևեռացման, գործընթացի, որն էապես մեծացրեց հակամարտությանն առնչվող խնդիրների շրջանակը:

Տարածված կարծիք կա, որ միջնորդությունը առաջընթաց ապահովող գործընթաց է, որը չի փորձում ստվերել անցյալի բացասական կամ ցավալի դեպքերը, փորձում է լուծել անհետաձգելի խնդիրները, որպեսզի կողմերի հետագա հարաբերություններն ու շահերը բավարարվեն և հաղթահարելի լինեն<sup>3</sup>: Իրականում միջնորդներն ու հակամարտության կողմերը պարտավոր են արձագանքել միջադեպերին, իրադարձություններին և հակասություններին, որոնք կարող են առաջանալ խնդրի կարգավորման գործընթացին զուգընթաց, քանզի անպատժելությունը կարող է հանգեցնել ամենաթողության մթնոլորտի: Ասվածի ապացույցը ադրբեջանական կողմի՝ հրադարձի ռեժիմը պարբերաբար խախտելու դեպքերն էին, որոնց չտրվեց համապատասխան արձագանք միջնորդների կողմից ու պատճառ հանդիսացավ պատերազմի սանձազերծմանը 2016-ին:

<sup>1</sup> Beardsley K., Lo N., Democratic Communities and Third-Party Conflict Management, *Conflict Management and Peace Science*, 30(1), 2013, pp. 76–93.

<sup>2</sup> Mooradian M., Druckman D., Hurting Stalemate or Mediation? The Conflict over Nagorno-Karabakh, 1990–1995, *Journal of Peace Research*, Vol. 36, 6, 1999, pp.709-727.

<sup>3</sup> Moore C., *The Mediation Process*, San Francisco: Jossey-Bass, 2003, p. 393.



Յակամարտության կարգավորման գլխավոր խոչընդոտն, ի թիվս այլոց, Արցախի՝ բանակցային գործընթացում ներգրավված չլինելու խնդիրն է, և այս իրավիճակը բացառիկ է այն առումով, որ բանակցային սեղանի շուրջ չի գտնվում ինքնորոշվել ցանկացող կողմը: Յաջորդ կարևորագույն խնդիրը միջնորդների շահերի ու հետաքրքրությունների բախման ազդեցությունն է ապակառուցողական գործոնների առաջացման վրա, որոնք, գործնականում, խնդիրն անլուծելի են դարձնում: Արցախյան հակամարտության կարգավորման գործընթացը կառուցողական դաշտ տեղափոխելու հարցում առանցքային դերակատարում կարող է ունենալ փոխակերպվող միջնորդությունը, որը բավականին բարդ ու հետևողական քայլերի ամբողջություն է՝ նոր օրակարգի ձևավորումից մինչև բանակցային ռազմավարության փոփոխություն, նոր ռեսուրսների ներգրավում, ոչ պաշտոնական հանդիպումների անցկացում, ընդհուպ մինչև միջնորդական ձևաչափի փոփոխություն:

**Մարգարիտ Պետրոսյան**  
**ՄԻՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԱՆԼՈՒԾԵԼԻ ՅԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ**  
**ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ: ԱՐՑԱԽԻ ԴԵՊԵԸ**

*Բանալի բառեր՝ անլուծելի հակամարտություն, միջնորդություն, շահեր, Արցախ*

Միջնորդությունը հակամարտությունների կանխարգելման, կառավարման և կարգավորման ամենաարդյունավետ միջոցները է, սակայն միջնորդի ներգրավումը կարգավորման գործընթաց է ներմուծում ևս մեկ, լրացուցիչ գործոն՝ միջնորդների շահերը, որն իր հերթին ավելի է բարդացնում կարգավորման՝ առանց այդ էլ բարդ գործընթացը: Խնդիրն ավելի է բարդանում անլուծելի հակամարտությունների պարագայում, որոնց առաջացման պատճառները գտնվում են շատ տարբեր հարթություններում և բավականին լայն միջակայքում, սակայն այդ խնդիրների շարքում իր ուրույն տեղն ունի նաև միջնորդների դերակատարությունը կողմերի միջև փոխհարաբերությունները հավասարակշռելու և սեփական շահերը առաջնային պլան չտանելու տեսանկյունից: Հոդվածը նպատակ ունի պարզել միջնորդների դերը անլուծելի հակամարտությունների առաջացման գործընթացում արցախյան հակամարտության օրակարգում:

**Margarit Petrosyan**  
**THE ROLE OF MEDIATORS IN THE PROCESS OF CONFLICT RESOLUTION:**  
**THE CASE OF ARTSAKH**

**Keywords:** *intractable conflicts, mediation, interests, Artsakh*

Mediation is one of the most effective ways of preventing, managing and resolving international conflicts. However, the involvement of mediators in the settlement process, in turn, complicates the process due to the interests of mediators. This problem is more complicated in the case of intractable conflicts the causes of which are in many different dimensions and in a fairly wide range. But among these issues, the role of mediators also has its own place: to balance the relationship between the parties and do not give priority to their own interests. The article aims to clarify the role of mediators in the resolution process of intractable conflicts and in particular the case of Artsakh.

**Маргарит Петросян**  
**РОЛЬ ПОСРЕДНИКОВ В ПРОЦЕССЕ УРЕГУЛИРОВАНИЯ НЕРАЗРЕШИМЫХ**  
**КОНФЛИКТОВ НА ПРИМЕРЕ АРЦАХА**

**Ключевые слова:** *неурегулированный конфликт, посредничество, интересы, Арцах*

Посредничество является одним из наиболее эффективных способов предотвращения, управления и разрешения международных конфликтов. Однако вовлечение медиаторов в процесс урегулирования в свою очередь усложняет процесс из-за интересов посредников. Проблема усугубляется, когда речь идет о неразрешенных конфликтах, причины которых находятся в довольно широком диапазоне. Задача посредников тут заключается в следующем: сбалансировать отношения между сторонами и не отдавать приоритет своим собственным интересам. Целью статьи является выяснение роли посредников в процессе возникновения неразрешенных конфликтов на примере карабахского конфликта.

## ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

### ՎԱՅՐԱՍ ՀՈՎՅԱՆ

Ընդհանուր առմամբ Սփյուռքի հայ համայնքների անվտանգությունն ունի երկու բաղադրիչ՝ հոգևոր և ֆիզիկական: Առաջինը հանգում է հայ համայնքների ազգային նկարագրի պահպանմանը, իսկ երկրորդը՝ նրանց գոյությանը: Հոգևոր անվտանգության դեպքում որպես մարտահրավերներ հանդես են գալիս ինքնության բաղադրիչների կորուստը և խառնամուսնությունները, իսկ ֆիզիկականի դեպքում՝ գոյապահպանության սպառնալիքները և արտագաղթը համայնքներից (որս հետևանքով վերջիններիս տարրալուծումը):

*Ինքնության բաղադրիչների կորուստը* վերաբերում է հայոց լեզվի, մշակույթի, պատմական հիշողության և այլնի աստիճանական մարմանը սփյուռքահայության ներկայացուցիչների շրջանում: Այս խնդիրը նկատելի է եղել դեռևս Սփյուռքի ձևավորման վաղ փուլում: Ազգային խնդիրներով մտահոգ՝ Շահան Նաթալին դեռևս 1920-ական թթ. գրում է. «Զենք կարծեք, որ ունե մեկը յաւակնի Ֆրանսիայի մէջ գտնուող Հային միայն մէկ տասնեակ տարի յետոյ ֆրանսերէն լեզուին փոխարէն հայերէնը խօսիլ տալ»<sup>1</sup>: Բնակվելով օտար միջավայրերում՝ սփյուռքահայերն ինտեգրվում են այդ հասարակություններին և կամա թե ակամա իրենց վրա կրում դրանց սոցիալ-մշակութային ազդեցությունը: Ըստ մասնագիտական գնահատականի՝ «... օտար քաղաքակրթությունների անընդհատ մեծացող ազդեցության ներքո Սփյուռքը, ենթարկվելով ինտենսիվ ազդեցության՝ աստիճանաբար կորցնում է իր ազգային դիմագիծը»<sup>2</sup>: Այս երևույթը դրսևորվում է նաև արտերկրի հայության մոտ ազգային կյանքից աստիճանաբար հեռացմամբ և ազգային կառույցների հետ կապի կորստով: Համաձայն մեկ այլ մասնագիտական դիտարկման՝ «Հատկապես նոր սերնդի փոքր մասն է կապված ազգային կառույցների հետ, և նրանց ձուլման վտանգը շատ մեծ է»<sup>3</sup>:

Միևնույն ժամանակ, մայրենի լեզվի և ազգային ինքնությունը կազմող մյուս բաղադրիչների գործնական կիրառման փոքր հնարավորությունները զրկում են օտար երկրներում հաստատված հայերին դրանք սովորելու և պահպանելու խթանից: Այդ պատճառով էլ «... վերջին տասնամյակներում հայախոսությունը աշխարհում նվազել է, գնալով խորանում է հայերի լեզվական ուժացումը հատկապես արտերկրում»<sup>4</sup>:

Արդյունքում սերնդե սերունդ սփյուռքահայերի մոտ նվազում է հայոց լեզվին, ազգային մշակույթին, պատմական հիշողությանը և ազգային ինքնությունը կազմող մյուս բաղադրիչներին տիրապետելու մակարդակը, ինչը լուրջ սպառնալիք է արտերկրի հայության համար, քանի որ «... էթնոսները հոգեբանորեն թուլանում են և աստիճանաբար գնում են դեպի վերացում, երբ թուլանում ու աստիճանաբար

<sup>1</sup> Նաթալի Ը., Թուրքերը եւ մենք, Եր., 2015, էջ 38:

<sup>2</sup> Մինասյան Էդ., Հայրենիք-Սփյուռք կապերի հիմնական ուղղությունները, «1946-1948թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., «Լիմուշ», 2009, էջ 262:

<sup>3</sup> Մինասյան Էդ., Հայրենիք-Սփյուռք մշակութային անջությունները 1990-ական թթ., «Նոր-դար», թիվ 4, 2004, էջ 111:

<sup>4</sup> Չաքարյան Յ., Լեզվաշինության արդի խնդիրները հայրենի մրցունակության բարձրացման տեսանկյունից, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. «Հայագիտությունը և արդի ժամանակաշրջանի մարտահրավերները», զեկուցումների դրույթներ, Եր., «Գիտություն», 2013, էջ 124:

վերանում է այն ցուցիչների ամբողջությունը, որի կրողն է եթևսը՝ որպես սոցիալ-հոգեբանական ուրույն համակարգ»<sup>1</sup>:

Ուժացման առաջին փուլը թերևս հայ համայնքների ներկայացուցիչների մոտ ինքնության փոխակերպումն է: Մասնագետների գնահատմամբ՝ սփյուռքի հայ համայնքներում տասնամյակների ընթացքում տեղի ունեցող ինքնության փոխակերպման արդյունքում հայ ինքնությունը փոխարինվում է օտար ինքնությամբ՝ պահպանելով որոշակի կապը հայկականի հետ: Եթե հարցը դիտարկենք ամերիկահայ համայնքի օրինակով, ապա նախկինում ամերիկաբնակ *հայը* որպես ինքնություն փոխակերպվում է հայկական արմատներով կամ ծագմամբ *ամերիկացու* (ընդգծումները մերն են Վ.Յ.): Այս երևույթը նույն ամերիկահայ համայնքի օրինակով ցույց է տվել ազգագրագետ Յարություն Մարությանը<sup>2</sup>:

Այսպիսով, քանի որ «Սովորաբար սփյուռքը ենթարկվում է ... տվյալ վայրի թելադրած պայմաններին», ապա նշյալ միտումների շարունակման պարագայում «Բոլոր ժողովուրդների մշակույթների նման, հայկականը նույնպես զաղթօջախներում կենթարկվի արևմտյան մշակույթների ոչնչացնող ազդեցությանը և տարիների ընթացքում կդադարի հայկական լինելուց»<sup>3</sup>: Յետևաբար, «Ընդունող երկրների գերիշխող մշակույթների մշտական և ուժգին ազդեցության ներքո արտերկրի հայության համար բոլոր ժամանակներում առավել բարդ և կարևոր խնդիրը եղել և մնում է ազգային ինքնության պահպանումը ...»<sup>4</sup>:

*Խառնամուսնությունները*, մի կողմից լինելով իրենց բնակության երկրների հասարակություններում սփյուռքահայերի ինտեգրվածության ցուցիչ, մյուս կողմից նպաստում են հայ ինքնության խեղաթյուրման էլ ավելի խորացմանը: Դրանց արդյունքում ձևավորված ընտանիքներում նոր սերունդը, բացի ինքնության ճգնաժամի հետ կապված խնդիրներին բախվելուց, նաև ավելի մեծ չափով և ավելի անմիջականորեն է ենթարկվում օտար սոցիալ-մշակութային ազդեցությանը: Եթե հայկական ընտանիքներում նոր սերունդը միայն արտաքինից, այն է՝ հասարակական միջավայրի կողմից է ենթարկվում այդպիսի ազդեցության, ապա խառնամուսնությունների արդյունքում ձևավորված ընտանիքներում այն արդեն ներսից՝ ընտանեկան միջավայրից է իր վրա կրում օտար մշակութային արժեքների ներգործությունը:

*Գոյապահպանության սպառնալիքները* հայկական սփյուռքի համար հրատապ են այն երկրներում կամ տարածաշրջաններում, որոնք հանդիսանում են թե՛ծ հակամարտությունների գոտի և որտեղ ազգային կամ կրոնական հողի վրա առկա է հայատյացությունը: Այդպիսի տարածաշրջաններում կամ երկրներում, որքան էլ հայ համայնքները փորձեն չեզոքություն պահպանել, փոթորկահույզ իրադարձությունները իրենց անմիջական ազդեցությունն են ունենում վերջիններիս վրա՝ սպանություններ, ավերածություններ և այլն:

Հայ համայնքների վրա տևական հակամարտությունները բացասական ազդեցություն են ունենում նաև անուղղակիորեն: Բանն այն է, որ դրանք առաջացնում են համընդհանուր քաոս և անիշխանություն, խաթարում են տվյալ երկրի տնտեսական կյանքը՝ այդ կերպ պատճառ դառնալով աղքատության և

<sup>1</sup> **Նալչաջյան Վ.**, Հայրենիք և հայրենասիրություն (հոգեբանական վերլուծություն), Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 40-41:

<sup>2</sup> Տե՛ս **Մարության Յ.**, Ցեղասպանության հարյուրամյա հիշողությունը և «ամերիկահայ ազգության» ձևավորման գործընթացը, Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում, գիտաժողովի զեկուցումներ, Եր., ԵՊՀ հրատ., 2013, էջ 47-54:

<sup>3</sup> **Մինասյան Եդ.**, Հայրենիք-Սփյուռք մշակութային ամնչությունները 1990-ական թթ., «Նոր-դար», թիվ 4, 2004, էջ 113:

<sup>4</sup> **Մինասյան Եդ.**, Վարդանյան Ա., Հայրենիք-սփյուռք ամնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, «Պոլիգրաֆ», 2010, էջ 113:

սոցիալական ճգնաժամերի, ինչն էլ իր հերթին առաջացնում է հանցագործությունների և այլ բացասական երևույթների աճ: Այս պարագայում հայ համայնքների ներկայացուցիչները տվյալ երկրի ընդհանուր բնակչության հետ մեկտեղ դառնում են այնպիսի հանցագործությունների թիրախ, ինչպիսիք են թալանը, սպանությունը, մարդկանց առևանգումը և նրանց ազատության համար փրկագին պահանջելը և այլն<sup>1</sup>:

Տևական հակամարտությունների և անկայունության արդյունքում հայ համայնքները կրում են թե՛ մարդկային և թե՛ գույքային կորուստներ: Մարդկային կորուստը գոհված, վիրավորված և փախստական դարձած մեր հայրենակիցներն են, իսկ գույքայինը՝ նրանց թալանված ունեցվածքը, ինչպես նաև անհատական և համայնքային անշարժ գույքը (տներ, խանութներ, դպրոցներ, եկեղեցիներ և այլն), որը ենթարկվում է ավերածությունների:

*Համայնքներից արտագաղթի* պատճառներ, բացի վերը հիշատակված փոթորկահույզ իրավիճակներից, հանդիսանում են նաև այնպիսի գործոններ, ինչպիսիք են ոչ հոգեհարազատ սոցիալ-քաղաքակրթական միջավայրը, ժողովրդավարական ազատությունների ցածր մակարդակը, սոցիալ-տնտեսական անբարենպաստ պայմանները, տնտեսական գործունեություն ծավալելու հնարավորությունների սահմանափակությունը և այլն: Արդ, այն երկրների հայ համայնքներում, որտեղ առկա են թվարկված գործոնները, դեռևս 20-րդ դարի կեսից նկատվում է հայերի արտագաղթ դեպի այնպիսի երկրներ, որտեղ առկա են հայերին ավելի հոգեհարազատ սոցիալ-քաղաքակրթական միջավայր, ժողովրդավարական ազատություններ, սոցիալական բարենպաստ պայմաններ և տնտեսական գործունեությամբ զբաղվելու ավելի լայն հնարավորություններ<sup>2</sup>:

Ինչպիսիք էլ լինեն հայ համայնքներից արտագաղթի պատճառները, միևնույն է այն ունենում է հյուժիչ ազդեցություն վերջիններիս վրա: Արդյունքում նոսրանում են նրանց ներկայացուցիչների շարքերը, ինչը բացասաբար է անդրադառնում նաև համայնքային կառույցների (օրինակ՝ դպրոցների) գործունեության վրա<sup>3</sup>: Պատմական գիտությունների թեկնածու Տիգրան Ղանալանյանը, ուսումնասիրելով Սփյուռքի ներքին տեղաշարժերը Երկրորդ աշխարհամարտից հետո, անմիջական կապ է տեսնում համայնքներից արտագաղթի և ձուլման գործընթացների ահագնացման, ինչպես նաև խառնամուսնությունների աճի միջև՝ գրելով. «Որպես կանոն արտագաղթի հետևանքների թվում էր խառնամուսնությունների աճը, ձուլման արագացումը և համայնքների աստիճանական թուլացումն ու կազմալուծումը»<sup>4</sup>:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ միասին վերցրած վերոհիշյալ չորս մարտահրավերներով ամենավտանգվածը Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներն են: Այդ փոթորկահույզ տարածաշրջանում հայ համայնքները մշտապես տուժում են իրենց երկրների ներքին և արտաքին ցնցումներից: Այստեղ առկա են հայ համայնքների ֆիզիկական անվտանգությանը սպառնացող, ինչպես նաև արտագաղթի պատճառ հանդիսացող վերը հիշատակված գրեթե բոլոր գործոնները՝ հայատյացությունը (Թուրքիա), ներքին և արտաքին պատերազմները (Սիրիա, Լիբանան, Իրաք, Իսրայել և այլն), կրոնական անհանդուրժողականությունը

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Հովյան Վ.**, Մերձավոր Արևելքի հայ ավետարանական համայնքները, «21-րդ ԴԱԲ», թիվ 4, 2012, էջ 102-103:

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս **Հովյան Վ.**, Հայկական սփյուռքի փոխակերպումը. մարտահրավերներ և հնարավորություններ, «Գլոբուս», թիվ 5, 2013, էջ 43-47:

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, **Մելքոնյան Ռ.**, Թուրքիայի հայության որոշ խնդիրներ, «Հանրապետական», թիվ 6, 2009, էջ 6:

<sup>4</sup> Տե՛ս **Ղանալանյան Տ.**, Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1945-1988 թվականներին, պատմական գիտությունների թեկնածուի առենախոսության սեղմագիր, Եր., 2016, էջ 15:

քրիստոնյաների նկատմամբ (Թուրքիա, Իրաք, Սիրիա և այլն), սոցիալ-տնտեսական ոչ այնքան բարենպաստ պայմանները, հայերի համար սոցիալ-քաղաքակրթական ոչ հարազատ միջավայրը և այլն:

Այս բոլորի արդյունքը Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների նոսրացումն ու հյուժումն է: Օրինակ՝ համեմատած նախորդ դարի 50-ական թթ. հետ 21-րդ դարի սկզբին Լիբանանի հայ համայնքի թվաքանակը 120 հզ.-ից հասել է 70-80 հզ.-ի, Սիրիայինը՝ 150 հզ.-ից՝ 65-70 հզ.-ի, Թուրքիայինը՝ 200 հզ.-ից՝ 80 հզ.-ի, Իրանինը՝ 140 հզ.-ից 80 հզ.-ի և այլն<sup>1</sup>: Ընդհանուր առմամբ, եթե 1970-ական թթ. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում բնակվում էր մոտ 1 մլն. հայ, ապա ներկայումս այդ ցուցանիշը կազմում է մոտ 300 հզ.<sup>2</sup>: Սիրիական վերջին ճգնաժամի հետևանքով հայ համայնքը տվել է հարյուրավոր զոհեր, ամենալավատեսական գնահատականներով կրճատվել ավելի քան կիսով չափ: Իրաքյան պատերազմի (2003թ.) հետևանքով գրեթե սպառման եզրին է հասել այդ երկրի՝ երբեմնի ծաղկուն հայ համայնքը:

Փոթորկահույզ իրադարձությունների կործանարար հետևանքները հայ համայնքների վրա առավել ցայտուն կերպով երևում են Քույվեյթի հայ համայնքի օրինակով: Նախքան 1991թ. Ճոզի պատերազմը (առաջին պատերազմ) այդ երկրում հայերի թիվը հասնում էր մոտ 25 հզ.-ի: Թեև պատերազմը տևեց շատ կարճ (մոտ 1.5 ամիս), և հայերը որևէ կապ չունեին վերջինիս հետ, այնուամենայնիվ, դրանից հետո հայ համայնքի թվաքանակը նվազեց 5 անգամ: Ներկայումս Քույվեյթում ապրում է ընդամենը 5 հզ. հայ:

Ինչ վերաբերում է ինքնության բաղադրիչների կորստին և խառնամուսնություններին, ապա, այստեղ գերակշռող իսլամական միջավայրը, ինչպես նաև քաղաքական և տնտեսական գործունեության բնագավառներում սահմանափակումները որոշակիորեն առանձնացնում են հայ համայնքներին տեղի հասարակություններից<sup>3</sup>: Այս հանգամանքը որոշակիորեն նպաստում է ինչպես լեզվի և ազգային ինքնության մյուս բաղադրիչների պահպանմանը, այնպես էլ սահմանափակում է խառնամուսնությունների քանակը, ինչի արդյունքում էլ Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքը, պահպանելով իր ավանդականությունը, երկար ժամանակ՝ մոտ 3-4 սերունդ, կարողացել է պահպանել նաև իր ազգային նկարագիրը և միևնույն ժամանակ մեծ մասամբ զերծ մնալ խառնամուսնություններից:

Վերջին տասնամյակներում, այնուամենայնիվ, այս չափորոշիչներով ևս նկատվում են անհանգստացնող միտումներ: Մասնավորապես, Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների ներկայացուցիչների շրջանում աստիճանաբար ավելի լայն տարածում է գտնում արաբախոսությունը՝ ի հաշիվ մայրենի լեզվի: Նույն միտումը կա խառնամուսնությունների պարագայում: Ըստ Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայդոսյանի, եթե 1960-70-ական թթ. Լիբանանի հայ համայնքում խառնամուսնությունները հազվադեպ երևույթ էին և ընդհանուր

<sup>1</sup> Տվյալները տե՛ս **Գասպարյան Ս.**, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր. մշակութային կյանքի ուրվագիծ, Եր., Հայաստանի պետական հրատարակչություն, 1962, էջ 246; «Հայ սփյուռք» հանրագիտարան, գլխ. խմբագիր՝ Այվազյան Հ., Եր., Հայկ. հանրագիտարան. հրատ., 2003, էջ 290, 508, 175, 235:

<sup>2</sup> **Փաշայան Ա., Հարությունյան Լ.**, Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն», 2011, էջ 133:

<sup>3</sup> Չնայած առանձին հայ անհատներ իրենց տաղանդի և աշխատասիրության շնորհիվ կարողացել են մեծ հաջողությունների և բարձր դիրքերի հասնել Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հասարակություններում: Օրինակ՝ 2017թ. նոյեմբերին հայազգի գեներալներ Հովհաննես Քեչիշյանը և Պետրոս Լափաճյանը հրամանատարական պաշտոնների նշանակվեցին Լիբանանի նախագահական պալատի անվտանգության ծառայությունում [տե՛ս Հայազգի Երկու Չորավարներ Պաշտոնի Կոչուած՝ Նախագահական Պալատին Մեջ, Ազդակ, նոյեմբեր 17, 2016; Նույնը՝ <http://www.aztagdaily.com/archives/325019>]

ամամբ դիտվում էին որպես ամոթալի երևույթ, ապա ներկայում դրանք ընկալվում են որպես սովորական երևույթ<sup>1</sup>: Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներում խառնամուսուլթյունների նկատելի աճը ժամանակին փաստել է նաև սիրիահայ ականավոր մտավորական, հայագետ, ներկայումս՝ արդեն հայրենադարձ Յակոբ Զոլաթյանը: «Ես եկեղեցու պաշտոնյա չեմ, որ վիճակագրական տվյալներ ունենամ սիրիահայ համայնքում խառնամուսուլթյունների վերաբերյալ, բայց ամեն տարի հսկայական թվով աշակերտներ ունեմ, և բնական է, որ հենց առաջին օրվանից զգում եմ, թե ովքեր են խառնամուսուլթյունների զավակներ: Որոշակի քանակությամբ երեխաներ կան, իհարկե, որոնց ծնողներից մեկն օտար է»,- նշում է Զոլաթյանը<sup>2</sup>:

Որպես Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի հենասյուներ ներկայում հանդես են գալիս Լիբանանի, Սիրիայի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքները<sup>3</sup>: Մյուս հայ համայնքները թե՛ թվաքանակով և թե՛ կազմակերպչական հաստատությունների քանակով էապես զիջում են վերջիններիս՝ դիտարկվելով հիմնականում որպես տեղական (լոկալ) նշանակության ընդհանրություններ:

Թվարկված չորս համայնքներն էլ ներկայում գտնվում են անկայունության հետևանքով սպառնվելու վտանգի առջև: Չնայած սիրիական կառավարական բանակի կողմից Յալեպի ազատագրումից հետո ինչպես տեղի ազգային իշխանությունները, այնպես էլ տարածաշրջանային և համազգային հայկական կառույցները մեծ թափով ձեռնամուխ են եղել հայ համայնքի վերականգմանը<sup>4</sup>, այնուամենայնիվ դեռևս լուծման կարոտ բազմաթիվ խնդիրներ կան, քանի որ այն հսկայական կորուստներ է կրել պատերազմի հետևանքով: Նախքան քաղաքի ազատագրումը հայության թվաքանակը ամենալավատեսական հաշվարկներով կազմում էր մոտ 10 հզ.: Յետևաբար, Լիբանանի, Իրանի և Թուրքիայի հայ համայնքների կողքին Սիրիայի հայ համայնքը, որը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի բնորոշմամբ՝ «շնորհիւ իր քրիստոնեական հաւատքին, ամուր կամքին ու վառ յոյսին»<sup>5</sup> անասելի զրկանքների գնով կարողացավ պահպանել իր վերջին բեկորները կործանումից, ներկայում միայն վերապահումով կարելի է համարել Մերձավոր և Միջին Արևելքի հայկական սփյուռքի հենասյուն համայնք:

Մյուս երկրներում, թեև դրությունը համեմատաբար կայուն է (համեմայն դեպս համեմատելի չէ Սիրիայում տիրող իրավիճակի հետ), այնուամենայնիվ, հաշվի առնելով ինչպես անցյալի փորձը, այնպես էլ զարգացումների ընթացքն ու հնարավոր սցենարները, կարելի է ասել, որ ամենևին բացառված չէ ոչ հեռավոր ապագայում իրավիճակի ապակայունացումն այդ երկրներում նույնպես:

Ներկայում միայն փիսրուն խաղաղություն է տիրում Լիբանանում: Վերջինս, լինելով փոքր երկիր, այնուամենայնիվ բնորոշվում է եթնիկ և կրոնական բազմազանությամբ<sup>6</sup>: Այստեղ բախվում են թե տարածաշրջանային տերությունների,

<sup>1</sup> Փոլ Յայրոստյանն այս դիտարկումն արել է 2014թ. սեպտեմբերի 18-ին «Նորավանք» ԳԿՅ սեմինարի ժամանակ, տե՛ս Մերձավոր Արևելքի հայ համայնքները. հեռանկարներ և ռազմավարություն, [http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT\\_ID=12897](http://noravank.am/arm/seminar/detail.php?ELEMENT_ID=12897)

<sup>2</sup> Փաշայան Ա., **Հարությունյան Լ.**, նշվ. աշխ., էջ 98:

<sup>3</sup> Սիրիահայության թվաքանակը ներկայում, համաձայն ՀՀ Սփյուռքի Նախարարության տվյալների, կազմում է մոտ 25 հզ.:

<sup>4</sup> Տե՛ս «Դեռ կեսնք մը կայ Հալեպի մէջ պլավացող, պետք է բոցավառել զայն»։ Կարո Իզպաշեան, Գանձասար, փետրուար Գ. 2017; Ֆրանսայի երեք ձայնասփիւռներուն կողմէ կազմակերպուած «ռատիօթոն»ին սուրիահայութեան ի նպաստ 120 հազար եւրո հանգանակուեցաւ, Գանձասար, փետրուար Դ. 2017:

<sup>5</sup> ՄՍՕՏՏ Արամ Ա. վեհափառ հայրապետին հովուապետական այցելութիւնը Հալեպ եզակի խանդավառութիւն ստեղծեց հալեպահայութեան մօտ, Գանձասար, Յունուար Բ., 2017:

<sup>6</sup> Մանրամասն տե՛ս **Հարությունյան Լ.**, Լիբանանի կրոնա-համայնքային համակարգը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», թիվ 19, Եր., «Չանգակ-97», 2000, էջ 88-95:

թե գերտերությունների շահերը, ինչը, զուգակցվելով գրեթե մշտական անկայուն միջավայրի հետ, ցանկացած պահի կարող է պատերազմական իրավիճակի առաջացման պատճառ դառնալ<sup>1</sup>: Հետևաբար, Նոր անհանգիստ իրավիճակի առաջացումը Լիբանանում լիովին հավանական է՝ կապված ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով պայմանավորված հնարավոր ճգնաժամի առաջացման հետ:

Իրանի պարագայում կարելի է ասել, որ թեև ԱՄՆ-ի հետ հարաբերություններում սառույցը նախագահ Բարաք Օբամայի օրոք զգալիորեն հալվեց՝ կապված Իրանի միջուկային ծրագրի շուրջ 2015թ. նոյեմբերի 24-ին ժնևում ձեռք բերված պայմանավորվածությունների հետ, սակայն ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից անմիջապես հետո Իրան-ԱՄՆ հարաբերություններն կրկին սրվեցին՝ պայմանավորված այս անգամ արդեն ԱՄՆ Նոր վարչակազմի արտաքին քաղաքականության հետ: Այսպիսով, ԱՄՆ վերջին նախագահական ընտրություններից հետո ամերիկա-իրանյան հարաբերությունները վերադարձան Իրանում նախագահ Մահմուդ Ահմադինեժադի օրոք (2005-2013 թթ.) եղած հարաբերությունների մակարդակին, երբ երկու երկրները երբեմն գտնվում էին պատերազմի (զինված բախման) շեմին: Իրանում նույնպես հերթական նախագահական ընտրություններից հետո կարող են կրկին իշխանության դեկին չափավորներին կամ բարեփոխիչներին փոխարինել կոշտ գծի կողմնակից պահպանողականները և գնալ առճակատման ԱՄՆ-ի հետ:

Ինչ վերաբերում է Թուրքիային, ապա այդ երկրում ավանդաբար առկա հայատյացությանն ու ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հալածանքներին վերջին տարիներին գումարվում են Թուրքիայի ներքին կյանքը ապակայունացնող այնպիսի գործոններ, ինչպիսիք են *ա) քրդական հարցի սրումը, որը բավական հրատապ է դարձել հատկապես սիրիական ճգնաժամի համատեքստում, բ) պայթարը աշխարհիկության և իսլամիզմի միջև, որի ամենացայտուն դրսևորումը 2016 թ. հուլիսի 15-ի ռազմական հեղաշրջման անհաջող փորձն էր, գ) հաճախակիացած ահաբեկչական գործողությունները, դ) Թուրքիայի ներգրավվումը մերձավորարևելյան, մասնավորապես՝ սիրիական ճգնաժամում, ե) Արևմուտքի հետ հարաբերությունների վատթարացումը և դրա հետևանքով տնտեսական անկումը, զ) նախագահ Էրդողանի կողմից իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու ավտորիտար նկրտումները, է) 2016թ. հուլիսյան հեղաշրջման փորձից հետո երկրում ծայր առած քաղաքական բռնաճնուկները՝ պետական պաշտոնյաների, ուժային կառույցների աշխատակիցների, ընդդիմադիր քաղաքական գործիչների<sup>2</sup>, լրագրողների ձերբակալություններն ու բանտարկությունները, ընդդիմադիր «Չաման» պարբերականի փակումը:*

Բացի վերոնշյալ հանգամանքներից, պատմությանը հայտնի է, որ թուրքական իշխանությունները սովորություն ունեն օգտագործել միջազգային անկայուն իրավիճակներն ազգային և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ հաշվեհարդար տեսնելու համար: Դրա լավագույն օրինակը Հայոց ցեղասպանության իրագործումն էր Առաջին աշխարհամարտի տարիներին: Ներկայում էլ, եթե վերոհիշյալ գործոնների ազդեցությամբ Թուրքիայում և

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Իրան Հրդպալլայի միջոցով «պատգամ» կ'ուղարկե Իսրայելին եւ Թրամփին, Նոր օր, 2017թ., փետրվարի 23, թիվ 8:

<sup>2</sup> Մասնավորապես հիշատակելի է քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցության համանախագահներ Սեյահադդին Դեմիրթաշի, Ֆիզեն Յուսեբթադի և 9 ակտիվ գործիչների (Միլի Մեջլիսի պատգամավորներ) ձերբակալությունը: Տե՛ս Կեսգիշերային միաժամանակեայ ոստիկանական գործողություն ՅԷ-ՏԷ-ՓԷցի երեսփոխաններու դեմ. ՅԷ-ՏԷ-ՓԷի համանախագահներ Սեյահատտին Տեմիրթաշ ու Ֆիկեն Եիլսեբթադ ներառեալ 11 երեսփոխաններ հսկողութեան տակ առնուեցան, Նոր Մարմարա, 04 նոյեմբեր 2016:



տարածաշրջանում ստեղծվի անկայուն իրավիճակ, չի բացառվում, որ թուրքական իշխանություններն առիթը բաց չեն թողնի հերթական անգամ հաշվեհարդար տեսնելու իրենց կողմից անբարեհույս համարվող հայկական տարրի հետ:

Հպանցիկ նշենք, որ, բացի ավանդական հայ համայնքից, Թուրքիայում են գտնվում նաև մեծ քանակությամբ աշխատանքային միգրանտներ Հայաստանի Հանրապետությունից, որոնք չունեն այդ երկրի քաղաքացիություն և որոնց կեցությունն այդ երկրում հաճախ անօրինական է: Անկայուն իրավիճակի առաջացման պարագայում հայության այս շերտը նույնպես կարող է դառնալ թուրքական իշխանությունների և ոչ իշխանական հետադեմ տարրերի բռնության և ցասման թիրախ, ինչի մասին սպառնալիք արդեն իսկ պաշտոնական մակարդակով հնչել է դեռևս 2010թ. Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ, ներկայումս նախագահ Ռեջեփ Էրդողանի կողմից<sup>1</sup>: Հետագայում ևս թուրքական իշխանությունների կողմից հնչեցվել են նման սպառնալիքներ<sup>2</sup>:

Ցավոք, ստեղծված իրավիճակում դժվար է քիչ թե շատ արդյունավետ դեղատոմս առաջարկել Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքների փրկության համար: Մինչ օրս կիրառվել են այնպիսի ավանդական քայլեր, ինչպիսիք են *ա) հայ համայնքների տղամարդկանցից զինված խմբերի կազմավորումը և հայկական բնակավայրերի պաշտպանությունը նրանց հանձնելը (ինչպես լիբանանյան քաղաքացիական պատերազմի, այնպես էլ սիրիական և իրաքյան ճգնաժամերի ժամանակ<sup>3</sup>, բ) Շտապ օգնության և վերականգնումի մարմնի գործունեությունը, գ) հայրենիքից և Սփյուռքի այլ համայնքներից ու համազգային կազմակերպություններից տրամադրված նյութական օժանդակությունը՝ սնունդի, հագուստի, դեղորայքի և այլնի տեսքով*: Ավանդական այս եղանակները, կարևոր լինելով հանդերձ, այնուամենայնիվ, միայն մասնակիորեն են կարողացել փրկել իրավիճակը՝ ընդհանուր առմամբ ի գորու չլինելով կանխելու համայնքների եթե ոչ կազմալուծումը, ապա էական թուլացումը:

Առանձնապես մեծ հույսեր պետք չէ կապել նաև միջազգային խաղաղապահ առաքելությունների կազմում հայկական զինուժի ներգրավման հետ, քանի որ *ա) դրանք տեղակայված են ոչ բոլոր հայաշատ երկրներում (այսօր միայն Լիբանանում կան հայկական խաղաղապահ ուժեր) և բ) նրանց անմիջական գործառնությունների մեջ չի մտնում հայ համայնքների պաշտպանությունը*: Հայկական խաղաղապահ ուժերի ներկայությունը լավագույն դեբում կարող է հոգեբանական նշանակություն ունենալ հայ համայնքների համար:

Հիշյալ հանգամանքներում լավագույնը, ինչ կարող են անել Հայաստանն ու Սփյուռքը, ճգնաժամային իրավիճակներում հայտնված հայության բեկորների՝ դեպի Հայաստան արագ և անվտանգ ուղղորդումն է՝ Արամ Ա կաթողիկոսի՝ «Եթե գաղթ, ապա միայն Հայաստան» ձևակերպման տրամաբանությանը համապատասխան: Այլ կերպ ասած՝ հայրենադարձությունը, ինչը ենթադրում է փոխկապակցված քայլերի հաջորդականություն՝ ճգնաժամային իրավիճակների կանխատեսումից մինչև հայրենադարձների ինտեգրացիա հայաստանյան հասարակության մեջ:

<sup>1</sup> Տե՛ս Էրդողանը սպառնում է արտաքսել հազարավոր հայերի. Հայաստանը դատապարտում է, <http://www.azatutyun.am/a/1986701.html>

<sup>2</sup> Տե՛ս Էրդողանն ակնարկել է Թուրքիայից հայերին արտաքսելու հնարավոր սպառնալիքի մասին, <http://www.ermenihaber.am/am/news/2015/04/15/Էրդողանն-ակնարկել-է-Թուրքիայից-հայերին-արտաքսելու-հնարավոր-սպառնալիքի-մասին/55629>:

Էրդողանը կրկին սպառնացել է արտաքսել հայերին Թուրքիայից, <http://araratnews.am/erdoghaneh-krkin-sparnacel-e-artahsel-thurkhiayic/>

<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, **Գասպարյան Ս.**, Իրաքի «Հավիտեք» հայկական գյուղը ԻՊ-ի ահաբեկիչների դեմ մարտերում, Ազգ. դեկտեմբերի 9:

Հայրենադարձությունը, ըստ կազմակերպվածության աստիճանի, կարելի է բաժանել երկու տեսակի՝ ծրագրված և տարերային: Ծրագրված հայրենադարձությունը պետական մարմինների և սփյուռքյան կառույցների կողմից նախօրոք մշակված և իրականացվող հայրենադարձությունն է: Տարերայինը անհաղթահարելի ուժի (ֆորս մաժորային իրավիճակի) ազդեցությամբ, ինչպիսիք են պատերազմները, տվյալ խմբի նկատմամբ իրականացվող բռնությունների ալիքը, բնական կամ տեխնածին աղետները և այլն, սփյուռքի համայնքներից հայրենակիցների գանգվածային ներհույսն է հայրենիք: Այս դեպքում հայրենադարձները նույն փախստականներն են՝ միայն այն տարբերությամբ, որ գալիս են ոչ թե օտար, այլ հայրենի երկիր:

Հայաստանի նորագույն պատմության ընթացքում եղել են ոչ ծրագրված՝ տարերային հայրենադարձության ալիքներ, որոնցից որպես առավել խոշորներ կարելի է առանձնացնել երեքը.

1. 1989-91թթ. ադրբեջանահայության գանգվածային ներհույսը Հայաստան՝ կապված Բաքվի, Սումգայիթի, Կիրովաբադի և Ադրբեջանի այլ բնակավայրերի հայկական կոտորածների հետ: Հայրենադարձության այս տարերային ալիքի հետևանքով Հայաստանում հայտնվեց ավելի քան 300 հազար ադրբեջանահայություն<sup>1</sup>:
2. 2003թ. իրաքահայության զգալի քանակության ներհույսը Հայաստան՝ պայմանավորված իրաքա-ամերիկյան պատերազմով: Այս ալիքի ժամանակ մոտ 1000 իրաքահայեր հաստատվեցին Հայաստանում<sup>2</sup>:
3. 2011թ.-ից սկսած սիրիահայության՝ զգալի քանակությամբ ներհույսը Հայաստան՝ պայմանավորված սիրիական ճգնաժամի, իսկ ավելի կոնկրետ՝ պատերազմի հետ: Համաձայն ՀՀ Սփյուռքի նախարարության տվյալների՝ սիրիական ճգնաժամի հետևանքով Հայաստանում ապաստանել է մոտ 22 հազար սիրիահայ:

Նկատի ունենալով, որ տարերային հայրենադարձության հավանականությունը ոչ հեռավոր ապագայում բավականին մեծ է, կարծում ենք նպատակահարմար կլինի, որ ինչպես պետությունը՝ ի դեմս ՀՀ-ի և ԱՀ-ի, այնպես էլ Սփյուռքի կառույցները որոշակիորեն պատրաստ լինեն դրան: Դա թույլ կտա մի կողմից՝ սահուն և նվազագույն կորուստներով իրականացնել հայրենադարձությունը (օրինակ՝ հնարավոր ֆորսմաժորային իրավիճակները կանխատեսելու և ժամանակին հայ համայնքներին վտանգավոր շրջաններից դեպի հայրենիք փոխադրելու ճանապարհով), իսկ մյուս կողմից՝ հնարավորինս արագ և արդյունավետ լուծելու հայրենադարձների խնդիրները Հայաստանում: Խոսքը վերաբերում է ինչպես սկզբնական շրջանում հայրենադարձների կենսական պահանջները բավարարելու, այնպես էլ ավելի լայն՝ հայ հասարակության մեջ նրանց լիարժեք ինտեգրման խնդիրներին:

Հարկ է նկատել, որ հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի երկրներից հայրենադարձության հետ կապված քաղաքակրթական, հոգևոր-մշակութային խնդիրներ մեծ հաշվով չկան: Որքան էլ տարբեր, այնուամենայնիվ, թե՛ տեղի հայությունը և թե՛ հայրենադարձները միևնույն՝ հայկական քաղաքակրթության կրողներն են, ունեն միևնույն հոգևոր-մշակութային կերտվածքն ու արժեհամակարգը: Խնդիրներն, ա՛րդ, ունեն հիմնականում նուֆակական, այն է՝ սոցիալ-տնտեսական և սկզբնական շրջանում՝ որոշակիորեն կենցաղային բնույթ, որոնց

<sup>1</sup> Պետրոսյան Զ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Եր., «Գիտություն», 2011, էջ 63:

<sup>2</sup> Փաշայան Ա., Իրաքահայ համայնքը՝ նոր մարտահրավերների առջև, [http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT\\_ID=2385](http://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=2385)

հաղթահարման նպատակով, կարծում ենք, ՅՅ և սփյուռքյան կառույցների կողմից նպատակահարմար կլինի իրականացնել հետևյալ մի շարք գործնական միջոցառումները *ա) հայրենադարձության հիմնադրամի ստեղծում, բ) բարեգործական կազմակերպությունների կողմից հայրենադարձության ծրագրերի իրականացում, գ) ՅՅ և ԱՅ մշակելի հողատարածքների հաշվառում՝ դրանք հայրենադարձներին տրամադրելու նպատակով<sup>1</sup>, դ) հատուկ հարկային քաղաքականություն հայրենադարձների նկատմամբ (հողահատկացումների արդյունքում հողաբաժին ստացած և դրա վրա գյուղատնտեսությամբ զբաղվող սփյուռքահայ ընտանիքներին, ինչպես նաև փոքր բիզնեսով զբաղվողներին ազատում հարկերից 5 տարով), ե) տեղեկատվական աջակցության կենտրոնի ստեղծում<sup>2</sup>, զ) շինարարական քաղաքականության փոփոխություն (էլիտար շենքերի փոխարեն հասարակ և մատչելի շենքերի կառուցում), է) հայրենադարձության առնչվող օրենսդրության բարելավում:*

Ընդհանուր առմամբ տարերային հայրենադարձության արդյունքում Յայաստան եկած սփյուռքահայերի նկատմամբ պետական քաղաքականությունը, հաշվի առնելով վերջինիս սահամանփակ հնարավորությունները, պետք է հենվի ոչ թե պետության կողմից նրանց նյութական և այլ բարիքներ առատորեն տրամադրելու սկզբունքի, այլ նրանց հնարավորություն տալու վրա, որպեսզի իրենք սեփական աշխատանքի և տաղանդի շնորհիվ ստեղծեն այդ բարիքներն իրենց համար, ինչը, վերջիններիս խնդիրները էականորեն լուծելուց բացի, զգալի նպաստ կբերի նաև երկրին:

### Վահրամ Յովյան

#### ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍԱՐՏԱՅՐԱՎԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

**Բանալի բառեր՝** *Սփյուռք, գոյապահպանություն, արտագաղթ համայնքներից, ինքնություն, խառնամուսնություններ, հայրենադարձություն*

Յոդվածը նպատակ է հետապնդում քննության ենթարկել անվտանգության ներկա վիճակը հայկական սփյուռքում և լուծումներ գտնել առկա խնդիրների համար: Ըստ այդմ՝ խնդիր է դրվում ցույց տալ հայ համայնքների առջև ծառայած

<sup>1</sup> Այս դրույթը վերցված է իսրայելական հայրենադարձության փորձից: 19-րդ դարի վերջից մինչև 20-րդ դարի կեսը հրեական պետության բացակայության պայմաններում Պաղեստինի ժողովրդագրական յուրացումը հրեաների կողմից տեղի ունեցավ հրեական կապիտալի միջոցով Պաղեստինում հողատարածքների գնման և հրեա ներգաղթյալներին անվճար տրամադրման միջոցով: Տե՛ս **Հակոբյան Յ.**, Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Եր., «Ատողիկ», 2002, էջ 98-99, 101-102: Նման քաղաքականություն եղել է նաև հայկական փորձում: Խոսքը վերաբերում է Տեղասպանության արդյունքում Արևելյան Յայաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների խնդրին: Ինչպե՛ս լուծվեց Խորհրդային Յայաստանում նրանց խնդիրը, եթե ոչ հողատարածքների հատկացման միջոցով: Կամ մի՞թե նույն կերպ չէր լուծվում 1829-30թթ. Արևմտյան Յայաստանից և Պարսկաստանի կազմում մնացած հայկական բնակավայրերից դեպի ռուսական կայսրության կազմի մեջ մտած Արևելյան Յայաստան գաղթած հայերի խնդիրը: Ինչևէ, այս քաղաքականությունը ենթադրում է *ա) ՅՅ և ԱՅ տարածքներում անմշակ հողերի հաշվառում, բ) դրանցից առավել մշակելի հատվածների առանձնացում, գ) ըստ անդամների թվաքանակի՝ դրանց հատկացում հայրենադարձված ընտանիքներին՝ որքան մեծ է ընտանիքը, այնքան շատ է հողաբաժինը սկզբունքով, դ) հողահատկացումը պետք է լինի սկզբնական շրջանում՝ 5 տարի, անհատույց օգտագործման իրավունքով, իսկ դրանից հետո՝ ՅՅ կամ ԱՅ քաղաքացիություն ձեռք բերելու պարագայում՝ սեփականության իրավունքով:*

<sup>2</sup> ՅՅ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության կողմից դեռևս 2008թ. ստեղծվել և առ այսօր գործում է «Տունդարձ» («Back to Armenia!») համացանցային կայքը ([www.backtoarmenia.com](http://www.backtoarmenia.com)), որը, սակայն, բավարար չէ հայրենադարձների լիարժեք տեղեկատվական ապահովման համար:

հիմնական մարտահրավերները և հանդես գալ որոշակի առաջարկություններով դրանց հանդեպ պետության (ՀՀ, ԱՀ) և սփյուռքյան հաստատությունների քաղաքականության վերաբերյալ:

Հայկական Սփյուռքը ներկայում կանգնած է հոգևոր և ֆիզիկական լրջագույն մարտահրավերների առջև: Ամենավտանգվածը Մերձավոր և Միջին Արևելքի հայ համայնքներն են: Ստեղծված իրավիճակում պետության և Սփյուռքի կառույցների խնդիրն է հնարավորինս պատրաստ լինել տարերային հայրենադարձության նոր ալիքներին:

**Vahram Hovyan**

## **THE SECURITY CHALLENGES OF THE ARMENIAN DIASPORA AND THE PROBLEM OF REPATRIATION**

**Key words:** *Diaspora, survival, migration from communities, identity, mixed marriages, repatriation*

The purpose of the article is to analyze the present security state in Diaspora and to find settlements for existing problems. According to that, our task is to show the main challenges that Armenian communities face and make some suggestions on the policy of the state (the Republic of Armenia and the Republic of Artsakh) and Diaspora organizations towards them.

Diaspora is now facing serious physical and spiritual challenges. The Armenian communities of the Near and Middle East are the most endangered. In the emerged situation the task of the state and Diaspora structures is to be maximally ready to the new waves of sporadic repatriation.

**Ваграм Овян**

## **ВЫЗОВЫ БЕЗОПАСНОСТИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ И ПРОБЛЕМА РЕПАТРИАЦИИ**

**Ключевые слова:** *Диаспора, выживание, эмиграция из общин, идентичность, смешанные браки, репатриация*

Цель статьи – проанализировать нынешнее состояние безопасности в Диаспоре и найти решения для существующих проблем. В соответствии с этим ставится задача показать основные вызовы, стоящие перед армянскими общинами, и представить некоторые предложения относительно политики государства (Республика Армения и Республика Арцах) и организаций Диаспоры по отношению к этим вызовам.

Диаспора нынче стоит перед серьезнейшими физическими и духовными вызовами. Самыми уязвимыми являются армянские общины Ближнего и Среднего Востока. В сложившейся ситуации задача государства и диаспоральных структур – быть по возможности готовыми к новым волнам стихийной репатриации.

## THE CHALLENGES OF POST-CONFLICT STATENESS: THE CASE OF ARTSAKH

*VIOLETTA MANUKYAN*

The establishment of the state is the main aim of each nation as a main mechanism of its safety, prosperity and natural development. In the second half of the 20<sup>th</sup> century after the entry of the UN Charter in force, as a result of significant developments in international law, the people's right to self-determination has been recognized as *erga omnes* and *jus cogens* norm<sup>1</sup> of international law and two active periods of state-building were recorded. The first was the raised decolonization wave in 60-70's, in the result of which more than seventy new states were established<sup>2</sup>, the second was the beginning of the 90's, when after the collapse of the Soviet Union and Yugoslavia more than two and a half dozen countries declared independence. However, the experience of both the countries established on the second half of the 20<sup>th</sup> century and the countries established until then, shows that the establishment of the state does not automatically lead to security, prosperity and ensuring of natural development.

The afore-mentioned especially holds truth for the states of post-Soviet space. The societies of these countries faced unprecedented challenges along the way of formation of statehood and stateness, as neither experience, nor knowledge of previous decades was applicable, at the same time being compelled to cope with another not less complicated transformational process: globalization. But the problem is even more complicated for the group of those countries, which haven't been recognized yet, as there exist additional difficulties for stateness, particularly, conditioned by challenges and consequences of conflict phase, stringent limitation of international relations and its consequences, lack of experience and knowledge of building sovereign state, etc. This bucket of problems is a prolific base for state fragility and failure – as a result imposing a great threat to domestic and regional stability and security, and hence requires precise study. But, instead the issue of post-conflict stateness of non-recognized states hasn't been studied yet and is not assessed by neither segregated field assessment (except for “Freedom in the World”), nor integral assessment models, hence it's required to study what additional challenges and difficulties the prefix ‘non’ brings with it in addition to the existing difficulties of assessment of stateness.

What is certain – the prefix ‘non’ doesn't mean neglect, but indicates another type of state-like entity ‘full’ with people and their problems. One of the major omissions is the neglect of the fact, that lives of people living in those entities is of high value too, and this is what international community, first and foremost European community should pay precise attention to. What is vital to perceive: human rights are human rights, at last human life is human life, no matter if you live in a recognized or non-recognized state. To greater extent it's not about the government, it's about the people who live and get the extensive portion of sufferings. And the vulnerability of non-recognized states to fragility or failure, and international society's neglect towards those issues certainly won't relieve people's sufferings. So the point is not only the study of the problems, but the elaboration of assessment tool, which will help indicating the existing and potential problems and their roots - for their prompt solving.

---

<sup>1</sup>Gros Espiel H., The Right to Self-Determination, UN Doc. E/CN.4/Sub.2/405/Rev.1, UN Sales N E.79.XIV.5 (1980), p. 12. Legal Consequences for States of the Continued Presence of South Africa in Namibia (S.W. Africa) 1971, International Court of Justice 16, 89-90 (Amoun J., separate opinion); Parker K., Neylon L., *Jus cogens: Compelling the Law of Human Rights - Hastings International Law Review*, N 585, 1998); Parker K., *Definition of Self-Determination -First International Conference on the Right to Self-Determination*. United Nations, Geneva, August 2000.

<sup>2</sup>United Nations Judicial Yearbook 1980, pp. 182-183.

Yet another cumbersome issue is the fact, that the highest rate of ethno-national claims was registered in the first half of the 1990s, but the practice affirms their ‘longevity’: in 2009 18 countries in the world were still engaged in ethno-political conflicts for self-determination, in 2018 “Freedom in the World” report - annually represented by “Freedom House” - outlines 2 related and 13 disputed territories, to which we should also add the Republic of Kosovo, which has yet gained only partial recognition. However, the problem is not only driven by numerical data, but has fundamental reasons: as we can assume the development trends of modern geopolitical system objectively contribute to the emergence of new states, but not much is done to ensure the development of those entities – hence prolonging the sufferings of people living in those regions and nearby.

The assessment of stateness level is rather hard process, but non-recognized status brings a bunch of new peculiar problems, which need specific focus and comprehensive study. If neglected, these types of problems tend to flow into greater ones for the non-recognized states themselves and afterwards for the regional security. As it has been previously presented, the authors, who have studies stateness, tend to refer to stateness only from peculiar perspective or just one field (even sub-field), whereas stateness level is feasible to determine, if all the fields of state activity are reviewed, as all of them are highly interconnected, and leaving out any of them may result in distorted image of stateness level. So, we will stay inclined to our comprehensive view of stateness within afore-presented index of integral assessment and will try to overview the stateness level through all the four fields of stateness: political, economic, social and security – trying to distinguish the features, which are especially vital within the connection of stateness level and international recognition (or in this case the absence of it) – outlining the threats that can arise because of post-conflict features and non-recognized status.

**Political field:** Within political factors from the perspective of the connection with the international recognition of notional importance are state legitimacy and government effectiveness. One of the most fragile points in all the non-recognized states are indeed the issues of good governance and government effectiveness. As a rule the governments of these entities find themselves incapable and/or non-reluctant to work on that issue. No doubt, the most difficult are the cases when we have to deal with their non-willingness (reasons and opportunities as described in the previous chapter), as the cases with incapability or lack of knowledge/experience can be easily addressed in the case of international community’s ‘willingness’ to assist.

Nagorno-Karabakh is registering outstanding results in democratic good governance – having established effectively functioning state institutions and civil organizations. However, the established good results and further development are constantly at risk because of the tension across the borderline, as the resumption of large-scale armed conflict would not only stop the development, but also collapse the established through decades effective system (and any other success in any other field).

In the states, where the state institutions haven’t still been fully established, the non-state actors – e.g. warlords, rebels and criminal networks – can take the advantage of lack of state capacity and legitimacy, and offer alternative governance systems. Therefore, the issue of legitimacy is very complex in fragile post-conflict entities - with different sources of legitimacy coexisting, competing and conflicting – and interacting with other sources of power and interest. This further complicates external actors’ effective intervention during the post-conflict period<sup>1</sup>. Especially after armed conflict very often power is focused in the hands of the

---

<sup>1</sup>Paris R., Sisk T., The Contradictions of State Building: Confronting the Dilemmas of Post-War Peace Operations, Routledge, London, 2008.

actors, who, in their turn, control the armed groups<sup>1</sup>, unless the Constitution and relevant laws haven't been adopted and the elections haven't been held on their basis. Hence, in the first phase the key actors are the warlords, whose role in the second phase should gradually decrease, of course, if the process is moving in the right direction. But there are examples, when the warlords are not very eager to relinquish from the attained power and fight for it through all the possible means, e.g. in Nagorno-Karabakh Republic the Self-Defense Forces Commander Samvel Babayan launched an assassination attempt on then president Arkadi Ghukasyan – leaving the president alive and Babayan sentenced to 14 years in prison<sup>2</sup>. This was the last chord of post-conflict features' influence on governing process: afterwards NKR was able to fully 'clean up' and rehabilitate the governance system – showing spectacular results in good governance.

All in all, legitimacy issue is, indeed, a very vulnerable point for all of these states, as neither their sovereignty, nor their elections are perceived as legitimate by the international community. E.g. legitimacy issue in Abkhazia: here a problem is emerged not only with the elections or sovereignty, but the process of declaration of independence itself: the referendum for independence was held after the majority of the population of the region was set to ethnic cleansing and about 250.000 ethnic Georgians were made to leave the region<sup>3</sup>.

**Economic field:** For each state economic factor is undoubtedly of high significance, especially the issues of trade and investments. But the non-recognized states are, in fact, facing almost absence of the afore-named relations, particularly conditioned by stringent limitation of any type of international relations, apparently including the economic relations too. But if we take into account, that these states in this cumbersome plight should develop their economy along with the 'ideal' pack of challenges: reconstruction and rehabilitation of the whole country after the military phase, worldwide deepening of the globalization process, in the context of still "a frozen conflict" the process of extensive and intensive armament and in the case of the countries of Post-Soviet space the pack accrues with the process of Post-Soviet transformation, the international community is, in fact, directly putting these states under the threat of becoming fragile and even failed, as this 'ideal' pack of challenges is too much even for a recognized state – with its already firmly established international relations, what to say about the ones which have a lack of them.

Despite the registered good results in political and social fields, Nagorno-Karabakh still faces issues with economic field, as it is yet not able to compile its state budget and relies on Armenia's aid. The economy is still small, but it is noteworthy, that it is rapidly growing<sup>4</sup>. The budget is mainly comprised of mining (gold, copper), manufacturing industries, agriculture, construction, jewelry and diamond polishing. The government is trying to address the issue with a number of economic rehabilitation projects.

**Social field:** Overall, without ensuring public security, the economy and public services simply cannot work and peace cannot be obtained. Bright examples are Somalia and Afghanistan. But the difficulties of the limited public representation and capacities in fragile post-conflict states facilitate the process of focusing the provision of key activities and

---

<sup>1</sup>Goldstone J., Pathways to State Failure, *Conflict Management and Peace Science*, Vol. 25, Issue 4, 2008, 285-296.

<sup>2</sup> See Grigoryan A., **Armenian Authorities Arrest Former Separatist Karabakh "Defense Minister" on Eve of Parliamentary Elections**, *Eurasia Daily Monitor Volume: 14 Issue: 45*, <https://jamestown.org/program/armenian-authorities-arrest-former-separatist-karabakh-defense-minister-eve-parliamentary-elections/>, (27.02.2018).

<sup>3</sup> Freedom in the World 2009: Abkhazia, <https://freedomhouse.org/report/freedom-world/2009/abkhazia>, (29.02.2018); Ethnic Cleansing on Georgians Resulted from Russian Invasion and Occupation since August 8, 2008, <https://www.osce.org/odihr/34091?download=true>, (28.02.2018).

<sup>4</sup> Artsakh state budget revenues exceed by 5.6% in first quarter 2018, <https://www.panorama.am/en/news/2018/04/12/Artsakh-state-budget-revenues/1932570>, (14.04.2018).

services in the hands of some non-state actors – including international and local non-governmental organizations, inherited power holders and in some cases criminal or armed groups, who are challenging and competing with the elected authorities<sup>1</sup>. But the elected authorities also do not restrain from taking the advantages of misusing the public goods for the sake of their own interests. The afore-mentioned is not acceptable, as state should be able to protect itself from both internal and external threats, while simultaneously being obliged to protect the population – regardless of ethnicity<sup>2</sup>.

Nagorno-Karabakh shows totally different results, as it has established effectively functioning state and social institutions, which do their best to meet the needs and expectations of the society. Year-by-year development of industry is offering new workplaces for the citizens, which is manifested in the low rate of unemployment (about 5%). The work of the government is transparent and has high level of accountability: every year detailed reports on all the state activity and especially expenses are represented (also always available on the official websites). Though there were claims about the privatization of major industries and economic activities by a small group of powerful elite, the government was able to address the following accusations by presenting precise documentation denying all the claims and accusations. The government also tries to stipulate birth rate by granting couples money after marriage and additional funds for the birth of each child<sup>3</sup>.

But at the end of the day one thing is unchangeable: no matter how effectively any type of positive changes and amendments are implemented, the political voice is formed not only through political processes, but also by the mobilization possibilities of society, especially - civil society. In Nagorno-Karabakh civil society is ascribed with important role in state and civil activities, the authorities do not restrain the activity of any civil society organizations.

Yet another important point: where the society is fragmented by conflicts and violence, the possibilities for political voice and social accountability are often eroded. A matter of special concern are the issues of mobilization capabilities of vulnerable and marginalized groups, especially in post-conflict entities. In post-conflict fragile states the continuous disregard of fundamental rights, including the violation of children's rights, gender inequalities and the systematic expulsion of indigenous peoples and vulnerable minority groups, is largely conditioned by the absence of voting rights and legal channels for participation<sup>4</sup>.

**Security field:** The most troublesome issues of non-recognized states are mainly referring to security field. The absence or underdevelopment of international and local control mechanisms over the non-recognized entity, as well as the fact that fragile post-conflict states are likely to have limited authority over some regions within their own territory, becomes a truthfully prolific basis for the emergence and development of illegal groups and activities. As a rule, the process of state-building and afterwards stateness is more visible in the capital, whereas the population of the peripheries typically has a limited and insufficient interaction with the state. As a result, informal or regional authorities are more actively participating in the management of these regions. In such context, not only the traditional model of "top-down"

---

<sup>1</sup>**Batley R., Mcloughlin C.**, Engagement with Non-State Service Providers in Fragile States: Reconciling State-Building and Service Delivery, *Development Policy Review*, 28 (2), 2010, 131-154.

<sup>2</sup>**Sisk T., Wyeth V.**, Rethinking Peace-Building and State-Building in War-Torn Countries: Conceptual Clarity, Policy Guidance, and Practical Implications, Draft discussion note for the OECD DAC International Network on Conflict and Fragility, 2009.

<sup>3</sup> Freedom in the World 2016: Nagorno-Karabakh, <https://freedomhouse.org/report/freedom-world/2016/nagorno-karabakh>, (16.03.2018).

<sup>4</sup>**Migdal J.**, State in Society: Studying How States and Societies Transform and Constitute One Another, Cambridge University Press, Cambridge, 2001.



state-building and governance is put under a risk, but also the threat of non-stability is increasing. At the same time, it's worth mentioning, that even the existence of international control and administration mechanisms isn't yet a guaranty for stability. Even UN, OSCE, EU and NATO efforts weren't sufficient to make Kosovo, located in the centre of Europe – the cradle of democracy, to refrain from being cradle of illicit activities like illegal arms trade, drugs, trafficking. Plus, the issue is more troublesome because of the problem of not only the disability, but first and foremost non-willingness of formal authorities to address the issues, as they may themselves run, have share in illicit activities and/or special agreements with the groups managing such kind of activity.

Another feature of non-recognized states is the high level of military potential – mainly conditioned by the fact, that these states have gone through phase of armed conflict (and not once) with their ‘mother’ states. Of course, the existing military potential may become the primary means of ensuring state sovereignty and national security, in particular in the cases of major failures of international administration bodies and efforts of peace maintenance, especially in the context of current rise of terroristic attacks. However, there are some states, where the size of military forces is bigger comparing to the population, but still it doesn't guarantee the absence of problems associated with stateness in these countries. On the other hand, some recognized states (mainly European) have the lack of military strength, whereas some non-recognized states do not. For instance, in a number of recognized states (e.g. Switzerland) the existence of the armed forces, especially its size, are indeed not vital factor for stateness., as they successfully use other mechanisms, particularly supranational bodies and security guarantees. While observing the question from another angle, it can be stated, that the military potential, which doesn't get precise economic support (especially taking into account that non-recognized states in the majority of cases are not even able to fully ensure themselves their state budgets), can become fragile and quickly lose its significance, as the process of extensive and intensive armament is expensive and at the same time encounters the problem of unceasing equipment upgrade.

Unlike the other three non-recognized states of post-Soviet space, which share the problems with contraband, money laundering (especially in Transnistria), trafficking, sale of drugs and weaponry and functioning of criminal organizations on their territory, Nagorno-Karabakh is suffering not from the security threat coming from inside, but outside: the tension along the cease-fire line and day-by-day increasing threat of war resumption<sup>1</sup>. What about inner threats, the only one is the presence of land mines, which NK forces and HALO Trust continue to clear<sup>2</sup>.

**Violetta Manukyan**  
**THE CHALLENGES OF POST-CONFLICT STATENESS:**  
**THE CASE OF ARTSAKH**

**Key Words:** *Post-conflict stateness, non-recognized states, Artsakh*

The article discusses the challenges of post-conflict stateness issues –representing the case of Artsakh. In fact, these states lack not only international recognition, but also the precise study of their post-conflict stateness issues. Whereas it is of pivotal importance to identify the existing and potential problems. The article presents the challenges in each sphere of state solvency and security threats that the status of being unrecognized carries in itself.

---

<sup>1</sup> Nagorno-Karabakh's Gathering War Clouds, <https://www.crisisgroup.org/europe-central-asia/caucasus/nagorno-karabakh-azerbaijan/244-nagorno-karabaks-gathering-war-clouds>, (21.03.2018).

<sup>2</sup> The HALO Trust, <https://www.halotrust.org/minefreenk/>, (21.03.2018).

**Վիոլետտա Մանուկյան**  
**ՀԵՏԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ .**  
**ԱՐՑԱԽԻ ԴԵՊԸ**

**Բանալի բառեր՝** *Հետկոնֆլիկտային պետության կայացում, չճանաչված պետություններ, Արցախ*

Հոդվածն ուսումնասիրում է հետկոնֆլիկտային պետականության կայացման մարտահրավերները՝ ներկայացնելով Արցախի դեպքը: Ըստ էության, չճանաչված պետությունները ոչ միայն ունեն միջազգային ճանաչման, այլև իրենց հետկոնֆլիկտային պետականության կայացման խնդիրների պատկան ուսումնասիրության պակաս: Այնուամենայնիվ, առկա և հնարավոր խնդիրների վերհանումն առանցքային նշանակություն ունի: Այսպիսով, սույն հոդվածը ներկայացնում է, թե ինչ մարտահրավերներ է չճանաչված կարգավիճակը ծառայում պետականության կայացման յուրաքանչյուր ոլորտի, ինչպես նաև անվտանգության համար:

**Виолетта Манукян**  
**ВЫЗОВЫ ПОСТКОНФЛИКТНОЙ ГОСУДАРСТВЕННОЙ**  
**СОСТОЯТЕЛЬНОСТИ НА ПРИМЕРЕ АРЦАХА**

**Ключевые слова:** *постконфликтная государственная состоятельность, непризнанные государства, Арцах*

В статье рассматриваются проблемы постконфликтной государственной состоятельности на примере Арцаха. Фактически, непризнанные государства испытывают недостаток не только международного признания, но и надлежащего изучения их проблем постконфликтной государственной состоятельности. А это имеет ключевое значение для выявления существующих и потенциальных проблем. В статье представлены проблемы в каждой сфере государственной состоятельности и угрозы безопасности, которые несет в себе непризнанный статус.

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**ԱՐԹՈՒՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

Քաղաքական մշակույթը արժեքների, վարքի կանոնների, գաղափարների և մի շարք այլ հատկանիշների համալիր է, որոնց հիման վրա էլ իր գործունեությունն է կազմակերպում յուրաքանչյուր քաղաքական համակարգ: Քաղաքական մշակույթն ինքնին դինամիկ, շարժուն գործընթաց է և ժամանակի մարտահրավերների հետ կապված՝ փոփոխություններ է կրում: Այդ համատեքստում ՀՀ քաղաքական մշակույթի ուսումնասիրումը երիտասարդության սոցիալականացման խնդիրների համատեքստում հնարավորություն կտա երիտասարդության մակարդակը: Այս տեսակետից անհրաժեշտ է քննարկել ավանդականի և արդիականի, այսինքն՝ արդիականության և ավանդապահության միջև եղած հարաբերակցությունը: Այս երկու գործընթացների համադրումը շատ կարևոր է, քանի որ, ըստ էության, սրանցից մեկն առանց մյուսի պարզապես չի կարող արդյունավետություն ապահովել քաղաքական մշակույթի ինքնադրսևորման պարագայում<sup>1</sup>:

Նշենք, որ քաղաքական մշակույթն անմիջականորեն ազդում է մարդու և առհասարակ հասարակության վարքագծի, մարդու գործունեության կազմակերպման, ներքին և միջազգային քաղաքական երևույթների, բնակչության ընկալման, քաղաքական համակարգերի և ռեժիմների գնահատման, ինչպես նաև հասարակական կյանքի քաղաքական դաշտում տեղ և դեր ապահովելու վրա: Քաղաքական մշակույթի ճիշտ ընկալման, դրա վերաբերյալ գիտելիքների շնորհիվ լայն հնարավորություններ են ընձեռվում քաղաքական կանխատեսումների, գրագետ քաղաքականության հաջող կիրառման համար<sup>2</sup>:

Քաղաքական մշակույթը բազմակողմանի երևույթ է: Այն արձանագրում է մարդկանց քաղաքական գիտելիքների, գնահատումների և գործողությունների մակարդակն ու բնույթը, ինչպես նաև քաղաքական հարաբերությունները կարգավորող հոգևոր արժեքների, ավանդույթների, նորմերի բովանդակությունն ու որակը<sup>3</sup>:

Քաղաքական մշակույթի դերը ՀՀ-ի զարգացման, քաղաքական համակարգի կատարելագործման, ավանդական և արդիական արժեքների զուգամիտման տեսանկյունից շատ կարևոր է, քանի որ հիմնականում հենց դրանով է պայմանավորվում քաղաքական դերակատարների վարքագիծը, մոտեցումները, պատկերացումները, ինչով էլ իմաստավորվում և կանոնակարգվում է քաղաքական գործընթացը: Դրա շնորհիվ հասարակությունը համախմբվում է իր անցյալով, ներկայով և ապագայով, որտեղ էականը ազատական և ավանդական մշակութային արժեքների փոխներդաշնակման անհրաժեշտությունն է<sup>4</sup>: Քաղաքական մշակույթի ճիշտ ընկալման, դրա վերաբերյալ գիտելիքների շնորհիվ լայն հնարավորություններ

<sup>1</sup> Almond G., Verba S., The Civic Culture, Political Attitudes and Democracy in Five Nations, California, 1989, p. 13.

<sup>2</sup> Almond G., Verba S., The Civic Culture, Political Attitudes and Democracy in Five Nations, California, 1989, p. 14.

<sup>3</sup> Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон. Сравнительная политология сегодня. Мировой обзор, Учебное пособие для студентов-политологов. Москва. 2002, с.95.

<sup>4</sup> Մարգարյան Մ.Մ., Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման պայմաններում, «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԿ գիտական հանդես, 2/2017, էջ 116:

են ընձեռնվում քաղաքական կանխատեսումների, գրագետ քաղաքականության հաջող կիրառման համար:

Խոսելով քաղաքական մշակույթի մասին՝ համեմատական քաղաքագիտության տեսաբան Գ. Ալմոնդը գրել է. «Երբ մենք խոսում ենք հասարակության քաղաքական մշակույթի մասին, մենք նկատի ենք ունենում քաղաքական համակարգը, որն արտացոլված է նրա անդամների գիտելիքներում, զգացմունքներում և գնահատականներում»<sup>1</sup>, իսկ երիտասարդության սոցիալիզացիան հենց այդ գիտելիքների, զգացմունքների և գնահատականների դրսևորումն է: Այս դեպքում կարող ենք ասել, որ քաղաքական մշակույթի և երիտասարդության ժողովրդավարացման արդիականացման սոցիալականացումը փոխադարձ համեմատական են միմյանց:

Գ. Ալմոնդը քաղաքական մշակույթը բաժանում է երեք մակարդակի՝ 1) քաղաքական համակարգ, 2) քաղաքական գործընթաց, 3) քաղաքականության մակարդակը: Քաղաքական համակարգի նկատմամբ կողմնորոշման կարևորությունը որոշվում է այն փաստով, որ դրա միջոցով է անցնում քաղաքական համակարգի և ազգի հիմնական հավատարմությունը: Այս համատեքստում որպես օրինակ կարող ենք նշել ազգային հպարտության զգացումը, որը վառ դրսևորվում է այն ազգերի մոտ, որոնք ունեն երկար պատմություն և հայրենասիրության խոր զգացում: Խոսուն օրինակ է Միացյալ Նահանգները, որի պատմության ընթացքում քաղաքական լարվածության և դժվար իրավիճակների ժամանակ մարդիկ միավորվել են միասնական ինքնության և միասնական ազգային պատմության զգացումով: Քաղաքական գործընթացի հաջողությունը նաև կախված է քաղաքական համակարգի լեգիտիմությունից: Լեգիտիմության մակարդակը բարձր է, երբ քաղաքացիները կամովին ենթարկվում են օրենքներին, իսկ երբ նրանք չեն տեսնում օրենքներին հետևելու հիմքերը կամ պարզապես հետևում են դրանց վախի զգացումից ելնելով, լեգիտիմության մակարդակը ցածր է: Այս համատեքստում պետք է նշել, որ ԶԶ-ում տեղի ունեցած «թավշյա հեղափոխությունից» հետո ձևավորվել է մի այնպիսի քաղաքական համակարգ, երբ հասարակությունը պատրաստ է լսել իր ղեկավարին և առաջնորդվել նրա առաջարկած գաղափարներով՝ ի դեմս ԶԶ վարչապետ Նիկոլ Փաշինյանի:

Քաղաքական մշակույթի երկրորդ մակարդակը ներառում է այն, ինչ մարդիկ ակնկալում են քաղաքական գործընթացներից: Տարբեր կառավարման համակարգեր՝ ավտորիտար, տոտալիտար, ժողովրդավարական, ներառում են իրենց բնորոշ արժեքներ և գործընթացներ: Այդ արժեքներն ու գործընթացներն էլ կազմակերպում են այն քաղաքական համակարգը, որի հետ սերտորեն կապված է քաղաքական մշակույթի այնպիսի բաղադրիչը, ինչպիսին է քաղաքացիների պատկերացումը իրենց քաղաքական դերի մասին<sup>2</sup>: Ներկայումս ժողովրդավարության սկզբունքները հիմնականում վայելում են հասարակության մեծամասնության հավանությունը, նույնիսկ եթե դրանց կիրառման ժամանակ հասարակության տարբեր հատվածներ տարբեր դիրքերում են գտնվում: Երկարաժամկետ հեռանկարում, ըստ երևույթին, կարելի է ակնկալել, որ քաղաքական համակարգը կազմակերպելու մասին քաղաքացիների գաղափարները կհամակարգվեն իրական կառավարման կառույցների հետ: Այս դեպքում կարելի է ակնկալել, որ հասարակության շրջանում բարձրանում է քաղաքացիական գիտակցության մակարդակը, ինչպես նաև առկա է մասնակցային քաղաքական մշակույթը քաղաքական որոշումների կայացման և իրագործման գործընթացում:

<sup>1</sup> Almond G., Verba S., The Civic Culture, Political Attitudes and Democracy in Five Nations, California, 1989, p. 17.

<sup>2</sup> Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон. Сравнительная политология сегодня. Мировой обзор, Учебное пособие для студентов-политологов. Москва. 2002, с.96.

Ինչ վերաբերում է Գ. Ալմոնդի կողմից առաջարկված երրորդ՝ քաղաքականության մակարդակին, ապա պետք է նշել, որ տվյալ պետության քաղաքական կյանքն ազդում է հասարակության ընկալումների վրա՝ արդյոք լա՛վ հասարակության մեջ են իրենք ապրում ու արարում, թե ոչ: Զաղաքական դաշտում ակնկալիքները ներառում է նաև քաղաքականության հատուկ միջոցառումների պահանջարկը: Որոշ նպատակներ ու բարեփոխումներ, որոնք կյանքի են կոչվում քաղաքական ճանապարհով, գնահատում է գրեթե ողջ հասարակությունը: Այլ դեպքերում մարդկանց վերաբերմունքը կարող է փոխվել ազգի մասին սեփական պատկերացումներում և պայմանավորված լինել տվյալ երկրում ստեղծված իրավիճակով և նրա մշակութային ավանդույթներով: Չարգացող երկրների բնակիչները ավելի մեծ ուշադրություն են դարձնում հանրային բարեկեցության ապահովման հիմնական ծառայություններին հատկացվող պետական ֆինանսավորման վրա: Մշակված արդյունաբերական հասարակություններն ապահովում են քաղաքացիների առաջնահերթ կարիքների բավարարումը, և նման հասարակություններում մարդիկ կարող են ավելի շատ մտախոզվել կյանքի որակի հետ կապված այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են բնության պահպանությունը կամ արվեստի ոլորտին տրվող պետական աջակցությունը: Կառավարության գործունեության արդյունավետության կարևորագույն ցուցանիշներից մեկը քաղաքացիների քաղաքական սպասելիքները բավարարելու ունակությունն է<sup>1</sup>:

Զաղաքական մշակույթի մասին խոսելիս անհրաժեշտ է անդրադառնալ նաև «մշակութային համերաշխություն» հասկացությանը: Զաղաքական մշակույթը վերն արդեն որակել ենք որպես ազգի բնորոշ հատկանիշ, բայց արժեքներն ու հավատալիքները տարբեր երկրներում, ինչպես նաև տարբեր հասարակություններում կարող են տարբեր լինել՝ պայմանավորված տարբեր ենթամշակույթների գաղափարական տարբերություններով: Այս առումով հանրային քաղաքականության կամ պետական իշխանության լեգիտիմության, քաղաքական համակարգի վերաբերյալ կարծիքները կարող են տարբեր լինել, այսինքն՝ համաձայնություն կամ հակամարտություն:

Անկախացումից բանավեց տարի անց Հայաստանը, ըստ էության, արդեն դուրս է եկել անցումային փուլից, և այժմ արդեն կարևորվում է անցում-համախմբում գործընթացը՝ պետականամետ էլիտա ու հասարակություն, և, որ ավելի կարևոր է, մրցունակ երիտասարդություն դաստիարակելու միտումով: Այստեղ բարձր քաղաքական մշակույթի առկայությունը կօգնի ընթանալ զարգացման ավելի ճիշտ և հեռանկարային ուղիով, ինչն ուղիղ համեմատական է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգությանը:

Որպես պետության զարգացման արժեհամակարգ՝ մեծ արժեք է ներկայացնում համագործակցության մշակույթը, որն անհրաժեշտ է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական գործընթացները կազմակերպելու համար: Սա հատկապես վերաբերում է արտաքին քաղաքական դաշտին: Կարևոր է զգալ քաղաքական ժամանակը և համագործակցության եզրեր կառուցել յուրաքանչյուր պետության հետ, ինչը կարող է նպաստել ՀՀ արդիականացմանը: Այս համատեքստում, սեփական ռազամավարական տեսլականը կառուցելուն համընթաց, կարևոր է ինքնորոշումը:

Զաղաքականությունը և մշակույթը սերտորեն փոխկապակցված են և հանդես են գալիս որպես հասարակության կենսագործունեության կարգավորիչներ: Մշակույթը ներթափանցում է քաղաքականության ոլորտ, ազդում է իշխանության իրականացման եղանակների վրա: Զաղաքականության վրա մշակույթի

<sup>1</sup> Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Далтон. Сравнительная политология сегодня. Мировой обзор, Учебное пособие для студентов-политологов. Москва. 2002, с.101.

ազդեցության հիմնական ուղիներից է անձի քաղաքական սոցիալականացումը, որը հնարավորություն է տալիս նրան մասնակցելու քաղաքական կյանքին, արժեքային համակարգի ստեղծմանը, վարքի չափանիշների ձևավորմանը և այլն: Մարդու մուտքը քաղաքականություն, նրա նախապատրաստումը և ներառումը իշխանական հարաբերություններում իրականացվում է իշխող մշակութային կողմնորոշիչների ու նորմերի, քաղաքական վարքաբանության նմուշների և արժեքների յուրացման գործընթացում: Այս առումով ՀՀ-ում գերակա արժեք է երիտասարդների մասնակցային քաղաքական մշակույթը, որն իրականացվում է իշխող մշակութային կողմնորոշիչների ու նորմերի, քաղաքական վարքաբանության նմուշների և արժեքների յուրացման գործընթացում<sup>1</sup>:

Քաղաքական մշակույթը մասնակցային է դառնում, երբ հասարակությունը ձևավորում է վերաբերմունք և որդեգրում արժեքների փոխանցման սոցիալականացման քաղաքականություն: Հաշվի առնելով քաղաքական սոցիալականացման և կրթության խնդիրը՝ նշենք, որ սոցիալականացումը կարող է լինել ուղղակի և անուղղակի: Այն ուղիղ է, երբ ենթադրում է տեղեկատվության, արժեքների կամ քաղաքականության վերաբերյալ կարծիքների անմիջական փոխանցում: Քաղաքական սոցիալականացումն անուղղակի է, երբ քաղաքական հայացքների ձևավորումը կատարվում է աննկատ, սեփական փորձի ազդեցությամբ: Անհատի աշխարհայացքի ձևավորման վրա ուղիղ կամ անուղղակի կերպով ազդում են ընտանիքը, դպրոցը, այլ հաստատություններ ու կազմակերպություններ, այսինքն՝ միջավայրը, որում նա գտնվում է<sup>2</sup>:

Հաշվի առնելով քաղաքական մշակույթի խնդիրները՝ մենք գալիս ենք այն համոզմունքին, որ կայուն քաղաքական համակարգերում քաղաքական կառույցներն ու քաղաքական մշակույթը փոխադարձաբար ամրապնդվում են: ՀՀ-ում ժողովրդավարության որակի բարձրացման նկատառումներով կարծում ենք, որ անհրաժեշտ է ստեղծել երիտասարդության սոցիալականացման ավելի արդյունավետ վիճակ: Տվյալ դեպքում կարևորվում է համագործակցության մշակույթի զարգացումը, առանց որի կարող են առաջանալ ճգնաժամեր, որոնք էլ դառնում են մշակույթի զարգացման պարտադիր և օրինաչափ աստիճաններ: Ճգնաժամի ելույթունը մշակույթի հոգևոր-իմաստային առանցքի բաղադրիչների վերարժևորումն ու վերադասավորումն է: Դա կարող է հանգեցնել մշակույթի՝ իր նախկին ձևով գոյության վախճանին: Սակայն ճգնաժամը հաճախ ուղեկցվում է նաև մշակույթի ինքնաճանաչման, ինքնագիտակցման, նրա պոտենցիալի, ներքին զարգացման հնարավորությունների բացահայտման հետ: Դա է պատճառը, որ հաճախ ճգնաժամային երևույթները նախորդում են նոր մշակույթի առաջացմանը<sup>3</sup>: Այս համատեքստում վառ դրսևողում էր ՀՀ-ում տեղի ունեցած «թավաշյա հեղափոխությունը», որը բերեց նոր քաղաքացիական գիտակցության, համազգային մտածողության և նոր քաղաքացիական մշակույթի ձևավորման: Իրավամբ պետք է նշել, որ այս ժամանակահատվածում Հայաստանում ձևավորվեց մի նոր՝ համազգային մտածողության և հավաքաբար գործելու մշակույթ:

Քաղաքական նոր մշակույթ ձևավորվելու հետ համատեղ սկսում է ձևավորվել նաև ինստիտուցիոնալ նոր համակարգ՝ քաղաքական էլիտան դառնում է ավելի բաց ու մատչելի հասարակության համար, ինչը նպաստում է քաղաքական

<sup>1</sup> Մարգարյան Ս. Ս. Հայաստանի Հանրապետության քաղաքական մշակույթի ժողովրդավարացման հիմնախնդիրները խորհրդարանական կառավարման պայմաններում.- «Հանրային կառավարում» ՀՀ ՊԿԿ գիտական հանդես, 2/2017 էջ 124:

<sup>2</sup> Գ. Ալմոնդ, Դժ. Քաուզլ, Կ. Տրոմ, Ք. Դալտոն. Сравнительная политология сегодня. Мировой обзор, Учебное пособие для студентов-политологов. Москва. 2002, с.108.

<sup>3</sup> Գուրևիչ Պ. Ս., Մշակութաբանություն, Եր., «Չանգակ-97», 2002թ., 127 էջ:

իշխանության լեգիտիմության բարձրացմանը հասարակության շրջանում: Քաղաքական նոր մշակույթի դրսևորում է, օրինակ, ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի՝ փողոցում մարդկանց հետ քոչարի պարելը, երեխաների հետ պաղպաղակ ուտելը կամ պարզապես փողոցներում միայնակ շրջելը, ինչը երբեմն նույնիսկ զարմանք է առաջացնում հասարակության շրջանում: Միևնույն ժամանակ սա նոր՝ ժողովրդավարական քաղաքական մշակույթի ձևավորման նախադրյալ է ստեղծում ՀՀ-ում:

Այսպիսով՝ քաղաքական մշակույթի դերը որևէ պետության քաղաքական զարգացման գործընթացում շատ կարևոր է: Այն հնարավորություն է տալիս առաջադրելու քաղաքական էլիտայի, երիտասարդության սոցիալականացման և հասարակական կյանքի որակի բարելավման ուղղությամբ պետության քաղաքական զարգացման այլ միտումներ ու զարգացումներ, որոնցով էլ հաճախ պայմանավորված է պետության առաջընթացը և քաղաքական կյանքի կազմակերպումը:

### Արթուր Մարտիրոսյան ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Բանալի բառեր.** *քաղաքական մշակույթ, երիտասարդության քաղաքական սոցիալականացում, մասնակցային քաղաքական մշակույթ*

Հոդվածում քաղաքական մշակույթի ժողովրդավարացումը դիտարկված է ավանդական և արդիական արժեքների զուգամիտման տիրույթներում: Հոդվածում հիմնավորված է տեսակետ, որ հենց ավանդական և արդիական արժեքների զուգամիտմամբ է իմաստավորվում ու կանոնակարգվում քաղաքական սոցիալականացումը՝ որպես քաղաքական համակարգի արդիականացման գործառույթ: Այս համատեքստում երիտասարդության սոցիալականացումը դիտարկված է որպես մասնակցային մշակույթի զարգացման և ազգային անվտանգային քաղաքականության իրականացման պայման: Հոդվածի հեղինակը համոզված է, որ ժողովրդավարական քաղաքական մշակույթը հնարավորություն կտա առաջընթաց ապահովելու քաղաքական էլիտայի, երիտասարդության սոցիալականացման և հասարակության կյանքի որակի բարելավման ուղղությամբ, ինչն ուղիղ համեմատական է ՀՀ ազգային անվտանգության ապահովմանը:

### Artur Martirosyan POLITICAL CULTURE AND THE PROBLEMS OF SOCIALIZATION OF YOUTH IN THE REPUBLIC OF ARMENIA

**Key words:** political culture, political socialization of youth, participatory political culture.

In the article democratization of political culture is observed in the context of convergence of traditional and modern values. The following viewpoint is stressed in the article, according to which it is the convergence of traditional and modern values that gives meaning to and regulates the political socialization as a function of modernization of political system. In this context the socialization of youth is observed as a condition of development of participatory culture and realization of national security policy. The author is convinced that democratic political culture will

provide the opportunity to make substantial progress in the improvement of political elite, socialization of youth and quality of life of the society, which are directly proportional to the national security of the Republic of Armenia.

**Արտուր Մարտիրոսյան**  
**ПОЛИТИЧЕСКАЯ КУЛЬТУРА И ВОПРОСЫ СОЦИАЛИЗАЦИИ**  
**МОЛОДЕЖИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

**Ключевые слова:** *политическая культура, социализация молодежи, политическая культура участия*

В статье демократизация политической культуры представляется в конвергенции традиционных и современных ценностей. Статья основана на представлении о том, что именно с конвергенцией традиционных и современных ценностей политическая социализация приобретает смысл и регулируется как функция модернизации политической системы. В данном контексте социализация молодежи рассматривается как условие развития культуры участия и осуществления политики национальной безопасности. Автор статьи убежден, что демократическая политическая культура даст возможность обеспечить прогресс в направлении развития политической элиты, социализации молодежи и повышения качества жизни общества, что прямо пропорционально национальной безопасности Армении.



## ԵՐԻՏԱՍԱՐԴՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ

### ԳԱՌՆԻԿ ԳՎՓՈՅԱՆ

Հայ ժողովրդի պատմության հազարամյակների ընթացքը ցույց է տվել, որ, մշտապես բախվելով տարաբնույթ արտաքին մարտահրավերների, անգամ կանգնելով ինքնության և գոյության կորստի վտանգի առջև, մեր ժողովուրդը կարողացել է դիմագրավել նման սպառնալիքների նաև համազգային համախմբման, միասնական պայքարի արդյունքում, որտեղ յուրաքանչյուրն ունեցել է իր անփոխարինելի դերակատարությունը:

Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական բարեփոխումների առանցքային հիմնահարցը, թերևս, կառավարման համակարգի փոփոխությունն էր. Հայաստանի հանրապետությունը կիսանախագահական կառավարման ձևից անցում է կատարել իշխանավարման խորհրդարանական մոդելի:

Կուսակցությունները խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում հանդիսանում են ժողովրդի իշխանության քաղաքական պատվիրակման շղթայի առաջնային օղակը: Կուսակցություններն այն բանալին են, որով հասարակությունը գործարկում է պետական մեքենայի շարժիչը և ապահովում պետության մեխանիզմի բնականոն գործունեությունը<sup>1</sup>:

Ներկա խորհրդարանական կառավարման պայմաններում կուսակցությունները համարվում են քաղաքական համակարգի անբաժանելի մասը, և այս համատեքստում կարևորվում է հասարակության քաղաքական սոցիալականացման դերի մեծացումը, ինչն արդի քաղաքական համակարգի տրանսֆորմացիայի պայմաններում առավել վառ է արտահայտվում:

Կուսակցության տարաբնույթ սահմանումներ գոյություն ունեն: Քաղաքական գիտության մեջ կուսակցությունը որպես ինստիտուտ դիտարկող մեկնաբանություններից ներկայացնենք Ջ. Սարտորիի և Ս. Դյուվերժեի դիտարկումները, որոնց վրա էլ հենվել ենք տվյալ աշխատանքի հետազոտությունն իրականացնելիս:

Ըստ Ջ. Սարտորիի՝ կուսակցություն է ցանկացած քաղաքական խումբ, որը մասնակցում է ընտրություններին և դրանց արդյունքում կարող է իր թեկնածուներին առաջադրել պետական ինստիտուտներում<sup>2</sup>:

Կուսակցականագիտության հիմնադիր Դյուվերժեն համոզված էր, որ ժամանակակից կուսակցություններն այն կուսակցություններն են, որոնք ձևավորվում են համընդհանուր ընտրական օրենքի հաստատման ժամանակաշրջանում, որը իշխանության լեգիտիմացման և պառլամենտի իրավունքների որակական ընդլայնման միակ միջոցն էր<sup>3</sup>:

Հայաստանում գործող կուսակցությունները դժվար է ներկայացնել որպես դասական իմաստով կայացած, սոցիալական լուրջ հենք ունեցող և հասարակայնորեն ներկայացուցչական ինստիտուտներ: Դա պայմանավորված է հասարակական համակարգի դեռևս անկայուն նկարագրով, այդ ոլորտում տեղի

<sup>1</sup> Силаев В. С., Роль партий в политической системе РФ, стр. 19, <http://cyberleninka.ru/article/n/rol-partiy-v-politicheskoy-sisteme-rossiyskoy-federatsii>.

<sup>2</sup> Сартори Дж. Вертикальная демократия.-Полис, 1993, стр.87-88.

Б.В. Смирнов. Основы политологии. 2013, URL: <http://textbooks.studio/teoriya-politiki-uchebnik/osnovyi-politologii.html>.

<sup>3</sup> М. Дюверже Политические партии, Москва, 2005, стр. 8-9.

ունեցող խմորումներով, սոցիալական խավերի ու շերտերի ոչ հստակ գծագրմամբ, ինչպես նաև ազգային մտածելակերպով՝ անձնավորման հանգամանքը հաշվի առնելով:

Ներկայիս խորհրդարանական կառավարման պայմաններում ժամանակակից քաղաքականությունն պետք է ենթադրի ոչ թե առանձին մարդկանց, անհատների, այլ հասարակական ուժերի պայթյալ:

Արդի հասարակական և քաղաքական իրավիճակում կարևոր տեղ է զբաղեցնում իշխանություն-հասարակություն երկխոսությունը: Քաղաքական կուսակցությունները այս երկխոսության գլխավոր օղակն են:

Քաղաքական կուսակցությունները հատկանշական դերակատարություն ունեն քաղաքական սոցիալականացման գործընթացներում: Նրանք (քաղաքական կուսակցությունները) փորձում են վեր հանել առկա հրամայականները, որոնք թույլ կտան մոբիլիզացնել համախոհների աջակցությունը: Կուսակցությունների լիդերները և բանախոսները իրենց հանրայնությունն ապահովում են առավել սուր քաղաքական հարցերում ինֆորմացիայի անընդհատ հոսքով: Ժողովրդավար հասարակարգերում կուսակցությունները, մասնակցելով ընտրություններին, հաշիվ են տալիս իրենց կատարած գործունեության համար և քննարկում պետության քաղաքական ապագան:

Մրցակցային քաղաքական համակարգերում քաղաքական սոցիալականացումը կարող է ունենալ նաև բաժանարար ազդեցություն: Կուսակցությունները կարող են օգտագործել խմբերի ազգային-պահպանողական, էթնիկական, կրոնական հայացքները<sup>1</sup>:

Քաղաքական սոցիալականացումը դիտարկելով որպես կուսակցության գործառույթ՝ պետք է հաշվի առնել, որ կուսակցությունները մի կողմից քաղաքացիական հասարակության, մյուս կողմից քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտ են: Այս համատեքստում քաղաքական կուսակցությունների գործառույթների մեջ առանձնահատուկ դիրք է զբաղեցնում քաղաքական սոցիալականացումը, ինչը կոչված է անհատի մեջ այնպիսի որակներ ձևավորելու, որը նրան կադապտացնի տվյալ քաղաքական կոնյուկտուրային և կրողի որոշակի գործառույթների իրականացման<sup>2</sup>:

Քաղաքական սոցիալականացումը, պայմանավորված քաղաքական ժամանակի առանձնահատկություններով, երկրի զարգացման առանձնահատկություններով, պատմական հնարավորություններով, մտածելակերպով, հիշողությամբ, տարաբնույթ սահմանումներ ունի: Այնուամենայնիվ, տարաբնույթ սահմանումների հետ մեկտեղ, շատ գիտնականներ եկել են այն եզրահանգման, որ քաղաքական սոցիալականացումը անհատի քանակական և որակական բնութագրերի համալիր փոփոխությունն է, որը պայմանավորված է նրա քաղաքական գիտակցության, վարքի, կողմնորոշման փոփոխմամբ: Այս համատեքստում Կ. Վ. Ռուբչովսկին քաղաքական սոցիալականացումը բնութագրում է որպես անհատի կողմից քաղաքական և սոցիալական փորձի ինքնաիրացում, այնպիսի փորձի, որը ձեռք է բերվել հասարակության կողմից և կենտրոնացվել է ձևավորված նորմերի, արժեքների, ավանդույթների, ինչպես նաև անհատական դրսևորումների մեջ<sup>3</sup>:

<sup>1</sup> Г. Алмонд, Дж. Пауелл, К. Стром, Р. Далтон Сравнительная политология сегодня, Москва 2002, С. 114-115.

<sup>2</sup> Զ. Շափաղայան, Քաղաքական սոցիալականացման գործընթացը, Երևան, 2000, էջ 197-199: URL: <http://textbooks.studio/teoriya-politiki-uchebnik/osnovyi-politologii.html>.

<sup>3</sup> Рубчевский К.В. Социализации личности: интериоризация и социальная адаптация // Общественные науки и современность. 2003. № 3. С. 149.

Քաղաքական գործընթացներում մարդկանց ներգրավվածության աստիճանը միանշանակ չէ: Հասարակության որոշ անդամներ ակտիվորեն մասնակցում են քաղաքական կյանքին, մյուսներն առանձնապես հետաքրքրություն չեն դրսևորում քաղաքական իրադարձությունների նկատմամբ, ոմանք էլ ունեն հստակ քաղաքական դիրքորոշում՝ ոչ ակտիվ, ոչ էլ պասիվ մասնակցություն են ունենում քաղաքական կյանքին: Այս գործընթացները պայմանավորված են անձի տարիքային և անհատական ընդունակություններով, սոցիալական դրությամբ, ընտանեկան ավանդույթներով, կրթությամբ, քաղաքական կուլտուրայով, քաղաքական գիտակցության առանձնահատկություններով և այլն:

Քաղաքագիտության մեջ գոյություն ունեն քաղաքական դերերի դասակարգման տարբեր մոտեցումներ: Այս առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ռուս քաղաքագետ Վ. Ա. Մելնիկի դասակարգումը.

- Հասարակության շարքային անդամ և քաղաքացի, որը քաղաքականության վրա ոչ մի ազդեցություն չունի, ակտիվ չէ, բացառապես հանդիսանում է քաղաքականության ներգործության առարկա:
- Քաղաքացի, որը որևէ հասարակական կազմակերպության կամ շարժման անդամ է և անուղղակիորեն ներգրավված է քաղաքական պրակտիկայում:
- Քաղաքացի, որն ընտրական մարմնի կամ քաղաքական կազմակերպության անդամ է և նպատակամղված ու սեփական կամքով անմիջականորեն մասնակցում է քաղաքական կյանքին:
- Հասարակական գործիչ և մասնավորապես քաղաքական գործիչ:
- Արիեստավարժ քաղաքական գործիչ, ում համար քաղաքական գործունեությունը ոչ թե գոյության աղբյուր է, այլ կյանքի իմաստ:
- Քաղաքական լիդեր, որն անվիճելիորեն ընդունվում է որպես հեղինակություն<sup>1</sup>:

Չի կարելի մոռանալ այն փաստը, որ ոչ միայն հասարակությունն է կերտում մարդուն՝ «homo politicus»-ին, այլև մարդն է ստեղծում հասարակություն, ինքն իրեն և շրջապատին: Անձը կարող է հանդես գալ ինչպես քաղաքականության օբյեկտի, այնպես էլ սուբյեկտի դերում:

Ժամանակակից հասարակության մեջ մեծ կարևորություն ունեն քաղաքական սոցիալականացման երկու հիմնական մակարդակները.

1. Մակրոմակարդակը, այսինքն՝ ինչպես է ընթանում անձի մուտքը քաղաքականություն քաղաքական համակարգերի շրջանակներում, ինչպիսի գործոնների ազդեցությամբ է ընթանում քաղաքական վարքի և գիտակցության ձևերի ստեղծումը, ինչպես են տարբեր նորաստեղծ կուսակցություններ, մտնելով այս կամ այն երկրի քաղաքական համակարգի մեջ, անդամագրում նոր անդամների, ինչպես է ձևավորվում քաղաքական գիտակցությունը գաղափարախոսության ազդեցությամբ:

2. Միկրոմակարդակը, այսինքն՝ անձի ներգրավումը որևէ կոնկրետ քաղաքական կառույցի մեջ, նրա կողմից որոշակի դերերի, վարքի մոդելների յուրացումը<sup>2</sup>:

Որպես քաղաքական կարևորագույն գործոն՝ պետք է նշել քաղաքական գիտակցությունը, որն անբակտելիորեն կապված է քաղաքական

<sup>1</sup> Յ. Շափաղաթյան, Քաղաքական սոցիալականացման գործընթացը, Երևան, 2000, էջ 73-79:

URL: <http://textbooks.studio/teoriya-politiki-uchebnik/osnovyi-politologii.html>.

<sup>2</sup> Յ. Շափաղաթյան, Քաղաքական սոցիալականացման գործընթացը, Երևան, 2000, էջ 197-199:

URL: <http://textbooks.studio/teoriya-politiki-uchebnik/osnovyi-politologii.html>.

սոցիալականացման հետ: Զաղաքական գիտակցությունը ծագել է քաղաքականության և քաղաքական հարաբերությունների հետ միասին: Զաղաքականությունը յուրահատուկ բնագավառ է, որտեղ ի հայտ են գալիս խմբերի արմատական շահերը, նրանց նպատակները և խնդիրները մյուս դասերի կամ սոցիալական խմբերի նկատմամբ: Զաղաքական գիտակցությունն ունի ոչ միայն հասարակական, այլև անձնական բնույթ, որը ոչ լրիվ և ոչ միշտ է համապատասխանում առաջինին, քանի որ յուրաքանչյուր մարդ անհատականություն է: Այստեղ կարևորվում է քաղաքական սոցիալականացման սուբյեկտների նպատակամղված գործունեությունը, որի արդյունքն անհատականության ձևավորումն է և գիտակցության բարձրացումը: Ասվածից կարելի է եզրակացնել, որ քաղաքական գիտակցությունը մարդու հոգևոր արժեքների հիմքն է, որի շնորհիվ նա կարողանում է գնահատել սոցիալական գործընթացները, իր և ուրիշների արարքները իր և հասարակության տեսակետից ընդհանրապես:

Վերջին տարիներին կուսակցությունների ազդեցությունը ողջ հասարակության և մասնավորապես երիտասարդների վրա զգալի աճել է: Գնահատելի է դառնում երիտասարդության քաղաքական ուժը: Զաղաքական կուսակցությունների համար երիտասարդության ներգրավումը յուրահատուկ և ունիվերսալ տեխնոլոգիա է համարվում, որովհետև երիտասարդները կարևորվում են հենց որպես ընտրական ներուժ և ընկալվում որպես ապագայի խորհրդակիշ:

Երիտասարդության քաղաքական սոցիալականացման գլխավոր ցուցանիշ է համարվում կուսակցությունների տարիքային կազմը, ինչպես նաև այն, թե որքան հաճախ է «թարմ արյուն» ներարկվում դրանց մեջ: Երիտասարդության առավել ակտիվ և ինտելեկտուալ կազմը ուսանողներն են: Նրանք են արտահայտում հասարակական տարբեր շերտերի և խմբերի քաղաքական պահանջմունքները, շահերն ու գաղափարները:

Երիտասարդության սոցիալականացման գործընթացի յուրահատկությունը հոգեբանական որոշակի դրսևորումներն են. պատանի անհատի ներաշխարհին ավելի իդեալականացված է՝ անձնական և գաղափարական սեփական պատկերացումներով: Շատերի մոտ այս գործընթացները խաթարված են լինում՝ պայմանավորված կյանքի ընթացքում հանդիպած ճգնաժամերով (հասարակության կողմից մերժված լինելը, անվստահությունը ավագ սերնդի հանդեպ): Ինտելեկտուալ զարգացման նոր փուլում քաղաքական գործընթացներն այլ կերպ են ընկալվում: Այդ պատճառով այս փուլում սոցիալականացման գործընթացն ավելի է կարևորվում<sup>1</sup>:

Երիտասարդությանը քաղաքական գործընթացներում ներգրավելու յուրահատուկ ձև է երիտասարդական խորհրդարանը, որը թույլ է տալիս երիտասարդներին ներգրավված լինել քաղաքական գործընթացներում, երիտասարդության վերաբերյալ օրենքների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկում իրականացնել և հարմարվել միջավայրին:

Հաջորդ ձևը կուսակցությունների կողմից ոչ ֆորմալ կրթության միջոցով երիտասարդների սոցիալականացումն է. այս առումով ևս զգալի փոփոխություններ ունենք այս տարիների ընթացքում:

Ընդհանրացնելով վերև ասվածը՝ պետք է նշել, որ քաղաքական կյանքին մասնակցությունը նպաստում է անհատի մեջ քաղաքացիական հատկանիշների ձևավորմանը և պայմաններ է ստեղծում, որ անհատն իրեն զգա պետության լիարժեք քաղաքացի, այլ կերպ ասած՝ լիարժեք սոցիալականացված անձ:

<sup>1</sup> Данилин П. Новая молодежная политика 2003-2005. М., С. 292.

**Գառնիկ Գափոյան**  
**ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ**  
**ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ**

**Բանալի բառեր՝** *քաղաքական սոցիալականացում, քաղաքական կուսակցություն, երիտասարդություն, երիտասարդական խորհրդարան, անվտանգություն, անձ*

Սույն հոդվածում ուսումնասիրվել է երիտասարդության քաղաքական սոցիալականացման գործընթացը՝ որպես կուսակցական համակարգի գործառույթ: Խորհրդարանական կառավարման պայմաններում մեծացել է քաղաքական կուսակցությունների դերը, հետևաբար անհրաժեշտություն է առաջացել ուսումնասիրելու կուսակցությունների գործառույթը և հենց սոցիալականացումը դիտարկելու որպես կուսակցությունների գերագույն գործառույթներից մեկը: Հոդվածում քաղաքական կուսակցությունները ներկայացված են որպես քաղաքական համակարգի առանցքային ինստիտուտ: Որպես այդպիսին՝ կուսակցությունները երիտասարդության քաղաքական սոցիալականացման կարևոր դերակատարներ են: Ներկայացվել է քաղաքական գործընթացներում երիտասարդության ներգրավման յուրահատկությունը և հիմնական ձևերը:

**Garnik Gapoyan**  
**THE POLITICAL SOCIALIZATION OF THE YOUTH**  
**AS A FUNCTION OF THE PARTY SYSTEM**

**Keywords:** *political socialization, political party, political socialization of the youth, youth parliament, person*

The article researches the process of the political socialization of youth as a function of the party system. Within the parliamentary governance, the role of political parties has increased, and therefore there is a need to explore the function of the political parties and consider the socialization as one of the main functions of parties. In the article political parties are presented as the key institutions of political system. Hence, parties are the important role players contributing to the political socialization of young people. The article also presents the peculiarity and basic forms of youth involvement in political processes.

**Гарник Гапоян**  
**ПОЛИТИЧЕСКАЯ СОЦИАЛИЗАЦИЯ МОЛОДЕЖИ КАК ФУНКЦИЯ**  
**ПАРТИЙНОЙ СИСТЕМЫ**

**Ключевые слова:** *политическая социализация, политическая партия, политическая социализация молодежи, молодежный парламент, личность*

В статье рассматривается процесс политической социализации молодежи в качестве функции партийной системы. В контексте парламентской формы правления увеличивается роль политических партий. Поэтому возникает необходимость изучения функций политических партий, рассматривая социализацию как одну из основных функций партий. В статье политические партии представлены в качестве ключевого института политической системы. Следовательно, партии являются важными акторами, которые имеют значительный вклад в социализацию молодежи. Статья также представляет особенности и основные формы вовлечения молодежи в политический процесс.

## ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ PR-Ը ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

### ՆԱՏԵԼԼԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

**Public Relations-ը** անգլերեն եզրույթ է, որը թարգմանաբար նշանակում է Հանրային հարաբերություններ: Այս եզրույթի ամբողջական սահմանումը տալիս է անգլիացի Սեմ Բլեյքը համաձայն որի՝ «Հանրային կապերը գիտություն է, մշակույթ, մեթոդների, հնարների, տեխնոլոգիաների միաձուլում՝ ուղղված արտաքին միջավայրի հետ փոխհամաձայնության հասնելուն, որը հիմնվում է ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության վրա:<sup>1</sup>

Ժամանակակից պայմաններում հասարակական ու պետական ինստիտուտների գործառույթներում և յուրաքանչյուր անհատի կյանքում տեղեկատվությունը վճռորոշ նշանակություն ունի: Տեղեկատվայնացումը տանում է դեպի համաշխարհային միասնական տեղեկատվական տարածության ստեղծում, որի շրջանակներում էլ տեղի է ունենում տեղեկատվության կուտակում, մշակում ու փոխանակում:

Գ. Պոչեպցովը նշում է, որ քաղաքակրթական փոփոխությունները 20-րդ դարում հանգեցրին ժամանակակից քաղաքակրթության տեղեկատվական քաղադրիչի այնպիսի կարգավիճակի, երբ այլևս դժվար է թաքցնել տեղի ունեցող իրադարձություններն ինչպես ամբողջ աշխարհից, այնպես էլ սեփական ժողովրդից, միևնույն ժամանակ դրսևորում է կառավարությունների հարաճուն կախվածություն բնակչությունից՝ զգալի չափով հենվելով որոշակի տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների վրա:<sup>2</sup>

Այս համատեքստում կարևոր ենք համարում անդրադառնալ Արցախի Հանրապետության պետական կառավարման համակարգում հանրային կապերի գործունեության առանձնահատկություններին և զարգացման միտումներին:

ԽՍՀՄ փակ, կայսերապաշտական քարոզչական քաղաքականությունից հետո ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում հանրության հետ թափանցիկ աշխատանքը հարթ չի ընթանում: Թեև խորհրդային ժամանակաշրջանում ԼՂԻՄ Գերագույն Խորհրդում կար մամլո ծառայությունը, սակայն այն դուրս էր այսօրվա մեր պատկերացումների շրջանակներից:

### **Ներքին տեղեկատվական հոսքեր**

- 1. Պետություն - հասարակություն կապ**
- 2. Հասարակություն - պետություն կապ**

Պետություն և հասարակություն կապում գոյություն ունեն երեք կառուցվածքային տարրեր՝ սուբյեկտ, խողովրդակ (կանա), օբյեկտ: Առաջինի պարագայում սուբյեկտը պետությունն է, խողովակը ՉԼՄ-ները և սոցիալական մեդիան, իսկ օբյեկտը հասարակությունը: Այժմ փորձենք դիտարկել թե ինչպես է Արցախում գործում այս եռամիասնության փոխհամագործակցությունը:

Ներկայումս Արցախում ոչ բոլոր պետական մարմիններին է հաջողվում արդյունավետ կերպով հանրության լայն շերտերի հետ ապահովել երկկողմանի կապ՝ ինչի արդյունքում բախվում ենք հասարակության թույլ իրազեկվածության

<sup>1</sup> Сэм Блек, Паблик рилешнз. Что это такое? Москва, 1990, стр. 17

<sup>2</sup> Почепцов Г. Психологические войны, « Ваклер» 2000.

հիմնախնդիրն: Մինչդեռ, ինչպես գիտենք, ժամանակակից աշխարհում սոցիալական մեդիան և տեղեկատվական տարբեր հարթակներ թույլ են տալիս հասարակության հետ մտնել ուղիղ երկխոսության մեջ՝ զգալիորեն բարձրացնելով պետական համակարգի արդյունավետությունը: Ներքին լսարանին տեղեկատվությամբ ապահովման գործում մեծ անելիքներ ունեն ՉԼՄ-ները և սոցիալական մեդիան, ի դեպ ոչ միայն Ֆեյսբուքը, որի հիմնական թիրախը տեղական լսարանն է այլ նաև Թվիթերը, Տելեգրամը Ռեդիոը և այլն:

Փորձենք դիտարկել **ԱՅ Նախագահի, պետական նախարարի աշխատակազմերի և նախարարությունների ստորաբաժանումների** հանրային կապերի հիմնական գործառույթները:

Արցախի Հանրապետության **Նախագահի աշխատակազմը** ունի Տեղեկատվության գլխավոր վարչություն, որը **ըստ Նախագահի պաշտոնական կայքէջի՝**

- Լուսաբանում է Նախագահի և աշխատակազմի գործունեությունը, ապահովում է Նախագահի և աշխատակազմի կապը զանգվածային լրատվության միջոցների հետ:
  - Կազմակերպում է Նախագահի մամուլի ասուլիսները, հարցազրույցները, ինչպես նաև լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ հանդիպումները:
  - Նախապատրաստում է Նախագահի ելույթները, դիմումները, ուղերձները և նամակները:
  - Նախագահին և աշխատակազմի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում տեղեկատվության բնագավառում քաղաքականության իրականացման վերաբերյալ:
  - Համացանցում կազմակերպում և պահպանում է Նախագահի կայքէջը:
- Բացի նշված ստորաբաժանումից Նախագահն ունի մամուլի խոսնակ, ով՝
- Ներկայացնում է ԼՂՀ Նախագահի պաշտոնական տեսակետները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա պետությունների տեղեկատվության միջոցներին:
  - Անցկացնում է ասուլիսներ և ճեպագրույցներ:
  - Նախագահի հանձնարարությամբ հանդես է գալիս հայտարարություններով, պարզաբանումներով, հերքումներով:<sup>1</sup>

Համաձայն ԱՅ պետական նախարարի աշխատակազմի կանոնադրության 3-րդ կետի ԱՅ պետական նախարարի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը՝

- Կազմակերպում է՝ Հասարակայնության հետ կապի ապահովումը՝ զանգվածային լրատվության միջոցներում քաղաքացիների կողմից ԱՅ պետական նախարարին ուղղված հարցերին և բարձրացված ահազանգերի արձագանքում
- Իրականացնում է՝ զանգվածային լրատվության միջոցների հետ ամենօրյա աշխատանք, օրվա մամուլի, հեռուստահաղորդումների լրաբաղ և դիտարկում,
- Նախապատրաստում է՝ Արցախի Հանրապետության պետական նախարարի ելույթների, ուղերձների համար անհրաժեշտ նյութերն ու տեղեկատվությունը:
- Ապահովում է՝ Արցախի Հանրապետության պետական նախարարի գործունեության ամենօրյա լուսաբանումը (այդ թվում՝ համացանցի միջոցով)
- Համագործակցում է տարբեր գերատեսչությունների լրատվական ծառայությունների հետ,

<sup>1</sup> ԱՅ Նախագահի պաշտոնական կայքէջ՝

<http://www.president.nkr.am/am/office/officeStructure/#as7>

- Արտասահմանյան երկրների մամուլի և լրատվական միջոցներին ապահովում է Արցախի Հանրապետության պետական նախարարի գործունեությանը վերաբերող նյութերով<sup>1</sup>:

Անդրադառնալով Արցախի Հանրապետության նախարարություններին, պետք է ցավով նշենք, որ դեռևս ոչ բոլոր գերատեսչություններն ունեն հանրային կապերով զբաղվող համապատասխան ստորաբաժանումներ: Հիմնականում այդ գործառույթները իրականացվում են տվյալ նախարարի խորհրդակցականի, օգնականի կողմից: Վերջիններս էլ կարգված են որպես մամուլ պատասխանատուներ: Գրեթե բոլոր գերատեսչությունները այժմ ունեն պաշտոնական կայքէջեր, ֆեյսբուքյան էջեր, որոնք, սակայն ոչ բոլոր դեպքերում են արդյունավետ կերպով աշխատում:

Խոսելով պետական մարմինների մամուլ ծառայությունների և ՉԼՄ-ների հետ փոխգործակցության մասին պետք է նշենք, որ բոլոր պետական կառույցների միջև գործում է լրագրողների հավատարմագրման օրինակելի կարգ, որով սահմանված ընթացակարգով լրագրողները լուսաբանում են մամուլի ասուլիսները, խորհրդակցությունները և հանդիպումները: Հաստատված է պաշտոնական հաղորդագրությունների ուղարկման ձևաչափ, համաձայն որի բոլոր վերոհիշյալ նախարարությունները ՉԼՄ-ների հետ ապահովում են ընթացիկ իրադարձային տեղեկատվությամբ:

## **2. Հասարակություն և պետություն կապ**

Բրիտանացիները, ովքեր համարվում են PR տեխնոլոգիաների հայրերից, նշում են՝ Կառավարությունը ոչ միայն պետք է արդյունավետ աշխատի, այլև բոլոր քաղաքացիները պետք է համոզված լինեն, որ այն արդյունավետ է աշխատում»: Հենվելով վերոհիշյալ սկզբունքի վրա՝ պետության և քաղաքացիների միջև փոխազդեցության արտացոլումը պետք է զգալի լինի ինչպես տեղեկատվություն ստանալու, այնպես էլ որոշումների կայացման գործընթացում հանրային կարծիքը հաշվի առնելու գործում: Հասարակություն - պետություն կապում տեսնում ենք դերերի փոփոխություն, որովհետև հասարակությունը օբյեկտից միանգամից վեր է ածվում սուբյեկտի: Հասարակության կարծիքի պարբերական հավաքագրումը, վերլուծումը և հաշվի առնումը պետության կողմից ամրապնդում է ինչպես քաղաքացիական հասարակության, այնպես էլ պետության հիմքերը: Ելնելով դրանից ակնհայտ փաստ է դառնում, որ ժողովրդավարական ուղի ընտրած պետություններին ոչինչ չի մնում, քան բաց և թափանցիկ կառավարման մոդելի ընտրությունը: Պետական կառույցներում PR դերի նշանակության գնահատումը թույլ է տալիս բարձրացնել սույն կառույցի վստահությունը, ինչին կնպաստի ներքևից վերև հասնող ազդակները:

Ընդգծելով Արցախի Հանրապետության կառավարության գործունեության թափանցիկության առանձնահատկությունները պետք է նշենք, որ պետությունը հանձնիս տարբեր նախարարությունների իրականացնում է կարճաժամկետ և երկարաժամկետ մի շարք ծրագրեր, որոնք ուղիղ և անուղղակի կերպով կապված են հասարակության լայն շերտերի հետ և ուղղված են այս կամ այն խմբի շահերի, պահանջների բավարարմանը:

Սակայն, ցավով պետք է նշենք, որ դեռևս ոչ բոլոր ծրագրերն են հավոր պատշաճի ներկայացվում, ինչի արդյունքում հասարակության մոտ ձևավորվում է թյուր ըմբռնում, տեղեկատվության պակաս, որը թուլացնում է կապը պետության և հասարակության միջև: Ժամանակակից տեղեկատվական հոսքի պայմաններում

<sup>1</sup> ԱՅ պետական նախարարի աշխատակազմի կանոնադրություն:



պետությունը ինքը պետք է շահագրգռված լինի պետական տարբեր մարմինների միջոցով առավելագույնս, թույլատրելի սահմաններում համակարգել , իրազեկել երկրում տիրող իրավիճակի մասին : Նման աշխատելուճը թույլ կտա ձևավորել ամուր քաղաքացիական հասարակություն, ձեռք բերել վստահություն : Այս գործառույթների իրականացումը կբարձրացնի PR ծառայությունների կամ հասարակության և տեղեկատվության հետ կապերի բաժինների դերը, իսկ կառավարման համակարգում նորագույն տեխնոլոգիաների ներդրումը թույլ կտա կիրառել նոր գործիքակազմ :

Չպետք է մոռանանք նաև , որ պետական մարմինների , կառույցի ղեկավարի դրական իմիջի, փոխվստահության մթնոլորտի ձևավորմամբ միայն կարող ենք խուսափել հասարակության և պետության միջև հնարավոր լարվածությունից : Յենց այս գիտակցմամբ են Արցախի իշխանությունները ընտրել ժողովրդավարական զարգացման ուղին :

### ***Արտաքին տեղեկատվական հոսքեր***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախի մասին արտաքին պատկերացումները ձևավորվում են հիմնականում հակամարտության համատեքստում, կարևոր ենք համարում ընդգծել, որ այս կարծրացած պնդումը պետք է չեզոքանա, որտեղ մեծ անելիքներ ունեն ինչպես պետական կառույցները, այնպես էլ տեղական և ոչ տեղական լրատվամիջոցները, և սոցիալական մեդիան, քանի որ Արցախը հակամարտություն չէ ,այլ տարածք որտեղ կյանքի բոլոր կարևորագույն ոլորտներում աշխատում և ստեղծագործում են կենսունակ մարդիկ :

Պետությունը որպես սուբյեկտ տարբեր խողովակներով ` ՉԼՄ-ների, սոցիալական մեդիայի միջոցով պետք է հիմնական օբյեկտին` արտաքին լսարանին , պարբերականորեն ներկայացնի իր կողմից իրականացվող աշխատանքները : Այստեղ հիմնական գործառույթը պատկանում է սոցիալական մեդիային , որը լուրջ ռեսուրս է փոքր ծախսերով մեծ լսարաններին հասնելու համար :

Ինչպես տեսնում ենք ներկայում արդյունաբերության, բարձր տեխնոլոգիաների զարգացման հետ համընթաց տեղի են ունենում տեղեկատվության համաշխարհայինացման գործընթացներ : Ժամանակի պահանջների հետ համընթաց քայլելու համար պետք է մեր բոլորիս ջանքերը ուղղված լինեն միջազգային հանրությանը Արցախը որպես պետություն ներկայացնելուն :

Որպես ամփոփում կցանկանայի նշել, որ Արցախը քայլում է Հայաստանի հետ միասին : Յետևաբար ազգային կայացած պետության կառուցման ճանապարհին մեկ մեծ անելիքներ ունենք նաև տեղեկատվական դաշտում : Մասնագետների վերապատրաստման, անհրաժեշտ մարդկային և տեխնիկական միջոցների ապահովման առկայության պայմաններում հնարավոր կլինի լուծել մեր առջև ծառայած խնդիրները : Ազգային անվտանգության նկատումներից ելնելով, միայն որակյալ մասնագետների շնորհիվ կարող ենք հասնել ցանկալի արդյունքի, քանի որ տեղեկատվական արտահոսքը կարող է հանգեցնել անցանկալի արդյունքի : Սակայն մի կողմից տեսնում ենք, որ սոցիալական մեդիան անկառավարելի է, բայց ունի այնպիսի գործիքակազմ, առանց որի անհնար կլիներ Հայաստանի Հանրապետությունում իրականացնել թավշյա հեղափոխություն :

**Նատելլա Դանիելյան**  
**ՀԱՆՐԱՅԻՆ ԿՎՊԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ PR-Ը ԱՐՑԱԽԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

*Բանալի բառեր՝ հանրային կապեր, պետական PR, տեղեկատվություն, կառավարման համակարգ, ներքին տեղեկատվություն, արտաքին տեղեկատվություն, սոցիալական մեդիա*

Հոդվածը նվիրվում է Արցախի Հանրապետությունում հանրային կապերի զարգացման միտումներին և պետական PR-ի առանձնահատկություններին: Հոդվածում մանրամասն ներկայացվում է Արցախի հանրապետության Նախագահի, պետական նախարարի և նախարարությունների հասարակության հետ կապերի բաժինների առանձնահատկությունը և զարգացման միտումները: Հոդվածում առանձնացվել է ներքին և արտաքին տեղեկատվական հոսքերը, որտեղ որոշիչ դերը պատկանում է ինչպես ՉԼՄ-ներին, այնպես էլ սոցիալական մեդիային, առանց որի այսօր անհնար է իրականացնել պետական թափանցիկ աշխատանք: Փորձը ցույց է տալիս, որ ժողովրդավարական ուղի ընտրած պետություններին ոչինչ չի մնում, քան հասարակության հետ մտնել երկխոսության մեջ, դրանով ամրապնդելով բաղաբացիական հասարակության հիմքերը:

**Natella Danielyan**

**PUBLIC RELATIONS DEVELOPMENT TENDENCIES AND THE STATE PR**  
**WITHIN THE MANAGEMENT SYSTEM OF THE ARTSAXH REPUBLIC**

**Key words:** *public relations, state PR, information, management system, internal information, external information, social media*

The article is dedicated to the public relations development tendencies in the Republic of Artsakh as well as to the peculiarities of the state PR. The article details the characteristics and development tendencies of public relations departments of the President, State Minister and Ministries of the Artsakh Republic.

The article outlines internal and external information flows, where the decisive role belongs to both the mass media and the social media, without which the state's transparent work is impossible to implement.

Experience suggests that the states that have chosen a democratic path have nothing else to do than to enter into a dialogue with the society, thereby strengthening the bases of civil society.

**Нателла Даниелян**

**ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ СВЯЗЕЙ С ОБЩЕСТВЕННОСТЬЮ И**  
**ГОСУДАРСТВЕННОГО PR В СИСТЕМЕ УПРАВЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ**

**Ключевые слова:** *связи с общественностью, государственный PR, информация, система управления, внутренняя информация, внешняя информация, социальные медиа*

Статья посвящена тенденциям развития связей с общественностью и государственному PR в Республике Арцах.

В статье подробно излагаются особенности и тенденции развития отделов связей с общественностью Президента, Государственного министра и министерств Республики Арцах.

В статье описываются внутренние и внешние информационные потоки, где решающая роль принадлежит СМИ и социальным медиа, без которых прозрачная работа государства сегодня невозможна.

Опыт показывает, что императивом для государств, выбравших демократический путь развития, является вступление в диалог с общественностью для укрепления основ гражданского общества.

**ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**  
**ECONOMICS**  
**ЭКОНОМИКА**



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԶԱՐՑԵՐԸ**

**ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ, ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Տնտեսական ինտեգրումը և գլոբալացումը, այդ գործընթացների խորացումը և ծավալումը ներկայում ազգային տնտեսությունների համար և՛ նոր հնարավորություններ են ստեղծում (ապրանքների և ծառայությունների առևտրի, գիտատեխնիկական համագործակցության, մշակութային արժեքների փոխանակության և աշխատուժի շարժի ոլորտներում) և՛ նոր մարտահրավերներ են առաջացնում (որոնք հիմնականում կապված են ազգային տնտեսությունների մրցունակության պահպանման, շուկաների ընդլայնման կամ նոր շուկաների ձեռքբերման, ինչպես նաև արտահանման հնարավորությունների ընդլայնման հետ):

Տնտեսական ինտեգրման գործընթացում էական նշանակություն ունի տարբեր երկրների ազգային տնտեսությունների համար փոխշահավետության սկզբունքի ապահովումը, իսկ այդպիսի համագործակցության արդյունքում տնտեսվում է ամենակարևոր ռեսուրսը՝ ժամանակը:

Այդ ամենով հանդերձ ամենևին էլ չպետք է կարծել, որ միջտնտեսական, մշակութային, գիտատեխնիկական և այլ բնույթի հարաբերությունները մշտնջենական են և չեն փոփոխվում: Այլ ճիշտ հակառակը, դրանք գտնվում են անընդհատ շարժման և դինամիկ զարգացման մեջ, ինչը նշանակում է, որ միջազգային տնտեսական համագործակցության մասին այն պատկերացումները, որոնք ընդունելի և տարածված էին, օրինակ, 20 կամ 30 տարի առաջ, այլևս կիրառելի չեն՝ ելնելով ժամանակի այն խնդիրների լուծման անհրաժեշտությունից, որոնք կանգնած են ինչպես երկրների ազգային տնտեսությունների, այնպես էլ համաշխարհային տնտեսության առջև:

Ժամանակակից միջազգային տնտեսական հարաբերությունների բնորոշ կողմերից մեկը ոչ միայն առանձին երկրների միջև առևտրատնտեսական հարաբերություններն են, այլև տնտեսական միությունների (միավորումների) ձևավորումը, դրանց ընդլայնումը և դրանց միջև հարաբերությունների խորացումը: Միարժեքորեն կարելի է պնդել, որ արդի աշխարհը, թե՛ ոչ վերջնականապես, ապա հիմնականում բաժանված է համագործակցության տարբեր եղանակներ ենթադրող տնտեսական միությունների (միավորումների) միջև:

Համաշխարհային տնտեսության և առևտրի գլոբալ փոփոխությունները իրենց տարածումն ու անդրադարձն են ստանում տարածաշրջանային մակարդակով: Ամենևին էլ չի բացառվում, որ տնտեսական հարաբերությունների գլոբալ և տարածաշրջանային շահերի և, հետևաբար, համագործակցության միջև կարող են առաջանալ որոշակի տարաձայնություններ: Ուստի ներկայիս հիմնախնդիրն է դառնում գլոբալ և տարածաշրջանային համագործակցության զուգակցումը այն հաշվով, որպեսզի հաշվի առնվեն կողմերի շահերը (որքանով այն հնարավոր է) և այդ համագործակցությունից օգուտներ ստանան մասնակից-երկրներին:

Առանձնապես փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների, ինչպիսին են Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը, տնտեսու-

յունների համար թե՛ զլուալ և թե՛ արածաշրջանային զարգացումներն էական նշանակություն ունեն ինչպես ազգային տնտեսությունների զարգացման, այնպես էլ հետագա տնտեսական ինտեգրման և դրա արդյունքներն ավելացնելու առումով: Հայկական երկու պետությունների համար էլ կենսականորեն անհրաժեշտ է և տնտեսապես հիմնավորված արտաքին առևտրի ու համագործակցության համեմատական առավելություններից առավելագույնս օգտվելը, ինչը կնպաստի երկու հանրապետությունների տնտեսական աճի և աճի որակի բարելավմանը:

Ժամանակակից համաշխարհային տնտեսությունը, որին ականատես ենք լինում մենք, ենթարկվում է հերթական վերափոխումների: Այդ հանգամանքը պայմանավորված է միջազգային քաղաքական և տնտեսական հարաբերություններում երևան եկած մի շարք գործոններով, որոնց շարքում անհրաժեշտ է առանձնացնել առաջին հերթին ԱՄՆ-ի կողմից վարվող արտաքին առևտրի հովանավորչական քաղաքականությունը, որի հիմնական նպատակը ԱՄՆ-ի ներքին շուկայի պաշտպանությունն է:

Ցանկացած երկրի արտաքին տնտեսական գործունեությունը պատկերավորության համար կարելի է համեմատել օվկիանոս դուրս եկած նավի հետ: Եվ այդ նավագնացության վերջնական արդյունքի տեսանկյունից կարևոր է տեղ հասնելը, կայուն և արդյունավետ գործընկերների առկայությունը: Հուսալի գործընկերոջ որոնման բանալին երկրի համեմատական առավելություններն են, իսկ դրան հասնելու միջոցը՝ այնպիսի տնտեսական միավորմանը կամ միությանն անդամակցելն է, որը հնարավորություն կտա ապահովել ազգային շահերի հնարավորին չափ ամբողջական իրացումը: Սոցիալ-տնտեսական ու քաղաքական առկա իրավիճակում, հաշվի առնելով գործող իրողությունները, Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը ճիշտ են կողմնորոշվում: Սակայն դա ամենևին էլ չի նշանակում, որ ստատուս-քվոն կմնա անփոփոխ, և պետք է ելնել ու առաջնորդվել դեռևս Հին Ռոմից հայտնի «Չկան մշտական բարեկամներ և թշնամիներ, այլ կան հավերժական շահեր» արտահայտությամբ:

Գլոբալ տարածաշրջանային համագործակցության համար ժամանակի ընթացքում ձևավորվում են որոշակի նախադրյալներ և պայմաններ, որոնք էլ ապահովում են այդպիսի համագործակցության հնարավորությունն ու արդյունավետությունը: Դրանց շարքին են դասվում արտադրության գործոնների ազատ տեղաշարժը, բաց սահմանների առկայությունը, համագործակցության շահավետությունը, հարևան երկրների հետ բարիդրացիական հարաբերությունները և այլն: Մինչդեռ, Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պարագայում պատկերն այլ է:

### 1. Օգտագործվող հիմնական հասկացություններ

Նախքան հայկական երկու հանրապետությունների տնտեսական ինտեգրմանը վերաբերող հիմնահարցերի քննարկումը կարիք կա վերհիշելու որոշ հասկացություններ ու դրանց տնտեսագիտական իմաստը:

1. Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ), որի հաշվարկման ամենատարածված բանաձևն է՝  $ZՆԱ = C + I + G \pm NX$ ,

որտեղ՝ C - ն՝ սպառումն է,

I - ն՝ համախառն ներդրումները,

G - ն՝ կառավարության ծախսերը,

NX - ը՝ զուտ արտահանումը:

Բանաձևից պարզ է, որ զուտ արտահանման մեծությունը (արտահանման գերազանցումը ներմուծման ծավալների նկատմամբ) ուղղակի ազդում է ՀՆԱ-ի մեծության վրա՝ այստեղից բխող բոլոր հետևանքներով:

2. Միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում օգտագործվում են համեմատական առավելությունների գործակիցները (ՅԱԳ), որոնք ըստ էության բնութագրում են երկրի մասնագիտացման աստիճանը: Այն հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\text{ՅԱԳ} = (\text{Ա}-\text{Լ}) / (\text{Ա}+\text{Լ}) \times 100,$$

որտեղ՝ ՅԱԳ-ը՝ համեմատական առավելությունների գործակիցն է, Ա-ն՝ արտահանման ծավալը, Լ-ն՝ ներմուծման ծավալը:

ՅԱԳ-ը տատանվում է [-1, +1] կամ [-100, +100] միջակայքում (տոկոսային արտահայտության դեպքում): Ըստ որում, ՅԱԳ-ը -1 կամ -100 մեծություն է ստանում, երբ երկիրը միայն ներմուծում է, իսկ +1 կամ +100 մեծություն, երբ երկիրը միայն արտահանում է: Որքան մեծ է որևէ երկրի ՅԱԳ-ի դրական մեծությունը, այնքան բարձր է այդ երկրի մասնագիտացման աստիճանը, և հետևաբար՝ ավելի մեծ է արտաքին առևտրաշրջանառության արդյունավետությունը: Եվ քանի որ երկրի ՅԱԳ-ը իր մեջ խտացնում է երկրի ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման ողջ ներուժը, ապա այն իր մեջ խտացնում է ինչպես երկրի միկրո- և մակրոտնտեսության, այնպես էլ մեզատնտեսության որակը:

3. Վճարային հաշվեկշիռը, որը որոշակի ժամանակահատվածի (սովորաբար մեկ տարվա) ընթացքում տվյալ երկրի ռեզիդենտների և աշխարհի մյուս երկրների միջև տեղի ունեցած բոլոր տնտեսական գործարքների արդյունքների կանոնավոր գրառումների համակարգ է: Վճարային հաշվեկշիռը փաստաթուղթ է, որտեղ հաշվառվում են տվյալ երկրի արտաքին տնտեսական գործունեության հետ կապված բոլոր վճարումները (ծախսերը) և մուտքերը (եկամուտները):

Վճարային հաշվեկշիռը, լինելով որոշակի երկրի և աշխարհի մյուս երկրների միջև միջազգային տնտեսական հարաբերությունների վիճակը նկարագրող փաստաթուղթ, կարևորագույն կողմնորոշիչ նյութ է պարունակում մակրոտնտեսական քաղաքականության (ներառյալ՝ հարկաբյուջետային, դրամավարկային, արտաքին առևտրի, արտարժույթային) մշակման համար:

## **2. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության արտաքին առևտրի համեմատական առավելությունների դրսևորման առանձնահատկությունները**

Երկրի հարաբերական առավելությունների տեսությունը նախատեսում է որոշակի արտարահումներ կամ այնպիսի իդեալական պայմանների ենթադրություն, որոնք իրական կյանքում հազվադեպ են տեղի ունենում: Խոսքն, ամենից առաջ երկրների միջև արտադրության գործոնների՝ ապրանքների, աշխատուժի, կապիտալի, տեխնոլոգիաների, ձեռնարկատիրական հմտությունների և գիտելիքների ազատ տեղաշարժի մասին է, ինչը նշանակում է, որ երկրից-երկիր տեղափոխվելու համար նշված գործոնների ճանապարհին չկան այնպիսի խոչընդոտներ, որոնք դժվարացնում կամ էլ գործնականում անհնար են դարձնում այդպիսի տեղաշարժը: Խոսքը վերաբերում է ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական արգելքներին, որոնք կարող են ունենալ դրսևորման տարբեր, այդ թվում նաև ծայրահեղ ձևեր: Արտադրության գործոնների շարժը կարելի է ինչպես հեշտացնել, այնպես էլ դժվարացնել, ընդհուպ մինչև հասնելով այնպիսի իրավիճակի, որ դադարեցվի երկրների միջև ոչ միայն դրանց փոխանակությունը, այլ նաև առևտուրը: Երկրների միջև արտաքին առևտրաշրջանառությունը հնարավոր է նաև միջնորդ կամ տարանցիկ (տրանզիտ) երկրների միջոցով: Արտաքին առևտրի կանոնակարգման պրակտիկայում կիրառվում են տնտեսական երկու խումբ՝ սակագնային և ոչ

անկազնային գործիքներ, որոնց օգնությամբ կարելի է նպաստավոր կամ անբարենպաստ դարձնել արտաքին տնտեսական ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ հարաբերությունները: Երկու կամ մի քանի երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունները կարող են դադարեցվել, պաստերավոր ասած, փշալարերի միջոցով (երբ փակվում է սահմանը), կամ էլ տնտեսական այնպիսի գործիքներ կիրառելով, երբ տնտեսապես անիմաստ է դառնում տվյալ երկրից ապրանք(ներ)ի ներմուծումը կամ արտահանումը: Ըստ էության, Հարավային Կովկասում մենք գործ ունենք խաթարված, նորմայից շեղված արտաքին առևտրատնտեսական հարաբերությունների հետ, ինչի հետևանքով տարածաշրջանային առևտրային համագործակցությունը հարևան երկրների միջև չի ենթարկվում համընդհանուր ճանաչման և կիրառություն ստացած արտաքին առևտրում երկրների հարաբերական առավելությունների իրացման տեսության օրինաչափություններին:

Փոխանակությունը թույլ է տալիս փոխանակության մասնակիցներին օգուտ ստանալ այն իրերի արտադրության մեջ մասնագիտանալուց, որոնք նրանք ավելի լավ են պատրաստում: Մասնագիտացումը թույլ է տալիս մեծացնել ամբողջական արտադրանքի ծավալը: Անհատների խմբերը, շրջանները, երկրները կարող են ավելի շատ արտադրանք թողարկել, երբ նրանցից յուրաքանչյուրը մասնագիտացած է այն ապրանքների և ծառայությունների արտադրության մեջ, որոնք կարող են արտադրել քիչ ծախսերով և դրանց վաճառքից ստացված եկամուտն օգտագործել իրենց ցանկալի բարիքի հետ փոխանակելու համար, որը նրանք կարող էին արտադրել միայն շատ ծախսերով: Տնտեսագետներն այս սկզբունքն անվանում են հարաբերական առավելության օրենք:

Բոլոր առումներով առևտրից և մասնագիտացումից ստացվող օգուտը համապատասխանում է առողջ բանականությանը: Ամբողջական արտադրանքն ավելացնում է փոխանակության մասնակիցների օգուտը:

Մեր կողմից իրականացվել է Հայաստանի Հանրապետության և հարևան երկրների արտաքին առևտրի ՀԱԳ-երի վերլուծությունը<sup>1</sup>, որի արդյունքները ցույց են տալիս, որ 2005-2017թթ. ժամանակահատվածում Հայաստանի արտաքին առևտրի ՀԱԳ-ը դրական է եղել միայն Վրաստանի հետ (0.166), մյուս հարևան երկրների հետ ՀՀ արտաքին առևտրի ՀԱԳ-երը բացասական մեծություններ են ունեցել (Թուրքիայի հետ՝ - 0.981, Իրանի հետ՝ - 0.487 ցուցանիշներով), իսկ բոլոր հարևան երկրների հետ ՀԱԳ-ի ընդամենը ցուցանիշը կազմել է -0.479: Այդ նույն ժամանակահատվածում Վրաստանի համապատասխան ցուցանիշները կազմել են. Հայաստանի հետ՝ 0.002, Ադրբեջանի հետ՝ -0.281, Իրանի հետ՝ -0.588, Թուրքիայի հետ՝ -0.667 և ընդամենը ՀԱԳ-ը՝ -0.468: Հարևան երկրների հետ Ադրբեջանի ընդամենը ՀԱԳ-ի ցուցանիշը նույն ժամանակահատվածում կազմել է -0.002, Իրանինը՝ - 0.011 և Թուրքիայինը՝ -0.202: Այլ կերպ ասած, ուսումնասիրված հիևզ երկրների միջև արտաքին առևտրի ՀԱԳ-երն ունեն բացասական մեծություն, ըստ որում՝ Ադրբեջանինը ամենացածրն է (-0.002), իսկ Հայաստանինը՝ ամենաբարձրը՝ - 0.479:

2008-2016թթ.-ին և եռամյա ժամանակահատվածների համար՝ ըստ ապրանքային խմբերի ՀՀ արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցների հաշվարկն ու վերլուծությունը<sup>2</sup> ցույց տվեց, որ թեև ուսումնասիրության ամբողջ ժամանակահատվածում ՀՀ արտաքին առևտրի ՀԱԳ-ն

<sup>1</sup> Վերլուծության և համապատասխան հաշվարկների համար հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական <http://www.armstat.am> և <http://www.intracen.org> կայքերի տվյալները:

<sup>2</sup> Վերլուծությունն ու հաշվարկները իրականացվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական [www.armstat.am](http://www.armstat.am) կայքում տեղադրված՝ արտաքին առևտրի տվյալների բազայի հիման վրա:

ունեցել է բացասական մեծություն, սակայն այն դրսևորել է դրական տեղաշարժերի միտում: Այսպես, 2011-2013թթ.-ին 2008-2010թթ.-ի համեմատ այդ ցուցանիշը բարելավվել է 0.101 տոկոսային կետով, իսկ 2014-2016թթ.-ին 2011-2013թթ.-ի համեմատ՝ 0.118 տոկոսային կետով: Ակատենք նաև, որ ՀՀ արտաքին առևտրի ՀԱԳ-երի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է «Հանքաքար, խարամ և մոխիր» ապրանքային խմբի համար, ինչը չի կարելի դիտարկել որպես դրական երևույթ:

Աղյուսակ 1 - ում բերված են Արցախի Հանրապետության արտաքին առևտրի ՀԱԳ-երը՝ ըստ ապրանքային խմբերի 2011-2017 թվականներին:

## Աղյուսակ 1

### Արցախի Հանրապետության արտաքին առևտրի համեմատական առավելությունների գործակիցները (ՀԱԳ) 2011-2017 թվականներին<sup>1</sup>

	2011	2012	2013	2014	2015	2016	2017	Ընդամենը 2011-2017
Ընդամենը, այդ թվում	-0.595	-0.669	-0.637	-0.647	-0.605	-0.520	-0.295	-0.557
Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադր.	-0.733	-0.754	-0.730	-0.430	-0.274	-0.112	-0.231	-0.482
Բուսական ծագման արտադրանք	-0.550	-0.284	-0.498	-0.531	-0.463	-0.087	-0.068	-0.344
Յուղեր և ճարպեր	-1.000	-0.991	-0.870	-0.969	-0.373	-0.652	-0.454	-0.790
Պատրաստի սննդի արտադրանք	-0.761	-0.777	-0.723	-0.785	-0.793	-0.825	-0.806	-0.781
Հանքահումքային մթերքներ	-0.122	-0.394	-0.366	-0.294	-0.330	-0.099	0.353	-0.121
Քիմիական արտադրության ապրանք.	-0.996	-0.991	-0.989	-0.988	-0.991	-0.978	-0.981	-0.987
Պլաստմասա, կառուցուկ, ռետին	-0.820	-0.693	-0.906	-0.957	-0.958	-0.999	-0.985	-0.871
Կաշի և դրանից իրեր	-0.856	-0.934	-0.861	-0.865	-0.926	-0.955	-0.954	-0.921
Փայտ և փայտյա իրեր	-0.550	-0.342	-0.107	-0.230	-0.184	-0.050	0.233	-0.204
Թուղթ և թղթյա իրեր	-1.000	-1.000	-0.929	-0.971	-0.972	-0.999	-0.990	-0.978
Մանածագործական իրեր	-0.918	-0.976	-0.981	-0.871	-0.780	-0.838	-0.841	-0.892
Կոշիկներ, հովանոցներ, գլխարկներ	-0.128	-0.276	-0.387	-0.210	-0.160	0.090	0.195	-0.131

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է ՀՀ վիճակագրական տարեգիրք 2009-2015, Ստեփանակերտ, ԼՂՀ ԱՎԾ, 2016, էջ 284-288 և [www.stat.nkr.am](http://www.stat.nkr.am) տվյալների հիման վրա:



Իրեր քարից, գիպից, ցեմենտից	-0.939	-0.943	-0.829	-0.904	-0.887	-0.905	-0.862	-0.903
Թանկարժեք քարեր և մետաղներ	0.061	-0.058	-0.020	-0.285	0.584	-0.135	-0.039	-0.023
Ոչ թանկարժեք մետաղներ և իրեր դրանցից	-0.700	-0.727	-0.991	-0.959	-0.965	-0.990	-0.991	-0.895
Մեքենաներ և սարքավորումներ	-0.949	-0.961	-0.795	-0.826	-0.783	-0.772	-0.838	-0.846
Տրանսպորտային միջոցներ	-0.917	-0.957	-0.730	-0.943	-0.876	-0.931	-0.964	-0.912
Սարքեր և ապարատներ	-0.976	-0.942	-1.000	-0.886	-0.927	-0.963	-0.989	-0.952
Կահույք, խողալիքներ, այլ պատրաստի իրեր	-0.979	-0.986	-0.977	-0.924	-0.934	-0.946	-0.942	-0.957
Արվեստի ստեղծագործություններ, հնաոճ իրեր	-1.000	-1.000	-0.891	-1.000	-0.904	-1.000	-1.000	-0.978

**3. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև տնտեսական ինտեգրման հակիրճ բնութագիրը**

Ելևելով ՀԱՀ-ի վերը բերված բանաձևից՝ ցանկացած երկրի համար կենսականորեն անհրաժեշտ է, որպեսզի զուտ արտահանումն ունենա դրական մեծություն, թեև, ինչպես ցույց է տալիս աշխարհի առանձին երկրների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) արտաքին առևտրաշրջանառության ցուցանիշների վերլուծությունը, միշտ չէ, որ հաջողվում է ապահովել արտահանման գերազանցումը ներմուծման նկատմամբ: Ավելին, աշխարհում անհամեմատ քիչ են այն երկրները, որոնց զուտ արտահանման ցուցանիշը դրական մեծություն է:

Յուրաքանչյուր երկիր, որն ընդունում է ազատ շուկայական տնտեսաձևը, առաջին հերթին պարտավոր է որոշել, թե ինչ ապրանքներով և ծառայություններով կարող է մտնել համաշխարհային շուկա և ընդլայնել իր մասնակցությունը աշխատանքի միջազգային բաժանման գործում, այսինքն՝ առանձնացնել իր տնտեսական հնարավորությունները և արտահանման գերակայությունները: Տարբեր երկրներում արտաքին առևտրի վիճակը բնավ նույնը չէ, սակայն այն երկրներում, որտեղ աշխատանքի միջազգային բաժանմանը մասնակցելու հնարավորությունները օգտագործվում են ավելի ակտիվորեն, որպես կանոն, բարձր են նաև տնտեսական աճի տեմպերը:

ՀՀ և ԱՀ-ի միջև կայուն տնտեսական հարաբերությունների ձևավորման կարևոր ուղղություններից մեկը (ներդրումների, աշխատուժի և տեխնոլոգիաների հոսքերից և տեղաշարժերից բացի) արտաքին ապրանքաշրջանառությունն է, որն իրականացվում է առևտուր անող երկրների բացարձակ և համեմատական առավելությունների միջոցով: Ըստ որում, վերջինս հաշվարկվում է համեմատական առավելությունների գործակիցների (ՀԱԳ) միջոցով: Աղյուսակ 2-ում բերված տվյալներից հետևում է, որ 2016թ.-ին 2011թ.-ի համեմատ ՀՀ արտահանումն ավելացել է 133,6 %-ով, ներմուծումը՝ 79,4-ով, արտաքին առևտրաշրջանառությունը՝ 86,1%-ով, արտաքին առևտրաշրջանառության մնացորդը (սալդոն)՝ 75,3%-ով, ՀԱԳ-ը 95,4%-ով: Այդ ցուցանիշները ԱՀ-ի համար

կազմել են համապատասխանաբար՝ 101,9%, 82,0%, 92,6%, 53,7%, 57,9%: Բերված ցուցանիշները կարելի է բնութագրել որպես դրական:

Աղյուսակ 3-ի տվյալները վկայում են, որ ԶԶ և ԱԶ ընդհանուր ԶՆԱ-ի կազմում ԱԶ բաժինը 2001թ. 2,0%-ի փոխարեն 2016թ.-ին գրանցվել է ամենաբարձր ցուցանիշը, որը կազմել է 4,3%: Ընդ որում, ԱԶ արտահանման բաժինը համապատասխանաբար կազմել է 1,6%,(4,3%), 4,3%, իսկ ներմուծումը՝ 5,1%, (7,3%) 7,3%: 2001-2016թթ ընդամենի տվյալներով այդ ցուցանիշները ԶՆԱ-ում կազմել են 3,2%, արտահանումը՝ 4,6%, ներմուծումը՝ 6,2%: Թեև 2001-2016թթ. ԱԶ-ի բաժինը ԶԶ և ԱԶ ԶՆԱ-ում ավելացել է 2,3 տոկոսային կետով, արտահանումը՝ 2,7 տոկոսային կետով, իսկ ներմուծումը 2,2 տոկոսային կետով, այսինքն՝ ԱԶ արտահանման բաժնի ավելացումը 1,2 անգամ գերազանցել է ներմուծման բաժնին, ինչը նույնպես մեկ բառով կարելի է բնութագրել որպես դրական միտում:

Բերված փաստերը վկայում են հայկական երկու հանրապետությունների միջև ԶՆԱ-ի և արտաքին առևտրաշրջանառության ինտեգրման խորացման մասին: Այդ մասին են վկայում նաև աղյուսակ 4-ի տվյալները, որոնցից հետևում է, որ ԱԶ-ի բաժինը ԶԶ-ի արտաքին առևտրաշրջանառության մեջ 2001թ.-ի 64,1%-ից 2016թ.-ին կազմել է 88,8% (աճը կազմել է 24,7 տոկոսային կետ):

Համեմատություններ իրականացնելու նպատակով աղյուսակ 3-ում բերված է Հայաստանի Հանրապետության ԶՆԱ-ի և արտաքին առևտրի ցուցանիշների դինամիկան 1995-2017 թվականներին, իսկ աղյուսակ 4-ում՝ նույն տեղեկատվությունը Արցախի Հանրապետության համար:

#### **4. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշիռները**

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը գտնվում է զարգացման այնպիսի փուլում, երբ առևտրատնտեսական և գիտատեխնիկական կապերը բոլոր գործընկեր-երկրների հետ պետք է ամրապնդվեն՝ հիմք ընդունելով փոխադարձ վստահելիությունը և իրականացվող գործարքների երկկողմանի շահավետությունը: Հայաստանի համար բավականին հուսալի գործընկերներ են հատկապես Եվրոպական երկրները: Նկատի ունենք այն հանգամանքը, որ մեր հանրապետությունը պետք է կարողանա իր համար կարևոր դասեր քաղել այդ երկրների զարգացման տնտեսական պատմությունից: Գտնվելով աշխարհագրական անբարենպաստ դիրքում, անցած կարճ ժամանակահատվածում ԶԶ-ը ամուր և կայուն կապեր է հաստատել Եվրոպական բազմաթիվ երկրների հետ, դրանով իսկ հասնելով իր համար կարևոր տնտեսական և քաղաքական նպատակների:

Աղյուսակ 2ՀՀ և ԱՀ արտաքին առևտրաշրջանառությունը և համեմատական առավելությունների գործակիցները (ՀԱԳ)  
2012-2017 թվականներին<sup>1</sup>

	2012		2015		2016		2017	
	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ	ՀՀ	ԱՀ
Արտահանում, հազ. դոլար	1380199.2	57765.7	1485331.9	62082.2	1791721.7	81106.3	2242868.8	156601.2
Ներմուծում, հազ. դոլար	4261232.7	291246.5	3239238.7	252474.9	3273469.3	256859.2	4182660.9	287876.1
Արտաքին առևտրի սալդոն, հազ. դոլար	-233480.8	-	-190392.7	-	-	-175752.9	-1939792.1	-131274.9
Արտաքին առևտրաշրջա- նառությունը, հազ. դոլար	349012.1	5641432	314557.1	4724571	5065191.0	337965.5	6425529.7	444477.3
ՀԱԳ	-0.669	-0.51	-0.605	-0.371	-0.293	-0.520	-0.302	-0.295

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի և ԱՀ ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության արտաքին առևտուրը  
2001-2017թթ.-ին, մլն ԱՄՆ դոլար<sup>1</sup>

	ԲԳ			ԱԳ			ԲԳ և ԱԳ			ԱԳ բաժինը ընդամենի մեջ, %		
	ՀՆԱ	Արտա- հանում	Ներմու- ծում	ՀՆԱ	Արտա- հանու- մ	Ներմու- ծում	ՀՆԱ	Արտա- հանում	Ներմու- ծում	ՀՆԱ	Արտա- հանու- մ	Ներմու- ծում
<b>2001</b>	2118	341.8	877.4	43.0	5.5	47.2	2161	347.3	924.6	2.0	1.6	5.1
<b>2002</b>	2376	505.2	987.2	46.2	14.1	48.1	2422.2	519.3	1035.3	1.9	2.7	4.6
<b>2003</b>	2807	685.6	1279.5	58.5	29.3	54.3	2865.5	714.9	1333.8	2.0	4.1	4.1
<b>2004</b>	3577	722.9	1350.7	80.3	39.1	76.5	3657.3	762	1427.2	2.2	5.1	5.4
<b>2005</b>	4900	973.9	1801.7	112.3	38.2	94.9	5012.3	1012.1	1896.6	2.2	3.8	5.0
<b>2006</b>	6384	985.1	2191.6	148.7	45.3	113.2	6532.7	1030.4	2304.8	2.3	4.4	4.9
<b>2007</b>	9206	1152.3	3267.8	206.9	72.5	204.8	9412.9	1224.8	3472.6	2.2	5.9	5.9
<b>2008</b>	11662	1057.2	4426.1	284.8	55.1	250.0	11946.8	1112.3	4676.1	2.4	5.0	5.3
<b>2009</b>	8648	710.2	3321.1	281.7	57.3	236.6	8929.7	767.5	3557.7	3.2	7.5	6.7
<b>2010</b>	9260	1041.1	3748.9	316.2	74.8	273.4	9576.2	1115.9	4022.3	3.3	6.7	6.8
<b>2011</b>	10142	1334.3	4145.3	363.8	79.6	313.1	10505.8	1413.9	4458.4	3.5	5.6	7.0
<b>2012</b>	10619	1380.2	4261.2	373.5	57.8	291.2	10992.5	1438	4552.4	3.6	3.9	6.4
<b>2013</b>	11121	1478.7	4385.9	411.5	59.6	268.8	11532.5	1538.3	4654.7	3.6	3.9	5.8
<b>2014</b>	11610	1547.3	4424.4	454.0	64.7	302.0	12064	1612	4726.4	3.8	4.0	6.4
<b>2015</b>	10529	1485.3	3239.2	438.0	62.1	252.5	10967	1547.4	3491.7	4.0	4.0	7.2
<b>2016</b>	10547	1791.7	3273.5	478.0	81.1	256.9	11025	1872.8	3530.4	4.3	4.3	7.3
<b>2017</b>	11560	2242.9	4182.7	563.7	156.6	287.9	12123.7	2399.5	4470.6	4.6	6.5	6.4
<b>Ընդամենը 2001- 2017թթ.</b>	<b>13706 6</b>	<b>19435.7</b>	<b>51164.2</b>	<b>4661.1</b>	<b>992.7</b>	<b>3371.4</b>	<b>141727. 1</b>	<b>20428.4</b>	<b>54535.6</b>	<b>3.3</b>	<b>4.9</b>	<b>6.2</b>

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի և ԱՀ ԱԿԾ-ի տվյալների հիման վրա:

Աղյուսակ 4

ՀՀ և ԱՀ արտաքին առևտրաշրջանառությունների ինտեգրումը 2001-2017թթ.-ին <sup>1</sup>

	ՀՀ, մլն ԱՄՆ դոլար			ԱՀ մլն ԱՄՆ դոլար			ԱՀ-ի առևտրը ՀՀ-ի հետ, մլն ԱՄՆ դոլար			ԱՀ բաժինը ՀՀ-ի հետ արտաքին առևտրաշրջանառության մեջ, %		
	Արտաքին առևտրաշրջանառություն	Արտահանում	Ներմուծում	Արտաքին առևտրաշրջանառություն	Արտահանում	Ներմուծում	Արտաքին առևտրաշրջանառություն	Արտահանում	Ներմուծում	Արտաքին առևտրաշրջանառություն	Արտահանում	Ներմուծում
<b>2001</b>	1219.2	341.8	877.4	52.7	5.5	47.2	33.8	2.0	31.8	64.1	36.4	67.4
<b>2002</b>	1492.4	505.2	987.2	62.2	14.1	48.1	38.6	3.7	34.9	62.1	26.2	72.6
<b>2003</b>	1965.1	685.6	1279.5	83.6	29.3	54.3	47.3	10.7	36.6	56.6	36.5	67.4
<b>2004</b>	2073.6	722.9	1350.7	115.6	39.1	76.5	91.1	26.7	64.3	78.8	68.3	84.1
<b>2005</b>	2775.6	973.9	1801.7	133.1	38.2	94.9	108.5	25.7	82.8	81.5	67.3	87.2
<b>2006</b>	3176.7	985.1	2191.6	158.5	45.3	113.2	152.6	43.1	109.4	96.3	95.1	96.6
<b>2007</b>	4420.1	1152.3	3267.8	277.3	72.5	204.8	257.7	70.3	187.4	92.9	97.0	91.5
<b>2008</b>	5483.3	1057.2	4426.1	305.1	55.1	250	284.6	49.8	234.8	93.3	90.4	93.9
<b>2009</b>	4031.3	710.2	3321.1	293.9	57.3	236.6	273.0	53.0	219.9	92.9	92.5	92.9
<b>2010</b>	4790.1	1041.1	3749	348.2	74.8	273.4	326.6	69.0	257.6	93.8	92.2	94.2
<b>2011</b>	5479.6	1334.3	4145.3	392.7	79.6	313.1	362.5	71.4	291.2	92.3	89.7	93.0
<b>2012</b>	5694.9	1380.1	4261.2	349	57.8	291.2	317.4	47.1	270.3	90.9	81.5	92.8
<b>2013</b>	5864.6	1478.7	4385.9	328.5	59.6	268.8	305.6	50.7	254.9	93.0	85.1	94.8
<b>2014</b>	5971.7	1547.3	4424.4	366.7	64.7	302.0	338.2	57.1	281.1	92.2	88.3	93.1
<b>2015</b>	4724.5	1485.3	3239.2	314.6	62.1	252.5	293.2	51.1	242.1	93.2	82.3	95.9
<b>2016</b>	5065.2	1791.7	3273.5	338.0	81.1	256.9	300.2	68.0	232.2	88.8	83.8	90.4
<b>2017</b>	6425.5	2242.9	4182.7	444.5	156.6	287.9	401.6	141.5	260.1	90.3	90.4	90.3
<b>Ընդամենը 2001-2017թթ</b>	<b>70653.4</b>	<b>19435.6</b>	<b>51164.3</b>	<b>4364.2</b>	<b>992.7</b>	<b>3371.4</b>	<b>3932.5</b>	<b>840.9</b>	<b>3091.4</b>	<b>90.1</b>	<b>84.7</b>	<b>91.7</b>

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է ՀՀ վիճակագրական կոմիտեի և ԱՀ ԱՎԾ-ի տվյալների հիման վրա:

Շուկայական տնտեսության արդի պայմաններում և մեր երկրի զարգացման յուրահատկություններից ելնելով, ամենևին էլ ճիշտ մոտեցում չէ տնտեսության հեղափոխական առաջընթացի նոր ուղիներ փնտրելը կամ հորինելը: Առանձնահատուկ ուշադրություն դարձնելով մյուս երկրների տնտեսական բարեփոխումների հատկապես դրական կողմերին, ինչպես նաև հաշվի առնելով մեր երկրի ազգային յուրահատկությունները, հնարավոր է գտնել տնտեսության զարգացման օպտիմալ տարբերակ: Այս համատեքստում հատկապես վճռորոշ է լինելու մեր զարգացման տեսլականի ընտրությունը «ԵԱՏՄ» - «Եվրոպա» կողմնորոշումների համակարգում: Ինքնուրույն հետաքրքրության և շատ հիմնախնդիրների հարցում կանխորոշող լուծումներ պարունակող այս հարցում անհրաժեշտ է ունենալ խորքային պատկերացումներ աշխարհաբաղաբալական հնարավոր տեղաշարժերի ու զարգացումների մասով: Այդուհանդերձ, հաշվի առնելով առաջիկա տարիների տեսանելի զարգացումները մենք հակված ենք բազմակողմ կողմնորոշմանը (առաջին հերթին, ինչպես դեպի Արևելք, այնպես էլ Արևմուտք): Համաշխարհային տնտեսությունում զարգացման ինչպիսի ուղղություն էլ որդեգրելու լինենք, առաջին հերթին, անհրաժեշտ է թողարկել այնպիսի ապրանքներ և ծառայություններ, որոնք հետաքրքրություն և պահանջարկ են ներկայացնում արտաքին շուկաներում: Իսկ այդպիսին է արդյոք ՀՀ տնտեսությունը:

Ներկայիս Հայաստանի տնտեսության բնորոշումներից մեկը կարող է լինել ոչ թե արտադրող, այլ «սպառող հասարակություն և տնտեսություն» արտահայտությունը: Նշվեց, որ ցանկացած երկրի տնտեսական կապերն այլ երկրների հետ իրենց արտահայտությունն են գտնում վճարային հաշվեկշռում: Վճարային հաշվեկշիռը տվյալ երկրի միջազգային տնտեսական հարաբերություններին մասնակցության մասին տեղեկատվության կարևոր աղբյուր է:

Վճարային հաշվեկշիռը բնութագրող հատկանիշներից մեկն էլ այն է, որ արտացոլում է «երկրի արտաքին տնտեսական վիճակը» ապրանքների կամ ծառայությունների միջազգային շուկայում, այլ կերպ ասած՝ երկրի դերը՝ որպես արտահանողի կամ ներմուծողի: Այս տնտեսական գործիքը նաև լավագույնս է բնութագրում երկրի սոցիալ-տնտեսական վիճակը: Այն բնորոշում է թե տվյալ երկիրը արտադրող է (երբ առկա է վճարային հաշվեկշռի դրական մնացորդ), թե սպառող (երբ վճարային հաշվեկշռի մնացորդը բացասական է):

ՀՀ վճարային հաշվեկշռի բացասական մնացորդի առյուծի բաժինը հասնում է «Ապրանքների և ծառայությունների ընթացիկ հաշվին»: Ավելի պարզ՝ վճարային այս հոդվածը ցույց է տալիս, թե ապրանքների և ծառայությունների արտահանման ու ներմուծման տարբերությունն ինչպիսին է: Եթե այդ տարբերությունը բացասական է (այսինքն ավելի շատ էք ներմուծում, քան արտահանում), ապա այդ մասով Ձեր վճարած փողը (դրամական հոսքը) ուղղվում է այն երկիր (կամ երկրներ), որոնցից ձեռք բերած ապրանքների և ծառայությունների համար մենք պետք է վճարենք: Իսկ եթե այդ տարբերությունը դրական է, ապա մեզ են վճարելու մյուսները: Առաջին դեպքում, Ձեր երկիրը հանդես է գալիս որպես գնորդ, իսկ երկրորդ դեպքում՝ վաճառող: Լավ է լինել վաճառող երկիր, քանի որ այս դեպքում մյուսներն են Ձեզ վճարում, իսկ հակառակ դեպքում՝ դուք ուրիշներին:

Հարց է առաջանում. իսկ ինչո՞վ վճարել, որտեղից են առաջանում այն աղբյուրները, միջոցները, որոնց հաշվին պետք է ապահովվի մյուս երկրների հետ համարժեք փոխանակությունը: Առաջին այդպիսի աղբյուրը երկրում արտադրված կամ թողարկված ապրանքներն ու ծառայություններն են, որոնց իրացումից ստացված միջոցներով կատարում էք մյուսներից ձեռք բերված ապրանքների և ծառայությունների դիմաց վճարումը: Հայաստանի Հանրապետության համար այս

ուղին «աշխատում է» մասամբ, քանի որ մեր ներմուծումը գերազանցում է արտահանմանը: Հաջորդ աղբյուրն այն է, որ Ձեր երկրից արտահանված կապիտալը, ապահովելով եկամուտներ (կամ տոկոսներ), վերադառնում է Ձեր երկիր, ինչի հաշվին էլ դուք կարողանում եք կատարել Ձեր վճարումները: Մեր երկրի համար դրանք չնչին մեծություններ են և «եղանակ» չեն ստեղծում:

Ասվածն ավելի ակնառու դարձնելու նպատակով աղյուսակ 5-ում բերված է ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան 2005-2017 թվականներին, իսկ աղյուսակ 6-ում՝ Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան՝ նույն ժամանակահատվածում:

Տվյալներից հետևում է, որ աղյուսակներում ներառված ողջ ժամանակահատվածում ՀՀ ընթացիկ հաշիվը միշտ եղել է բացասական: Սկսած 2007 թվականից այն կտրուկ ավելացել է (սախորդ տարվա համեմատությամբ ավելի քան 5 անգամ), իսկ 2008 թվականին հասել իր բարձրագույն կետին՝ 2006 թվականի ցուցանիշը գերազանցելով աննախադեպ չափերով՝ շուրջ 12 անգամ: 2008-2013 թվականներին ընթացիկ հաշվի բացասական մնացորդն ունեցել է թեև դանդաղ, սակայն կայուն նվազման միտում՝ 2013 թվականին ունենալով շուրջ 813 մլն ԱՄՆ դոլարի բացասական արժեք: ՀՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշիվը նկատելիորեն նվազել է 2015-2017 թվականներին, ինչն էլ հանգեցրել է վճարային հաշվեկշռի տարբերության (մնացորդի) եական նվազեցման:

### **5. Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև տնտեսական ինտեգրման խորացման անհրաժեշտ քայլերը**

Հայկական երկու պետությունների միջև տնտեսական ինտեգրման խորացման նպատակով անհրաժեշտ է՝

ա) մշակել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տնտեսությունների միջև տնտեսական միության ստեղծման հայեցակարգը,

բ) կազմել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տնտեսական ինտեգրման ճանապարհային քարտեզը՝ հաշվի առնելով միասնական տնտեսական տարածք ստեղծելու անհրաժեշտությունը,

գ) վերը նշված քայլերի հիման վրա կազմել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տնտեսական ինտեգրման և համագործակցության ծրագիր՝ նշելով այդպիսի համագործակցության գերակա ուղղությունները և կատարման ենթակա կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցառումները:

Վերոգրյալի համար, որպես արդեն մշակված փաստաթուղթ, կարող է օգտագործվել նաև պրոֆետորներ Զ.Բազրատյանի, Ա.Մարկոսյանի, Է.Սանդոյանի, Ս.Ավետիսյանի և Ա.Սուվարյանի կողմից 2013 թվականին մշակված «ԼՂՀ Կառավարության 2014-2018թթ. տնտեսական քաղաքականության ծրագիրը» (200 էջ):

**Աղյուսակ 5**

*ՀՀ վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան և վճարային հաշվեկշռի տարբերության մնացորդի կառուցվածքը 2005-2017 թվականներին<sup>1</sup>*

	2005	2008	2009	2010	2013	2014	2015	2016	2017
<b>ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՆԱՅՈՐԴԸ</b>	<b>-192.73</b>	<b>-</b> <b>3288.69</b>	<b>-</b> <b>2279.77</b>	<b>-</b> <b>2765.66</b>	<b>-</b> <b>1584.62</b>	<b>-</b> <b>2350.53</b>	<b>-784.32</b>	<b>-420.2</b>	<b>-834.4</b>
	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100	100
<b>ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻՎ</b>	<b>-123.90</b>	<b>-</b> <b>1658.88</b>	<b>-</b> <b>1425.50</b>	<b>-</b> <b>1261.43</b>	<b>-812.93</b>	<b>-883.11</b>	<b>-279.09</b>	<b>-238.12</b>	<b>-399.91</b>
	64.3	50.4	62.5	45.6	51.3	37.6	35.6	56.7	47.9
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ</b>	<b>-634.67</b>	<b>-</b> 2816.33	<b>-</b> 2089.98	<b>-</b> 2065.73	<b>-</b> 2196.16	<b>-</b> 2055.40	<b>-</b> 1186.40	<b>-944.37</b>	<b>-1482.13</b>
	329.3	85.6	91.7	74.7	138.6	87.4	151.3	224.7	177.6
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	<b>-147.92</b>	<b>-311.16</b>	<b>-276.30</b>	<b>-260.76</b>	<b>-124.35</b>	<b>-112.95</b>	<b>-94.54</b>	<b>-71.4</b>	<b>-67.93</b>
	76.7	9.5	12.1	9.4	7.8	4.8	12.1	17.0	8.1
<b>ՍԿԶԲՆԱԿԱՆ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ</b>	<b>206.01</b>	<b>691.28</b>	<b>358.78</b>	<b>458.28</b>	<b>682.59</b>	<b>540.80</b>	<b>435.37</b>	<b>224.22</b>	<b>497.67</b>
	-106.9	-21.0	-15.7	-16.6	-43.1	-23.0	-55.5	-53.4	-59.6
<b>ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ</b>	<b>452.69</b>	<b>777.32</b>	<b>582.00</b>	<b>606.78</b>	<b>824.99</b>	<b>744.44</b>	<b>566.47</b>	<b>553.43</b>	<b>647.1</b>
	-234.9	-23.6	-25.5	-21.9	-52.1	-31.7	-72.2	-131.7	-77.6

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է՝ Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ 2012-2015: Վիճակագրական ժողովածու, Եր., ՀՀ ԱՎԾ, 2016, էջ 12, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-փետրվարին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2018, էջ 104-112:



<b>ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇԻՎ</b>	<b>84.00</b>	<b>171.44</b>	<b>87.88</b>	<b>98.86</b>	<b>84.38</b>	<b>70.43</b>	<b>65.28</b>	<b>34.87</b>	<b>46.34</b>
	-43.6	-5.2	-3.9	-3.6	-5.3	-3.0	-8.3	-8.3	-5.6
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ</b>	<b>-203.34</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-845.47</b>	<b>-558.61</b>	<b>-435.36</b>	<b>-465.58</b>
	105.5	46.5	63.2	47.7	64.9	36.0	71.2	103.6	55.8
<b>ՊԱՅՈՒՄՍԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ</b>	<b>213.95</b>	<b>-231.03</b>	<b>600.29</b>	<b>-128.75</b>	<b>470.64</b>	<b>-659.60</b>	<b>332.89</b>	<b>450.81</b>	<b>96.77</b>
	-111.0	7.0	-26.3	4.7	-29.7	28.1	-42.4	-107.3	-11.6
<b>ՄԱՔՈՒՐ ՍԽԱԼՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ</b>	<b>-163.44</b>	<b>-41.39</b>	<b>-102.41</b>	<b>-155.89</b>	<b>-299.08</b>	<b>-32.78</b>	<b>-344.79</b>	<b>-232.41</b>	<b>-112.0</b>
	84.8	1.3	4.5	5.6	18.9	1.4	44.0	55.3	13.4

Համարիչում մին ԱՄՆ դոլար, հայտարարում՝ վճարային հաշվեկշռի տարբերության մնացորդի նկատմամբ, %-ով:

\* Համաձայն «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի (Արժույթի միջազգային հիմնադրամ, 2009թ., Վաշինգտոն, xvii 351 էջ) դրույթների:

**Աղյուսակ 6**

*Արցախի Հանրապետության վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշների դինամիկան և վճարային հաշվեկշռի տարբերության մնացորդի կառուցվածքը 2005-2017 թվականներին<sup>1</sup>*

	2005	2008	2009	2010	2013	2014	2015	2016	2017
<b>ՎՃԱՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ՄՆԱՑՈՐԴԸ</b>	0.1	0	0	-0.2	-1	-0.1	-93003.2	180480.2	100698.2
							100.0	100.0	100.0
<b>ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԻՎ</b>	-14566.2	-75321.9	-81017.9	125983.7	109325.6	101419.1	112901.6	-94711	-23731.3
							121.4	52.5	23.6
<b>ԱՊՐԱՆՔՆԵՐ</b>	52881.9	180500.4	169814.0	191287.7	198444.7	225243.2	180665.7	165873.7	120202.9
							194.3	-91.9	119.4
<b>ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	4556.5	-4192.8	-1998.8	-8726.2	-9477.2	-10407.5	-1590.2	-5572.6	15575.4
							1.7	3.1	-15.5
<b>ՍԿՉԲՆԱԿԱՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ</b>	-1373.0	-3931.1	-3315.1	-1439.3	-2413.3	-7853.6	-6082	-3361.5	-5584.1
							6.5	1.9	5.5
<b>ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ</b>	35132.0	113302.4	94110.0	75470.1	101009.6	142085.2	75436.4	80096.7	86480.3
							-81.1	-44.4	-85.9
<b>ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՇՎԻՎ</b>	10229.5	18496.5	19389.0	15982.0	15390.2	28392.3	25165.2	23471.2	10134.3

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել և հաշվարկվել է՝ Արցախի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական՝ <http://www.stat-nkr.am/hy/> կայքում տեղադրված տեղեկատվության հիման վրա:

							-27.1	-13.0	-10.1
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎ</b>	<b>18060.6</b>	<b>60899.3</b>	<b>67163.2</b>	<b>106030.3</b>	<b>90712.3</b>	<b>63929.8</b>	<b>-8501.6</b>	<b>-90240.1</b>	<b>-50349.2</b>
							9.1	50.0	50.0
ՊԱՅՈՒՄՏԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	0	0	0	0	0	0	0	0	0
							0.0	0.0	0.0
<b>ՄԱՔՈՒՐ ՍԽԱԼՆԵՐ ԵՎ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐ</b>	<b>-</b> <b>13723.8</b>	<b>-4073.9</b>	<b>-5534.3</b>	<b>3971.2</b>	<b>3222.1</b>	<b>9096.9</b>	<b>3234.8</b>	<b>-19000.3</b>	<b>-36752</b>
							-3.5	10.5	36.5

Համարիչում հազ. ԱՄՆ դոլար, հայտարարում՝ վճարային հաշվեկշռի տարբերության մնացորդի նկատմամբ, %-ով:

**Աշոտ Մարկոսյան, Արմեն Մարկոսյան**  
**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՏԵԳՐԱՑԻԱՅԻ ԴԻՄԱԿԵՆԴԻՐՆԵՐԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ**  
**ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Բանալի բառեր՝** *ՀՆԱ, համեմատական առավելությունների գործակիցներ, վճարային հաշվեկշիռ, համագործակցություն, տնտեսական ինտեգրացիա, ճանապարհային քարտեզ*

Ներկայիս պայմաններում Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև տնտեսական ինտեգրման հարցերը կրում են արդիական բնույթ: Վերջինս թույլ կտա ապահովել երկու հայկական հանրապետությունների միջև ընդհանուր տնտեսական միջավայրի ձևավորման և ամբողջական գործարկման գործընթացը: Այս նպատակով հողվածում դիտարկվել են Հայաստանում և Արցախում իրականացվող արտաքին առևտրի առանձնահատկությունները, կարճ անդրադարձ է կատարվել երկու երկրների միջև տնտեսական ինտեգրման ձևավորված մակարդակին, ներկայացվել է վճարային հաշվեկշիռը: Դեղինակների առաջարկությունները վերաբերում են ՀՀ և ԱՀ միջև տնտեսական ինտեգրացիայի խորացման գործընթացի անհրաժեշտ քայլերին:

**Ashot Markosyan Armen Markosyan**  
**PROBLEMS OF ECONOMIC INTEGRATION OF THE REPUBLIC OF ARMENIA**  
**AND THE REPUBLIC OF ARTSAKH**

**Keywords:** *GDP, coefficients of comparative advantages, balance of payments, cooperation, economic integration, roadmap*

Currently, the issues of economic integration between the Republic of Armenia and the Republic of Artsakh are considered vital, which will ensure the formation and full functioning of the common economic space between the two Armenian states. For this purpose, the article examines the specifics of foreign trade of Armenia and Artsakh, briefly describes the current situation in the economic integration between the two countries and presents the balance of payments. Proposals of the authors refer to the necessary steps to deepen economic integration between the Republic of Armenia and the Republic of Artsakh.

**Ашот Маркосян, Армен Маркосян**  
**ПРОБЛЕМЫ ЭКОНОМИЧЕСКОЙ ИНТЕГРАЦИИ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И**  
**РЕСПУБЛИКИ АРЦАХ**

**Ключевые слова:** *ВВП, коэффициенты сравнительных преимуществ, платежный баланс, сотрудничество, экономическая интеграция, дорожная карта*

В настоящее время насущными считаются вопросы экономической интеграции между Республикой Армения и Республикой Арцах, что позволит обеспечить формирование и полноценное функционирование общего экономического пространства между двумя армянскими государствами. С этой целью в статье рассмотрены особенности осуществления внешней торговли Армении и Арцаха, представлено краткое описание нынешней ситуации в деле экономической интеграции между двумя странами и представлен платежный баланс. Предложения авторов касаются необходимых шагов по углублению экономической интеграции между Республикой Армения и Республикой Арцах.

## ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հասարակության կազմակերպման առանձնահատուկ ինստիտուտի՝ պետության ու վերջինիս բնորոշ հայտանիշների համակողմանի բնութագրումը կարող է իրականացվել ուսումնասիրության միջգիտակարգային՝ իրավագիտական, քաղաքագիտական, տնտեսագիտական հատույթներով ամբողջացող տիրույթում: Առավել ևս բարդ են ուսումնասիրություններն ուղղված պետության կայացվածության աստիճանի գնահատմանը, որոնք նույնպես բազմասպեկտ են: Պետության կայացվածության բնութագրական ցուցանիշների վրա հենվող ընդհանրական վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ այդ ցուցանիշների և սահմանադրականության մակարդակը բնութագրող ցուցիչի միջև առկա է ֆունկցիոնալ կապ<sup>1</sup>:

Տնտեսագետներն իրագել են, թե տարբեր ժամանակներում, տարբեր երկրներում ինչ եղանակներով ու գործիքակազմով են կառավարողները կարողանում պայմաններ ստեղծել հանրության, նրա տարբեր շերտերի անհատների պահանջունքների բավարարման համար, ինչպես են, ըստ այդմ, գործել մարդու կողմից ստեղծված սահմանափակումները կամ այլ կերպ՝ «խաղի կանոնները» թելադրող ինստիտուտները: Հայտնի է, որ այդ կանոններն ու նորմերը ամրագրվում են երկրների սահմանադրություններում ու մայր օրենքներում: *Ամրագրվում են, սակայն ոչ ամբողջությամբ իրացվում կյանքում:*

Մասնագիտական գրականության մեջ պետության կայացվածության առանձնացվող չափորոշիչներից են պաշտպանունակությունը, իրավունքի գերակայությունը, կայուն զարգացումը, մեկ այլ դեպքում համադրվում են ռազմական ուժը, քաղաքական ինստիտուտների կենսունակությունը, վարչարարական կարողությունները: Չենք սխալվի, եթե այս և բազմապիսի այլ չափորոշիչներով կանխորոշվող պետության կայացվածության ինտեգրալ գնահատականը տեսնել երկրի բարեկեցության ցուցիչով: Թե ինչպես է բազում հայտանիշեր ներառող չափորոշիչով որոշվում երկրի բարեկեցության ցուցիչը ներկայացնող, սահմանադրականության մակարդակը բնութագրող ինդիկատորը, մանրամասն ներկայացված է [1]-ում բերված Մեթոդիկայի միջոցով (էջ 189-206): Օգտվելով տեղեկատվական մի շարք աղբյուրներից<sup>2</sup> վերը հիշատակված Մեթոդիկայով սահմանադրականության մակարդակի ախտորոշումը փորձարկվել է Նախկին ԽՍՀՄ-ի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի անցումային 29 երկրների կտրվածքով և իրականացվել է նշված երկրների բլաստերացում:

**Հիշատակված բլաստերացման համատեքստում առավել մեծ կարևորություն են ստացել ժողովրդավարական և ինստիտուցիոնալ զարգացումների, այնուհետև՝ մարդկային կապիտալի զարգացման և քաղաքական կայունության գործոնները: Կարևորության առավել ցածր մակարդակ ունեն սոցիալ-տնտեսական ցուցիչները՝ աղքատության մակարդակ և Ջինիի գործակից: Բլաստերային վերլուծությունը թույլ է տալիս հետազոտել սահմանադրականության համեմատական մակարդակն առանձին երկրի համար**

<sup>1</sup> Տե՛ս, Գ. Հարությունյան, Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Սահմանադրականություն. ինստիտուտների ընկալումը և երկրների բարեկեցությունը: - Եր.: Չանգակ հրատ., 2018, - 208 էջ:

<sup>2</sup> Համաշխարհային բանկի World Development Indicators, ԱՆԳՈՒՄԱԿԻՆ տնտեսությունների համար Ֆրիդոմ Հաուսի Nations in Transit, Կառավարման որակի World Governance Indicators, Թրանսպերենսի ինթերնեյշնալ Corruption Perception Index, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի Human Development Index և այլ շտեմարաններ:

և հետևություններ անել, թե քլաստերում որ գործոններն են այն ցուցիչները, որոնք պետք է հատկապես կարևոր լինեն սահմանադրական կարգավորման ոլորտում քաղաքականության մշակման պատասխանատուների համար: Սահմանադրականության միջին մակարդակ ունեցող երկրների քլաստերում, որտեղ «տեղավորվել է» Հայաստանը, ունի ժողովրդավարական զարգացումների ինդիկատորի համար տվյալ քլաստերի միջինից բավական ցածր ցուցիչ: Հիշենք, որ այս գնահատումները վերաբերում են 2014թ-ին, որում ներառված չէ 2018թ. ապրիլ-մայիսը՝ ՀՀ քաղաքացիական հասարակության ընդգլուցումը: Սահմանադրականության բարձր մակարդակով քլաստերի միջինի համեմատ առավել մեծ տարբերություններ առկա են ինստիտուցիոնալ զարգացումների և քաղաքական կայունության ցուցիչների մասով: Դրանք համեմատական քլաստերային վերլուծության օգնությամբ որոշված հենց այն ցուցիչներն են, որոնց պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել քաղաքականության գերակայությունների մշակման ժամանակ:

Քլաստերային վերլուծությունը թույլ է տվել սահմանել սահմանադրականության մակարդակի որոշման առավել կարևոր ցուցիչներ: Դիտարկված անցումային երկրների ցուցակագմում ժողովրդավարական զարգացումների և ինստիտուցիոնալ զարգացման ցուցիչների կարևորության փաստը վկայում է այն մասին, որ զարգացման տվյալ փուլում անցումային երկրների միջև հիմնական տարբերությունները պայմանավորված չեն սոցիալ-տնտեսական զարգացումներով: Գրեթե համանման հետևություններ մեր կողմից արվել են մեկ այլ ուսումնասիրության մեջ, որտեղ օգտագործվել է բացատրող փոփոխականների մեկ այլ համախումբ: Սա խոսում է բացատրող փոփոխականների համախմբի փոփոխման դեպքում ստացված արդյունքների հավաստիության մասին: *Սոցիալ-տնտեսական ցուցիչների բարելավման նպատակադրումը և իրագործումը սահմանափակված է ինստիտուտների և ժողովրդավարական գործընթացների անբավարար զարգացվածությամբ:* Այս հետևությունը տվյալ հետազոտության առավել կարևոր արդյունքներից է՝ երկրում սահմանադրականության մակարդակի բարելավման ուղղությամբ քաղաքականություն վարելու առաջարկների տեսանկյունից: Որպես վարկած կարելի է ենթադրել, որ անցումային երկրներում տնտեսության հետագա վերելքը, որն այլևս «վերականգնվող» չէ, մեծապես պետք է կանխորոշվի ժողովրդավարական և ինստիտուցիոնալ բարելավումներով:

Երկրների բարեկեցությունը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, ինչպիսիք են աշխարհագրական դիրքը, կլիման, բնական և մարդկային ռեսուրսները, կրոնը, պատմականորեն ձևավորված փոխհարաբերությունները հարևան երկրների հետ, պատմականորեն պայմանավորված քաղաքական ուղին և այլն: Աճեմօղլին և Ռոբինսոնն<sup>1</sup> ապացուցել են, որ երկրների բարեկեցության մակարդակը ոչ միշտ է բացատրվում միայն այդ գործոններով: Նրանք ցույց տվեցին, որ երկրների ծաղկումն ու անկումը նվազագույնը պայմանավորված են նաև ձևական քաղաքական և տնտեսական ինստիտուտների որակով և կարողունակությամբ: Մեր կողմից իրականացված էմպիրիկ վերլուծության օգնությամբ ցույց է տրվել այդ պնդման հավաստիությունը: *Ցույց է տրվել նաև, որ կարևոր նշանակություն կարող են ունենալ մարդկանց վարքագծային նախադրյալները, ինստիտուտների ընկալումը, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը:* Սահմանադրական կայունության և սահմանադրական ավանդույթների չափման համար հեղինակային խմբի կողմից օգտագործվել են պրոքսի փոփոխականներ: Սահմանադրական կայունությունը գնահատվել է «երկրի հիմնական օրենքում

<sup>1</sup> S ե 'u Acemoglu, Daron and James A Robinson, *Why Nations Fail: The Origins of Power, Prosperity and Poverty*. 1st ed. New York, 2012.

կատարված փոփոխությունների քանակը՝ սկսած 1991թ-ից» փոփոխականի, իսկ սահմանադրական ավանդույթները՝ «սահմանադրության ընդունումից հետո անցած տարիների քանակը» փոփոխականի օգնությամբ: Հանգել ենք այն ենթադրության, որ սահմանադրության մեջ կատարվող ցանկացած փոփոխություն պայմանավորված է քաղաքական, տնտեսական կամ սոցիալական բնույթի որոշակի իրադարձություններով: Փոփոխությունն ինքնին ապագայում կարող է կայունություն մտցնել հասարակության կյանքում: Միևնույն ժամանակ, հիմնական օրենքում կատարվող ցանկացած փոփոխություն ենթադրում է խորը փոփոխություններ պետական կառավարման ինստիտուտների գործունեության մեջ և հասարակական հարաբերությունների ադապտացում այդ փոփոխություններին: Հենց այդ հանգամանքով կարելի է բացատրել Էմպիրիկ մոդելում հայտնաբերված հակադարձ կախվածությունը՝ «սահմանադրության մեջ կատարված փոփոխությունների քանակ» փոփոխականի և «մարդկային զարգացման ինդեքս» փոփոխականի միջև: Միաժամանակ, մեր կողմից իրականացվող հետազոտությունները ցույց են տալիս, թե ինստիտուցիոնալ տնտեսագիտության Էմպիրիկ ուսումնասիրություններում որքան կարևոր է այնպիսի հասկացությունների ճշգրիտ չափման հնարավորությունը, ինչպիսիք են սահմանադրական արժեքները, սահմանադրական կայունությունը և այլն: Առաջարկվել է սահմանադրական կայունության չափման մեթոդաբանություն<sup>1</sup>, որը, Գ. Հարությունյանի կողմից առաջարկված ինդիկատորների<sup>2</sup> վրա կիրառելով, կարող է լուծել այդ խնդիրը: Մենք մտադիր ենք շարունակել ուսումնասիրություններն այս ուղղությամբ: Հետազոտությամբ պարզվել է նաև, որ առկա է դրական կախվածություն նոր սահմանադրության ընդունումից հետո անցած տարիների քանակի և երկրների բարեկեցության միջև: Ընդ որում պարզվում է, որ գոյություն ունի որոշակի շեմ, որը տարբեր երկրների համար կարող է տարբեր լինել, որից հետո սահմանադրության ընդունումից հետո անցած ժամանակի դրական ազդեցությունը գործնականում չեզոքացվում է: Հարկ է նկատել, որ նոր սահմանադրության ընդունման պատճառները կարող են տարբեր լինել: Այն ազդեցությունը, որի մասին մենք այժմ խոսում ենք, ամենայն հավանականությամբ պայմանավորված է այնպիսի դեպքերով, երբ սահմանադրության ընդունումը որոշակի իրադարձությունների հետևանք է, որոնք հանգեցրել են պետական իշխանության ինստիտուտների ամբողջական կամ մասնակի փլուզման: Նոր սահմանադրությունների ընդունումը, որի արդյունքում պահպանվում է պետական իշխանության մարմինների շարունակականությունը, մեր ուսումնասիրության մեջ և մեր նպատակներից ելնելով առավելապես վերաբերում է «փոփոխություններ հիմնական օրենքում» հասկացությանը: Խոսելով այնպիսի հասկացությունների մասին, ինչպիսիք են «սահմանադրական կայունությունը» և «սահմանադրական ավանդույթները»՝ հարկ է նշել, որ դրանք կիրառելի են անցումային տնտեսությամբ երկրների համար: Այդ երկրները գտնվում են մի իրավիճակում, երբ սահմանադրական փոփոխություններն անհրաժեշտ են, և հենց դրանք են հանդիսանում անցումային գործընթացների հիմքը: Այդ երկրներում նոր ինստիտուտների ձևավորումը և դրանց փոխակերպումը՝ կախված փոփոխվող իրավիճակից, կենսական անհրաժեշտություն է: Այդ պատճառով, սահմանադրական մշակույթի ձևավորումն այդ երկրներում որոշակի ժամանակ է պահանջում: Այնուամենայնիվ, այս ուսումնասիրությունը ցույց տվեց, որ կայուն սահմանադրական համակարգի ձևավորումը երկրների զարգացման

<sup>1</sup> S ե 'u Harutyunyan G.G., Sargsyan H.L., Gevorgyan R.A., Assessment of the Level of Constitutionalism in Transition Economies, Journal of Advanced Research in Law and Economics (JARLE), Volume VIII, Issue 4(26), Summer 2017, pp. 1126-1135.

<sup>2</sup> S ե 'u Harutyunyan G.G., Main components of systematic constitutional monitoring, Constitution Justice, Number 4(74), 2016, pp 7-35.

անհրաժեշտ պայման է, այդ թվում՝ անցումային: Այն անցումային երկրները, որոնք կկարողանան ավելի շուտ ձևավորել կայուն սահմանադրական համակարգ, երկարաժամկետ տնտեսական զարգացման ավելի մեծ հնարավորություններ կունենան:

Մեր ուսումնասիրության հաջորդ կարևոր կողմը երկրների բարեկեցության վրա վարքագծային նախադրյալների և ինստիտուտների ընկալման ազդեցությունն է: Այս դեպքում ևս կարևոր խնդիր է այդ հասկացությունների առավել ճշգրիտ չափման հնարավորությունը: Դրանց «չափման» համար օգտագործել ենք WVS տվյալների շտեմարանը<sup>1</sup> և ստացել, որ վարքագծային նախադրյալների փոփոխականները և ինստիտուտների ընկալման փոփոխականները վիճակագրորեն նշանակալի են: Պարզ դարձավ, որ երկրների ուսումնասիրվող ընտրանքում գոյություն ունեն վարքագծի և ինստիտուտների ընկալման որոշ կարծրատիպեր, և որ դրանք երկրների բարեկեցության բացատրման համար որոշիչ գործոններ են հանդիսանում: Հակվածությունը «փոքր խախտումների մարտավարությանը» և ինստիտուտների ընկալման ցածր մակարդակը բացասական է ազդում մարդկային զարգացման ինդեքսի վրա: Երկրների բարեկեցության բացատրման գործում այդ փոփոխականների կարևորության հետ մեկտեղ ուսումնասիրությունը վեր հանեց նաև այդ հասկացությունների չափման հնարավորության խնդիրը: Նոր ինստիտուցիոնալ տնտեսագիտության մեջ գոյություն ունի օպորտունիստական վարքագծի՝ հասկացությունը, երբ գործակալները հետապնդում են անձնական շահ՝ ընդհուպ հասնելով ուխտադրության (self interest seeking with guile): Աշխատության մեջ նկարագրված «փոքր խախտումների մարտավարությունը» հանդիսանում է օպորտունիստական վարքագծի դրսևորումներից մեկը: Այդ վարքագծի մեկ այլ հնարավոր դրսևորում կարող է լինել «օրենքների ընտրողական կամ հարաբերական կատարման մարտավարությունը», երբ մարդը համոզված է, որ, ելնելով ստեղծված իրավիճակից, ինքն ինքնուրույն կարող է որոշել կատարել կամ չկատարել օրենքի նորմը: Նման իրավիճակի օրինակ է ամբողջովին դատարկ խաչմերուկում կարմիր լույսի տակով անցնելը: Երկրների բարեկեցության վրա նման մարտավարության ազդեցության ուսումնասիրությունը հնարավոր չէ տվյալների մասնագիտացված շտեմարանի բացակայության պատճառով: Օրինակ WVS տվյալների շտեմարանում մենք չգտանք այնպիսի փոփոխականներ, որոնք կկարողանային օգտագործել այդ և այլ վարքագծային նախընտրությունների նկարագրման համար:

Սահմանադրական և ինստիտուցիոնալ տեսությունների ոլորտում Էմպիրիկ ուսումնասիրությունների զարգացման կարևոր նախադրյալներից է տվյալների մասնագիտացված շտեմարանի ստեղծումը: Այսպիսով, ձևակերպված հիմնական հիպոթեզը ամբողջությամբ հաստատվեց, այն է՝ *սահմանադրական մշակույթն ու վարքագծային ասպեկտները ինստիտուցիոնալ զարգացման հետ մեկտեղ երկրների բարեկեցության հիմնական գործոններն են:*

Այժմ անդրադառնանք առաջիկա տարիների համար մշակվող ռազմավարական այն խնդիրների համալիրին, որոնք նպատակաուղղված կլինեն սահմանադրականության մակարդակի բարձրացմանը: Հակիրճ անդրադարձը վերջին տասնամյակներին մեզ հուշում է, որ ՀՀ ներկայիս բնակչության ավելի քան երկու երրորդն ապրել է նաև նախկին ԽՍՀՄ-ում, որում մարդկանց վարքաբանական ընկալումներն ու բարեկեցության մասին պատկերացումները, տիրապետող կարգերն ու բարքերն այլ են եղել: Նորանկախ Հայաստանում ամեն ինչ հիմնովին փոխվում և դեռևս փոփոխվելու է: Փոփոխությունները վերաբերելու են նաև **տնտեսության**

<sup>1</sup> World Values Survey /<http://www.worldvaluessurvey.org/>

<sup>2</sup> Oliver E. Williamson, "Opportunism and its critics", in: *Managerial and decision economics*, Vol. 14, 1993, p. 97).



**կառավարմանը: Փոփոխությունների առաջնահերթություններից առաջինը՝ անցումն է հաստատված տնտեսակարգից իրական ազատական տնտեսակարգին:**

Որո՞նք են ակնկալիքներն այդ ասպարեզում: Նախ, հիմնովին պետք է փոխվի իրական ազատական տնտեսական հարաբերությունների մասին մեր ընկալումները: Այսօր առկա են այն բոլոր արատավոր սահմանափակումները, որոնց մասին ավելի քան երկու տասնամյակ բարձրաձայնվել է (այդ թվում մեր կողմից՝ գրավոր ու բանավոր հրապարակումներում՝ կառուցվածքային փոփոխությունների, արտահանման պոտենցիալի գործադրման, գիտակրթական համակարգի արդյունավետ գործարկման և այլ հիմնախնդիրների մասին, որոնց անդրադարձը այսօր էլ շարունակում է մնալ որպես հրամայական), սակայն այդ ամենի շտկմանն ուղղված ձեռնարկումները ավելի շատ կրել են կոսմետիկ, ընտրողական բնույթ: Մեկ պարզագույն օրինակ. կրթական ծառայությունների արտահանման համար բացի լավ դասավանդողներից, պետք է լուծել սովորողների կեցության հարցը: Մրցակցային միջավայրի բարելավման, կոռուպցիայի կանխարգելման, ստեղծարար աշխատանքի խթանման համար բոլորովին այլ են լուծումները: Պատերազմում հաղթանակի կամք դրսևորած ու հաղթանակած մեր ժողովուրդը անցյալում իրականացվող սոցիալ-տնտեսական քաղաքականության արդյունքում կրեց անասելի գրկանքներ ու, առանձին դեպքերում, ենթարկվեց հարստահարման: Ժողովուրդը բռնեց պանդխտության ուղին: Հախուռն մասնավորեցումը (այդ թվում՝ հողի ու ընդերքի պաշարների) գիտակրթական համակարգի ետաճը լուրջ ազդակ դարձան զարգացման պոտենցիալ հնարավորությունների գործադրման համար: Չորբայության վրա հիմնված նոր էլիտայի ստեղծումը, բարձր արժեքների անտեսումը, արհամարումն ու խեղումն «արդարացվում» էր այն պարզունակ տրամաբանությամբ, որ մեր ժողովուրդը հազարամյակներով պետականություն չի ունեցել, հարմարվող է և այլն: Այդպես ձեռնտու էր: Ձեռնտու էր նաև հետևողական աղբատացումը, որ լայն դռներ էր բացում ընտրակեղծարարության համար:

Դեռևս անցյալ տարեվերջին, երբ դեռ չէին նշմարվում հեղափոխության ծիլերը, հրապարակումներքս մեկը վերնագրված էր «Հայաստանում պատշաճ կենսամակարդակ կլինի, եթե լավ ընտրություններ և լավ Ազգային ժողով ունենանք»: Այսպիսով, իրական ազատական տնտեսակարգի մասին մարդկանց պատկերացումներն ու ընկալումները պետք է խարսխվեն նաև մտածողության այնպիսի համակարգի վրա, որի պարագայում խորթ կլինի երկրի բյուջեից գողանալու՝ կոռուպցիայի երևույթը: Բոլորին պետք է հասու լինի, որ կոռուպցիան նույնն է, ինչ ծնողներից ու երեխաներից գողանալու անբացատրելի երևույթը:

**Տնտեսության էֆեկտիվ կառավարման հաջորդ առաջնահերթությունը բոլոր մակարդակներում ու ոլորտներում որոշումների կայացման ու լուծումների կենսագործման վերակազմակերպումն է:**

Նորովի մոտեցումները պետք է նպատակաուղղվեն կոռուպցիայի հնարավորության չեզոքացմանը: Եթե դրան ուղղված մտածողության համակարգի փոփոխությունը երկարատև պրոցես է, կարևոր է առաջին քայլերի հարցում ճիշտ կողմնորոշումը, որը հետագա բարեհաջող ընթացքի նախապայման է: Մի բան պետք է հստակ ընդունենք, որ կարճաժամկետ էֆեկտները երբեմն վերաճում են երկարաժամկետ կորուստների: Գիտելիքահենք կառավարումը, նախևառաջ ուղղորդված պետք է լինի հանրային միջոցների յուրացման ամենատարբեր սողանքների վերացմանը: Դրանցից ամենաեականը օրենքներում տեղ գտած տարընթերցման հնարավորությունների բացառումն է: Ոչ արդյունավետ բաշխման ու վերաբաշխման, անհարկի թուլտվությունների վրա կառուցված կառուցակարգերն ու ընթացակարգերը պարարտ հող են ստեղծում միջոցների փոշիացման ու արդյունքների յուրացման հարցում, որը, միով բանիվ, հանգեցնում է անարդյունավետ տնտեսվարմանը: Այս ամենի արդյունքում ունենում ենք

սահմանադրականության առեւտրի դեֆիցիտ, որը դրսևորվում է երկրի սահմանադրության մեջ ամրագրված նորմերի ու դրույթների ոչ բավարար իրացվելիության մակարդակով: Դեֆիցիտը դրսևորվում է հանրային կյանքի կազմակերպման գրեթե բոլոր ոլորտներում՝ ժողովրդավարության մեջ, ինստիտուցիոնալ ու քաղաքական զարգացումներում, հակակշիռների ու զսպող մեխանիզմների արդյունավետ կենսագործման ասպարեզում: Այդ դեֆիցիտը, իհարկե տարբեր չափերով, բնորոշ է բոլոր երկրներին: Մեզանում իշխանությունների գերինդիորը պետք է լինի սահմանադրականության մակարդակի բարձրացումը կամ դեֆիցիտի հաղթահարումը: Այդ դեֆիցիտը վերաբերում է իրավունքի գերակայության բոլոր գումարելիներին, մասնավորաբար պատշաճ կենսամակարդակին, և այս առումով խիստ կարևոր է դառնում տնտեսական աճի ներառականության տարածումը հասարակության բոլոր շերտերի վրա՝ էապես մեղմելով եկամուտների առկա գերբևեռացումը: Խնդրի լուծման՝ գերբևեռացման մեղմմանը կարող է նպաստել ունեցվածքի (գույքի) պրոգրեսիվ հարկման մեխանիզմի ներդրումը: Բայց որքան էլ զարմանալի թվա, վերջին խնդրի լուծումը ոչ թե հարստության վերաբաշխումն է, այլ տնտեսական հնարավորությունների վերաբաշխումը՝ սկսած կրթությունից մինչև ձեռնարկատիրություն: Սոցիալ-տնտեսական քաղաքականության ասպարեզում գոյություն ունեցող մոտեցումների վերախմաստավորումն ու զարգացման ծրագրերում դրանց ամրագրումը վերաբերում է **պայմանագրային էկոնոմիկային**: Այսօր դժվար չէ տեսնել, որ տնտեսությունը, ի վերջո, տնտեսավարող սուբյեկտների միջև պայմանագրերով ներկայացվող մի ամբողջական ցանց է, պայմանագրերի մի մեծ համախումբ: Շուկան, տվյալ պարագայում, ներկայացնում է մի իրավիճակ, որտեղ պայմանավորվում են: Ընդ որում, պայմանավորվում են ինչպես արդյունքի ստեղծման, այնպես էլ դրա բաշխման, վերաբաշխման (հարկման) տեղաբաշխման (այդ թվում՝ արտահանման), արտադրության ընդլայնման և ամենատարբեր հարցերում: Տնտեսագետ կառավարողները (այդ թվում՝ մակրոմակարդակում) ուսումնասիրելով այդ պայմանավորվածությունների իրագործման համար: Դրա համար ստեղծվում են բավարար տնտեսաիրավական կարգավորումներ ձեռնարկությունների միջև, գործատու-աշխատող հարաբերություններում և այլն: Առաջադրված խնդրի համատեքստում կարևորվում է պայմանագրերի լուծման կամ վիճարկման դատաիրավական ինստիտուտի, մասնավորաբար 2019թ. հունվարի 1-ից սնանկացման գործերով դատարանների կայացումը: Իսկ խնդիրը գերարդիական է: 2016թ. 33 խոշոր և միջին առևտրային կազմակերպությունների պարտավորությունները գերազանցում է 3 տրիլիոն դրամը, իսկ 2018թ. օգոստոսի 1-ի դրությամբ սնանկ ճանաչված առևտրային կազմակերպությունների թիվը շուրջ 4 հազարի է հասնում: Փաստենք, որ 2017թ. դատարան դիմած սնանկության գործերի թիվը շուրջ 10 հազար է, որոնցից սնանկ է ճանաչվել 3171-ը: Մեր ժամանակներում լուծում պահանջող մյուս խնդիրը վերաբերում է **թվային էկոնոմիկային**:

Յամաշխարհային զարգացման միտումները վկայում են, որ տեղեկատվական ու տեխնոլոգիկացիոն ծառայությունների արտադրությունը կազմում է աշխարհի ԶՆԱ-ի շուրջ 7%-ը: Թվայնացումը միանգամայն բարձրացնում է ընկերությունների մրցունակությունը, օգնում է օպտիմալացնել ծախսերը, մեծացնել ակտիվների եկամտաբերությունը, օգնում լավագույնս գնահատել սպառողների պահանջարկը:

Մեր կողմից նախանշված բարեփոխումներին միտված ուղղությունները բնավ չեն ծածկում կառուցվածքային ու ինստիտուցիոնալ փոփոխությունների ողջ տիրույթը: Եվ ընդհանրապես, համակարգը հիմնովին փոխելու հնարավորությունները, որտեղ կա դրա անհրաժեշտությունը, միաժամանակ իրականացնելը ռիսկային է: Վերջինիս մեղմման ռիսկը ինստիտուցիոնալ տեսության

մեջ հայտնի մոտեցմամբ՝ միջանկյալ ինստիտուտների կառուցումն է: Կարելի է բերել օրինակներ: Արտաքին ուժերի շահերի սպասարկումից ձերբազատված քաղաքացիական հասարակության ինստիտուցիոնալ բարեփոխումները և, վերջապես, տնտեսա-իրավական կարգավորման ողջ գիևանոցի գործադրումը, որն ուղղված է սահմանադրականության մակարդակի բարձրացմանը, կարող է իրական համադրման (երաշխիք) հանդիսանալ բարեկեցիկ Հայաստանի կերտման գործում:

**Հայկ Սարգսյան**  
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ**  
**ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Բանալի բառեր՝ սահմանադրականություն, բարեկեցություն, կառավարում, պետություն, կայունություն, ինստիտուցիոնալիզմ*

Բնակչության բարեկեցության ապահովման համար կարևոր նշանակություն կարող են ունենալ մարդկանց վարքագծային նախադրյալները, ինստիտուտների ընկալումը, սահմանադրական ավանդույթներն ու սահմանադրական կայունությունը, տնտեսության արդյունավետ կառավարումը: Սահմանադրական մշակույթն ու վարքագծային ասպեկտները ինստիտուցիոնալ զարգացման հետ մեկտեղ երկրների բարեկեցության հիմնական գործոններն են: Տնտեսության արդյունավետ կառավարման առաջնահերթություններից է բոլոր մակարդակներում ու ոլորտներում որոշումների կայացման ու լուծումների կենսագործման վերակազմակերպումը:

**Hayk Sargsyan**  
**INTERACTIONS BETWEEN CONSTITUTIONALISM AND**  
**THE CONDITION OF THE STATE**

**Key words:** *constitutionalism, prosperity, governance, state, stability, institutionalism*

To ensure the welfare of the population behavioral prerequisites of people, perception of institutions, constitutional traditions and constitutional stability, efficient economy management are of great importance. The constitutional culture and behavioral aspects along with institutional development are the main factors of welfare of the countries. One of the priorities of effective economic governance is the reorganization of decision-making and implementation of solutions at all levels and areas.

**Гайк Саргсян**  
**ВЗАИМОДЕЙСТВИЕ МЕЖДУ КОНСТИТУЦИОНАЛИЗМОМ И**  
**СОСТОЯТЕЛЬНОСТЬЮ ГОСУДАРСТВА**

**Ключевые слова:** *конституционализм, благосостояние, управление, государство, стабильность, институционализм*

Для обеспечения благосостояния населения большое значение могут иметь поведенческие предпосылки людей, восприятие институтов, конституционные традиции и конституционная стабильность, эффективное управление экономикой.

Конституционная культура и поведенческие аспекты наряду с институциональным развитием являются основными факторами благосостояния страны. Одним из приоритетов эффективного управления экономикой является реорганизация принятия и реализации решений на всех уровнях и в разных областях.

## ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

### ՍԱՄՍՈՆ ԴԱՎՈՅԱՆ

Համաշխարհային տնտեսության բազմաբնույթ փոփոխությունները, որոնք տեղի են ունենում աշխարհաբաղաբալական, բնապահպանական, սոցիալական և այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների էական ազդեցությունների շնորհիվ, լուրջ մարտահրավերներ են ներկայացնում տարբեր երկրների իշխանություններին և հասարակությանը: Դրանց դիմակայելու նպատակով նրանք մշակում և իրականացնում են ռազմավարական, հայեցակարգային, հեռանկարային, ընթացիկ և այլ տարաբնույթ ծրագրեր: Սովորաբար այդ ծրագրերի իրականացումը ուղղորդվում է բազմաբնույթ վերափոխումների մշակումով և գործնական կիրառմամբ:

Յուրաքանչյուր երկրի համար գիտագործնական բնույթի կարևոր խնդիր է հանդիսանում, թե ինչ համեմատական արդյունավետությամբ են մշակում և իրականացնում համապատասխան վերափոխումները զարգացման համարյա նույն մակարդակում գտնվող երկրներում: Ինչպես միջազգային (Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Միավորված ազգերի կազմակերպություն), այնպես էլ ոչ կառավարական կազմակերպությունների կողմից մշակվում են մեծ թվով առանձին համաթվեր (համաշխարհային մրցունակության, տնտեսական ազատության, ժողովրդավարության և այլն), որոնք ներկայացնում են տարբեր երկրներում իրականացված վերափոխումների առանձին ուղղությունները:

Առհասարակ, երկրների տնտեսությունների ինչպես մակրո, այնպես էլ միկրո մակարդակների սոցիալ-տնտեսական իրավիճակների գնահատման և վերլուծության գործընթացում համաթվերն առավել տարածված և կարևորագույն ընդհանրացնող ցուցանիշներ են: Դրանց օգնությամբ բնութագրվում են ազգային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխություններն ամբողջությամբ և ըստ ճյուղերի, հետազոտվում է առանձին գործոնների դերը տնտեսական ցուցանիշների ձևավորման գործում: Համաթվերն օգտագործվում են նաև տնտեսական ցուցանիշների միջազգային համադրումների համար: «Համաթիվ» եզրն օգտագործվում է մաթեմատիկայում, տնտեսագիտությունում և այլ գիտություններում: Վերափոխումների ընդհանրական համաթվի համար որպես բաղադրիչներ դիտվել են տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից մշակվող 17 մասնակի համաթվեր, այդ թվում Համաշխարհային մրցունակության (Global Competitiveness Index), Գործարար ակտիվության (Doing Business Index), Ժողովրդավարության (The Democracy Index), Մարդկային զարգացման (Human Development Index) և այլ համաթվեր:

Պետք է նշել, որ դիտարկված բոլոր համաթվերը, իրենց կարևոր գործնական նշանակությամբ հանդերձ, հանդիսանում են հասարակական կենսագործունեության առանձին ոլորտներում առկա իրավիճակի և այդ ուղղություններում իրականացված վերափոխումների մասնակի գնահատականներ:

Հետազոտության իրականացման արդյունքում մշակվել է վերափոխումների ընդհանրական համաթիվ, որը գերծ է տարբեր միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից մշակվող ու լայնորեն կիրառվող նմանօրինակ համաթվերին բնորոշ հիմնական թերություններից և թույլ է տալիս ստանալ վերափոխումների արդյունքները բավարար համարժեքությամբ արտացոլող ցուցանիշներ:

Բազմաբնույթ վերափոխումների գնահատումը և վերլուծությունն իրականացվել են չորս փուլերով, տարբեր էկոնոմետրիկ մեթոդների կիրառմամբ: Ընդ որում՝ հետազոտության յուրաքանչյուր փուլում ձևավորվել են տարբեր ընդհանրական համաթվեր, որոնք ստացվել են որոշակի քանակի մասնակի համաթվերի (6-ից մինչև 17) միավորման արդյունքում, իսկ այդ համաթվերից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է սոցիալ-տնտեսական, քաղաքական և այլ բնույթի վերափոխումների քանակական արտահայտություն:

Հետազոտության առաջին փուլում համաթիվը հաշվարկվել է գլխավոր քաղաքիչների մեթոդով, որը մշակվել է Ռուսաստանի Դաշնության Կենտրոնական տնտեսամաթեմատիկական ինստիտուտի պրոֆեսոր Այվազյանի կողմից:

Համաթվի կառուցման առաջին փուլը վերլուծության մեջ ներառված ցուցանիշների արժեքների նորմավորումն է [0;1] միջակայքում: Սա անհրաժեշտ քայլ է, քանի որ տվյալների բազայում ներառված են տարբեր չափողականության և տարբեր ուղղվածության ցուցանիշներ, որոնք մեկ համաթվում խմբավորելու համար պետք է բերել ընդհանուր հարթության վրա: Նորմավորումն իրականացվում է հետևյալ սկզբունքով.

Եթե ելակետային  $x$  ցուցանիշը համապատասխան էլքային չափանիշի հետ կապված է մոնոտոն աճող կախվածությամբ (այսինքն՝ որքան մեծ է  $x$ -ը, այնքան բարձր է զարգացման մակարդակը), ապա նորմավորված փոփոխականը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\tilde{x} = \frac{x - x_{\min}}{x_{\max} - x_{\min}},$$

որտեղ՝  $x_{\max}$  և  $x_{\min}$ -ը ելակետային  $x$  ցուցանիշի համապատասխանաբար նվազագույն (վատագույն) և առավելագույն (լավագույն) արժեքներն են:

Եթե ելակետային  $x$  ցուցանիշը վերլուծվող ընդհանրական չափանիշի հետ կապված է մոնոտոն նվազող կախվածությամբ, այսինքն՝ որքան մեծ է  $x$ -ը, այնքան ցածր է զարգացման մակարդակը, ապա նորմավորված չափանիշը հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$\tilde{x} = \frac{x_{\max} - x}{x_{\max} - x_{\min}} :$$

Հնարավոր են այնպիսի իրավիճակներ, երբ մասնակի  $x$  ցուցանիշը զարգացման մակարդակը գնահատող ինտեգրալային ցուցանիշի հետ կապված լինի ոչ մոնոտոն կախվածությամբ, այսինքն՝ արժեքների միջև գոյություն ունենա առավելագույն որակին համապատասխանող որոշակի արժեք: Օրինակ՝ այդպիսին են գործազրկության մակարդակի և բնակչության հավելածի ցուցանիշները:

Այս դեպքում նորմավորումը իրականացվում է հետևյալ բանաձևի կիրառմամբ.

$$\tilde{x} = 1 - \frac{|x - x_{opt}|}{\max\{(x_{\max} - x_{opt}), (x_{opt} - x_{\min})\}} :$$

Լշենք, որ  $x_{\min}$ ,  $x_{\max}$  և  $x_{opt}$  արժեքների գնահատման համար կիրառվում է Էմպիրիկ մոտեցում: Օրինակ՝ որպես  $x_{\min}$  և  $x_{\max}$  վերցվում են  $x$  փոփոխականի համապատասխանաբար նվազագույն և առավելագույն (կամ էլ դրանց մոտ գտնվող) արժեքները՝ ըստ բոլոր դիտարկումների:

Այնուհետև  $\tilde{x}_i^{(1)}, \tilde{x}_i^{(2)}, \dots, \tilde{x}_i^{(p)}$  մասնակի չափանիշները բաժանվում են  $m_0$  թվով խմբերի, որից հետո կառուցվում են  $M_1, M_2, \dots, M_{m_0}$  խմբերի մեջ ներառված մասնակի չափանիշների ձևափոխված գլխավոր բաղադրիչները:

Հաջորդիվ հաշվարկվում են  $\tilde{y}^{(1)}, \dots, \tilde{y}^{(m_0)}$  ընդհանրական բնութագրիչների  $\tilde{v}_j$  կշիռները՝ ելնելով բոլոր մասնակի չափանիշների գումարային դիսպերսիաներում դրանց դիսպերսիայի հարաբերակցությունից: Այսինքն՝

$$\tilde{v}_j = \frac{s_{\tilde{y}_j}^2}{\sum_{k=1}^p s_{\tilde{x}^{(k)}}^2},$$

որտեղ՝

$$s_{\tilde{y}^{(j)}}^2 = \frac{1}{n} \sum_{i=1}^n (\tilde{y}_i^{(j)} - \bar{y}^{(j)})^2, \quad \bar{y}^{(j)} = \frac{1}{n} \sum_{i=1}^n \tilde{y}_i^{(j)}$$

$$s_{\tilde{x}^{(k)}}^2 = \frac{1}{n} \sum_{i=1}^n (\tilde{x}_i^{(k)} - \bar{x}^{(k)})^2, \quad \bar{x}^{(k)} = \frac{1}{n} \sum_{i=1}^n \tilde{x}_i^{(k)} :$$

Վերը նկարագրված մոտեցման համաձայն՝  $\tilde{v}_j$  գործակիցները, ըստ էության, կարելի է դիտարկել որպես հետազոտվող երևույթում, համակարգում (իսկ ավելի կոնկրետ, մեր հետազոտության ուղղվածությունից ելնելով՝ ընտրված ցուցանիշների համախմբությամբ բնութագրվող սոցիալ-տնտեսական զարգացման համապատկերում)  $\tilde{y}^{(1)}, \dots, \tilde{y}^{(m_0)}$  ընդհանրական բնութագրիչներից յուրաքանչյուրի կարևորությունը, մասնակցության նշանակալիությունը գնահատող հարաբերական մեծություն:

Համաթվի հաշվարկման համար  $\tilde{v}_j$  հարաբերական գործակիցները նորմավորվում են և բերվում են կշռային գործակիցների համար ավելի կիրառական տեսքի: Դա արվում է հետևյալ կերպ.

$$v_j = \frac{\tilde{v}_j}{\sum_{l=1}^{m_0} \tilde{v}_l} :$$

Ակնհայտ է, որ այս դեպքում տեղի ունեն կշիռների համար անհրաժեշտ պայմանները.

$$\sum_{j=1}^{m_0} v_j = 1, \quad v_j \geq 0, \quad (j = 1, \dots, m_0) :$$

Համաթիվը հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ:

$$H_{\text{ըճը}}^j = \sum_{j=1}^{m_0} v_j \tilde{y}^{(j)} :$$

Յետազոտության երկրորդ փուլում կիրառվել է պանելային մեթոդը<sup>1</sup>, որը որպես էկոնոմետրիկայի առանձին ուղղություն, հնարավորություն է ընձեռում միևնույն տնտեսական միավորների (ընկերության, տնտեսության, երկրի և այլնի) համար իրականացնել դիտարկումներ՝ ելնելով դրա նպատակներից, որոնք տեղի են ունեցել ժամանակի հաջորդական հատվածներում: Այսինքն՝ պանելային տվյալներն իրենց մեջ ներառում են տարբեր ցուցանիշների դեպքում համաթվերի ինչպես տարածաշրջանային (ըստ երկրների), այնպես էլ ըստ ժամանակային շարքերը: Պանելային տվյալները, իրենց առանձնահատուկ կառուցվածքի, թույլ են տալիս կիրառել ավելի ճկուն մոդելներ, որոնք հնարավոր չէ իրականացնել այլ բնույթի տնտեսամաթեմատիկական մոդելներով: Ներկայումս առկա են պանելային տվյալների մեծածավալ բազաներ ինչպես միկրո, այնպես էլ մակրոմակարդակների համար: Առավել հայտնի են National Longitudinal Survey of Labor Market Experience (NLS), որը պարունակում է ԱՄՆ-ի աշխատաշուկայի տվյալները, և Michigan Panel Study of Income Dynamics (PSID), որտեղ պահպանվում են ԱՄՆ-ի տնային տնտեսությունների հետազոտության արդյունքները:

Պանելային մեթոդի էությունը կայանում է նրանում, որ այն հնարավորություն է տալիս գնահատել, թե դիտարկված երկրների համար վերոնշյալ համաթվերը ինչպիսի փոփոխվածություն ունեն միմյանց նկատմամբ: Յետազոտությունում պանելային մեթոդի հաշվարկման մեթոդաբանության հիմքում ընկած է հետևյալ խնդիրը՝ փորձել հաշվարկել երկրի տնտեսական վերափոխումները բնութագրող համաթվերի միջև եղած կապը, փոխադարձ ազդեցության աստիճանը և այդ ազդեցության աստիճանի հիման վրա հաշվարկել ընդհանրական համաթիվ՝ ըստ համապատասխան կշիռների: Կշիռների որոշման հիմքում ընկած է հետևյալ սկզբունքը. համաթվերի ազդեցության աստիճանի հաշվարկման արդյունքում ստացված գործակիցները գումարվում են, և որոշվում է յուրաքանչյուր համաթվի տեսակարար կշիռը ընդհանրական համաթվում:

Պանելային մեթոդով հաշվարկման մոդելն ունի հետևյալ տեսքը՝

$$y_i^t = \alpha + \beta x_i^t + u_i^t, \text{ որտեղ՝}$$

$y_i^t$  -ն՝ անկախ փոփոխական է, որը մեր դեպքում կարող է լինել դիտարկվող համաթվերից յուրաքանչյուրը,

$x_i^t$  -ն՝ կախյալ փոփոխականներ են, որոնք մեր դեպքում կարող են լինել մնացած 8 համաթվերը,

$\beta$  -ն՝  $x_i^t$  -ի փոփոխության ազդեցության չափը  $y_i^t$  -ի վրա ցույց տվող գործակիցն է,  $\alpha$ -ն՝ մոդելի ազատ անդամն է,

$u_i^t$  -ն՝ մոդելի մնացորդն է (residual):

Հաշվարկներն իրականացվել են Eviews 6 ծրագրային փաթեթի միջոցով:

Երրորդ փուլում վերափոխումների ընդհանրական համաթիվը հաշվարկվել է գործոնային վերլուծության մեթոդի կիրառմամբ:

Այս մեթոդը հնարավորություն է տալիս վերհանել դիտարկվող օբյեկտների ներկայացված ցուցանիշներում առկա թաքնված (լատենտային) բնութագրիչները (գործոնները): Լատենտային գործոնների և ելակետային ցուցանիշների կապը ներկայացվում է գործոնային ծանրաբեռնվածությունների միջոցով, որոնք կարելի է դիտարկել նաև որպես արդյունքային չափանիշի ձևավորման գործընթացում

<sup>1</sup>Т.А.Ратникова, К.К.Фурманов, Анализ панельных данных и данных о длительности состояний, Учебное пособие, Издательский дом Высшей школы экономики, Москва 2014, стр. 17.



մասնակի, ելակետային ցուցանիշների ներգրավվածության աստիճանի, դրանց հարաբերական կարևորության գնահատականներ:

Գործոնային վերլուծության հավասարումն ունի հետևյալ տեսքը.

$$x_i = \sum_{j=1}^m \alpha_{ij} f_j + e_i, \quad i = \overline{1, k}; j = \overline{1, m},$$

որտեղ  $x_i$  - դիտարկվող փոփոխականներն են (ելակետային հայտանիշները, համաթվերը),

$f_j$  - չդիտարկվող (անբացահայտ, լատենտային) գործոններն են,

$\alpha_{ij}$  - գործոնային ծանրաբեռնվածություններն են,

$e_i$  - պատահական սխալն է:

Գործոնային ծանրաբեռնվածությունները, ըստ էության, համընկնում են ելակետային ցուցանիշների և լատենտային գործոնների միջև կոռելացիայի գործակիցների հետ:

Գործոնների որոնման առավել տարածված մեթոդներից է գլխավոր բաղադրիչների մեթոդը: Այն գործոնների հաջորդական որոնման մեթոդ է: Սկզբում որոշվում է առաջին գործոնը, որը հիմնավորում է դիսպերսիայի առավելագույն արժեքը, այնուհետև՝ նրանից անկախ երկրորդ գործոնը, որը բացատրում է մնացորդային դիսպերսիայի մեծագույն մասը և այդպես շարունակ:

Գլխավոր բաղադրիչների առավելագույն հնարավոր թիվը հավասար է փոփոխականների թվին: Այլ ձևակերպմամբ, եթե ցանկանում ենք 100%-ով նկարագրել  $m$  փոփոխականների արժեքները, ապա դրա համար անհրաժեշտ կլինեն նույն  $m$  թվով գլխավոր բաղադրիչներ: Նկատենք, որ դիտարկվող ելակետային փոփոխականների ամբողջական նկարագրության համար անհրաժեշտ է կառուցել գլխավոր բաղադրիչներ այնքան ժամանակ, քանի դեռ դրանց սեփական արժեքները մեծ են 1-ից: Այդ իսկ պատճառով, օրինակ, SPSS ծրագրային փաթեթում գործոնների կառուցման ընթացակարգը շարունակվում է, քանի դեռ յուրաքանչյուր հաջորդ գլխավոր բաղադրիչի սեփական արժեքը շարունակում է 1-ից մեծ լինել: Հավելենք, որ ստացված գործոնների ավելի լավ մեկնաբանության համար դրանց նկատմամբ կիրառվում է շրջման ընթացակարգը, որի արդյունքում ձևավորվում է բաղադրիչների շրջված մատրիցը:

Ստացված արժեքների վերլուծության հիման վրա կարելի է գնահատել այս կամ այն երկրում վերափոխումների իրականացման ուղղվածությունը, զարգացման առանձնահատկությունները:

Գործոնային վերլուծության կարևոր արդյունքներ է պարունակում նաև Communalities (ընդհանրություններ) աղյուսակը: Այն ցույց է տալիս, թե վերլուծության մեջ ներառված փոփոխականների դիսպերսիայի որ մասն է բացատրում առաջարկվող գործոնային մոդելը:

Ստացված գործակիցները, մեր մոտեցմամբ, կարող են մեր վերլուծությունում ավելի կարևոր դերակատարում ունենալ: Մասնավորապես, դրանց հիման վրա կարելի է դուրս բերել ելակետային ցուցանիշների հարաբերական կարևորությունը արտացոլող կշռային գործակիցներ:


Այսպիսով, վերափոխումների ընդհանրական համաթիվը բաղկացած է 20 մասնակի /որոնցից 3-ը նշանակալիության ցածր մակարդակի պատճառով համաթվի հաշվարկում չեն ընդգրկվել/ համաթվերից, 13 հենայուններից և 654 ցուցանիշներ:

Այսպիսով, կամայական ժամանակահատվածի համար օգտագործելով մեր կողմից մշակված և առաջարկված ընդհանրական համաթվերի ձևավորման

մեթոդաբանությունը, ստանում ենք երկրների վերափոխումների ընդհանրական համաթիվ, որը գերծ է տարբեր միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից մշակվող ու լայնորեն կիրառվող նմանօրինակ համաթվերին բնորոշ հիմնական թերություններից և թույլ է տալիս ստանալ վերափոխումների իրականացման արդյունքները արտահայտող բավարար համարժեքությամբ արտացոլող մեծություններ:

Մեթոդաբանությունը կիրառել ենք Հարավկովկասյան երեք հանրապետություններում իրականացված վերափոխումների արդյունավետության գնահատման համար: Համաթիվ արդյունքները բերված են ստորև՝ աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: հարավկովկասյան երեք հանրապետությունների վարկանիշային միավորներն ըստ վերափոխումների ընդհանրական համաթվի, 2012-2017թթ.




Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումների առանձնահատկությունների գնահատման նպատակով դիտարկել ենք այս երկրներում վերափոխումների իրականացմանը նպաստող և խոչընդոտող 20-ական ցուցանիշներ, որոնց գումարային ազդեցությունը 100 տոկոս է: Ստորև ներկայացնում ենք Հարավկովկասյան երեք հանրապետություններում 2012-2017թթ. իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումների դրա դրական և բացասական ազդեցություն ունեցած 5-ական ցուցանիշները:


Աղյուսակ 2 Վերափոխումների ընդհանրական համաթվով Հայաստանի Հանրապետության վարկանիշի բարելավմանը առավելապես նպաստած 5 ցուցանիշները:




Աղյուսակ 3 Վերափոխումների ընդհանրական համաթվով Հայաստանի Հանրապետության վարկանիշի բարելավումն առավելապես խոչընդոտած 5 ցուցանիշները:




**Աղյուսակ 4 Վերափոխումների ընդհանրական համաթվով Վրաստանի Հանրապետության վարկանիշի բարելավմանը առավելապես նպաստած 5 ցուցանիշները:**




**Աղյուսակ 5 Վերափոխումների ընդհանրական համաթվով Վրաստանի Հանրապետության վարկանիշի բարելավումն առավելապես խոչընդոտած 5 ցուցանիշները:**



**Աղյուսակ 6 Վերափոխումների ընդհանրական համաթվով Ադրբեջանի Հանրապետության վարկանիշի բարելավմանը առավելապես նպաստած 5 ցուցանիշները:**



**Աղյուսակ 7 Վերափոխումների ընդհանրական համաթվով Ադրբեջանի Հանրապետության վարկանիշի բարելավումն առավելապես խոչընդոտած 5 ցուցանիշները:**



Այսպիսով, հետազոտության արդյունքում ձևավորված վերափոխումների ընդհանրական համաթվի երեք մակարդակներից յուրաքանչյուրով իրականացնելով համապատասխան վերլուծություններ՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Մեր կողմից մշակված վերափոխումների ընդհանրական համաթվի միջոցով 2012-2017թթ. համար կատարված վերլուծությունները բացահայտում են, թե ըստ վերոնշյալ համաթվի դիտարկված ժամանակահատվածում ո՞ր երկրները ինչպիսի տեղաշարժեր (առաջընթաց կամ հետընթաց) են ունեցել իրենց խմբի երկրների համեմատ, այսինքն թե ինչպիսին է եղել վերջիններիս կողմից իրականացված բազմաթվային վերափոխումների համեմատական արդյունավետությունը:
2. Հաշվետու ժամանակահատվածի համար ըստ վերափոխումների ընդհանրական համաթվի ո՞ր երկիրը ինչպիսի համեմատական արդյունավետություն է ունեցել և ինչ փոփոխությունների հաշվին է այն ստացվել:
3. Քանի որ մեզ արդեն հայտնի է դարձել այն համաթվերի տեղաշարժերը, որոնք էական ազդեցություն են ունեցել տարբեր երկրների համեմատական արդյունավետության վրա, հետևաբար մենք կարող ենք հիմնավորել, թե որ հենասյունների հաշվին են տեղի ունեցել այդ փոփոխությունները:
4. Եթե հայտնի են այն հենասյունները, որոնց հաշվին տեղի են ունեցել վերոնշյալ փոփոխությունները, ապա մենք կարող ենք որոշել և վերլուծել, թե 654 ցուցանիշներից որոնց հաշվին են տեղի ունեցել վերափոխումների ընդհանրական համաթվի արժեքի փոփոխությունը հաշվետու ժամանակահատվածում:

Մեր կողմից առաջարկվող մեթոդաբանությամբ ոչ միայն հնարավոր է դինամիկայում գնահատել և վերլուծել կամայական խումբ երկրների /միավորումների/ համեմատական արդյունավետությունը, այլ նաև մշակել և առաջարկել որոշակի երկրի զարգացումը խոչընդոտող ցուցանիշի վերափոխման ծրագրեր, որոնք հնարավորություն կընձեռեն, որ այդ ուղղությամբ իրականացվող վերափոխումները իրականացնելուց հետո, նրանք այլևս չհանդիսանան խոչընդոտող:

**Սամսոն Դավոյան  
ՀԱՐԱՎԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՍԵՄԱՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

**Բանալի բառեր՝** *համաթիվ, վարկանիշ մեթոդ, արդյունք, գործոն, վերափոխում*

Հետազոտության նպատակն է մշակել մեթոդաբանություն, որի օգնությամբ հնարավոր կդառնա վերափոխումների մեկ ընդհանրական համաթվի ձևավորումը, որը կներառի մեծ թվով առանձին համաթվեր և հնարավորություն կընձեռնի գնահատելու տարբեր երկրներում իրականացված վերափոխումների համեմատական արդյունավետությունը որոշակի ժամանակահատվածում:

**Samson Davoyan  
THE ASSESSMENT OF THE COMPARATIVE EFFECTIVENESS OF  
REFORMS IN THE SOUTH CAUCASUS COUNTRIES**

**Keywords:** *index, rating, method, result, coefficient, transformation*

Various indexes such as Global Competitiveness Index, Human Development Index, Democracy Index, etc., are developed by different non-governmental and international organizations. Our research is based on the idea whether it is possible to create an integral index that will reveal different directions of reforms within some concept.

**Самсон Давоян  
ОЦЕНКА СРАВНИТЕЛЬНОЙ ЭФФЕКТИВНОСТИ РЕФОРМ В  
ЮЖНО-КАВКАЗСКИХ СТРАНАХ**

**Ключевые слова:** *индекс, рейтинг, метод, результат, коэффициент, трансформация*

В основе данного исследования рассматривается идея возможности формирования по определенным признакам расчета единого обобщенного индекса, который в рамках конкретной концепции отражает разные направления реформ, осуществленных в разных странах и выступает в качестве обобщенного, систематизированного показателя.

## **ԱՐՑԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

### **ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐՅԱԼ**

Հայաստանի Հանրապետության և Արցախի տնտեսությունների զարգացման առկա միտումների ուսումնասիրությունը բացառիկ հնարավորություն է ընձեռում զարգացման առկա խոչընդոտների բացահայտման, տնտեսական կյանքում առկա առանձին երևույթների ավելի խոր ուսումնասիրության և համապատասխան եզրահանգումների անելու համար: Թեև Հայաստանն ու Արցախը գտնվում են տնտեսավարման միասնական դաշտում՝ միասնական հարկաբյուջետային ու դրամավարկային կարգավորումներով, տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումների միասնական մոտեցումներով ու սկզբունքներով, սակայն վերջին տասնամյակում տնտեսական քաղաքականության արդյունքները նշված երկու տնտեսական միջավայրերում էապես տարբերվում էին:


Այս փաստն արդեն պարտադրում է ավելի ուշադիր անդրադարձ կատարել այդ տնտեսական միջավայրերի համեմատական վերլուծությանը, տնտեսական քաղաքականության կիրառվող մոտեցումների ու միջոցառումների, դրանց հետևանքների ուսումնասիրությանը: Դեռ ավելին, առկա իրողությունը՝ միասնական տնտեսավարման դաշտ և որոշակի առանձնահատկություններով բնութագրվող տնտեսական քաղաքականություններ, հնարավորություն է ընձեռում տնտեսական քաղաքականության առանձին գործիքների, մասնավորապես հարկային կարգավորումների ու կառուցվածքային միջոցառումների փորձարկում ավելի փոքր միջավայրում, արդյունքների ամփոփում, մոտեցումների շտկում և միայն կատարելագործելուց հետո այդ միջոցների կիրառում ամբողջ տնտեսական դաշտում: Իհարկե միասնական տնտեսավարման դաշտը բնավ չի նշանակում նույնական, ակնհայտ է, որ առկա են էական տարբերություններ, պայմանավորված միջավայրերի տարբերություններով, մասնավորապես փոքր միջավայրերում անհնար են կոռուպցիոն այն դրսևորումները, որոնք հատուկ են ավելի մեծ միջավայրերին, կամ ՀՀ-ում ձևավորված արատավոր զարգացումները՝ իշխանության ու բիզնեսի սերտաճումը, մենաշնորհները և այլ, նույն կերպ դրսևորվել փոքր միջավայրերում, բայց նաև չեն կարող իրենց ազդեցությունը չթողնել դրա զարգացումների վրա: Ամեն դեպքում տնտեսական զարգացումների իմաստով որոշիչ են ՀՀ-ում առկա իրավիճակն ու զարգացումները և դրանց անաչառ ուսումնասիրությունը, առավել ևս Հայաստանում ստեղծված նոր իրավիճակը ուղղակի դնում է այդ պահանջը:

ՀՀ-ում ձևավորված նոր իրավիճակը հնարավորություն է տալիս քննության առնել մեր երկրի կյանքի բոլոր ոլորտները ու մասնավորապես առավել որոշիչ՝ տնտեսական հատվածը: Խոսքը գնում է տնտեսական կյանքի բոլոր բաղադրիչների մասին՝ տնտեսական քաղաքականության ու նրա առանձին հատվածների արդյունավետությունից մինչև պետական կառույցների ու հասարակական հաստատությունների գործելաճի ու ձեռնարկված ու ձեռնարվող միջոցառումների նպատակահարմարության ու արդյունավետության խնդիրները: Ընդ որում նոր իրավիճակը բացառիկ հնարավորություն է սթափ գնահատել ու բժախնդրորեն անդրադառնալ առկա վիճակին ու զարգացումներին: Սա առավել կարևոր է, քանզի երրորդ հազարամյակում մեր միջավայրում ձևավորվեց արատավոր մի մոտեցում, որ առկա խնդիրները անգամ քննարկման առարկա չէին դառնում, քաղաքական դաշտում իշխող տգիտությունը ներթափանցում էր մեր կյանքի բոլոր ոլորտները, բացառելով քննարկումն ու արդյունքում դուրս մղելով միտքը, տեղ բացելով

պարզունակ մոտեցումների, կուտակվող խնդիրները աջքաթող անելու և միայն թվացյալ կամ իրական հաջողությունները արձանագրելու ու գովերգելու մոտեցմանը: Ու թեև երրորդ հազարամյակի սկիզբը Հայաստանի տնտեսության համար հանդիսացավ դրական տեղաշարժերի ժամանակահատված՝ արձանագրվեց երկնիշ տնտեսական աճ, կայունացավ սոցիալ-տնտեսական վիճակը, աճեց կենսամակարդակը, էապես նվազեց արտագաղթը, սակայն դրական տեղաշարժերը չընդգրկեցին խորքային, համակարգային նշանակություն ունեցող երևույթները, չապահովվեց դրանց վերարտադրությունը: Արդյունքում կարճ ժամանակ հետո ի հայտ եկան երկրի տնտեսության զարգացման շեղումները: Փաստորեն տնտեսական աշխուժացումը, որի առանցքը նախորդ շրջանի բարեփոխումներն էին, արտաքին դրական կոնյուկտուրայի ու դեպի Հայաստան ֆինանսական հոսքերի աշխուժացման պայմաններում տվեց դրական արդյունք: Սակայն այն իրականացվող քաղաքականության ներքո, երբ ֆինանսական հոսքերը առավելապես ուղղվում էին կարճ ժամանակահատվածում միջոցների վերադարձը ապահովող, մասնավորապես բնակարանային շինարարության, առևտրի ու սպասարկման ոլորտները, առաջին իսկ արտաքին ցնցման ներքո վերափոխվեց տնտեսական խոր անկման իր բոլոր հնարավոր հետևանքներով:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը բացահայտեց ՀՀ տնտեսական զարգացման կուտակվող խնդիրները և Հայաստանում առկա քաղաքական ճգնաժամի ու ետընտրական ողբերգական զարգացումների ներքո հանգեցրեց տնտեսական խոր անկմանն իր բազմաբնույթ բացասական դրսևորումներով: Առանցքային միջոցը, որին դիմեցին իշխանությունները, փորձն էր պետության տնտեսավարման դերի կտրուկ փոփոխություն իրականացնելը, հիմնականում պետական երաշխիքներով արտաքին շուկաներից ֆինանսական միջոցների ներգրավման ու տնտեսությունում տեղաբաշխման միջոցով, մոռացության մատնելով խիստ անհրաժեշտ դարձած համակարգային բարեփոխումները: Արդյունքում, վերջին տասնամյակում Հայաստանյան տնտեսության զարգացումների հիմնական բնութագրիչը հանդիսացավ տնտեսական աճի տեմպերի անկումը ետճգնաժամային ամբողջ շրջանում և դրանց մեծ տատանումները, որի հետևանքով դոլարային արտահայտությամբ ՀՆԱ-ի ծավալների աճի բացակայությունը՝ 2008թ. արդյունքներով ՀՀ ՀՆԱ-ն կազմեց 11 մլրդ 662 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2017թ. միայն հասավ 11.6 մլրդ: Դրան զուգահեռ երկրում խորանում էր կոռուպցիան, որոշիչ դեր էին ստանում երկրի տնտեսությունում դեռևս նախորդ շրջանում իշխող դիրք ստացած տնտեսավարողները, այլասերվում ազատական տնտեսության հիմնարար տարրերը՝ ազատ մրցակցությունը, ձեռներեցության ազատությունը, սեփականության իրավունքի պաշտպանվածությունը և այլն: Ձևավորված օլիգարխիկ համակարգը բերվեց կատարյալ տեսքի՝ տնտեսության մեջ որոշիչ դիրք ունեցողները իշխող դերակատարություն ստացան նաև քաղաքական մարմիններում ու կառավարման համակարգում: Բիզնեսի ու իշխանության սերտաճման ներքո, տնտեսական քաղաքականությունը վերածվեց առանձին միջոցառումների, որոնց շարքում տեսանելի էին առանձին բիզնես-խմբերի շահերի պաշտպանությանն ուղղվող տարրերը: Ուշագրավ է, որ մեր երկրի օլիգարխիայի նշանակալից մասը առանձին տեսակի ապրանքներ ներմուծողներն են կամ դրանց իրացումը կազմակերպողները: Նշվածի ներքո տնտեսությունը վերածվեց փակ համակարգի, որը անգամ չունեւ ներդրումների պահանջ, ինչը, իր հերթին, հանգեցրեց օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի շարունակական նվազմանը: Փաստորեն հայաստանյան տնտեսական համակարգի առավել եկամտաբեր հատվածը, բացի հումքի արտահանումից, կազմեցին ներմուծում-առևտուր շղթան, որի կենսունակությունը ապահովվում էր մասնավոր տրանսֆերտների հոսքը: Մրցակցության բացակայության կամ առանձնահատուկ կարգավորման ռեժիմների առկայության

պարագայում, որի էությունը պետական ամենաբարձր մակարդակով բժուտավորումն էր, ապահովվում էր տվյալ հատվածների գործունեության երաշխավորված եկամտաբերությունը: Ստացված եկամուտների մի մասը ուղղվում էր համակարգի վերարտադրության ապահովմանը ընտրակաշառքների, անգամ քաղաքական մարմինների ու պետական կառավարման համակարգի գործունեության համար լրացուցիչ խրախուսումների ու պարգևավճարների տեսքով: Իսկ այդ օղակների գործունեության արդյունքում իրենց տնօրինության տակ մնացող եկամուտների մի զգալի մասը պարբերաբար դուրս էին բերվում երկրից, պայմանավորելով կապիտալի արտահոսքը, որը ժամանակի ընթացքում ավելի ծավալուն էր դառնում: Ուշագրավ է նաև, որ մասնավոր արտաքին ներդրումների ծավալների կրճատման ներքո դրսևորվեց ՀՆԱ-ի կառուցվածքում կուտակման բաժնի զգալի կրճատումը, շինարարության ոլորտի շարունակական անկումը, որը կանխվեց միայն 2017թ-ին, (որոնց ազդեցությունը տնտեսական զարգացումների վրա կդրսևորվի առաջիկա միջևաժամկետ և երկարաժամկետ հատվածներում):



**Գծապատկեր 1. ՀՀ արտահանումն ու ներմուծումը, ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անուսով տարեկան փոխանցումները, մլն ԱՄՆ դոլար 2007-2017թթ.**


Իհարկե երկրի տնտեսական կյանքում կատարվում էին նաև որոշ դրական տեղաշարժեր, որոնց թվում կարելի է առանձնացնել՝

- արտահանման առաջանցիկ աճը ներմուծման նկատմամբ (2008-2018թթ. ընթացքում ներմուծման ծավալների շուրջ 5.5%-ով կրճատվելու պարագայում արտահանման ծավալները աճել են ավելի քան 2.1 անգամ),
- արտահանման կառուցվածքում հանքաքարի, սև և գունավոր մետաղների տեսակարար կշռի նվազում 42%-ից մինչ 37%, ինչը, սակայն, ուղեկցվեց արտահանման ընդհանուր ծավալում հանքաքարի տեսակարար կշռի մոտ կրկնապատիկ աճով,
- արդյունաբերության աճի տեմպերի գերազանցումը ՀՆԱ-ի աճի տեմպերի նկատմամբ (անվանական ՀՆԱ-ն նույն ժամանակահատվածում աճել է մոտ 56%-ով, մինչդեռ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 2,2 անգամ), ՀՆԱ-ի կառուցվածքում արդյունաբերության տեսակարար կշռի աճը:

Դրական զարգացումների թվում կարելի է առանձնացնել ֆինանսական հատվածի, մասնավորապես բանկային համակարգի արդյունավետ գործունեությունը, ֆինանսական միջնորդության մակարդակի աճը: Այսպես, ՀՀ բանկային համակարգի



ակտիվներ/ՅՆԱ հարաբերակցության 2008-2017թթ. աճեց 28.7%-ից մինչ 78.2%, իսկ վարկ/ՅՆԱ հարաբերակցությունը 17.8-ից 45.1%-ի:



**Գծապատկեր 2. Տնտեսական աճի տեմպերը և գնաճը ՀՀ-ում 2007-2017թթ**

Անառարկելի դրական դրսևորումներից է գնաճի կառավարելի մակարդակը՝ թեև նշված ժամանակահատվածի առանձին տարիներին այն շեղվում էր տարեկան ծրագրային ցուցանիշներից, ինչը բնական էր տնտեսական աճի տեմպերի բարձր տատանողականության պայմաններում, սակայն միջինժամկետ և ամբողջ ժամանակահատվածում ապահովվել էր գնաճի ոչ բարձր մակարդակը:

Սակայն ընդհանուր առմամբ ակնհայտ է այն նահանջը, որ ապրել է Հայաստանի Հանրապետությունը 2008-2017թթ-ին և որի կարևորագույն բնութագրերն էին՝


- սոցիալական չտեմպով իրավիճակ և աղքատության մակարդակի աճ 27.9%-ից մինչ 29.4% 2016թ-ին (վերջին հրապարակված տվյալ) և դրա խորացումը 2017-ին;
- գործազրկության բարձր և աճող մակարդակ՝ պաշտոնական տվյալների համաձայն, որոնք իհարկե չեն արտացոլում ամբողջական պատկերը, 2008թթ-ին գործազուրկ էին աշխատանքային ռեսուրսների 10.5 %, 2016թ-ին 10.9 %-ը,
- արտաքին պարտքի շուրջ քառապատիկ աճը նշված ժամանակահատվածում և դրա սպասարկման ծախսերի կտրուկ աճը (վերջինս ներկայումս և առաջիկա տարիներին կկազմի պետական բյուջեի եկամուտների շուրջ 10 %-ը):

Նշվածի հետևանքով և տնտեսական աճի ըստ էության բացակայության պայմաններում կտրուկ փոփոխվում է երկրի ժողովրդագրական վիճակը՝ փաստորեն նշված ժամանակահատվածի առավել ցավալի ու ծանր հետևանքը բնակչության արտագաղթն էր և երկրի ժողովրդագրական պատկերի փոփոխությունները, որոնց թվում հարկ է առանձնացնել՝

- ժողովրդագրական իրավիճակի վատթարացումը, բնակչության շարունակական արտագաղթը (վերջին տասնամյակում Հայաստանից մեկնած և ժամանած ՀՀ բաղաբաղիների բացասական տարբերությունը գերազանցում է 430.0 հազարը),
- ծնելիության մակարդակի անկում 41.2 հազ. 2008թ 37.7-ի 2017թ;


- մահացության մակարդակի աճ բացարձակ թվի անփոփոխ մնալու պարագայում՝ 27.4 հազ. 2017թ-ին;
- ամուսնությունների թվի նվազում 18.5-ից մինչ 15.2 հազ.;
- ամուսնալուծությունների թվի աճ 3.0-ից մինչ 3.94 հազ.;
- վերջին տասնամյակում Հայաստանի բոլոր մարզերի բնակչության թվաքանակի նվազում (բացի Երևան քաղաքից),
- բնակչության բնական աճի բացակայություն Լոռվա, Սյունիքի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում:

Այս առումով իբրև ժողովրդագրական նշված զարգացումների հետևանք՝ առաջիկայում, արդեն հիևգ-վեց տարի հետո Հայաստանը բախվելու է դեպոպուլյացիայի երևույթի, այսինքն չի ունենա բնական աճ, մի բան, որը չի եղել հայաբնակ որևէ տարածքում ամբողջ պատմության ընթացքում:



**Գծապատկեր 3. ՀՀ և ԱՀ շնչահատի աճը/Վ 2008-2017 թթ.**

Արդյունքում, Արցախի Հանրապետությունը նշված տասնամյակում արձանագրեց բավականին հուսադրող զարգացումներ սոցիալ-տնտեսական թերևս բոլոր հատվածներում և բնութագրվեց նաև ժողովրդագրական իրավիճակի կայունացմամբ և բնակչության թվաքանակի աճով մոտ 5 %-ով: Այս առումով Արցախը ներկայումս բնութագրվում է ժողովրդագրական զարգացման ցուցանիշների ավելի բարվոք պատկերով՝ 2017թ-ին բնակչության 1000 շնչի հաշվով ծնելիության գործակիցը կազմեց 15,9, իսկ մահացության՝ 8,4, մինչդեռ ՀՀ-ում համապատասխանաբար 13,4 և 9,4:



**Գծապատկեր 4. ՀՀ և ԼՂՀ 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ 2009-2017թթ.**

Փաստորեն միասնական տնտեսական տարածքում գտնվող երկու պետական միավորները վերջին տասնամյակում ունեցան էապես տարբեր արդյունքներ, ընդ որում, եթե նախորդ ամբողջ ժամանակահատվածում, մինչ 2008թ. արցախյան տնտեսության համար որոշիչ են եղել հայաստանյան զարգացումները, ապա ներկայումս կյանքի է կոչվել տնտեսական զարգացման մի մոդել, որը ստեղծված իրավիճակում ավելի կենսունակ գտնվեց: Ընդ որում եթե տնտեսական քաղաքականության կարևոր հատվածներից ֆիսկալ, դրամավարկային ու կառուցվածքային բարեփոխումների հատվածներում պահպանվում է միասնականությունը, ապա էական տարբերությունները պայմանավորված են համակարգային խնդիրների լուծման, լայն իմաստով կոռուպցիայի ավելի ցածր մակարդակի, բյուջետային ծախսերի ավելի բարձր արդյունավետության և պետության տնտեսվարման գործառույթի ավելի արդյունավետ իրականացման հարցերում:

Առկա իրավիճակը պահանջում է երկարատև և կարճաժամկետ միջոցառումների իրականացում՝

- հասարակության հետ բաց, ազատ, ազնիվ խոսակցություն, առկա խնդիրների հրապարակային քննարկում;
- առկա քաղաքական մենաշնորհի վերացում, քաղաքական մրցակցության հնարավորությունների վերականգնում, ներքաղաքական մրցակցային իրավիճակի զարգացում;
- օրինականության ու սահմանադրական կարգի վերականգնում;
- իշխանության ու բիզնեսի տարանջատում;
- համակարգային բարեփոխումների խորացում, դատական համակարգի կատարելագործում;
- սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական համամասնությունների և մակրոտնտեսական միջնաժամկետ հիմնական ցուցանիշների;
- պետական բյուջեի համամասնությունների, եկամուտների և ծախսերի ծրագրի;

- ծախսային քաղաքականության վերանայում, տնտեսական ու սոցիալական ցածր արդյունավետությամբ առանձին ծրագրերի ֆինանսավորմանն ուղղվող ծախսերի նվազեցում;
- պետական կառավարման համակարգի բարեփոխում, պետական ապարատի կրճատում, նախարարությունների թվի կրճատում, պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացում;
- պետական ապարատի պահպանման ծախսերի սառեցում;
- բնակչության ժամանակավոր զբաղվածության ծրագրերի մշակում և դրանց իրականացման համար բյուջեում համապատասխան հոդվածների նախատեսում;
- տնտեսական քաղաքականության դերի աշխուժացում, ֆինանսական համակարգի և սոցիալական հատվածի բարեփոխումների աշխուժացում, նպատակային սոցիալական քաղաքականության իրականացում;
- հակամենաշնորհային միջոցառումների հրատապ մշակում ու իրականացում;
- առևտրի և սպասարկման ոլորտներում նոր խոշոր օբյեկտների հիմնադրման ժամանակավոր սառեցում;
- հակակոռուպցիոն միջոցառումների ամբողջական ծրագրերի մշակում և իրականացում հասարակության ներկայացուցիչների լայն ներգրավման ու պետական կառույցների ներկայացուցիչների մասնակցության կրճատման կամ մասնակցության բացառման միջոցով;
- հարկային բարեփոխումների ծրագրի մշակում և իրականացում, որը պետք է ուղղված լինի հարկային բեռի տեղափոխումը հասարակության ունևոր հատվածի վրա, սպառողից դեպի եկամուտ ստացողը, ցածր եկամուտ ստացողից դեպի բարձր եկամուտ ստացողը;
- ԿԲ անկախության վերականգնում, դրամավարկային քաղաքականության ինքնուրույնության աստիճանի բարձրացում, փոխարժեքի ազատ լողացող քաղաքականության հետևողական իրականացում;
- բանկային համակարգի կայունության և զարգացման ծրագրի մշակում և իրագործում, ավանդների հատուցման երաշխավորված շեմի բարձրացում;
- զբաղվածության ընդլայնման, նոր աշխատատեղերի ստեղծման, այդ թվում, օր., «անունդ աշխատանքի դիմաց», միջգյուղական և ներգյուղական ճանապարհների վերականգնման, այդ թվում նաև համայնքի և նրա ներկայացուցիչների միջոցների ներգրավմամբ, հասարակական բնույթի աշխատանքների իրականացման ծրագրերի մշակում և իրականացում;
- ըստ առանձին մարզերի և մարզերի առանձին հատվածների սոցիալական իրավիճակային նպատակային ծրագրերի մշակում և իրականացում:

Նշված միջոցառումների շարքում առանձնահատուկ է տնտեսության մեջ պետության դերի վերափոխումը, մասնավոր հատվածի հետ համագործակցության նոր մոտեցումների մշակումն ու նոր գործիքների կիրառումը, որի առումով խիստ կարևոր է դառնում Արցախում կուտակված փորձի ուսումնասիրությունն ու հետագա կիրառումը ԶՅ-ում:

**Բագրատ Ասատրյան**  
**ԱՐՑԱԽԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**  
**ՉԱՐԳԱՑՄԱՆ ԻՄԱՆԱԿՆԵՐՆԵՐՆ ՈՒ ԳՆԱՆԱԿԱՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր`** ՀՆԱ, տնտեսական աճ, գնաճ, արտահանում ներմուծում, վճարային հաշվեկշիռ, տնտեսական քաղաքականություն

Թեև Հայաստանն ու Արցախը գտնվում են տնտեսավարման միասնական դաշտում, վերջին տասնամյակում տնտեսական քաղաքականության արդյունքները նշված երկու տնտեսական միջավայրերում էապես տարբերվում էին: Էական տարբերությունները պայմանավորված են համակարգային խնդիրների լուծման և պետության տնտեսավարման գործառույթի ավելի արդյունավետ իրականացման հարցերում: Ներկայիս պայմաններում կարևոր է տնտեսության մեջ պետության դերի վերափոխումը, մասնավոր հատվածի հետ համագործակցության նոր մոտեցումների մշակումն ու նոր գործիքների կիրառումը, որի առումով խիստ կարևոր է դառնում Արցախում կուտակված փորձի ուսումնասիրությունն ու հետագա կիրառումը ՀՀ-ում:

**Bagrat Asatryan**  
**PROBLEMS AND PROSPECTS OF THE DEVELOPMENT OF ARTSAKH**  
**AND ARMENIAN ECONOMIES**

**Key words:** *GDP, economic growth, inflation, export import, payment balance economic policy*

Although Armenia and Artsakh are in the united economic field, the results of economic policy over the past decade have essentially differed in these two economic environments. Significant differences are due to the solution of systemic issues and to the effectiveness of the state's economic functioning.

Under current conditions, the role of the state in the economy, the development of new approaches to cooperation with the private sector and the application of new instruments are important, in which the study and subsequent application of the accumulated experience in Artsakh becomes very important.

**Баграт Асатрян**  
**ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ АРЦАХСКОЙ И**  
**АРМЯНСКОЙ ЭКОНОМИК**

**Ключевые слова:** *ВВП, экономический рост, инфляция, экспорт, импорт, платежный баланс, экономическая политика*

Хотя Армения и Арцах находятся в едином экономическом поле, результаты экономической политики за последнее десятилетие существенно различаются в этих двух экономических средах. Значительные различия связаны с решением системных проблем и с эффективностью экономического функционирования государства. В нынешних условиях важна трансформация роли государства в экономике, разработка новых подходов к сотрудничеству с частным сектором и применение новых инструментов, в которых изучение и последующее применение накопленного опыта в Арцахе приобретают очень важное значение.

## ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ

### ԱՐՄԻՆԵ ՍՉԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետությունն ընտրել է հանրային կառավարման մի մոդել, որտեղ օրենսդիր մարմինն ունի անմիջական դեր բյուջեի ընդունման հարցում, ինչը ենթադրում է խորհրդարանում բյուջետային քննարկումների շրջանակներում նաև ոլորտային ռազմավարությունների վերաբերյալ որոշումների կայացում: Ռազմավարական փաստաթղթերը պետք է պարունակեն նշված նպատակներին հասնելու ճանապահների, գործողությունների կամ միջոցառումների նկարագրությունը՝ հիմնավորելով այդ գործողությունների հստակ կապը նախատեսվող արդյունքների հետ<sup>1</sup>: Ըստ նպատակների ստորադասության ռազմավարական փաստաթղթերի հիերարխիան (վերջնական, միջանկյալ և ուղղակի արդյունքներ) հաշվի առնելով՝ նշենք, որ համապարփակ ռազմավարական փաստաթղթերի մշակման ավանդույթը պետք է ամրագրվի նաև Արցախի Հանրապետությունում (ԱՀ): Նախքան կարճաժամկետ և միջնաժամկետ բյուջեների ձևավորման մոտեցումներին անդրադառնալը՝ ներկայացնենք երկմակարդակ բյուջետային համակարգերը բնութագրող ցուցանիշները: 2018 թվականին ՀՀ համախմբված բյուջեն եկամուտների գծով կկազմի 1343,5 մլրդ դրամ (ԱՀ-ում՝ 97,5 մլրդ դրամ), ծախսերի գծով՝ 1500,5 մլրդ դրամ (ԱՀ-ում՝ 102,6 մլրդ դրամ), իսկ դեֆիցիտը՝ 156,9 մլրդ դրամ (ԱՀ-ում՝ 5,1 մլրդ դրամ՝ ամբողջությամբ փոխառու միջոցներ են): ՀՀ-ում և ԱՀ-ում համայնքների բյուջեները համապատասխանաբար կկազմեն 130,1 և 3,7 մլրդ դրամ: Եկամուտները և ծախսերը հավասարակշռված են, բայց առանձին տարիներին պետական բյուջեների մասին օրենքները կարող են հաստատվել դեֆիցիտով: Պետական բյուջեի եկամուտները 2018թ. ՀՀ-ում կկազմեն 1308,3 մլրդ դրամ (ԱՀ-ում՝ 96,4 մլրդ դրամ), իսկ ծախսերը 1465,2 մլրդ դրամ (ԱՀ-ում՝ 101,5 մլրդ դրամ): Ի տարբերություն ՀՀ պետական բյուջեի, որտեղ հարկային եկամուտները կազմում են ընդհանուր եկամուտների ավելի քան 95 տոկոսը՝ Արցախի Հանրապետությունում հարկային եկամուտները և պետական տուրքերը 2018թ. կկազմեն 44 մլրդ դրամ կամ ընդհանուր եկամուտների 45,6 տոկոսը: Նշենք նաև, որ ԱՀ պետական բյուջեի եկամուտները առանց ՀՀ-ից ստացվող բյուջետային վարկի գումարի 2018թ. կկազմեն 45 մլրդ դրամ: ՀՀ պետական բյուջեի ընթացիկ ծախսերը կկազմեն ընդհանուր ծախսերի 89,2 տոկոսը, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով գործառնությունները՝ 10,8 տոկոսը: Նույն ցուցանիշներն Արցախի Հանրապետությունում համապատասխանաբար կկազմեն 84,1 և 15,9 տոկոս: Այժմ ներկայացնենք երկու հանրապետություններում 2018 թվականին առաջին հինգ խոշորածավալ ֆինանսավորման ուղղություններն ըստ ծախսերի գործառնական դասակարգման:

<sup>1</sup> Պետական եկամուտների և անմիջական ծախսերի վրա ազդեցություն ունեցող ռազմավարական փաստաթղթերի կազմման, ներկայացման և հսկողության իրականացման մեթոդական հրահանգ, 2017թ.

**Աղյուսակ 1.**

**ԱՅ և ՅՅ պետական բյուջեների ծախսերն ըստ գործառական դասակարգման**

Ցուցանիշներ	(մլրդ դրամ)			
	ԱՅ 2018թ <sub>1</sub>	Տես. կշիռ	ՅՅ 2018թ <sub>2</sub>	Տես. կշիռ
<b>Ընդամենը ծախսերը</b>	<b>101,5</b>	<b>100</b>	<b>1465,2</b>	<b>100</b>
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	12,9	12,7	278,7	19,0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն			102,6	7,0
Տնտեսական հարաբերություններ	14,2	13,9	133,6	9,1
Կրթություն	14,7	14,5	127,2	8,7
Սոցիալական պաշտպանություն	22,9	22,6	408,7	27,9
Հիմնական բաժինների չդասվող ծախսեր	18,6	18,3		

Ի նկատի ունենալով ՅՅ-ում և ԱՅ-ում պաշտպանության ծախսերի ֆինանսավորման առանձնահատկությունները՝ աղյուսակում պաշտպանության ծախսերը ներկայացված չեն: ՅՅ պետական բյուջեում այն կկազմի 247,9 մլրդ դրամ և ընդհանուր ծախսերի 16,9 տոկոսը:

Բյուջետային գործընթացը՝ յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեությունն է: Տվյալ բյուջետային տարվա համար այն սկսվում է ԱՅ կառավարության (ՅՅ վարչապետի) կողմից առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունը հաստատվելու օրը: Պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացը բաղկացած է երկու փուլից՝

ա) պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակում,

բ) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի մշակում:

Միջնաժամկետ ծախսերի ծրագիրն իր հերթին ներառում է հարկաբյուջետային քաղաքականությունը և ծախսային քաղաքականության ռազմավարությունը շարադրող մասերը: «ՅՅ բյուջետային համակարգի մասին» ՅՅ օրենքում նշվում է նաև, որ Կառավարությունը և Կենտրոնական բանկը միջնաժամկետ ծախսերի ծրագրում պարբերաբար համատեղ սահմանում են գնաճի կանխատեսվող մակարդակը: Վերոնշյալ օրենքի հոդված 16-ում 2017 թվականին կատարված փոփոխությունների համաձայն ծախսային քաղաքականությանը վերաբերող տեղեկությունները վերաբերում են ոչ թե տվյալ ոլորտի, այլ պետական մարմինների կողմից իրականացվելիք բյուջետային ծրագրերի շրջանակներում կատարվող ծախսերին՝ պայմանավորված Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման անհրաժեշտությամբ: Առաջիկա երեք տարվա պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման նպատակն է

<sup>1</sup> «ԱՀ 2018թ. պետական բյուջեի մասին» ԱՀ օրենք, 21.12.2017թ.

<sup>2</sup> «ՀՀ 2018թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, 08.12.2017թ.

հնարավորություն ստեղծել կառավարելու պետական հատվածի ֆինանսական ռեսուրսները միջնաժամկետ հարկաբյուջետային նպատակներին և քաղաքականության գերակայություններին համապատասխան<sup>1</sup>: Միջնաժամկետ ծախսերի ծրագրի նախագիծը կազմելու մեթոդական ցուցումներում ներկայացվում են պետական մարմինների կողմից մշակվող ոլորտային միջնաժամկետ ծրագրերի նախագծերին ներկայացվող ընդհանուր պահանջները, այդ նախագծերի ներկայացման կարգը և այլ տեղեկություններ: Պետական մարմինները սահմանված ժամկետում կազմում և պետական լիազորված մարմին են ներկայացնում իրենց ոլորտային միջնաժամկետ ծախսերի ծրագրերը: Քանի որ միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման փուլն սկսվում է առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշման ընդունման օրը և ավարտվում այդ ծրագրի հրապարակման օրը, ուստի ստորև ներկայացված աղյուսակն ընդգրկում է բյուջեի կազմման փուլում պետական մարմինների համար կարևոր ժամկետները մինչև բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման փուլը, որին ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի հաջորդիվ: Ինչպես նշեցինք, ՀՀ-ում և ԱՀ-ում բյուջետային գործընթացի առաջին փուլն իրականացվում է երկու ենթափուլերով, սակայն մինչ այս ենթափուլերի առավել մանրամասն նկարագրությունը, նշենք, որ բյուջետային գործընթացը մեկնարկում է զգալի ժամանակային խզումով, մասնավորապես, ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են ԱՀ և ՀՀ պետական բյուջեների ձևավորման նախնական փուլերը (առաջին ենթափուլ) ըստ ժամանակացույցի:

**Աղյուսակ 2.**

***Բյուջեի կազմման փուլում պետական մարմինների համար կարևոր ժամկետները***

<b>Պետական մարմինների կողմից պատրաստվող փաստաթղթերը</b>	<b>Վերջնաժամկետը ԱՀ-ում /2018թ./</b>	<b>Վերջնաժամկետը ՀՀ-ում /2018թ./</b>
Միջնաժամկետ հատվածում բյուջետային մուտքերի կանխատեսումների ներկայացում	հունիսի 19	մարտի 1
Ճշգրտված և կողմնորոշիչ չափաբանակներ	հուլիսի 17	մայիսի 18
Գլխադասային մարմիններ չունեցող հայտատու մարմինների կողմից ՄԺԾԾ հայտերի մշակում և ներկայացում	օգոստոսի 3	մայիսի 25
Գլխադասային մարմիններ ունեցող հայտատու մարմինների կողմից ՄԺԾԾ հայտերի մշակում և ներկայացում	օգոստոսի 7	հունիսի 1
Հայտատու մարմինների հետ քննարկումներ <sup>2</sup>	օգոստոս 21	հունիսի 15
Ավարտուն տեսքի բերված ՄԺԾԾ-ի նախագծերի (ծախսային	սեպտեմբերի 5	հունիսի 22

<sup>1</sup> «ԱՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 24.12.2003թ., հոդված 22:

<sup>2</sup> ԱՀ-ում՝ պետական նախարարի մոտ, ՀՀ-ում՝ ՀՀ վարչապետի մոտ:



ռազմավարության) մշակում և ներկայացում \$Ն		
ՄԺԾԾ-ի քննարկում և հաստատում	սեպտեմբերի 20	հուլիսի 10
ՄԺԾԾ-ի հրապարակում և ներկայացում ԱԺ՝ ի գիտություն	հոկտեմբերի 1	հուլիսի 20
2019 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմում և ներկայացում \$Ն	սեպտեմբերի 25	օգոստոսի 6

Պետական մարմիններն իրենց և համակարգի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերն սահմանված ժամկետում ներկայացնում են պետական լիազորված մարմին: Վերջինս պետական կառավարման տարածքային մարմինների միջոցով տեղական ինքնակառավարման մարմիններին է տրամադրում պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրվող հատկացումների չափերը:

Բյուջետային հիմնարկի ֆինանսավորման հայտը ստորագրում է ղեկավարը, որն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում բյուջետային հատկացումների նպատակային օգտագործման համար: Ինչպես ԱՅ-ում, այնպես էլ ՀՀ-ում կապիտալ ծախսերը հաշվարկվում են նպատակային ծրագրերի հիման վրա: Այդ ծրագրերի իրականացման ժամկետի՝ բյուջետային տարին գերազանցելու դեպքում առանձնացվում են տվյալ ծրագրերի՝ ըստ տարիների ֆինանսավորման չափերը: Պետական լիազորված մարմինն առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին Արցախի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված ժամկետում հայտատուների հետ համաձայնեցնում է նրանց ներկայացրած հայտերով նախատեսված ծախսերի ֆինանսավորման չափերը:

Բյուջետային ֆինանսավորման հայտերի, արտաքին ու ներքին պարտավորությունների և հաջորդ տարում կանխատեսվող մուտքերի հիման վրա պետական լիազորված մարմինը կազմում է հաջորդ տարվա պետական բյուջեի նախագիծը և ներկայացնում կառավարություն: Արցախի Հանրապետության Նախագահը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողով է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն 45 օր առաջ, իսկ Հայաստանի Հանրապետությունում ՀՀ կառավարությունը պետական բյուջեի նախագիծը՝ ներառյալ բյուջետային ուղերձը, պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը և ԿԲ պաշտոնական եզրակացությունը պետական բյուջեի նախագծի վերաբերյալ, Ազգային ժողով է ներկայացնում բյուջետային տարին սկսվելուց առնվազն 90 օր առաջ:

Ինչպես տեսնում ենք, բյուջետային գործընթացի կազմակերպման տեսանկյունից ամհամապատասխանությունը ոչ միայն ժամանակային է, այլ նաև տարբեր է ըստ մասնակիցների ընդգրկվածության: Բյուջետային գործընթացի մեկնարկը Արցախի Հանրապետությունում սկսվում է ԱՀ կառավարության որոշման հիման վրա, իսկ Հայաստանի Հանրապետությունում՝ ՀՀ վարչապետի որոշման հիման վրա: Ամիսների տարբերությամբ Միջնաժամկետ ծախսերի ծրագրի կազմումը ՀՀ-ում հնարավորություն է տալիս առանձին հիմնախնդիրների գծով բովանդակային առումով ավելի համակարգված, բազմակողմանի և խորքային ուսումնասիրություններ, վերլուծություններ իրականացնել, ինչի արդյունքում կարևորվում է ոչ թե ռազմավարական փաստաթղթի պատրաստման ծավալի կամ ժամկետի նույնականացման հարցը, այլ, ընդհանուր առմամբ, ավելի լավ Միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման հնարավորությունը՝ ներառելով առկա և կանխատեսվող ռիսկերի վերլուծությունը, տարբեր սցենարներով բյուջետային ցուցանիշների փոփոխության միջակայքերի սահմանումը: Բացի այդ, կարևոր է նաև

հարկաբյուջետային կանոնների պահպանման ամրագրումը, ոսկե կանոնից շեղումների բացահայտման և ֆինկալ բաղաբականության միջոցով մակրոտնտեսական ցուցանիշների անհրաժեշտ մակարդակի վերականգնման հիմնահարցերը:

### Արմինե Սչանյան

## ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՓՈԽԵՐԻ ՀԱՄԵՄՏԱԿԱՆԸ

*Բանալի բառեր՝ բյուջետային գործընթաց, գերակայություններ, արդյունքային ցուցանիշ, հաշվետվողականություն*

Պետական ծախսերը պետք է համահունչ լինեն պետական բաղաբականության գերակայություններին: Պետական ֆինանսները նպատակային, ինսյոդաբար, արդյունավետ օգտագործելու և հանրային հաշվետվողականության տեսանկյունից արդյունավետ գործիքակազմի ներդրման նպատակով անհրաժեշտ է անցում կատարել ԱՅ և ՀՀ պետական բյուջեներից ֆինանսավորվող ծրագրերի գնահատման քանակական և որակական արդյունքային ցուցանիշներին: ՀՀ-ում պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով շարունակվելու են ծրագրային բյուջետավորման ներդրման ուղղությամբ իրականացվող բարեփոխումները, և ընդլայնվելու է դրանց ընդգրկվածությունը: Երկու երկրներում էլ անհրաժեշտ է նաև բարելավել համայնքների բյուջետավորման գործընթացը:

### Armine Schanyan

## COMPARISON OF THE PHASES OF THE FORMATION OF STATE BUDGETS OF REPUBLIC OF ARTSAKH AND REPUBLIC OF ARMENIA

**Key words:** *budget process, priorities, result indicator, accountability*

Public expenditures must be consistent with the policy priorities of the state. In order to have targeted, careful, effective use of public finances and implementation of effective tools from the point of view of public accountability it is necessary to make the transition to quantitative and qualitative resultbased indicators for programmes, financed from the state budgets of the Republic of Artsakh and the Republic of Armenia. To enhance the efficiency of public expenditure management, reforms to introduce program budgeting will be continued and their scope-extended in the Republic of Armenia. In both countries it is necessary to improve a program budgeting scheme for communities.

**Армине Счабян**  
**СРАВНЕНИЕ ФАЗ ФОРМИРОВАНИЯ ГОСУДАРСТВЕННЫХ БЮДЖЕТОВ**  
**РЕСПУБЛИКИ АРЦАХ И РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**


**Ключевые слова:** *бюджетный процесс, приоритеты, результативный показатель, подотчетность*

Государственные расходы должны быть созвучны приоритетам государственной политики. Для целевого, бережного, эффективного использования государственных финансов и внедрения эффективного инструментария с точки зрения государственной подотчетности нужно совершить переход к количественным и качественным результативным показателям оценки программ, финансируемых из государственных бюджетов Республики Арцах и Республики Армения. С целью повышения эффективности управления государственными расходами в Республике Армения будут продолжены реформы в направлении внедрения программного бюджетирования и расширится их охват. В двух странах также необходимо улучшить процесс бюджетирования общин.

## ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

### ԵՎԳԵՆՅԱ ՀԱՅՐԻՅԱՆ

Անկախության հռչակումից ի վեր Արցախի Հանրապետությունում իրականացվել են մի շարք բարեփոխումներ տնտեսության բոլոր ճյուղերում: ՀՀ-ում իրականացված բարեփոխումների փորձի հիման վրա ԱՀ-ում իրականացված բարեփոխումները ուղղված էին հարկային համակարգի ձևավորմանը, բյուջետային հարաբերությունների կարգավորմանը, բանկային համակարգի ձևավորմանն ու կայացմանը: Արդյունքում, ԱՀ տնտեսությունը կարողացավ հաղթահարել հետպատերազմյան ժամանակաշրջանին բնորոշ խոչընդոտներն ու դժվարությունները և անցնել կայուն զարգացման շրջան:




**Գծապատկեր 1. Տնտեսական աճի և սպառողական գների ինդեքսի դինամիկան 2000-2017թթ.<sup>1</sup>**

2000-2017թթ ԱՀ-ում տնտեսական աճի միջին տեմպը կազմել է 10,9 տոկոս՝ գնաճի ցուցանիշի 3.9 տոկոսի պայմաններում: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի տեմպը գերազանցում էր տնտեսության մեջ արձանագրված սպառողական ապրանքների գների ինդեքսի ցուցանիշին, բացառությամբ 2008 թվականի, որը պայմանավորված էր ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական արդյունքներով: 2000-2017թթ տնտեսական աճն իր առավելագույն դրսևորումն ունեցավ 2003 թվականին՝ արձանագրելով 20.2%, իսկ 2017 թվականին տնտեսական աճը վերջին տասը տարիների կտրվածքով իր առավելագույն դրսևորումն ունեցավ՝ արձանագրելով 15.6%՝ 0.5 տոկոս գնանկման պայմաններում:

Արցախի Հանրապետության տնտեսության զարգացման տեսանկյունից կարևոր էր ինքնուրույն բյուջետային հարաբերությունների կարգավորման իրավական դաշտի ձևավորումն ու կայացումը: Հիմք ընդունելով ՀՀ-ում բյուջետային ոլորտում իրականացված բարեփոխումները, հանրապետությունում ձևավորվեց երկաստիճան բյուջետային համակարգ, ընդունվեցին բյուջետային հարաբերությունները կարգավորող հիմնական օրենսդրական ակտերը:

<sup>1</sup> [www.stat-nkr.am](http://www.stat-nkr.am), տարեգրքեր

Օբյեկտիվ պատճառներով, մասնավորապես պատերազմից հետո անհրաժեշտ ծախսերի իրականացման անհրաժեշտությամբ և սեփական եկամուտների անհրաժեշտ չափի ապահովման անհնարինությամբ պայմանավորված, ԱՀ-ում ձևավորվեց դեֆիցիտային բյուջե, ինչի պատճառով ՀՀ կառավարության կողմից յուրաքանչյուր տարի ԱՀ տնտեսությանն է տրամադրվում այսպես կոչված անվերադարձ «միջպետական վարկ»: Արդյունքում, ԱՀ բյուջետային հարաբերությունների հիմնական առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ԱՀ բյուջեն մեծապես կախված է ՀՀ կողմից տրամադրվող միջպետական վարկից, ուստի հարկաբյուջետային քաղաքականությունը ԱՀ-ում իրականացվում է ՀՀ-ում նույն քաղաքականության սկզբունքների հետ համահունչ: Հարկային քաղաքականության իրականացման առանձնահատկության տեսանկյունից հարկ է ընդգծել, որ ԱՀ ներմուծվող ապրանքներից գանձվող հարկերը վճարվում են ՀՀ բյուջե՝ մաքսային սահման չունենալու պատճառով:




**Գծապատկեր 2. ԱՀ Համախմբված բյուջեի ցուցանիշները 2000-2017թթ<sup>1</sup>**

2000-2017թթ ընկած ժամանակահատվածում ԱՀ համախմբված բյուջեի սեփական եկամուտներն աճել են մոտ 12 անգամ, ծախսերը աճել են 7.2 անգամ, իսկ բյուջեի պակասորդը՝ 5.4 անգամ: Նշված ժամանակահատվածում տնտեսական աճի բարձր ցուցանիշների ապահովման արդյունքում ԱՀ համախմբված բյուջեի սեփական եկամուտների աճի հավելյալի տեմպերը գերազանցել են համախմբված բյուջեի ծախսերի հավելյալի տեմպերը, ինչի արդյունքում նաև միջպետական վարկի հավելյալի տեմպերը: 2000-2017թթ ընկած ժամանակահատվածում ԱՀ համախմբված բյուջեի սեփական եկամուտներ/ՀՆԱ հարաբերակցությունը ցուցանիշը տատանվել էր 12,9-ից 24,1 տոկոսի միջակայքում: Նշված ցուցանիշն իր առավելագույն չափն արձանագրել է 2008 թվականին, որը պայմանավորված էր տվյալ տարում բյուջետային սեփական եկամուտների՝ նախորդ տարվա համեմատ

<sup>1</sup> [www.stat-nkr.am/տարեգրքեր](http://www.stat-nkr.am/տարեգրքեր)

բարձր աճի տեմպով: 2008 թվականից սկսած տվյալ ցուցանիշը կայուն տեմպով նվազման դինամիկա է արձանագրել և 2017 թվականին կազմել 15,6 տոկոս, որը պայմանավորված էր ՀՆԱ-ի աճի առաջանցիկ տեմպերի ապահովմամբ համախմբված բյուջեի սեփական եկամուտների աճի տեմպերի նկատմամբ: Դինամիկայի տեսանկյունից նույն վարքագիծն են դրսևորել նաև ԱՀ համախմբված բյուջեի ծախսեր/ՀՆԱ և ԱՀ համախմբված բյուջեի պակասորդ/ՀՆԱ ցուցանիշները:

Ինչպես ՀՀ-ում, այնպես էլ ԱՀ-ում վճարային հաշվեկշիռը 2000-2017թթ ընդհանրվել էր բացասական ուղղությամբ, ներմուծման ծավալները գերազանցում էին արտահանման ծավալներին:




**Գծապատկեր 3. Արտահանման և ներմուծման դինամիկան ԱՀ-ում 2001-2017թթ. <sup>1</sup>**

2001-2017թթ ընկած ժամանակահատվածում արտահանման ծավալները աճել են գրեթե 28 անգամ իսկ ներմուծման ծավալները՝ 6 անգամ: Վերջին տարիներին ԱՀ տնտեսությունում արձանագրված կարևոր ձեռքբերումներից կարելի է համարել այն հանգամանքը, որ սկսած 2014 թվականից ԱՀ-ում արտահանման ծավալների աճի տեմպերը գերազանցել են ներմուծման աճի տեմպերին: Արդյունքում ԱՀ-ում հնարավորություն է ստեղծվում աստիճանաբար մեղմել վճարային հաշվեկշռի բացասական ճեղքվածքը: Եթե 2001 թվականին արտահանման հակվածությունը կազմում էր ընդամենը 10 տոկոս, ապա 2017 թվականին այն կազմել էր 35 տոկոս: Արտահանման կառուցվածքում նշված ժամանակահատվածում նույնպես դրական տեղաշարժեր են նկատվում: Չնայած այն հանգամանքին, որ արտահանման կառուցվածքում դեռևս մեծ տեսակարար կշիռ են զբաղեցնում հանքահումքային ապրանքները, սակայն վերջին տարիներին պատրաստի արտադրանքի տեսակարար կշռի ավելացման աճի տեմպը գերազանցել է հանքահումքային ապրանքների տեսակարար կշռին: Արդյունքում, պատրաստի արտադրանքի տեսակարար կշռի ավելացումը արտահանման կառուցվածքում դրական ազդեցություն կունենա ԱՀ տնտեսության զարգացման վրա:

ԱՀ տնտեսության զարգացման գործում առանձնակի և կարևոր դեր ունեցավ բանկային համակարգը, վերջինիս կողմից տնտեսությանը ներարկված վարկային ռեսուրսները արդյունավետ ազդեցություն ունեցան ԱՀ-ում տնտեսական աճի բարձր տեմպերի արձանագրման գործընթացում: ԱՀ բանկային համակարգը հանդիսանում է ՀՀ բանկային համակարգի բաղկացուցիչ տարրը և վերջինս կարգավորվում է ՀՀ ԿԲ կողմից: Կարևոր է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ԱՀ-ն իր սոցիալ-տնտեսական բնութագրերով համարելի է ՀՀ ոչ մեծ մարզերին՝ բնակչության թիվը

<sup>1</sup> [www.stat-nkr.am/տարեգրքեր](http://www.stat-nkr.am/տարեգրքեր)

կազմում է ՀՀ բնակչության 5 տոկոսը, ՀՆԱ-ի ծավալները ևս կազմում են ՀՀ ՀՆԱ-ի 5 տոկոսը, իսկ բյուջեի եկամուտները (ներառյալ պաշտոնական տրանսֆերները, հիմնականում ՀՀ բյուջեից) շուրջ 7 տոկոսը, ապա ԱՀ ֆինանսական հատվածի բնութագրերը դրամաշրջանառության ծավալներից մինչ տարբեր աղբյուրներից ֆինանսական հոսքերը, այդ թվում ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը և ԱՀ տնտեսության տարբեր հատվածներ ներդրումների ծավալները առանձնանում են սվեդի բարձր ցուցանիշներով:



**Գծապատկեր 4. Վարկային ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը ԱՀ-ում 2000-2017թթ.<sup>1</sup>**

Վարկային ներդրումները ԱՀ-ում 2000-2017թթ ընկած ժամանակահատվածում աճել են գրեթե 97 անգամ: 2017 թվականին ԱՀ-ում վարկային ներդրումները կազմել են 150 մլրդ ՀՀ դրամ: Վարկային ներդրումներ/ ՀՆԱ ցուցանիշը ԱՀ-ում 6,7 տոկոսից աճել է մինչև 55,1 տոկոս 2017 թվականին: Նշված ցուցանիշի աճին զուհահեռ վարկային ներդրումների կառուցվածքում դեռևս գերակշռում են այլ ճյուղերը, վերջինիս մեջ գերակշռում են սպառողական և հիփոթեքային վարկերը, ինչը փաստում է, որ վարկային ներդրումների մեծ մասը ուղղվում է սպառմանը :

Անկախության հռչակումից ի վեր ԱՀ-ում իրականացված տնտեսական բերափոխումները կրում են շարունակական բնույթ: Դրա ապացույցն են հանդիսանում ԱՀ տնտեսությունում արձանագրված բարձր տնտեսական աճի տեմպերը: Սակայն, չնայած իրականացվող բարեփոխումներին ԱՀ-ում դեռևս առկա բազում չլուծված հիմնախնդիրներ և ԱՀ տնտեսության առջև առկա են բազմաբնույթ մարտահրավերներ:

ԱՀ տնտեսության զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնը, բնականաբար ԱՀ միջազգայնորեն չճանաչված լինելու հանգամանքն է, վերջինիս լուծումը կդառնա ԱՀ տնտեսության զարգացման համար բազմաթիվ հնարավորությունների օգտագործման ու կիրառման հիմնաբարը:

Ներկայիս պայմաններում ԱՀ տնտեսության առջև առկա մի շարք մարտահրավերներ, որոնց ընդունումից ու հաղթահարումից հետո միայն տնտեսությունը կթևակոխի զարգացման առավել կայուն և արդյունավետ հարթակ: Դրանցից կարելի է առանձնացնել հետևյալը.

<sup>1</sup> www.stat-nkr.am/unwptգրքեր

1. ՀԱԱ-ի կառուցվածքում գյուղատնտեսության և արդյունաբերության ոչ մեծ տեսակարար կշիռը:
2. ԱՀ արտահանման կառուցվածքում հանքահումային ապրանքների տեսակարար մեծ կշռի առկայությունը:
3. ԱՀ-ում դեֆիցիտային բյուջեի առկայությունը: Սկսած 2010 թվականից պետական բյուջեի դեֆիցիտը ծածկելու նպատակով, բացի ՀՀ-ից տրամադրվող օգնությունից, ԱՀ Կառավարությունը դիմել էր բանկային վարկերի ու փոխառությունների ներգրավմանը:
4. ԱՀ-ում հարկային վարչարարության կատարելագործման, ինչպես նաև հարկազանձման գործընթացի մատչելիության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը:
5. Գյուղատնտեսության, ինչպես նաև փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտին ցուցաբերվող աջակցության մեխանիզմների ընդլայնման ու արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը:
6. Աղբատության հաղթահարմանն ուղղված նպատակային և հասցեական ծրագրերի մշակման ու իրականացման անհրաժեշտությունը:

Այսպիսով, ԱՀ-ում անկախ պետականության հռչակումից հետո իրականացված բարեփոխումները կարևոր դեր ու նշանակություն ունեցան տնտեսությունը վերականգնելու գործում: Դրան զուգահեռ, ներկայումս տնտեսությունում առկա են բազում մարտահրավերներ ու խնդիրներ, որոնց հաղթահարման դեպքում ԱՀ տնտեսությունը կթևակոխի երկարատև կայուն զարգացման շրջան:

### **Եվգենյա Հայրիյան** **ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԵՈՔԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ** **ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

**Բանալի բառեր.** *Տնտեսական աճ, բյուջե, վարկային ներդրումներ, վճարային հաշվեկշիռ*

Անկախության հռչակումից հետո ՀՀ-ում իրականացված բարեփոխումների փորձի հիման վրա, ԱՀ-ում իրականացված բարեփոխումները ուղղված էին հարկային համակարգի ձևավորմանը, բյուջետային հարաբերությունների կարգավորմանը, բանկային համակարգի ձևավորմանն ու կայացմանը: Իրականացված բարեփոխումներին զուգահեռ, ներկայումս տնտեսությունում առկա են բազում մարտահրավերներ ու խնդիրներ, որոնց հաղթահարման դեպքում ԱՀ տնտեսությունը կթևակոխի երկարատև կայուն զարգացման շրջան:

### **Yevgenya Hayriyan** **ACHIEVEMENTS AND MODERN CHALLENGES OF ARTSAKH REPUBLIC** **ECONOMY**

**Key words:** *economic growth, budget, credit investments, payment balance*

Based on the experience of the Republic of Armenia after the declaration of independence, the reforms in the Republic of Artsakh were aimed at the formation of the tax system, the regulation of budget relations, the formation and development of the banking



system. Along with the implemented reforms, nowadays there are many challenges and problems facing the economy, in case of overcoming which, the economy of AR will move to a long-term sustainable development.

**Евгения Айриян**  
**ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ ЭКОНОМИКИ**  
**РЕСПУБЛИКИ АРЦАХ**

**Ключевые слова:** *экономический рост, бюджет, кредитные вложения, платежный баланс*

Основываясь на опыте Республики Армения после провозглашения независимости, в Республике Арцах реформы были направлены на формирование налоговой системы, регулирование бюджетных отношений, формирование и развитие банковской системы. Наряду с осуществленными реформами в настоящее время существует множество проблем, в случае преодоления которых экономика страны перейдет к долгосрочному устойчивому развитию.

**ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ**

**ԿԱՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Ազգային տնտեսության հատվածների հստակ դասակարգումը, դրանց կազմի և կառուցվածքի բնութագրերը մակրոտնտեսագիտության գիտական և մեթոդաբանական հիմնախնդիրներից են, ինչպես նաև կիրառական մակրոտնտեսագիտության և վիճակագրության պրակտիկ հիմնահարցերից:

Հարկ է նշել, որ Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ) և ՀՀ կենտրոնական բանկը (ԿԲ) առանձնացնում են տնտեսության չորս հիմնական հատվածներ (սեկտորներ)՝ իրական, ֆինանսական (կամ դրամավարկային), հարկաբյուջետային (կամ պետական) և արտաքին:

Տնտեսության *հրական հատվածը*<sup>1</sup> տնտեսության բոլոր այն ոլորտներն (ճյուղեր) են, որոնք արտադրում են նյութական և ոչ նյութական ապրանքներ և ծառայություններ: Տնտեսության այս հատվածը բաղկացած է ձեռնարկություններից (ոչ ֆինանսական կազմակերպություններից), տնային տնտեսություններից և տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպություններից: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տեսանկյունից, որոշ դեպքերում տնային տնտեսությունները և դրանց սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպությունները միավորվում են մեկ ենթահատվածում՝ «Այլ ռեզիդենտ հատվածներ անվանմամբ»:

Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածում ընդգրկվում են բոլոր այն գործակալ (ռեզիդենտ) սուբյեկտները, որոնց հիմնական գործունեությունը շուկայական ապրանքների արտադրությունը և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցումն է: Այս հատվածում ընդգրկված կազմակերպությունների սեփականատերերը կարող են լինել գործակալ, ոչ գործակալ, ֆիզիկական, իրավաբանական անձիք և պետությունը: Ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածը, ըստ սեփականատերերի բնույթի, տարանջատվում է երկու ենթահատվածների՝ *պետական և մասնավոր*:

*Տնային տնտեսությունների հատվածը* ներառում է բոլոր գործակալ տնային տնտեսությունները: Տնային տնտեսությունների շարքն են դասվում նաև այն ֆիզիկական անձիք, ովքեր զբաղվում են ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ սեփական սպառման կամ շուկայում իրացման նպատակով:

*Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպությունների հատվածում* ընդգրկվում են ոչ առևտրային այն կազմակերպությունները, որոնք արտադրում են ոչ շուկայական ապրանքներ և ծառայություններ, տրամադրում դրանք առանձին տնային տնտեսություններին կամ ամբողջ հասարակությանը՝ անհատույց կամ որոշակի՝ ոչ շուկայական գներով:

Պետք է նշել, որ այն կազմակերպությունները, որոնք ղեկավարվում և ֆինանսավորվում են հիմնականում պետական կառավարման մարմինների կողմից, այս հատվածում չեն ընդգրկվում, այլ ներառվում են պետական կառավարման հատվածում: Տնային տնտեսություններին սպասարկող շահույթ

<sup>1</sup> Տես՝ ՀՀ ԿԲ պաշտոնական էլեկտրոնային կայք՝ [https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram\\_fin\\_manual/tntat.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/tntat.pdf)

չհետապնդող կազմակերպություններից են՝ բաղաբազան կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները, բարեգործական հիմնադրամները, եկեղեցիները, հավատքային կազմակերպությունները, մասնագիտական և այլ տիպի միությունները, մշակութային կազմակերպությունները, որոշ կրթական և հետազոտական կազմակերպություններ և այլն:

Տնտեսության մյուս՝ *ֆինանսական հատվածը* ընդգրկում է այն կազմակերպությունները (ինստիտուցիոնալ միավորները), որոնց հիմնական նպատակը ֆինանսական միջնորդությունն է կամ ֆինանսական միջնորդությանը նպաստող ծառայությունների մատուցումը<sup>1</sup>:

Հարկ է շեշտել, որ ֆինանսական հատվածը կապված է կարճաժամկետում, միջնաժամկետում և երկարաժամկետում փոխառությունների և վարկավորման հետ: Այս հատվածը ներառում է՝ ԿԲ-ն, առևտրային բանկերը, ոչ բանկային ֆինանսական կազմակերպությունները, ապահովագրական կազմակերպությունները և ֆոնդային բորսաները, ֆինանսական ներդրումային ինստիտուտները, կենսաթոշակային ֆոնդերը, վարկային միությունները և ասոցիացիաները:

Ֆինանսական հատվածը համարվում է բարդ համակարգ, որում մասնակիցները հնարավորություն ունեն ինքնուրույն շրջանառել ֆինանսական ակտիվները՝ անկախ իրական հատվածի ապրանքների շրջանառությունից:<sup>2</sup>

Միաժամանակ այս հատվածի կարևոր գործառնություններից է ազատ դրամական միջոցների արդյունավետ բաշխումն իրական հատվածի սուբյեկտների միջև, որոնք ֆինանսական շուկաների բացակայության դեպքում կարող են ներդրում կատարել միայն իրենց ինստիտուցիոնալների չափով:

Պետք է նշել, որ օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները ֆինանսական միջնորդներ չեն: Այդպիսի կազմակերպություններ են՝ բորսաները (սակարաններ) և արտարժույթի ու արժեթղթերի կազմակերպված շուկաները, դեպոզիտարիաները և քլիրինգային կազմակերպությունները, բրոկերները, գործակալները, արտարժույթի փոխանակման ընկերությունները, ֆինանսական երաշխիքների և ֆինանսական ածանցյալ գործիքների հետ գործ ունեցող կազմակերպությունները և այլն<sup>3</sup>:

Իր հերթին ֆինանսական հատվածը նպատակահարմար է բաժանել 2 խոշոր հատվածների՝ *ֆինանսական միջնորդ կազմակերպություններ* և *օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպություններ*:

Անշուշտ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության տեսանկյունից առավել հետաքրքրություն են ներկայացնում ֆինանսական միջնորդ կազմակերպությունները, որոնք կարող են մասնակցել փողի ստեղծման գործընթացին:

Սովորաբար, կազմակերպությունը ֆինանսական միջնորդ է համարվում, եթե այդ միջնորդությունը դրա հիմնական գործունեությունն է: Լինում են դեպքեր, երբ կառավարությունը կամ կազմակերպությունները որոշ ֆինանսական միջնորդային գործարքներ են կատարում, որոնք, սակայն, նրանց հիմնական գործունեությունը չեն: Նման դեպքերում այդպիսի կազմակերպությունները ֆինանսական միջնորդ չեն համարվում:

<sup>1</sup> Տես՝ Տնտեսության հատվածների նկարագիրը, ՀՀ ԿԲ,

[https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram\\_fin\\_manual/tmthat.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/tmthat.pdf)

<sup>2</sup> Пархоменко А. «Взаимодействие реального и финансового секторов экономики на этапе финансового кризиса», научная статья. <https://cyberleninka.ru/article/v/vzaimodeystvie-realnogo-i-finansovogo-sektorov-ekonomiki-na-etape-finansovogo-krizisa>

<sup>3</sup> ՀՀ ԿԲ պաշտոնական էլեկտրոնային կայք՝ [https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram\\_fin\\_manual/tmthat.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/tmthat.pdf)

Ինչպես հայտնի է, ԿԲ ֆինանսական համակարգի կարգավորման և վերահսկման գործառույթներ իրականացնող յուրահատուկ ֆինանսական հաստատություն է և նաև ֆինանսական միջնորդության գործառույթներ է իրականացնում:

Նշենք, որ *այլ ավանդային (դեպոզիտային) կազմակերպություններ* խմբում ներառվում են այն բոլոր գործակալ ֆինանսական միջնորդ կազմակերպությունները, որոնց պարտավորությունները հիմնականում բաղկացած են ավանդներից կամ բնույթով ավանդներին շատ մոտ ֆինանսական գործիքներից և ընդգրկվում են տվյալ տնտեսության «փողի» մեջ:

Այլ ավանդային կազմակերպություններ» ենթահատվածը բաժանվում է երկու խմբի՝ *բանկեր և ոչ բանկային ավանդային կազմակերպություններ*:

Բանկերը այն ֆինանսական միջնորդ ավանդային կազմակերպությունն են, որոնք կարող են ներգրավել ինչպես փոխանցելի, այնպես էլ ոչ փոխանցելի ավանդներ և այլ պարտավորություններ: Իսկ ոչ բանկային ավանդային կազմակերպությունները փոխանցելի ավանդներ ներգրավել չեն կարող:

Ընդ որում, ոչ ավանդային ֆինանսական կազմակերպությունների պարտավորությունների իրացվելիությունը ավելի ցածր է, քան ավանդայինը, և դրանք փողի ազդեցատներում չեն ընդգրկվում:

*Ֆինանսական ընկերությունների* գործունեության հիմնական բնույթը ոչ ֆինանսական ձեռնարկությունների և տնային տնտեսությունների վարկավորումն է:

*Ֆինանսական լիզինգային ընկերություններն* իրականացնում են հիմնական միջոցների ձեռքբերման ֆինանսավորումը: Ընդ որում, տարբեր երկրներ տարբեր ձևերով են կանոնակարգում ֆինանսական լիզինգային ընկերությունների կողմից միջոցների ներգրավումը: Դրանից կախված՝ այս ընկերությունները կարող են դասակարգվել իրացվելի կամ ոչ իրացվելի պարտավորություններով ֆինանսական կազմակերպություններում:

Ներդրումային հիմնադրամները միավորում են իրենց փայատերերի միջոցները՝ ֆինանսական ակտիվներում ներդրումներ կատարելու նպատակով:

*Արժեթղթերի դիլերներ և անդերրայթերներ* կազմակերպություններից են արժեթղթերի շուկայի գործառնություններում մասնագիտացված ընկերությունները, որոնք օժանդակում են այլ ձեռնարկություններին արժեթղթերի տեղաբաշխման գործում և/կամ իրենց հաշվին ու ռիսկով զբաղվում են արժեթղթերի առք ու վաճառքով: Արժեթղթերի բրոկերները, որոնք սեփական հաշվին արժեթղթերի առք ու վաճառք չեն կատարում, այս տիպի կազմակերպությունների շարքին չեն դասվում, այլ ընդգրկվում են օժանդակ ֆինանսական կազմակերպություններում:

*Մասնագիտացված ֆինանսական միջնորդների* մեջ մտնում են ֆինանսական միջնորդության որոշակի ուղղություններով զբաղվող կազմակերպությունները՝ ՖՐ՝ արտահանման-ներմուծման ֆինանսավորմամբ զբաղվող ընկերությունները, ֆակտորինգային ընկերությունները, վենչուրային կապիտալ ֆոնդերը, հոլդինգային կորպորացիաները<sup>1</sup>:

ՀՀ-ում ոչ ավանդային ֆինանսական կազմակերպություններ են վարկային կազմակերպությունները և գրավատները, որոնք ՀՀ ֆինանսական շուկայում ունեն շատ փոքր բաժին<sup>1</sup>:

*Ապահովագրական կազմակերպությունների ենթահատվածը* բաղկացած է ապահովագրական ընկերություններից և կենսաթոշակային հիմնադրամներից: Գործունեության յուրահատուկ բնույթի պատճառով ապահովագրական

<sup>1</sup> ՀՀ ԿԲ պաշտոնական կայք՝

[https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram\\_fin\\_manual/tntthat.pdf](https://www.cba.am/Storage/AM/downloads/parberakan/statistics/dram_fin_manual/tntthat.pdf)

կազմակերպությունները այլ ֆինանսական միջնորդներից առանձնացվում են և ընդգրկվում առանձին ենթահատվածում:

Հարկ է նշել, որ այս ենթահատվածում ընդգրկված կենսաթոշակային հիմնադրամները տարբերվում են պետական կառավարման հատվածում ընդգրկված սոցիալական ապահովության հիմնադրամներից: Դրանք առանձնացված են իրենց սեփականատերերից, չեն ֆինանսավորվում պետական կառավարման մարմինների կողմից և, ի տարբերություն սոց. ապահովության հիմնադրամների, դրանց նպատակը ոչ թե ամբողջ հասարակության, այլ առանձին աշխատողների խմբերի կենսաթոշակային ապահովության խնդիրների կարգավորումն է:

Հատկանշական է, որ հաճախ տնտեսագիտական գրականությունում ֆինանսական հատվածը, ֆինանսական համակարգը և շուկան հանիրավի նույնացվում են: Ֆինանսական համակարգը կազմված է ինստիտուցիոնալ միավորներից և շուկաներից, որոնք, առևտրային գործունեության ֆինանսավորման նպատակով, փոխազդում են միմյանց հետ՝ ռեսուրսների մոբիլիզացման և ներդրումների իրականացման համար, ներառելով նաև վճարային համակարգը<sup>1</sup>: Իսկ ֆինանսական շուկայում սուբյեկտները կարող են գնել կամ վաճառել ֆինանսական պարտավորությունները՝ առաջնորդվելով որոշակի կանոններով:

Այսպիսով՝ տնտեսության իրական հատվածում ապահովվում է ազգային արդյունքի արտադրությունը և շրջանառությունը, իսկ ֆինանսական հատվածում՝ ազգային արդյունքի բաշխումն ու վերաբաշխումը:

### Կարեն Գրիգորյան

## ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԿՆԱԲՎՆՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**Բանալի բառեր.** *իրական հատված, ֆինանսական հատված, ձեռնարկություններ, տնային տնտեսություն, ֆինանսական միջնորդ*

Հոդվածի հիմնական նպատակն է երկրի տնտեսության իրական և ֆինանսական հատվածների խորը և համակողմանի մեկնաբանումներ կատարելը, իսկ խնդիրը այդ հատվածների գնահատման մեթոդաբանական հիմնավորումներ տալը: Հոդվածում մանրամասն ուսումնասիրվել են երկրի տնտեսության իրական և ֆինանսական հատվածների կազմի և կառուցվածքի բնութագրերը, վերլուծվել են հատվածների և ենթահատվածների միջև կապերը: Տնտեսության իրական հատվածը քննարկվել է ձեռնարկությունների, տնային տնտեսությունների և դրանց սպասարկող շահույթ չիտապակող կազմակերպությունների ենթահատվածների գծով: Ֆինանսական հատվածը վերլուծվել է երկու խոշոր հատվածների՝ ֆինանսական միջնորդ կազմակերպությունների և օժանդակ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների գծով: Տրվել են այդ հատվածներին վերաբերող եզրակացություններ և առաջարկություններ:

<sup>1</sup> Overview of the Financial System, IMF, Financial Soundness Indicators Compilation Guide, 2006, p. 1

**Karen Grigoryan****ANALYSIS OF ECONOMIC OBSERVATIONS OF REAL AND FINANCIAL SECTORS OF THE ECONOMY OF RA**

**Key words:** *real sector, financial sector, enterprises, households, financial intermediary*

The main objective of the article is to provide in-depth and comprehensive review of the real and financial sectors of the country's economy, and to provide methodological justifications for the assessment of those sectors. The article analyzes the characteristics of the structure of the real and financial sectors of the country, and examines the relationships between sectors and sub sectors. The real sector of the economy is considered in the sub-sectors of organizations, households and non-profit organizations serving households. The financial sector is analyzed for two major segments: financial intermediary organizations and subsidiary financial services providers. At the end, the relevant conclusions and recommendations are made with respect to these sectors and segments.

**Карен Григорян****АНАЛИЗ ЭКОНОМИЧЕСКИХ ИНТЕРПРЕТАЦИЙ РЕАЛЬНОГО И ФИНАНСОВОГО СЕКТОРОВ ЭКОНОМИКИ РА**

**Ключевые слова:** *реальный сектор, финансовый сектор, предприятия, домохозяйства, финансовый посредник*

Основная цель статьи – представить углубленное и всестороннее толкование реального и финансового секторов экономики страны и дать методологические обоснования для оценки этих секторов. В статье анализируются характеристики структуры реального и финансового секторов страны и рассматриваются отношения между секторами и их подсекторами или сегментами. Реальный сектор экономики рассматривается в подсекторах – организациях, домашних хозяйствах и обслуживающих домашние хозяйства некоммерческих организациях. Финансовый сектор проанализирован для двух основных сегментов: финансовых посреднических организаций и вспомогательных поставщиков финансовых услуг. В конце сделаны соответствующие выводы и даны рекомендации в отношении этих секторов и сегментов.

## ԵԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՐԱՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԶԱՄԸՆԹԱՑ

### ՆԱԴԵԺՆԱ ԱՖՅԱՆ

Էկոլոգիական անվտանգության հիմնահարցերը հիմնականում կարգավորվում են ֆինանսատնտեսական և իրավական ճկուն քաղաքականությամբ: Իսկ այդ քաղաքականության իրականացման մեխանիզմների գործարկումն էլ ապահովում է կյանքի որակի և տնտեսվարող սուբյեկտների Էկոլոգիական գիտակցության բարձր մակարդակ: Համաձայն Հայաստանի հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղված ֆինանսական միջոցները պետք է կայուն աճն ի հաշիվ պետական բյուջեի, այսինքն՝ բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների դրույթաչափերի աճը մտնում է վճարելիության սկզբունքի և կայուն զարգացման ծրագրի մարտահրավերների շարքում: Վերջին տարիների իրականացրած քաղաքականության արդյունքում իրավաբանական անձանց համար վարչական տուգանքները, բնապահպանական հարկերը և բնօգտագործման վճարները դարձել են իրավակիրարկման արդյունավետ գործիքներ, քանի որ նրանք շրջակա միջավայրի հասցված վնասի փոխհատուցում չիրականացնելով ստանում են տնտեսական մեծ օգուտներ: Ավելին, հաշվարկված է, որ ներկայիս կիրառվող բնօգտագործման վճարների և բնապահպանական հարկերի փոխհատուցման գումարներն ավելի քան 32-40 անգամ զիջում են փաստացի պատճառվող վնասը<sup>1</sup>: Իսկ տնտեսության զարգացման նպատակով որոշ ոլորտների համար սահմանված բնապահպանական վճարների և ռեսուրսների օգտագործման դիմաց գրուական կամ ցածր դրույթաչափերի արտոնությունների պարբերաբար հետագա կիրառումներն առաջացնում են Էկոլոգիական ռիսկեր:

Կայուն զարգացման մարտահրավերներին հետևելով մշակվում է ֆինանսատնտեսական այնպիսի քաղաքականություն և գործիքակազմ, որը հիմնվում է պետության կարգավորիչ դերի և անհատական Էկոլոգիական գիտակցության բարձրացման վրա: Քանի որ ժամանակակից աշխարհում հաճախակի են դարձել մարդկության կյանքին և առողջությանը վտանգող ոչ միայն բնական և տեխնածին աղետները, այլև դրանց հնարավոր առաջացման ռիսկերը: Էկոլոգիական և ֆինանսական իրավունքի հիմունքներից ելնելով աշխարհի մի շարք երկրներում ներդրվեց Էկոլոգիական ռիսկի կառավարման նոր գործիք՝ Էկոլոգիական ապահովագրությունը, որի միջոցով արտահայտվում են իրավաբանական և ֆիզիկական անձանց Էկոլոգիական վնասի փոխհատուցման տնտեսական և իրավական շահերը: Էկոլոգիական ապահովագրական ընկերությունները ուղղորդված են պաշտպանելու նրանց սեփականության և քաղաքացիական իրավունքները՝ փոխհատուցելով Էկոլոգիական անբարենպաստ հետևանքներից առաջացած վնասը, ինչպես նաև իրականացնելով կանխարգելող բնապահպանական միջոցառումներ:

Հայաստանում ապահովագրության և ապահովագրական գործունեության հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքով,

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, 2007-2011թթ Նախարարական զեկույց

պարտադիր ապահովագրության մասին առանձին օրենքներով, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով<sup>1</sup>:

Էկոլոգիական ապահովագրական գործունեության հիմքում ընկած են օրենսդրաիրավական նորմատիվներ և չափանիշներ, որոնք ենթադրում են բազմապիսի շահերի փոխազդեցություն, սակայն որոշիչ կամ հիմնական շահը կապված է վնասների հատուցման հետ, որոնք անխուսափելիորեն առաջանում են տնտեսության որոշ ճյուղերի՝ շրջակա միջավայրի կամ երրորդ անձանց (ռեցիպիենտ) վրա անբարենպաստ ազդեցության հետևանքով: Հետևաբար, Էկոլոգիական ապահովագրությունը պետք է արտահայտի այնպիսի բնապահպանական պատասխանատվության չափանիշներ, որոնք ուղղորդված լինեն վնասի կանխարգելմանը, ի տարբերություն գործող կամ հիմնական կիրառում ունեցող համակարգի, որտեղ շրջակա միջավայրին պատճառվող վնասը դիտարկվում է որպես դրամական պատժամիջոց, որը տուգանքի կամ աղտոտման վճարների տեսքով ենթակա է վճարման պետական բյուջե: Այն պետք է նպատակաուղղված լինի նախ մեղավորի կողմից շրջակա միջավայրին պատճառվող վնասի կանխարգելմանը և միայն հետո, երբ իր գործունեության արդյունքում շրջակա միջավայրի լրիվ կամ մասնակի աղտոտմից առաջացած վնասի փոխհատուցմանը:

Գործնականում, ապահովագրության դասակարգման հիմքում ընկած են երկու չափանիշներ՝ ըստ ապահովագրության օբյեկտների և ըստ ապահովագրության պատասխանատվության չափանիշների: Այս չափանիշներն էլ հիմք են հանդիսանում դասակարգելու՝ ըստ ապահովագրության օբյեկտի և ըստ վտանգի բնույթի: Ըստ վտանգի բնույթի կարելի է վերագրել շրջակա միջավայրի վրա բացասական միանվագ ազդեցությունների, պարբերաբար ազդեցությունների ու հետևանքների ապահովագրությունը: Իսկ ըստ օբյեկտի՝ Էկոլոգիական ռիսկեր ունեցող սուբյեկտների քաղաքացիաիրավական (գույքային) պատասխանատվության ապահովագրությունը, որը կարող է առաջանալ տվյալ գործունեությամբ պայմանավորված շրջակա միջավայրի վթարային կամ աստիճանական աղտոտման հետևանքով<sup>2</sup>:

Հայաստանի օրենքով սահմանված ապահովագրության տեսակները տարբերակվում են ըստ կյանքի, ոչ կյանքի ապահովագրության և վերաապահովագրության: Այս տեսակների մեջ հստակ կարելի է առանձնացնել դժբախտ պատահարներից, առողջության ապահովագրություն, հրդեհից կամ բնական աղետներից, բնական և տեխնածին այլ բնույթի աղետներից, ընդհանուր պատասխանատվության ապահովագրության դասերը, ինչպես նաև ֆինանսական վնասների ապահովագրության դասերը: Այս դասերը կարելի է վերագրել Էկոլոգիական ապահովագրության դասերի մեջ, քանի որ որոշակիորեն վերաբերում են շրջակա միջավայրի հնարավոր աղտոտման ռիսկին, աղտոտման հետևանքով առաջացած վնասի և այդ վնասի փոխհատուցման պատասխանատվությանը:

Ըստ ապահովագրական իրավահարաբերությունների մեջ ապահովագրվողների ներքաշման մեթոդի ապահովագրությունը լինում է պարտադիր և կամավոր: Պարտադիր ապահովագրության դեպքում պետությունը օրենքի ուժով պարտադրում է իրավաբանական և ֆիզիկական անձանց որոշակի մուծումներ կատարել հասարակական շահերի կամ շրջակա միջավայրի պաշտպանության նպատակով՝ հիմք ընդունելով գործունեության կոնկրետ տեսակի հնարավոր բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի, դրա բաղադրիչների,

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետության օրենքը ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին, 2007թ.

<sup>2</sup> Харнахоева Л.А. Основные направления развития страхования экологических рисков в России // Известия ИГЭА. –2009. –№ 4(66).



մարդկանց կյանքի և առողջության, ինչպես նաև գույքի վրա: Պարտադիր ապահովագրության տեսակները, իրականացման կարգը, կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապահովագրական սակագների հաշվարկման կարգը և մի շարք այլ հարցեր սահմանվում են պետության կողմից: Պարտադիր ապահովագրության դեպքում բացառվում է կամավոր ապահովագրությանը բնորոշ առանձին օբյեկտների ընտրությունը և նրանց ապահովագրությունը: Միաժամանակ պարտադիր էկոլոգիական ապահովագրության պայմաններում հնարավորություն է ստեղծվում առավելագույն քանակության ապահովագրության օբյեկտների ներգրավման հաշվին կիրառել նվազագույն ապահովագրական սակագներ, հասնել ապահովագրական գործառնությունների բարձր ֆինանսական կայունության: Ինչն էլ իր հերթին ապահովում և երաշխավորում է շրջակա միջավայրի աղտոտման բարձր ռիսկայնությամբ, ինչպես նաև աղտոտման մեծ հաճախականությամբ օժտված տնտեսական գործունեության կողմից վնասների փոխհատուցմանը: Բացի այս, պարտադիր էկոլոգիական ապահովագրության դեպքում անվտանգության առավել խիստ պահանջներ են ներկայացվում, ինչի արդյունքում ուժեղանում է վերահսկողությունը գործունեության առանձին վտանգավոր տեսակների նկատմամբ:

Արդյունքում, պարտադիր էկոլոգիական ապահովագրությունն ապահովում է՝

1. վնասների փոխհատուցման բարձր մակարդակի ապահովագրական երաշխիքներ,
2. տնտեսական գործունեության ներդրումների առաջնահերթությունների որոշում և համապատասխանաբար միջոցների տեղաբաշխում՝ ըստ կանխարգելիչ, մեղմացուցիչ և փոխհատուցող միջոցառումների:

Կամավոր ապահովագրությունն ի հայտ է գալիս միայն ապահովագրվողի և ապահովագրողի միջև կամավոր կնքված ապահովագրական պայմանագրի հիման վրա: Կամավոր էկոլոգիական ապահովագրությունն իրականացվում է գործունեության այնպիսի տեսակների դեպքում, որոնց ազդեցությունները չեն գերազանցում օրենքով սահմանված շեմը: Հաճախ կողմերի միջև այդպիսի պայմանագրի կնքման պրոցեսին մասնակցում է միջնորդը՝ ապահովագրական բրոքերը կամ գործակալը: Ապահովագրական պայմանագրի կնքումը հավաստում է ապահովագրողի կողմից ապահովագրվողին ապահովագրական պոլիս կամ վկայագիր տրամադրելու միջոցով: Այս դեպքերում, տնտեսվարող սուբյեկտը համարվում է առավել վստահելի բանկերի և այլ ֆինանսական կառույցների համար, հնարավորություն է ստանում օգտվելու հարկային և այլ արտոնություններից, բարձրացնում է իր հեղինակությունը և պատասխանատվության մակարդակը: Կամավոր ապահովագրությունը, որպես կանոն, կնքվում է որոշակի ժամանակահատվածի համար: Ապահովագրության ժամկետը նշվում է ապահովագրական պայմանագրում, և ապահովագրողը պատասխանատվություն է կրում միայն այդ ժամանակաշրջանում: Ապահովագրության պայմանագիրը պարտադիր կնքվում է գրավոր ձևով և ուժի մեջ է մտնում միայն ապահովագրավճարի մուծման պահից սկսած: Ապահովագրության պայմանագրով մի կողմը՝ ապահովագրողը պարտավորվում է պայմանագրով պայմանավորված վճարի՝ ապահովագրավճարի դիմաց ապահովագրական դեպքը վրա հասնելիս մյուս կողմին՝ ապահովագրվողին կամ այլ անձի, ում օգտին կնքվել է պայմանագիրը՝ շահառուին կատարել ապահովագրական հատուցում՝ պայմանագրով որոշված գումարի՝ ապահովագրական վճարի սահմաններում:

Ընդհանուր առմամբ, տնտեսական գործունեության տեսակի վտանգավորության և ռիսկայնության աստիճանը դրված է էկոլոգիական ապահովագրության նշված ձևերի տարանջատման հիմքում: Բնականաբար, ազդեցությունների տարբերությունը ենթադրում է գործունեության տեսակների

համապատասխան դասակարգում՝ ըստ ազդեցության ուժգնության, մասշտաբների, տևողության, հետագայում բացասական ազդեցությունների վերացման հնարավորության և այլ չափանիշների: Օրինակ, ՌԴ-ում Էկոլոգիական ապահովագրության համակարգում գործում են ընկերությունների տնտեսական նորմատիվներ, որոնք տարբերակում են Էկոլոգիական ռիսկերի վտանգավորության աստիճանի, հաճախականության և այլ առանձնահատկությունների: Մասնավորապես՝ ընկերության պահուստային ֆոնդը գործունեության առաջին տարվա համար չպետք է պակաս լինի կանոնադրական կապիտալի 12%-ից, կամ մեկ Էկոլոգիական ռիսկի համար ստանձնած ապահովագրության առավելագույն չափը չի կարող գերազանցել ընկերության սեփական միջոցների 10%-ը, իսկ հինգ առավել խոշոր ռիսկերի մասով ապահովագրության գերազանցելու դեպքում պարտադիր կնքվում է վերաապահովագրության պայմանագիր<sup>1</sup>: Էկոլոգիական ապահովագրության մասով ստացված ընկերության շահույթի 30%-ն ուղղվում է կանխարգելիչ բնապահպանական միջոցառումների իրականացմանը: ԵՄ-ում գործում է տնտեսական նորմատիվների երկու հիմնական մաս՝ նպատակային ակտիվներ, որոնք օգտագործվելու են ապահովագրված Էկոլոգիական ռիսկերը փոխհատուցելու համար, և անվտանգության պահուստ, որը կիրառվում է, երբ ապահովագրված Էկոլոգիական ռիսկերի կառավարումը վտանգվում է<sup>2</sup>: Ընդ որում, անվտանգության պահուստը փոքր է նպատակային ակտիվներից, սակայն ի տարբերություն նպատակային ակտիվների՝ անվտանգության պահուստի չափը ըստ ապահովագրված ռիսկերի չի կարող փոփոխվել:

### Նաղեծրա Աֆյան

#### ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՅՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՀԱՍԸՆԹԱՑ

*Բանալի բառեր՝ Կայուն զարգացում, Էկոլոգիական ապահովագրություն, Էկոլոգիական անվտանգություն, Էկոլոգիական ռիսկ, Էկոլոգիական վնաս*

Հոդվածում ներկայացված է Էկոլոգիական ապահովագրության ներդրման անհրաժեշտության հիմնական խնդիրները կայուն զարգացմանը համընթաց: Տրվել են համեմատականներ Էկոլոգիական ռիսկի ապահովագրության և ապահովագրական գործունեության օրենսդրաիրավական կարգավորման միջև: Կարևորվել է Էկոլոգիական ապահովագրության տեսակներից պարտադիր Էկոլոգիական ապահովագրության տեսակը, ինչպես նաև դրա ապահովման երաշխիքները:

Հայաստանի Հանրապետությունում Էկոլոգիական ապահովագրության արդյունավետ համակարգի ներդրման համար համեմատական վերլուծվել է Ռուսաստանի Դաշնության և Եվրոպական Միության երկրներում գործող Էկոլոգիական ռիսկերի ապահովագրման տնտեսական նորմատիվները:

1 <http://www.scienceforum.ru/2014/611/3043>

2 <http://center-yf.ru/data/economy/Ekologicheskoe-strahovanie.php>

**Nadezhda Afyan**

**THE NECESSITY TO INTRODUCE ECOLOGICAL INSURANCE IN LINE WITH SUSTAINABLE DEVELOPMENT**

**Key words:** *Sustainable development, environmental insurance, ecological safety, ecological risk, environmental damage*

The article presents the main issues of the necessity of introducing ecological insurance in line with sustainable development. Comparisons between ecological risk insurance and legislative regulation of insurance activity are given. The importance of ecological insurance as a type of compulsory ecological insurance, as well as guarantees for its maintenance are highlighted. For the introduction of effective ecological insurance system in the Republic of Armenia, the economic standards of ecological risk insurance in the Russian Federation and the European Union have been analyzed comparatively.

**Надежда Афян**

**НЕОБХОДИМОСТЬ ВНЕДРЕНИЯ ЭКОЛОГИЧЕСКОГО СТРАХОВАНИЯ  
ОДНОВРЕМЕННО С УСТОЙЧИВЫМ РАЗВИТИЕМ**

**Ключевые слова:** *устойчивое развитие, экологическое страхование, экологическая безопасность, экологический риск, экологический ущерб*

В статье представлены основные обоснования необходимости внедрения экологического страхования одновременно с устойчивым развитием. Даны сравнения между страхованием экологических рисков и законодательным регулированием страховой деятельности. Подчеркнуто значение экологического страхования как типа обязательного экологического страхования, а также гарантии его содержания. Для внедрения эффективной системы экологического страхования в Республике Армения были проанализированы экономические стандарты страхования экологических рисков в Российской Федерации и Европейском Союзе.

## ОСОБЕННОСТИ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ

*НАРИНЕ АВАНЕСЯН*

Непризнанные государства - весьма характерный элемент международных отношений в современном мире. После распада СССР в 1991 кроме образовавшихся 15 суверенных государств образовались также несколько так называемых "непризнанных республик". Самопровозглашенные государства появились в Армении, Азербайджане, Грузии и Молдавии (Арцахская Республика, Абхазия, Приднестровская Молдавская Республика и Южная Осетия). Они провозгласили независимость и сумели отстоять ее военным путем, но при этом не получили международного признания или были признаны ограниченным количеством государств-членов ООН. Основой образования таких государств на постсоветском пространстве послужили этнотерриториальные конфликты. Между тем непризнанные республики реально приобрели все необходимые атрибуты государственности - от конституции и кабинетов министров до полиции и вооруженных сил. Там сформированы структуры власти и управления, регулярно проводятся выборы в органы власти<sup>1</sup>. В 2014г. после госпереворота на Украине ЛНР и ДНР также заявили о своей независимости.

Банковская система играет важную роль в функционировании рыночной экономики, а правильно организованная банковская система необходима для развития как экономики, так и государства в целом. Действующая банковская система вышеуказанных республик в 90-е годы образовалась на базе отделений центрального банка или государственных банков бывшего СССР. Активы, пассивы, имущество, клиентская сеть и кадровый персонал последних передавался коммерческим банкам, остававшимися в государственной собственности. В свою очередь банковская система ДНР и ЛНР соответствует централизованной (советской), где государство является единственным собственником банков. В этих республиках монополия государства на формирование банков, система управления – вертикальная, политика единого банка одноуровневая (имеет потенциал к двухуровневой).

Рассмотрим особенности становления банковской системы в самопровозглашенных республиках.

Началом становления новой экономической и **банковской деятельности Арцахской Республики (АР)**, можно считать 90-е годы, когда в политической, а вместе с ней и экономической жизни произошли коренные изменения. По итогам народного референдума 2 сентября 1991 года Совместная сессия Нагорно-Карабахского областного и Шаумяновского районного Советов народных депутатов с участием депутатов Советов всех уровней приняла декларацию о провозглашении Нагорно-Карабахской Республики. В связи с тем, что экономика двух армянских вновь созданных республик (РА и НКР) были тесно взаимосвязаны, в начале 90-х было решено также, что банковская система НКР и РА будут действовать в одной плоскости. На территории Республики Армения и НКР 22 ноября 1993 года в обращение была введена национальная валюта - драм.


Таким образом, банковский сектор Арцаха является частью единой банковской системы Республики Армения и подчиняется всем тем законам и нормативно-правовым актам, которые распространяются на деятельность банков Армении. В Армении на

---

<sup>1</sup> Тренин Д.В. «Предисловие к русскому изданию». Федерализм и конфликт на Кавказе., Москва, 2002.

начало 01.01.2018г. действует 17 коммерческий банк, 8 из которых имеют филиалы в РА (количество филиалов по всей территории Арцаха – 33). Институциональная насыщенность республики банковскими услугами (количество банков на 100 тыс. чел.) за 2017 год составляет 0,4. Отметим, что ЗАО "Арцахбанк"<sup>1</sup> единственный армянский банк, головной офис которого находится на территории Арцахской республики и выполняет некоторые функции центрального банка для НКР, в частности, обслуживает бюджет, правительство и другие госорганы НКР<sup>2</sup>. С 2001 г. в республике действует также единая система карточных платежей Армении – "АрКА", которая является системой для осуществления розничных платежей и обеспечивает операции по платежным карточкам ArCa, а также карточкам международных систем Visa и MasterCard<sup>3</sup>.

В становлении и развитии экономики Арцаха большую роль сыграли коммерческие банки. Они и сегодня, участвуют в социально-экономических программах развития республики. Более наглядно динамику объема кредитования отраслей экономики за последние 10 лет можно проследить на диаграмме, представленной ниже (рис.1).



**Рис1. Структура кредитных вложений за период 2007-2017гг(млн.др)**

Кредитные вложения в республике, согласно отчетам коммерческих банков по состоянию на 1-ое января 2018г., составили 150025.7 млн др., где 58,5% составили кредиты, выданные в иностранной валюте. Привлеченные ресурсы коммерчески банков на 1-ое января 2018 г. составили 100196.7 млн др. (по отношению к предыдущему году увеличились на 34,4%)<sup>4</sup>.

В 2017 году наблюдалась положительная динамика большинства ключевых показателей, характеризующих роль банковского сектора АР в экономике, так отношение кредитных вложений кредитных организаций к ВВП (рис.2) за последние 10 лет возросло от 14,7 % до 55,1 % , отметим, что данный показатель больше чем в других непризнанных республиках (рис.4) и республик Азербайджан (29.5%), Молдова (24.27%) (рис3). Однако в развитых странах этот показатель значительно выше (в пределах 150–300 %). Такое различие в цифрах свидетельствует о недостаточном использовании кредитного потенциала действующих банков на территории НКР в финансировании роста производства, что является фактором развития любой национальной экономики. Отношение суммы вкладов к ВВП за тот же период выросло от 24% до 36.8%, что свидетельствует о росте доходов населения и доверия к банкам в том числе.

<sup>1</sup> на основе Центрального Банка и Сбербанка НКР был создан ЗАО «Арцахбанк» Лицензия ЦБ РА No.75 от 14.08.1996г.

<sup>2</sup> www.artsakhbank.com

<sup>3</sup> ЗАО "Armenian Card" было учреждено в марте 2000 года со стороны 10-и комбанков Армении совместно с Центральным банком, при содействии USAID

<sup>4</sup> Stat-nkr.am




Рис.2 Динамика отношений кредитов кредитных организаций и сумма вкладов к ВВП % в АР (2007-2017гг)




Рис. 3 Внутреннее кредитование финансовым сектором (% от ВВП) республик: Армении, Грузии, Молдове, Украине и Азербайджане.<sup>1</sup>

Самостоятельное развитие **банковская система Республики Абхазия** получила по принятии Верховным Советом Абхазского АССР 28 февраля 1991 г. законов «О Центральном банке Абхазской АССР» и «О банках и банковской деятельности в Абхазской АССР», которая была образована на базе Абхазского республиканского управления Госбанка СССР. Эти законы дали возможность впервые определять потребность в банковских учреждениях с учетом интересов развития экономики Абхазии. На протяжении 27 лет деятельности (с 1991г. по 2018 год включительно) Банком Абхазии было зарегистрировано 24 кредитных организаций. Банковская система Республики Абхазия на начало 2018 года была представлена Национальным банком Республики Абхазия и 10-ю действующими кредитными организациями (включая 9 коммерческих банков и 1 расчетную небанковскую кредитную организацию) с 8 филиалами, из них: 7 – Сбербанк Абхазии.<sup>2</sup> Институциональная насыщенность республики банковскими услугами за 2017 год составляет 0,1. Анализ последних 5 лет показал рост кредитных вложений и суммы вкладов, также наблюдается рост их отношений к ВВП Республики Абхазия (рис. 5).




Рис.5 Динамика отношений кредитов кредитных организаций и сумма вкладов к ВВП % в за 2013-2017гг Республики Абхазия

<sup>1</sup> <http://data.trendeconomy.ru>

<sup>2</sup> <http://nb-ra.org/bankovskaya-sistema-ra.html>

Банк Абхазии 26 сентября 2008 года сообщил о выпуске в обращение памятных монет из драгоценных металлов номиналом 10 и 50 апсаров<sup>1</sup>. В соответствии с законом монеты являются платёжным средством на всей территории Республики Абхазия по номиналу, но не могут использоваться в качестве средства платежа в розничной торговле. Несмотря на появление этой денежной единицы, основным платёжным средством на территории Абхазии де-факто по-прежнему является российский рубль. К концу 2012 года в соответствии с требованиями и рекомендациями международных стандартов в платежной отрасли Банком Абхазии была создана Национальная платежная система, целью которой было построение в республике суверенной инфраструктуры электронных средств платежа с широким кругом участников.

До 1990 г. **Южная Осетия** являлась автономной областью в составе Грузинской ССР, 21 декабря 1991 г. она провозгласила свою независимость от Грузии. Важную роль в становлении и развитии государства во всех сферах: политической, военной, правовой, социально-экономической, финансовой и т.д., было признание в 2008г. государственной независимости РЮО Российской Федерацией. Национальный банк Республики Южная Осетия (Банк Республики) был учрежден 7 мая 1992г. Постановлением Верховного Совета Республики Южная Осетия на базе Юго-Осетинского областного управления Госбанка СССР. 25 ноября 1995года Верховным Советом Республики Южная Осетия был принят Закон «О Национальном банке Республики Южная Осетия», согласно которому были определены функции Банка Республики в области развития и укрепления банковской системы Южной Осетии, организации денежного обращения, денежно-кредитного регулирования и внешнеэкономической деятельности.<sup>2</sup>

С целью совершенствования денежного обращения в РЮО и удовлетворения населения в средствах сбережения и защиты экономических интересов граждан 19 июля 2013 года принимается Закон Республики Южная Осетия «О введении в обращение на территории Республики Южная Осетия памятных монет из драгоценных и недрагоценных металлов и инвестиционных монет из драгоценных металлов». Банковская система Республики Южная Осетия на начало 2018 года была представлена Национальным банком Республики Южная Осетия и тремя банками: ОАО «Акционерный Сбербанк», ООО «Международный Расчетный Банк», ООО «Республиканский Банк Развития».

Становление банковской системы **Приднестровской Молдавской Республики** (ПМР) происходило в условиях непризнанности, которая создавала препятствия для взаимодействия с финансовыми учреждениями стран дальнего и ближнего зарубежья. Банковская система Приднестровья имеет двухуровневое построение. **Приднестровский республиканский банк (ПРБ)** - с 22 декабря 1992 года является Центральным банком Приднестровской Молдавской Республики (ПМР).<sup>3</sup> 1994 году в ПМР были введены в обращение новые денежные знаки - купоны ПМР. Необходимо отметить, что при посредничестве государств-гарантов и ОБСЕ закреплён статус Приднестровья, как самостоятельного субъекта международно-правовых отношений в экономической, научно-технической и культурной сферах. В результате Приднестровский республиканский банк получил возможность активно действовать на международной арене как Центральный банк Приднестровья. Развитие банковской системы ПМР происходило быстрыми темпами. В ходе реформирования общее

<sup>1</sup> денежная единица Абхазии, введённая Законом от 22 апреля 2008 № 2012-с-IV «О введении в обращении на территории Республики Абхазия памятных инвестиционных монет из драгоценных металлов»

<sup>2</sup> [https://www.bank-ossetia.org/bank\\_today/history.php](https://www.bank-ossetia.org/bank_today/history.php)

<sup>3</sup> <http://www.cbpmr.net>

количество банков постепенно сокращалось путём слияний, ликвидаций или банкротств проблемных и неустойчивых банков. Так, если в 1995 году на территории ПМР действовало 15 коммерческих банков, то к началу 2018 года банковская система Приднестровья была представлена тремя действующими коммерческими банками, функционирующими в форме акционерных обществ на основании генеральных лицензий, и четырьмя кредитными организациями. Сеть банков включает 15 филиалов (отделений коммерческих банков – 207). Коэффициент институциональной насыщенности республики банковскими учреждениями за 2017 год составляет 0,6. В разрезе городов и районов наибольшая концентрация филиалов и отделений зафиксирована в столице городе Тирасполь. По состоянию на 1 января 2018 года на территории республики действовали 4 платёжные карточные системы. Наиболее распространёнными среди них являются ПС «Радуга» (67,0% от общего числа карт в обращении) и «Национальная платёжная система (НПС)» (28,8% соответственно).

Итак, банковские системы ПМР, Республик Южная Осетия и Абхазия имеют двухуровневую систему во главе ЦБ, а банковский сектор Арцаха является частью банковской системы Армении, благодаря чему, по сравнению с ними, более развита. Из самопровозглашенных республик только ПМР имеет собственную валюту, каждая из них имеет национальную платёжную систему.

Таким образом, можно сделать вывод: выше представленные республики имеют разную степень признанности другими государствами, имеют разный уровень экономического потенциала и финансовых систем, у всех единая проблема – это отсутствие возможностей получать финансовые средства для развития банковской деятельности из-за пределов республик. Однако, несмотря на сложные геополитические условия, банковская система непризнанных и частично признанных республик развивается, о чём свидетельствует положительная динамика показателей банковского сектора.

**Нарине Аванесян**

## **ОСОБЕННОСТИ СТАНОВЛЕНИЯ И РАЗВИТИЯ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВ НА ПОСТСОВЕТСКОМ ПРОСТРАНСТВЕ**

**Ключевые слова:** *банковский сектор, непризнанные республики, кредитные вложения, отношение кредитных вложений к ВВП, отношение суммы вкладов к ВВП*

В статье представлены особенности становления банковской системы в Республике Арцах, Абхазии, Южной Осетии и ПМР. Республики имеют разную степень признанности другими государствами, имеют разный уровень экономического потенциала и финансовых систем, но у всех единая проблема – это отсутствие возможностей получать финансовые средства для развития банковской деятельности из-за пределов. Однако, несмотря на сложные геополитические условия, банковская система в непризнанных и частично признанных республиках развивается, о чём свидетельствует положительная динамика показателей банковского сектора.



**Նարինե Ավանեսյան**  
**ԶՃԱՆԱԶԿԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ**  
**ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**  
**ՅԵՏԵՈՐՅՐԴԱՅԻՆ ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆՈՒՄ**

*Բանալի բառեր՝ բանկային հատված, չճանաչված և մասնակի ճանաչված պետություններ, վարկային ներդրումներ, վարկային ներդրումների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ*

Հոդվածում ներկայացված են Արցախի Հանրապետությունում, Աբխազիայում և Հարավային Օսետիայում բանկային համակարգի կայացման առանձնահատկությունները: Պետություններն ունեն այլ պետությունների կողմից ճանաչվածության տարբեր աստիճան, տնտեսական հնարավորությունների և ֆինանսական համակարգերի տարբեր մակարդակ, բոլորի մոտ առկա է մեկ խնդիր՝ բանկային գործունեության զարգացման նպատակով արտասահմանից ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների բացակայություն: Զնայած բարդ աշխարհաբաղաբալական պայմաններին, չճանաչված և մասնակի ճանաչված պետությունների բանկային համակարգերը զարգանում են, ինչի մասին է վկայում բանկային հատվածի ցուցանիշների դրական դինամիկան:

**Narine Avanesyan**

**THE FEATURES OF THE FORMATION AND DEVELOPMENT OF THE  
BANKING SYSTEM OF UNRECOGNIZED STATES IN THE POST-SOVIET SPACE**

**Key words:** *banking sector, unrecognized and partially recognized states, credit investment, credit investment ratio to GDP, deposits ratio to GDP*

The article describes the specifications of the development of banking system in the Republic of Artsakh, Abkhazia and South Ossetia. The states mentioned have different degrees of recognition by different states, different levels of economic opportunities and financial systems, still each state has one problem: absence of opportunities for attracting financial resources from abroad for the development of banking activity. Despite the complicated geopolitical conditions, the banking systems of unrecognized and partially recognized states are developing, which is evidenced by the positive dynamics of the banking sector indicators.

## ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳՈՄ

### ՍՈՒՍԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՆԻՆԱ ԲԱԼԱՅԱՆ

Թվային տնտեսությունը թվային տեխնոլոգիաների վրա հիմնված տնտեսությունն է, որտեղ որպես արտադրության առանցքային գործոն հանդես են գալիս տեղեկատվական տեխնոլոգիաները: Այն ձևը, որով մարդիկ հաղորդակցվում ու հարաբերվում են միմյանց, տեղեկատվության և աշխարհի հետ, փոխվում է տեխնոլոգիայի համադրման արդյունքում, իսկ տեխնոլոգիան միայն գործիք է, որն օգնում է մեզ լուծել բազում բարդ խնդիրներ, իսկ մեծածավալ տվյալները հնարավորություն են տալիս նաև կայացնել որոշումներ<sup>1</sup>: Սա չորրորդ ինդուստրիալ հեղափոխությունն է, որն արագացնում է տնտեսության առաջընթացը՝ անտեսելով ժամանակն ու տարածությունը: Չարգացող թվային տնտեսությունը մեծ պոտենցիալ ունի ստեղծելու գիտական հետազոտություններ և նվաճումներ, նոր աշխատատեղերի հնարավորություն, տնտեսական աճ և նպաստելու մարդկանց կյանքի որակի բարելավմանը: Այդ փոփոխությունները զգալի են կյանքի ամենատարբեր ոլորտներում: Համաշխարհային մակարդակով աստիճանաբար առավել մեծ դերակատարում է ստանձնում տեղեկատվությունը՝ ներկայիս ամենաարժեքավոր տնտեսական ռեսուրսը, որն օգնում է անհատներին և ընկերություններին ստեղծել հարստություն գիտելիքով և ցանցային մարդու ինտելեկտով, այսինքն՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կամ թվային տնտեսության հետ մեկտեղ առաջնային տեղում է նաև գիտելիքամետ հասարակությունը, քանի որ այն, ինչ այսօր կոչվում է գիտություն, վաղը դառնում է տեխնիկա<sup>2</sup>: Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը նորարարական գործողություն է այն իմաստով, որ Էսպես փոխում է կազմակերպություններում իրականացվող տարաբնույթ գործունեության ողջ բովանդակությունը: Այսինքն՝ ՏՀՏ ոլորտը հանդիսանում է այն ուղղությունը, որը կարող է Էսկան տեղաշարժեր առաջ բերել և՛ տնտեսությունում, և՛ բիզնես միջավայրում, և՛ մշակույթում:

BCG ընկերության տվյալներով՝ ՏՏ մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ զարգացած երկրներում կազմում է միջինում 5.5%, իսկ զարգացող երկրներում՝ 4.9% (գծ. 1): ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը տնտեսության ամենաարագ զարգացող ճյուղերից է: Եվ սա պատահական չէ, քանի որ Հայաստանն ունի համապատասխան ինտելեկտուալ ռեսուրսներ՝ ՏՏ ոլորտը տնտեսության առաջատար ուղղություններից մեկը դարձնելու համար: Այսօր ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը համարվում է գերակա ճյուղ՝ 2017թ-ին ՏՏ ոլորտը ավելի քան 20% աճ է գրանցել, շրջանառությունը կազմել է ավելի քան 612.7 մլն ԱՄՆ դոլար, ակտիվ գործող ընկերությունների թվաքանակը հասել է շուրջ 650-ի (իսկ նորաստեղծների հետ միասին՝ 800), որոնց գրեթե 80%-ը տեղակայված է Երևանում, իսկ 69%-ը կազմում են տեղական ընկերությունները, ընդ որում, ռեկորդային ցուցանիշ արձանագրվել է 2017թ.-ին. ակտիվ գործող ընկերությունների քանակն ավելացել է 110-ով<sup>3</sup>: Միայն 2015-2017 թվականներին ավելի քան 600 նոր ընկերություն է հիմնադրվել: Նույն ժամանակահատվածում ՏՀՏ ոլորտի աշխատատեղերի թիվն աճել է մոտ 2700-ով:

Այնուամենայնիվ, մարզային զարգացման ծրագրերի շրջանակներում կրթական և գործարար ենթակառուցվածքների զարգացման շնորհիվ գործող


<sup>1</sup> <https://acoya.org//> Armenian Center of Young Analysts

<sup>2</sup> <https://168.am/2017/10/25/861021.html>

<sup>3</sup> <http://www.panarmenian.net/arm/details/208351/>

ընկերությունների թիվը տարեցտարի աճում է 33 այլ մարզերում, հատկապես Շիրակի և Լոռու մարզերում:

**SS մասնաբաժինը ՀՆԱ կազմում զարգացող երկրներում  
2017թ., %**



*Գծապատկեր 1*

Վերջին տարում ոլորտում գրանցված ամենակարևոր ձեռքբերումներից են եղել Գյումրիում և Վանաձորում տեխնոլոգիական կենտրոնների, Նաև Երևանում ISTC ինովացիոն Նոր կենտրոնի բացումը<sup>1</sup>: Նախատեսվում է Նաև Կապանում բացել տեխնոլոգիական կենտրոն: 2016-17 թվականների ընթացքում շարունակվել են Նաև ինտերնետ ծառայությունների ծածկույթի հետ կապված դրական միտումները, ինչի արդյունքում ինտերնետ կապից օգտվողների թիվը անցել է 2.2 մլն-ից՝ ապահովելով ծածկույթի 70% ցուցանիշ:

SS ոլորտի մրցակցային կարևոր առավելություններից մեկը ոլորտի աշխատուժն է. 2017 թվականին ոլորտում ներգրավված է եղել 15.350 մասնագետ՝ ընդհանուր զբաղվածների 1.9%-ը: Ներդրողների համար գրավիչ է Նաև մեր մասնագետների բարձր արտադրողականությունը և աշխատուժի մատչելիությունը: Հաշվարկվել է, որ այս մրցունակ մասնագետները տարեկան մինչև 49,700 ԱՄՆ դոլարի արտադրողականություն են ապահովում իրենց ընկերությունների համար<sup>2</sup>: Ինչպես յուրաքանչյուր ոլորտում, այնպես էլ SS-ում, զարգացման համար հատկանշական դեր են խաղում ներդրումները: Անդամ երկրների ինտեգրումը կարող է փոխշահավետ լինել և՛ ընկերությունների, և՛ պետության համար: Ընդ որում, հարկ է ընդգծել SS ոլորտում Հայաստանի՝ տարածաշրջանի մյուս երկրների նկատմամբ ունեցած այնպիսի լուրջ մրցակցային առավելությունների մասին, ինչպիսիք են՝

- տեղեկատվության, ճարտարագիտության, ֆիզիկայի և մաթեմատիկայի բնագավառում միջազգային չափանիշներին համապատասխան աշխատանքների իրականացման կարողություն,
- համագործակցության մեծ փորձ,
- տեխնիկական հմտություններով և օտար լեզվի իմացությամբ բարձրակարգ մասնագետների առկայություն,
- գործառնական ցածր ծախսեր և Էժան աշխատուժ, ոլորտի կայուն զարգացում,
- ԲՈՒՀ-ական ծրագրեր SS ոլորտի շրջանակներում,
- ուժեղ և բարգավաճող Սփյուռքի ներկայություն Եվրոպայում և Ամերիկայում,

<sup>1</sup> Հայաստանում տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտի հետազոտություն, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ, ք. Երևան, 2018թ., էջ 16


<sup>2</sup> <http://b4b.am/archives/news/%D5%B0%AF>

<sup>3</sup> <http://armef.com/hy/news/meknabanutyun/hayastani-tt-volorti-masin-ashxarhy-giti/>

- միջազգային չափանիշներին համապատասխանող իրավական դաշտ:

Ներկայումս ՀՀ համար հատկապես վճռորոշ է ԵԱՏՄ անդամ երկրների հետ համատեղ ստորագրված համաձայնագիրը միասնական թվային օրակարգի վերաբերյալ, որն արդյունավետ մեխանիզմ է միասնական թվային տարածքի ձևավորման և գործարկման առումով և լրացուցիչ հնարավորություն է ՀՀ թվային տնտեսության զարգացման հարցում: Այդ նպատակով 2017թ-ին ստեղծվել է «Թվային Հայաստան» հիմնադրամը, որի նպատակն է կառավարման բոլոր ոլորտներում ժամանակակից տեխնոլոգիական հենքի վրա ձևավորել միասնական թվայնացված միջավայր, ապագայամետ և ստեղծարար աշխատուժ<sup>1</sup>: Այս համատեքստում կարևոր է նաև համաձայնություն ձեռք բերել ԵԱՏՄ երկրների թվային տնտեսական ստանդարտների և Չինաստանի միջև, թվային հարթակների վրա ապրանքների, ծառայությունների և կապիտալի տարանցիկ իրացման համար. հատկապես հիմա, երբ չինական ընկերությունները բավականին հետաքրքրված են ՀՀ ՏՏ ոլորտով:

**ՏՏ ոլորտի արտահանման ուղղությունները 2017թ.-**



**Գծապատկեր 2**


Հարկ է նշել, որ ՀՀ-ի անդամակցությունը ԵԱՏՄ-ին խթան է հանդիսացել նաև արտահանման ուղղությունների բաշխվածության փոփոխության համար, մասնավորապես, Հայաստանն ընդլայնել է ասիական երկրների հետ համագործակցության շրջանակը և արտահանման աշխարհագրությունը դարձել է ավելի համասեռ: Արտահանումների առավելագույն մասը՝ մոտ 36,4%-ը, ուղղվում է ԱՄՆ և Կանադա, 28,4%-ը՝ Եվրոպա, իսկ 15,4%-ը՝ Ռուսաստան ու ԱՊՀ երկրներ (գծ. 2): Այլ երկրների շարքում հայկական ծառայությունների նկատմամբ ամենամեծ պահանջարկը ներկայացնում են ասիական երկրները և Ավստրալիան:

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների հարահոսում հատկապես չափազանց կարևոր է ձևավորել այնպիսի այլընտրանք, որն ամբողջությամբ արտացոլի Արցախի Հանրապետության իրական նկարագիրն ու նրա առջև կանգնած մարտահրավերները: Չունենալով բնական պաշարներ, գազ և այլն՝ ներկայումս մեր ամենամեծ ներուժը մարդկային ռեսուրսն է, և ՏՏ-ն այն ոլորտն է, որտեղ ամենարդյունավետ ձևով այդ պոտենցիալը կարող է իրացվել: Արցախում ՏՏ ոլորտի մեծությունը դեռևս փոքր է ՀՆԱ կազմում՝ մոտ 0.1%, տարեկան շրջանառությունը կազմում է մոտ 241 մլն դրամ, ոլորտում ընդգրկված է 10 կազմակերպություն, իսկ ներգրավված մասնագետները կազմում են ընդհանուր զբաղվածների 1.05%-ը (գծ. 3-6):


<sup>1</sup> Հայաստանի թվային փոխակերպման օրակարգ 2018-2030թթ. շրջանակային փաստաթուղթ, ք. Երևան, 2018թ., էջ 39

Գծապատկեր 3

Արցախի ՏՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ կազմում 2012-2017 թթ., %




ՏՏ և հեռահաղորդակցության ոլորտների շրջանառությունը Արցախում, հազ. դրամ




Գծապատկեր 4

ՏՀՏ ոլորտում զբաղվածների թիվն Արցախում, մարդ



Գծապատկեր 5

ՏՀՏ ոլորտի ընկերությունների թիվն Արցախում, հատ



Գծապատկեր 6

Իհարկե, թվարկված ցուցանիշներն այդքան էլ տպավորիչ չեն, այնուամենայնիվ, Արցախն ունի լուրջ պոտենցիալ և հեռանկարներ ոլորտում առաջընթաց ապահովելու հարցում, քանի որ առկա են համապատասխան ինտելեկտուալ ռեսուրսներ, որոնց ռացիոնալ կիրառումը հնարավորություն կտա ՏՀՏ ոլորտին ստանձնել հզոր դերակատարում տնտեսության զարգացման գործում:

Նման օբյեկտիվ անհրաժեշտությունից ելնելով է Արցախում բացվել «ՄեդիաՏՈՆ» գործակալությունը՝ նոր հայացքներով ու խոստումնալից հեռանկարներով: «ՄեդիաՏՈՆ» գործակալության հիմնական ուղղություններն են՝ արցախյան տեղեկատվական դաշտի կայացումը և Արցախի ներկայացումը արտաքին հարթակներում:

Իր նպատակները գործակալությունն իրագործում է տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով՝ կիրառելով համացանցային և հեռուստատեսային պլատֆորմներ: Գործակալության մեջ առանձնակի կարևորություն ունի ինքնատիպ ինտերնետ-հեռուստատեսությունը՝ «Արցախթայմս» ինտերնետային կայքով, որի նպատակն է համաշխարհային մեդիաքարտեզում Արցախի տեղն ու դերը ամրագրելը, Արցախի ներքին կյանքն ու նրան առնչվող իրադարձությունները լուսաբանելը, տեղեկատվական դաշտի նոր միավոր ստեղծելը: Արցախում ՏՏ ոլորտի զարգացմանն ուղղված նպատակային քայլերից է նաև տարածաշրջանային նշանակության «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի ստեղծումը, որը նախատեսում է կրթական նոր մոդելներ, մոտեցումներ, դասավանդման նոր մեթոդաբանություն ու գաղափարախոսություն, ազգային հենքի վրա կրթական բարձրագույն ձեռքբերումների փորձարկման ու մշակման նոր հիմքեր՝ ի նպաստ գիտելիքահենք թվային տնտեսության մրցունակության բարձրացման:

Հատկապես վճռորոշ դեր ունի «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի» հիմնադրումը, որն ապահովում է ՏՏ ոլորտում բիզնեսի զարգացման համար բարենպաստ պայմաններ և փորձում նպաստել ԱՀ տնտեսության զարգացմանն ու բարգավաճմանը՝ սատարելով սկսնակ տեխնոլոգիական ընկերություններին: Այն նպատակ ունի տարածաշրջանում ապահովել լավագույն պայմաններ բարձր և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում պահանջված կարգերի պատրաստման ու վերապատրաստման ծրագրերի իրականացման համար: Կենտրոնում արդեն իսկ իրենց գործունեությունն են ծավալում Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ, Լոկատոր, Թեքնոլոջի ընդ Սայն Դայնամիքս, Վիքիլաբ և Մեդիատոն կազմակերպությունները: Հատկանշական են «Սինոփսիս Արմենիա», «Ինստիդեյթ Սիսթեմս» և «Սիներջի Սիսթեմս» արցախյան ընկերությունների հիմնադրման օրինակները, ինչպես նաև Ստեփանակերտում բացված «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնը: Վերոնշյալներից «Սիներջի Ինթերնեշնլ Սիսթեմզ»-ի Ստեփանակերտի մասնաճյուղը մասնակցել է այնպիսի նախագծերի մշակման, որոնց պատվիրատուներն էին Իրաքի, Մալդիվների, Եմենի, Լեսոտոյի, Պակիստանի, Տանզանիայի, Տաջիկստանի, Թաիլանդի, Բանգլադեշի և մի շարք այլ պետությունների կառավարությունները:

Այսօր հայկական ՏՏ ընկերությունները կարող են առաջարկել միջազգային բարձր ստանդարտներին համապատասխանող որակյալ արտադրանք ու ծառայություններ, սակայն պետք է մոռանալ, որ ոլորտում առկա են խնդիրներ ՏՏ ոլորտի մասնագետներ պատրաստելու և արտաքին շուկաներ դուրս գալու հարցում, իսկ խոչընդոտող հիմնական գործոններն են միջազգային գործարար հանրության կողմից հայկական ՏՏ ոլորտի մասին ոչ լիարժեք իրազեկվածությունը, հիմնական ՏՏ շուկաներից հեռու գտնվելը, ինչպես նաև լեզվական արգելքը: Ուստի կարևոր է կառավարության կողմից խրախուսման քաղաքականությունը և աջակցման ծրագրերի իրականացումը:

Այսպիսով, լինելով աղքատ բնական ռեսուրսներով՝ մենք դատապարտված ենք մեր տնտեսական ապագան կապել հենց այս ոլորտի հետ. չէ՞ որ թվայնացումը չի հարցնում, թե որքանով ենք մենք պատրաստ գլոբալ փոփոխություններին. այն ուղղակի փոխում է աշխարհը՝ դրանով իսկ տալով ավտոմատացված նոր իրականության մեկնարկը և ազդարարելով թվայնացված հնարավորությունների սկիզբը:

**Սուսան Ավետիսյան, Նինա Բալայան**  
**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՈՎԱՑԻՈՆ**  
**ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՈՐ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

**Բանալի բառեր՝** *թվային տնտեսություն, թվային օրակարգ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, տեխնոլոգիական առաջընթաց*

Հոդվածում դիտարկվում է թվայնացման դերն ու ազդեցությունը տնտեսության կայուն զարգացման հարցում, վեր է լուծվում թվային տնտեսության և ինովացիոն համակարգերի զարգացման նոր օրակարգը և տեխնոլոգիական բուռն վերափոխումների ժամանակաշրջանում անդրադարձ է կատարվում Արցախի Հանրապետությանը: Հոդվածում ուսումնասիրվել են ՏՀՏ ոլորտի մասնաբաժինը ՀՆԱ կազմում, ՀՀ և ԱՀ ՏՀՏ ոլորտի մրցակցային առավելությունները, արտահանման ուղղությունները, ոլորտում ձեռնարկված առաջադեմ քայլերն ու թվայնացման զարգացմանը խոչընդոտող գործոնները, քննարկվել է Արցախում ոլորտի զարգացման համար առկա պոտենցիալն ու նախադրյալները:

**Susan Avetisyan, Nina Balayan**

**THE REPUBLIC OF ARTSAKH ON A NEW AGENDA FOR THE DEVELOPMENT**  
**OF DIGITAL ECONOMY AND INNOVATION SYSTEMS**

**Key words:** *digital economy, digital agenda, information technology, technological progress*

The article considers the role and impact of digitalization on sustainable economic development, the new agenda for the development of digital economy and innovation systems is being resolved and the Republic of Artsakh is being referred to in the context of the period of rapid technological transformation. The share of ICT sector in GDP, competitive advantages of the Armenian and Artsakhian IT fields, export directions, advanced steps taken in the field and the factors hindering the development of digitalization and the potential and prerequisites for the development of this field in Artsakh were discussed in the given article.

**Сусан Аветисян, Нина Балаян**

**РЕСПУБЛИКА АРЦАХ В НОВОЙ ПОВЕСТКЕ РАЗВИТИЯ ЦИФРОВОЙ**  
**ЭКОНОМИКИ И ИННОВАЦИОННЫХ СИСТЕМ**

**Ключевые слова:** *цифровая экономика, цифровая повестка, информационные технологии, технологический прогресс*

В статье рассматривается роль и влияние оцифровки на устойчивое экономическое развитие, анализируется новая повестка развития цифровой экономики и инновационных систем. Республика Арцах упоминается в контексте периода быстрой технологической трансформации. Рассмотрены доля сектора ИКТ в ВВП, конкурентные преимущества армянских и арцахских ИТ-областей, направления экспорта, прогрессивные шаги на местах и факторы, препятствующие развитию цифровой обработки, а также потенциал и предпосылки для развития данной сферы в Арцахе.

## ВОЗМОЖНОСТЬ СОЗДАНИЯ ВАЛЮТНОГО СОЮЗА НА ТЕРРИТОРИИ СТРАН ЕАЭС

*АЛЬБИНА СИБИРСКАЯ*

Для создания валютного союза группы стран является необходимым наличие ряда факторов, действующих при этом одновременно. Исследование этих факторов первым начал Р. Манделл, за теорию оптимальных валютных зон который получил Нобелевскую премию. Последователи Р. Манделла дополнили ТОВЗ другими факторами: конвергенция инфляции (Дж. Флеминг), безработица (Р. Огродник), степень открытости экономики (Р. МакКинон) и т.д.

Таким образом, кроме критериев ТОВЗ, существует необходимость изучения и других критериев конвергенции для создания монитарного союза.

### *Сходство темпов инфляции.*

Рассматривая опыт уже функционирующего экономического пространства трех стран ЕАЭС, критерии схождения темпов инфляции прописаны в Договоре: годовая инфляция не должна превышать 5 % наименьшего показателя. Например, в Европейском Союзе критерием конвергенции прописан другой уровень колебаний – не более 1,5 % среднего показателя инфляции трех государств – членов, цены в которых отличаются наибольшей стабильностью<sup>1</sup>.

Согласно критериям ТОВЗ и условиям конвергенции, прописанных в Договоре, колебания между уровнями инфляции превышают допустимые и находятся в пределах между 3,9 % (минимальное значение в 2010 г.) и 100,7 % (максимальное значение в 2011 г.). Уровень инфляции анализируемых стран нельзя назвать стабильным.

Относительной стабильностью отличается уровень инфляции в Армении и в Казахстане.

В Кыргызской Республике замедление темпов инфляции обусловлено снижением цен на продовольственную продукцию, в частности на хлебобулочные изделия и крупы.

В Беларуси с 2005 по 2011 год был достигнут и поддерживался низкий уровень инфляции благодаря «курсового якоря», в качестве которого использовался американский доллар, а затем и российский рубль. Сдерживание роста инфляции осуществлялось инструментами монетарной политики: замедление роста наличной денежной массы и увеличения депозитов в белорусских рублях физических лиц. Уровень инфляции в Республики Беларусь в 2008 – 2010 гг. практически достиг уровня инфляции стран – участниц ЕАЭС.

Инфляция для Казахстана на начальном периоде развития рыночной экономики, как и у остальных стран, была серьезной проблемой. В 1990х года она превышала 2000% в год. Однако правительству Казахстана удалось стабилизировать показатели инфляции вследствие жесткой денежно-кредитной политики и снизить уровень инфляции в среднем до 7-8 %.

Увеличению в 2011 году инфляции на 0,5 % послужила так называемая «гречневая лихорадка», которая повлекла за собой увеличение цен и на остальные продукты питания.

Экономика Российской Федерации в 2008 году пострадала от мирового валютного кризиса. Инфляция стала снижаться только ко второй половине 2011 года. Положительную роль в снижении темпов роста инфляции сыграли принятые Правительством Российской Федерации в конце 2010 – начале 2011 года меры по

<sup>1</sup> Ingram, J The case for European monetary integration // Princeton Essays in international Finance. 1973. № 98. P. 56-78.



насыщению продовольственных рынков, в том числе по стимулированию импорта, а также стабильность курса рубля и снижением мировых цен на зерно и большинство видов продовольствия с середины первого полугодия 2011 года.



**Рисунок 1 Колебания между уровнями инфляции стран ЕАЭС за 2008-2016 гг., %**

Примечание – Составлено автором

Коридор колебаний уровней инфляции составляет более 5 %. Наибольшая амплитуда колебаний наблюдается в Республике Беларусь. Если рассмотреть страны ЕАЭС без Республики Беларусь, как страны с максимальной амплитудой колебаний, то все равно коридор колебаний будет превышать 5 %. Только к 2012 он снизился до 2 %, а к 2013 – до 1,7 %.

**Ставка рефинансирования.**

Значимым инструментом валютной интеграции является денежно-кредитная политика. Для создания успешно функционирующего валютного союза необходима унификация инструментов денежно-кредитной и фискальной политики стран-участниц. Одним их инструментов денежно-кредитной политики является ставка рефинансирования.



**Рисунок 2. Ставки рефинансирования стран ЕАЭС на 1 января за 2005-2014 гг., %**

Примечание – Составлено автором

Низкая ставка рефинансирования дает возможно кредитовая субъектов хозяйствования: кредиты более привлекательны и доступны.

В Республике Беларусь ставка рефинансирования значительно выше, чем в остальных странах ЕАЭС. В случае унификации ставок рефинансирования, резкое снижение ставки приведет к негативным последствиям: увеличение привлекательности кредитов провоцирует увеличение спроса или предложения и нарушение макроэкономического равновесия. Унификация ставки рефинансирования для Республики Беларусь возможна только постепенная и в совокупности с другими инструментами денежно-кредитной политики.

Кроме того, ставка рефинансирования отличается крайней нестабильностью в Республике Беларусь и Кыргызской Республики, т.к. она напрямую зависит от уровня инфляции. В этих странах за анализируемый период наблюдаются скачки роста цен (об этом свидетельствует проведенный анализ уровня инфляции).

**Валютная структура внешнеэкономических операций стран ЕАЭС.**

По статистическим данным, в расчетах между Республикой Беларусь и Российской Федерацией российский рубль используется 56% расчетов, между Российской Федерацией и Республикой Казахстан – 59% расчетов, а между Республикой Беларусь и Республикой Казахстан – максимум 32% расчетов.

В таблице 1 приведены данные о валютной структуре платежей между государствами ЕАЭС.

Таблица 1 – Валютная структура платежей во внешнеэкономической деятельности между странами ЕАЭС<sup>1</sup>, %

	Годы				
	2013	2014	2015	2016	2017
В российских рублях	8	61,4	67	68,0	74,1
В долларах США	3	30,3	26	25,0	19,3
В евро		6,8	5,2	5,1	5,2
В других валютах		1,1	1,1	1,9	1,4

Примечание – Составлено автором

Во внутренних расчетах преобладает российский рубль, который на протяжении анализируемого периода укрепляет свои позиции.

Использование российского рубля во внутрисоюзных расчетах вместо доллара США обусловлено желанием избежать валютных рисков и отсутствием механизмов хеджирования валютных рисков. Что касается торговли стран ЕАЭС с третьими странами, то там наблюдается другая ситуация (таблица 2).

Преобладание доллара в расчетах с третьими странами особенно заметно в Казахстане и России, которые являются поставщиками сырьевых ресурсов на мировые рынки, мировые цены на которые традиционно формируются в долларах США.

Таблица 2 – Валютная структура внешней торговли стран ЕАЭС с третьими странами за 2016 год<sup>1</sup>, %

<sup>1</sup> Показатель финансового рынка. – Режим доступа: <http://data.worldbank.org/indicator/CM.MKT.LCAP.GD.ZS/countries>.

Валюта	Респу блика Беларусь		Респу блика Казахстан		Кыргыз ская Республика		Российская Федерация	
	эк спорт	и мпорт	эк спорт	и мпорт	эк спорт	и мпорт	экспорт	и мпорт
Росс. руб.	0,0	8,0	3,0	7,0	0,0	5,0	-	-
США Долл.	5,0	4,0	9,0	5,0	4,0	8,0	1,0	38,0
Евро	1,0	7,0	,0	4,0	,0	,0	4,0	31,0
Нац. вал.	,0	,5	,0	,0	1	1	4,0	29,0
Др. валюты	,0	,5	,0	,0	2,0	2,0	,0	2,0

Примечание – Составлено автором

Таким образом, можно отметить что, ввиду высокой доли доллара США в расчетах с третьими странами, целесообразно внутри сообщества минимизировать долю расчета в резервной валюте (в данном случае, в долларах США).

**Закключение.** Исходя из проведенного анализа можно сделать следующие выводы о перспективах дальнейших интеграционных процессов стран ЕАЭС. Из всех анализируемых показателей на возможность и успешность создания монетарного союза указывают только показатели открытости экономики. В самом деле, наибольший удельный вес внешнеэкономической деятельности приходится на страны сообщества, в частности, на Российскую Федерацию и Республику Казахстан. Отчасти причиной этому слабая диверсификация экономики после распада СССР. По остальным экономическим и финансовым показателям, создание монетарного союза окажет неблагоприятные последствия для экономик стран. различные темпы инфляции не способствуют выравниванию цен, как того требует единая денежно-кредитная политика; дефицит государственного бюджета в некоторых странах превышает максимально допустимое значение, а государственный долг в ряде стран либо превышает, либо близок к максимально допустимому значению.

Валютный союз как новый уровень интеграционных процессов является важным и необходимым шагом для стран ЕАЭС, но не представляется возможным на сегодняшний день. Для успешного функционирования валютного союза необходимо выравнивание экономических показателей, как того требует теория оптимальных валютных зон и условия конвергенции, прописанными в Договоре.

<sup>1</sup> Социально-экономическое положение государств – членов Таможенного союза и Единого экономического пространства: статистический бюллетень; Евразийская экономическая комиссия // Москва, 2016, 148 с.

**Альбина Сибирская**  
**ВОЗМОЖНОСТЬ СОЗДАНИЯ ВАЛЮТНОГО СОЮЗА**  
**НА ТЕРРИТОРИИ СТРАН ЕАЭС**

**Ключевые слова:** *ЕАЭС, ТОВЗ, валютная интеграция, монетарный союз, единая валюта, валютный союз*

Статья посвящена проблемам валютной интеграции стран ЕАЭС. Рассматриваются основные показатели конвергенции стран, описанные в теории валютных зон и в нормативных документах, такие как движение капитала, уровень инфляции, открытость экономики, ставка рефинансирования, государственный бюджет и государственный долг. В заключении сделаны выводы о готовности стран к валютной интеграции. В целях дальнейшей интеграции и создания валютного союза необходима полная гармонизация всех сфер экономики. В первую очередь целесообразно обратить внимание на показатели конвергенции, прописанные в Договоре о создании ЕАЭС.

**Ալբինա Սիբիրսկայա**  
**ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ (ԵԱՏՄ) ՏԱՐԱԾԵՈՒՄ ԱՐԺՈՒՅԹԱՅԻՆ**  
**ՍՈՒԹՅՈՒՆ ԱՏԵՂԾԵԼՈՒ ԶԱՄԱՐ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ**

**Բանալի բառեր՝** *ԵԱՏՄ, ԱԳՏ արժույթային ինտեգրում, արժույթային միություն, մասնական արժույթ, արժույթային միություն*

Հոդվածը նվիրված է ԵԱՏՄ անդամ երկրների դրամական ինտեգրման ինդիկատորներին: Դիտարկվում են երկրների մերձեցման հիմնական ցուցանիշները, արժույթային գոտիների տեսության նկարագրությունը և փաստաթղթային կարգավորումը, ինչպիսիք են կապիտալի շարժը, գնաճի մակարդակը, տնտեսության բաց լինելը, վերաֆինանսավորման տոկոսադրույթը, պետական բյուջեն և պետական պարտքը: Վերջում եզրահանգումներ են արվել երկրների արժույթային ինտեգրման պատրաստակամության վերաբերյալ: Հետագա ինտեգրման և դրամական միության ստեղծման համար անհրաժեշտ է տնտեսության բոլոր բնագավառների լիարժեք ներդաշնակեցում: Առաջնահերթ պետք է նպատակային ուշադրություն դարձնել մերձեցման ցուցանիշներին, որոնք ամրագրված են ԵԱՏՄ պայամանագրով:

**Albina Sibirskaya**  
**THE POSSIBILITY OF CREATING A MONETARY UNION**  
**IN THE TERRITORY OF THE EAEU**

**Keywords:** *EEU, GOODS, currency integration, monetary Union, single currency, monetary Union*

EAEU countries move towards economic integration, removing all barriers to movement of goods, services, labor and capital. Liberalization and harmonization of legislation in the financial sector, as well as the degree of development of financial markets are among the main conditions for the construction of a full-fledged economic union.

The article is devoted to problems of monetary integration of the EEU countries. It examines the main indicators of convergence of countries, as described in the theory of currency areas in normative documents, such as the movement of capital, inflation, openness of the economy, the refinancing rate, state budget and public debt. At the end, conclusions on the preparedness of countries for monetary integration were given. In order to further integrate and create a monetary Union, it is necessary to fully harmonize all spheres of the economy. First of all, it is advisable to pay attention to the convergence indicators prescribed in the Treaty on the establishment of the EAEU.

## ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2018Թ. ՄՊԱՍԵԼԻՔՆԵՐԻՆ ԸՆԴՈՒԱԶ

### ԱՐՓԻՆԵ ՄԱՅԱԿԱՆՅԱԼ

Անկախ պետականության ծեռքբերումից ի վեր Արցախի Հանրապետության առջև ծառայան կարևորագույն խնդիրներ՝ կապված պատերազմի արդյունքներում քայքայված տնտեսությունը վերականգնելու և վերականգնված տնտեսությունը զարգացնելու ուղղությամբ: Հանրապետությունը ԱՊՀ երկրների պես կրեց անցումային փուլը հաղթահարող բոլոր պետություններին բնորոշ դժվարություններ, որոնց ավելացան տրանսպորտային շրջափակումը, ինչպես նաև վառելիքի ներմուծման ծավալների խիստ կրճատումը, որի արդյունքում երկրում առաջացավ էլեկտրաէներգիայի պակասուրդ<sup>1</sup>:

Տնտեսության զարգացման համար կարևոր էր ՀՀ և ԼՂՀ (Արցախի) միասնական բանկային համակարգի ներդրումը: Արցախի հանրապետության բանկային համակարգը համարվում է ՀՀ բանկային համակարգի մասը, և ենթարկվում է ՀՀ բանկային օրենսդրությանը: Արցախում ինքնուրույն ԿԲ-ի ստեղծման փորձ արվել էր՝ այդ պարտականությունը համաձայն ԼՂՀ Գերագույն խորհրդի որոշման նախկին ԽՍՀՄ պետական բանկի Լեռնային Ղարաբաղի մարզային վարչության վրա դնելով, սակայն թերի ենթակառուցվածքների և օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայության պատճառով այն ի վիճակի չէր լուծել բանկային համակարգի առջև ծառայած խնդիրները<sup>2</sup>:

2000 թվականից ԼՂՀ-ում ևս կատարվեցին տնտեսական բարեփոխումներ, կատարելագործվեցին բյուջետային գործընթացի մեխանիզմները, արդյունքում այդ ժամանակահատվածից սկսած մինչև 2012թ. այստեղ անընդհատ տնտեսական աճ սկսեց գրանցվել՝ ապահովելով ՀՆԱ-ի անվանական տարեկան միջին աճը մոտավորապես 7%<sup>3</sup>: Սակայն ֆինանսական ճգնաժամը Արցախի Հանրապետության վրա ևս ազդեցություն ունեցավ, քանի որ չունենալով սեփական դրամական միավոր և սեփական կենտրոնական բանկ, Արցախի Հանրապետությունը չէր կարող իրականացնել անկախ դրամավարկային քաղաքականություն, նրա տարածքում գործող բանկերը համարվում են ՀՀ բանկային համակարգի մաս և ենթարկվում ՀՀ դրամավարկային քաղաքականության ազդեցությանը: Բայց և այնպես պետք է նշել, որ Արցախի Հանրապետությունում իրականացվում է ինքնուրույն հարկաբյուջետային քաղաքականություն և տնտեսությունում կիրառվում են տարբեր գործիքներ, որոնց միջոցով կարգավորվում է դրամի առաջարկը:

ԼՂՀ-ին հաջողվեց դիմակայել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջին և երկրորդ ալիքների բացասական ազդեցություններին՝ շնորհիվ մի կողմից՝ արտաքին միջազգային ֆինանսական շուկաների հետ թույլ կապերի, մյուս կողմից՝ պետական արդյունավետ քաղաքականության:

Համաշխարհային ճգնաժամը ցույց տվեց, որ ցանկացած երկրի համար իրական հատվածն է տնտեսական ամուր հիմքը, որի վրա պետք է կառուցվի կայուն տնտեսական աճի քաղաքականությունը<sup>4</sup>:

<sup>1</sup> Ը. Ասրյան, Անկախության շրջանում տնտեսական աճի և կառուցվածքային տեղաշարժի առանձնահատկությունները ԼՂՀ-ում, Գիտական տեղեկագիր (1/2017), էջ 309-310:

<sup>2</sup> Ա.Մնացականյան, ՀՀ ԴՐԱՄԱՎԱՐԿՅՈՒՆ ԶԱՐԳԱՎԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՐԳՑՄԱՆ ՓՈԻԼԵՐԻ ԿՐԱՆՁՆԱԳՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018, էջ 483:

<sup>3</sup> Հայիրյան Ե. Դրամավարկային կարգավորման առանձնահատկությունները ԼՂՀ տնտեսության զարգացման արդի փուլում, Եր., 2013թ., էջ79-80:

<sup>4</sup> Ա. Խ. Մարկոսյան, Մ. Գ. Մանուկյան, Առևտրային կազմակերպությունների արդյունավետության բարձրացման հիմնական ուղիները ՀՀ իրական հատվածում, Եր. 2010, էջ 5

Եթե համեմատենք հետխորհրդային հանրապետությունների տնտեսական աճը 2000-2008 թթ. կտրվածքով, ապա պետք է ասել, որ ՀՀ տնտեսական աճի միջին տեմպը 12,4 % է, և այդ ցուցանիշով ՀՀ-ն հետխորհրդային հանրապետությունների համեմատությամբ զբաղեցնում է երրորդ տեղը: ԼՂՀ -ն տնտեսական աճի միջին տեմպը նույն ժամանակում գերազանցում է 9 %-ի մակարդակը, իսկ 2009-2015 թթ.՝ 9,2 %-ը<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ ԼՂՀ տնտեսության կայունությանը մեծապես աջակցում է նաև յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքում ամրագրված Արցախի հանրապետության բյուջեի դեֆիցիտը ֆինանսավորելու նպատակով տրամադրվող արտոնյալ բյուջետային վարկի տոկոսադրույթն ու մարման ժամանակահատվածը<sup>2</sup>: 2017թ արդեն Արցախի տնտեսության պատկերը բավականին խոստումնալից է, աճ է նկատվել տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում:

2017թ. հանրապետությունում, փաստացի գներով, թողարկվել է 97.5 մլրդ դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 96.2 մլրդ դրամի պատրաստի արտադրանք: 2016թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 154.8 տոկոս, հանքագործական արդյունաբերությունում և բացահանքերի շահագործումում՝ 263.4 տոկոս, մշակող արդյունաբերությունում՝ 103.2 տոկոս, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտում՝ 116.2 տոկոս և ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտում՝ 136.2 տոկոս: Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ բաժինների հետևյալն է. հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 53.4%, մշակող արդյունաբերություն՝ 21.3%, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 24.3% և ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 1.0%:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2017թ. փաստացի գներով կազմել է 76.2 մլրդ դրամ, 2016թ. համեմատությամբ, համադրելի գներով, աճել է 7.8 տոկոսով, հիմնականում պայմանավորված բուսաբուծության համախառն արտադրանքի աճով<sup>3</sup>:

Արցախի Հանրապետության նախկին պետական նախարար Արայիկ Հարությունյանը հունվարի 17-ին հրավիրելով մամուլի ասուլիս՝ ամփոփելու 2017թ. գործունեության արդյունքները և ներկայացրել ընթացիկ տարվա հիմնական ծրագրերը: Ըստ նրա՝ 2018թ. մեծ ակնկալիքների տարի է, քանի որ քանի որ զգալի աճ է կանխատեսվում բոլոր հիմնական ոլորտներում<sup>4</sup>: Ի դեպ, ըստ Ա. Հարությունյանի՝ հանքարդյունաբերությունում աճն արձանագրվելու է «Բեյզ մեթըլս» ընկերության արտադրողականության և արտադրանքի զգալի ծավալների ավելացման հաշվին: Բացի դրանից, ծրագրեր կան նաև ոչ մետաղական

<sup>1</sup> Շ.Արդյան, Անկախության շրջանում տնտեսական աճի և կառուցվածքային տեղաշարժի առանձնահատկությունները ԼՂՀ-ում, Գիտական տեղեկագիր ( 1/2017), էջ 309-310

<sup>2</sup> «ՀՀ օրենքը 2018թ. պետական բյուջեի մասին», հոդ. 9, կետ 3 [https://docviewer.yandex.ru/view/0/?\\*=QXzu6W6APhC0kHr3uKOb4tXfPz7InVybCl6lnhLWjyb3dzZXI6Ly80RFQxdVhFUfJySjIYbFVGVb2V3cnVOVmZ2X1BndkR3M1hTcWJEZW1YdUNDemN3S1NpVjQxSHJwSHkzdFpBZGVfLXYQnlPMmg5V1BBdTNBWEwEbjhTZThkUfKwUjFOWlJcG5PdjlN5UFNiOHpQMU9haW1HbTBdUDFiUVBHMk0xWkk2d2JEBXj3TIRURUtSa1IDbIRWQ2c9PT9zaWduPTQ5Zi9ONmJHR3B2S0xCSUcwNUdha3dSczBKT21vOXdtWlFfXaXBvdG15WWs9liwidGI0bGUlOilxLmJlZGdldGxhdzlwMTtuZG9jliwidWlkljoimClslnl1ljoimZy50DYwMTMyMTUwODI2NDcwNiIsIm5vaWZyYVW1lIjpmYWxzZSwidHMI0iE1MzY2OTA1NDcxMTZ9](https://docviewer.yandex.ru/view/0/?*=QXzu6W6APhC0kHr3uKOb4tXfPz7InVybCl6lnhLWjyb3dzZXI6Ly80RFQxdVhFUfJySjIYbFVGVb2V3cnVOVmZ2X1BndkR3M1hTcWJEZW1YdUNDemN3S1NpVjQxSHJwSHkzdFpBZGVfLXYQnlPMmg5V1BBdTNBWEwEbjhTZThkUfKwUjFOWlJcG5PdjlN5UFNiOHpQMU9haW1HbTBdUDFiUVBHMk0xWkk2d2JEBXj3TIRURUtSa1IDbIRWQ2c9PT9zaWduPTQ5Zi9ONmJHR3B2S0xCSUcwNUdha3dSczBKT21vOXdtWlFfXaXBvdG15WWs9liwidGI0bGUlOilxLmJlZGdldGxhdzlwMTtuZG9jliwidWlkljoimClslnl1ljoimZy50DYwMTMyMTUwODI2NDcwNiIsIm5vaWZyYVW1lIjpmYWxzZSwidHMI0iE1MzY2OTA1NDcxMTZ9)

<sup>3</sup> Արցախի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017թ., [HTTP://WWW.STAT-NKR.AM/HY/2010-11-24-10-40-02/816--2017-](http://www.stat-nkr.am/hy/2010-11-24-10-40-02/816--2017-)

<sup>4</sup> 2018թ.-ը բեկումնային տարի կլինի Արցախի տնտեսության համար. Արայիկ Հարությունյանի մամուլի ասուլիսը, <http://gov.nkr.am/hy/official-news/item/2018/01/17/asulis.17.01.2018/>

հանքարդյունաբերության ոլորտում, օրինակ՝ խոշոր նախագիծ է գործում շինարարական քարի արտադրության և արտահանման ուղղությամբ<sup>1</sup>: Թեև տարին դեռ չի ավարտվել, այնուամենայնիվ, արդեն որոշակի պատկերացում կարելի է կազմել ձեռքբերումների վերաբերյալ:

Նախնական տվյալներով 2018 թվականի 9 ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 39935.4 մլն դրամ՝ պլանավորված 36900.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 8.2 տոկոսով կամ 3035.4 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 52.3 տոկոսով կամ 13719.0 մլն դրամով: Ի դեպ, ավել հավաքագրված գումարից 10314.0 մլն դրամը պայմանավորված է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի կողմից վճարված հարկային եկամուտների աճով<sup>2</sup>:

Գյուղնախարարության կողմից մշակվել և գործարկվել է «Արցախի Հանրապետության բուսաբուծության համալիր զարգացման ծրագիրը», որի նպատակը մեծ պահանջարկ վայելող, ինչպես նաև հանրապետությունում պակասուրդային մի շարք բույսերի մշակման խթանումը: Ծրագրի եռությունը կայանում է նրանում, որ կոնկրետ մշակաբույսերի համար հողօգտագործողը ստանում է միանվագ գումար՝ 1 հա-ի կտրվածքով: Ի դեպ, 2018թ. ծրագրի շրջանակում աջակցության ենթակա պոմիդորի, բադրիչանի, պղպեղի, սոխի և սիսորիի ցանկը համալրվել է ևս 4 տեսակի բանջարեղենով՝ վարունգ, կաղամբ, գազար, բազուկ: Ինչպես նաև առաջին անգամ աջակցություն է տրամադրվել նաև կարտոֆիլի մշակության համար՝ 150 հազար դրամ՝ յուրաքանչյուր 1 հա-ի մշակության դիմաց<sup>3</sup>:

Ի դեպ, Կարմիր շուկայում գործում է ձեթի արտադրության գործարան, և արևածաղկի բերքի իրացման հետ կապված ինդիկներ չեն առաջանում, քանի որ հողօգտագործողները այն հանձնում են ձեթի գործարանին<sup>4</sup>:

Պետք է նշել, որ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի միջոցներով Զաշաթաղի շրջանի Վան համայնքում այս տարվա գարնանը հիմնվել է 5 հա արքայանարնջի այգի, որտեղ տնկվել է շուրջ 2500 ծառ: Ի դեպ, 2011թվականից Հադրուբի և Զաշաթաղի շրջաններում հիմնադրված նույն այգիներից այս տարի ստացված բերքն իրացնելով Արցախի և Հայաստանի նույն հյուր արտադրող գործարաններում, հասույթը տրամադրվելու է բարեգործական նպատակներով՝ ոչ միայն վերաբնակիչներին տնով ապահովելու, այլև աշխատատեղով ապահովելու համար<sup>5</sup>:

Նմանատիպ ծրագիր է իրականացնում նաև «ԱրցախՄեդր» ընկերությունը, որը, հանդիսանալով Արցախի մեղվաբուծների ասոցիացիայի անդամ, գյուղատնտեսության նախարարության հետ համատեղ մշակել է ծրագիր, համաձայն որի պայմանագրեր կկնքվեն պահեստագործային սպաների հետ, ովքեր կցանկանան զբաղվել մեղվաբուծությամբ, նրանց կտրամադրվեն անհրաժեշտ պարագաներ ու

<sup>1</sup> 2018թ.-ը բեկումնային տարի կլինի Արցախի տնտեսության համար. Արայիկ Հարությունյանի մամուլի ասուլիսը, <http://gov.nkr.am/hy/official-news/item/2018/01/17/asulis.17.01.2018/>

<sup>2</sup> 2018 թվականի ինը ամիսների հարկային եկամուտների և տուրքերի ամփոփ ցուցանիշներ [http://minfin-nkr.am/?section=news\\_archive/view&news\\_id=293&p=1](http://minfin-nkr.am/?section=news_archive/view&news_id=293&p=1)

<sup>3</sup> Ընթացիկ տարում բուսաբուծության համալիր զարգացման ծրագրից օգտվել է 187 հողօգտագործող <https://artsakhpress.am/arm/news/91868/yntacik--tarum---busabutsutyan-hamalir--zargacman-tsragric---ogtvel-e--187---hoxogtagortsox.html>

<sup>4</sup> Գարնանացան մշակաբույսերի բերքահավաքի արդյունքները գոհացուցիչ են ոլորտի պատասխանատու, <https://artsakhpress.am/arm/news/92818/garnanacan--mshakabyseri---berqahavaqi---ardyunqneri---gohacucich---en---olori---pataskhanatu.html>

<sup>5</sup> Զաշաթաղի շրջանի Վան համայնքում հիմնվել է արքայանարնջի այգի. տե՛ս, <https://artsakhpress.am/arm/news/93907/qashataxi---shrjani-van--hamaynqum---himnel-e---argayanarnij---aygi-tnoren.html>

մեղվաընտանիքներ: Հաջողության հասնելու դեպքում կազմակերպությունն ինքը կզնի արտադրված մեղրը, այդպիսով ապահովելով պահեստագորային սպաների զբաղվածությունը և ինչ-որ չափով նպաստելով այդ ընտանիքների ֆինանսական ապահովվածությանը<sup>1</sup>

ԱՅ կառավարության կողմից ընդունվել են գյուղատնտեսության ոլորտի համար կարևոր մի շարք որոշումներ, որոնցից են «Կաթիլային ոռոգման համակարգերի տեղադրման նոր առանձնահատկությունների և անհրաժեշտ նախապայմանների վերաբերյալ» և «Անասնաբուծությանը ներկայացվող պարտադիր պահանջները հաստատելու մասին» որոշումները<sup>2</sup>:

Հատկանշական է, որ Արցախում «Haterk Food» ընկերության կողմից արտադրվել է Էկոլոգիապես մաքուր, բնական սննդի առաջին խմբաբանակը: Նոր սննդի մեջ առկա են մեղր, ծիրանի չիր, դոմի սերմեր, ընկույզ, պտուկ, արևածաղկի սերմեր և նուշ: Սնունդն առաջին անգամ ցուցադրվել է հուլիսի 15-ին Հաթերթում կազմակերպված «ժենգալով հաց»-ի փառատոնին, որի ժամանակ էլ եղել է հյուրասիրություն և վաճառք: Ի դեպ տվյալ Էկոպրոդուկտն արդեն սկսել է ճանաչում ստանալ տարբեր երկրներում, ինչի արդյունքում սպասվում է սպառման աշխարհագրության ընդլայնում<sup>3</sup>:

Ինչ վերաբերում է Էներգետիկայի բնագավառին, հարկ է նշել, որ Էներգահամակարգը գրեթե ամբողջովին բավարարում է Էլեկտրաէներգիայի ներքին շուկայի պահանջարկը և արդեն իսկ կա արտահանման որոշակի ներուժ: Նախատեսվում է շարունակել փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ծրագիրը՝ մինչև 2020թ. թողարկվող Էլեկտրաէներգիայի ծավալը հասցնելով տարեկան 550 մլն.կՎտ.ժ-ի, իսկ մինչև 2023թ.՝ 750մլն կՎտ.ժ-ի<sup>4</sup>:

Ներկայումս Արցախում շահագործվում են 16 հիդրոէլեկտրակայաններ, այդ թվում Սարսանգի ՀԷԿ-ը 50ՄՎտ հզորությամբ և 15 այլ ՀԷԿ-եր 52ՄՎտ զումարային հզորությամբ: Միայն 2017 թվականին շահագործման է հանձնվել երկու ՀԷԿ: Միայն «Ջերմաջուր» ՀԷԿ-ի հզորությունը կազմում է ավելի քան 10 ՄՎտ:Աշխատանքներ են տարվում ևս 9 ՀԷԿ-եր կառուցելու համար<sup>5</sup>:

2018թ նախատեսվում է Արցախում ֆոտովոլտայիկ վահանակների (արևային Էներգետիկա) հետագա ծավալումն ու զարգացումը: Առտնին և համայնքային նշանակության արևային վահանակներ կան Շուշիի և Ասկերանի շրջաններում: Հատկապես կարևորվել է արևային Էներգիայի սպառողների հոսանքահաշվիչ համակարգերի առանձնացումը մայր ցանցից և հաշվարկային հստակ մեխանիզմի կիրառումը: Իշխանությունները նախատեսում են արդեն այս աշնանն օրենսդրական նորամուծություններ իրականացնել, որոնք Հայաստանի Հանրապետության օրինակով թույլ կտան ինքնավար արևային կայաններ ունեցող մենատնտես քաղաքացիներին Էլեկտրաէներգիայի ավելցուկը վաճառել «Արցախէներգո» ՓԲԸ-ին<sup>6</sup>:

<sup>1</sup> «ԱրցախՄեղր» ընկերությունը «Made in Artsakh» խանութում կներկայանա նոր տաղավարով, <https://artsakhpress.am/arm/news/90416/>

<sup>2</sup> Կաթիլային ոռոգման համակարգերի տեղադրման համար սահմանվել են կարևոր նախապայմաններ, <https://artsakhpress.am/arm/news/91400/katilayin-orogman-hamakargeri-texadman-hamar-sahmanvel-en-karevor-nakhapaymanner.html>,

<sup>3</sup> Հաթերթում արտադրվում է «Haterk Food» անվամբ բնական սնունդ, <https://artsakhpress.am/arm/news/91005/haterqum---artadrvm---e---haterk-food---anvamb---bnakan---snund.html>

<sup>4</sup> Հաշվետվություն Արցախի Հանրապետության 2017թ. պետական բյուջեի կատարման մասին, էջ28-29

<sup>5</sup> Ա. Մնացականյան, ԵԱՏՄ հնարավոր դերը Արցախի տնտեսական զարգացման գործում, «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի կյութերի ժողովածու, Եր. 2017թ. էջ 215

<sup>6</sup> Պետնախարարը քննարկել է Արցախում արեւային Էներգետիկայի հետագա զարգացումը, <https://news.am/arm/news/463654.html>



Ինչ վերաբերում է զբոսաշրջությանը, ապա պետք է նշել, որ Արցախ այցելած զբոսաշրջիկների թիվը 2017թ. առաջին կիսամյակի համեմատ այս տարվա նույն ժամանակահատվածում աճել է 41%-ով: Օտարերկրյա զբոսաշրջիկների թիվն աճել է գրեթե 102 տոկոսով: Եթե 2017 թվականի առաջին հինգ ամիսներին Արցախ էր եկել 4 հազար 362, ապա այս տարվա նույն ժամանակահատվածում Արցախն իրենց այցելությունների ցանկում ներառել են 8 հազար 654 օտարերկրյա զբոսաշրջիկներ: Ի դեպ, Արցախ այցելող զբոսաշրջիկների աշխարհագրությունը ևս ընդլայնվել է: 2018թ. դրությամբ գործում է 10 զբոսաշրջային կազմակերպություն: Այս տարի 4 հյուրանոցային օբյեկտ է ավելացել՝ համալրելով 50-ից ավելի հյուրանոցների ցանկը:

Արցախի մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարությունը տարեսկզբից նախանշել է զբոսաշրջային 5 ուղղություն՝

1. արդեն գործող պատմամշակութային ուղղություն,
2. արկածային տուրիզմ, որը ենթադրում է հեծանվային արշավների, քայլարշավների համար երթուղիներ, Zipline, օդային թռիչքներ
3. գաստրոտուրիզմն է, որի հիմքը արցախյան խոհանոցը, ինչպես նաև տնական պայմաններում պատրաստվող օղու թորման գործընթացին մասնակցությունը և համոտեսը

4. ագրոտուրիզմ, որի խթանման շրջանակներում նախատեսվում է նաև ներգրավել այն անձանց, ովքեր պատրաստակամ են հյուրատնային բիզնես հիմնել

5. իրադարձային տուրիզմ, կապված այն հանգամանքի հետ, որ Արցախը հարուստ է իրադարձություններով և միջոցառումներով, որոնք պետք է որպես զբոսաշրջային պրոդուկտ ճիշտ ներկայացվի՝ ապահովելու ցանկալի արդյունք<sup>1</sup>:

Թեև 2018թ դեռ չի մոտեցել ավարտին, այդուհանդերձ կարելի է նշել, որ տարեսկզբի կանխատեսումները կարծես թե արդարացնում են սպասելիքները: Իհարկե, տնտեսության զարգացման համար կարևոր է ջանք չխնայել և ապահովել տնտեսության բոլոր ճյուղերի շարունակական փոխկապակցված և կայուն զարգացումը, նպատակ ունենալով տնտեսական աճի ապահովմամբ հասնել բնակչության կենսամակարդակի բարձրացման և հանրապետությունում առկա գործազրկության մակարդակը կրճատելուն:

## **Արփինե Մնացականյան** **ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ 2018Թ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻՆ** **ԸՆԴԱՈՍՁ**

**Բանալի բառեր.** *Արցախ, տնտեսություն, զարգացում, ճյուղեր, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, զբոսաշրջություն*

Արցախի Հանրապետության նախկին պետական նախարար Արայիկ Հարությունյանը ամփոփելով 2017թ. գործունեության արդյունքները՝ նշեց, որ 2018թ. մեծ ակնկալիքների տարի է, քանի որ քանի որ զգալի աճ է կանխատեսվում բոլոր հիմնական ոլորտներում: Թեև տարին դեռ չի ավարտվել, կարող ենք փաստել, որ բավական լավ արդյունքներ են գրանցվել, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ սպասելիքները կարողարացվեն:

<sup>1</sup> Մարկետինգային նոր քաղաքականություն, շուկաների թիրախավորում. Արցախի զբոսաշրջությունը զգալի աճ է ապահովել, <https://armenpress.am/arm/news/941851.html>

**Arpine Mnatsakanyan**  
**THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARTSAKH – HEADING TO THE**  
**EXPECTATIONS OF THE YEAR 2018**

**Key words:** *Artsakh, economy, development, sectors of economy, agriculture, industry, tourism*

The Former state Minister of the Republic of Artsakh Araik Harutyunyan, summing up the results of 2017, noted that 2018 is a year of high expectations, because a significant growth for all major sectors of the economy is projected. Although the year is not over yet, we can say that there are quite good results, which suggests that the expectations will be met.

**Арпине Мнацаканян**  
**ЭКОНОМИКА РЕСПУБЛИКИ АРЦАХ В 2018 ГОДУ –**  
**НАВСТРЕЧУ ОЖИДАНИЯМ**

**Ключевые слова:** *Арцах, экономика, развитие, отрасли, сельское хозяйство, промышленность, туризм*

Бывший государственный министр Республики Арцах Араик Арутюнян, подводя итоги деятельности в 2017-ом году, отметил, что 2018-ый год – год больших ожиданий, ибо прогнозируется значительный рост для всех основных отраслей экономики. Хотя год еще не закончился, можно констатировать, что зарегистрированы достаточно хорошие результаты. Это дает основания предположить, что ожидания будут оправданы.

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՐԱՐՈՒԿԱՆ ՀԻՄՔԸ

### ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ազգային տնտեսության մրցունակության ապահովումը յուրաքանչյուր երկրի կայուն զարգացման անհրաժեշտ նախադրյալներից է, ուստի դարձել է առանձին երկրների տնտեսական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը:

Տարբեր միջազգային կազմակերպությունների, հետազոտողների և հետազոտական խմբերի կողմից դիտարկվում են միջազգային մրցունակության մակարդակը պայմանավորող գործոնների բազմությունը: Մենեջմենթի զարգացման Լոզանի ինստիտուտի կողմից որպես այդպիսիք դիտարկվում են գիտելիքը, տեխնոլոգիական զարգացումը, ձեռնարկատիրության ազատությունը, ֆինանսական քաղաքականությունը, լոգիստիկան և կրթությունը<sup>1</sup>:

Մրցունակության վրա առանձին գործոնների ազդեցության ուղղության և մեծության գնահատման նպատակով կիրառելի է կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծության մեթոդը՝ կապի առկայության, ուժգնության և դրա ուղղության բացահայտման նպատակով<sup>2</sup>:

Կոռելացիայի գործակիցը ( $R$ ) երկու պատահական մեծությունների միջև փոխկախվածության գնահատման գործակից է և կարող է ընդունել արժեքներ՝ (-1;+1) միջակայքում: Գործակից՝ 1-ին մոտ արժեքի ընդունումը վկայում է երկու փոփոխականների միջև ուժեղ կապի առկայության մասին, իսկ 0 արժեքին մոտ լինելու դեպքում՝ կապի թույլ լինելու կամ դրա բացակայության: Եթե  $R$  գործակիցը բացարձակ արժեքով հավասար է 1-ի, ապա կարելի է դիտարկել երկու փոփոխականների միջև ֆունկցիոնալ կապը<sup>3</sup>:

Մրցունակության և դրա վրա ազդող մի շարք գործոնների միջև կապի ուսումնասիրության և վերլուծության նպատակով դիտարկվել են 30 երկրների<sup>4</sup> Համաշխարհային մրցունակության 2017-2018թ համաթվով ունեցած արդյունքները:

Սույն հոդվածի շրջանակներում դիտարկվել է Նորարարությունների՝ մրցունակության մակարդակի վրա ազդեցությունը: Կապի առկայության և ազդեցության ուժգնության որոշման նպատակով դիտարկվել են Համաշխարհային տնտեսական համաժողովի (World Economic Forum)-ի կողմից հրապարակվող երկու համաթվերը՝

Համաշխարհային նորարարության համաթիվ (Global Innovation Index),

Համաշխարհային մրցունակության համաթիվ (Global Competitiveness Index):

Դիտարկենք մրցունակության մակարդակի և համաշխարհային նորարարության համաթվի կապը՝ կոռելացիոն-ռեգրեսիոն վերլուծության միջոցով: Ռեգրեսիայի պարամետրերի հաշվարկման համար դիտարկենք  $X$  գործոնի (նորարարության համաթիվ) և  $Y$  արդյունքային ցուցանիշի (մրցունակության համաթիվ) կապը: Անհրաժեշտ ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

<sup>1</sup> IMD World Competitiveness Yearbook, Methodology and principles of analysis // <https://www.imd.org/wcc/world-competitiveness-center-mission/methodology/>

<sup>2</sup> <http://academic.macewan.ca/burok/Stat141/notes/regression.pdf>

<sup>3</sup> Коппелационно-регрессионный анализ: параметры управления регрессии // калькуляторы по направлениям // <http://math.semestr.ru/corel/corel.php>

<sup>4</sup> Երկրներն ընտրված են ընտրանքային կերպով՝ ընդգրկելով և զարգացած, և զարգացող և թույլ զարգացած մի քանի երկիր:

Աղյուսակ 1: Մրցունակության մակարդակի և նորարարության համաթվի միջև կապը<sup>1</sup>:

Երկիրը	X	Y	X <sup>2</sup>	Y <sup>2</sup>	X*Y
Ադրբեջան	30,58	4,69	935,14	22,00	143,42
ԱՄՆ	61,40	5,85	3769,96	34,22	359,19
Ավստրալիա	51,83	5,19	2686,35	26,94	269,00
Ավստրիա	53,10	5,25	2819,61	27,56	278,78
Արգենտինա	32,00	3,95	1024,00	15,60	126,40
Դանիա	58,70	5,39	3445,69	29,05	316,39
Էստոնիա	50,93	4,85	2593,86	23,52	247,01
Թուրքիա	38,90	4,42	1513,21	19,54	171,94
Իտալիա	46,96	4,54	2205,24	20,61	213,20
Իրան	32,09	4,27	1029,77	18,23	137,02
Լեհաստան	41,99	4,59	1763,16	21,07	192,73
Խորվաթիա	39,80	4,19	1584,04	17,56	166,76
Կանադա	53,65	5,35	2878,32	28,62	287,03
Հայաստան	35,65	4,19	1270,92	17,56	149,37
Հունաստան	38,85	4,02	1509,32	16,16	156,18
Հունգարիա	41,74	4,33	1742,23	18,75	180,73
Ղազախստան	31,50	4,35	992,25	18,92	137,03
Ղրղզստան	28,01	3,90	784,56	15,21	109,24
Մեծ Բրիտանիա	60,89	5,51	3707,59	30,36	335,50
Մոլդովա	36,84	3,99	1357,19	15,92	146,99
Շվեյցարիա	67,69	5,86	4581,94	34,34	396,66
Ուկրաինա	37,62	4,11	1415,26	16,89	154,62
Չեխիա	50,98	4,77	2598,96	22,75	243,17
Չինաստան	52,54	5,00	2760,45	25,00	262,70
Եթե փորձենք վերը նշված մի քանի հոդվածների միջոցով պատկերացում կազմել Արցախին ու դարաբաղյան հակամարտության հիմնախնդրի շուրջ գերմանական պարբերականների դիրքորոշման մասին, ապա պետք է նշել, որ դրանք հիմնականում վերաբերում էին խաղաղ կարգավորման բանակցային գործընթացին: Նյութերը ներկայացված էին հոդվածների, մեկնաբանության տեսքով: Լուրի ժանրը ակնհայտ տեսանելի էր հատկապես 2016 թվականի ապրիլին և դրան հաջորդած օրերին: Գերմանական պարբերականները քաղաքական գնահատականներ շատ հաճախ չեն էլ հնչեցնում՝ գերծ մնալով ավելորդ «գլխացավանքից»: Սակայն ակնհայտ է, որ պարբերականների համար դարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը շարունակում է մնալ դեռևս լիովին չբացահայտված, քանի դեռ հակամարտությունը առայժմ հանգուցալուծում չի ստացել:

### **Շուշան Խաչատրյան** **ԱՐՑԱԽԸ ՀԵՐԻՆԱԿԱՎՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ԷԶԵՐՈՒՄ** **(ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԻ ՕՐԻՆԱԿՈՎ)**

*Բանալի բառեր՝ Արցախյան խնդիր, գերմանական մամուլ, մեդիադաշտ, հակամարտություն, պարբերականներ*

Հոդվածը ներկայացնում է արցախյան խնդրի ընկալումներն գերմանական հեղինակավոր պարբերականներում՝ խնդրի ներկայացման պատմությունը սկսելով 2016 թվականի ապրիլյան սրացումից: Կարևորելով զանգվածային մեծ լսարան ունեցող սույն պարբերականների վարած տեղեկատվական-քարոզչական քաղաքականությունը և արցախյան հակամարտության շուրջ ծավալվող ուղեգծի մեկնաբանումները, ուրվագծվում են լրագրային արձագանքների հիմնական օրինաչափությունները և գերմանական մեդիադաշտի կողմից արցախյան խնդրի ընկալումների հիմնական առանձնահատկությունները:

### **Shushan Khachatryan** **THE PERCEPTION OF THE ARTSAKH PROBLEM BY THE AMERICAN AND** **BRITISH MAGAZINES**

**Keywords:** *Artsakh problem, German press, mediafield, conflict, periodical*

The article presents the perception of the Artsakh issue by famous German magazines starting from history of this problem since the escalation of the situation in April of 2016.

The importance of the information and propaganda policy of these newspapers which has a huge audience and comments of the Artsakh conflict are emphasized in the article, besides the main regularities of journalistic reviews and the main features of the perception of the conflict by German media are revealed.

<sup>1</sup> <http://www.spiegel.de/fotostrecke/photo-gallery-the-strong-women-of-nagorno-karabakh-fotostrecke-159780.html>

**Шушан Хачатрян**  
**АРЦАХ НА СТРАНИЦАХ АВТОРИТЕТНЫХ ИЗДАНИЙ**  
**(НА ПРИМЕРЕ НЕМЕЦКОЙ ПРЕССЫ)**

**Ключевые слова:** *Арцахский вопрос, немецкая пресса, медиаполе, конфликт, периодика*

В статье представлено восприятие арцахского вопроса известными немецкими журналами, с охватом истории данной проблемы с периода обострения ситуации в апреле 2016 года. Подчеркивается важность информационно-пропагандистской политики этих изданий, имеющих огромную аудиторию, и комментариев вокруг арцахского конфликта, выявляются основные закономерности журналистских отзывов и особенности восприятия конфликта в немецком медиаполе.

## ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԸՍՏ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐԻ

### ՇՈՒՇԱՆ ԽԱՉՍՏՐՅԱՆ, ԳԱԼՈՒՄՍ ՍԱՐՈՅԱԼ

Հետխորհրդային տարիները, հատկապես առաջին տասնամյակը, ընդունված է որակել որպես «մուլթ ու ցուրտ» տարիներ<sup>1</sup>: Այդ շրջանում ծնվածներիս էլ անվանում են «մուլթ ու ցուրտ» տարիների սերունդ: Արդյո՞ք ունեն այդ իրավունքը: Արդյո՞ք արդար է «մուլթ ու ցուրտ» որակել այն տարիները, որոնք եղել են Արցախի ազատագրման, հողերի ետ վերադարձի, ազգային միասնականության և զարթոնքի, ի վերջո՝ անկախության տարիներ: Մի տեսակ չէինք ուզենա լինել «մուլթ ու ցուրտ» տարիների սերունդ, մեզ ավելի հոգեհարազատ է անկախության ու ազգային զարթոնքի սերունդ լինելու գաղափարը: Մասնավոր ապացուցեցինք չէ՞, որ ոգևորվել և պայքարել գիտենք, որ միասնաբար հանդես գալ և մեզ մեր երկրի տերը զգալ գիտենք...

Թերևս սխալված չենք լինի, եթե ասենք, որ որոշակի ժամանակաշրջան այս կամ այն կերպ պիտակավորելն առավելապես լրագրողների, գրողների և ֆիլմեր ստեղծողների գործն է: Նրանք են ժամանակի տարեգիրները: Եվ եթե հայոց պետականության անցյալն ու ներկան արժևորելու խնդիր ունենք առաջին հերթին դա անում ենք հենց վերջիններիս ստեղծագործությունների միջոցով: Ուստի, շատ կարևոր է քննության առնել նրանց կողմից մեր ոչ այնքան վաղ անցյալի ներկայացումը:

Նորանկախ Հայաստանի մասին պատմող գրականությունը, ըստ տեսաբանների, պատկերում է այդ օրերի «հոգևոր-բարոյական կացությունը», միաժամանակ «իդեալների և արժեքների անորոշությունը»<sup>2</sup>: Համենայն դեպս, այդ տարիների ստեղծագործական ընթացքը համարվում է հետաքրքիր «կեցության և հոգեբանության» համադրության առումով<sup>3</sup>:

Կփորձենք վերլուծական հայացք գցել ժամանակակից մի քանի գրական գործերի (Արմեն Շեկոյանի «Վագոնից թռչելու ժամանակը», Սարգիս Հովսեփյանի «Ես ու իմ ընկեր Շուռը», Համբարձում Համբարձումյանի «Էդ գիշեր», Արամ Պաչյանի «Թափանցիկ շերտ») կողմից անկախ Հայաստանի ներկայացմանը՝ ուշադրություն դարձնելով դրա գեղարվեստական կողմին: Կփորձենք պարզել, թե վերոնշյալ գրողները.

- հետխորհրդային Հայաստանի ի՞նչ պատկեր են ստացել. առավելապես դրական, թե՞ բացասական,
- սոցիալ-քաղաքական հատկապես ո՞ր խնդիրներին են անդրադարձել,
- պետություն-քաղաքացի հարաբերությունները ի՞նչ լույսի ներքո են ներկայացրել,
- գեղարվեստական ինչ արտահայտչամիջոցներից են օգտվել, և որքանով են դրանք ազդեցիկ:

**Արմեն Շեկոյանի «Վագոնից թռչելու ժամանակը»** պատմում է անկախացած Հայաստանի մասին՝ անդրադառնալով այդ տարիներին լայն տարածում գտած մուրացկանության երևույթին: Նա հերթով ներկայացնում է մուրացկանությամբ զբաղվողներին, տալիս նրանց գործունեության ընդհանրական

<sup>1</sup> Մուլթ ու ցուրտ տարիները. Հայաստանը՝ 90-ականների սկզբին, <https://shabat.am/am/article/24405/Mut-u-curt-tarinery.-Hayastany-> :

<sup>2</sup> **Մնացականյան Դ.**, Իրականի և երևակայականի անժամանակ խաչմերուկներում, Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, թիվ 3(21), 2016 թ., էջ 15, [http://ysu.am/files/02D\\_Mnacakanyan.pdf](http://ysu.am/files/02D_Mnacakanyan.pdf):

<sup>3</sup> Նույն տեղում:

պատկերը, Նշում մուրացկանության տեսակները: Հեղինակը գտնում է, որ «Մուրացկանությունը... մեր մայրաքաղաքում լայն տարածում գտավ անկախության ես երկու տասնամյակներում»: Շեկոյանը զուգահեռներ է տանում խորհրդային և հետխորհրդային Հայաստանների միջև և միայն մեկ մուրացկանի է կարողանում մտաբերել, որ խորհրդային տարիներից այդ գործն է անում՝ շիջ հավաքող Պետոյին, որովհետև «Սովետի օրոք ոչ թե մուրացկանությունն էր համատարած զբաղմունք, այլ՝ զարեջրախմությունն ու շամպայնախմությունը»: Խորհրդային տարիներին էտ շամպայնախմությունն այնքան շատ էր, որ Պետոն հավաքել էր բնակարանի և ամուսնական ճանապարհորդության գումար<sup>1</sup>: Մինչդեռ ևորօրյա հերոսներից Ադելաիդան անգամ չի կարողանում ծերը ծերին հասցնել, որ ատամները սարքի...

Ինչ վերաբերվում է գեղարվեստականությանը, ապա պիտի փաստենք, որ Շեկոյանին հաջողվել է ստանալ կենդանի և իրական կերպարներ, անհատականություններ և, կարդալով պատմվածքը, քեզ թվում է, թե ճանաչում ես յուրաքանչյուրին, ապրում ես իրենց հոգսերով, ուզում ես, որ հեղինակն ավելի հաճախ գնա եկեղեցի, որ մոմի գումարից բաժին հանի եկեղեցու շրջակայքն ավլող հողին, լսում ես պրոֆեսիոնալ ակորդեոնիստ Էդուարդի երաժշտությունը՝ ափսոսելով, որ դա անում ես ոչ Հայֆիլիարմոնիայի դահլիճներում, ուզում ես, որ հնարավորինս շատ մարդ հասկանա, որ ասֆալտին գալարվող Ջուլյոյին ևս պետք է փող տալ, սրտանց ուրախանում ես կլարնետիստ Վարդանի աղջկա համար, ով այլևս փողոցում դիողով հորը չի նվագակցում, դրա փոխարեն սովորում է համալսարանում, նաև ուզում ես, որ թավջութակահար Թադևոսյանը ոչ թե հիվանդ լինի, այլ իրոք ֆրանսիական դեսպանատան «կուլտուր-ատաշեն» նրան հրավիրած լինի Փարիզի օպերա:

Ամենակարևորը՝ Շեկոյանը այս ամենը ներկայացնում է որպես բնական երևույթ՝ չանք չթափելով խղճահարություն առաջացնել: Դրանով ավելի հարազատ ու սիրելի են դարձնում կերպարները, ավելի հստակ է դառնում «մուլթ ու ցուրտ» Հայաստանի պատկերը, որտեղ մուրացկան է անգամ հեղինակը...

Թեման ամկա է նաև **Սարգիս Հովսեփյանի «Ես ու իմ ընկեր Շուռը»** պատմվածքում: Սա պատմություն է այդ տարիներին շատ տարածված արտագաղթի, աշխատանքի բացակայության, աննպատակ երիտասարդության, նրանց բարբերի ու լեզվամտածողության մասին: Հեղինակն «անկապ ու աննպատակ» թափառում է Ռուսաստանում, բայց միևնույնն է չի հասկանում, թե ինչու եկավ Հայաստան. «ոչ հորեղբայրն էր մեռել, ոչ էլ քեռին լավ գործ խոսք տվել»: Այն Հայաստան, որտեղ երիտասարդներն ունեին «տնեցիների նյարդային բջիջները մաշեցնող ներկա ու անհույս ապագա»<sup>2</sup>: Հատկանշական է ընկերների երկխոսությունը ծառայության տարիների մասին, երբ «ամբողջ զորամասը հավաքեցին-բերեցին Էրևան»: Չորամասը հավաքել-բերել էին, որ հանեն ժողովրդի դեմ: Եվ նման դեպքերում զինվորականն այլընտրանք չունի, քանի որ կա պատասխանատվության ենթարկվելու վտանգ՝ «Ասա՛ մենք ի՞նչ մեղավոր ենք, որ դատվեինք դու՞» էիր պերեդաչի բերելու...»,- արդարանում է հեղինակը: Հատկանշական է նաև, որ ընկերները խոսում էին տարբեր իրադարձությունների մասին, մեկը՝ 1996-ի, մյուսը՝ 2008-ի, և ստացվում է, որ «Ես Էրևան հարուր տարի ա բան չի փոխվել...»: Այսպիսով, ուրվագծվում է Ս.Հովսեփյանի հետխորհրդային *Էրևանը*, որը «ոչ մի տեղ» չի տանում և որտեղ «արդեն ուշ է»...

Այս տողերը վերընթերցելիս՝ միանգամից հիշեցի մեր այսօրը. մենք՝ երիտասարդներս, արդեն ապացուցեցինք, որ ամենևին էլ ուշ չէ, մենք այլևս գիտենք՝ ուր ենք գնում: Այսօրվա Էրևանը Հովսեփյանի *Էրևանը* չէ, մեր Էրևանում մեր

<sup>1</sup> Շեկոյան Ա., «Վագոնից թռչելու ժամանակը»:

<sup>2</sup> Ձևակերպումները՝ Ս. Հովսեփյանի «Ես ու իմ ընկեր Շուռը» պատմվածքից:

տարեկից զինվորականները չեն վախենում պատասխանատվությունից և կանգնում են ժողովրդի կողքին...

Պետք է փաստել, որ միջանձնային շփումների, երկխոսությունների, երիտասարդության առօրյայի և մտածելակերպի նկարագրությունների միջոցով Ս.Յովսեփյանը կարողանում է ստանալ ժամանակի իրական պատկերը: Պատմվածքը կարդալիս՝ կարծես թատերական ներկայացման ներկա լինես, ժամանակն ու իրադարձությունները կարծես անցնեն աչքիդ առջևից: Պատահական չէ, որ Ռազմիկ Դավոյանը «Կինոաշխարհին» տված հարցազրույցում, խոսելով այս ստեղծագործության մասին, փաստում է, որ այն կարող է կարճամետրաժ ֆիլմի հիմք դառնալ. «Արձակագիր Սարգիս Յովսեփյանի «Իմ ընկեր Շուռը» գործը, թե ուշադրության առնի մի լավ ռեժիսոր, ապա այսօրվա երիտասարդության այնպիսի ինդիվիդներ մեջտեղ կգան, որոնք ոչ մի կերպ չեն բարձրանում Էկրան»<sup>1</sup>:

Բայց նաև չի կարելի ժխտել, որ պատմվածքում կան տեսարաններ, որոնք, թեկուզ ժամանակի հնարավորինս ճիշտ պատկեր ներկայացնելու նպատակ ունեն, այդուհանդերձ ոչ այնքան ճիշտ բարբեր և մտածելակերպ են բարոզում: Այս առումով պատմվածքն, իհարկե, ենթարկվել է քննադատության: Օրինակ, «Սիվիլիթաս» հիմնադրամի հրավիրած «Ի սկզբանե եր Բանն»<sup>2</sup> խորագրով քննարկմանը խիստ բացասական իմաստով էին ներկայացված այս պատմվածքի որոշ տողեր՝ «...Մի խոսքով հո պլան չեր, թույն եր, հենց առաջին ծխից բռնեց: Աչքս չհասցրի թարթել, կրկին կասյակը ֆռռաց ինձ...», «Ախպեր, բուլբուլատոր անե՛ս... Տես, թե կայֆո ուզում ա թողի, վրից մի հատ դագոնկա արա...», «սկսեց այք ու ձախ շինել էս հավերին» և այլն:

Անկախ Հայաստանի մի պատահիկ էլ **Յ.Յամբարձումյանի «Էդ գիշերն»** է՝ «լևի հոսանքով աշխատող հեռուստացույցներ», «չեղած տեղից համով կերակուր պատրաստող» սերիալամիլ կանայք, գումար վաստակել չկարողացող, «մի քանի շիշ օդիով, մի քանի քաշ պլանով, մի քանի թթու դրած վարունգով» առիթներ նշող, քրեականացված, բայց զինված ադրբեջանցու դեմ անզեն կռված ու հաղթած հայ տղամարդիկ, «լևիից լևի մտնող լուսագողեր», դժվարություններից չարացած, ագրեսիվ հասարակություն: Իհարկե, այստեղ առկա է նաև հայրերի և որդիների ինդիվիդ, երբ հայրերը դրսևորում են ակնհայտ «բյառթու»<sup>3</sup> պահվածք, մինչդեռ որդիները անհանդուրժող են նման պահվածքի հանդեպ:

Եթե փորձենք համեմատել այս ստեղծագործությունը նախորդների հետ, ապա պետք է նշենք, որ այստեղ գույներն ավելի խտացված են, և, եթե ճիշտ ենք պատկերացնում այդ տարիները՝ մեր ծնողների, հարևանների, ծանոթ-բարեկամների պատմելով, խեղաթյուրելու աստիճան չափազանցված: Էլ ո՛ր մնացին անլույս տարիներին հարևանների միասնականության, իրար օգնելու պատրաստակամության, մեկ վառարանի շուրջ հավաքվելու, կարտոֆիլի «պլեճ» ուտելու և լոտո խաղալու պատմությունները:

Տեքստում հատկապես տպավորիչ են բռնության տեսարանների նկարագրությունները, պատկերավոր է խոսքը, ազդեցիկ և ապրված են զգացողությունները, վախերը: Գրականության տեսաբան Հայկ Յամբարձումյանը, վերլուծելով «Էդ գիշերը», ընդգծում է այս պատմվածքի նովելային բնույթը՝ փաստելով, որ կտրուկ անցումները նպաստում են պատմվածքի դրամատիզմին:

<sup>1</sup> Պետրոսյան Ն., Ռազմիկ Դավոյան. «Յամբերենք՝ տեսնենք», <http://kinoashkharh.am/2012/06/1309>:

<sup>2</sup> Եղիազարյան Կ., «Ի սկզբանե եր բա՛նն», թե՛..., <http://www.armworld.am/detail.php?paperid=3963&pageid=122680&lang:>

<sup>3</sup> Գաբրիելյան Ա., Նիկողոսյան Ա., «Զյառթուի կերպարը որպես անհանդուրժողականության ներկայացման միջոց արդի հայ արձակուրդ», Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ, Յավրուհրատ, 2017թ., <https://granish.org/quartui-kerpary/>:

Տեսաբանը գտնում է. «Նոր ու գարմանալիորեն կենդանի են Համբարձումի շենգավիթյան տրագիֆարսերը»<sup>1</sup>:

**Ա.Պաչյանի «Թափանցիկ շշերն»,** ըստ մեզ, այնքան էլ կապ չունի հետխորհրդային Հայաստանի հետ: Սա պատմություն է անելանելի իրավիճակների և հոգեկան ապրումների մասին: Այն մասին, թե ինչ է կատարվում, երբ չեն կարող օգնել ո՛չ բժիշկը, ո՛չ հոգևորականը, ո՛չ թաթուն տրված դեղահաբերը, ո՛չ աչք փակելը, երբ մեղադրանքներն անիմաստ են, երբ սիրում ես և ատում միաժամանակ..., երբ չկան լուծումներ:

Ինչ վերաբերվում է գեղարվեստական արժեքին, ապա «Թափանցիկ շշերը» համարվում է մեկ շնչով գրված ստեժագործություն<sup>2</sup>: Վ.Դանիելյանը, ներկայացնելով այս պատմվածքի լեզվաոճական, իմաստային յուրահատկությունները, անհատական ապրումների վերարտադրության «հմայքը», իրավացիորեն փաստում է, որ այս պատմվածքի վերլուծությունը չի կարելի տանել սոցիալական հարթություն<sup>3</sup>: Սա զգացողությունների տիպական ներկայացում է, որը ընթերցողը վերապրում է հերոսներից յուրաքանչյուրի հետ:

Ամբողջացնելով ուսումնասիրությունը՝ փորձենք անել որոշ ընդհանրացումներ՝ հիմք ընդունելով աշխատաքնի սկզբում առանձնացված խնդիրները:

- Ուսումնասիրության առարկա պատմվածքները ներկայացնում են հետխորհրդային Հայաստանի խիստ բացասական պատկեր: Այս Հայաստանում շատ են մուրացկանները, արվեստագետները գնահատված չեն, նրանցից շատերը զբաղվում են մուրացկանությամբ, չկան բարոյական հստակ չափանիշներ, երիտասարդները չունեն նպատակներ, պայքարելու հակված չեն, հիմնականում մեկնում են արտերկիր, բայց այնտեղ էլ առանձնապես անելիք չունեն, ապաստոցիալական վարք են դրսևորում, խոսում են ժարգոնով, օգտագործում են անպարկեշտ բառեր, հակված են թմրամոլության և հարբեցողության, հասարակությունը ագրեսիվ է:

- Սոցիալ-քաղաքական խնդիրներից անդրադարձ կա արտազնա աշխատանքի տարածվածությանը, երիտասարդության ոչ ուսումնաստենչ լինելուն, «քյառթուական» մշակույթի գերակայությանը, իշխանության որոշումներին հակառակվելու վախի մթնոլորտին, սոցիալապես անապահովների թվի ընդգծված գերակայությանը, ապաստոցիալական վարքի դրսևորումներին:

- Պետություն-քաղաքացի հարաբերություններին անդրադարձը այնքան էլ շատ չէ, բայց ընդհանուր առմամբ տպավորություն է ստեղծվում, որ պետությունն առանձնապես չի մտածում իր հասարակության և քաղաքացու մասին, և հասարակությունը գոյություն ունի մի տեսակ անկախ պետությունից: Առնչակցության միակ դրսևորումը թերևս պարտադրանք է զինվորականին՝ դուրս գալ սեփական ժողովրդի դեմ:

- Զննության առկած բոլոր պատմվածքներն էլ ունեն որոշակի գեղարվեստական արժեք. ստեղծում են կենդանի և իրական կերպարներ, առկա է ազդեցիկ և տպավորիչ խոսք, շատ են տիպական նկարագրությունները: Սրա շնորհիվ և պատճառով այս պատմվածքները, թերևս, ունակ են ազդելու ընթերցողի մտածողության և զգացողությունների վրա և կարող են մեծապես պայմանավորել ժամանակի մասին որոշակի պատկերացումներ:

<sup>1</sup> **Համբարձումյան Հ.**, Գեղարվեստական ժամանակի որոնումներում («18-33.արդի հայ արձակ» ակթոլոգիան), <http://www.grakantert.am/գեղարվեստական-ժամանակի-որոնումներում/>:

<sup>2</sup> **Հակոբյան Հ.**, Ամենացավոտ Բարձրությունը, <https://granish.org/painful-height/>:

<sup>3</sup> **Դանիելյան Վ.**, Երեք պատմություն, <https://granish.org/vahram-danielyan/>:



**Շուշան Խաչատրյան, Գալուստ Սարոյան  
ԱՆԿԱՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ԸՍՏ  
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄՎԱԾԵՆԵՐԻ**

**Բանալի բառեր՝** *հետխորհրդային Հայաստան, ժամանակակից գրականություն, պետություն, քաղաքացի, սոցիալ-քաղաքական խնդիրներ, գեղարվեստական արժեք*

Ժամանակի տարեգիրներն, ըստ էության, գրողները, լրագրողներն ու ֆիլմների հեղինակներն են: Եվ եթե հայոց պետականության անցյալն ու ներկան արժևորելու խնդիր ունենք, առաջին հերթին դա անում ենք հենց վերջինների ստեղծագործությունների միջոցով: Հոգվածում փորձել ենք վերլուծական հայացք գցել ժամանակակից մի քանի գրական գործերի կողմից անկախ Հայաստանի ներկայացմանը: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ժամանակակից գրականությունը կառուցում է հետխորհրդային Հայաստանի առավելապես բացասական կերպար՝ սոցիալ-քաղաքական բազմաթիվ խնդիրներով, պետություն-քաղաքացի խզված կապով, բայց նաև դա անում է կենդանի, իրական կերպարներ ստեղծելով, ազդեցիկ, տպավորիչ խոսքով, տիպական նկարագրություններով:

**Shushan Khachatryan, Galust Saroyan  
SOCIO-POLITICAL ISSUES OF INDEPENDENT ARMENIA BASED ON SHORT  
STORIES BY CONTEMPORARY WRITERS**

**Keywords:** *Post-Soviet Armenia, contemporary literature, state, citizen, socio-political issues, artistic merit*

Writers, journalists and film authors are, in fact, the chroniclers of our times. So, if we aim at evaluating the past and the present of the Armenian statehood, we should, first of all, do it through the works of the aforementioned people. In the paper, an attempt was made to analyze the representation of independent Armenia in a number of contemporary literary works. The study has shown that contemporary literature creates a mostly negative image of the Post-Soviet Armenia with numerous socio-political issues and a broken link between the state and the citizen. However, it also creates living and realistic characters, uses influential and impressive speech, as well as typical descriptions.

**Шушан Хачатрян, Галуст Сароян  
СОЦИАЛЬНО-ПОЛИТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ НЕЗАВИСИМОЙ АРМЕНИИ  
СОГЛАСНО РАССКАЗАМ СОВРЕМЕННЫХ ПИСАТЕЛЕЙ**

**Ключевые слова:** *постсоветская Армения, современная литература, государство, гражданин, социально-политические проблемы, художественная ценность*

Летописцами нашего времени, по сути, являются, писатели, журналисты, авторы фильмов. И если перед нами встает задача оценки прошлого и настоящего армянской государственности, то мы делаем это именно посредством их произведений. В статье мы попытались проанализировать, как независимая Армения представлена в нескольких современных литературных произведениях. Изучение показало, что современная литература чаще всего выстраивает отрицательный образ Советской Армении – со множеством социально-политических проблем, нарушенной связью между государством и гражданином, однако при этом создает живые, реальные образы посредством впечатляющей речи, типических описаний.

**«ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՎ «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ 1960-ԱՎԱՆ ԹԹ.  
ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՄԱՍՈՒՆՈՒՄ**

**ԳԱՅԱՆԵ ԱՎԱԳՅԱԼ**

Հայոց պետականության մասին սփյուռքահայության պատկերացումների գունապնակը կարելի է տեսնել Սփյուռքի մամուլի էջերում: Լիբանանում լույս տեսնող Հայ հեղափոխական դաշնակցության «Ազդակ», Սոցիալ դեմոկրատ հնչակյան կուսակցության «Արարատ» և Ռամկավար ազատական կուսակցության «Չարթունք» պարբերականները 1960-ական թվականներին հաճախ են քննարկում հայրենիքի գաղափարն ինքնության համատեքստում՝ ազգային պատկանելության տարածքային չափում տալով: Սակայն ինդիքը հանգում է «հայրենիք» և «պետություն» գաղափարների երկփեղկման: Թերթերի հրապարակումներում կարելի է տեսնել «հայրենիքի» թե՛ վերացարկված, թե՛ առարկայական ընկալումները Սփյուռքում: Կախված կուսակցության գաղափարախոսությունից՝ տարբեր կերպավորում է ստանում նաև «հայկական պետության» գաղափարը:

Թերթերը, ջանալով մատնանշել հայրենիքի գործոնը՝ որպես աշխարհասփյուռ հայության համար հայկական ինքնության կողմնորոշիչ, հանգեցնում են ինքնության ընկալման առավել խճողմանը:

**Հայաստանի Առաջին Հանրապետությունը՝ հայոց պետություն՞ն,  
թե՞ ՅՅԴ «բռնատիրություն»**

Հայոց պետականության մասին քննարկումներն «Ազդակը» հյուսում է Հայաստանի Առաջին Հանրապետության շուրջ<sup>1</sup>, որը թերթի համար իրական հայրենիք և իրական պետություն է: Մինչդեռ «Արարատի» և «Չարթունքի» քննարկումներում այն բարեհաճությամբ չի ընդունվում երկու կուսակցությունների կողմից: Ընդհակառակը, 1918-20թթ. ներկայացվում են թշվառության, սովի, ահաբեկչության, անօրինականության շեշտադրմամբ և փաստական նյութերն ու ժամանակակիցների վկայությունները մեջբերվում են՝ ՅՅԴ-ին պախարակելու համար<sup>2</sup>: Փոխարենը փառաբանվում է Հայաստանի խորհրդայնացումը<sup>3</sup>: Եթե «Ազդակի» և ՅՅԴ գաղափարախոսական հետևորդների համար հայոց պետության ծննդյան տարեթիվը 1918թ. մայիսի 28-ն է, ապա «Արարատի» ու «Չարթունքի» համար՝ 1920թ. նոյեմբերի 29-ը:

<sup>1</sup> Տե՛ս **Տոնյան Ա.**, 1918-1968 Ազատ Հայաստանի Հանրապետության շրջանին կատարուած նուաճումները, Ազդակ, 1968, 3 մայիսի, թիվ 49, 8 մայիսի, թիվ 53, 22 մայիսի, թիվ 65:

<sup>2</sup> «...դաշնակցական իշխանութեան շրջանին 1918էն 1920, Հայաստան անսահման, ողբերգական չափերով ուներ թշուառութիւն, համաճարակ, սով, անիշխանութիւն, եւ ահաբեկչական բռնակալութիւն: Բայց չունէր տարրական «ազատութիւն»...» (**Անդրեասեան Ա.**, Հայկական դատին նոր հանգրուանը, «Չարթունք», 1967թ., 25 օգոստոսի, թիվ 275): «Հնչակեան Կուսակցութիւնը 1920-ի Մայիսի 1-ին, իր սեփական դրօշով պահանջած է անարդար կարգերուն վերացուիլը Արարատեան Հանրապետութեան վարիչներէն» (**Խմբ.**, Հայաստանի անկախութիւնը, Արարատ, 1968, 30 նոյեմբերի, թիվ 17):

<sup>3</sup> «Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատումը ֆիզիկական ի սպառ բնաջնջման վտանգի առջև կանգնած հայ ժողովրդի փրկութեան միակ ճանապարհն էր» («Երեւանի 2750ամեակի հանդիսութիւնները», Չարթունք, 1968, 23 հոկտեմբերի, թիվ 23): Տե՛ս նաև «Փրկութեան լաստը», Արարատ, 1967, 6 դեկտեմբերի, թիվ 17, «Փա՛ռք նոյեմբեր 22-ին եւ նոյեմբեր 29-ի անկախութեանց», Արարատ, 1967, 7 դեկտեմբերի, թիվ 18 և 20 դեկտեմբերի, թիվ 29:

## Խորհրդային Հայաստանը՝ հայրենիք-պետություն սահմանագծին

«Չարթոնքն» ու «Արարատը» «հայրենիք» ասելով առաջին հերթին նկատի ունեն խորհրդային Հայաստանը՝ խորհրդային վարչակարգով, առկա սահմաններով հայկական հանրապետությունը: Այսինքն՝ «հայրենիք» և «պետություն» հասկացությունները նույնանում են<sup>1</sup>: «Ազդակի» համար նույնպես խորհրդային Հայաստանը հայրենիք է<sup>2</sup>, բայց միայն բովանդակությամբ, իսկ որպես հայկական պետություն՝ ընկալվում է ընդգծված վերապահումով՝ հաշվի առնելով ԽՍՀՄ-ից կախված հանրապետություն լինելը:

Խորհրդային Հայաստանի մասին հրապարակումները թերթերը կառուցում են պատկերացումների վերոնշյալ բևեռացումներին համապատասխան:

«Արարատն» ու «Չարթոնքը» խորհրդային Հայաստան հայրենիք-պետությունը ներկայացնում են՝ փառաբանելով արդյունաբերական, շինարարական, սոցիալ-տնտեսական, մշակութային զարթոնքը: Հատկապես «Արարատում» երբեմն գեղարվեստականացման է հասնում, օրինակ, հանրապետության տարբեր քաղաքներում արդյունաբերության կամ շինարարության զարգացման նկարագրությունը<sup>3</sup>: Այդուհանդերձ, հուզական մանրամասների ներկայացումը վկայում է թերթերի անկեղծ ցանկությունը՝ շոշափելի, իրական դարձնելու հայրենիքի պատկերը Սփյուռքի ընթերցողների համար:

Դրա հետ մեկտեղ նկատելի է հատկապես «Արարատի», նաև «Չարթոնքի» ձգտումը՝ Սփյուռքում ընդունելի դարձնել սոցիալիզմի գաղափարախոսությունը, մասամբ նաև ԽՍՀՄ քաղաքացու, խորհրդահայի ինքնությունը:

Երկու կուսակցությունների պաշտոնաթերթերի այս դիրքորոշման հիմքում առավելապես ձգտումն է կապ ստեղծելու Սփյուռքի և խորհրդային Հայաստանի հայի ինքնությունների միջև՝ աշխարհասփյուռ հայությանն ինքնաճանաչման կողմնորոշիչ տալով<sup>4</sup>:

Ի տարբերություն 2 թերթերի՝ ՀՅԴ «Ազդակը» խորհրդային Հայաստանը հայրենիք է ընկալում՝ զատորոշելով վարչակարգից: Դաշնակցական պարբերականի մատուցած իրականության մեջ հայրենիքն ու խորհրդային Հայաստան պետությունը՝ որպես հայկական պետականություն, չեն նույնանում<sup>5</sup>: Այդուհանդերձ, հրապարակումներում պահպանվում է Հայաստան հայրենիքի՝ որպես հայկական

<sup>1</sup> Դա կարելի է տեսնել հետևյալ մտքում. «Նոյեմբերեան Հայաստանը հոգեփոխեց հայ մարդը: Գաղթականին ու հալածականին տուաւ հայրենիք ու պետութիւն ունեցողի գիտակցութիւն» («Հայուն արեւագալը», Արարատ, 1967, 7 դեկտեմբերի, թիվ 18):

<sup>2</sup> «Այսօր՝ խորհրդային է Հայաստանը ու դա՛րձեալ կը սիրենք զայն, իր տառապանքով ու թռչնքով: Կը սիրենք՝ որովհետեւ մեր հայրենիքն է, միա՛ կը՝ որ ունինք» (**Պիլեզիկնեան Ա.**, «Հոգեկան հայրենիք...», Ազդակ, 1963, 24 հուլիսի, թիվ 119):

<sup>3</sup> Տե՛ս **Ջամփոլարեան Ի.**, Լոյսերը հայկական լեռներում, Արարատ, 1967, 16 օգոստոսի, թիվ 235, **Սեփոնեան Մ.**, խորհրդային Հայաստանը, Արարատ, 1967, 12 մայիսի, թիվ 153, «Հայկական Հանրապետութեան տնտեսական ու ընկերային հրաշքը», Արարատ, 1967, 8 հունիսի, թիվ 176, **Առաքելեան Ա.**, Հայաստանի ժողովրդական տնտեսութեան զարգացումը 1920-1964 թուականներին, Չարթոնք, 1965, 6 փետրվարի, թիվ 109:

<sup>4</sup> «Հայապահպանման այդ բախտորոշ պայթարի մեջ՝ կենսունակ դերը վիճակուած է, անկասկած, հայրենիք-սփիւռք հոգեկան մշակութային կապերու պահպանման ու զարգացման» (**Ահարոնեան Գ.**, Աւելի եւս սերտացնել հայրենիք-սփիւռք մշակութային կապերը, Չարթոնք, 1968, 15 նոյեմբերի, թիվ 43):

<sup>5</sup> «...մենք կը՝ մերժենք «խորհրդային Հայաստան» որակումը՝ Հայաստանը ըմբռնելով իր առանձին ու ինքարտայայտիչ իմաստովը գերիվեր ու անջատ՝ խորհրդային, դաշնակցական, ռամկավար կամ այլ ձեւի իշխանութենէ մը» («Հայրենասերն ու «Հայաստանասէրը», Ազդակ, 1963, 26 հունիսի, թիվ 121): «Հայրենիքը հոգին է, վարչաձեւը մարմինն է: ...Հայրենիքը ընդդիմադիրներ եւ հակառակորդներ չունի, բայց վարչաձեւերը ունին» (**Թաշեան Բ.**, Հայրենիք եւ վարչաձեւ, Ազդակ, 1968, 9 հունվարի, թիվ 261):

հողի հանդեպ ջերմությունն ու հոգատարությունը<sup>1</sup>, հատկապես՝ գիտական և մշակութային նվաճումների մասին նյութերում:

Իսկ երբ հերթը հասնում է պետական կառավարմանը, անթաքույց մատնանշվում են թերությունները, որոնց համար պատասխանատվության սլաքներն ուղղվում են խորհրդային ղեկավարությանը: Օրինակ՝ հանրապետության գյուղերի շինարարության աշխատանքներում՝ չարաշահումներ, ծանոթի միջոցով պաշտոնի ձեռքբերում, պլանները մի կերպ կատարելու արատ, դասագրքերում պատմության աղավաղում, կրթության ոլորտի թերություններ և այլն<sup>2</sup>:

Ի հակադրություն «Արարատի» և «Չարթունքի», որոնք հոժարակամ էին Սփյուռքի և Հայաստանի հայության կապի մեջ խորհրդային գաղափարախոսության ներթափանցման հարցում՝ «Ազդակն» այդ միջամտության հակառակորդն է:

*«Համայնավարները հայրենասիրութիւն ասելով հասկանում են սովետական հայրենասիրութիւնը, իսկ սովետական հայրենասիրութիւնը իր մէջ ընդգրկում է բազմազգ ազգերի մի սեր որ ոչ թէ մի հայրենիքի հանդեպ տաճուած զգացում է, այլ մի «Հայրենիքի» որի ժողովուրդը միաձուլել է, որի հողը որոշ չէ թէ որ ազգին է պատկանում...Սփիւռքահայը սիրում է իր հարազատ հայրենիքը՝ Հայաստանը և նրա արդար տերը՝ այնտեղ բնակւով հայ ժողովուրդը...Ճշմարտութիւնը աղաւաղում են համայնավարները ասելով թէ սփիւռքահայը սիրում է սովետական հայրենիքը. սո՛ւտ է, բացարձակ սո՛ւտ»<sup>3</sup>, գրում է «Ազդակը»:*

### Հայոց պետականության ապագան

Առաջին Հանրապետությունից հետո հայոց պետականության մասին պատկերացումներն «Ազդակը» հյուսում է այն միացյալ, ազատ, անկախ ու նաև ամբողջական Հայաստանի շուրջ<sup>4</sup>, որն, ըստ թերթի, իրականություն է դառնալու ապագայում՝ հայոց հողային դատի լուծմամբ: ՀՀԴ պաշտոնաթերթում ուրվագծվում է հետևյալ գաղափարը. **հողերի վերադարձ իրական տիրոջը՝ հային**, այդ թվում՝ Հայաստանի ազատագրում խորհրդային կարգերից: Ընկարկումներից, ըստ էության, խորհրդային Հայաստանը դուրս է մնում՝ դաշնակցական հատվածի համար չլինելով հայկական անկախ պետականության, ազատ հայրենիքի մոդել<sup>5</sup>:

Հայկական պետականության ապագան ՌԱԿ և ՍԴՀԿ մամուլի օրգանները կապում են խորհրդային Միության բարգավաճման հետ և Հայաստանը պատկերացնում էՍՀՄ կազմում: Ինչ վերաբերում է հայկական հողերին, ապա «Արարատն» ու «Չարթունքը» հարցի լուծումը տեսնում են խորհրդային

<sup>1</sup> Թերթը հավատում է, որ խորհրդային Հայաստանում կարող է մի օր ազատություն հաստատվել: Իսկ տևտեսական պատճառներով հայրենիքը լքելը «դավաճանություն» է որակում (Ս. Պ., Ազատութիւնը՝ հո՛ւ ն... Ազդակ 1968, 15 հուլիսի, թիվ 110):

<sup>2</sup> **Վրոյր**, Հայաստանի գիւղերը, Ազդակ, 1968, 27 սեպտեմբերի, թիվ 174, **Վրոյր**, Զիչ մը ամեն բակի մասին, Ազդակ 1968, 13 մարտի, թիվ 8, **Սարոյեան Ա.**, խորհրդածութիւններ՝ անկարելի դասագրքի մը մասին, Ազդակ 1968, 5 մարտի, թիվ 1, **Վրոյր**, Երեսանի մասին, Ազդակ 1968, 1 ապրիլի թիվ 24, **Վրոյր**, Տունկը հարազատ հողին վրայ պետք է մշակուի, Ազդակ 1967, 5 հոկտեմբերի, թիվ 182:

<sup>3</sup> **Ազատ Ա.**, Հայաստանի եւ Սփիւռքի հայութեան փոխ-յարաբերութեան մասին, «Ազդակ», 1963, 22 հուլիսի, թիվ 117:

<sup>4</sup> «Հայ ժողովուրդը իր հայրենիքը կ'որոնէ: Ամբողջական հայրենիքը, ուր կրնայ մեկտեղել ամբողջական հայ ժողովուրդը...Եւ այդ հայրենիքը Ամենայն Հայոց Հայրենիքն է, Ազատ ու Անկախ Հայրենիքը» (Սասունի Կ., «Հայրենիք կ'ուզեմ», Ազդակ, 1963, 24 հունվարի, թիվ 272):

<sup>5</sup> «Հայաստանի խորհրդայնացումը անշուշտ պարտադրանք մըն էր մեզի համար, թուրքեստվետ սիրալիր գործակցութեան այդ օրերուն...» (Խմբագրական, Ազատատենչ հայութիւնը, Ազդակ, 1963, փետրվարի 18, թիվ 293): «Սակայն, հայ ժողովուրդը իր մայր երկրի մեջ այսօր գերի ազգ մըն է սովետական օտար բռնապետութեան ձեռքին» (Դարբինեան Ռ., «Հայ դատը այսօր», Ազդակ, 1963, օգոստոսի 8, թիվ 132):

Հայաստանին դրանց միացման և խորհրդային հայրենիքի ամբողջական տարածքում աշխարհասփյուռ հայության վերամիավորման ճանապարհով<sup>1</sup>: Այսինքն՝ այս պարագայում գործում է **հայերի վերադարձ հայրենի հողին** քանաձևը:

### Ամփոփում

Սփյուռքի կենտրոն համարվող Լիբանանի հայ համայնքի մամուլում հայրենիքի և պետության մասին կարծիքների այս բազմազանությունը վկայում է, որ քաղաքական ուժերն, ըստ էության, ձգտում են ձևավորել քաղաքական-գաղափարական այս կամ այն հայացքներն ունեցող համայնք՝ յուրաքանչյուրն օգտագործելով սեփական գաղափարախոսությանը ծառայող մամուլի հնարավորությունները: Նման պայմաններում անհնար է դառնում միասնական ինքնության գաղափարը համայնքում ընկալելի և գործառնական դարձնելու հնարավորությունը: Հայկական ինքնությունը բնորոշող առանցքների, տվյալ դեպքում հայրենիքի, պետության հարցում միասնական մոտեցման բացակայությունը համայնքի ներսում և Սփյուռքում խարխլում է ինքնության ներդաշնակության մասին պատկերացումներն ու ձգտումները:

### Գայանե Ավագյան «ՀԱՅՐԵՆԻՔ» ԵՎ «ՊԵՏՈՒԹՅՈՒՆ» ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ 1960-ԱՎԱՆ ԹԹ. ԼԻԲԱՆԱՆԱԶԱՅ ՄԱՍՈՒՆՈՒՄ

**Բանալի բառեր՝ մամուլ, հայրենիք, պետություն, «Ազգակ», «Չարթոնք», «Արարատ»**

Հոդվածում ներկայացված են հայոց պետականության և հայրենիքի մասին քննարկումները լիբանանահայ մամուլում 1960-ական թվականներին: Հայ ավանդական 3 կուսակցություններին պատկանող մամուլի օրգաններում երկու գաղափարները, ներկայանալով որպես աշխարհասփյուռ հայության համար հայկական ինքնության կողմնորոշիչ, կուսակցական մոտեցումներից ելնելով՝ տարբեր կերպավորում են ստանում:

Հայկական ինքնությունը բնորոշող այս առանցքների հարցում միասնական մոտեցման բացակայությունը Լիբանանի համայնքի ներսում և Սփյուռքում խարխլում է ընթերցողների՝ ինքնության ներդաշնակության մասին պատկերացումներն ու ձգտումները:

<sup>1</sup> «Արեւմտահայ հողամասերուն վերադարձը հայ ժողովուրդին եւ խորհրդային Հայաստանի միացումով կերտուիլը մեր պատմական հայրենիքին» (Անդրեասեան Ա., Հայկական դատին նոր հանգրուանը, Չարթոնք, 1967 օգոստոսի 12, թիվ 264 ); «Ապագայ ամբողջական Հայաստանի կորիզ կ' ընդունինք ներկայ հայկական հանրապետութիւնը, կը պաշտպանենք գայն, կը քաջալերենք հայրենադարձը» (Խմբ., Լաւագոյն հաւատարմութիւնը, Արարատ, 1967, ապրիլի 22, թիվ 138):

**Gayane Avagyan**  
**THE CONCEPTS "HOMELAND" AND "STATE"**  
**IN THE ARMENIAN PRESS OF LEBANON IN THE 1960S**

**Keywords:** *Press, Homeland, state, "Azdak", "Zartonk", "Ararat"*

The debates about the Armenian statehood and Homeland in the Armenian press of Lebanon in the 1960s are introduced in the article. The two concepts, which appeared as orientations for Armenian identity of the Diaspora Armenians, according to the partial approaches, got different shapes in the newspapers.

The lack of a unified approach within the Lebanese community and the Diaspora to the issue of these two foundations, characterizing Armenian identity, generally undermines readers' perceptions of the harmony of national identity.

**Գայնօ Աւագյան**  
**ПОНЯТИЯ РОДИНЫ И ГОСУДАРСТВА В**  
**АРМЯНСКОЙ ПРЕССЕ ЛИВАНА 60-Х ГОДОВ 20-ГО ВЕКА**

**Ключевые слова:** *пресса, Родина, государство, «Аздак», «Зартонк», «Арарат»*

В статье представлены дискуссии об армянской государственности и Родине в армянской прессе Ливана в 60-х годах 20-го века. В газетах армянских традиционных партий эти два понятия, которые представлены как ориентир армянской идентичности для армян Диаспоры, трактуются по-разному, исходя из партийных подходов.

Отсутствие единого подхода внутри ливанской общины и Диаспоре в вопросе двух этих основ, характеризующих армянскую идентичность, в целом подрывает у читателей представления, связанные с гармонией национальной идентичности.

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԻ ԳՐԱԿԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՎ ԱԴԻԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՍՈՒՆՈՒՄ

### ԱՆՈՒՇ ԴՈՒՆՈՒՄԱՆՅԱՆ

Հեռահաղորդակցությունն՝ ընդհանրապես և ՉԼՍ-ները՝ մասնավորապես մշտապես եղել և շարունակում են լինել զինված հակամարտությունների ակտիվ «մասնակիցը», լրագրողները՝ հակամարտության «երրորդ» կողմ: Մեր օրերում այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են «տեղեկատվական պատերազմ», «տեղեկատվական անվտանգություն» «մեդիաագրեսիա» և այլն, ապացուցում են, ոչ միայն մասս-մեդիա-հակամարտություն սերտ կապի, այլև այն մասին, որ ներկայիս զինված հակամարտություններում պատերազմները տեղեկատվական դաշտում պակաս կարևոր չեն, քան ռազմի դաշտում: «Ժամանակակից պատերազմներն առաջին հերթին քաղաքական զինված ցույցեր են: Ցուցադրական կողմը նրանցում պակաս կարևոր չէ, քան կարող է լինել բուն զենքի կիրառումը: Իսկ լրագրողները (որ վաղուց համարվում են հակամարտության կողմ) դիրքորոշումից, այսինքն՝ նրանից, թե ինչ տեսակի լրատվության են հակված օժանդակելու, կախված է հակամարտության ելքը»<sup>1</sup>, - նկատում է Դ. Շուրխալոն:

Չկարգավորված հակամարտության պայմաններում ապրող հայկական երկու հանրապետությունները տեղեկատվական մշտական պատերազմի մեջ են հակամարտության մյուս կողմի՝ հակահայկական քարոզչությունն իրականացնող Ադրբեյջանի հետ, որտեղ ցանկացած բնույթի տեղեկատվություն ստանում է քաղաքական նրբերանգներ: Կողմերի միջև տեղեկատվա-հոգեբանական գործընթացները զազաթնակետին հասան «Ապրիլյան քառօրյա պատերազմ» անվանումը ստացած (երբ 2016 թվականի ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը արցախա-ադրբեյջանական շփման գծի ողջ երկայնքով ձեռնարկվել էր բացահայտ հարձակողական գործողություններ՝ հրետանու, գրահատեխնիկայի և ավիացիայի ներգրավմամբ<sup>2</sup>) ռազմագործողությունների և դրան հաջորդած օրերին: Ակնհայտ է, որ միայն Ապրիլյան ռազմագործողությունների սանձազերծմամբ ադրբեյջանական քարոզչամեթոդական կարող էր կեղծ տեղեկատվական հոսքերով շեղել սեփական ժողովրդին ներքին լարվածությունից, ուստի հենց «ապատեղակատվության կիրառմամբ հասարակական կարծիքի ձևավորումը դարձավ տեղեկատվական պատերազմ մղելու հիմնական միջոցը»<sup>3</sup>:

Ուսումնասիրելով հակամարտող կողմերի պաշտոնական հրապարակումները հանրային կարծիք ձևավորող գերակա առցանց (մասնավորապես <http://nkrmil.am>, <http://haqqin.az>, <http://day.az>, <http://trend.az>, <http://vesti.az>) լրատվամիջոցներում (2016 թվականի ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում)՝ նպատակ ունենք ներկայացնելու Ապրիլյան ռազմագործողությունների օրերին հայկական և ադրբեյջանական պաշտոնական լրահոսում հայկական դիրքերի գրավման վերաբերյալ հրապարակումների իսկությունը՝ Ադրբեյջանի հակայիայկական քարոզչության համատեքստում:

Այսպես, հայկական մի քանի դիրքերի և կամ առանձին տարածքների գրավման մասին տեղեկությունները, որպես օրինաչափություն, ամենաճացող վերնագրերի տակ լայն տարածում էին գտնում ադրբեյջանական պաշտոնական և ոչ պաշտոնական մամուլում, սոցիալական ցանցերում: Այս մասին առաջին

<sup>1</sup> Տե՛ս Шурхало Д., Как работает пропаганда (роль СМИ в военно-политических конфликтах современности) (<http://rodkom.com.ua/kak-rabotaet-propaganda-rol-smi-v-voenno-politicheskikh-konfliktah-sovremennosti/>)

<sup>2</sup> <http://nkrmil.am/news/view/198>

<sup>3</sup> Նազարյան Ա., Տեղեկատվական պատերազմներ և դիվանագիտություն, Երևան, 2017թ., էջ 73:

պաշտոնական հաղորդագրությունը «Ջայաստանի ՊՆ-ն հայտնում է 5 բարձունքի կորուստի մասին» վերնագրով<sup>1</sup> ոչ պատահաբար հրապարակեց Haqqin.az-ը: Ի ապացույց ասվածի, նույն լրատվամիջոցը հաջորդաբար հրապարակեց անհայտ ծագման «հայկական» լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի օգտատերերի կարծիքներ, մասնավորապես հայկական տարածքների գրավումն «ապացուցող» մեդիանյութեր:

Միջանկյալ նշենք, որ ադրբեջանական կողմը նախապատրաստված լինելով դիմակայության նաև տեղեկատվական դաշտում ճիշտ էր յուրացրել տեղեկատվական գրոհի վարելու տեսական դրույթները՝ ընդլայնելով մուլտիմեդիա նյութերի օգտագործումը: Գաղտնիք չէ, որ վերջիններիս ազդեցությունը հանրային կարծիքի վրա ավելի մեծ է, քան կարող է լինել նույնի տեքստային տարբերակը. մուլտիմեդիա միջավայրը օգնում է գրավել լսարանի ուշադրությունը՝ ավելի ընկալելի դարձնելով տեղեկատվությունը:

Այսպես, հղում անելով սեփական երկրի ՊՆ-ին, «Ադրբեջանական բանակը ազատագրել է մի քանի օկուպացված տարածքներ» հրապարակմամբ հանդես եկավ Vesti.az-ը. «Չակահարվածի արդյունքում դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում ճեղքվել է հայկական կողմի պաշտպանությունը: Ազատագրվել են ռազմավարական նշանակության մի քանի բարձունք և բնակավայր. ամբողջությամբ ադրբեջանական բանակի վերահսկողության տակ են անցել Թալիշ գյուղի շրջակայքը..., Ֆիզուլիի ուղղությամբ ազատագրվել է «Լելե-Թեփե» բարձունքը...»<sup>2</sup>:

Ուշագրավ մի փաստ արձանագրվեց ԱՅ ՊՆ մամուլի հաղորդագրություններից մեկում: Վերոնշյալ բնույթի նյութերի տարածումից քիչ անց, իբրև «երկրորդական» տեղեկատվություն հայտարարվում է «կորուստների» մասին: Կորուստներ ասվածը, սակայն, բազմանշանակ է և կարելի է ընկալել սեփական ակնկալիքների կամ ցանկությունների շրջանակից ոչ դուրս. «Ցավոք, թեժ մարտերի ընթացքում կորուստներ է ունեցել նաև դարաբաղյան կողմը, որի մասին լրացուցիչ տեղեկություններ կհաղորդվեն ավելի ուշ»<sup>3</sup>: Սակայն շուտով՝ ժամը 11:35-ին տարածում է հաղորդագրություն այն մասին, թե «ՊԲ ստորաբաժանումները անցել են հակազդիչ գործողությունների և Թալիշի ուղղությամբ տիրել նախօրյակին ադրբեջանական ուժերի կողմից գրավված մարտավարական կարևոր նշանակության հենակետին»<sup>4</sup>: Եվ միայն նույն օրը (ապրիլի 3-ին) 16:25-ին, այնուամենայնիվ, հայկական կողմն ընդունում և հաստատում է ապրիլի 2-ին Թալիշի շրջանում կորցրած մեկ հենակետի փաստը, որի վերահսկողությունն իր ձեռքն է վերցրել նախօրեին (այս հայտարարությունները ադրբեջանական պաշտոնական մամուլի կողմից անարձագանք են մնում):

Տեղին է նշել նաև այն, որ նույն օրը ԱՅ նախագահ Բակո Սահակյանն Արցախում գտնվող հայաստանյան լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հայտարարում է դիրքերի ամբողջական վերադարձման մասին<sup>5</sup>, որին, սակայն, հետագայում անդրադաժ չի կատարվում: Իսկ ահա ադրբեջանական կողմը կարելի է ասել հաստատում է վերոնշյալը սեփական քարոզչության դիրքերից՝ խոսք բացելով նաև հայկական կողմի կորուստների մասին. «նախօրեին հայկական կողմն օկուպացված տարածքներում ներգրավել է լրացուցիչ ռազմական ուժ՝ փորձելով վերադարձնել Ադրբեջանի կողմից

<sup>1</sup> <https://haqqin.az/news/67155>

<sup>2</sup> <http://www.vesti.az/armiya/azerbajdzhanskaya-armiya-osvobodila-ot-okkupantov-neskolko-naseleennykh-punktov-obnovleno-287869>

<sup>3</sup> <http://nkrml.am/news/view/194>

<sup>4</sup> <http://nkrml.am/news/view/190>

<sup>5</sup> <http://yerkirmedia.am/emergency/bako-sahakyan-martakan-dirqsahman/>



ազատագրված տարածքները: Հայկական կողմի փորձերը, սակայն, ձախողվել են՝ արդյունքում կրելով մարդկային և տեխնիկական մեծաքանակ կորուստներ»<sup>1</sup>: Իբրև ասվածի ապացույց, ադրբեջանական մամուլը շրջանառության մեջ դրեց ինչպես հայկական որոշ տարածքներ իրենց վերահսկողությանտակ առնելու<sup>2</sup>, այնպես էլ նույն մարտերում հայկական կողմի տված կենդանի ուժի և զինտեխնիկայի<sup>3</sup> մասին պատմող ռեպորտաժներ առաջնագծից:

Այսպիսի հաղորդագրությունները և դրանց հիման վրա ծայրահեղացված լուրերը նորություն չէին, ինչպես և նորություն չէին կարող լինել գրավյալ տարածքների մասին տասնյակ հաղորդումներին հետևած երկրի նախագահի, ԱԳՆ և ՊՆ ղեկավարների մակարդակով պաշտոնական հայտարարություններն այն մասին, թե սահմանային լարվածության պատճառը «հայկական զինված ուժերի առկայությունն է ադրբեջանական օկուպացված տարածքներում»<sup>4</sup> կամ «Ադրբեջանի զինվորներն իրենց սրբազան պարտքն են կատարում»<sup>5</sup> և «Եթե հայոց զինվորը չի ցանկանում զոհվել, թող հեռանա ադրբեջանական հողերից»<sup>6</sup>, նույնիսկ ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունների և կոչերի տրանսֆորմացումն ու համապատասխանեցումը ադրբեջանական ագիտարույթի սկզբունքներին և զաղափարախոսությանը: Անցում կատարելով հայկական կողմի՝ ադրբեջանական խաղաղ բնակավայրերը հրետակոծելու վարքագծի դրսևորումներին՝ պաշտոնական աղբյուրներն այն ներկայացվեց ոչ այլ ինչ, քան ռազմի դաշտում պարտություններ կրելու և պարբերական ձախողումների արդյունքում առաջացած ինքնապաշտպանական ագրեսիա: Հայկական կողմը տևական ժամանակ չարձագանքեց ադրբեջանական քարոզամեթոդային նմանօրինակ սադրանքներին: Միայն այն բանից հետո, երբ Ադրբեջանի ՊՆ-ն սպառնաց, թե կարող է հարվածներ հասցնել Ստեփանակերտին<sup>7</sup>, ԱՀ ՊՆ-ն հայտարարեց, որ հավատարիմ է իր որդեգրած մարտավարությանը և երբեք քաղաքացիական բնակավայրերի ուղղությամբ կրակ չի վարում, «այնինչ ադրբեջանական կողմը, բացի Մարտակերտի և շրջակա գյուղերի հրետակոծությունից, արկակոծել է նաև Մարտունի բնակավայրը»<sup>8</sup>: Ինչ վերաբերում է Ադրբեջանի ՊՆ մամուլի խոսնակի՝ Ստեփանակերտի ուղղությամբ հարվածներ հասցնելու հայտարարությանը, ապա ԱՀ ՊՆ-ն այն որակեց Ադրբեջանի ռազմական ղեկավարության կողմից արված անհավասարակշիռ հայտարարություն, ապա «Հասանովին և նրա «գերագույնին» զգուշացրեց՝ «նման զարգացումների դեպքում արձագանքը լինելու է անհամաչափ և ավելի ցավոտ»<sup>9</sup>:

Այսպիսով, ուսումնասիրելով 2016 թվականի ապրիլի 2-6-ն ընկած ժամանակահատվածում արցախյան և ադրբեջանական պաշտոնական հրապատարկումները, նկատում ենք, որ ռազմական գործողություններին զուգընթաց (սաև դրանից հետո) ներքին լսարանում ադրբեջանական տեղեկատվաքարոզչության գերնպատակը ուշադրության շեղման միջոցով հանրային մտքի և կարծիքի վերահսկողությունն էր, մյուս կողմից հայկական կողմի՝ հակառակորդի հնարավորությունները չթերագնահատելով հանդերձ, ամենատարբեր մակարդակներով զգուշացումները, թե մարտական կարողությունների

<sup>1</sup> <https://haqqin.az/news/67217>

<sup>2</sup> <https://www.youtube.com/watch?v=7Ltj8dIqBE>

<sup>3</sup> [https://www.youtube.com/watch?v=UwM\\_1Sd6qRc](https://www.youtube.com/watch?v=UwM_1Sd6qRc)

<sup>4</sup> <https://www.trend.az/azerbaijan/politics/2513820.html>

<sup>5</sup> <https://haqqin.az/news/67313>

<sup>6</sup> <https://www.trend.az/azerbaijan/karabakh/2514015.html>

<sup>7</sup> <https://www.trend.az/azerbaijan/politics/2514713.html>

<sup>8</sup> <http://nkrml.am/news/view/177>

<sup>9</sup> <http://nkrml.am/news/view/182>

գնահատականը տրվում է խրամատում, այլ ոչ թե բարձրագույն հայտարարություններով:

**Անուշ Դոլուխանյան**  
**ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԻ ԳՐԱՎՄԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԵՎ**  
**ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

*Բանալի բառեր՝ Ապրիլյան ռազմագործողություններ, մամուլի հաղորդագրություն, հայկական դիրքերի գրավում*

Հետազոտության թիրախ ընտրելով չկարգավորված հակամարտության պայմաններում ապրող հայկական երկու հանրապետությունների և Ադրբեջանի հանրային կարծիք ձևավորող գերակա առցանց լրատվամիջոցները՝ ներկայացել ենք Ապրիլյան ռազմագործողությունների օրերին կողմերի պաշտոնական լրահոսում հայկական դիրքերի գրավման վերաբերյալ հրապարակումների երկվությունը՝ Ադրբեջանի հակայիայական քարոզչության համատեքստում:

**Anush Dolukhanyan**  
**ILLUSTRATION OF THE CAPTURE OF ARMENIAN POSITIONS IN**  
**ARTSAKHI AND AZERBAIJANI OFFICIAL PRESS**

*Key words: military activities of April, press message, the capture of Armenian positions*

By choosing the leading online media which forms the public opinion of the two Armenian republics living in an unsettled conflict conditions and Azerbaijan as our research target, we aim to present the duality of publications on the capture of the Armenian positions in the official news broadcasting of the sides during the military events in April in the context of anti-Armenian lobby of Azerbaijan.

**Ануш Долуханян**  
**ОСВЕЩЕНИЕ ЗАХВАТА АРМЯНСКИХ ПОЗИЦИЙ В АРЦАХСКОЙ И**  
**АЗЕРБАЙДЖАНСКОЙ ОФИЦАЛЬНОЙ ПРЕССЕ**

*Ключевые слова: Апрельские военные действия, пресс-релиз, захват армянских позиций*

Выбрав в качестве цели исследования ведущие интернет-СМИ пребывающих в условиях неурегулированного конфликта двух армянских государств и Азербайджана, мы на примере Апрельских военных действий представили двойственность публикаций в официальных СМИ сторон конфликта о захвате армянских позиций в контексте антиармянской пропаганды Азербайджана.

**ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**  
**PEDAGOGY, PSYCHOLOGY**  
**ПЕДАГОГИКА, ПСИХОЛОГИЯ**



**ՀԱՄԱԿԱԶՄ ԴԱԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՈՌԿՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԱԿԱՆ**  
**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ**  
**ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Արդի մանկավարժության գերխնդիրներից մեկն ուսուցման ակտիվացման և արդյունավետության բարձրացման նոր եղանակների որոնումն է:

Այսօր ձևավորվել են մի շարք մոտեցումներ, որոնք կարող են անվանել անձին ուղղված, զարգացնող ուսուցման տեխնոլոգիաներ: Ժամանակակից մանկավարժությանն այսօր հայտնի են ուսուցման մի շարք տեխնոլոգիաներ, որոնց թվին են պատկանում Լ.Վ. Ջանկովի տարրական դպրոցի դիդակտիկ համակարգի, Լ.Բ. Էլկոնինի և Վ.Վ. Դավիդովի զարգացնող ուսուցման, Ջ. Քերոլի և Բ. Բլումի գիտելիքների լրիվ յուրացման տեխնոլոգիաները, Շ. Ամոնաշվիլու՝ տարրական դպրոցի աշակերտների զարգացման համագործակցային սկզբունքը և այլն:<sup>12</sup>

Կանգ կառնենք Ջ. Քերոլի և Բ. Բլումի գիտելիքների լրիվ յուրացման տեխնոլոգիայի վրա, քանի որ, ըստ մեզ, այն ավելի է համապատասխանում մեր առջև դրված խնդրի լուծմանը:

Ըստ Բենջամին Բլումի<sup>2</sup> տաքսոնոմիայի /համակարգի/՝ ուսուցման գործընթացին հատուկ է հիմնական աստիճան՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, համադրում, կշռադատում կամ գնահատում:

Ուսուցման ողջ համակարգը Բլումը պատկերավոր կերպով համեմատում է սար մագլցելու հետ, կամ աստիճանների, որոնցով բարձրանում է սովորողն ուսման ընթացքում: Ուսուցման առաջին աստիճանը Բլումը համարում է մտապահումը, որը նմանեցնում է գիտելիքների «սարի ստորոտին», իսկ գնահատումը, որոշումների կայացումը՝ «գագաթին» կամ այն վերջնական հարթակին, որին հասնում է սովորողն ուսման ընթացքում:

<sup>1</sup> **Պետրոսյան Յ. Յ.** Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ, մոդուլային ուսումնական ձեռնարկ, - Եր., ԱՆ-ՁՈՆ, 2008, էջ 36, 78:

<sup>2</sup> Բենջամին Բլում 1913-1999: Հիկագոյի Հայր Պարկի համալսարանի կրթության պրոֆեսոր: Նա ճանաչված է որպես Միջազգային կրթական միության հիմնադիր անդամ: Նրա նախածեռնությամբ են ստեղծվել Միջազգային կրթական միության, Փորձարարական ուսուցման և Առաջին միջազգային մաթեմատիկական կրթության ընկերությունները /1964/: Բլումը խորհրդատու է եղել աշխարհի տարբեր ազգերի կրթական համակարգերի զարգացման և գնահատման հարցերում: Ամերիկյան կրթական հետազոտությունների միության նախկին նախագահ, Միացյալ Նահանգների ազգային մանկավարժական ակադեմիայի անդամ Բլումը 17 հիմնարար գրքերի հեղինակ և համահեղինակ է: Մանկավարժական շրջանակներում Բենջամին Բլումը ճանաչված է որպես մանկավարժական հոգեբանության մասնագետ: Նրա առաջարկած ուսուցման համակարգը՝ որպես Բլումի տաքսոնոմիա, լայն տարածում է գտել աշխարհում



**Գիտելիքը** ենթադրում է գիտելիքների մտապահում կամ վերհիշում: Գիտելիքը կամ հաղորդվող նյութն ուսուցման հիմնաքարն է: Մտապահումն իր էությանը մեխանիկական է, սակայն ձևավորում է այն հիմքը, որի վրա կառուցվում է ուսուցման շենքը: Դա այն հիմքն է, որի վրա բարձրանում է մտածողության ամբողջ կառույցը:

**Իմաստավորումը** ենթադրում է համեմատում, դասավանդվող, հաղորդվող նյութի իմաստն ընկալելու, բացատրելու, գաղափարները ձևափոխելու, յուրացնելու կարողություն: Յուրացման այս աստիճանն ավելի բարձր է, քան պարզ մտապահումը:

**Կիրառումը** ենթադրում է յուրացրած նյութը, գաղափարները համապատասխան իրավիճակներում գործադրելու, ինչպես նաև նոր ստեղծված իրավիճակներում, կյանքում հանդիպող հիմնախնդիրները լուծելիս դրանք կիրառելու կարողություններ:

**Վերլուծությունը** ենթադրում է ուսումնասիրվող նյութի տրոհումն մասերի միջև առկա կապերի դիտարկում: Վերլուծություն՝ նշանակում է նաև այլ նյութերի կամ տեղեկությունների տեղադրում առանձին մասերի միջև:

**Համադրումը** ենթադրում է առանձին գաղափարների միացում, զուգակցում, առանձին գաղափարների և նյութերի միջև նոր կապերի ձևավորում:

**Կշռադատումը կամ գնահատումը** համակարգի բարձրագույն աստիճանն է: այստեղ է տեղի ունենում ամբողջ նյութի գնահատումը նոր մակարդակում: Գնահատման մեջ են ներառվում գաղափարների, փաստերի դիտարկումը, ապացույցները և գնահատումը:<sup>1</sup>


Մենք տեսնում ենք, որ այս սանդղակում պակասում է մի կարևոր, ստեղծագործական, նորը ստեղծող աստիճան: Մեր հավելումներով կստանանք բուրգ, որի գագաթին որպես վերջնական նպատակ կստանանաք նորի ստեղծումը. ուսուցման նպատակների «Բուրգ»:

Նման մոտեցումն ուսուցման գործընթացը կարող է դարձնել ավելի արդյունավետ մանավանդ համակազմ դասարաններում, քանի որ այս դեպքում նորի ստեղծումն է դիտարկվում որպես ուսուցման առավել բարձր նպատակ, ինչն

<sup>1</sup> Արևաուդյան Ա. և ուրիշներ. «Մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար», ԿԱԻ հրատ., -Եր., 2004, էջ 16:

էլ համապատասխանում է ուսուցման արդիական և գործիմաց ուսուցման ձևակերպված նպատակներին: Ուսուցման ակտիվացումն այսօր արդեն դառնում է ոչ թե մանկավարժական մոտեցում, այլ ողջ ուսումնական գործընթացի դիդակտիկական սկզբունք և ելակետային դրույթ: Այն պարտադրում է այս ուսուցման նպատակների «բուրգում» կազմակերպել մի քանի փոփոխություններ: Եթե սովորողը գիտելիքների ընկալման փուլում ունի միայն դրանք մտապահելու ակտիվություն, ապա նման ուսուցման արդյունքում նա պարզապես մտապահում է նյութը: Այսինքն՝ ուսուցչի «լավ լսեք, հետո կրկնելու ենք» հրահանգը ձևավորում է ընդամենը հետագայում կրկնելու համար անհրաժեշտ ակտիվություն: «Լավ լսեք, հետո դուք ինքնուրույն պետք է կատարեք այս ամենը» ցուցումը հիմնականում խթանում է նրանց գիտելիքների կիրառման մակարդակի բարձրացումը: Եվ, երբ արդեն իսկ գիտելիքների հաղորդման փուլում խթանվում է սովորողների առավելագույն ակտիվությունը՝ ստեղծագործական մտածողությունը, ապա այդ ակտիվությունը սովորողին ուղղորդում է ուսուցման ամբողջ գործընթացում և «գագաթնակետում» հանգեցնում նորի ստեղծմանը:

Այս ամենը փորձենք ներկայացնել գծապատկերի տեսքով, պարզապես շրջելով բուրգերը՝ համադրենք իրար հետ:



Այս գծագիրն իրականում սիմվոլիկա է: Սակայն ընկալման համար չափազանց պարզ է: Այստեղից հետևում է, որ ակտիվությունն ուսումնական գործընթացի որոշիչ պայմանն ու հաջողության գրավականն է, ժամանակակից դիդակտիկայի կարևորագույն սկզբունքը, որով և պայմանավորված է ոչ միայն ողջ ուսումնական գործընթացի արդյունավետությունը, այլև միաժամանակ հասարակական խնդիրների լուծման և զարգացման հիմքն է:

Ստացված երկրաչափական պատկերը բնութագրում է մանկավարժական ողջ գործընթացի համաչափությունը, անընդհատությունն ու շարունակականությունը հատկապես համակազմ դասարաններ ունեցող դպրոցներում:

Համակազմ դասարաններ ունեցող դպրոցների հարցը, որպես գերխնդիր, տարիներ շարունակ հուզել է թե՛ արտերկրի, թե՛ Ռուսաստանի, թե՛ Հայաստանի և թե՛ Արցախի դպրոցներում աշխատող ուսուցիչներին, մեթոդիստներին:

Համակազմ դասարաններ ունեցող դպրոցները կարող են լինել երկհամակազմ, որտեղ միավորված են երկու դասարաններ /երկկազմ/ և միահամակազմ, որտեղ միավորված են բոլոր դասարանները՝ հիմնականում կրտսեր օղակի 1-ին, 2-րդ և 3-րդ դասարանները: Համակազմ դասարաններ ունեցող դպրոցներ երևույթը պայմանավորված է տվյալ տարածաշրջանի սոցիալ-տնտեսական պայմաններով, հիմնավորված այդպիսի պայմաններում անգամ սերնդի կրթության և դաստիարակության խնդիրները կրթության չափորոշիչներին համահունչ լուծելու դիրքորոշումներով:

Այսօր համակազմ դասարաններ ունեցող դպրոցները կարիք ունեն մանկավարժական գործընթացի հատուկ կազմակերպման, որտեղ կարևոր է հաշվի առնել երեխայի տարիքային և անհատական զարգացման կոնկրետ մոտեցումները, բազմաթիվ տարածաշրջանային, սոցիալ-տնտեսական մշակութային գործոնները<sup>1</sup>:

Հեռավոր գյուղական համայնքների սոցիալական ենթակառուցվածքներում այլ կրթական հաստատությունների բացակայությունը գրկում է գյուղի դպրոցի աշակերտին լրացուցիչ կրթության հնարավորություններից, ժամանակակից սարքավորումներից:

Եթե համակազմ դասարանում սովորող աշակերտների մոտ ուսուցիչը ձևավորի ստեղծագործական մտածողություն՝ մաթեմատիկական յուրաքանչյուր առաջադրանքի ընկալումը կապելով կյանքի հետ, մենք կունենանք պետականություն կերտող արժանի սերունդ:

Ստորև ներկայացնում ենք համակազմ դասարանում /2-րդ և 4-րդ դասարաններ/ անցկացվող դասի մի նմուշ:

Աստիճանը	Երկրորդ դասարան	Չորրորդ դասարան
Թեման	<i>Երկնիչ թվերի գումարումն ու հանումը առանց կարգային անցումի</i>	<i>Կապը թվաբանական գործողությունների միջև</i>
Գիտելիքը	Պարզվում է՝ միավորին գումարել են միավոր, տասնյակներին՝ տասնյակներ: Եզրահանգում են, որ գումարել և հանել են երկնիչ թվին երկնիչ թիվ, սակայն կարգը չեն անցել:	ա/գումարից հանելով գումարելիներից մեկը՝ ստանում ենք մյուս գումարելին, բ/ արտադրյալը բաժանելով արտադրիչներից որևէ մեկին /որը 0 չէ/՝ ստանում ենք մյուս արտադրիչը, գ/ տարբերությանը գումարելով հանելին՝ ստանում ենք նվազելին, դ/ բաժանարարը բազմապատկելով քանորդով՝ ստանում ենք բաժանելին:
Իմաստավորում	Մարզողական վարժություններ հ. 258, 259, 260, 262 56-32=24	Մարզողական վարժություններ հ.403, 404, 405, 406, 408

<sup>1</sup>Зайкин М.И. Сельская школа: модернизация содержания образования// Сельская школа.2004.№ 2. с.3-6. Организация образования в сельской местности России (исторический очерк). М.: РАО, 1993.

<p><b>Կիրառում</b></p>	<p>Հ. 261 խնդիր Երեք արկղում կա 76 կգ խնձոր: Առաջին արկղում կա 22 կգ, երկրորդում՝ 23 կգ: Որքան խնձոր կա երրորդ արկղում:</p>	<p>h. 408, 409, 410                  □:8= 3226                  18=2160:□                  3. □= 16500 և այլն:</p>
<p><b>Վերլուծություն</b></p>	<p>Ինչպես կարելի է կերպարվեստի դասին հավասար բաժանել 21 մատիտը 3 աշակերտի միջև, կամ՝ ինչպես կարելի է երեք տարբեր բնագավառում կողմնորոշվել /ըստ խնդրի բովանդակության/, կամ՝ ինչպես ցանկապատել հողամասը, որ ստացվի պահանջվող ձևով ցանկապատ:</p>	<p>Եթե 3 հա հողամասից ստացվել է 16տ 500կգ ցորեն, ուրեմն 1 հեկտարից ստացվել է 55ց ցորեն: Ուրեմն ինչպես անել, որ գոնե պահպանվի արդյունավետության այդ չափը:</p>
<p><b>Համադրում</b></p>	<p>Ուրեմն կարելի է արդյունավետ դարձնել կերպարվեստի դասը, նույնիսկ եթե աշակերտները չունեն մատիտներ և այլն:</p>	<p>Կարելի է նույն ձևով ցորենը ցանել նույն ժամանակահատվածում, մշակել առավել լավ միջոցներով և այլն:</p>
<p><b>Գնահատում</b></p>	<p>Թեմայի յուրացման համար չի պահանջում տրամաբանական ուժեղ մտածողություն, այլ յուրաքանչյուրաշակերտի մոտ ձևավորում է ստեղծագործական մտածողության քայլաշար:</p>	<p>Թեմայի յուրացման համար չի պահանջում տրամաբանական ուժեղ մտածողություն, այլ յուրաքանչյուրաշակերտի մոտ ձևավորում է ստեղծագործական մտածողություն:</p>
<p><b>Նորի ստեղծում</b></p>	<p>Եթե 56 կգ ընկույզից ստացվում է 32 կգ մաքուր ընկույզ, ուրեմն թափոնը 24կգ է, ինչը արդյունավետ գործարք չէ:</p>	<p>Նույն տեղանքում հողատարածքի մակերեսը մեծացնել, մանավանդ, որ այդ վարժություններին հաջորդում են նմանատիպ խնդիրներ<sup>1</sup>:</p>

<sup>1</sup> Մկրտչյան Ս., Աբրահամյան Ա., Իսկանդարյան Ս. 'Մաթեմատիկա' 2-րդ և 4-րդ դասարանների համար, «Չանգակ», Երևան 2016թ.

**ԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ  
ՀԱՍՏԱԿԱԶՄ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

**Բանալի բառեր.** *մանկավարժության գերխնդիր, ուսուցման ակտիվացում, արդյունավետության բարձրացում, Բենջամին Բլումի տաքսոնոմիա*

Հոդվածում ներկայացված են համակազմ դասարանում սովորողների մոտ ստեղծագործական մտածողության զարգացման արդիական մոտեցումները՝ Բ. Բլումի տաքսոնոմիայի կիրառմամբ:

Եթե ուսուցիչը աշակերտների մոտ ձևավորի ստեղծագործական մտածողություն, նրանք հեշտությամբ կկարողանան կողմորոշվել նույնիսկ ոչ ստանդարտ իրավիճակներում, և, համոզված ենք՝ մեծ ներդրում կունենան մեր պետության ապագա զարգացման գործում: Արցախի հանրակրթական դպրոցների համակազմ դասարանում սովորող շատ աշակերտներ ունեն այդ նախադրյալները. պարզապես անհրաժեշտ են նպատակային մոտեցումներ:

**Anna Petrosyan  
PEDAGOGICAL TERMS ACTIVATION OF LEARNING PROCESS  
IN SUPPORTIVE SCHOOLS**

**Key words:** *pedagogical problem, activation of teaching, increase of efficiency, Benjamin Bloom's taxonomy*

The article presents modern methods of creative thinking using Benjamin Bloom's taxonomy in complete classes.

If the teacher manages to form creative thinking in students, they will be able to act and orient even in unusual situations. No doubt, they will make a great contribution to the future development of our state. Many of the co-classroom students in comprehensive schools have the potential, objective approaches are needed.

**Анна Петросян  
ПЕДАГОГИЧЕСКИЕ УСЛОВИЯ ДЛЯ АКТИВИЗАЦИИ ПРОЦЕССА  
ОБУЧЕНИЯ УЧАЩИХСЯ КОМПЛЕКТНЫХ ШКОЛ**

**Ключевые слова:** *педагогическая проблема, активизация обучения, повышение результативности, таксономия Бенджамина Блума*

В статье представлены современные методы креативного мышления с использованием таксономии Бенджамина Блума в комплектных классах.

Если учитель сформирует у учащихся креативное мышление, они смогут легко ориентироваться даже в нестандартных ситуациях и, мы уверены, в дальнейшем внесут большой вклад в дело развития государства. Многие учащиеся комплектных классов в общеобразовательных школах Республики Арцах имеют потенциал для формирования указанного типа мышления, просто необходим целевой подход.



## ՄԱՐԳԻՆԱԼՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՓՈՐՁ

### ՈՌՉԱԼՅԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարգինալ (լատ. margo - ծայր, սահման, անգլերենում ավելի բազմանշանակ է. անգլ. marginal-ծայրամասում գտնվող, սահմանային, նվազագույն, աննկատելի, սահմանագծային, անցումային վիճակում գտնվող)<sup>1</sup>:

Մարգինալներ կարող են համարվել այն խմբերը, որոնք հասարակության մեջ հայտնվել են, այսպես կոչված, ընդհանուր ուշադրությունից դուրս: Սովորաբար այս որակումն օգտագործվում է գյուղից քաղաք տեղափոխվածներին բնութագրելիս: Այս դեպքում խախտված են համարվում գյուղական ենթամշակութային նորմերը, իսկ քաղաքայինը՝ չյուրացված: Մարգինալ մարդու օրինակ կարող է հանդիսանալ յունպենը (գերմ. lumpen-ցնցոտիավոր): Մարդիկ յունպեններին համարում են հասարակական կյանքից կտրված ու բարոյալքված (մուրացվանը, աղքատը, տևանկը): Մասնագիտական գրականության մեջ մարգինալության միանշանակ սահմանում գոյություն չունի: Նկատի ունենալով մարգինալության բազմակողմ և բազմաշերտ լինելը՝ դժվար է ձևակերպել միանշանակ սահմանում, ուստի այն և՛ առօրյա, և՛ գիտական մակարդակում կիրառվում է երկու հիմնական իմաստով.

1. Մարգինալ է այն ամենը, ինչը գտնվում է ընդունված կառուցվածքների, նորմերի սահմաններից դուրս (նորմալ-աննորմալ):

2. Մարգինալ է այն ամենը, ինչը գտնվում է երկու և ավելի իրողությունների միջակայքում:

1928 թ. Ռ. Է. Փարկը (1864 -1944) առաջին անգամ օգտագործեց «մարգինալ մարդ» հասկացությունը: Ըստ Ռ. Փարկի, մարգինալ է այն մարդը, ով հայտնվել է երկու տարբեր մշակույթների, սոցիալական կառուցվածքների սահմանագծում, ով լիարժեքորեն ներառված չէ ո՛չ մեկի, ո՛չ էլ մյուսի մեջ: Կարելի է ենթադրել, որ Ռ. Փարկը հոռետեսորեն է վերաբերվում մշակութային խառնածիններին՝ պատճառաբանելով, որ «հնարավոր չէ միշտ մնալ սահմանագծում. անհրաժեշտ է կողմնորոշվել»:<sup>2</sup>

Մարգինալության մասին կան նաև հակասական տեսակետներ: Այսպես, Տոմատու Շիբուտանին մարգինալ կարգավիճակի մասին նշում է. «Մնհատի մարգինալ կարգավիճակի դրական կողմը՝ բարձր ստեղծագործական գործունեությունն է»:<sup>3</sup> Իրոք, որ մարգինալը՝ իր ոչ սովորական, տարբերվող և կրեատիվ եուլթամբ հանդերձ, ավելի պտղատու ստեղծագործական վերելքներ է ունենում: Բայց այս մոտեցումը, կարծում ենք, չի կարելի ընդհանրացնել:

Մարգինալաբանությունը, որպես գիտակարգ, պատկանում է բավականին երիտասարդ գիտակարգերի շարքին, որի ուշադրության կենտրոնում գտնվում են մի շարք հարցեր, օրինակ, ի՞նչ է մարգինալությունը և ինչպիսի՞ պայմաններում է առաջանում այն, որո՞նք են այդ երևույթի սահմանները, բնորոշ գծերը, դրսևորման ձևերը, ինչպե՞ս է ընթանում մարգինալացման գործընթացը, ինչպիսի՞ն է մարգինալ անձի հոգեբանական վիճակը, մարգինալությունը դրական, թե՞ բացասական հետևանքներ է թողնում մարդու հոգեկանի վրա, որո՞նք են մարգինալացման հաղթահարման ուղիները և այլն:

<sup>1</sup> <https://hy.wikipedia.org/wiki/>

<sup>2</sup> Նույն տեղում

<sup>3</sup> Шибутани Т., Социальная психология. – М., 1969, С. 473-479

Սոցիոլոգիայում «մարզինալ» (լուսանցքային) հասկացությունը սկսել է օգտագործվել 1920-ական թվականներին: Ամերիկացի ընկերաբաններն այդպես էին բնութագրում այն սոցիալական խմբերին, որոնք իրենց արժեհամակարգով, պատկերացումներով, մշակույթով չէին տեղավորվում այն պահին ԱՄՆ-ում ընդունված նորմերի մեջ, այդ նորմերի գծած լուսանցքից դուրս էին: Խոսքը նախևառաջ այդ ժամանակաշրջանում երկիրը հեղեղած էմիգրանտների մասին էր: Ժամանակի ընթացքում հասկացությունը, բնականաբար, ընդլայնվել է, ընդգրկել է տարբեր ոլորտներ՝ այն աստիճանի, որ որոշ հետազոտողներ առաջարկում են այդ եզրույթն այլևս չօգտագործել: Բայց կիրառելով այդ բառը լայն իմաստով, պետք է, հավանաբար, գոնե պահել դրա ծագումնաբանությունը՝ հիմնական հոսանք, ընդունված նորմեր - լուսանցք հակադրության մեջ:<sup>1</sup>

Ռ.Փարկի հետևորդ Է. Ստոունբլիստի կողմից ներկայացվել է սոցիալական սուբյեկտի մարզինալ կարգավիճակը, որը մասնակից է սոցիալական հակասություններին, գտնվելով «երկու կրակի արանքում»: Այդպիսի անհատը գտնվում է յուրաքանչյուր մշակույթի եզրին, սակայն չի պատկանում դրանցից որևէ մեկին: Ստոունբլիստը համարում էր, որ հարմարվողականության գործընթացը կարող է հանգեցնել նոր հատկություններով անհատի ձևավորմանը:<sup>2</sup>

Ակնհայտ է, որ անձն իր կյանքի ցանկացած փուլում ապրում է ճգնաժամեր, որոնք անպայման անդրադառնում են նրա էության ու հոգեկան աշխարհի վրա՝ վերափոխելով նրան: Այսպիսի իրավիճակն էլ ավելի նպաստավոր է դարձնում նոր մարզինալ համակարգերի առաջացումը: Առանձին ձևավորված այդ համակարգերը միշտ չէ, որ կորցնում են իրենց նախնական նշանները, սակայն ձեռք են բերում նորը՝ նոր արժեքներին համապատասխան: Հետաքրքիրն այն է, որ նրանք չեն խորթանում ո՛չ առաջին, ո՛չ էլ երկրորդ խմբի համար, այլ պահպանում և պարունակում են դրանցից ֆիքսված արժեքներ ու գաղափարներ: Բնականաբար, մարզինալության դրսևորումները և դրանց հաղթահարման մեխանիզմների ու ռազմավարությունների ընտրությունը մեծապես կախված են ինչպես տվյալ հասարակության, ազգի էթնոհոգեբանական առանձնահատկություններից, այնպես էլ դրանց ներկայացուցիչների անձնային հատկություններից:

Եթե փորձենք այս հասկացությունը դիտարկել Արցախի օրինակով, ապա տեղին կլինի նշել, որ բնակչության մարզինալացման համար ստեղծվել էին նպաստավոր պայմաններ: Մինչև 1988 թթ-ը ինտերնացիոնալիզմի թելադրած «եղբայրական» հարաբերություններում ադրբեջանցիների հետ ժամանակի ընթացքում վտանգված էին ինքնության որոշ տարրեր: Երկլեզվությունը /բիլինգվալիզմը/ գործում էր ինչպես հանրակրթական դպրոցներում, այնպես էլ՝ միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում: Նույնիսկ աշխատանքի ընդունվելուց հաշվի էր արվում լեզվի իցությունը: Հայոց լեզվին զուգահեռ դասավանդվում էր անա դիլին /Ադրբեջանի մայրենին/, դպրոցներում հայոց պատմության փոխարեն ուսուցանվում էր Ադրբեջանի կամ ԽՍՀՄ պատմությունը և Ադրբեջանի աշխարհագրությունը:

Այս ամենը մարզինալ ֆոն և նպաստավոր պայմաններ են ստեղծում դրա հետագա զարգացման համար, այսինքն ադրբեջանական իշխանությունների կողմից նախատեսվում էր լուրջ տարածքային, էթնիկ և հետագայում կրոնական «վաճում, մաքրում»: Կետ առ կետ պլանավորած ծրագրի ձախողմանը նպաստեց սպասումներից զատ ստեղծված հակապատկերը՝ 1988-ի շարժումը, որը հայ ոգու

<sup>1</sup> <http://www.aravot.am/2013/02/11/192744/>

<sup>2</sup> *Маргинальность* в современной России. Сер. Научные доклады. № 121. М. : Московский общественный научный фонд, 2000. С.10

արթնության ու ազատության ճիչն էր: Այն նույնպես ճգնաժամային փուլ կարելի է համարել, ինչպես նաև՝ մարզինալության հաղթահարման նպաստավոր պայման:

Մարզինալության ինդրի տեսական զարգացման գործում մեծ առաջադիմություն կարելի է համարել մարզինալ կարգավիճակի սահմանումը: Ա.Ս. Կերկխոֆը և Տ.Ս. Մակկորմիկը նշել են սոցիալական կառուցվածքում գրաված դիրքն ու անհատի մեջ զարգացող հոգեբանական հատկությունների շարքը տարանջատելու անհրաժեշտությունը, որոնք կարող են ապահովել մարզինալության զարգացման համար ավելի օբյեկտիվ հիմք:

Ըստ Պ.Ա. Սորոկինի «անձի կամ սոցիալական խմբի սոցիալական կարգավիճակի եությունը՝ իրավունքների և արտոնությունների, պարտականությունների, պատասխանատվության, սոցիալական արժեքների առկայության կամ բացակայության, իշխանության և տվյալ հասարակության անդամների միջև ազդեցության բաշխումն է»:<sup>2</sup>

Հասարակության մեջ ձևավորված սոցիալական չափանիշների, արժեքների և օրենքների բացասումը կամ շրջանցումը բերում է մարզինալ շերտի առաջացման, որոնք մեկուսացվում են հասարակության մյուս անդամներից կամ օրենքի խախտման հետևանքով դառնում բանտարկյալներ կամ հոգեկան հիվանդներ, մտավոր հետամնացներ և այլն: Եթե այդ երկու դեպքում էլ դրական եզրահանգում է ստանում հարցը, այսինքն՝ բանտարկյալը ազատ է արձակվում, իսկ հիվանդը ապաքինվում է, ապա նրանց մոտ մարզինալ վարք չի ձևավորվում:

Որպեսզի ավելի լավ պատկերացնենք մարզինալության երևույթը, անհրաժեշտ է ուսումնասիրել մարզինալ անհատի գիտակցության, մտածողության ու վարքի առանձնահատկությունները, արժեքային համակարգը: Վերջինս շատ ավելի կարևոր ցուցիչ է մարզինալ մասսաների վարքագծի և հասարակական տրամադրությունների կանխատեսումների համար: Չպետք է մոռանալ, որ մարզինալությունը առաջանում է նախկին փորձի, սովորությունների, արժեքների ու համոզմունքների վարկաբեկումից կամ արժեզրկումից, որն էլ հանգեցնում է անձնական անկազմակերպվածության վիճակին: Հենց այստեղ է, որ կարևոր է առանձնացնել անձի չափորոշիչների ու արժեքների համակարգը, քանի որ դրանք են հանդիսանում մարզինալության առաջացման ու զարգացման չափանիշները: Սա կապված է այն փաստի հետ, որ մարզինալը անձնային մակարդակով տեղափոխվում է մեկ չափորոշիչ-արժեքային համակարգից մյուսը՝ մի պահ հայտնվելով չափորոշիչների ու արժեքների ապականոնակարգված վիճակում: Այսպիսի ապակողմնորոշված ու անորոշ վիճակը իր բացասական ու ապակառուցողական ազդեցությունն է թողնում անձի գիտակցության վրա, որը չի կարող չանդրադառնալ հասարակության ընդհանուր բարոյական ֆոնի ու տրամադրությունների վրա:

<sup>1</sup> Kerckhoff A. C., McCormick T. C. Marginal status and marginal personality // Social forces. Vol. 34, № 1. 1955. P. 55.

<sup>2</sup> Сорокин П. А. Долгий путь: Автобиографический роман. Сыктывкар, 1991. С. 166–167.

**Ռոզալյա Հարությունյան**  
**ՍԱՐԳԻՆԱԼՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԱՆԱԿԱՆ**  
**ԵՐԵՎՈՒՅԹԻ ԴԻՏԱՐԿՄԱՆ ՓՈՐՁ**

*Բանալի բառեր՝ մարգինալություն, ազգային զարթոնք, սոցիում, արժեքներ, միգրացիա*

Մարգինալությունը սահմանային վիճակ է, որը բնորոշ է թե անձին, թե հասարակությանը: Նրա տարրը բազմաբնույթ ու բազմազան են: Սույն հոդվածում փորձ է արվել ներկայացնել ոչ միայն մարգինալության ապակառուցողական տարրերը, այլև մատնանշել դրանց հաղթահարման հնարավոր ուղիները: Մինչև 1988-ի ազգային զարթոնքը, արցախցիների՝ Ադրբեջանի իշխանությունների հետ եղբայրական ազգի քողի տակ շփման գործընթացը որակել ենք որպես մարգինալ, որը հաղթահարվել է արցախյան պատերազմից սկսած:

**Rozaly Harutyunyan**  
**THE EXPERIENCE OF LOOKING AT MARGINALITY AS A SOCIO-  
 PSYCHOLOGICAL PHENOMENON**

**Keywords:** *marginality, national awakening, society, values, migration*

Marginalization is a borderline situation, characteristic for both man and society. Its element is multifaceted and diverse. In this article, an attempt was made to present not only the destructive elements of marginality, but also to indicate possible ways to overcome them. Prior to the national awakening in 1988, the people of Artsakh and the Azerbaijani authorities described the process of communication under the guise of a brotherly nation as marginal, which was overcome during the days of the Artsakh war.

**Розалия Арутюнян**  
**ОПЫТ РАССМОТРЕНИЯ МАРГИНАЛЬНОСТИ КАК СОЦИАЛЬНО-  
 ПСИХОЛОГИЧЕСКОГО ЯВЛЕНИЯ**

**Ключевые слова:** *маргинальность, национальное пробуждение, общество, ценности, миграция*

Маргинализация – это пограничное положение, характерное как для человека, так и для общества. Данное явление многогранно и разнообразно. В этой статье была предпринята попытка представить не только деструктивные элементы маргинальности, но и указать возможные пути их преодоления. Процесс общения арцахцев с властями Азербайджана под видом дружбы и братства до национального пробуждения в 1988-ом году расценен в статье как маргинальный. Ситуация была преодолена во время Арцахской национально-освободительной борьбы.

## ՂԵԿՎԱՐՆԵՐԻ ՀՈՒՉԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)

### ԱՐՄԻՆԵ ՍԵՎՈՒՄՅԱՆ

Կառավարչական պաշտոնների հիմնական ընդհանրությունը, անկախ գործունեության ոլորտից, աշխատանքի իրականացումն է մարդ-մարդ համակարգում: Այս համակարգի աշխատանքը ենթադրում է ոչ միայն մասնագիտական գիտելիքների և հմտությունների տիրապետում, այլ նաև հոգեբանական որոշակի որակների առկայություն՝ գործունեությունն առավելագույն արդյունավետությամբ իրականացնելու համար: Արցախի Հանրապետությունում ղեկավարների ընտրության գործընթացը հիմնականում հենված է մասնագիտական գիտելիքների և հմտությունների, աշխատանքային փորձի վրա, թեպետ ժամանակակից աշխարհը ղեկավարին դիտարկում է իբրև այնպիսի մասնագետ, ով համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին ոչ միայն մասնագիտական, այլև հոգեբանական որակների առկայության տեսանկյունից:

Ղեկավարի ընտրությունը պահանջում է համակարգային մոտեցում, որում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում անձի հոգեբանական դիմանկարը: Կառավարչական պաշտոնների գնահատման միջոցով բացահայտվում են տվյալ պաշտոնին համապատասխանող անձին ներկայացվող հոգեբանական պահանջները: Ակնհայտ է, որ միևնույն մասնագիտական կարողություններ ունեցող անձինք կառավարչական գործունեությունն իրականացնում են տարբեր կերպ և արդյունավետությամբ: Ժամանակակից կառավարման և հոգեբանական տեսություններում հաճախ է քննարկվում անձի դերակատարության հարցը:<sup>1</sup>

Արցախի Հանրապետությունում հասարակության մեջ բազմիցս արժարծվում է մասնագետի՝ իր զբաղեցրած պաշտոնին հոգեբանական համապատասխանության հիմնահարցը: Նշելով, որ աշխատանքային գործունեության մեջ մասնագիտական գիտելիքների և հմտությունների առկայությունը բավարար չէ, և անհրաժեշտ են համապատասխան հոգեբանական որակներ, որոնց զուգակցումն կապահովվի ղեկավարի գործունեության արդյունավետությունը: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որպեսզի հանրապետությունում ղեկավար պաշտոնի նշանակման հարցում իրականացվի նաև մասնագիտական հոգեբանական ընտրություն, որը հնարավորություն կընձեռնի բացահայտել մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ հոգեբանական որակները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ղեկավարների ընտրության գործընթացում կարևոր փուլերից է համարվում թեստավորումը, թեստային մեթոդիկաների ցուցանիշների հարաբերակցության վերլուծությունը, քանի որ այն հնարավորություն է ընձեռնում հաստատել մի մեթոդիկայի թեստավորման արդյունքները մյուսի միջոցով, նաև բացահայտվում է հետազոտվողների ամբողջական դիմանկարը, մեր կողմից իրականացվել է հետազոտական վերլուծական աշխատանք: Ուսումնասիրության համար կիրառվել է Ն.Հովի հուզական ինտելեկտի հարցարանը, հետազոտվողների քանակը՝ 47 մարդ: Որպես հետազոտության օբյեկտ ընտրել ենք ԱՀ պաշտոնատար անձանց: Հետազոտությանը մասնակցել են Արցախի Հանրապետության ԱԺ նախագահը, պատգամավորները, պետական նախարարը, կառավարության անդամները, ԱՀ նախագահի աշխատակազմի աշխատողներ, ստորաբաժանման ղեկավարներ:

<sup>1</sup> Ռուբեն Աղուզումցյան, Լաուրա Պետրոսյան, Սոնա Պողոսյան, Անի Խաչատրյան, Կառավարիչների հոգեբանական ընտրության գործընթացի առանձնահատկությունները, Երևան 2016թ.:

Հետազոտության նպատակն է, պարզաբանել ԱՅ ղեկավարների և պաշտոնյաների հուզական ինտելեկտը, մատնանշել ղեկավարների հուզական տեղեկացվածության, սեփական հույզերի կառավարման, ինքնամոտիվացիայի, ապրումակցման և այլ մարդկանց հուզերի ճանաչման գործոնների զարգացման մակարդակը, բացահայտել ԱՅ ղեկավար անձի՝ փոխհարաբերությունները հասկանալու ընդունակությունը, որը դրսևորվում է հույզերում, ինչպես նաև որոշումներ ընդունելու հիման վրա հուզական ոլորտը կառավարելու ունակությունը:

«Հուզական ինտելեկտ» հասկացությունը մշակվել է այնպիսի հեղինակների կողմից, ինչպիսիք են Է.Թորնդայկը (Thorndike, 1920), Զ.Գիլֆորդը (Guilford, 1967), Յ.Այզենկը (Айзенк, 1995): Նշենք՝ հուզական ինտելեկտն առավել հանգամանակից ուսումնասիրել է Բ.Գարդները, ով բազմաթիվ ինտելեկտների տեսության շրջանակներում բնութագրել է ներանձնային և միջանձնային ինտելեկտը (Gardner, 1983): Նրա կողմից այս հասկացության մեջ ընդգրկված ընդունակություններն անմիջականորեն առնչվում են հուզական ինտելեկտին: Հուզական ինտելեկտը կամ հուզական կոմպետենտությունն իր մեջ միավորում է անձի՝ արդյունավետ շփման հնարավորությունը՝ շրջապատողների հույզերը հասկանալու և նրանց հուզական վիճակին հարմարվելու հաշվին: Անձի մասնագիտական հաջողությունները, անկասկած, կապված են գիտելիքների, հմտությունների և կարողությունների, ընդհանուր զարգացվածության, այսինքն՝ ինտելեկտի հետ: Սակայն դեպքերի մեծ մասում ընդհանուր ինտելեկտի բարձր մակարդակը բավարար չի լինում: Հուզական ինտելեկտը սոցիալական ինտելեկտի մասին գաղափարների զարգացման արդյունք է:

Գիտական գործածության մեջ «հուզական ինտելեկտ» հասկացությունը ներմուծվել է 1990 թվականին ամերիկացի հոգեբաններ Պիտեր Սոլովեյի և Ջոն Մեյերի կողմից, ովքեր էլ մշակել են հուզական ինտելեկտի առաջին մոդելը: Հուզական ինտելեկտի ներքո հեղինակները հասկանում էին սեփական և այլոց զգացմունքներին ու հույզերին հետևելու, դրանք տարբերակելու և այդ տեղեկատվությունը, մտածողությունն ու գործողություններն ուղղորդելու համար օգտագործելու ընդունակությունը:<sup>1</sup>

Հուզական տեղեկատվության մշակման հետ կապված ընդունակությունների վերլուծությունը թույլ տվեց Պիտեր Սոլովեյին և Ջոն Մեյերին առանձնացնել չորս բաղադրիչներ, որոնք անվանվեցին «ճյուղեր»: Այդ բաղադրիչները դասավորվում են որպես աստիճանակարգ, որի մակարդակները, ըստ հեղինակների, յուրացվում են աստիճանաբար օստոգենեզի ընթացքում:

Կարևոր է նշել, որ յուրաքանչյուր բաղադրիչ վերաբերում է ինչպես անձի սեփական հույզերին, այնպես էլ այլ մարդկանց հույզերին:

*Հույզերի նույնականացումը* իր մեջ ընդգրկում է մի շարք փոխկապակցված ընդունակություններ, ինչպիսիք են հույզերի ընկալումը (այսինքն՝ հույզերի գոյության բուն փաստը նկատելու ընդունակությունը), դրանց նույնականացումը, համապատասխան դրսևորումը, իրական և շինծու հույզերի տարբերակումը:

*Հույզերի դերը մտածողության և գործունեության արդյունավետությունը* բարձրացնելու համար իր մեջ ընդգրկում է կարևոր իրադարձությունների վրա ուշադրությունը կենտրոնացնելու համար հույզերի օգտագործման, հույզեր առաջացնելու ընդունակությունը, որոնք նպաստում են խնդիրների լուծմանը, տրամադրության տատանումները որպես խնդրի նկատմամբ տարբեր տեսանկյունների վերլուծության միջոց օգտագործելը:

<sup>1</sup> Фетискин. Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М., Социально-психологическая диагностика развития личности и малых групп, М., изд-во института психотерапии, 2002, с. 490.

Յուզերի հասկացումը հույզերի համադրությունները, դրանց միջև կապերը, մեկ հույզից մյուսին անցումները, հույզերի պատճառները հասկանալու ընդունակությունը, հույզերի մասին խոսքային տեղեկությունը:

Յուզերի կառավարումը՝ հույզերի վերահսկման, բացասական հույզերի ուժի նվազեցման, սեփական հույզերի գիտակցման ընդունակությունը, հուզականորեն հագեցած խնդիրների լուծման ընդունակությունը՝ առանց դրանց հետ կապված բացասական հույզերը ճշելու: Նպաստում է անձնային աճին և միջանձնային հարաբերությունների լավացմանը<sup>1</sup>:

Այս մոդելի հիման վրա մշակվել է Դ. Գոուլմանի մոդելը: 1995 թվականին հրատարակված նրա «Յուզական ինտելեկտ» գիրքը նոր ազդակ հանդիսացավ հիմնախնդրի ուսումնասիրության համար (Goleman, 1995): Դ. Գոուլմանը վերը նշված հեղինակների կողմից առանձնացված բաղադրիչներին ավելացրել է այնպիսի որակներ, ինչպիսիք են խանդավառությունը, համառությունն ու սոցիալական հմտությունները<sup>2</sup>: Առավել տարածված մոդելներից մեկն էլ Ռ. Բար-Օնի հայեցակարգն է, որում հուզական ինտելեկտը սահմանվում է որպես հուզական և սոցիալական բանիմացությունների, ընդունակությունների և գիտելիքների ամբողջականությունը, որն ապահովում է շրջապատող մարդկանց հետ հաջող փոխազդեցություն, ինչպես նաև տարբեր կենսական իրավիճակների հաղթահարում [Bar-On, 2006]:

Յետազոտության արդյունքներից պարզվում է, որ ԱՅ ղեկավարների հուզական ինտելեկտի բաղադրիչներից ցածր արտահայտվածություն ունի սեփական հույզերի կառավարումը, (ընդհանուրը՝ 464 միավոր) որը թույլ է տալիս ենթադրել, որ ղեկավարների հուզական ճկունությունը թույլ է արտահայտված, այլ կերպ ասած՝ սեփական հույզերի կամային կառավարման ընդունակությունը թույլ է զարգացած: Կառավարչական գործունեությանը բնորոշ սթրեսային իրավիճակներում սեփական հույզերի կառավարման ցուցանիշի ցածր դրսևորվածությունը կարող է հանգեցնել խառնաշփոթի, կողմնորոշվելու անկարողության, որը, կարելի է ենթադրել, երբեմն լրացվում է փորձի միջոցով:

Յետազոտական խմբում միջին դրսևորվածություն ունի ինքնամոտիվացիայի ցուցանիշը, (ընդհանուրը՝ 516 միավոր) որն իրենից ենթադրում է սեփական վարքի կառավարում՝ հույզերի կառավարման հաշվին:

Յուզական ինտելեկտի մյուս բաղադրիչների՝ հուզական տեղեկացվածության, ապրումակցման, այլ մարդկանց հույզերի ճանաչման ցուցանիշները գտնվում են բարձր մակարդակում:

Յուզական տեղեկացվածության ցուցանիշի բարձր արտահայտվածությունը (ընդհանուրը՝ 596 միավոր) վկայում է, որ ղեկավարները բոլոր իրավիճակներում են կարողանում հասկանալ և գիտակցել սեփական հույզերը, գիտակցում են իրենց ներքին հոգեկան վիճակները:

Ապրումակցումն իրենից ենթադրում է այլ մարդկանց հույզերի հասկացում, այլ մարդու հուզական վիճակը հասկանալու կարողություն, ինչպես նաև օգնություն ցույց տալու պատրաստակամություն: Այն մարդու հուզական վիճակն ըստ դիմախաղի, ժեստերի, խոսքի երանգի, մարմնի դիրքի հասկանալու կարողությունն է: Ապրումակցման բարձր մակարդակի դրսևորվածությունը (ընդհանուրը՝ 610 միավոր) դիտարկելիս պարզում ենք՝ թեպետ ղեկավարները ոչ միշտ են հակված հասկանալու դիմացինի հուզական ապրումները, սակայն կառավարչական

<sup>1</sup> Люсин Д. В., Ушаков Д. В., Социальный интеллект: Теория, измерение, исследования. М., Институт психологии РАН, 2004.

<sup>2</sup> Голдман Д., «Эмоциональный интеллект. Почему он может значить больше, чем IQ» 2013, 538с.

գործունեության տեսանկյունից ապրումակցման բարձր ցուցանիշը չի կարելի համարել գործունեության համար նպաստավոր պայման:

Իսկ այլ մարդկանց հույզերը ճանաչելու ցուցանիշների բարձր մակարդակից (ընդհանուր՝ 596 միավոր) կարելի է ենթադրել, որ ղեկավարները հիմնականում կարողանում են ազդել այլ մարդկանց հուզական վիճակների վրա: Ընդգծենք՝ այլ մարդկանց հուզական վիճակների վրա ազդեցությունն արդյունավետ կառավարելու պայմաններից մեկն է:

Այսպիսով Արցախի Հանրապետության թվով 47 ղեկավար անձանց մոտ՝ հուզական ինտելեկտի ցածր ցուցանիշը գրանցված է 7 ղեկավարի մոտ, միջին ցուցանիշը՝ 32 ղեկավարի մոտ, բարձր ցուցանիշը՝ 10 ղեկավարի մոտ:

Հուզական ինտելեկտի ցածր մակարդակը (թվով 7) նշանակում է, որ տվյալ ղեկավարը չի կարողանում գործ ունենալ իր և այլ մարդկանց հուզական վիճակների հետ, տեղեկացված չէ իր հուզական ապրումների մասին, չի կարողանում կառավարել ինչպես իր սեփական հույզերը, այնպես էլ ուրիշներինը:

Հուզական ինտելեկտի միջին մակարդակը (թվով 32) նշանակում է, որ ղեկավարները և պաշտոնյաները մասամբ են կարողանում գիտակցել և հասկանալ իրենց հույզերը: Իրենց հույզերի մասին ավելի քիչ տեղեկություն ունեն: Որոշ իրադրություններում կարող են դժվարությամբ հասկանալ ուրիշ մարդկանց հուզական դրսևորումները:

Հուզական ինտելեկտի ցուցանիշի բարձր դրսևորվածությունը (թվով 10) նշանակում է, որ ղեկավար անձինք բավական տեղեկացված են իրենց հուզական վիճակների մասին, կարողանում են գիտակցել և հասկանալ իրենց հույզերը, կառավարել դրանք, ինչպես նաև կարողանում են հասկանալ ուրիշ մարդկանց հույզերը, կարեկցել, աջակցել նրանց, կարողանում են կառավարել ուրիշների հույզերը:

Այսպիսով ԱՀ ղեկավարների և պաշտոնյաների հուզական ինտելեկտի ցուցանիշը գտնվում է միջին մակարդակում, այսինքն՝ նրանք մասամբ են կարողանում կառավարել հույզերի և զգացմունքների դրսևորումը, սակայն լավ հասկանում են ուրիշ մարդկանց հուզական դրսևորումները:

Երկար ժամանակ համարվել է, որ մեր զգացած և արտահայտած հույզերն անհրաժեշտ է վերահսկել, և շատ կարևոր է հետևել դրանց՝ իրականացնելով աշխատանքային գործունեություն, առավել ևս՝ եթե այն կապված է մարդկանց կառավարելու հետ: Համարվում էր, որ աշխատավայրում հույզերն արտահայտելը մասնագիտական չէ: Սակայն հիմնախնդրի վերաբերյալ տեսական և գործնական մոտեցումների վերլուծությունից, պարզվում է, որ երկրում հուզական ինտելեկտի բարձր մակարդակ ունեցող ղեկավարների և պաշտոնյաների համար հույզերը ոչ միայն կարևոր են, այլ նաև պարտադիր՝ ճիշտ որոշումներ ընդունելու, բարդ իրավիճակից դուրս գալու, փոփոխությունները հաղթահարելու և հաջողության հասնելու համար:

Այսպիսով ԱՀ ղեկավարների և պաշտոնյաների հուզական ինտելեկտի բարձր արտահայտվածությունն առավել պետք է կարևորվի, քանի որ ժամանակակից կառավարչական գործունեությունը ղեկավար անձին ներկայացնում է ինչպես իր, այնպես էլ դիմացինի հուզական վիճակները հասկանալու, կառավարելու ընդունակությունների զարգացվածություն:



**Արմինե Սևումյան**  
**ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՈՒՉԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**  
**(ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ)**

**Բանալի բառեր՝** *հուզական ինտելեկտ, ապրումնակցում, սեփական հույզերի կառավարում, նույնականացում, հուզական տեղեկացվածություն, ինքնամոտիվացիա*

Կառավարչական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն մասնագիտական հմտություններով, այլև դրանք իրականացնող անձի հոգեբանական որակներով: Այսպիսով, խոսելով ղեկավարի հոգեբանական կարևոր որակների մասին՝ հանգում ենք հետևյալին՝ կառավարչական գործունեությունը պահանջում է հոգեբանական մեծ ներուժ, որն իր ազդեցությունն է գործում ղեկավարի գործունեության արդյունավետության վրա: Հոգեբանական պահանջվող կամ ցանկալի որակները մի կողմից լուծում են գործունեության արդյունավետության խնդիրը, մյուս կողմից՝ ղեկավարի մասնագիտական և անձնային զարգացման խնդիրը: Համապատասխան հոգեբանական որակների առկայության կամ դրանց զարգացման ներուժի դեպքում կառավարչական գործունեությունը նպաստում է ղեկավարի լիարժեք ինքնաիրականացմանը, և աշխատանքային գործունեությանը:

**Armine Sevumyan**

**ANALYSIS OF THE INDICATORS OF EMOTIONAL INTELLIGENCE IN MANAGERS (ON THE EXAMPLE OF THE REPUBLIC OF ARTSAKH)**

**Keywords:** *emotional intelligence, empathy, self-regulation of emotions, identification, emotional awareness, self-motivation*

The effectiveness of management is due not only to professional skills, but also to the psychological quality of person. Thus, speaking about the psychological qualities of the manager, we come to the following: management work requires a great psychological ability that affects the effectiveness of the leader. The required or desirable qualities in psychological terms solve on the one hand the problem of efficiency, and on the other – the problem of professional and personal development of the manager. In case of adequate psychological qualities or opportunities for their development, management activity contributes to the full self-realization of the head and his work.

**Армине Севумян**

**АНАЛИЗ ПРОЯВЛЕНИЙ ЭМОЦИОНАЛЬНОГО ИНТЕЛЛЕКТА РУКОВОДИТЕЛЕЙ (НА ПРИМЕРЕ РЕСПУБЛИКИ АРЦАХ)**

**Ключевые слова:** *эмоциональный интеллект, эмпатия, саморегуляция эмоций, идентификация, эмоциональная осведомленность, самомотивация*

Эффективность управленческой деятельности обусловлена не только профессиональными навыками, но и психологическими качествами человека, реализующего их. Говоря о психологических качествах руководителя, мы приходим к следующему: управленческая работа требует большой психологической способности, которая влияет на эффективность деятельности лидера. Требуемые или желательные в психологическом плане качества, с одной стороны, решают проблему эффективности, а с другой – проблему профессионального и личностного развития руководителя. В случае адекватных психологических качеств или возможностей для их развития управленческая деятельность способствует полной самореализации руководителя и его трудовой деятельности.

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**INFORMATION ABOUT THE AUTHORS**  
**СВЕДЕНИЕ ОБ АВТОРАХ**

- 1. Աթիկյան Մանե** - ԶՅ Պետական կառավարման ակադեմիայի (ԶՅ ՊԿԱ) ասպիրանտ  
**Atikyan Mane** - PhD student, Public Administration Academy RA (PAA RA)  
**Атикян Мане** - аспирант Академии государственного управления Республики Армения (АГУ РА)  
**E-mail:** [a\\_mane77@yahoo.com](mailto:a_mane77@yahoo.com)
- 2. Առաքեյան Արսեն** – Զայ-ռուսական համալսարանի (ՀՌՀ) դասախոս, արվեստագիտության թեկնածու  
**Arakeyan Arsen** - Lecturer, Armenian-Russian University (ARU), PhD in Art Science  
**Аракелян Арсен** – преподаватель Российско-армянского университета (РАУ), кандидат искусствоведения  
**E-mail:** [arsarm2001@yahoo.com](mailto:arsarm2001@yahoo.com)
- 3. Ասատրյան Բագրատ** – Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) դասախոս, ԶՅ ԿԲ նախկին նախագահ, տ.գ.թ., դոցենտ  
**Asatryan Bagrat** – Lecturer of Yerevan State University (YSU), former Chairman of the RA Central Bank, Candidate of Economics, Associate Professor  
**Асатрян Баграт** – преподаватель Ереванского государственного университета (ЕГУ), бывший председатель ЦБ РА, к.э.н., доцент  
**E-mail:** [b\\_asatryan@yahoo.com](mailto:b_asatryan@yahoo.com)
- 4. Ավագիմյան Նարինե** - Արցախի գիտական կենտրոնի հայցորդ  
**Avagimyan Narine** – PhD student, Scientific Centre of Artsakh  
**Авагимян Нарине** - соискатель Научного центра Арцаха  
**E-mail:** [narine.avagimyan.92@mail.ru](mailto:narine.avagimyan.92@mail.ru)
- 5. Ավագյան Գայանե** - ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի ասպիրանտ  
**Avagyan Gayane** – PhD student, Faculty of Journalism, YSU  
**Авагян Гаянэ** - аспирант факультета журналистики ЕГУ  
**E-mail:** [gayaneavakyan@gmail.com](mailto:gayaneavakyan@gmail.com)
- 6. Ավանեսյան Նարինե** – Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, ԱԵԳՄՍ անդամ, տ.գ.թ., դոցենտ  
**Avanesyan Narine** – Head of the chair of finance and accounting, Artsakh State University (ASU) member of UYSSA, Candidate of Economics, Associate Professor  
**Аванесян Нарине** - заведующая финансово-учетной кафедрой АрГУ, член ОМУСА, к.э.н., доцент  
**E-mail:** [nara44@yandex.ru](mailto:nara44@yandex.ru)
- 7. Ավանեսյան Իսկուհի** - ԱրՊՀ դասախոս, ԱԵԳՄՍ անդամ, պ.գ.թ.  
**Avanesyan Iskuhi** – Lecturer of ASU, Candidate of History, member of UYSSA  
**Аванесян Искуи** – преподаватель АрГУ, к.и.н., член ОМУСА  
**E-mail:** [iskuhi82@mail.ru](mailto:iskuhi82@mail.ru)

8. **Ավանեսով Հովիկ** – Մեսրոպ Մաշտոց համալսարանի (ՄՄՍ) դասախոս, ԱԵԳՄՄ անդամ  
**Avanesov Hovik** - Lecturer of Mesrop Mashtots University (MMU), member of UYSSA  
**Аванесов Овик** - преподаватель Университета Месроп Маштоц, член ОМУСА  
**E-mail:** [hovikavanesow@gmail.com](mailto:hovikavanesow@gmail.com)
9. **Ավետիսյան Սուսան** – Շուշիի տեխնոլոգիական համալսարանի (ՇՏՀ) դասախոս, տ.գ.թ., դոցենտ  
**Avetisyan Susan** – Lecturer of Shushi Technological University (ShTU), Candidate of Economics, Associate Professor  
**Аветисян Сусан** – преподаватель Шушинского технологического университета (ШТУ), к.э.н., доцент  
**E-mail:** [susanna-avetisyan00@mail.ru](mailto:susanna-avetisyan00@mail.ru)
10. **Աֆյան Նադեժդա** – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (ՀՊՏՀ) դասախոս, տ.գ.թ.  
**Afyan Nadezhda** - Lecturer of Armenian State University of Economics (ASUE), Candidate of Economics  
**Афян Надежда** – преподаватель Армянского государственного экономического университета (АГЭУ), к.э.н.  
**E-mail:** [nafyan@rambler.ru](mailto:nafyan@rambler.ru)
11. **Բալայան Չինաիդա** - ԱրՊՀ դասախոս, ք.գ.թ., դոցենտ  
**Balayan Zinaida** – Lecturer of ASU, Candidate of Philology, Associate Professor  
**Балаян Зинада** - преподаватель АрГУ, к.ф.н., доцент  
**E-mail:** [zinaida.54@bk.ru](mailto:zinaida.54@bk.ru)
12. **Բալայան Նինա** – ՇՏՀ մագիստրոս, ԱԵԳՄՄ անդամ  
**Balayan Nina** - Master of ShTU, member of UYSSA  
**Балаян Нина** - магистр ШТУ, член ОМУСА  
**E-mail:** [balayan96@mail.ru](mailto:balayan96@mail.ru)
13. **Բալայան Վահրամ** - Արցախի Հանրապետության Ազգային ժողովի փոխնախագահ, պ.գ.դ., պրոֆեսոր  
**Balayan Vahram** - Vice-Chairman of National Assembly of the Republic of Artsakh, Doctor of History, Professor  
**Балаян Ваграм** - вице-спикер Национального собрания Республики Арцах, д.и.н., профессор  
**E-mail:** [vahrambalayan@mail.ru](mailto:vahrambalayan@mail.ru)
14. **Բալասանյան Գրիգոր**- ԵՊՀ դասախոս, ԱԵԳՄՄ անդամ, պ.գ.թ., դոցենտ  
**Balasanjan Grigor** - Lecturer of YSU, member of UYSSA, Candidate of History, Associate Professor  
**Баласанян Григор** - преподаватель ЕГУ, член ОМУСА , к.и.н., доцент  
**E-mail:** [grigorbalasanjan@mail.ru](mailto:grigorbalasanjan@mail.ru)
15. **Բաղդասարյան Ալիսա** - ք.գ.թ.  
**Baghdasaryan Alisa** – Candidate of Philology  
**Багдасарян Алиса** - к.ф.н.  
**E-mail:** [sasun.81@mail.ru](mailto:sasun.81@mail.ru)

16. **Բարխուդարյան Լուսինե** – ԱրՊՀ մագիստրոս, ԱԵԳՄՍ անդամ  
**Barkhudaryan Lusine** - Master of ASU, member of UYSSA  
Бархударян Лусинэ – магистр АрГУ, член ОМУСА  
E-mail: [barkhudaryan.lusine@gmail.com](mailto:barkhudaryan.lusine@gmail.com)
17. **Գալստյան Անի** – ՀՈՀ դասախոս  
**Galstyan Ani** – Lecturer of ARU  
Галстян Ани - преподаватель РАУ  
E-mail: [ani.galstyan@rau.am](mailto:ani.galstyan@rau.am)
18. **Գալստյան Խաչիկ** - ԵՊՀ դասախոս, ԱԵԳՄՍ պատվավոր անդամ, ք.գ.դ., դոցենտ  
**Galstyan Khachik**- Lecturer of YSU, honorary member of UYSSA, Doctor of Political Sciences, Associate Professor  
Галстян Хачик - преподаватель ЕГУ, почётный член ОМУСА, д.п.н., доцент  
E-mail: [khgalstyan@yahoo.com](mailto:khgalstyan@yahoo.com)
19. **Գասպարյան Աբրահամ** - ԵՊՀ դասախոս, ք.գ.թ., դոցենտ  
**Gasparyan Abraham** - Lecturer of YSU, Candidate of Political Sciences, Associate Professor  
Гаспарян Абраам - преподаватель ЕГУ, к.п.н., доцент  
E-mail: [abrahamgasparyan@gmail.com](mailto:abrahamgasparyan@gmail.com)
20. **Գափոյան Գառնիկ** - ՀՀ ՊԿԱ մագիստրոս  
**Garoyan Garnik** – Master of PAA RA  
Гапоян Гарник - магистр АГУ Республики Армения  
E-mail: [garoyan93@gmail.com](mailto:garoyan93@gmail.com)
21. **Գևորգյան Մարինե** – ԵՊՀ դասախոս, ԱԵԳՄՍ անդամ, պ.գ.թ., դոցենտ  
**Gevorgyan Marine** – Lecturer of YSU, member of UYSSA, Candidate of History, Associate Professor  
Геворкян Марине - к.и.н., доцент, ЕГУ, член ОМУСА  
E-mail: [marine.gevorgyan@ysu.am](mailto:marine.gevorgyan@ysu.am)
22. **Գրիգորյան Կարեն** – ՀՊՏՀ, ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ  
**Grigoryan Karen** – Head of the Chair of ASUE, Candidate of Economic Sciences, Associate Professor  
Григорян Карен - АГЭУ, заведующий кафедрой, к.э.н., доцент  
E-mail: [kgrigoryanh@mail.ru](mailto:kgrigoryanh@mail.ru)
23. **Դանիելյան Նատելլա** - ԱՀ պետնախարարի աշխատակազմի աշխատակից  
**Danielyan Natella** - employee of administration of State Minister of the Republic of Artsakh  
Даниелян Нателла – сотрудник аппарата госминистра Республики Арцах  
E-mail: [natella.danielyan@gmail.com](mailto:natella.danielyan@gmail.com)
24. **Դավոյան Սամսոն** - ԵՊՀ դասախոս, տ.գ.դ., պրոֆեսոր  
**Davoyan Samson** – Lecturer of YSU, Doctor of Economic Sciences, Professor  
Давоян Самсон - преподаватель ЕГУ, д.э.н., профессор  
E-mail: [samsondavoyan2014@gmail.com](mailto:samsondavoyan2014@gmail.com)

25. **Դոլուխանյան Անուշ** – ԱրԴՅ հայցորդ, ԱԵԳՄՄ անդամ  
**Dolukhanyan Anush** – PhD student of ArSU, member of UYSSA  
Долуханян Ануш - соискатель АрГУ, член ОМУСА  
E-mail: [anush\\_dolukhanyan@mail.ru](mailto:anush_dolukhanyan@mail.ru)
26. **Եղիազարյան Արման** - ԵԴՅ սիյուլոքագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.դ., դոցենտ  
**Yeghiazaryan Arman** - Head of the Chair on Diaspora Studies of YSU, Doctor of History, Associate Professor  
Егиазарян Арман - заведующий кафедрой диаспороведения ЕГУ д.и.н., доцент  
E-mail: [armanyeghiazaryan@ysu.am](mailto:armanyeghiazaryan@ysu.am)
27. **Եվստրատով Անտոն** – ՅՈՒՅ դասախոս, պ.գ.թ.  
**Evstratov Anton** - Lecturer of ARU, Candidate of History  
Евстратов Антон - преподаватель РАУ, к.и.н.  
E-mail: [anton\\_nastoyashiy@mail.ru](mailto:anton_nastoyashiy@mail.ru)
28. **Էլիբեգովա Անժելա** – Երևանի պետական լեզվաև հասարակագիտական համալսարանի (ԵՊԼՅ) դասախոս, ք.գ.թ., դոցենտ  
**Elibegova Anzhela** – Lecturer of Yerevan State University of Languages and Social Sciences (YSULSS)  
Элибегова Анжела – преподаватель Ереванского государственного лингвистического университета (ЕГЛУ), к.п.н., доцент  
E-mail: [elibegova@gmail.com](mailto:elibegova@gmail.com)
29. **Ջեյմո Մարեկ** – Յոզեֆ Ռուսեցկու անվան Օլշտինի համալսարանի պրոֆեսոր, ք.գ.դ. (ք. Օլշտին, Լեհաստան)  
**Zejmo Marek** - Doctor of Political Sciences, Professor of Józef Rusiecki Olsztyn University (Olsztyn, Poland)  
Жэймо Марек - профессор Ольштынского университета имени Йозефа Русецкого, д.п.н. (г. Ольштын, Польша)  
E-mail: [marek-zejmo@wp.pl](mailto:marek-zejmo@wp.pl)
30. **Լուխտերհանդտ Օտտո** - Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, ի.գ.դ. (ք.Համբուրգ, Գերմանիա)  
**Luchterhandt Otto** - Doctor of Law, Professor (Hamburg, Germany)  
Люхтерхандт Отто – доктор юридических наук, профессор (г.Гамбург, Германия)  
E-mail: [ottolucht@arcor.de](mailto:ottolucht@arcor.de)
31. **Խալաթյան Արտաշես** - ԵԴՅ ասպիրանտ, ԱԵԳՄՄ անդամ, փաստաբան  
**Khalatyan Artashes** – PhD student of YSU, member of UYSSA, advocate  
Халатян Арташес - аспирант ЕГУ, член ОМУСА, адвокат  
E-mail: [artashes.khalatyan@mail.ru](mailto:artashes.khalatyan@mail.ru)
32. **Խաչատրյան Շուշան** – ԱրԴՅ գրականության և լրագրության ամբիոնի վարիչ, ԱԵԳՄՄ անդամ, ք.գ.թ., դոցենտ  
**Khachatryan Shushan** - Head of the Chair of Literature and Journalism of ASU, member of UYSSA, Candidate of Philosophy, Associate Professor

**Хачатрян Шушан** - заведующая кафедрой литературы и журналистики АрГУ, член ОМУСА, к.ф.н., доцент

**E-mail:** [shush22@yandex.ru](mailto:shush22@yandex.ru)

- 33. Հայրիյան Եվգենյա** - ԱրՊՀ դասախոս, ԱԵԳՄՍ անդամ, տ.գ.թ., դոցենտ  
**Hayriyan Yevgenya** – Lecturer of ASU, member of UYSSA, Candidate of Economic Sciences, Associate Professor

**Айриян Евгения** - преподаватель АрГУ, член ОМУСА, к.э.н., доцент

**E-mail:** [evgenyahayriyan@mail.ru](mailto:evgenyahayriyan@mail.ru)

- 34. Հարությունյան Ավետիք** - Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի Անվտանգության խորհրդի աշխատանքների ապահովման բաժնի վարիչ, ԱրՊՀ, ՄՄՀ դասախոս, ԱԵԳՄՍ հիմնադիր նախագահ, ի.գ.թ., դոցենտ

**Harutyunyan Avetik** – Head of the Department of Organization of Activity of the Security Council of the Administration of President of the Republic of Artsakh, lecturer of ASU and MMU, founding chairman of UYSSA, Candidate of Law, Associate Professor

**Аругюнян Аветик** - начальник отдела по обеспечению работ Совета безопасности администрации Президента Республики Арцах, учредитель и председатель ОМУСА, преподаватель АрГУ, УММ, к.ю.н., доцент

**E-mail:** [avetiq.hh@aegmm.org](mailto:avetiq.hh@aegmm.org)

- 35. Հարությունյան Արտակ** - ՀՀ ՊԿԱ դասախոս, փ.գ.թ., դոցենտ  
**Harutyunyan Artak** – Lecturer of PAA RA, Candidate of Philosophy, Associate Professor

**Аругюнян Артак** - преподаватель АГУ РА, к.ф.н., доцент

**E-mail:** [harartinter@gmail.com](mailto:harartinter@gmail.com)

- 36. Հարությունյան Ռոզալյա** - ԱրՊՀ ասպիրանտ և դասախոս, ԱԵԳՄՍ անդամ  
**Harutyunyan Rozaly** - PhD student and Lecturer of ASU, member of UYSSA

**Аругюнян Розалия** - аспирант и преподаватель АрГУ, член ОМУСА

**E-mail:** [avrozali@mail.ru](mailto:avrozali@mail.ru)

- 37. Հարությունյան Վրեժ** – ՄՄՀ ավագ դասախոս, պ.գ.թ.  
**Harutyunyan Vrezh** – senior Lecturer of MMU, Candidate of History

